ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(13)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ***ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ***

Խմբագրական խորհուրդ՝
Գրիշա Ալեքսանի Ղարիբյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Հարությունի Ալեքսանի Մարզպանյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ռաֆիկ Ասքանազի Նահապետյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ Գարեգինի Միհասյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Արշավիրի Առաքելյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
Հայկ Մկրտիչի Դերծյան – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր
Հենզել Գերասիմի Մանուչարյան – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր
Աննա Գրիգորի Ասատրյան - արվեստագիտութ. դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Պարգևի Մուրադյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սեդա Քերոբի Գասպարյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սեյրան Արտուշայի Զաքարյան – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր
Մելսիկ Պարգևի Մկրտումյան – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝ Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2016 թ. – 393 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2016 թ.
© Հեղ. խումբ, 2016 թ.

YEREVAN STATE UNIVERSITY
IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 1(13)

YEREVAN
YSU PUBLISHING_HOUSE
2016

Certified for publication by academic
council of Ijevan Branch of YSU

Editor-in-chief
doctor of historical science, professor ***ASHOT NERSISYAN***

Editorial council
Grisha Alexan Gharibyan – doctor of economic science, professor
associate member of NAS, RA
Rafik Askanaz Nahapetyan – doctor of historical science, professor
Edik Garegin Minasyan – doctor of historical science, professor
Samvel Arshavir Arakelyan – candidate of historical science, assistant professor
Hayk Mkrtich Derdzyan – doctor of low, professor
Henzel Gerasim Manucharyan – doctor of political science, professor
Anna Grigor Asatryan – doctor of art, professor
Samvel Pargev Muradyan – doctor of philological science, professor
Seda Kerob Gasparyan – doctor of philological science, professor
Seyran Artushai Zakaryan – doctor of philosophy science, professor
Melsik Pargev Mkrtumyan – doctor of psychological science, professor

Akunq. Collection of scientific articles/Edit.council G.A. Gharibyan and others; Editor-in-chief A.A. Nersisyan. – Yer.: YSU publishing-house, 2016 – 393 p.

© YSU publishing-house, 2016
© Author group, 2016

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ 1918 - 1920ԹԹ. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայոց 1918 – 20թթ. պետականության պատմության պարբերացումը պետք է սկսել 1918թ. հունվար ամսից, երբ փաստացի ստեղծվում են պետական մարմինները՝ հանձինս Հատուկ կոմիտեի և Վարիչների մարմնի: Հայոց պետականությունը սկզբնավորվել է ոչ որպես հանրապետություն կամ հանրապետական կառավարման տիպի պետություն: Որպես հանրապետություն հայոց պետականությունը գործել է 1918թ. մայիսի 28 – ից մինչև 1919թ. փետրվարի 28 – ը, երբ Խորհուրդը բռնությամբ արձակվել է՝ կապված հանրապետական կառավարման տիպի պետության՝ գոյություն ունենալու աննպատակահարմարության հետ: Որպես պարբերացման երկրորդ փուլ պետք է ընդունել այս ժամանակահատվածը:

Պարբերացման երրորդ շրջանը պետք է համարել 1919թ. փետրվարի 28 – ից մինչև օգոստոսի 1 – ը, երբ փաստորեն չկար օրենսդիր մարմինը և թե օրենսդիր, թե գործադիր իշխանությունն իրականացնում էր կառավարությունը: Պետության պարբերացման հաջորդ փուլը 1919թ. օգոստոսի 1-ից 1920թ. ընդգրկող ժամանկահատվածն է, երբ կրկին վերկանգնվում է հանրապետական կամ խորհրդարանական հանրապետական կառավարման տիպի պետությունը: Խորհրդարանական տիպի հանրապետությունն իր ավարտն է գտնում 1920թ. մայիսի 5 – ին՝ ՀՅԴ դիկտատուրայի հաստատումով, որը տևում է մինչև նոյեմբերի 23 – ը: Այս շրջանում իշխանությունն իրականացնում է ՀՅԴ Բյուրոն: Այս շրջանը հայոց պետականության մեջ կազմում է վերջին կարևորագույն փուլը: Կառավարության անկումից հետո մի քանի օր գոյություն ունեցած Ս. Վրացյանի կառավարման շրջանը չի կարելի պարբերացման հիմք ընդունել, որովհետև այդ կառավարությունը գլխավորապես իրականացրել է մեկ առաքելություն՝ իշխանությունը Լեգրանի պարտադրանքով հանձնել է բոլշևիկներին:

Բանալի բառեր. Պետականություն, պարբերացում, պատմություն, հանրապետություն, կառավարում, օրենսդիր իշխանություն, գործադիր իշխանություն, խորհրդարան, դիկտատուրա, Բյուրո - կառավարություն

Հայտնի ճշմարտություն է, որ ժողովուրդների պատմության պարբերացման հիմքում դրվում են շրջափուլային նշանակություն ունեցած պատմական իրադարձությունները: Դրանցից նրանք, որոնք քաղաքական կամ տնտեսական ազդեցություն են ունեցել երկրագնդի ժողովուրդների մեծամասնության զարգացման վրա, ընկել են համաշխարհային պատմության պարբերացման հիմքում: Բայց թերևս չենք սխալվի, եթե պնդենք, որ այդ պարբերացումներն ինչ որ տեղ հարաբերական են, քանի որ առանձին ժողովուրդների մոտ պատմության շրջադարձային փուլեր եղել են տարբեր ժամանակներում: Եթե պարբերացումը կատարենք մարքսյան դրույթների նախորոշած հասարակական – տնտեսական ֆորմացիաների հիմքով, ապա՝ դրանք նույնպես տարբեր ժողովուրդների մոտ տարբեր ժամանակներում են հաջորդել մեկը մյուսին, եթե կատարենք՝ հիմք ընդունելով հզոր պատերազմները, որոնք ձևափոխել են աշխարհի քարտեզը, ա-

պա՝ դժվար է դրանք տարածել այն ժողովուրդների վրա, որոնք զերծ են մնացել այդ պատերազմից: Մի խոսքով, այս առումով բացարձակ ճշմարտության որոնումն ու գտնումը բավական բարդ խնդիր է: Խորհրդային շրջանում պարբերացման հիմքում ընկած էին հիմնականում տնտեսական հարաբերությունների կամ արտադրաեղանակների փոփոխությունները, որոնք հետևանք էին համարվում արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների անհամապատասխանության օրենքի առկայության: Երբ այս երկուսն իբրև իրար չեն համապատասխանել, առաջացել է հեղափոխություն, որով մեկ հասարակական – տնտեսական կարգը փոխարինվել է մեկ ուրիշով: Իսկ այդ հեղափոխությունները տարբեր ժողովուրդների մոտ տարբեր ժամանակներում էին տեղի ունենում կամ էլ տեղի չէին ունենում, որը նշանակում է, որ պարբերացումների մեջ ընդհանրություններ գտնելն արհեստական է: Այս ամենով հանդերձ, հարկ ենք համարում պնդել, որ խորհրդային շրջանում պատմության պարբերացման հիմքում արհեստական բաղադրամասերի առկայության պարագայում էլ միանգամայնորեն հստակ էր պատմագրության անելիքը: Ճշմարիտ է, այն ուներ զարգացման նախորոշված ուղի, որը հիմքում ընկած էր մարքսիզմ – լենինիզմը, կոնյուկտուրային էր, բայց գոնե ուներ հստակ մեթոդաբանություն: Այս առումով այսօր մեր պատմագրության առջև առկա է մի խոշոր բաց, այն է՝ ինչ մեթոդաբանությամբ պետք է շարադրել պատմական իրադարձությունները, իսկ դրանից առաջ՝ ինչ պարբերացմամբ: Եվ քանի որ այս երկուսը հստակեցված չեն՝ չի կարելի պնդել, որ հետխորհրդային շրջանի հայոց պատմությունն իր ամբողջության մեջ վերընթաց է ապրում, ընդհակառակը՝թերևս վայրընթաց, քանի որ ամեն ինչի մասին և հաճախ ոչ ակադեմիական մոտեցումներով գրելը չի նշանակում պատմագրության վերելք: Ազատախոհությունը կամ լիբերալիզմը պատմագրության մեջ առաջ են բերել քաոսային վիճակ և հայտնի չէ, որն է հայրենի պատմագրության զարգացման հստակ նպատակը: Կարծում ենք, որ այդ նպատակը պետք է լինի պատմական իրադարձությունների՝ սեփական ժողովրդի համար արդյունավետության հարցի ճշգրտումը: Այսօր ցանկացած պատմագիտական աշխատության կամ թեզի ներածականում որպես մեթոդաբանական հիմք նշվում է դեպքերի նկատմամբ պատմաքննական կամ պատմահամեմատական մոտեցման կիրառումը, բայց չվարանենք խոստովանել, որ այդ մոտեցումը գրեթե չի կիրառվում: Իսկ մեթոդաբանության մասին հիշատակումը կրում է ծիսական բնույթ:

Մեր հայեցակարգային մոտեցումն այս առումով հետևյալն է՝ **պատմությունը պետք է շարադրվի պատմական իրադարձությունների՝ մեր ժողովրդի համար ունեցած արդյունավետության աստիճանի որոշման չանքերով, որը նշանակում է՝ ապաքաղաքականացված, առանց որի անհնար է պատկերացնել ակադեմիական պատմագրություն:** Իսկ ինչ վերաբերվում է պարբերացմանը, ապա՝ մենք չենք կարող մեր պատմությունը շարադրել հեռու այն պարբերացման շրջանակներից, որոնք ընդունելի են համաշխարային պատմագրության համար, այսինքն՝ հին, միջին, նոր և նորագույն, բայց դրանով հանդերձ պետք է անկաշկանդ լինենք այս ընդհանրական պարբերացումների մեջ սեփական պատմության շրջափուլային նշանակության իրադարձությունների ճիշտ ընկալումով վերանայելու հայոց պատմության պարբերացմանն առնչվող շատ հիմնահարցեր: Սույն հոդվածի խնդիրը 1918թ. ձևավորված հայոց պետականության պատմութ-

յան պարբերացմանն է վերաբերվում, որը կարծում ենք, որ ցայսօր այնքան էլ ճիշտ չի կատարվել:

Մենք շեշտում ենք հայոց պետականության և ոչ թե Հայաստանի առաջին Հանրապետության պատմության պարբերացման մասին, որովհետև **հայոց պետականության արարումն ուղիղ համամեմատական չէ Հայաստանի Հանրապետության արարմանը:** Այսինքն՝ 1918 – 20թթ. հայոց պետականության մասին խոսելիս պետք չէ նկատի ունենալ միայն Հայաստանի Հանրապետությունը: **Հայոց պետականությունը de facto կար մայիսի 28 – ից առաջ կամ հայոց նոր պետականության սկիզբ չպետք է համարել 1918թ. մայիսի 28 – ը:** Մեր պատմագրության սխալներից մեկը կայացել է և կայանում է նրանում, որ ըստ նրա հանրապետության կառավարման տիպի պետության հռչակմամբ է սկզբնավորել հայոց նոր պետականությունը: Անտեսվել է այն հանգամանքը, որ դրանից առաջ եղել է հայոց պետականությունը՝ դիկտատորական կառավարմամբ, բայց ոչ դասական իմաստով դիկտատորական, որի փաստացի ղեկավարն էր Արամ Մանուկյանը: Մինչև այդ էլ գոյություն ունեին հայկական գրեթե անկախ քաղաքական միավորներ, որի մասին կարևոր պատկերացում են տալիս Ռուբեն Տէր - Մինասյանի հետևյալ տողերը.. «1918թուի սկզբները սահմանային խնդիրները փաստօրէն լուծուած էին Վրաստանի եւ Ադրբեջանի հետ: Մինչեւ թուրքերի Կովկաս մտնելը, կազմակերպուած էր Շիրակի նահանգը (որի հետ կապուած էր Ախալքալակը) եւ Բորչուլուի հայկական մասը՝ Վրաստանում: Կազմուած էր Ղարսի նահանգի հայկական մասը, կազմուած էր Երեւանի նահանգը, հաստատուած էր Ղարաբաղի եւ լեռնային Գանձակի (քաղաքի մի մասով) հայկական առանձին իշխանութիւն, եւ վերջապէս կազմուած էր լեռնային Ղազախի, ներկա Դիլիջանի շրջանը, որը կապուած էր Երեւանի հետ: Այս շրջանների Վրաստանից եւ Ադրբեջանից բաժանման փաստը առանձին զարմանք չէր պատճառած ոչ վրացիներին, ոչ թաթարներին, որոնք համակերպած էին եղած դրութեան:

Բայց հայոց Ազգային Խորհուրդների շինած հայաբնակ օճախը գալիս էր քանդելու տաճիկ զորքը»[1]:

Ռուբենից այս մեջբերումը պատահաբար չենք անում: Փաստորեն ռուսական Հոկտեմբերյան հեղափոխությանն հաջորդած տեղատվության հետևանքով աստիճանաբար առարկայանում էին հայկական փոքրիկ քաղաքական միավորներ, որից հետո սկսվելու էր դրանց մեկ պետության մեջ միավորվելու գործընթացը, որը ցավով պետք է նշել, այդպես էլ լիարժեքորեն չի ավարտվում հաջողությամբ: Դրանց պատճառների մեջ խորանալու խնդիրը զանց առնելով, շեշտենք, որ արդեն 1918թ. գարնանից արարվում է Հայկական պետությունը կամ Արարատյան Հայաստանը, որի մեջ այս տարածքների միավորման իրավական կողմի ամրապաղնդման գործընթացն սկսվում է արդեն 1919թ. փետրվարից:

Անհրաժեշտ ենք համարում նաև մատնանշել, որ **Հայկական պետության արարման կամ ձևավորման դիվանագիտական գործընթացը տեղի է ունեցել Հայաստանում տեղի ունեցած ռազմական գործընթացներից անկախ և եթե դիվանագիտական գործընթացներում հայկական պատվիրակություններից անկախ ի հայտ եկավ Հայաստանի Հանրապետությունը, ապա՝ ռազմական իրադարձութ-**

[1] ***Ռուբէն***, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է (7),Լօս Անճելըս, 1952 էջ 135:

յունների արդյունքում դեռևս դրանից առաջ էր ձևավորվել հայկական պետականությունը:

Հայկական պետականության պարբերացման սկիզբ պետք է համարել 1918թ. հունվարը, երբ որպես Հայոց Ազգային խորհրդի լիազոր Թիլիսից գալով Երևան, Արամն անմիջապես ձևավորում է հայկական պետական կառավարման մարմինները: Այդ կառավարման մարմնի հավակնությունն ստացավ Երևանի Ազգային խորհուրդը, որն, ինչպես վկայում է Ս. Վրացյանը, մինչև այդ՝ << անգոյն ու անջիղ մի մարմին էր, որը գնում էր դէպքերի հոսանքի յետեւից>>, և կյանք ստացավ, երբ Երևան ժամանեց Արամ Մանուկյանը[2]:

Կարծում ենք, որ Արամ Մանուկյանի մասին բազմաթիվ հրապարակումներում և ուսումնասիրություններում նրա պատմական դերի մասին հայեցակետը այնքան էլ ճշտորեն չի ձևակերպվել: **Նա համարվել է հայոց պետականության հիմնադիրը, որը ճիշտ է, բայց մենք գտնում ենք, որ նրա դերը հայոց պատմության մեջ գլխավորապես կայանում է նրանում, որ ճիշտ հասկանալով, որ պետության արարումն անհնար է առանց պետական մարմինների ձևավորման և առաջնայինը համարելով այդ խնդրի կազմակերպումը, անմիջապես գնացել է դրան, առանց որի անհնար էր արդյունավետ քաղաքականություն վարել տարածքային խնդիրների լուծման առումով, մանավանդ, որ արդեն ընթացքի մեջ էր թուրք – հայկական պատերազմը: Ճշմարիտ է այդ պետական մարմինը կրկին կոչվում էր Հայոց ազգային խորհուրդ, բայց այն, ի տարբերություն Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի,որը գնում էր դեպքերի հետևից և չէր հանդիսանում թելադրող կողմ, ուներ միանգամայն նոր ձև և բովանդակություն: Այսինքն՝ Երևանի Ազգային խորհուրդը հայկական առաջին պետական մարմինն էր, որը միտված էր կազմակերպչական աշխատանքների՝ հանուն թուրքական վտանգի չեզոքացման և պետականության արարման: Եվ նրա ստեղծած պետական կազմակերպությունը գնահատելի է նախ և առաջ նրանով, որ եթե մինչև այդ հայկական զինյալ ուժերը թուրքերի դեմ կռվել էին այլ պետությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի կամ Անգլիայի դրոշների տակ, նրանցից քաղաքական ակնկալիքների իրականացմամբ պայմանավորված, ապա, այժմ կռվում էին հանուն ազատության և անկախության՝ սեփական պետական կամ իշխանական մարմինների կազմակերչական աշխատանքների շնորհիվ:**

Այդ իշխանական կամ պետական մարմինը հենց Արամի առաջարկով կոչվեց Հատուկ կոմիտե, որն ստացավ <<երեք ամսով գործելու կատարեալ ազատութիւն>>[3]:

Ճշմարիտ է, այս մարմինն ընտրվել էր Երևանի Ազգային խորհրդի որոշումով, բայց այնտեղ թելադրողը Արամն էր: Որ իսկապես Հատուկ կոմիտեն պետական կառավարման մարմին էր, երևում է նրանից, որ նրա մեջ մտել են անձինք, որոնք կորդինացրել են այս կամ այն բնագավառի աշխատանքները: Դրանք էին Արշալույս Աստվածատրյանը, Մկրտիչ Մուսինյանը, Սահակ Թորոսյանը, Արամ Մանուկյանը, իսկ քարտուղարն էր Ս. Օհանջանյանը: Այս կոմիտեն Երևանի կամ Արարատյան հանրապետության փաստացի իշխանությունն էր: Համոզվելու համար դրանում, բավական է նշել, որ Հատուկ կոմիտեին էին ենթարկվում Երևանի

[2] ***Վրացեան***, Ս. նշվ. աշխ., էջ 126:

[3] Նույն տեղում, էջ 120:

նահանգի հայկական զորքերը՝ Մ. Սիլիկյանի գլխավորությամբ, Երևանի զինվորական կոմիսար Դրոն, նրա հրամանով էին իրականացվում կառավարման կամ զորակոչի հետ կապված բոլոր խնդիրները: **Եթե Հատուկ կոմիտեն իրականացնում էր պետական գործառույթներ, ուրեմն արդեն առկա էր պետությունը:** Այսպես, կառավարման համակարգը կար, բանակը կար, նոր ձևավորված և նորաստեղծ պետության նախնական տարածքները նույնպես կային: Ուրեմն, արդյունքում արդեն 1918թ. սկզբներին հայկական պետությունը ձևավորվում էր, թեև օրապակաս, բայց փաստացի կար: Բավական է նշել մեկ հանգամանք ևս. հայտնի ճշմարտություն է, որ զորակոչն իրականացնում է պետությունը: Իսկ Հատուկ կոմիտեի առաջին հրամանը վերաբերվում էր հենց զորակոչին, որով զենքի տակ էին առնվում 18 –ից 25 տարեկան բոլոր զինապարտներին[4]:

Պետական կառավարման մարմինը նոր ձև է ստանում 1918թ. մարտի սկզբներին, երբ <<դիկտատոր>> է հռչակվում Արամը: Ինչպես նշեցինք, <<դիկտատոր>> ասելով չպետք է հասկանալ բռնապետ դասական իմաստով, այլ՝ ուժեղ իշխանություն և թշնամու դեմ պայքարելու նպատակով ուժերի համախմբման համար լայն լիազորություն ստացած անձնավորություն: Հատուկ կոմիտեն էլ, շատ չանցած, վերածվում է Վարիչների մարմնի, որը փաստորեն պետական իշխանությունն էր մարմնավորում: Այդ մասին Ս. Վրացյանն հետևյալն է գրում. <<Ըստ ձեւի, Արամի դիկտատոր նշանակվելուց յետո էլ 1918թ. մարտի սկզբին, Էրզրումի անկումից շատ չանցած – Ա. Ն./ իշխանութիւնը մնաց Ազգ. Խորհրդի ձեռքին: Յատուկ կոմիտէի փոխարէն այժմ գործում էր առանձին մի մարմին, որի անդամները կոչւում էին վարիչներ: Այդ մարմինը փաստօրէն Արարատեան դաշտի կառավարութիւնն էր, որի նախագահն ու զինւորական գործերի վարիչը Արամն էր, ներքին գործոց վարիչը՝ Սահակ Թորոսեանը, պարենաւորմանը՝ Մկ. Մուսինեանը, ելեւմտականը՝ Յովհ. Մելիքեանը, ինքնապաշտպանութեանը՝ Արշ. Աստւածատրյանը: Քիչ վերջը իշխանութեան մէջ մտան նոր անձեր՝ Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Կամսարականը, բժ. Յ. Տէր-Միքայէլեանը/Օվին/ եւ այլն/…..>>[5]:

Այստեղ Ս. Վրացյանի հետ չենք կարող համաձայնվել միայն այն հարցում, որ Արամի դիկտատոր նշանակվելուց հետո էլ իշխանությունը մնաց Ազգ. Խորհրդի ձեռքում: Ընդհակառակը՝ ամեն ինչ որոշում էր Արամը: Մնացյալ հարցերում Ս. Վրացյանը ճիշտ է:

Ընդհանրացնելով շեշտենք, որ **1918թ. մայիսի 28 – ից առաջ արդեն սկզբնավորվել էր հայկական պետականությունը, որն ուներ իր կառավարման մարմինները՝ հանձինս Հատուկ կոմիտեի և Վարիչների մարմնի: Այն և գործադիր և օրենսդիր և դատական և զինվորական բարձրագույն մարմին էր, որին ենթարկվում էին բոլորը, հարկ եղած պարագայում՝ ուժի միջոցով: Այս պետության ղեկավարն էր Արամ Մանուկյանը: Ուրեմն, հայոց պետականությունը չհստակեցած սահմաններով սկզբնավորվել է 1918թ. հունվարից, որը կարողացել է կազմակերպել մայիսյան հերոսամարտերն՝ անկախ Տրապիզոնում և Թիֆլիսում տեղի ունեցող դիվանագիտական գործընթացներից: Հայկական նոր պետականութ-**

[4] <<Էջմիածին>>, Ե, Էջմիածին, 2007, էջ 147:

[5] ***Վրացեան Ս.*** նշվ. աշխ., էջ 136:

յան պարբերացման առաջին փուլ պետք է համամրել 1918թ. հունվարից մայիսը ամիսները:

Հայտնի է, որ Սեյմի կազմալուծման հետևանքով 1918թ. մայիս 28 – ին պատմության ասպարեզ իջավ Հայաստանի առաջին Հանրապետությունը: Բայց մայիսի 28 – ակտը ավելի շատ իրավական ակտ էր, ստեղծված պետության մասին, քան թե գոյության սկզբի՝ որպես պետության: Ավելին՝ այնտեղ հետևյալն ենք կարդում՝ <<Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի եւ Ազրպէջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառներու գերագոյն եւ միակ իշխանութիւն>>[6]:

Նշանակում է, որ ոչ հստակ էր պետական կառավարման ձևը և ոչ էլ այն տարածքները, որոնց վրա իշխելու էր այդ պետությունը, մի հանգամանք, որ լրիվ համընկնում էր Արամի գլխավորությամբ արդեն գոյություն ունեցող պետության համար:

Այս ակտի ընդունումից շատ չանցած միայն դիկտատորական կառավարման ձևին եկավ փոխարինելու ժողովրդավարական կառավարման ձևը և Արարատյան պետությունը կոչվեց Հայաստանի Հանրապետություն: Բայց առհասարակ անտեսվում է մի կարևոր հանգամանք՝ **հանրապետական կառավարման մեխանիզմը բնորոշ չի եղել հայկական պետության գոյության ողջ ընթացքին:** Ուրեմն՝ պահանջվում են այդ պետության զարգացման փուլերի նոր պարբերացումներ:

Որպես հայկական պետականության պարբերացման հաջորդ փուլ պետք է առանձանացնել **1918թ. մայիսի 28 – ից 1919թ. – ի փետրվարի 28 – ը:** Այս ժամանակահատվածն առանձնացնում ենք այն պատճառով, որ որպես խորհրդարանական պետություն Հայաստանը գործել է այս կարճ ժամանակահատվածում: 1918թ. փետրվարի 28 –ին Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը բռնությամբ արձակվում է:

Իսկ որն էր պատճառը: Այն, որ ՀՀ գոյության սկզբից տարաձայնություններ են եղել պետական կառավարման համակարգի ընտրության շուրջը: Ոմանք գտել են, որ պետք է ստեղծել կուսակցական դիկտատուրա, բնականաբար նկատի ունենալով Դաշնակցությանը/Արամ,Ռուբեն, Ա. Ջամալյան, Արտ. Բաբալյան և այլն/: Ոմանք էլ այն կարծիքին են եղել, որ պետք է ի սկզբանե կյանքի կոչել ժողովրդավարական կառավարման համակարգը/Հովի. Քաջազնունի, Ալ. Խատիսյան, Ս. Վրացյան և ուրիշներ/: Կարծում ենք, որ առաջինի կողմնակիցներն ավելի ճիշտ էին, քանի որ՝ ա/ դեռևս հստակեցված չէին Հայաստանի սահմանները, որը նշանակում է, որ խորհրդարանում այլազգիների ներկայությունը անպայմանորեն իր բացասական ազդեցությունը պետք է թողներ երկրի ազգային անվտանգության ամրապնդման տեսանկյունից, բ/ թաթար ներքին տարրը թուրքերի հետ համախորհուրդ ներսից քայքայում էր հայոց պետականությունը, գ/ խորհրդարանական վեճերն հաճախ անպտուղ էին վերջանում, խանգարելով լուծելու երկրի առջև ծառացած կարևորագույն խնդիրները:

Ահա այս ամենով էր պայմանավորված, որ 1920թ. օգոստոսի 1 – ից իր նիստերն սկսած Հայաստանի խորհուրդը շատ կարճատև կյանք ունեցավ: Արտ. Բա-

[6] ՀՅԴ Բոստոնի Կեդրոնական արխիւ, թղթածրար 1/1, գործ 6:

բալյանը գրում է. << Հայաստանի Խորհուրդը շնորհիւ իր տարամերժ տարրերի չկարողացավ բարձրության վրա կանգնել եւ աջակից լինել նորաստեղծ կառավարութեան>>[7]: Ավելին, Խորհրդում բուռն վեճեր էին գնում՝ կապված Էջմիածնի գավառում, Արաքսի ափին, Բաշգառնիում, Միսխանայի շրջանում թաթար ըմբոստ տարրերի չեզոքացմանը միտված քաղաքականության դեմ: Այսպես կոչված ժողովրդավարները դեմ էին նման քաղաքականությանը: Ս. Վրացյանը գրում է. << Հայաստանի Խորհրդի ժողովրդական պատգամաւորները, որոնք սկզբում ոյժ էին տալիս կառավարութեան, կամաց – կամաց կրկին անցան ընդդիմադիրների կողմը, եւ Խորհրդի ամբիոնը նորից դարձաւ կուսակցական կրքոտ վէճերի տեղ, կառավարութիւնը ստիպւած էր լինում՝ բան ու գործ թողած՝ օրերով զբաղւել հարցումներով ու հարցապնդումներով եւ քննադատութիիններին պատասխանելով:

Նման քննադատութիւններն ու յարձակումները յուզում էին հանրային միտքը>>[8]:

Եվ ահա, փետրվարի 28 – ին, երբ քննվում էր Սուրմալուի գավառում ռազմական դրություն մտցնելու կառավարության առաջարկությունը, այն հիմնավորումով, որ թուրքերն այնտեղ հարձակվում են հայ խաղաղ բնակչության վրա և կոտորում, ընդդիմադիրները դեմ են դուրս գալիս դրան: Այս պայմաններում Խորհրդի շենքում հավաքված մարդիկ հարձակվեցին սոցիալիստ – հեղափոխականների և մյուս ընդդմադիր տարրերի վրա՝ դահլիճը մաքրելով պատգամավորներից, աղաղակելով, << որ այսպիսի ներկայացուցչական մարմին ժողովուրդը չի ուզում ունենալ եւ պահանջում է ժողովրդական ընտրութիւններ: **Այս դեպքը տեղի ունեցաւ 1919թ. փետրուարի 28 – ին, որ պիտի համարել Հայաստանի Խորհրդի վերջը>>[9]:**

Այսպիսով ՀՀ խորհրդարանական կառավարումը 1919թ. փետրվարի 28 – ի դեպքով գտնում է իր ավարտը: Ինչպես վկայում է նույն Ս. Վրացյանը, այս իրադարձության կազմակերպիչները թեև Աշխատանքի նախարարարության պաշտոնյա Սաքո Համբարձումյանն ու Արտ. Բաբալյանն էին, բայց վերջիններիս հետևում կանգնած էր Ռուբեն Տեր Մինասյանը[10]:

Այս քայլը Ռուբենը բավական տրամաբանորեն է մեկնաբանում.<<Նա /ՀՀ Խորհուրդը – Ա. Ն./ ընդօրինակում էր առաջադեմ երկրների սովորույթները եւ օրենքները եւ դրանով բաւականանում, քանի որ յուր միջակ ոյժերը թոյլ չէին տալիս խորամուխ լինել եւ որոնել թէ այդ օրենքները կը բխեին ժողովրդական ոգուց ու ավանդույթներից, կը համապատասխանեն ժամանակին, տեղին ու պայմաններին: Եւ հաճախ այդ շատ գեղեցիկ օրէնքները անհասկանալի, անմատչելի կը մնային գրուած թուղթերի վրա>>[11]:

Ռուբենը չէր սխալվում այն տեսանկյունից, որ մինչև Խորհուրդը երկարորեն քննում էր այս կամ այն խնդիրը և օրենք ընդունում, թշնամին արդեն կյանքի էր կոչում իր դավադիր նպատակները: Այսինքն՝ **Հայաստանի Հանրապետութ-**

---

[7] ***Բաբալեան Ա.***, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն, տես << Հայրենիք>> ամսագիր, թիւ 9, Յուլիս, 1923, էջ 112:

[8] ***Վրացեան Ս.*** նշվ. աշխ., էջ 252:

[9] <<Հայրենիք>> ամսագիր, թիւ 9, Յուլիս, 1923, էջ 115:

[10] ***Վրացեան Ս.***, Կեանքի ուղիներով, Ե հատոր, Պէյրութ 1966, էջ 86:

[11] ***Ռուբէն***, Նշվ. աշխ, հ. է/7/, էջ 274:

յունը դեռևս չէր հասունացել որպես ժողովրդավարական պետություն: Սա է ճշմարիտ հայեցակարգը:

Փետրվարի 28 –ից մինչև օգոստոսի 1 – ը Հայաստանի կառավարման համակարգը ձեռք է բերում մի յուրահատուկ կարգավիճակ. նրա կառավարությունը Ալ. Խատիսյանի գլխավորությամբ, որը վարչապետի պաշտոնակատարն էր 1919թ. փետրվարի 15 – ից, փաստորեն հաշվետու չէր օրենսդիր մարմնի առջև, որն այլևս չկար և ոչ էլ ՀՅԴ Բյուրոյի առջև, որի ցանկությունները ընդունելի չէին կառավարության շատ անդամների կողմից: Սա բացառիկ իրավիճակ էր, որը երկարորեն չէր կարող իշխել, մանավանդ, որ նման կառավարման մեխանիզմ անհնար է գտնել ժողովուրդների պատմության մեջ: Իրավիճակը փորձ արվեց փոքր ինչ փոխել մարտի 12 – ին ընդունված մի օրենքով, որի համար վերջին անգամ գումարվեց խորհուրդը և որով իր օրենսդրական իրավունքները փոխանցեց կառավարությանը[12]:

Խորհուրդը, որը փաստորեն որպես քաղաքական մարմին փետրվարի 28 – ից այլևս գոյություն չուներ, վերջնականապես փակվում է հունիսի 5 –ին՝ << ընտրելով կենտրոնական հանձնաժողով եւ որոշելով պառլամենտի ընտրությունների օրը>>[13]:

Կարելի է ենթադրել, որ այդ նիստը նրան պարտադրել է ՀՅԴ Բյուրոն: Փաստը մնում է փաստ, որ Հայաստանի խորհրդարանական կառավարման համակարգը 1919թ. փետրվարի 28 – ից մինչև օգոստոսի 1 –ը չի գործել և այս փուլում թե օրենսդիր և թե գործադիր իշխանությունը իրականացրել է կառավարությունը, որը հաշվետու չի եղել որևէ կոնկրետ մարմնի առջև:

Փաստերը վկայում են, որ այս ընթացքում եթե երբեմն գումարվել է Խորհրդի նիստ, ապա՝ դա տեղի է ունեցել կառավարության նախաձեռնությամբ: Դրանցից մեկն էլ վերաբերվում է 1919թ. մայիսի 28 – ի անկախ և միացյալ Հայաստանի հռչակման ակտին, որի մասին Ալ . Խատիսյանը գրում է. << Պէտք է ըսել, որ այդ ժամանակ խորհրդարանը ցրված էր/փետրվարի 28 – ին/ եւ անոր օրէնսդրական իրաւունքները ձգուած էին կառավարութեան: Այս իրավունքներու վրա հենուելով՝ կառաւարութիւնը որոշեց հրավիրել Խորհրդարանը, յայտարարել միացման աքտը եւ մտցնել խորհրդարան 12 նոր պատգամավորներ՝ իբրեւ թրքահայ ժողովրդի ընտրեալներ>>[14]:

Սա ինչ որ տեղ ձևական բնույթի ակտ էր, որն ավելի շատ ուներ հոգեբանական նշանակություն, քանի որ՝ ա/ դեռևս հասկանալի չէր, թե Արևմտյան Հայաստան ասելով ինչ տարածքներ պետք էր հասկանալ և բ/ դրանից հետո խորհուրդն այլևս ոչ մեկ նիստ չունեցավ:

Հայոց պետականության զարգացման հաջորդ կարևորագույն փուլը պետք է համարել 1919թ. օգոստոսի 1 –ից 1920թ. մայիսի 5 – և ընդգրկող ժամանակշրջանը, երբ գործում էր հունիսյան ընտրությունների հետևանք Խորհրդարանը՝ 80 հոգիանոց կազմով, որում 72 տեղ զբաղեցնում էր Դաշնակցությունը: Բայց այս շրջանում ոչ մի կարևորագույն իրադարձություն տեղի չի ունեցել, կառավարաման ժողովրդավարական համակարգը ոչինչ չի տվել երկրի ժողովրդագրական

---

[12] << Հայրենիք>> ամսագիր, թիւ 9, Յուլիս, 1923, էջ 115:

[13] Նույն տեղում:

[14] ***Խատիսեան Ա.***, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 262:

պատկերի հօգուտ հայոց փոխելու առումով, ինչպես նաև տարածքային վեճերի կարգավորման և միացյալ Հայաստանի ակտի իրականացման: Առաջին խնդիրը չէր իրականանում, որովհետև հենց Դաշնակցության ֆրակցիայում չկար մեկ ընդհանուր մոտեցում՝ ներքին հարցերի լուծման տեսանկյունից և երկրորդ. հայոց երկու պատվիրակությունները, նաև իրենց քաղաքական լայն ախորժակներով պայմանավորված, չէին կարողանում գրանցել հաջողություններ՝ արտաքին քաղաքականության ոլորտում: Հայաստանի կառավարությունը չափազանց թույլ էր՝ ներքին քաղաքականության տեսանկյունից, որովհետև հանդուրժողական վերաբերմունք էր դրսևորում բոլոր այն դավադիր տարրերի նկատմամբ, որոնք քանդում էին ՀՀ հիմքերը: Դա վերաբերվում է քաղաքացիական կոիվների հետևանքով Ռուսաստանից Հայաստան փախած հայ բոլշևիկներին և ներքին դավադիր թաթար տարրին: Ուստի և, այս ընթացքում էլ շարունակվեց պայքարը՝ խորհրդարանը ցրելու և կուսակցական դիկտատուրա ստեղծելու համար, որը հրատապ դարձավ 1920թ. ապրիլի 28 –ց հետո, երբ հատուկ բեմազրությամբ խորհրդայնացվեց Ադրբեջանը: Մայիսի 1 – ից Հայաստանում սկզբնավորվեցին բոլշևիկյան խռովություններ, որոնք ընթանում էին թաթար տարրի ըմբոստությունների զուգընթաց: Այս իրադարձությունների մեջ խորանալը մեզ նպատակ չհամարելով՝ շեշտենք միայն, որ այս խռովությունների առիթով մայիսի 5 – ին իրականացավ ՀՅԴ Բյուրոյի որոշ անդամների՝ Հայաստանում կուսակցական դիկտատուրա ստեղծելու ձգտումը: Մայիսի 4 – ի լույս 5 – ի գիշերը տեղի է ունենում Դաշնակցության խորհրդարանական ֆրակցիայի, ՀՅԴ Բյուրոյի և որոշ Կենտ. Կոմիտեների նիստ, ուր Բյուրոն որոշում է իր ամբողջ կազմով դառնալ կառավարություն և <<վարել կուսակցութեան եւ կառաւարութեան մեծ նշանակութիւն ունեցող բոլոր գործերը>>[15]:

Խորհրդարանը պետք է դադար տար իր աշխատանքներին և կառավարությանը փոխանցեր իր օրենսդրական բոլոր իրավունքները, << բացի սահմանադրական նշանակութիւն ունեցող խնդիրներէն>>[16]:

Հաջորդ օրը՝ մայիսի 5 – ին, ժամը 11 – ին խորհրդարանի արտակարգ նիստում Ալ. Խատիսյանի կառավարությունը ներկայացնում է իր հրաժարականը: Իշխանության է գալիս Բյուրոն՝ նախագահ Հ. Օհանջանյանի գլխավորությամբ: Կառավարության մյուս անդամներն էին Ռուբենը/ներքին գործոց և զինվորական նախարար, Ս. Վրացյանը/գյուղատնտեսության և աշխատանքի նախարար/, Ա. Ջամալյանը/հաղորդակցության նախարար/, Ա. Գյուլխանդանյանը/ ֆինանսների և արդարադատության նախարար/, Ս. Արարատյանը/ Խնամատարության նախարար/ և Գ. Ղազարյանը/կրթության նախարար/: Ինչպես վկայում է Կ. Սասունին, <<Ռուբէնը այս նոր կառավարութեան կեդրոնական դեմքն էր>>[17]:

Այսպիսով 1920թ. մայիսի 5 –ին Հայաստանում կրկին վերջ է դրվում խորհրդարանական կառավարմանը, որը փաստորեն տևում է մինչև Հայաստանի խորհրդայնացումը՝ դեկտեմբերի 2 – ը: Այս փուլը Հայաստանի 1918 – 20թթ. պատմության մեջ ամենակարևորգույն տեղն է զբաղեցնում, որովհետև Բյուրո - կառավարությունն իրականացնում է մի շարք կարևորագույն խնդիրներ, առանց

[15]<< Նոր Աշխատավոր>>, թիւ 29/101/, 9 Մայիս, Թիֆլիս, 1920:

[16] Նույն տեղում:

[17] ***Սասունի Կ.***, Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները, Պէյրութ, 1968, էջ 71:

որոնց Հայաստանը 1920թ. վերջին թերևս կդադարեր գոյություն ունենալուց: **Դրանցից ամենակարևորը Հայաստանի ժողովրդավազրական պատկերի փոփոխությունն էր հօգուտ հայոց, քանի որ մինչև օգոստոս ամիսը լիկվիդացվեց Հայաստանի ներքին դավաղիր թաթար տարրը և Հայաստանը դարձավ միատարր:** Այս փուլում տեղի ունեցան նաև մի քանի նշանակալի իրադարձություններ՝ կապված արտաքին քաղաքականության հետ՝ հայ – ռուսական – բանակցություններ, ստորագրվեցին Սևրի պայմանագիրը, Թիֆլիսի համաձայնագիրը, Ալեքսանդրապոլի պայմանագիրը և, վերջապես, Երևանի դեկտեմբերի 2 – ի համաձայնագիրը, որով խորհրդայնացվեց Հայաստանը: Դրանց մանրամասները ներկայացնելը նույնպես մեզ նպատակ չենք համարում: Պարզապես շեշտենք, որ այդ պայմանագրերից և համաձայնագրերից ոչ մեկը իրական չդարձավ, որովհետև դեռևս բոլշևիկ – քեմալական դաշինքի առկայության պայմաններում հստակորեն մատնանշված չէին Հայաստանի սահմանները: Դրանք հստակ դարձան 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով:

Իսկ ինչու ենք մենք Հայաստանի 1918 -20թթ. պետականության ընթացքում գոյություն ունեցած դիկտատորական շրջանը ավարտում ոչ թե Բյուրո – կառավարության հրաժարականով, որը տեղի ունեցավ 1920թ. նոյեմբերի 20 –ի լույս 21-ի գիշերը Բ. Լեգրանի հետ Հ. Օհանջանյանի և Ռուբենի վարած անպտուղ բանակցություններից հետո[18] և որն ընդունվեց 1920թ. նոյեմբերի 23 –ին, երկար ընդմիջումից հետո գումարված խորհրդարանի նիստում: **Այն պարզ պատճառով, որ ընտրված նոր՝ Ս. Վրացյանի կառավարության կարճատև գոյության ընթացքում խորհրդարանն այդպես էլ լիարժեքորեն չգործեց, որովհետև արդեն կտրուկ կերպով դրված էր ՀՀ խորհրդայնացման հարցը, որն իրականացավ** դեկտեմբերի 2 – ի համաձայնագրով: Որպես խորհրդարանական պետություն նա փաստորեն չի գործել 1920թ. մայիս 5 –ից սկսած: Սա է պատմական ճշմարտությունը:

Ընդհանրացնելով ասվածը, անհրաժեշտ է շեշտել.

Առաջին. Հայոց 1918 – 20թթ. պետականությունը չի սկզբնավորվել 1918թ. մայիսի 28 – ի ակտով, այլ՝ նրա պատմության պարբերացումը պետք է սկսել 1918թ. հունվար ամսից, երբ փաստացի ստեղծվում են պետականության մարմինները՝ հանձինս Հատուկ կոմիտեի և Վարիչների մարմնի: Հայոց պետականությունը սկզբնավորվել է ոչ որպես հանրապետություն կամ հանրապետական կառավարման տիպի պետություն:

Երկրորդ. Որպես հանրապետություն՝ այս ժամանակահատվածում հայոց պետականությունը գործել է 1918թ. մայիսի 28 – ից մինչև 1919թ. փետրվարի 28 – ը, երբ Խորհուրդը բռնությամբ արձակվել է՝ կապված հանրապետական կառավարման տիպի պետության՝ այդ ժամանակահատվածում գոյություն ունենալու աննպատակահարմարության հետ: Ուրեմն, որպես պարբերացման երկրորդ փուլ պետք է ընդունել այս ժամանակահատվածը:

Երրորդ. Պարբերացման երրորդ շրջանը պետք է համարել 1919թ. փետրվարի 28 – ից մինչև օգոստոսի 1 – ը, երբ փաստորեն չկար օրենսդիր մարմինը և թե օրենսդիր, թե գործադիր իշխանությունն իրականացնում էր կառավարությունը:

Չորրորդ. Պետության պարբերացման հաջորդ փուլը 1919թ. օգոստոսի 1-ից 1920թ. ընդգրկող ժամանկահատվածն է, երբ կրկին վերականգնվում է հանրապե-

[18] Այդ մասին տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602:

տական կամ խորհրդարանական հանրապետական կառավարման տիպի պետությունը:

Հինգերորդ. Խորհրդարանական տիպի հանրապետությունն իր ավարտն է գտնում 1920թ. մայիսի 5 – ին՝ ՀՅԴ դիկտատուրայի հաստատումով, որը տևում է մինչև նոյեմբերի 23 – ը: Այս շրջանում իշխանությունն իրականացնում է ՀՅԴ Բյուրոն՝ Բյուրո -կառավարության անվան տակ, որը ներքին քաղաքականության մեջ իրականացնում է կարևորագույն գործողություններ: Այս շրջանը հայոց պետականության մեջ կազմում է վերջին կարևորագույն փուլը: Կառավարության անկումից հետո մի քանի օր գոյություն ունեցած Ս. Վրացյանի կառավարման շրջանը չի կարելի պարբերացման հիմք ընդունել, որովհետև այդ կառավարությունը գլխավորապես իրականացրել է մեկ առաքելություն՝ իշխանությունը Լեգրանի պարտադրանքով հանձնել է բոլշևիկներին:

Կարծում ենք, որ հայոց 1918 -20թթ. պետականության պատմությունը պետք է ներկայացնել համաձայն հիշյալ պարբերացումների և դա է պատմական ճշմարտությունը ներկայացնելու պահանջը:

Ашот Нерсисян-*К вопросу о периодизации истории армянской государственности 1918-1920гг.* - Периодизацию истории армянской государсвенности нужно начинать с января 1918г., когда фактически были созданы государственные органы в частности Особый комитет и Орган управляющих. Армянская государственность сформировалась не как республика и не как государство с республиканской формой правления. Как республика армянская государственность действовала с мая 1918г до февраля 1919г. По ввиду нецелесообразности существования государства с республиканской формой правления. Как второй этап периодизации нужно принимать этот промеуток времени. Третьим этапом периодизации нужно считать период с 28-ого февраля 1919г. до 1 августа 1920г., когда фактически небыло законодательного органа и когда и законодательную и исполнительную власть осушебвляло правительство. Следующий этап периодизации государства – это промежуток, охватювающий период с 1-ого августа 1919 г. до 1920г., когда было восстанавливано государство с республиканской или парламенско-республиканской формой правления. Республика парламентского типа завершается 5 мая 1920г. С утверждением диктатуры АРД, которая длится до 23-его ноября. На этом этапе власть осушествляет Бюро АРД. Этап правления С. Врацяна, просуществовавший несколько дней после падения правительства, нельзя принимать за основу периодизации, поскольку это правительство главным образом осуществляло одну миссию: по принуждению Леграна власть была передана большевикам.

Ashot Nersisyan-*On Armenian Statehood History Periodization from 1918 to 1920.* - The periodization of 1918-1920 Armenian statehood history should be started from January 1918, when, in fact, the state bodies were created, represented by the Special Committee and the Body of Authorities.Armenian statehood originated not as a republic or a republican type of state. As a republic Armenian statehood operated from May 28, 1918 to February 28, 1919, when the Council was forcefully released due to the

irrelevance of the Republican governmental type.This period of time should be accepted as the second stage of the periodization.

The third stage of the periodization should be considered the period of time from February 28 to August 1, 1919, when, in fact, there was no legislative body and both the legislative and executive duties were implemented by the government. The next stage of the state periodization was from August 1, 1919 to 1920 when the Republicanor Parliamentary type of government was again restored.The Parliamentary Republic ended on May 5, 1920, with the establishment of ARF party dictatorship, which lasted up to November 23.In this period power was exercised by the ARF Bureau. This period forms the last most important stage of Armenian statehood. After the collapse of the government, S. Vratsyan'sa few-day-long governmental cycle can't be taken as the basis of periodization mainly because that government has carried out one mission - to hand the power to the Bolsheviks under Legran's coercion.

РЕАЛЬНАЯ ПОЛИТИКА И МИФ ОБ “УСТУПКЕ” ЕРЕВАНА

ВАЛЕРИ ТУНЯН

Азербайджанский миф об уступке Еревана в 1918 г. в качестве столицы для Республики Армения освещен в армянской историографии с позиции исторического, логического подходов и дезориентации азербайджанского этноса[1]. Между тем вне освещения остается реальная политика расчетов, и конкретика данного времени, что является предметом публикации.

Ключевые слова: политика, миф, историческая позиция, уступка, азербайджанский этнос,, Батумский договор, Арцах, Нахичеван, независимость.

В центре внимания азербайджанских сказителей находится миф об “уступке” Еревана Республике Армения. Еще в марте 2007 г. президент И. Алиев на первом форуме организаций азербайджанской и турецкой диаспоры выступил с новой мифологической начинкой: “В 1918 г. на азербайджанских землях было создано армянское государство, которому уступили в качестве столицы Иреван - один из важнейших культурных центров Азербайджана”.[2]

Подход государственного лидера получил должное продол-жение. В декабре 2007 г. депутаты азербайджанского парламента (Милли меджлиса) постановили необходимость доведения до международной общественности факт виртуальной принадлежности Еревана. Весной 2008 г. председатель азер-байджанского парламента О. Асадов на внеочередном заседании изложил претен-зию на Ереван. Директор института истории депутат Ягуб Мамедов в парламенте затребовал аннулирования “акта о передаче” Еревана, поскольку отсутствовал кворум. Создана правительственная комиссия для изучение сказительной проблемы.[3]

На тему “уступки” в 2009 - 2011 г. появились сразу несколько работ, между которыми есть единение в постановке Ереванской проблемы и различие в истолкование занятой позиции. Объемность рассматриваемой темы предоставляет Муса Мар-джанлы в работе “Армянство. Россия. Кавказ”, который приводит “подлинник” исторического документа об “уступке” Еревана.[4] Он представляет собой протокол N 3 Мусульманского (не азербайджанского) Национального совета от 29 мая 1918 г. в г. Тифлисе, где председательствовал Агаев Гасан бек. Документ

---

[1] ***Гулян Ю***. Фальсификация истории армяно-азербайджанскох отношений 1918 - 1920 гг. в современной азербайджанской историографии. - http:// www.academ- history. am/upload/files/GULYAN Y.pdf; Ереван - азербайджанский город? Правда или миф. - http://la-meilleur.ru/index.php?id=126 Севанский Р. Ложь как средство информационной борьбы, или как Азербайджан “подарил” Эриванскую губернию Ар-мении.-http://bs-kavkaz.org /2012 /09/lozh-kak-sredstvo-informacionnoj borby-i/

[2] ***Казинян А.*** Об эволюции азербайджанского радикализма в условиях независимой государственности. - http://www.regnum.ru/news/polit/1833891. html

[3] ***Казинян А***.От февраля до февраля в контексте Бакинской пропаганды. - http:// www.golosarmenii.am/article/17380

[4] Государственный архив Азербайджанской республики, ф. 970, оп.1, д.1, л. 51 - 52.

сколь интересный, столь и познавательный, хотя тескт имеет лапидарный характер. В нем привлекают ряд моментов. Прежде всего темой переговоров Национальных советов армян и мусульман являлось определение границ государственных образований: “По открытию заседания член Совета Ф. Х. Хойский докладывает Совету о результатах переговоров представителей Совета с представителями Армян-ского Национального совета по поводу границы территории Азербайджанской и Армянской федерации”.

Из текста явствует, что инициаторами переговоров являлась азербайджанская сторона: ” При этом армянская сторона поли-тическим центром Республики Армения представила г. Ереван:” Ф. Х. Хойский заканчивает свой доклад сообщением, что для образования Армянской федерации им нужен политический центр, а таковым после отхода Александрополя к Турции может быть только Эривань”.

Представлено мнение докладчика Хойского о необходимости уважить подход армянской стороны, очевидно, во имя политического единения: ”А потому уступка Эривани армянам, говорит Хойский, является неизбежной”.

В прениях точку зрения поддержали представители разных сил как Х. Б. Хасмамедов, М. Ю. Джафаров, Шейхульисламов (партия “Гуммиет”), Магерамов (социалистический мусульманский блок), “которые признают уступку Эривани армянам исторической необходимостью, неизбежным злом”.

Приведены итоги голосования по “уступке” Эривани. Из 28 присутствующих: 15 - за,1 - против, 3 - воздержались.

Согласно протоколу происходит представление идеи конфедерации, означающее, что армянские представители деликатно согласились на координацию внешней политики. Об этом говорится: “Затем ставится на обсуждение вопрос об образовании с армянами конфедерации: после краткого обмена мнениями этот вопрос ставится на голосование”. Здесь Национальный совет мусульман проявляет полное единодушие: “Причем такой порядок будущего устройства Азербайджана и Армении советом принимается единогласно”.[5]

28 мая была провозглашена независимость Азербайджанской республики. В тот же день Армянский Национальный совет взял “управленческую функцию” над армянскими уездами. 29 мая 1918 г. объединенное заседание Западного и Восточного бюро партии “Дашнакцутюн” утвердило О. Качазнуни премьер-министром Армении и Ереван в качестве столицы. Итог происшедшего подводит комментарий Марджанлы: “Иными словами, уже наутро после провозглашения независимости Северного Кавказа и Кавказской Армении Азербайджанский Национальный Совет сделал поистине царский подарок Армянскому Национальному Совету”.

Мнение подкрепляется авторитетной сноской от 29 мая: “В тот же день столь дружеский жест был подкреплен директивой председателя Совета Министров АДР Фатали хана Хойского МИД АДР Мамед Гасану Гаджинскому: “С армянами мы покончили все соры, они примут ультиматум (турецкий) и покончат с войной. Мы уступили им Эривань”.[6]

---

[5] ***Марджанлы М.*** Армянство. Россия. Кавказ. М., 2011, 2-изд.,с. 49.

[6] ***Марджанлы М.*** Карабахская проблема с позиций геополитики: аналитический ракурс.СПб., 2009, с.8.

В этом контексте важен подход историка Дж. Гасанлы. В работе “Русская Революция и Азербайджан: трудный путь к независимости (1917 - 1920)” им изложена собственная позиция надуманной проблемы принадлежности Еревана: “Начатые закавказским правительством батумские переговоры были продолжены вновь созданными национальными республиками, причем каждая из них выдвинула свои условия мира. На передний план вышла проблема определения границ между кавказскими республиками, и Армения оказалась в сложном положении. Еще до заключения договора армянские посланцы обратились за помощью к азербайджанскому правительству и получили доброжелательный ответ. 29 мая премьер Хойский сообщил Азербайджанскому национальному совету о переговорах с Армянским национальным советом, в частности о том, что Армянская федерация нуждается в политическом центре. После захвата турками Александрополя таким центром мог быть город Эривань, поэтому есть идея этот город уступить”.[7]

Указан тот же порядок принятия постановление и число участников голосования. Но есть и новый штрих, указывающий на наличие противодействия принятому постановлению, которое разрешилось 1 июня 1918 г.:”Два дня спустя члены Национального совета эриванцы Мир Хидаят Сеидов, Багир Рзаев и Нариман-бек Нариманбеков выразили протест по поводу передачи города армянам, но состоявшееся 1 июня заседание Азербайджанского национального совета отклонило этот протест”.[8]

Приводимая информация Гасанлы основана на протоколе N 5 заседания Мусульманского национального совета (07.06. 1918) государственного архива Азербайджанской республики.

Дата протокола означает, что Мусульманский национальный совет седьмого июня, после признание Турцией независимости Республики Армения 4 июня 1918 г., вернулся к обсуждению темы единения. Подтверждается стремление азербайджанцев к созданию федерации с Республикой Армения, т.е. кооперированию внешней политики.

Из всего этого следует наличие промежуточного плана размежевания и единения и армян и азербайджанцев Закавказье. как конфедерация и Армянская федерация. Это также означает, что Азербайджане дорожащий “союзническими отношениями” с Турцией не пошел против воли “старшего брата” и принял его волю к исполнению. Последнему же приходилось учи-тывать позицию Германии.

На этом значение принятого постановления не закончилось. В июне-июле 1918 г. намечалась Константинопольская конференция, где страны Четверного блока, по настоянию Германии, должны были утвердить договора Турции с закавказскими республиками. Притом армянская сторона подняла вопрос воссоединения Карабаха. Выяснилось желание азербайджанской стороны сохранить за собой армянский Карабах любой ценой.

Страхуясь на всякий случай председатель Совета министров АДР Фаталихан Хойский 31 июля 1918 г. отправил инструкцию руководителю азербайджанс-

---

[7] ***Гасанлы Дж.***Русская Революция и Азербайджан:трудный путь к независимости (1917-1920). Москва, 2011, с. 169.

[8] Там же, с. 169, 170.

кой делегации: “Посылаю Вам просимые карты по одному экземпляру с очерчением границ Азербайджана, которые Вам надо всемерно отстаивать: если армяне заявят претензию на Карабах, то тогда откажитесь уступить им Эривань и часть Казахского уезда, если же армяне останутся на почве состоявшегося словесного соглашения, то даже можно было бы уступить им эту часть Эриванского уезда, которая на карте обозначена пунктиром”.[9] Допускалось обменять часть Армении на другую, поскольку они не являлись азербайджанскими.

Интерес представляет также рассмотрение Гасымлы обусловленность “уступки” Еревана рядом факторов на заседании Мусульманского национального совета в ходе тифлисского заседания от 29 мая 1918 г. Решение представляется вынужденной геополитической мерой из ряда факторов: давление “иностранных государств” (очевидно речь о Турции); необходимость столицы для Армении; значимость армянского фактора на Южном Кавказе отсутствие военной силы воспротивиться провозглашению Еревана столицей Республики Армения; расчет на создание конфедерации с Арменией.[10]

Самым главным фактором, на наш взгляд, являлось нахождение Азербайджанского Национального совета в Тифлисе, который оказался полководцем без войска. А именно Баку находился под властью большевистского совета во главе с С. Шаумяном и контролем Советской России. Это заставило азербайджанцев избрать столицей Гянджу и призвать младотурок во главе с Нури пашой для захвата Баку. Имелся расчет привлечь армян к походу на Баку, а затем растворить в конфе-деративном союзе, что провалилось.

Следует обратить внимание на использование ряда важных понятий в армяно-мусульманских обсуждений -“Азербайджан”, “Армянская федерация” и конфедерация между республиками Азербайджан и Армения. Их использования свидетельствует о ряде нюансов переговорного процесса в канун провозглашения независимости закавказских республик.

Мусульманская делегация прибыла на мирную конференцию в Батуми 17 мая 1918 г.Спустя дня состоялось совещание закавказских делегаций, где мусульманские представители отка-зались принять посредничество Германии в отношениях с Турцией, из-за отсутствия разногласией с ней. Грузинские представителеи сделали вывод: “Мы стояли на перекрестке: одним было по пути с турками, другим - не по пути”.[11] Уже 21

мая представители мусульман под руководством Хана-Хойского заявили на совещании с грузинскими уполномоченными с Жорданией о возможности образования отдельного армянского “кантона”. В качестве зондажа указано “на пример” организация в виде схемы “Александропольской губернии”.[12] На-чалось воздействие на позицию армянских представителей.[13]

---

[9] ***Марджанлы М.*** Армянство. Россия. Кавказ…,.с 50.

[10] ***Гасымлы М.*** Анатолия и Южный Кавказ…, с.467 - 470

[11] ***Авалов З.*** Независимость Грузии в международной политке 1918 -1921 гг. Париж, 1924, с. 40.

[12] Там же, с. 57.

[13] ***Վրացյան Ս.,*** Հայաստանի Հանրապետություն, Երեվան,1993, էջ 154, 156:

Армянская сторона зафиксировала направленность мусу-льманских желаний в территориальных вопросах: “Приехавшие мусульмане выдвигают вопрос о Баку, о переделе и о пропуске турецких войск”.[14] Агрессивность их поведения отмечает представитель армянской делегации А. Хатисян: “Татары давили нас угрозой Турции, имели с нами совещание и вызывали у нас проект передела в самых скромных размерах (без Карабаха), конфедерацию и согласие на уступку Ахалцихского и Сурмалинского уездов. Этими уступками они склоняют нас, обещают поддержать нас перед турками”.[15]

В этих условиях армянская сторона запросила содействия военного представителя Германии ген.-м.фон Лосова, который 25 мая поздно вечером обнадежил в вопросе независимости: “Он просил прежде всего немедленно отправить делегацию в Берлин, обьявить независимость Армении, не связывая себя с Грузией и Азербайджаном пока, пока доверять его защите и Шуленбургу,[16] не входить в военные столкновения с турками,…”.[17]

А. Оганджанян отмечает о представлении Лосовым наличия разграничение сфер влияния в регионе с Турцией: ”На бу-дущее он смотрит так, что Кавказ по сфере влияния должен быть разделен на две части: мусульманские области - Турции, а христианские области - под протекторатом Германии”.[18]

На следующий день - 26 мая руководитель турецкой делегации Халил бей дал согласии, чтобы армяне “на своих 10.000 кв.в(ерстах) соорудят себе особое государство. Они его при-знают и с ним заключат мир. С грузинами и татарами они мир заключат. Если армяне захотят вступить в конфедерацию с мусульманами, оно против этого ничего не будут иметь”.[19]

26 мая Армянский Национальный совет обсудил ситуацию в регионе. Ст.Мамиконян предложил признать совершившимся фактом независимость Грузии, передислоцировать все войсковые части и ресурсы в Ереван, как центре армянских уездов.[20]

Очередное уточнение позиций относительно закавказских национальных границах состоялось 27 мая. Халил бей сообщил Хатисову для передачи руководству армян о жесткой очерченности армянской государственности в формате Закавказья: “Турки не имеют ничего против образования Армении в пределах Закавказья и что Закавказская федерация - есть вопрос ближайшего будущего”.[21]

Обращает на себя внимание проблема наименования государственности “закавказских татар” и армянской. Определенность название государственности

---

[14] ***Ա.Լ.Խատիսյանի*** օրագրությունից, Արեվելահայ եվ թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, էջ 160:

[15] Նույնը, էջ 161:

[16] Дипломат Вернер фон Шуленбург - представитель Германии в Грузии.

[17] Նույնը, էջ 163:

[18] Յայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. Պատ. խմբագիրներ՝ ***Գ. Գալոյան, Վ. Խազախեցյան,*** Երեվան, 2000, N 13a, էջ 19, 20:

[19] ***Ա.Լ.Խատիսյանի*** օրագրությունից…, էջ 163:

[20] Հայաստանի անկախության հռչակումը եվ իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), Կազմող Հ.Կ. Սուքիասյան. Երեվան, 2009, N 1, էջ 14,15;

[21] Յայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ…, էջ 164, 165:

“закавказских татар” Азербайджаном прозвучала со стороны членов мусульманской фракции Закавказского сейма 27 мая 1918 г. модератором выступила Турция, рассчитывающая объединить Кавказский Азербайджан и Персидский Азербайджан[22].

28 мая вечернее заседание Армянского Национального со-вета обсудило ситуацию. Сущность представил М. Пападжанян: “Турки свою фракцию Сейма провозгласили парламентом, пополнили представителями из разных учреждений и избрали правительство. Грузины известно как составили. Остаемся мы. чтобы объявить независимость”.[23] Заседание сочло возможным пойти на провозглашение Республики Армении, независимо от территориальных размеров поскольку это заставило бы Тур-цию признать ее независимость. Сформирована делегация для переговоров с турками.[24]

Между тем в состав государства “азербайджанских тюрок” намечалось включить и восточноармянские земли, благо там имелось мусульманское население”. На это указывает Первая статья “Декларации (Акта) о независимости Азербайджана”,[25] провозглашенная 28 мая 1918 г. в Тифлисе: “Отныне народы Азербайджана являются носителями суверенных прав и Азербайджан, состоящий из Восточного и Южного Закавказья, - полноправным, независимым государством”.[26]

Чтобы обойти неприемлемость этого аспекта, очевидно, вначале возник промежуточный план провозглашения Армянской федерации. Ход переговоров с Мусульманским национальным советом, претендующим на конфедерацию, показал армянской стороне иллюзорность мирного сожительства с Азербайджаном, который патронировал бы настроения местных мусульман. В этих условиях произошел переход от плана Армянской федерации к созданию Республики Армения, которая наравне с Азербайджаном выступала бы субъектом международных отношений. Компромиссом противоположных расчетов стала идея конфедерации.

В совокупности происходил процесс размежевания армян и азербайджанцев в новой конфигурации, который обсуждался еще в начале июля 1917 г. в Петрограде. Армянская сторона тогда добивалась от Временного правительства и закавказских соседей признания трех армянских губерний - Ереванской, Александропольской и Гандзакской. Последнюю предусматривалось составить из армянской юго-западной части Елизаветпольской губернии, а северо-восточную выделить в новую Елизаветпольскую мусульманскую губернию. Замечания мусульманской стороны побудили на обсуждение 8 июля 1917 г. вынести следующий разменный вариант (см. таб.).

---

[22] ***Арустамян Б***. “Западный Азербайджан”, что это за географическое название. - http://voskanapat.info/?p=8519

[23] Հայաստանի անկախության հռչակումը…, N 5, էջ 28:

[24] Նույնը, էջ 28-30:

[25] Азербайджанская Демократическая Республика (1918-1920). От. ред. Н. Агамалиева. Баку, 1998, с. 39.-http://elibrary.bsu.az/yenii%5 Cebookspdf%5 CADR.pdf

[26] ***Волхонский М. Н, Муханов В***. По следам… Приложение 2, с.230.

Состав планируемой Гандзакской губернии

Наименование уездов	Армяне, тыс., %	Мусульмане, тыс., %	Остальные, тыс., %	Всего тыс.
Каравансарайский	61 84	9 11	4 15	74
Гандзакский	67 59	29 25	18 16	114
Шушинский	150 70	58 27	5 3	213
Зангезурский	88 69	38 30	1 1	127
Итого…	366 70	134 25	28 5	528

Разменный вариант увеличивал численность Елизаветпольской мусульманской губернии до 747 тыс.: армяне - 53 тыс. (7%) мусульмане - 633 тыс. (89%), остальные - 31 тыс.(4%). На рассмотрение этого проекта не явились мусульманские участники Петроградского обсуждения являлись Хан-Хойский и А. Л. Шейхульисламов[27], которые 29 мая 1918 г. так сказать армянам "подарили" Ереван, а сами 16 июня ринулись на захват Гандзака (Елизаветполь), который 30 июля был переименован в Гянджу.[28]

Значение представляет также рассмотрение Т. Атаевым обусловленность "уступки" Еревана рядом факторов на заседании Мусульманского национального совета в ходе тифлисского заседания от 29 мая 1918 г. Необходимость образования "маленькой Армении" со столицей в г. Ереване мотивируется рядом факторов: желание турок иметь ее в качестве буфера с Россией; превращение армянского государства в сателлита Турции, удаленного от Петербурга и стран Антанты; консолидации в "армянской Эривани" османских и азербайджан-ских армян; уменьшение территориальной претензий со стороны Запада к Османской державе; отсутствие стратегической значимости в данное время Еревана в качестве столицы Ар-мении".[29]

Гипотеза нестратегической значимости Еревана является перелицовкой младотурецкого плана об образовании армянской, грузинской и татарской автономии в Закавказье, изложенной младотурками в августе-ноябре 1914 г.[30] Главным же в воззрении Атаева является стремление приглушить страсти возникшие вокруг синицы в небе.

Для выдвинутой проблемы "уступки Еревана" и захвата Гандзака азербайджанцами важно значение имеют также три дефиниции - "наименьшее зло", "доброжелательный ответ" и "царский подарок". "Наименьшее зло" исходило из того, что Республика Азербайджана изначально создавалось как экспансионистское государство. Обоснованием мнения является первая статья "Акта о независимости" Азербайджана, принятая 28 мая 1918 г. на первом заседании Наци-

[27] ***Тунян В. Г.*** Карабахский конфликт…, с.16 -19.

[28] Гянджа - вторая столица Азербайджана.-http://azcongress.info/stati-2013/189-vypusk-32-328-13-sentyabrya-2013-goda/9411

[29] ***Атаев Т.***Ленин, нефть и судьба Эривани. - http://forum.bakililar.az/? showtopic =87351

[30] ***Тунян В. Г.*** Младотурки и Армянский вопрос.Ереван, 2005,ч.2, с.482 - 486.

онального совета. В изложение Гасанлы она гласит: “Отныне народы Азербайджана являются носителями суверенных прав и Азербайджан, состоящий из Восточного и Южного Закавказья, полноправным, независимым государством”.[31]

Содержание первой статьи свидетельствует о намерении включить в состав Демократической республики Азербайджан армянские территории. Указание о Южном Закавказье имеет ввиду Еревано-Нахичеванский и Шушинский районы.[32] По сути, речь идет о реализации младотурецкого плана образо-вание азербайджано-армянского объединения в Закавказье в форме “Южнокавказской республики”, где армяне, памятуя судьбу армянского населения Нахичевана, были бы ассимилированы, либо уничтожены и выселены. О плане создания “Южнокавказской республики” из Азербайджана и Армении, указывает сообщение посла в Константинополе Бернсдорфа министерству иностранных дел 1 июня 1918 г. Источником инфор-мации являлся Халил бей.

“Доброжелательный ответ” на армянский запрос исходил из геополитической ситуации. Азербайджанское правительство находилось в г. Гяндже (Елисаветполе), куда переехало из Ти-флиса 16 июня, а в намеченной столице г. Баку правила Советская коммуна во глав с комиссаром Советской власти на Кавказе Ст. Шаумяном. Именно Советская власть представлялась “наибольшим злом”, которая могла смести как мусаватистов, так и дашнаков в виде новосозданных государств. В этом контексте так называемая уступка “Эривани” действительно выглядит “наименьшим злом”. Она представлялась временным размежеванием двух сиамских близнецов, из которых должен был выжит сильнейший. Основание к этому расчету имелось. По сообщению того же немецкого посла брат главнокомандующего Турции Энвера, а именно Нури паша через Турцию перебрался в Елизаветполь для организации деятельности мусульман по “изгнанию большевиков” - освобождения Баку и наступлению на Карабах.[33]

Так называемый “царский подарок” руководства Азербайджана являлся проявлением реализма прагматичной политики. Если нельзя взять то, что хочется, но не принадлежит, то можно сорвать политические дивиденды. Главным же втуне “дружеского жеста” находилась младотурецкая перчатка о совместных действиях. Во имя продвижения собственных интересов младотурки пошли на создание Республики Армении со столицей в г. Ереване, заставив считаться с собой азербайджанских собратьев. Наряду с этом азербайджанцы, не могли не знать от Вехиб паши, что Национальный Совет Еревана сумел эффективно организовать сопротивление турецким войскам и приостановить их дальнейшее продвижение. Самостоятельное наступление новоявленных азербайджанцев на Баку могло обернуться потерей Гандзака, контрнаступлением коммуны Шаумяна и другими осложнениями. Поэтому приходилось со-блюдать дипломатические приличия до поры до времени и появления дополнительных ресурсов экспансионизма.

---

[31] ***Марджанлы М.*** Карабахская проблема…, с. 162.

[32] “Армянский вопрос” на Кавазе. Сост.: Гейдаров Т.К., Багиев Т. Р., Шукюров К. К.СПб., 2011, т. 3, N 12, с. 28.

[33] Армянский вопрос и геноцид ..., с.509.

Геополитический ракурс происходящих событий четко осозновали в Германии, которая считали, что Турция должна ограничиться соподчиненной ролью в регионе. По поводу подрыва младотурками "полюбовного соглашения с Кавказом" и распадом Закавказской республики. Министерство иностранных дел 26 мая 1918 г. дало шифрованную телеграмму своему представителю о политической линии. Позиция Берлина в отношении Кавказа определена как карта-бланш: "1. Кайзе-ровское правительство сохраняет за собой свободу действий в отношении всех событий на Кавказе. Оно в основном оставляет за собой точку зрения на такие меры, принятые в пределах или за пределами уездов Карс, Ардаган, Батум, которые соот-ветствую Брест-Литовскому договору".

Выражено критическое отношение к наступлению турок: "2. Дальнейшее наступление турецких войск на Кавказе и турецкую пропаганду за пределами упомянутых трех уездов кайзеровское правительство не может ни одобрять, ни поддерживать".[34]

Третьим, четвертым и пятым пунктами кайзеровское правительство соглашалось признать независимость Грузии де-факто, при обеспечение согласия Советской России, получить у Османского правительства гарантию на "соответствующее обращение с армянами" в оккупированных турками областях, осуждались "самовольные военные и дипломатические акции" политики Турции.[35]

3 июня 1918 г. совещание у канцлера Германии Бетмана-Гольвега в Берлине констатировало активизацию протурецких сил в Закавказье: "В восточной части Закавказья (Баку и Елизаветполь) имеются для Турции уже старые панисламские точки соприкосновения. Желающие присвоить себе весь Кавказ, но не для наведения в общих интересах порядка, а для того, чтобы оградить страну.

Три силы рвутся вперед:

1) новотурецкий империализм, стоящий за Энвером;

2) правящая партия Талаата, желающая истребить всех армян не только в Турции, но и за ее пределами. Халил умеренный, но нерешительный;

3) финансовые воротилы в Галлиполи, растущая воровская клика. Эта сила, пожалуй самая могущественная".

Дана оценка Батумского соглашения как невыгодного интересам Германии: "Установление мира между Закавказьем и Турцией, по Халилу, даст Турции всю Армению вплоть до подступов к Эривани и Эчмиадзину, далее - экономического господство в Закавказье и на ж/дорогу на Баку. О немецком участии никакой речи. Халил повсюду претендовал на господство и был лишь готов продать нам излишки.

Даже турецкий заем Закавказью (!) – естественно, с выкачанными немецкими деньгами".[36]

Итог совещания подвел статс-секретарь Кюльман, который 3 июня 1918 г. телеграфировал кайзеровскому послу Бернсдорфу в Константинополь о неправо-

[34] Там же, с. 499.

[35] Там же, с. 499, 500.

[36] Там же, с. 513.

мочности самостоятельных действий Турции по созданию закавказских республик: “Мирные договора, которые Турция заключила отдельно от своих союзников с кавказцами, не могут быть нами признаны, так как они противоречили бы выраженному в статье 3 немецко-турецкого договора от 28 сентября 1916 г. запрету любого сепаратного договора о мире. Мы можем считать действительными лишь такие договора, которые заключаются при участии четырех союзников”.[37] Затребовано проведение союзнической конференции по определению формата территорий и связей закавказских республик.

Так что так называемая уступка Еревана и джентльменское поведение Национального совета Азербайджана являлись временной мерой, призванных прикрыть содержание большой геополитической игры. На это указывает и содержание “Дого-вора дружбы между императорским оттоманским правитель-ством и Азербайджанской Республикой” от 4 июня 1918 г., устанавливающая первой статьей партнерство, мир и дружбу. Третья статья декларировала необходимость заключения протоколов между Грузией, Азербайджаном и Арменией по определению их границ, которые должны были стать составной “настоящего договора” в Константинополе. Главным являлись положение четвертой и пятой статьи, предусматривающих военную помощь турецких сил по наведению тишины и спокойствия в Азербайджане, разоружение и уничтожение раз-личных “банд”.[38] По прибытию Нури паши в Гянджу была организована перетасовка рядов азербайджанских руководителей. 17 июня 1918 г., с учетом давления младотурок, создано второе временное правительство Азербайджана . Его возглавил, как и первое, Хан-Хойский, но с большей сердцебольностью к интересам Стамбула.[39]

Тезис Ереван - азербайджанская земля несет взаимосвязанную конструкцию с процессом формирования армянской государственности в Закавказье, а именно так называемой нелегетимности создания Армянской Республики. Такой любопытный настрой связан с молодостью азербайджанского этноса, а точнее политической элиты, стремящейся стать выше всех и вся, прикрыть экспансионистскую политику в регионе.

Об этом говорят сами критически мыслящие азербайджанские исследователи, указывая, что это стремление может обернуться национальной катастрофой: “Некоторые страны просто придумали свои исторические тезисы. Так было в Турции, в СССР. Наша же нынешняя история, основана на тезисах, что называется “hефтабеджар” (в смысле “винегрет”, “микс”). На осно-вании наших исторических тезисов, мы, “азербайджанцы” внуки Атропата, Джаваншира, Бабека, и в то же время внуки Огуз хагана, Шаха Исмаила и Махмуда Гезневи. По базовому тезису Советского Азербайджана уже сформировалось мнение, что это было инструментом в руках Сталина против Ирана. Однако наши историки довели проблему до такого абсурда, что все смешалось в микс. Окинув взором прошлое, мы увидим, что эта традиция вовсе не наследие СССР”. Указан смысл происходящей фальсификации истории в самоутверждение: “У нашей истории есть одна исклю-

[37] Там же, с. 511.

[38] ***Гасанлы Дж.*** Русская Революция и Азербайджан…, с. 171.

[39] 1921 год: Энвер-паша-Константинополь, Нариманову - Карабах.- http://bskavkaz.org/2011/08/

чительная, категорическая цель - “доказать” что армяне, как нация в истории вообще не существовали”.

Сделан объективный вывод: “Нельзя фальсифицировать историю в угоду обоснования примитивного принципа “Кто раньше пришел… Ни одна международная структура, по прошествии многих лет, не прогонит народ с той или иной территории лишь на том основании, что они пришлые, вдумайтесь в суть, если мы признаем что тюрки пришли сюда из Центральной Азии, нас тут же отправят обратно в Монголию, в Казахстан? Какой здравый ум может так мыслить? Как говорит Рамиз Мехтиев “**думаю, что этому не стоит удивляться, ибо это удел тех, кто страдает синдромом - комплексом невосприятия, который доводит их до состояния, когда без клинического вмешательства невозможно избавиться от постоянных галлюцинаций**.”

Революционно сказано о необходимости построения в Азербайджане демократического и гражданского общества: “Министерство образования должно вырастить граждан нашей страны не врожденными фашистами, а людьми со здравым умом, способных воспринимать исторические реалии. Фаши-сты же обречены в современном мире на вечное поражение”.[40] Все сказано четко и ясно, фальсификаторам не убавить и не прибавить.

Следовательно, мнимая уступка Еревана Республики Армения являлась составной сложной геополитической проекции по созданию Большого Азербайджана в Закавказье и растворения в нем армянской государственности. Миф об уступке Еревана - это информационная завеса для обоснования претензий на армянские земли: “После распада Российской империи на Южном Кавказе царила анархия. Они стали преотворять в жизнь идею воссоздании “Великой Армении от моря до моря” за счет азербайджанских земель. Угроза исходила не только от большевиков, но и от дашнаков”.[41]

Однако, если армяне своим сражениями в Сардарапате, Апаране и Каракилисе 22-29 мая 1918 г. с турками обеспечили себе независимость, то Азербайджан стал полноценным проектом Турции.[42] В силу чего 28 мая 1918 г. была провозглашена Республика Армения. Действуя с позиции реальной политики и гибкости перед тандемом Турции-Азербайджан, армянская сторона в “Акте” независимости не детализировала подконтрольную территорию, а лишь заявила о взятии власти в армянских уездах Закавказья[43].

Автором армянской формулы независимости был Степан Мамиконян. При ее составлении учтены ряд соображений ре-альной политики “новой ситуации” в регионе: 1) прежде всего, северная граница с Грузией и Азербайджаном не была определена; 2) нежелательным сочтено использования понятия “Ар-мения”, что устроило бы Турцию, стремящейся изменить фор-мат Армянского вопроса, а именно его центр перенести с Западной Армении в Закавказье; 3) Армянский

---

[40] ***Ага Джавид***.Фальшивая история Азербайджана. - http://forum openarmenia.com/topic /33084

[41] У.Гаджибейли и Армянский вопрос на страницах газеты “Азербайджан”.- http://www. kavkazp-lus.com/index.php/arkhiv-nauchnykh statej/etnologiya/ item/393

[42] ***Միմոնյան Հ***., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 311.

[43] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 …, N 12, էջ 18:

вопрос сохранялся в международной повестке дня как для Западной, так и Восточной Армении;[44] 4) окончательный вердикт относительно состава Армянского вопроса предстояло решить послевоенной мирной конференции.

Батумский договор 4 июня 1919 г. между Турцией и Республикой Армении не решил проблемы создания полноценной армянской государственности, остались в нерешенности воссоединения армянских земель вокруг Еревана, обеспечил лишь территориальные раздоры.[45] Вскоре последовало создание правительства Республики Армения из закавказских армянских уездов. Признание Еревана центром армянской независимости оказалось стратегически оправданным, позволившим начать вокруг него консолидацию армянских земель. 28 мая 1919 г. правительство Республики Армения провозгласило "Независимость объединенной Армении", учитывая волю второго съезда западноармянства. Армянские земли отчизны в Закавказье и Османской империи подлежали управлению в форме демократической республики. "Акт независимости" объединенной Армении был принят на основе санкции парламента от 27 апреля 1919 г.[46]

Таким образом, реальностью современной психотропной войны Азербайджана против Республики Армения, является проявлением очередного расчета на воплощение захватни-ческих устремлений. Периодические заклинания президента И. Алиева на тему, что "одним из первых решений" республики Азербайджан в 1918 г. о передача Еревана "из состава Азербайджана Армении" не соответствует действительности.[47]Она представляет мифофраншизу по фальсификации истории. Конкретика политики обнажает экспансионизм мифа. Сама идея сожительства двух народов в Закавказской федерации, Арцаха и Нахичевана в составе Азербайджанской ССР оказалась несостоятельной в силу турецкой ментальности.

Վալերի Թունյան - ***Իրական քաղաքականությունը և Երևանի զիջման միֆը:*** - Ադրբեջանական առասպելը, թե իբր 1918 թվականին նվիրել է Երևանը նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը, չի համապատասխանում իրականությանը: Կարելի է նվիրել այն, ինչը քեզ է պատկա-նում, իսկ Երևանը երբեք չի պատկանել Ադրբեջանին:

Առաջ քաշված միֆը նպատակ ունի քողարկել Ադրբեջանի նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասի հայկական հողերի նկատմամբ: Այդ առասպելի ներքո, Ադրբեջանը, համագործակցելով Թուրքիայի հետ, ձգտել է գրավել Ղարաբաղը, Նախիջևանը և Գանձակը: Արդի պայմաններում առասպելը, որպես պատմահոգեբանական պատերազմի արգասիք, աշխատում է արդարացնել ռազմաքաղաքական հակադրությունը Հայաստանի Հանրապետության հետ:

Valeri Tunyan - ***The real policy and the myth about the concession of Yerevan***- Azerbaijani legend about presenting Yerevan to the newly founded Republic of Arme-

---

[44] ***Ռուբեն***. Հայ յեղափոխականի մը յիշաատակները.Երեվան, 1990, h. 7, էջ 137:

[45] ***Ա. Ներսիսյան.,Ջ. Թորոսյան***, Բաթումի կոնֆերանը: Հայաստանի սահմանների հարցը Բաթումի պայմանգրում, - Ակունք, 2012, h. 2, էջ 18:

[46] Յայաստանի Հանրապետությունը 1918-1920 …, N 90, էջ 106:

[47]Президент Ильхам Алиев принял участие в Форуме лидеров 38-ой сессии Генеральной конференции ЮНЕСКО.- http://www.trend.az/ azerbaijan/ poli-tics/2 457700. html

nia in 1918 cannot be regarded as true. One can present something which belongs to him, and Yerevan was never in the possession of Azerbaijan.

The proposed myth was aimed at veiling the Azerbaijani invasive policy towards Armenian areas in South Caucasus. Guided by this myth Azerbaijan, in collaboration with Turkey, was proceeding to conquer Karabakh, Nakhijevan and Gandzak. In the current situation the legend can be regarded as the product of historic- psychological war and is aimed at justifying the military- political conflict with the Republic of Armenia.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԷԴՈՒԱՐԴ ՋՈՂՐԱՓՅԱՆ

Հայաստանի հանրապետությունը 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված սահմանադրությամբ բաժանվեց վարչատարածքային նոր միավորների՝ մարզերի:

Դրա հիմքում, ինչպես նաև նախորդ բոլոր բաժանումների ժամանակ, ընկած էր տնտեսական բաղադրիչը և կառավարման արդյունավետության բարձրացման պահանջը: Տնտեսական գործոնի գերակայությունը ինքնին ենթադրում է սոցիալական տարաբնույթ ենթակառուցվածքների առկայություն, որոնց միջոցով լուծվում են աշխատատեղերի, զբաղվածության ժողովրդագրական, կրթության, առողջապահության և այլ հիմնահարցեր:

Այս համատեքստում դիտարկվում է արդեն տևական ժամանակ շրջանառության մեջ դրված գյուղական համայնքների խոշորացման ծրագրի նախագիծը: Մեր կարծիքով, առաջարկվող վարչատարածքային նոր վերափոխությունը իրատեսական չէ և չի կարող նպաստել գյուղական համայնքների արդյունավետ կառավարմանը և առկա սոցիալական դժվարին խնդիրների լուծմանը: Անհրաժեշտ է, ոչ թե մեխանիկորեն միացնել գյուղական համայնքները, այլ խթանել դրանցից յուրաքանչյուրի համամասնական զարգացմանը:

Բանալի բառեր **.** վարչատարածքային բաժանում, սոցիալական հիմնախնդիրներ, ագրոքաղաք, սեփականաշնորհում, ենթակառուցվածք, գյուղերի խոշորացում, պաշտպանունակություն, նյութական ռեսուրսներ, սոցիալական լարվածություն, զբաղվածություն, արտագաղթ, սահմանամերձ գյուղեր, ռազմականացված բնակավայրեր, <<ժողովրդագրական ձմեռ>>, շրջանացման ծրագիր:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական առաջընթացի և հասարակության սոցիալական կառուցվածքի բնականոն ձևավորման գործընթացների դիտանկյունից բացառիկ նշանակություն ունի երկրի վարչատարածքային խելամիտ և հեռատես բաժանման գործոնը: Վերջինիս՝ բոլոր անհրաժեշտ և բավարար պայմանների իրատեսական հաշվառմամբ կենսագործումը, հանրապետության ազգաբնակչության համամասնական տեղաբաշխումը, քաղաքային և գյուղական բնակավայրերի ներդաշնակ ու արդյունավետ համակցությունը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ու քաղաքական կայունության աներկբա երաշխիքներն են: Ինչպես հուշում է պատմական փորձը, հիշյալ գործոնների անտեսումը, դրանց գիտակցված կամ չմտածված շրջանցումը, ձևախեղումը, անհեռատես ու անտրամաբանական փորձարարությունը հանգեցրել են անուղղելի, երբեմն էլ աղետալի հետևանքների:

Հայաստանում պատմականորեն գյուղն է եղել երկրի հիմքերից մեկը, գյուղացին ու գյուղական համայնքն են եղել նյութական բարիքների հիմնական արտադրողը, երկրի պաշտպանությունն իրականացնողն ու աշխարհազորը համալրողը, հարկատու հիմնական օղակը: Գյուղերն Հայաստանում, մասնավորապես սահմանայիններն՝ ունեցել են անվիճելիորեն պաշտպանական կարևոր

նշանակություն: Հայոց գրեթե բոլոր արքայատոհմերն ու արքաները, քաջ գիտակցելով այդ հանգամանքը, մշտապես խրախուսել են գյուղերի ստեղծումը, նպաստել դրանց ամրապնդմանը՝ կարևորելով ոչ միայն դրանց տնտեսական, այլև ռազմավարական ու պաշտպանական նշանակությունը: Այսպես, Ք. ա. 5-րդ դարի հույն պատմիչ և զորավար Քսենոփոնը, նկարագրելով Հայաստանով հունական զորքերի նահանջի երթուղին, հիշատակում է նաև հայկական գյուղերի մասին: <<Գետն անցնելուց հետո հելլենները կեսօրվա շուրջ դասավորվեցին ու ճանապարհ ընկան Արմենիայի միջով: Այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր և ուներ ապարանք սատրապի համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ:… Այնուհետև գնացին երեք կայան՝ տասնհինգ փարսախ, մինչև Տելեբոաս գետը: Այն գեղեցիկ էր, բայց ոչ մեծ, իսկ գետի մոտակայքում կային շատ գյուղեր: Այս վայրը կոչվում էր արևմտյան Արմենիա>>[1]: Մշակութային առումով գյուղն ու հասարակ գյուղացին է պահել, պահպանել ու շարունակաբար ժառանգել հաջորդ սերունդներին ազգային արժեքները՝ ավանդույթներն ու սովորույթները, ծեսերը, լեզուն, կենցաղավարությունը, հյուրընկալությունը, հումանիստական գաղափարները: Դրա վառ ապացույցը հելլենիզմի դարաշրջանն է /3-րդ դ. մ. թ. ա. – 3-րդ դ. մ. թ./: <<Դարավոր ավանդական ըմբռնումների և մշակույթի առկայությունը մի կողմից, նոր հելլենիստական բնույթի հասարակական հարաբերությունների, գաղափարների և մշակութային ավանդույթների առաջացումն ու զարգացումը՝ մյուս կողմից, պայմանավորեցին երկու հիմնական ուղղությունների զարգացումը հին հայ մշակույթի մեջ: Դրանցից առաջինը ավանդական ժողովրդական ուղղությունն էր, իր բնիկ տեղական և արևելյան արմատներով ու ակունքներով, որը զարգանում էր ժողովրդական, մանավանդ գյուղական լայն զանգվածների մեջ, անդրադարձնելով ժողովրդական ըմբռնումները, պատկերացումները, ավանդույթներն ու ճաշակը>>[2]:

Սոցիալ հոգեբանական տեսակետից, հասարակության զանգվածային հատվածը ներկայացնելով, հայ գյուղացին առավել ամուր էր կապված հայրենի հողին, իր բնակավայրին: Քաղաքակիրթ նստակյաց ժողովուրդներին բնորոշ արարելու, հարենի հողը սրբագործելու մղումը լծորդված է ցանկացած հայ գյուղի ու գյուղացու տեղական հայրենասիրությանը:

Պատմական այս փոքրիկ ակնարկի խորապատկերի վրա՝ ավելորդ չէ նկատել, որ ցանկացած բարեփոխում, հատկապես վարչատարածքային բաժանումների ժամանակ, պետք է լինի մանրակրկիտ ու համակողմանի հիմնավորված, տրամաբանված՝ բացառելով դրա հետևանքով նորանոր էլ ավելի բարդ խնդիրների առաջացումը ու դրանք հաղթահարելու նպատակով լարված ջանքերի, միջոցների ներդրման պահանջը: Որպեսզի ասվածը մերկապարանոց չհնչի և լինի առավել համոզիչ, անհրաժեշտ է ծանոթանալ ՀՍՍՀ պետպլանի տնտեսական շրջանացման 1926թ. հանձնաժողովի նյութերին ու առաջարկություններին, որոնք դրվեցին 1929-1930թ. տնտեսական սկզբունքով վարչատարածքային բաժանման հիմքում: Հետագայում 1957, 1966, 1970,1977թթ. կազմվել են տնտեսական շրջանացման նոր սխեմաներ: Դրանցում, անտարակույս, հաշվառված էին սոցիալ- տնտեսական այն բոլոր տեղաշարժերը, որոնք արձանագրվել էին

[1] ***Քսենոֆոն, Անաբասիս***, գիրք 4-րդ, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1970, էջ 91-93:

[2] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ.1, Երևան 1971, էջ 848:

Հայաստանում: Վարչատարածքային այդ սխեմաների հիմքում ընկած էին հետևյալ հիմնարար սկզբունքները՝

- ✓ տարածքը համախմբող, նրա համար կազմակերպիչ կորիզի դեր կատարող, բավարար հզորության տնտեսական կենտրոնի առկայություն,
- ✓ ձևավորված ու զարգացած ներքին տնտեսական կապերի համակարգ,
- ✓ աշխատանքի բաժանման որոշակի տնտեսական գործառույթներ,
- ✓ միասնական տրանսպորտային կողմնորոշում և ներքին տրանսպորտային ուղիների ամբողջական ցանց,
- ✓ առաջնահերթ լուծում պահանջող ուրույն տնտեսական խնդիրներ[3]

Հիշյալ սկզբունքների շարքին մեր օրերում ավելացել են նաև քաղաքական բաղադրիչը, ինչպես նաև երկրի պաշտպանունակության և անվտանգության ապահովման անխուսափելի պահանջը: Թվարկված սկզբունքների անտեսումը, կամ դրանց ոչ բավարար առկայությունը գյուղական համայնքների խոշորացման դեպքում կհանգեցնի հիդրայի մեծ գլխով, սակայն թույլ վերջույթներով, նույնիսկ առանց վերջույթների անկենսունակ օրգանիզմի ձևավորմանը: Վերջիններիս, ինչպես նաև հանրապետության տնտեսական զարգացման, ներքին և արտաքին միգրացիոն գործընթացների, աշխատուժի շուկայի առաջարկի և պահանջարկի անհամամասնության, ժողովրդագրական պատկերի փոփոխության տեսանկյունից լիովին հասկանալի են գիտական ու այլ մտավորական շրջանակների տագնապն ու մտահոգ արձագանքը գյուղական համայնքների խոշորացման շրջանառվող ծրագրի վերաբերյալ, մանավանդ, որ ոչ հեռավոր անցյալում մեր հանրապետությունում նման անհիմն փորձի իրականացումն ավարտվել է լիակատար ձախողմամբ:

Մինչև 1950-ական թթ. հանրապետության տարածքում եղել է ավելի քան 1200 գյուղական բնակավայր: Հայաստանի կառավարությունը 1951-1955թթ նոր ոռոգվող հողերի յուրացման համար որոշեց. վերաբնակեցնել 11 հազ. գյուղացիական տնտեսություններ հիմնականում լեռնային շրջաններից:

1950թ. մայիսի 30-ին ՀամԿ/բ/Կ կենտկոմը որոշեց խոշորացնել մանր կոլտնտեսությունները, որի հիման վրա ԽՍՀՄ նարարարների խորհուրդը հունիսի 7-ին ընդունեց միջոցառումների ծրագիր[4]: Հայաստանում այն ևս իրականացվեց շատ արագ: Կոլտնտեսությունների թիվը 1950թ. վերջերին նվազեց՝ հասնելով 666-ի 1948թ. 1043-ի դիմաց[5]: Այդ տարիներին Հայաստանի վարչական քարտեզից ջնջվեց ավելի քան 270 գյուղական բնակավայր: Դա նշանակում էր, որ Հայաստանը կորցրեց այդ քանակով սոցիալ-տնտեսական, պաշտպանական միավոր:

1951թ. մարտի 4-ին <<Պրավդա>>-ն հրապարակեց <<ագրոքաղաքների>> ստեղծման նախագիծը, որով հանդես էր եկել ԽՍՀՄ ագրարային քաղաքականության ղեկավար Ն. Ս. Խրուշչովը մի ելույթում: Ագրոքաղաքը նմանվելու էր քաղաքի, որտեղ գյուղացին բազմահարկ շենքում պիտի ապրեր քաղաքային կենցաղավարությամբ: Քաղաքի և գյուղի միջև տարբերության վերացման գաղափարի թյուրընկալումը ենթադրում էր գյուղացիության և գյուղի վերացում:

---

[3] Հայկական Սովետական հանրագիտարան, Սովետական Հայաստան, Երևան, 1987, էջ 309:

[4] ՀԱԱ, ֆ.1, ց.30, գ.59, թթ.84-85:

[5] ***Ա.Վիրաբյան,*** Հյաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Հասարակական-քաղաքական կյանքը (1845-1957թթ.), ՀՀ ԳԱԱ, <<Գիտություն>>, Երևան, 2001, էջ 24:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանը քաջ գիտակցելով խնդրո առարկայի աղետալի հետևանքները, որով Հայաստանը կմնար առանց գյուղերի, վճռականորեն հանդես եկավ այդ նախագծի դեմ: 1951թ. մարտի 20-ին բացված ՀԿ/բ/Կ 15-րդ համագումարում Գր. Հարությունյանը նշում է. <<Ամենից առաջ ագրոքաղաքների՝ այդ հիբրիդի մասին: Առաջարկում են ագրոքաղաքներ կառուցել, բայց չեն բացատրում, թե ինչ տարբերություն պետք է լինի գյուղի ու ագրոքաղաքի կամ ագրոքաղաքի ու քաղաքի միջև: Ինձ թվում է, որ այդ առաջարկների մեջ կա ավելի շատ ֆանտաստիկա, քան գյուղի ռեալ պահանջները: Նրանք մանր կոլխոզները, իբրև արտադրական միավորներ մեկ խոշոր կոլխոզային տնտեսության մեջ միավորելու պատմական անհրաժեշտությունը մեխանիկորեն նույնացնում են մանր գյուղերը մեկ խոշոր գյուղի մեջ միավորելու հարցի հետ>>[6]: 1950թ. վերջերին նախապատրաստական աշխատանքներ սկսվեցին <<ագրոքաղաքների>> շինարարության համար: Ձեռնարկվեց առաջին 23 ագրոքաղաքների նախագծումը, հատկացվեցին հողատարածքներ: Հայգյուղշինի 1951թ. աշխատանքի ծրագրերում նախատեսվել էր 1.500 հազ. ռուբլի ագրոքաղաքների շինարարության համար: 1951թ. ապրիլին, գիտակցելով սխալը, ՀամԿ/բ/Կ Կենտկոմը փակ նամակ տարածեց, որտեղ մեղքը բարդվում էր տեղական կազմակերպությունների վրա[7]:

Կարծում ենք, որ պատմական այս իրողությամբ լիովին ակնհայտ է դառնում այն լուրջ մտահոգությունը, որն առկա է գյուղական համայնքների խոշորացման շրջանառվող ծրագրի առնչությամբ: Այս կապակցությամբ դիտարկենք, առաջին հայցքից բավականին պարզ թվացող մի խնդիր, որն ավելի կհստակեցնի մեր դիրքորոշումը քննարկվող հիմնահարցի վերաբերյալ: Այսօր, ցավոք, թե առօրյա խոսակցական լեզվից և թե, մասնավորապես մասնագիտական գրականությունից դուրս է մղվում գյուղ եզրույթը, իր տեղը զիջելով գյուղական համայնք հասկացությանը: Մեր կարծիքով, այս երկուսի միջև, չնայած ընդհանրություններին, գոյություն ունի որոշակի նուրբ տարբերություն: Գյուղը ավելի լայն հասկացություն է, որը բովանդակում է գյուղն ամբողջության մեջ՝ իր ավանդույթներով, ծիսական արարողությունների որոշակիությամբ, ինքնատիպ տարածքով՝ դաշտերով, հանդերով, անտառներով, արոտավայրերով, անասուններով, գյուղական ողջ բնակչությամբ: Գյուղական համայնքը լիարժեք չի արտացոլում գյուղ երևույթի բուն էությունը, հետևապես նաև դրա զարգացման միտումներն ու հեռանկարները: Այստեղից էլ այն թյուրըմբռնումը, թե իբր գյուղական համայնքների խոշորացման ծրագիրը գյուղի համար որևէ վտանգ չի ներկայացնում: Եթե գյուղը և համայնքը նույն բովանդակությունն ունեն, ուրեմն տեղի է ունենալու գյուղերի խոշորացման գործընթաց: Այլ կերպ ասած, գյուղերի մեխանիկական միավորումը դիտակվում է իբրև համայնքների խոշորացում:

Փորձենք հասկանալ նախ թե որն է այդ վերափոխումների նպատակը, նրա սոցիալական արժեքը, այն արդյոք իրականացվելու է գյուղի զարգացման իրատեսական և հեռանկարային որոշակի երաշխավորված ծրագրի շրջանակնե-

---

[6] ***Գր.Հարությունյան***, Հաշվետու զեկուցում ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում, էջ 54-56:

[7] ***Ա.Վիրաբյան,*** Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Հասարակական-քաղաքական կյանքը (1845-1957թթ.), ՀՀ ԳԱԱ, <<Գիտություն>>, Երևան, 2001, էջ 25:

րում, դարերի պատմություն ունեցող հայ գյուղը ամրապնդելու, գյուղացու կյանքը բարելավելու, արտագաղթը կասեցնելու, ժողովրդագրական խաթարված պատկերը վերականգնելու հստակ մշակված մեխանիզմներով: Ծրագիրն արդյոք բովանդակում է այն բոլոր պատասխանները, որոնք կարող են ի հայտ գալ համայնքների խոշորացման գաղափարի իրականացման հետևանքով, արդյոք այն ևս նախորդների նման իրավիճակային լուծման անհեռատես դրսևորում և անհեռանկար քայլ չէ: Արդյոք համայնքների խոշորացման նպատակով ծախսերը համարժեք են լինելու իրագործվելիք ծրագրի ակնկալվող արդյունքներին: Եվ վերջապես ինչ կտա մեզ Հայաստանում գյուղական համայնքների խոշորացումը:

1991թ. Հայաստանի անկախացումից անմիջապես հետո Հայկ. ՍՍՀ զարգացման աննախընթաց մակարդակի հասած բազմաճյուղ արդյունաբերության և ինտենսիվ ուղու վրա դրված գյուղատնտեսության տնտեսագիտական ոչ մի օրինաչափության չհամապատասխանող սեփականաշնորհումը, հապճեպորեն իրականացված ագրարային վերափոխությունները կտրուկ փոխեցին հողային ու տնտեսական հարաբերությունները գյուղում: Միանգամից լուծարվեցին բոլոր կոլտնտեսություններն ու սովխոզները, եթե անգամ դրանք աշխատում էին շահութաբերությամբ: Վերացվեցին տասնամյակների ընթացքում գյուղում ձևավորված ենթակառուցվածքները, մի քանի 100 հազ. հեկտար հողատարածքներ վերածվեցին արոտավայրերի ու խոպանի: Հողի սեփականաշնորհման հետևանքով հանրապետությունում առաջացան շուրջ 325 հազար գյուղացիական տնտեսություններ: Մասնատված, մանր գյուղացիական տնտեսությունները չէին կարող և չդարձան գյուղատնտեսության ապրանքային արտադրության հիմք: Գյուղացիական տնտեսությունների հետագա միավորումն ու խոշորացումը դարձավ անխուսափելի անհրաժեշտություն, որն ուներ բացառապես տնտեսական բովանդակություն: Չնայած դրան, հողի շուկան ձևավորվում է դանդաղ և գյուղացիական տնտեսություններում առայժմ չի նկատվում խոշորացման միտում[8]: Տնտեսության ագրարային հատվածի արտադրողականության բարձրացման համար անհրաժեշտ է պետական աջակցության մեխանիզմների համակողմանի կիրառում այն հաշվով, որ ճյուղում զբաղված աշխատուժի մի զգալի մասը վերաբաշխվի տնտեսության այլ ճյուղերում: Եթե ՀՀ ագրարային հատվածում զբաղված է աշխատուժի 41,4 տոկոսը, ապա Իսրայելում այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 2 տոկոս[9] :

Դժբախտաբար, մեզանում ինչպես 1950-ական թվականներին գյուղացիական տնտեսությունների, հողատարածքների միավորումը, տնտեսությունների խոշորացումը թյուրիմացաբար ընկալվում է որպես գյուղերի կամ գյուղացիական համայնքների խոշորացում, դրանց անտրամաբանական միավորման ճանապարհով: Սակայն ակնհայտ է, որ դրանք միանգամայն տարբեր գործընթացներ են: Նման թյուրըմբռնման հետևանքով հիմնախնդրի լուծմանն ուղղված ձեռնարկվելիք քայլերը կարող են հանգեցնել կոպիտ սխալների հետևյալ պատճառներով.

- Պատմականորեն Հայաստանում գյուղական բնակավայրերը տեղաբաշխվել են որոշակի օրինաչափությամբ, բնապատմական, կլիմայական ա-

[8] ***Հ.Մարգսյան, Ա.Մարկոսյան,*** Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հոռանկարները, Երևան, 2014, էջ 354:

[9] Նույն տեղում, էջ 362:

ռանձնահատկությունների, հաղորդակցության ճանապարհների հաշվառմամբ, սոցիալ-տնտեսական պայմանների և որ ամենակարևորն է պաշտպանական գործոնների համադրմամբ: Հայաստանում գյուղերը գերազանցապես ունեն պատմական դարավոր անցյալ՝ իրենց բնորոշ ինքնատիպ խնդիրներով ու պայմաններով: Գյուղերի արհեստական միավորման հետևանքով ոչ միայն կանտեսվեն, ընդհանուրի մեջ կտարալուծվեն տվյալ գյուղի համար էական խնդիրները, այլև գյուղերի ինքնատիպ զարգացման հեռանկարները կմղվեն ետին պլան:

• Համահարթեցման պատճառով գյուղերը ոչ միայն կկորցնեն իրենց զարգացման բնորոշ դիմագիծը, այլև կսահմանափակվեն նրանց ազատությունները տնտեսական ոլորտում, որի հետևանքով փոքր գյուղերի գոյությունը կդրվի հարցականի տակ և որ ավելի հավանական է, դրանք աստիճանաբար կվերանան Հայաստանի վարչական քարտեզից:

• Համայնքների խոշորացման արդյունքում միավորող կենտրոնը կվերածվի տեղական բյուրոկրատական շահերն սպասարկող օղակի: Չտիրապետելով անհրաժեշտ և բավարար սոցիալ-տնտեսական, նյութական ռեսուրսների և առանց այդ էլ մեզ հայտնի շատ պատճառներով, գյուղական համայնքների ղեկավարների իրավասություններն անսահմանափակ չեն: Համայնքների խոշորացումը կհանգեցնի գերհագեցած պարտավորություններով, սակայն սահմանափակ իրավասություններ ունեցող գյուղական պատասխանատուի կերպարի ձևավորմանը:

• Ինչպես ցույց է տալիս անցյալի տխուր փորձը, կարճ ժամանակահատվածում ամբողջ ուշադրությունը կբևեռվի այն գյուղի վրա, որտեղ գտնվում է համայնքապետարանը, իսկ միավորված փոքր գյուղերը, գտնվելով իրարից 10-20 կմ հեռավորության վրա, անուշադրության կմատնվեն և կզրկվեն բնականոն զարգանալու հեռանկարից ու կարճ ժամանակ անց կդադարեն գոյություն ունենալուց: Համայնքների խոշորացման հետևանքով գյուղում կմեծանա սոցիալական լարվածությունը. կնվազեն աշխատատեղերը, շատերը կձգտեն դեպի կենտրոն:

• Անհրաժեշտ ուշադրությունից դուրս մնալով գյուղացին կբռնի ներքին միգրացիայի կամ արտագաղթի ճանապարհը:

• Ազգաբնակչության նվազման դեպքում մասնավորապես սահմանամերձ գյուղերը կկորցնեն իրենց պաշտպանական նշանակությունը:

• Զգալիորեն կդժվարանա կենտրոն համայնք շփումները: Գյուղ-մարզպետարան հարաբերությունները կդառնան միջնորդավորված, դժվարամատչելի և սահմանափակ:

Վերոհիշյալ պնդումներն ավելի համոզիչ և առարկայական են դառնում, երբ դրանք դիտարկում ենք հանրապետության գյուղական բնակավայրերի ժողովրդագրական պատկերի ընթացիկ ոչ շահեկան փոփոխության, գյուղական բնակչության զբաղվածության, արտաքին միգրացիայի, սոցիալ–մշակութային, կրթական, առողջապահական հիմնախնդիրների համապատկերի վրա:

2001թ. մարդահամարի տվյալներով Հայաստանի հանրապետության մշտական ու առկա բնակչության թվաքանակները, կազմելով 3,2 և 3,0 մլն մարդ, գրեթե 600 և 800 հազարով պակաս են եղել 2001 թ. սկզբի ընթացիկ հաշվառման տվյալներից՝ 3802,4 հազար մարդ: 2007 թ. տարեվերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչությունը կազմել է 3229,9 մարդ, ընդ որում

քաղաքային բնակչությունը՝ 2069,3, իսկ գյուղական բնակչությունը՝ 1160,6 մարդ[10]: Անկախության վերականգնումից ի վեր, քաղաքական, սոցիալ-տնտեսական արմատական փոխակերպումների պայմաններում, որոշակի փոփոխությունների ենթարկվեց նաև հանրապետության քաղաքային և գյուղական բնակչության կառուցվածքային հարաբերակցությունը: Եթե 1989 թ. տարեսկզբի դրությամբ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 68,4, ապա 2007 թ.՝ 64.1 տոկոս, իսկ գյուղական բնակչությունը համապատասխանաբար՝ 31.6 և 35.9 տոկոս[11]: Գյուղատնտեսության ոլորտում 1991-1992 թթ. լայնածավալ սեփականաշնորհման արդյունքում՝ մոտ 2 անգամ ավելացավ անվանական կամ ձևական զբաղվածների քանակը և մոտ 2 անգամ նվազեց աշխատանքի արտադրողականությունը, թույլ տալով բնակչության մի ստվար զանգվածի դիմակայել տնտեսական ճգնաժամը[12]: Գյուղական բնակչության թվաքանակի նկատվող այդ միտումները ժամանակավոր բնույթ էին կրում: Այսօր գյուղական բնակչության թվաքանակի կրճատում է դիտվում Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում, որի պատճառը բնական աճի նվազումն է ու արտագաղթը: Առանձին գնահատականների և ուսումնասիրությունների համաձայն, վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանից արտագաղթած 1 միլիոնից ավելի քաղաքացիների զգալի մասը գյուղի բնակիչներ են եղել: Զանգվածային արտագաղթի պայմաններում գյուղական համայնքների խոշորացման ծրագրի կենսակոչումը իրատեսական չէ, մանավանդ որ արդեն բացասական լուրջ փոփոխությունների ենթարկվել գյուղի ժողովրդական պատկերը՝արտագաղթի հետևանքով զգալիորեն նվազել է բնակչությունը, կրճատվել է ծնելիությունը, ակնհայտ են գյուղի ծերացման միտումները: Այլ խոսքով Հայաստանի շատ գյուղերի սպառնում է <<ժողովրդագրական ձմեռվա>> վտանգը[13]: 2010 թ. գյուղում ընդհանուր գործազրկությունը կազմել է 11 տոկոս: Գյուղական գործազուրկների մի մասը/ 75 տոկոսից ավելին/ չի ստանում նպաստ և սոցիալապես պաշտպանված չէ: Գյուղերում կրճատվել են սոցիալական ենթակառուցվածքների քանակը և հիմնական սոցիալական ծառայությունները, իսկ գոյություն ունեցողներն էլ չեն համապատասխանում ժամանակակից պայմաններին: Գյուղական վայրերում նախադպրոցական հիմնարկների թվաքանակը 1995-2009 թթ. 470-ից իջել է 219-ի/52,4 տոկոս/, հանրակրթական դպրոցներինը՝ 876-ից 860-ի, մշակութային օջախները՝ 317-ից մինչև 238-ի, գրադարանները՝ 968-ից մինչև 796-ի, տեղամասային հիվանդանոցները՝ 243-ից մինչև 218-ի[14]:

---

[10] Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն, Երևան, 2009, էջ 12:

[11] Նույն տեղում, էջ 26:

[12] Նույն տեղում, էջ 28:

[13]Ժողովրդագրական ցուցանիշների մի քանի բաղադրատարրերի առկայությունը՝ ծնելիության կրճատում, արտագաղթ, սեռերի միջև քանակական հավասարակշռության խախտում, բնակչության ծերացում և այլն, կազմում են <<ժողովրդագրական ձմեռ>> եզրի բավանդակությունը: Այն գործածության մեջ է մտել 20-րդ դարի վերջին եվրոպական երկրներում սկսված բնակչության ամենամյա նեղացված (սեղմված) վերարտադրության, այսինքն՝ բնակչության թվի նվազման առնչությամբ, որը անվանվել <<բնակչության ձմեռ>> կամ դեպոպուլյացիա, տե՛ս ***Медков В.М.,*** Демография, 2-ое изд., М., 2009, էջ 594, ***Մ.Մալխասյան,*** Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ, Երևան, 2015, էջ 146:

[14]ՀՀ սոցիալական վիճակը 2000թ., Վիճակագրական-վերլուծական ժողովածու, Երևան, 2002, Հայաստանի սոցիալական վիճակը 2009թ., վիճակագրական ժողովածու, Երևան, 2010:

Ակնառու է այն հակասությունը, որ գոյություն ունի ՀՀ կառավարության կողմից 2009թ. ընդունած Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության ծրագրի և գյուղական համայնքների խոշորացման շրջանառվող ծրագրի նախագծի միջև: Դրանցից առաջինը, ի թիվս բազմաթիվ այլ հարցադրումների, բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության մեղմացման նպատակով՝ սահմանում է <<մարզերում առկա անհամաչափությունների կրճատում ապակենտրոնացման միջոցով և տնտեսության դինամիկ զարգացման նպատակով ռեգիոնալ ռեսուրսների զարգացում>>[15]: Ենթադրվում է, որ հիշյալ ռեսուրսների մեջ է մտնում նաև մարդկային ռեսուրսը: Մինչդեռ գյուղական համայնքների խոշորացման ծրագրի նախագծի ամբողջ տրամաբանության ելակետը կառուցված է կետրոնացման սկզբունքի վրա: Մեր կարծիքով, անհրաժեշտ է գնալ ոչ թե համայնքների մեխանիկական միավորման ու խոշորացման ճանապարհով, այլ գյուղական համայնքների ամրապնդման, նրանց համամասնական ու հավասարակշռված զարգացման ճանապարհով: Այսօր Հայաստանի գյուղերից բնակչությունը հեռանում է ոչ թե հատկապես վարչատարածքային բաժանման աննպատակահարմարությունից դրդված, այլ գյուղում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, նյութական միջոցների անբավարարության, կյանքը բարելավելու հեռանկարի բացակայության, սոցիալական անարդարության դրսևորումների պատճառներով: Հետևապես անհրաժեշտ է նկատի ունենալով յուրաքանչյուր գյուղի առանձնահատկությունները, զարկ տալ համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմանը՝ սկսած նախադպրոցական, դպրոցական, առողջապահական, մշակութային հաստատություններից, մինչև մեքենատրակտորային կայանների, մթերման կետերի, վերամշակող ձեռնարկությունների ստեղծումը: Այս քայլերի իրականացումը հնարավորություն կտա գյուղական բնակչությանը, գյուղի մարդկանց ընդգրկել ռազմավարական զարգացման տարաբնույթ ծրագրերի մեջ:

Գյուղերում նոր համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը, մանկական հիմնարկների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, բուժհիմնարկների, տարաբնույթ կրթօջախների կազմակերպումը, գոյություն ունեցողների պահպանումն ու ամրապնդումը, ձեռնարկությունների բացումը հնարավորություն կտա ստեղծել նոր աշխատատեղեր գյուղում, որոնք կդառնան հաստատուն օղակներ գյուղերից արտագաղթը կասեցնելու, գյուղական բնակչությանը գյուղում պահելու, ապրելու, գյուղը վերստին շենացնելու համար:

Առանձնակի ուշադրության են արժանի սահմանամերձ գյուղական բնակավայրերը, որոնց զարգացման համար անհրաժեշտ է մշակել հատուկ ռազմավարական հայեցակարգ: Դրամավարկային ճկուն և արտոնյալ հարկային քաղաքականության իրագործման ճանապարհով սահմանամերձ գյուղերը վերածել ռազմականացված բնակավայրերի, որի արդյունքում սոցիալական բազմաթիվ խնդիրներ ինքնըստինքյան կլուծվեն: Ի վերջո գյուղական համայնքների խոշորացման ծրագին որպես այլընտրանք կարող ենք առաջարկել վարչատարածքային բաժանման և տնտեսական շրջանացման նախկին սխեման, որն ավելի իրատեսական է և փորձված:

[15] Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն, Երևան, 2009, էջ 78:

Эдуард Зограбян- *Основные социальные задачи Республики Армении в контексте административно-территориального разделения.* - По конституции, принятой 5 июля 1995г. Республика Армении разделилась на административно новые единицы-области.

В основе этого разделения, также как и во время предыдущих делениях, лежало экономическое составляющее и требование повышения эффективности правления. Превышение экономичвского рактора само по себе предполагает наличие социальной разнохарактерной структуры, с помощью которой решаются рабочие места, занятость, демография, образования, здравоохранение и другие вопросы. В этом контексте наблюдается уже длительное время вступивший в оборот проект укрупнения сельских общин.

По нашему мнению, предлагаемы преобразование не реально и не может содействовать результативному правлению и рещению существующих труднейших социальных задач. Непбходимо воссоединить сельские общины не механически, а наоборот, стимулировать пропорциональное развитие каждой из общин.

Eduard Zohrabyan-*Social Problems in the Context of Administrative Division of Republic of Armenia*-According to the Constitution addopted on the 5th of July 1995 the Republic of Armenia devided into new administrative units-regins .

Like in all previous divisions in the basies of that division layed the economic forming and demand of enereasing the productivity of governing. The exceeding of economic factors supposes the presence of various infrastructurs by means of which working places, employment, demography, education, helth service etc. are solved.

The enlargement of the rural communities is observed in this context.

In our opinion suggested new administrative transformations are not real and can't promote the effective governing and solve existing hard social problems. It is necesarry to reunit rural communities not mechanically but stimulate each proportional development.

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ (2001-2013 ԹԹ.)

ՄԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայաստանի երրորդ Հանրապետության տնտեսության կարևոր ճյուղերից է շինարարությունը: 21-րդ դարասկզբին իրականացվող շինարարական աշխատանքների ծավալներն իրենց դրական ազդեցությունն ունեցան ՀՀ տնտեսության զարգացման վրա: 2000 թվականից հետո երկրում իրականացված շինարարության ծավալներում առանձնանում են աղետի գոտում կատարված աշխատանքները, որի արդյունքում Շիրակի ու Լոռու մարզերում բազմաթիվ ընտանիքներ ապահովվեցին բնակարաններով: Շինարարության ոլորտում աննախադեպ աճը շարունակվեց մինչև նախաճգնաժամային ժամանակահատվածը, ընդ որում այդ փուլում ոլորտում դրական միտումները պայմանավորված էին հիմնականում մասնավոր ներդրումների և բնակարանային շինարարության ծավալների աճով: 2009թ. սկսած՝ կապված համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության հետ, երբ դրամական փոխանցումներն էական կրճատվեցին, շինարարության ոլորտը խոշոր անկում արձանագրեց: Ճգնաժամից հետո այս ոլորտը չվերականգնեց երբեմնի բարձր մակարդակը և 2010-2013 թթ. շարունակում էր անկում ապրել: Շինարարության դերը մեր հանրապետության տնտեսության մեջ կայունացնելու համար պետությունը պետք է իրականացնի անկումը մեղմող տնտեսական քաղաքականություն:

Բանալի բառեր. Հայաստանի երրորդ Հանրապետություն, տնտեսություն, տնտեսական քաղաքականություն, շինարարություն, շինանյութի արտադրություն, բնակարանային շինարարություն, ՀՆԱ, ստվերայնություն, աղետի գոտի:

Շինարարությունը որպես տնտեսական գործունեության տեսակ, համաձայն ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի, բաղկացած է մի քանի մասերից: Այսպես, շինարարություն բաժինը ներառում է ընդհանուր շինարարությունը, շենքերի և ճարտարագիտական կառույցների շինարարության մասնագիտական աշխատանքները: Այստեղ ներառվում է նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից շենքերի, ինչպես նաև ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինարարական հրապարակներում: Ընդհանուր շինարարությունն ընդգրկում է ավարտուն բնակելի, վարչական, առևտրի, այլ կոմունալ-կենցաղային շենքերի, գյուղատնտեսական շինությունների և այլն, քաղաքացիական ճարտարագիտական կառույցների՝ մայրուղիների, փողոցների, կամուրջների, թունելների, երկաթուղիների, թռիչքադաշտերի, նավահանգիստների և այլ ջրային օբյեկտների, ոռոգման և կոյուղու համակարգերի, արդյունաբերական կառույցների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի, սպորտային կառույցների և այլնի շինարարություն[1]: Շենքերի շինարարության հատվածը ներառում է բոլոր տեսակի կառույցների ընդհանուր շի-

[1] Տե՛ս ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ, http://www.mineconomy.am/uploades/Dasakargich_+.pdf

նարարությունը[2]: Այն ընդգրկում է նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման և նորոգման աշխատանքները, պատրաստի բլոկավոր կառուցվածքներից շենքերի, ինչպես նաև ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինարարական հրապարակում: Ընդգրկվում է ավարտուն բնակելի, վարչական, առևտրային նպատակների համար շենքերի, գյուղատնտեսական շինությունների, կոմունալ-կենցաղային և քաղաքացիական կառույցների և այլնի շինարարությունը:

21-րդ դարասկզբին իրականացվող շինարարական աշխատանքների ծավալներն իրենց դրական ազդեցությունն ունեցան ՀՀ տնտեսության զարգացման վրա: Շահագործման հանձնվեցին որակյալ ու ժամանակակից պահանջներին համապատասխանող բազմաթիվ շենքեր ու բազմաբնույթ կառույցներ՝ ամբողջական փողոցներ, բնակելի շենքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, մշակութային, սոցիալական նշանակություն ունեցող օբյեկտներ, նոր ենթակառուցվածքներ, խմելու, ոռոգման համակարգեր, ճանապարհներ և այլն:

Շինարարությունը էական դեր է խաղում տնտեսական աճի միտումների ձևավորման գործում: Շինարարական աշխատանքներին ուղղվող գումարները 2001 թ. կազմել են հանրապետության կապիտալ շինարարության ֆինանսավորման ողջ ծավալի 34,2 %-ը:[3] Շինարարության տարեկան միջին աճի տեմպերը 2000-2003 թթ. կազմել են 22%, իսկ 2004-2008 թթ.՝ 29 %:[4] 2009 թվականին 41.6% իրական անկումից հետո շինարարության ճյուղը դեռևս չի վերականգնվել: Չնայած 2010 թվականին արձանագրված փոքր աճին՝ 2011 թվականին նույնպես նախորդ տարվա համեմատ շինարարության ծավալները կրճատվել են 11.5 %-ով, ինչի պատճառներ են հանդիսացել բնակչության և կազմակերպությունների միջոցների ֆինանսավորմամբ իրականացվող շինարարության ծավալների համապատասխանաբար 30.5 % և 13.5 % կրճատումը: 2012 թվականի հունվար-հուլիսին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալներն իրական արտահայտությամբ նվազել են 5.2 %-ով: Ընդ որում, հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել են մարդասիրական օգնության և կազմակերպությունների, ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության իրական ծավալները՝ բացասական նպաստում ունենալով շինարարության իրական ծավալի ինդեքսին (համապատասխանաբար՝ 6.8, 4.5 և 1.1 տոկոսային կետ), մինչդեռ բնակչության, համայնքների և միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալները դրական նպաստում են ունեցել (համապատասխանաբար՝ 5.1, 1.5, 0.7 տոկոսային կետ): Հատկանշական է, որ չնայած շինարարության համախառն թողարկումը նվազել է, սակայն 2012 թվականի հունվար-հունիսի տվյալներով գրանցվել է շինարարության ավելացված արժեքի 1.8 % իրական աճ: Դա պայմանավորված է հիմնականում շինմոնտաժային աշխատանքների տեսակակար կշռի մեծացմամբ, որը կազմել է 94.4%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 7.8 տոկոսային կետով: Ըստ տնտեսության

[2]Համաձայն Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի, Հարկային հաշվետվական ձևերում հարկ վճարողների տնտեսական գործունեության տեսակների նշագրման մեթոդական ուղեցույց, Եր., 2011:

[3] Տե՛ս Հայաստան 1998-2007, խմբ.՝ ***Վարդանյան Ա.***, Եր., 2008, էջ 34:

[4] Տե՛ս նույն տեղում:

ճյուղերի՝ շինարարությունը հիմնականում ուղղված է եղել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին և տրանսպորտին, որոնց բաժինը շինարարության ծավալներում կազմել է համապատասխանաբար՝ 28.2% և 13.1%, և տեսակարար կշիռները համապատասխանաբար աճել են 0.7 և 7.3 տոկոսային կետով:[5] (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Շինարարության կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի 2011-2012թթ. հունվար-հուլիսին



Անդրադառնալով շինանյութերի արտադրությանը՝ նշենք, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն, 2011 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում Հայաստանում շինանյութերի արտադրության ծավալներն անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ հիմնականում նվազել են: Վերոնշյալ ժամանակահատվածում ապրանքային բետոնի արտադրության ծավալները նվազել են 25.4%-ով և կազմել 105.5 հազ.տոննա: Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքների արտադրության ծավալները նվազել են 0.9%-ով և կազմել 17098 տոննա: Բնական քարից երեսպատման սալիկների արտադրության ծավալները նվազել են 26.6%-ով և կազմել 6043.3 տոննա: Ոչ հանքային շինանյութերի արտադրության ծավալները նվազել են 24.7%-ով և կազմել 293.4 հազ.տոննա: Ցեմենտի արտադրության ծավալները նվազել են 37.3%-ով և կազմել 109.1 հազար տոննա: Գաջի արտադրության ծավալները նվազել են 20%-ով և կազմել 11363.0 տոննա: Ծակոտկեն լցանյութերի արտադրության ծավալները նվազել են 19.8%-ով և կազմել 78.3 հազար տոննա: Այլումինե և մետազապլաստմասե դռների և պատուհանների արտադրության ծավալները նվազել են 10.5%-ով և կազմել 14081 հատ: Աճել են կրի և ուղիղ

[5] Տե՛ս ՀՀ տնտեսական ու հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ, մաս 2, www.parliament.am/.../1.3.Uxerc.Mas.2a-1.pd

կտրվածքի տուֆի արտադրության ծավալները՝ համապատասխանաբար 20.3%-ով՝ 10071 տոննա, և 24%-ով՝ 28494.6 տոննա6:

Անդրադառնանք նաև ՀՆԱ-ում շինարարության ոլորտի տեսակարար կշռին: Շինարարության ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2008թ. կազմել է 25.3%՝. առաջանցիկ (2003-2008թթ. միջինը 26.3%-ով) աճելով ՀՆԱ-ի նկատմամբ: Շինարարության այս աննախադեպ աճը նախաճգնաժամային ժամանակահատվածում պայմանավորված էր հիմնականում մասնավոր ներդրումների, հատկապես՝ բնակարանային շինարարության ծավալների աճով: Վերջինի հիմնական պատճառը արտերկրից դրամական փոխանցումների և, զուգահեռաբար, բնակչության խնայողությունների՝ նախորդ տարիների համեմատ ավելի բարձր տեմպով աճն էր: Դրամական փոխանցումների բարձր աճի տեմպերը նշված ժամանակահատվածում հանգեցրին «Հոլանդական հիվանդության» դրսևորման: Դրամական փոխանցումների անընդմեջ աճի արդյունքում իրական արդյունավետ փոխարժեքը արժևորվեց՝ նվազեցնելով արտահանման մրցունակությունը: Արդյունքում՝ մեծացավ ոչ արտահանելի ոլորտների՝ շինարարության և ծառայությունների եկամտաբերությունը, որտեղ և հոսեցին ներդրումները: Բնականաբար՝ 2009թ. դրամական փոխանցումների էական կրճատման ազդեցությամբ շինարարության ոլորտը խոշոր՝ 41.6% անկում արձանագրեց: Ճգնաժամից հետո այս ոլորտը չվերականգնեց երբեմնի բարձր մակարդակը և 2013թ. շարունակում էր անկում ապրել. 2010-2013 թթ. տարեկան միջին անկումը 4.2% էր: Արդյունքում՝ շինարարության բաժինը ՀՆԱ-ում 2013թ. կազմել է 10.3%: Սակայն հատկանշական է, որ ճգնաժամից հետո, չնայած մասնավոր բնակարանաշինության անկմանը, իրական հատվածին ուղղվող արտադրողական շինարարության մասնաբաժինը բարելավվել է և աճի միտումներ արձանագրել[7]:

Շինարարության ոլորտը վերը նշված ցուցանիշների պատճառով զսպել է երկրի տնտեսական աճը: 2009 թ. անկումից հետո այս ոլորտում խոշոր անկում է գրանցվել նաև 2011թ. ՝ 12,2 %, ինչպես նաև 2013 թ.՝ 10,8 %:[8] Շինարարության ոլորտը դեռևս 2 անգամ փոքր է 2008 թ. իր սեփական մակարդակից: Այսպիսով, իրական ՀՆԱ-ի նախաճգնաժամային մակարդակը Հայաստանում վերջապես հաղթահարված է՝1,9 տոկոսով: Շինարարությունից բացի, տնտեսության մյուս բոլոր ճյուղերը գերազանցում են 2008 թ. իրենց մակարդակը (աղյուսակ 1):

[6] Տե՛ս ՀՀ վիճակագրական տարեգիրք, Եր., 2012:

[7] Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման, էջ 21:

[8]Տե՛ս Հայաստանի տնտեսական զեկույց 2014, Եվրասիական ինտեգրացիան և Հայաստանի առևտուրը, նոյեմբեր, 2014, էջ 11:

Աղյուսակ 1. Տնտեսության աճը և վերականգնումը ըստ տնտեսության խոշոր ճյուղերի[9], տոկոս

	2013 թ. տարեկան աճ	2010-2013 թթ.			2013/2008 թ. համեմատ**
		միջին	կուտակային	Բաժին*	
ՀՆԱ (իրական)	3,5	4,4	18,7	4,4	101,9
Գյուղատնտեսություն	7,2	3,0	12,4	0,7	119,1
Արդյունաբերության ճյուղեր	5,4	8,6	39,0	1,3	129,4
Շինարարություն	-10,8	-4,0	-15,2	-0,6	49,6
Առևտուր և ծառայություններ	6,2	6,0	26,0	2,5	121,4
Զուտ հարկեր և ՖՄԱԾ	-0,9	4,2	17,1	0,4	88,9

2013 թ. տնտեսական աճը տնտեսության մի շարք ճյուղերում բավականին բարձր էր: Ինչպես նշվեց, շինարարության ոլորտում խոշոր անկում էր, որը 1,3 տոկոսային կետով նվազեցրեց աճը:

Հարկ է նշել, որ 2000 թվականից հետո երկրում իրականացված շինարարության ծավալներում առանձնանում են աղետի գոտում կատարված աշխատանքները: Աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին 2000-2006 թթ. ընթացքում ավելի քան 20 հազար ընտանիք բարելավել է իր բնակարանային պայմանները:[10] 2005--2006 թթ. պետական միջոցների հաշվին Շիրակի ու Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում անավարտ շինարարությունն ավարտելով՝ լուծվեցին 960 աօթևան ընտանիքների բնակարանային խնդիրները: Պետական և օժանդակող կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների շնորհիվ լուծվել են 4970 ընտանիքի բնակարանային խնդիրները, որոնցից 4126-ը <<Լինսի>> հիմնադրամի հաշվին:[11]

Հետագա տարիներին ևս մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագիրը: Բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերի հանձնաժողովը 2011 թվականին քննարկել է 2020 ընտանիքի փաստաթղթային փաթեթներ: ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 և Անի թաղամասերում կառուցվել է 1756 բնակարանից բաղկացած 38 բազմաբնակարան շենք, Ախուրյան համայնքում՝ 104 բնակարանից բաղկացած 3 բազմաբնակարան շենք և ՀՀ Լոռու մարզի 24 գյուղական համայնքներում՝ 571 բնակելի տներ:[12]

---

[9] Աղբյուրը՝ ՏԶՀԿ գնահատականներ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[*] Մասնակցությունը տնտեսական աճին տոկոսային կետով

[**] 2013 թ.-ի ՀՆԱ-ն 2008 թ.-ի համեմատ համադրելի գներով

[10] ***Մինասյան Է.,*** Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 446:

[11] Տե՛ս Հայաստան 1998-2007, էջ 34:

[12] Սեղմագիր ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման մասին, http://www.minurban.am/reports/20_01_12_1.pdf

2012 թվականին ՀՀ կառավարության և քաղաքաշինության նախարարության կողմից շարունակվել է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պարտավորությունների կատարմանն ուղղված բնակարանային ապահովման ծրագիրը: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով հաշվառված ընտանիքներից ծրագրի շահառուների ճանաչման գործընթացի ապահովման նպատակով ուսումնասիրվել են 2500 ընտանիքների փաստաթղթային փաթեթները: Ուսումնասիրության արդյունքներով ծրագրի շահառու ճանաչված 2222 ընտանիքներից՝

- 1902 ընտանիքների բնակարանային խնդիրները լուծվել են բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարանների (բնակելի տների) հատկացմամբ.

- 1 սենյակի շահառու ճանաչված 320 ընտանիքներից 306-ը ստացել են ֆինանսական աջակցություն:

Միաժամանակ շարունակվել է Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում 2-010 թվականին իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների նվիրատվության (անհատույց մասնավորեցման) պայմանագրերի կնքման գործընթացը: 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ կնքված պայմանագրերի թիվը կազմում է 799:[13]

Դրա հետ մեկտեղ, մշակվել և ընդունվել են աղետի գոտու բնակավայրերում բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի իրականացման ընթացքում ծագած խնդիրների կարգավորմանն ուղղված թվով 7 իրավական ակտեր, մասնավորապես, աղետի գոտու գյուղական բնակավայրերում սահմանված կարգով հաշվառված եւ 1 սենյակի շահառու ճանաչված ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման համար ֆինանսական աջակցության տրամադրման հետ կապված հարցերով:

Բնակարանային շինարարության ոլորտում կարևոր էր ՀՀ-ում 2010 թվականից կյանքի կոչված հիպոթեքային վարկավորմամբ բնակարանային շինարարության ծրագիրը[14]: Ծրագրի հիմնական նպատակը երիտասարդ ընտանիքների բնակարանային խնդիրների հաղթահարման հարցում արդյունավետ պետական աջակցության համակարգի ներդրումն էր: Ծրագրի իրականացումը նպաստում է երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, արտագաղթի նվազմանը, ներքին միգրացիոն հոսքերի կառավարմանը, հիփոթեքային վարկավորման համակարգի զարգացմանը: Միևնույն ժամանակ ծրագիրը խթան է հանդիսանում բնակարանային շինարարության և լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման համար: Ծրագրի շրջանակներում պետական աջակցություն կարող են ստանալ և ծրագրի շահառու դառնալ երիտասարդ ընտանիքները:

---

[13] Տե՛ս Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2012 թվականի գործունեության, 17.01.2013, www.minurban.am/am/info/reports

[14] Տե՛ս ՀՀ կառավարության որոշում, 29 հունվարի 2010 թվականի N 98 **«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին:**

Նշված գործընթացները, ըստ էության, նպատակ ունեն խթանելու շինարարական շուկան, որի գործառույթները բնորոշվում են հետևյալ մի քանի գործոններով՝

- Շինարարության ոլորտում սեփականության տարբեր ձևերի առկայությունը,
- Ներդրումային շինարարության գործընթացում բոլոր մասնակիցների ազատ ձեռնարկատիրական գործունեությունը,
- Շինարարական արտադրանքի ազատ գնագոյացումը,
- Պայմանագրային հարաբերությունների հաստատումը շինարարական արտադրանք ստեղծող իրավահավասար կազմակերպությունների միջև,
- Ներդրումային շինարարական գործունեության ընթացքում մասնակիցների միջև ազատ շուկայական մրցակցությունը,
- Հակամենաշնորհային օրենսդրության առկայությունը,
- Շինարարական ռիսկերի ապահովագրումը:

Հարկ է ընդգծել, որ շինարարական շուկայի ակտիվացմանը նպաստող կարևոր գործոն է նաև տվյալ շուկայի ենթակառուցվածքների առկայությունը:

Ենթակառուցվածք ասելով՝ այստեղ նկատի ունենք այն կազմակերպությունների, ընկերությունների, ֆիզիկական անձանց և շինարարության ոլորտում ներգրավված այլ օրգանների ամբողջությունը, որոնք աշխատում են շինարարության շուկայի համար բարենպաստ տնտեսական միջավայր ու պայմաններ ձևավորելու ուղղությամբ: Ոլորտում այդ ուղղությամբ կատարված աշխատանքները ՀՀ-ում վերաբերել են հիմնականում բնակելի շենքերի կառուցմանը, գործարկմանը և ճանապարհաշինությանը:

2009-2013 թթ. մեր հանրապետությունում բնակելի շենքերի գործարկման պատկերը ներկայացված է աղյուսակ 2-ում:[15]

Աղյուսակ 2. 2009-2013 թթ. բնակելի շենքերի գործարկման պատկերը ՀՀ-ում (1000 մ² ընդհանուր մակերես)

	2009	2010	2011	2012	2013
1.Գործարկվել են բնակելի շենքեր, այդ թվում՝	435.0	520.3	571.2	425.2	320.2
1) Քաղաքներում	390.4	435.3	518.5	380.7	263.8
2)Գյուղերում	44.6	85.0	52.7	44.5	56.4
2.Ֆինանսավորման միջոցները Ա. պետական	10.6	128.7	28.0	212.0	14.4
1) քաղաքներում	10.6	101.1	19.3	201.7	5.2
2) գյուղերում	-	27.6	8.7	10.3	9.2
Բ.Ոչ պետական	424.4	391.6	543.2	213.2	305.8
1) քաղաքներում	379.8	334.2	499.2	179.0	258.6
2) գյուղերում	44.6	57.4	44.0	34.2	47.2

[15] Տե՛ս ՀՀ վիճակագրական տարեգիրք, Եր., 2014:

Բնակչության կողմից կատարված, այդ թվում	334.8	229.0	124.0	135.6	166.8
1) քաղաքներում	290.8	188.2	80.1	101.4	119.6
2) գյուղերում	44.0	40.8	43.9	34.2	47.2

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, քաղաքներում գործարկված բնակելի շենքերի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2011 թ., ամենացածրը՝2013 թ., իսկ գյուղերում համապատասխանաբար բարձր արդյունք է գրանցվել 2010 թ., իսկ ամենացածր ցուցանիշը եղել է 2012 թ.:

Ըստ արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) «Տարածաշրջանի տնտեսական հեռանկարը. Կովկաս և Կենտրոնական Ասիա» զեկույցի՝ Հայաստանի տնտեսության ստվերայնության աստիճանը դեռևս 2008 թվականին կատարված ուսումնասիրություններով ամենաբարձրերից է ոչ միայն հարավկովկասյան տարածաշրջանում, այլև արևելաեվրոպական և կենտրոնասիական երկրների շարքում: Ըստ զեկույցի՝ Հայաստանի ստվերային տնտեսությունը կազմում է երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 35 տոկոսը:[16] Դրա հետ մեկտեղ նշենք, որ վիճակագրական հրապարակումներում շինարարության ոլորտում ստվերայնության հստակ գնահատականը բացակայում է, ինչը շատ կարևոր կլիներ գործնական կիրառման և ոլորտի զարգացման առումով:

Ամփոփելով՝ նշենք, որ ձեռքբերումների հետ միասին շինարարության ոլորտում նկատվում են մի շարք թերություններ, որոնցից են՝

- տեղական շինանյութերի արտադրության կրճատումը,
- շինարարության թույլտվությունների անհարկի ձգձգումները, և ամենակարևորը՝
- ոլորտում առկա ստվերը:

Ամփոփելով նշենք, որ շինարարության ոլորտը տնտեսության ռիսկային ճյուղերից է, ուստի ըստ տարածված փորձագիտական կարծիքների, այս ճյուղում ստվերայնությունն ավելի բարձր կարող է լինել, քան մյուս ճյուղերում: Փորձագիտական այդ կարծիքները, սակայն, չեն կարող վերջնական համարվել այն պարզ պատճառով, որ ոլորտում ստվերայնությունը գնահատելու համար բացակայում է համապատասխան մեթոդաբանությունը, ինչի ուղղությամբ էլ պետք է աշխատեն ոլորտի իրավասուներն ու պատկան մարմինները: Կարծում ենք, շինարարության դերը տնտեսության մեջ կայունացնելու, ոլորտում անկումային երևույթներից խուսափելու համար պետությունը պետք է իրականացնի՝

- անկումը մեղմող տնտեսական քաղաքականություն,
- անապահով խավի պաշտպանությանն ուղղված հասցեական միջոցառումներ
- զգոնության պահպանում տնտեսական և ֆինանսական ռիսկերի նկատմամբ, որոնք հնարավոր է առաջանան առաջիկայում:

[16]Տե՛ս «Տարածաշրջանի տնտեսական հեռանկարը. Կովկաս եւ Կենտրոնական Ասիա>>, ԱՄՀ զեկույց, մայիս 2009:

Марине Геворгян – ***Роль строительной отрасли в экономике третьей армянской республики.*** Строительство является одним из важнейших отраслей экономики третьей армянской республики. Масштабы строительных работ, осуществляемых в начале 21-ого века, положительно повлияли на развитие экономики РА. В масштабах строительства, осуществленных в стране после 2000-го года, выделяются работы, проделанные в зоне бедствия, в результате которых в Ширакской и Лорийской областях многие семьи были обеспечены квартирами. Беспрецедентное развитие сферы строительства продолжилось до предкризисного периода, причем в этот отрезок времени положительные тенденции были обусловлены в основном ростом объема частных вложений и квартирного строительства. Начиная с 2009 года, в связи с влиянием всемирного экономического кризиса, когда заметно сократились денежные переводы, в сфере строительства наметился крупный упадок. После кризиса эта сфера не восстановила свой бывший уровень и в 2010–2013 гг. продолжала переживать упадок. Для стабилизации роли строительства в экономике нашей республики государство должно осуществлять смягчающую упадок экономическую политику.

Marine Gevorgyan - ***The role of the construction industry in the economy of the Third Armenian Republic.*** - Construction is one of the most important economic branches of Armenian Third Republic. Construction volumes, which started in the beginning of the 21st century, had positive influence on the development of RA economy. After 2000, work, which was carried out in disaster zone, was an important part of construction volumes, due to which many families living in the regions of Shirak and Lori received apartments. The unprecedented increase in construction sphere continued until pre-crisis period. During this period the positive tendencies in construction sphere were connected with the increase of private investments and housing construction. In 2009 the construction sphere slumped greatly which was connected with the influence of global economic crisis when money transfers declined considerably. After the crisis the construction sphere didn't recover its erstwhile high level. It continued its decline from 2010 to 2013. RA should implement economic policy which will mitigate decline in the construction sphere and will stabilize its role in Armenian economy.

ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐԱ ԱԶԱՏՅԱՆ

Հայաստանի Առաջին Հանրապետության արտաքին քաղաքականության պատմության մեջ Խորհրդային Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունների հարցը մշտապես գտնվել է պատմագիտության ուշադրության կենտրոնում:

1920թ. ամռանը Մոսկվայում սկսված հայ-ռուսական բանակցությունները փաստացի սկիզբ դրեցին Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև քաղաքական հարաբերություններին: Մեր նպատակն է հանդիսացել այս բանակցությունների վերաբերյալ հայ պատմագրության կողմից կատարած ուսումնասիրությունների գնահատականները համակարգված ներկայացնել և վերլուծել, պարզաբանել այն սխալ մոտեցումները, որոնք կապված են քննարկվող հիմնահարցի հետ:

Ցավոք, 1920թ. ամռանը Մոսկվայում ընթացած հայ-ռուսական բանակցությունները գործնականում որևէ արդյունք չտվեցին, դրանք ընդհատվեցին աշնանը՝ Երևանում շարունակելու նպատակով, ինչի վերջնարդյունքում էլ Հայաստանը խորհրդայնացվեց:

Բանալի բառեր. Հայաստանի Հանրապետություն, Շանթի պատվիրակություն, բանակցություններ, Խորհրդային Ռուսաստան, պատմագրություն, Մոսկվա, թուրքական պատվիրակություն, յհայ-թուրքկան հարաբերություններ, դաշնակիցներ, խորհրդայնացում, խորհրդային կառավարություն

1920թ. ապրիլի 28-ին Կարմիր բանակը մտավ Ադրբեջան և խորհրդայնացրեց այն, որից հետո ՀՀ կառավարությունը որոշեց բանակցությունների մեջ մտնել Խորհրդային կառավարության հետ՝ Հայաստանի անկախության ճանաչմանը հասնելու համար: Այդ նպատակով ՀՅԴ Բյուրոյի հետ խորհրդակցության ժամանակ որոշվեց Մոսկվա ուղարկել 3 անձից կազմված պատվիրակություն: Համաձայնություն կայացվեց Լ. Զարաֆյանի և Հ. Տերտերյանի թեկնածության շուրջ: Որպեսզի ընդգծվեր Հայաստանի միավորման նպատակն ու նշանակությունը՝ կառավարությունը ցանկանում էր պատվիրակության գլուխ նշանակել արևմտահայ թեկնածուի, սակայն և՛ Տերտերյանը և՛ Զարաֆյանը դեմ էին Խորհրդարանի պատգամավոր, վանեցի Վահան Փափազյանի (Կոմս) թեկնածությանը: Տերտերյանը պնդում է, որ վերջինս «իր տեսակետների վրա յամառօրէն պնդող է, զիջող չէ և անհրաժեշտ ճկունութիւնը չունի»[1]: Դրանից հետո ընտրությունն ընկավ Խորհրդարանի փոխխոսնակ Լ. Շանթի թեկնածության վրա: «-Հակառակ իմ ցանկութեանս և այդ տեսակ գործերու մեջ անփորձ ըլլալուս,- գրում է Շանթը,- մեր կառավարութիւնը, որոշ նկատառումներով, հարմար դատեց ինծի հանձնել այդ պատուիրակութեան նախագահութիւնը»[2]: Պատվիրա-

[1] ***Տերտերյան Հ.***, Հայաստանի Հանրապետութեան և Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները. Լ. Շանթի պատուիրակութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1954, № 1, յունուար:

[2] «Յուսաբեր», 1 հունիս, 1960, № 52:

կությունը Երևանից դուրս եկավ ապրիլի 30-ին, հենց այն ժամանակ, երբ սկսեցին Երևան հասնել Ադերբեջանի խորհրդայնացման մասին լուրերը[3]:

Հայ պատմագրության մեջ պատվիրակության ուշ Մոսկվա հասնելու վերաբերյալ կան որոշակի տարաձայնություններ: Խորհրդահայ պատմագրության մեջ շրջանառվում է այն տեսակետը, թե «դաշնակցական կառավարությունը հասարակական կարծիքի ճնշման տակ, ստիպված պատվիրակություն ուղարկեց Մոսկվա»[4]: Բացի սրանից զարգացվում է նաև այն միտքը, ըստ որի հայ-ռուսական բանակցությունների նախաձեռնությունը դաշնակցական կառավարության միտքը չէր, այլ դա արվել էր ի պատասխան Խորհրդային Ռուսաստանի առաջարկության: Այս միտքը խորհրդահայ պատմագրությունը հիմնավորում էր ելնելով 1920թ. ապրիլի 8-ին Վլադիկավկազում Ս. Օրջոնիկիձեի կողմից ՀՀ ներկայացուցիչ Հ. Սառիկյանին արված դիմումից, որտեղ ասվում էր. «ՀՀ անկախությունը Խորհրդային իշխանությունը ճանաչել, ճանաչում և պիտի դեռ ճանաչի, բայց քանի որ նա բաժանված է Ռուսաստանից, պիտի հաշտություն կնքի և իր փոխհարաբերությունները որոշի մեզ հետ: Մինչ այդ հայկական հյուպատոսարանները մենք ճանաչել չենք կարող: Ես իբրև Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական իշխանության ներկայացուցիչ, խնդրում եմ Ձեզ հայտնել Ձեր կառավարությանը, որ նա անմիջապես բանակցություններ սկսի Ռուսաստանի հետ՝ հաշտություն կնքելու և փոխհարաբերությունները որոշելու համար»[5]: Փաստորեն Ս. Օրջոնիկիձեն Հ. Սառիկյանին հասկացնում է, որ Խորհրդային կառավարությունը պատրաստ է բանակցություններ սկսել ՀՀ կառավարության հետ՝ հաշտության և բարեկամության պայմանագիր կնքելու համար: Պետք է նշել, որ այդ մտադրությունը կար նաև Դաշնակցական կառավարության մոտ: Շանթը ևս խոստովանել է, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո միայն իրենք սկսեցին մտածել բոլշևիկների հետ լեզու գտնելու մասին[6]: Այնուամենայնիվ կարծում ենք, որ այս բանակցությունները երկու կողմի համար էլ անհրաժեշտություն էր: Լիովին համակարծիք ենք պատմաբան Ա. Ներսիսյանի արտահայտած այն տեսակետին, որ Մոսկվայում սկսված հայ-ռուսական բանակցությունները սկիզբ դրեցին ՀՀ-ի և Խորհրդային Ռուսաստանի միջև ***քաղաքական հարաբերությունների հաստատմանը[7]:***

Ինչ վերաբերում է Լ. Շանթի պատվիրակության ուշ Մոսկվա հասնելուն, ապա այդ հարցը խորհրդահայ որոշ հեղինակներ կապում են այդ նույն ժամանակ Լոնդոնում Անգլիայի և Թուրքիայի միջև ընթացող բանակցությունների հետ[8]: Ականավոր բոլշևիկ Ա. Կարինյանը այս առիթով գրել է. «Հայկական պատվիրակությունը դանդաղ էր շարժվում, որպեսզի հնարավորություն տա իր կառավարությանը տեղեկություններ ստանալ Լոնդոնից և ըստ այնմ էլ վարել իր

---

[3] Տե՛ս ***Ованнисян Р.***, Международные отношения республики Армения 1918-1920гг., Е., 2007, ст. 729:

[4] ***Եսայան Ա.***, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922թթ, Եր., 1967, էջ 103:

[5] Հայաստանի Ազգային Արխիվ (այսու՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 6, ***Ալիխանյան Ա.***, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Եր., 1964,Եր., էջ 94:

[6] Տե՛ս «Յուսաբեր», 1 հունիս, 1960, № 52:

[7] ***Ներսիսյան Ա.***, ՀՀ Բյուրո-կառավարության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունների առաջին փուլը, «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(10), Եր., 2014, էջ 3:

[8] Տե՛ս ***Կարինյան Ա.***, Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Եր., 1924, էջ 31, Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922թթ, Եր., 1967, էջ 103, Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Եր., 1973, էջ 315:

գործելակերպը Խորհրդային իշխանության հանդեպ»[9]: Այնուհետև հեղինակը նշում է, որ «դաշնակցական կառավարությունը դիտավորությամբ ընտրել էր այնպիսի պատվիրակություն, որ ոչ մի եզր չլինի նրանց և Մոսկվայի միջև»: Մեկ այլ խորհրդահայ պատմաբան այս առիթով հետևյալն է գրել. «Դաշնակցականները իրենց հույսերը կապում էին արևմտյան տերությունների հետ և, խորհրդային կառավարության առաջարկը ձևականորեն չմերժելով հանդերձ, չէին ուզում նրա հետ լուրջ բանակցությունների մեջ մտնել, ամեն կերպ ձգձգում էին դրանք և վերջում էլ ձախողեցին»[10]:

Ընդհանրապես խորհրդային տարիներին ստեղծված ուսումնասիրություններում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ եթե դաշնակցական կառավարությունը խզեր իր կապերը արևմուտքի պետությունների հետ և հաշտվեր Խորհրդային կառավարության հետ, ապա բոլորովին այլ ճակատագիր կունենար ՀՀ-ն:

Ի հակակշիռ խորհրդահայ հեղինակների արտահայտած վերոնշյալ տեսակետների, սփյուռքահայ որոշ հեղինակներ Շանթի պատվիրակության ուշ Մոսկվա հասնելը հիմնավորում են փոխադրամիջոցներ չլինելու հանգամանքով, երկաթուղային երթևեկի դժվարությունների պատճառով[11]: Հ. Տերտերյանի հուշերից ևս պարզվում է, որ բավականին դանդաղ են շարժվել Մոսկվա: Նա մասնավորապես նշում է. «Կազբեկում պետական վրացի պաշտոնյան մեքենավարին իրավունք չտվեց, որ շարունակենք մեր ճանապարհը… ստիպված եղանք գիշերել Կազբեկում …Գնացք չլինելու պատճառով Ռոստովում մնացինք մոտ մեկ շաբաթ… հազիվ մայիսի վերջերին հասանք Մոսկվա»[12]:

Բոլորովին այլ կերպ է իրողությունը ներկայացնում Թիֆլիսում հայկական պատվիրակությանը միացած Ղարաբաղի հայրենակցական միության անդամ Ա. Երզնկյանը: Վերջինս խորհրդահայ պատմաբաններից ոչ պակաս քննադատել է Մոսկվա մեկնած հայկական պատվիրակության ղեկավար Լ. Շանթին, իսկ պատվիրակությանը որակել է որպես «անճարակ և տխրահռչակ պատգամավորություն»: Պատվիրակության գործունեության մանրամասների մեջ չխորանալով՝ հեղինակը, ինչպես ինքն է ասում, կանգ է առել «չափազանց զավեշտական մոմենտների վրա»[13]: Լ. Շանթի պատվիրակության ուշ Մոսկվա հասնելու հանգամանքը հեղինակը բացատրում է պատվիրակության անդամների անձնական բնույթ կրող պատճառներով: «Հասնելով Հանքային Ջրեր կայարանը՝ պարզվում է, որ դելեգացիայի անդամներից Լ. Զարաֆյանը պիտի գնա Հանքային Ջրերը՝ փնտրելու իր կորած կնոջը: Երբ դելեգացիան հասնում է Ռոստով-Նախիջևան, այստեղ էլ պարզվում է մի նոր դեպք. մի քանի շաբաթ առաջ վախճանված է լինում պատվիրակության մյուս անդամ Հ. Տերտերյանի եղբայրը, ուստի պատվիրակությունը հարկադրված է լինում մի քանի օր մնալ այստեղ»[14]: Այս փաստերով

---

[9] ***Կարինյան Ա***, նշվ աշխ., էջ 33:

[10] ***Արզումանյան Մ***., նշվ. աշխ., էջ 315:

[11] Տ՛ես ***Փիրումյան Ռ***., Հայաստանը Հ.Յ.Դ.-բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Եր., 1997, էջ 212, Լազեան Գ., Հայաստան և հայ դատը. հայևռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Եր., 1991, էջ 232:

[12] «Հայրենիք», № 1, էջ 5-7:

[13] ***Երզնկյան Ա***., Աշխատավորության դատարանին (էջեր դաշնակցականների գործերից), Թիֆլիս, 1927, էջ 3:

[14] Նույն տեղում, էջ 4-5:

հեղինակը բնորոշում է Շանթի պատվիրակության վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստաի հետ վարվելիք բանակցությունների հանդեպ: Շարունակելով քննադատել Շանթի պատվիրակությանը՝ հեղինակը հետևյալ հարցադրումն է անում. «Կարո՞ղ էր կարճամիտ Շանթն իր «դիվանագիտական նրբությամբ» ըմբռնել պահի կարևորությունն ու լրջությունը և այն հեռանկարները, որոնք բացվում էին Հայաստանի աշխատավորության համար: Իհարկե ոչ, քանի որ նա չուներ նուրբ հոտառություն և սեր դեպի սեփական աշխատավորությունը»[15]: Այնուհետև հեղինակը նշում է, որ Շանթի պատվիրակությանը չէր հետաքրքրում իրենց միսիան, այլ «նրանց աչքերն ուղղված էին դեպի Սևրը»: Այսպիսով, Ա. Երզնկյանի բերած այս փաստերից պարզ է դառնում, որ վերջինս 1920թ. հայ-ռուսական բանակցությունների ձախողման մեղավորը համարում է միմիայն Լ. Շանթին և նրա գլխավորած պատվիրակության գործունեությունը, ինչը կարծում ենք, որ շատ սուբյեկտիվ է: Իհարկե չենք ժխտում, որ բանակցությունների ձախողման մեջ իր մեղքի բաժինն ուներ նաև հայկական պատվիրակությունը՝ ի դեմս Լ. Շանթի, ով լինելով գրող ավելի շատ ռոմանտիկ էր, քան դիվանագետ, սակայն կարծում ենք, որ միանշանակ կերպով ողջ մեղքը բարդել Լ. Շանթին, ճիշտ չէ: Այս փոքրածավալ գրքույկում ընդհանրապես անտեսվում է հայ-ռուսական հարաբերությունների վրա բացասական ազդեցություն թողած թուրք-ադրբեջանական գործոնի դերակատարությունը:

Ընդհանրապես խորհրդահայ պատմագրության մեջ Շանթին տրվել է «անճարակ», «կարճամիտ» և նմանատիպ մի շարք պիտակներ, իսկ պատվիրակությունը ենթարկվել է քննադատության՝ բանակցությունների ձախողման մեղավոր համարվելու համար: Սրան զուգահեռ քննադատության է ենթարկվել նաև Բյուրո-կառավարության վարած քաղաքականությունը, այն որակվելով որպես «հակաազգային»[16], «երկդիմի»[17], «անհեռատես»[18], «հանցավոր»[19], «արատավոր»[20], «տխրահռչակ»[21] և այլն: Հետխորհրդային շրջանի հեղինակները ևս քննադատել են Շանթին, սակայն վերջիններս բավարարվել են միայն նշելով, որ «տաղանդավոր գրողը օժտված չէր դիվանագետին բնորոշ հատկանիշներով»[22]:

Իրականությանը չի համապատասխանում խորհրդահայ պատմաբանների կողմից առաջ քաշված այն տեսակետը, ըստ որի Գ. Չիչերինը և Լ. Կարախանը ամեն տեսակ զիջումներ էին անում բանակցությունները հաջող ավարտելու համար, սակայն դաշնակցական կառավարությունը, բանակցությունները ձախողելու նպատակով, պատրվակներ էր փնտրում և տեսնելով, որ Խորհրդային կառավարությունը հաստատակամորեն ձգտում է պայմանագիր կնքել, Դաշնակցական կառավարության որոշում է դադարեցնել բանակցությունները և Մոսկվայից ետ

---

[15] Նույն տեղում, էջ 6-7:

[16] ***Եսայան Ա.***, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Եր., 1965, էջ 230:

[17] ***Ալիխանյան Մ.***, նշվ. աշխ., էջ 105:

[18] ***Ադայան Ծ.***, Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Եր., 1982, էջ 284:

[19] ***Սիմոնյան Հ.***, Թուրք ազգային բորժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986, էջ 505:

[20] ***Եսայան Ա.***, Հայաստանի միջազգային իրավական դրությունը, էջ 120:

[21] ***Մռավյան Ա.***, Հոդվածներ և ճառեր (1913-1929), Եր., 1961, էջ 105:

[22] ***Զոհրաբյան Է.***, 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 58, Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920թ., Եր., 2002, էջ 56:

կանչել իր պատվիրակությանը[23]: Այս տեսակետը համարում ենք ընդամենը զրպարտանք, քանի որ Ռուսաստանը անգամ մեծագույն ցանկության դեպքում չէր կարող կնքել պայմանագիր, քանի որ դեռևս չէր կողմնորոշվել Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի տարածքային պատկանելիության հարցում: Բնական է, որ առանց Թուրքիայի և Ադրբեջանի պատվիրակությունների հետ բանակցելու նա չէր ստորագրի պայմանագիր ՀՀ-ի հետ:

Հարկ է նշել, որ Խորհրդային կառավարությունը բանակցությունների հենց սկզբից սկսած վարում էր զգուշավոր քաղաքականություն, բանակցությունները միտված էին շոշափելու հայկական կողմի տրամադրությունները, այդ է վկայում այն փաստը, որ դրանք կրում էին զրույցի բնույթ և չէին կազմվում խոսակցությունների արձանագրությունները[24]: Բանակցությունների հենց սկզբից պարզ է դառնում, որ բանակցող կողմերի նպատակները տարբերվում են միմյանցից: Պարզվում է, որ խորհրդային կառավարության նպատակը կողմերի միջև միջնորդությամբ հանդես գալն է, այնինչ բոլորովին այլ էր ՀՀ պատվիրակության հետապնդած նպատակները: Պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար ցանկանում ենք խոսքը տալ Հ. Տերտերյանին. «Մեր հասնելուն երկրորդ թե երրորդ օրը, գիշերուա ժամը 12-ին, մեզ հրաւիրեցին արտաքին գործոց կոմիսարիատի գրասենյակը, որտեղ ներկայացրինք մեր լիազօրաթղթերը:

Խորհրդային Ռուսաստանի կողմից մեզ հետ բանակցում էին արտաքին գործոց կոմիսար Չիչերինը եւ նրա օգնական հայազգի Կարախանը:

Չիչերինը, բարի գալուստ մաղթելով ՀՀ պատուիրակութեանը, իր խնդակցութիւնը հայտնեց մեր ժամանման առթիւ և հաստատեց Խորհրդային իշխանութեան «անկեղծ ցանկութիւնը» բարեկամական հարաբերութիւններ ստեղծելու Հայաստանի կառավարութեան և հայ ժողովրդի հետ: Յետո, անմիջապէս անցաւ բուն նյութին, որի համառոտ ամփոփումը հետեւեալն է.

Տաճիկները իրենց՝ բոլշեւիկներին պետք են: Իրենք համաձայնուել են իրենց զինուորական և տնտեսական օժանդակութեամբ դուրս շպրտելու նրանց երկրից եվրոպական աշխարհակալ «զավթիչներին»: Տաճիկները պատրաստ են անմիջապես գործողութիւնների ացնել, սակայն մտահոգուած են, որ Հայաստանի կառավարութիւնը, որպես Դաշնակիցների կողմնակից, կարող է հարուածել իրենց թիկունքից: Ձեզ հրավիրել ենք, որպեսզի հաշտեցնենք Ձեզ տաճիկների հետ և որոշ երաշխիքներ ստանանք, որ Հայաստանի կառավարութիւնը մեզ դաշնակից տաճիկներին թիկունքից չի հարուածի: Քանի որ ռուս-տաճկական համագործակցութիւնը այս րոպէիս Խորհրդային Ռուսաստանի համար կենաց ու մահու խնդիր է, ուստի, անհրաժեշտ է այդ խնդիրների վերաբերմամբ ճշտել Հայաստանի կառավարութեան դիրքը և վերաբերմունքը:

Չիչերինի այս ամփոփ զեկուցումից հասկացուեց, որ Խորհրդային կառավարութիւնը պարզապես ուզում է միջնորդի դեր կատարել մեր ու տաճիկների միջև, բարիդրացիական հարաբերութիւններ ստեղծելու համար, պայմանով, որ մենք ձեռք քաշենք Դաշնակիցներից և ամբողջապես Մոսկուայի իրավարարութեանը հանձնենք մեր դատի լուծումը, դուրս բերելով այն օգոստոսի 10-ին Սևրում գումարվելիք խորհրդաժողովի օրակարգից»[25]:

---

[23] Տե՛ս ***Ալիխանյան Մ.***, նշվ. աշխ., էջ 106-107:

[24] «Հայրենիք», № 1, էջ 10:

[25] «Հայրենիք», №1, էջ 7-8:

Փաստորեն ստեղծված իրավիճակում հայկական պատվիրակությունը անակնկալի է գալիս, քանի որ վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ Երևանում ոչ մի խոսք չի եղել: Հ. Տերտերյանը նշում է, որ «Տաճկահայաստանի անկախութեան և նրա սահմանների վերաբերմամբ Սեւրի մեջ հետագային կայանալիք որոշումներից հրաժարուելու մասին խոսք չէր եղել և 1920թ. պայմաններում չէր էլ կարող լինել»[26]: Միանգամայն պարզ էր, որ յուրաքանչյուր հայ հունիս-հուլիս ամիսներին անգամ մտքում չէր հրաժարվի Սևրի խոստումնաշատ և ծանրակշիռ պայմանագրից: Մեր իշխանությունները, ցավոք, հակված էին դեպի Սևրը, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ մեր տարածաշրջանում ակտիվ քաղաքականություն վարող Խորհրդային Ռուսաստանը չէր ստորագրելու այդ պայմանագիրը: Մի պայմանագիր, որը հակասում էր Խորհրդային Ռուսաստանի շահերին, քանի որ վերջինս չէր կարող համակերպվել ՀՀ անկախությանը՝ մեծ տերությունների հովանու ներքո:

Հարկ է նշել, որ Չիչերինը բանակցությունների ընթացքում չի շոշափում Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի հիմնահարցը, սա ևս ցույց է տալիս, որ դեռևս հստակ չէր այս տարածքների պատկանելիության հարցը: Այդ է վկայում նաև հունիսի 19-ին Չիչերինի կողմից Օրջոնիկիձեին ուղարկված գրությունը, որտեղ ասվում է. «Կենտկոմի քաղաքական նկատառումներով թելադրված՝ բուրժուական Վրաստանի, դաշնակցական Հայաստանի և թուրք ազգայնականների հետ խաղաղության և փոխզիջումների քաղաքականությունը պետք է հետևողական կերպով իրականացվի…

Ղարաբաղը, Զանգեզուրը, Շուշին, Նախիջևանը, Ջուլֆան ***չպետք է միացվեն ոչ Հայաստանին ոչ էլ Ադրբեջանին,*** այլ պետք է գտնվեն ռուսական օկուպացիոն զորքերի ենթակայության ներքո, որտեղ կստեղծվեն տեղական խորհուրդներ, այլապես ուրիշ որոշումը կխախտեր մեր վարած խաղաղության քաղաքականությունը, ինչը պահանջում էր տիրող ընդհանուր իրավիճակը»[27]:

Չիչերինի այս քայլը ևս հասկանալի է, քանի որ դա պայմանավորված էր Խորհրդային կառավարության շահերով: Առաջնորդվելով համաշխարհային հեղափոխությունը կյանքի կոչելու գաղափարով, Խորհրդային կառավարությունը ի դեմս Քեմալական Թուրքիայի տեսնում էր իր դաշնակցին, որը պետք է աջակցեր իրեն Դաշնակիցների դեմ պայքարում:

Բանակցությունների ընթացքը ցույց տվեց, որ Խորհրդային կառավարությանը մտահոգող հիմնահարցը Տաճկահայաստանի խնդիրն էր, ոչ թե Անդրկովկասի հանրապետությունների սահմանների հարցը: Փաստորեն հայկական պատվիրակությունից պահանջվում էր ճշտել Հայաստանի կառավարության դիրքն ու վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի և Տաճկաստանի հանդեպ: Համաձայն Տերտերյանի վկայության՝ տաճիկների նպատակն էր Ռուսաստանի միջոցով ճնշել ՀՀ կառավարությանը, որպեսզի վերջինս հրաժարվի Դաշնակիցների օժանդակությունից և Սևրի պայմանագրից, իսկ Խորհրդային Ռուսաստանի նպատակը այս պարագայում տաճիկների միջոցով Եվրոպայի հաղթականներին սպառնալն էր, որպեսզի վերջիններս բանակցությունների մեջ մտնեն Խորհրդային իշխանության հետ և այն ճանաչեն որպես Ռուսաստանի օրինավոր իշխա-

[26] Նույն տեղում, էջ 8:

[27] Нагорный Карабах в 1918-23 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, с. 506:

նություն: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ կառավարությանը, ապա վերջինիս նպատակն էր՝ ճշտել Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի սահմանները, ապահովել Խորհրդային իշխանության կողմից Հայաստանի ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը և ստանալ մի շարք տնտեսական և մշակութային արտոնություններ, իսկ ինչ վերաբերում է տաճկահայ հողերի խնդրին, ապա այն պետք է վճռվեր Սևրում[28]: Հ. Տերտերյանը նշում է, որ թեև ՀՀ կառավարության կողմից լիազորված չէին Խորհրդային կառավարության հետ տաճկահայ հողերի վերաբերյալ բանակցելու, սակայն բանակցությունները չվիժեցնելու նպատակով ստիպված երկխոսության մեջ են մտել Չիչերինի հետ՝ պարզելու, թե ինչ կարող են ակնկալել Խորհրդային կառավարության միջնորդությունից[29]:

Հայկական պատվիրակության այս քայլը հայ պատմագրության մեջ դրական է գնահատվել: Բոլորովին այլ կերպ է գնահատվել պատմագրության մեջ այն փաստը, որ ՀՀ պատվիրակության նախագահը չցանկացավ տեսակցել այդ նույն ժամանակ Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակության հետ: Հետաքրքիրն այն է, որ Շանթը թուրքերի հետ այս տեսակցությունը չկայանալու ողջ մեղքը բարդում է Քեմալի կառավարության վրա: Մոսկվայի բանակցությունների վերաբերյալ Շանթը Լեգրանին հետևյալ գրությունն է հղել հոկտեմբեր ամսին, երբ արդեն Երևանում շարունակվում էին բանակցությունները. «Ոչ մեր պատվիրակությունը Մոսկվայում, ոչ էլ մեր կառավարությունը այստեղ (Երևանում) չէին հակվում անմիջական հարաբերությունների մեջ մտնել Քեմալ փաշայի կառավարության հետ՝ վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար: ՀՀ պատվիրակությունը ընդառաջելով արտգործժողկոմի տեղակալ Լ. Կարախանի առաջարկին՝ բանակցությունների մեջ մտնել Քեմալ փաշայի պատվիրակների հետ, որոնք այդ ժամանակ գտնվում էին Մոսկվայում, ցանկացավ պարզել վերջինիս կոնկրետ առաջարկությունները կապված վիճելի տարածքների հետ, սակայն Քեմալ փաշայի պատվիրակները խուսափեցին ուղղակի պատասխանից հայտարարելով, որ իրենք չունեն համապատասխան լիազորություններ»[30]: Իսկ ահա, երբ հունիս ամսին Քեմալ փաշան դիմում է ՀՀ կառավարությանը, վերջինս համաձայնում է մտնել բանակցությունների մեջ Մ. Քեմալի հետ վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Սակայն այս անգամ Մ. Քեմալի կառավարությունը դնում է պարտադիր նախապայման՝ սկսել բանակցությունները ՀՀ-ի կողմից Բրեստի և Բաթումի պայմանագրերը ճանաչելու դեպքում, որոնք պարտադրվել էին գերմանական և թուրքական իմպերիալիստների կողմից[31]: Այս խնդրի վերաբերյալ բոլորովին այլ վկայություն է տալիս Հ. Տերտերյանը. «Ես և Լ. Զարաֆեանը առաջարկեցինք Լ. Շանթին մասնավոր տեսակցութիւններ ունենալու թուրք պատուիրակութեան հետ եւ աշխատելու իրարհասկացողութեան գալ տաճիկների հետ, իսկ եթէ այդ չյաջողուեր, գոնէ շոշափած կլինէինք իրենց տրամադրութիւնները… Շանթը բուռն կերպով ընդդիմացավ թուրքերի հետ տեսակցության գաղափարին: Առարկեց, որ նախ՝ լիազօրուած չենք տաճիկների հետ բանակցելու եւ երկրորդ՝ ինքը կողք կողքի չի նստի մեր ազգի ջարդարարների հետ:

---

[28] Տե՛ս «Հայրենիք», №1, էջ 10:

[29] Տե՛ս նույն տեղում:

[30] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1136, թ. 1:

[31] Տե՛ս նույն տեղում:

Աշխատում էինք համոզել, որ այստեղ լիազօրութեան խնդիր չկայ, այլ տրամադրութիւններ շօշափելու հարց եւ, եթէ պետք լինի, Հայաստանի կառավարութիւնից հետագային կը ստանանք անհրաժեշտ լիազօրութիւններ: Ինչ վերաբերում է երկրորդ առարկութեան՝ գտնում էինք, որ դիւանագիտական յարաբերութիւնների մարզում զգացմունքը անելիք չունի, այլ միայն սառը դատողությունը և մեր ժողովրդի շահը:

Դժբախտաբար, այդ խնդրում մեզ չհաջողուեց համոզել ընկ. Շանթին, եւ մենք էլ նպատակայարմար չգտանք, առանց նրա համաձայնութեան, շփման մէջ մտնելու տաճիկ պատուիրակութեան հետ եւ ցաւով յետ կանգնեցինք մեր մտադրութիւնից»[32]:

Շանթի վերոնշյալ գրությունը համարում ենք ինքնաբդարացման միջոց, իսկ ահա Հ. Տերտերյանի այս վկայությունը կարծում ենք լիովին բավարար է համոզվելու, որ Շանթը իսկապես դիվանագետ չէր: Եթե այս տեսակցությունը կայանար և մինչև ռուս-թուրքական համաձայնագրի կնքումը հայկական պատվիրակությունը քեմալականների հետ ընդհանուր հայտարարի գար, մի՞թե այդ կերպ չէր կանխվի թուրք-հայկական պատերազմը:

Հայ պատմագրության մեջ այս հարցը գրեթե անտեսվել է, շատ քիչ պատմաբաններ են անդրադարձել այս խնդրին: Է. Զոհրաբյանը դեռևս խորհրդային տարիներին հրատարակած աշխատություններից մեկում զարգացնում է այն տեսակետը, ըստ որի թուրքական պատվիրակությունը խուսափել է հայկական պատվիրակության հետ հանդիպելու Լ. Կարախանի առաջարկից՝ նշելով, որ իրենք լիազորություն չունեն[33]: Հետխորհրդային շրջանում հրատարակած մեկ այլ աշխատության մեջ Է. Զոհրաբյանը ընդարձակ մեջբերումներ կատարելով Հ. Տերտերյանի հուշերից հայ-թուրքական հնարավոր բանակցությունների վերաբերյալ, կարծում է, որ «ՀՀ կառավարությունը կամ սխալվել էր նրան նշանակելով Մոսկվա գործուղվող պատվիրակության նախագահ, կամ՝ հակառակը, նրան հենց այդպիսի անձնավորություն էր պետք»[34]: Ա. Ներսիսյանը գտնում է, որ 1920թ. հունիս-հուլիս ամիսներին Քեմալի հետ հաշտությունը կարող էր հնարավոր դառնալ, երբ նրա դրությունը աղետալի էր, քանի որ պարտություն էր կրում հունական բանակից և դաշնակիցներից[35]: Իսկ այն հնարավոր առարկությանը, որ թուրքերը կարող է խաբեին հայերին, Ա. Ներսիսյանը տալիս է հետևյալ պատասխանը. «Բոլոր նրանց, ովքեր գտնում են, որ քեմալականների հետ բանակցությունները ոչինչ չէին կարող տալ, կարելի է հարց տալ, թե 1920թ. (հունիս-հուլիսին), երբ Քեմալը նեղ դրության մեջ էր, հայոց հետ դաշինքը գոնե չէ՞ր փրկի Արևմտյան Հայաստանի մի մասը և չէ՞ր կասեցնի պատերազմը ՀՀ հետ: Այս հարցին ոչ մեկ չի կարող վերջնական ժխտողական պատասխան տալ»[36]: Գ. Գաբրիել-

---

[32] «Հայրենիք», №1, էջ 12-13:

[33] Տե՛ս ***Զոհրաբյան Է.***, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Եր., 1979, էջ 47-48:

[34] ***Զոհրաբյան Է.***, 1920թ. թուրք-հայկական պատերազմը…, էջ 57-58:

[35] Տե՛ս Ներսիսյան Ա., Ինչո՞ւ չիրականացավ Սևրի պայմանագիրը, «Դրօշակ», թիվ 1, դեկտեմբեր, 2000, էջ 149:

[36] Նույն տեղում, էջ 152: Նույնի՝ Ռուբեն, Եր., 2007, էջ 343:

յանը ևս գտնում է, որ եթե Լ. Շանթի պատվիրակությունը բանակցությունների մեջ մտներ նույն օրերին Մոսկվայում գտնվող Բ. Սամի բեյի պատվիրակության հետ, ապա կկայանար հայ-թուրքական փոխզիջումային համաձայնություն, որը դրական հետևանքներ կբերեր թե հայ-ռուսական և թե հայ-ադրբեջանական հարաբերությունների առումով[37]:

ՀՀ քաղաքական այրերից Ալ. Խատիսյանը ևս խոստովանել է, որ «թուրք գործիչներու հետ խօսակցութիւնները իր ժամանակին կրնային օգտակար ըլլալ, եւ այդպիսի խօսակցութիւններու համար ոչ բոլոր հնարաւորութիւնները օգտագործուեցան»[38]: Ասենք ավելին, երբ 1920թ. ամռանը Ալ. Խատիսյանը Կ. Պոլսում հանդիպում է ունենում ամերիկյան դերծովակալ Բրիստոլի հետ, վերջինս ասում է, «թէ առհասարակ ինքը իր պարտքը կը համարէ նախազգուշացնել հայ քաղաքական գործիչները, որ իրենք փնտռեն մերձեցում թուրքերու հետ՝ իրենց պահանջները հասցնելով նուազագոյնի, հակառակ պարագային անոնց կը սպասէ ծանր ապագայ»[39]: Հետաքրքիրն այն է, որ նույնանման խորհուրդ Խատիսյանին տվել է նաև գեներալ Հարբորդը: Սրանից կարելի է հետևություն անել, որ Դաշնակիցները ևս հասկացնել էին տալիս ՀՀ-ին, որպեսզի վերջինս հարաբերություններ մեջ մտնի թուրքերի հետ: Այնինչ Ալ. Խատիսյանը փորձում է արդարանալ հետևյալ կերպ. «Հոգեբանական վայրկեանը թուրք կառավարութեան հետ խօսելու համար հայ ժողովուրդի տեսակէտէն միանգամայն աննպաստ էր: Թուրքերը կը թուէին բոլորովին ընկճուած, Փարիզի վեհաժողովը ամենազօր, իսկ մեր հարցը լավագոյն ուղիի վրա: Տիրող կարծիքն այն էր, թէ թուրքերու հետ խօսելիք չկայ»[40]: Դաշնակցական պատմաբան Ռ. Փիրումյանը ևս խոսելով Մոսկվայում գտնվող քեմալական պատվիրակության և այն հանգամանքի մասին, որ Շանթը չցանկացավ տեսակցություն ունենալ նրանց հետ՝ հետևյալն է գրում. «Եթէ հայ եւ թուրք պատուիրակները, առանց ռուսների միջնորդութեան, փորձէին իրենց հարցերը լուծել, մանաւանդ՝ այն ժամանակ, երբ հայ-թուրքական հակադրութիւնները դեռ սաղմնային էին, գուցէ կարելի կլինէր հետագա արյունահեղութեան առաջն առնել. գուցէ հայերը կարողանային ի շահ Հայաստանի օգտագործել բոլշեւիկների հանդէպ ունեցած քեմալական թուրքերի անվստահութիւնը»[41]:

Ինչպես Լ. Շանթը, այնպես էլ Հ. Տերտերյանը վկայում են, որ բանակցությունների ընթացքում խորհրդային կողմը խորհրդայնացման պահանջ չի դրել: Տերտերյանի վկայության համաձայն, այն հարցին թե ի՞նչն է խանգարում Հայաստանը ևս խորհրդայնացնել, եթե մտադրություն ունեն Տաճկաստանը խորհրդայնացնել, Չիչերինը տվել է հետևյալ պատասխանը. «Մենք շարժւում ենք դէպի Արեւելք եւ հարաւ՝ փոքր ազգութիւնները աշխարհակալների լուծից ազատագրելու նշանաբանով: Եւ եթէ այսօր մենք Հայաստանը խորհրդայնացնենք, այդ դէպքում Խորհրդային կառավարութիւնը յաչս փոքր ազգութիւնների կը վարկաբեկուի եւ չի կարողանար իր ծրագրած նպատակներին հասնել: Նորից պնդում եմ, որ մենք

---

[37]Տե՛ս ***Գաբրիելյան Գ.***, Հայ-թուրքական բանակցությունների անհրաժեշտության հարցը Մոսկվայում 1920թ. հունիս-հուլիսին և դրանց չկայանալու հետևանքները, «Կանթեղ», Եր., 2011 № 4 (49), էջ 111:

[38]***Խատիսյան Ալ.***, ՀՀ ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 204:

[39]Նույն տեղում, էջ 230:

[40]Նույն տեղում, էջ 231:

[41] ***Փիրումեան Ռ.***, նշվ. աշխ., էջ 215:

բարեկամ ենք հայ ժողովրդին եւ այժմ էլ պատրաստ ենք ձեր և տաճիկների միջեւ իրաւարարի դեր կատարել, եթէ ՀՀ կառավարութիւնը պաշտօնապէս դիմի մեր միջնորդութեանը»[42]: Այդ մասին Շանթը ևս գրել է. «Բոլշեւիկները կճանչնային մեր անկախութիւնը, մեզի բոլշեւիկ դառնալու պահանջ չէին դրներ, կուզէին միայն, որ փոխադարձ բարեկամական դաշինք կնքէինք»[43]: Իսկ ի՞նչ պատահեց, որ այդ բարեկամական դաշինքը չկնքվեց: Այս հարցի վերաբերյալ հայ պատմագրության մեջ դարձյալ առկա է տարակարծություն: Մինչ այդ տեսակետներին անդրադառնալը ցանկանում ենք մեջբերել Հ. Տերտերյանի վկայությունը հայ պատվիրակների՝ Խորհրդային կառավարության հետ ունեցած երկրորդ տեսակցության վերաբերյալ: «Յունիսի կէսերին, մեզ նորից հրաւիրեցին տեսակցութեան: Այս տեսակցութիւնը աւելի արդիւնաւէտ եղավ: Մենք ընդառաջեցինք Սովետական կառավարութեան միջնորդի դեր կատարելու ցանկութիւնը՝ ՀՀ կառավարութեան եւ Մ. Քեմալի միջեւ: Չիչերինը Խորհրդային Ռուսաստանի անունից խոստացաւ հայերին բաւարարել՝ Տաճկահայաստանի որոշ հողամասերը միացնելով Հայաստանին եւ նրան ապահովելով ելք դեպի Սեւ ծով:

Ազերբէջանի հետ եւս մեր սահմանների խնդիրը որոշուեց մօտաւորապէս կարգադրել հետեւեալ ձևով. Նախիջեւանի շրջանը եւ Զանգեզուրը անվերապահօրեն պիտի համարուէին հայկական հողամասեր, իսկ Ղարաբաղը պիտի նկատուէր վիճելի, որի իրաւական վիճակը որոշուելու էր հետագային ժողովրդական հանրաքուէով… Չիչերինը խոստացաւ շտապ ձեւակերպել կայացած համաձայնութիւնը և ռուս-հայկական դաշնագրի բնագիրը մի երկու օրից ներկայացնել ստորագրութեան:

Կայացած համաձայնութեան մասին անմիջապէս տեղեկացրինք Երեւան եւ սկսեցինք պատրաստութիւն տեսնել մեկնելու համար:

Անցաւ երկու-երեք օր: Բայց դաշնագրի ստորագրութիւնը ձգձգվում էր՝ մեզ համար անյայտ պատճառներով: Պարզ էր, որ կայացած համաձայնութիւնը անակնկալ եւ անախորժ արգելքների էր հանդիպել թանձր վարագոյրի ետեւում»[44]:

Խորհրդահայ, հետխորհրդահայ և սփյուռքի հայ պատմագիր և հուշագիր հեղինակների տեսակետները այս հարցի հետ կապված տարբեր են և հակասական: Խորհրդահայ պատմաբանները ջանք ու եռանդ չեն խնայել բանակցությունների ձախողման մեղքը հայկական պատվիրակության վրա բարդելու համար: Ընդհանրապես խորհրդահայ պատմագրության մեջ գերիշխող տեսակետն այն էր, որ հայ-ռուսական բանակցությունները ձախողվել են «Դաշնակցական կառավարության հանցանքով, երկդիմի և անհեռատես քաղաքականությամբ և Անտանտի իմպերիալիստների մեղքով»: Խորհրդահայ պատմաբանները փորձում էին ցույց տալ, որ բանակցությունները ձախողվել են Անտանտի իմպերիալիստների մեղսակցությամբ, քանի որ վերջիններս, ըստ խորհրդահայ որոշ պատմաբանների, «քիչ ջանքեր չթափեցին խորհրդա-հայկական բանակցությունները վիժեցնելու համար»[45], իսկ ինչ վերաբերում է խորհրդային կառավարության վարած

---

[42] «Հայրենիք», №1, էջ 9:

[43] «Յուսաբեր», 1 յունիս, 1960, թիւ 52:

[44]«Հայրենիք», №1, էջ 14-15:

[45]***Հարությունյան Շ.***, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և սովետական իշխանության հաստատումն ու ամրապնդումը Հայաստանում (1917-1921), Եր., 1960, էջ 113:

քաղաքականությանը, ապա խորհրդահայ պատմաբան Շ. Հարությունյանի կարծիքով այդ քաղաքականությունն ուղղված էր «Հայաստանը սովետական իմպերիալիստական բլոկից մեկուսացնելուն»[46]: Խորհրդահայ մեկ այլ պատմաբան Ա. Եսայանը գտնում է, որ Անտանտի երկրների դավաճանության և դաշնակցականների «անհեռատես ու հակաազգային» քաղաքականության հետևանքով երկիրն ընկել էր անելանելի կացության մեջ[47]: 1920թ. հայ ժողովրդի ունեցած ձախողումների մեղավորը նա համարում է դաշնակցական կառավարությանը, նշելով, որ վերջինս չկարողացավ ճիշտ կողմնորոշվել և չկամեցավ երկրի կենսական հարցերը լուծել Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ, այլ դիմեց անիմաստ քայլերի[48]: Ա. Եսայանի խորին համոզմամբ հայ-ռուսական պայմանագրի ստորագրումը Մոսկվայում անհնարին դարձրին Հայաստանում ստեղծված անորոշ դրությունն ու գոյություն ունեցող կառավարության իրական իշխանության մասին տեղեկությունների բացակայությունը[49]: Իրականությանը չի համապատասխանում հեղինակի կողմից ՀՀ կառավարությանը հետևյալ բնութագրում տալը. «Դաշնակցական կառավարությունը ծայրամասային պետությունների այն կառավարություններից էր, որ ***համառորեն դիմադրում էր*** նորմալ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ Սովետական Ռուսաստանի միջոցառումներին»[50]: Ի՞նչ դիմադրության մասին է խոսքը:

Խորհրդային պատմագրությանը բնորոշ մոտեցմամբ է գնահատել հայ-ռուսական բանակցությունների ձախողումը պատմաբան Ս. Կարապետյանը. «Դաշնակցական կառավարության հանցանքով և արևմտյան իմպերիալիստների թելադրանքով ընդհատվեցին բանակցությունները, սակայն սովետական կառավարությունը շարունակեց Հայաստանի հետ պայմանագրի կնքման իր ձգտումները, որպեսզի վերականգնի բարեկամական հարաբերությունները Սովետական Ռուսաստանի և հայ ժողովրդի միջև»[51]: Միանգամայն անհիմն ենք համարում նաև հեղինակի արտահայտած հետևյալ միտքը. «Դաշնակների մեծագույն հանցանքը հայ ժողովրդի հանդեպ այն էր, որ նրանք Մոսկվայում բանակցությունների ժամանակ հրաժարվեցին սովետական առաջարկից՝ առայժմ բավարարվել Վանի, Էրզրումի, Տրապիզոնի միացումով, և նպաստեցին բանակցությունների ձախողմանը»[52]: Այս տեսակետը պաշտպանում է նաև Ծ. Աղայանը, ով նույնպես կարծում է, որ եթե Չիչերինի առաջարկությունների համաձայն պայմանագիր կնքվեր, ապա հայկական տարածքային խնդրի լուծումը այլ ընթացք կունենար, մինչդեռ դաշնակցական կառավարությունը հրաժարվեց դրանից[53]: Խորհրդահայ պատմաբանների այս տեսակետները նույնպես չեն համապատասխանում իրականությանը, քանի որ ՀՀ պատվիրակությունը չհրաժարվեց Ռուսաստանի միջնորդությունից և բանավոր համաձայնություն կայացվեց պայմանագրի ստորագրման շուրջ, այլ բան է, որ ՀՀ կառավարությունը Թուրքահայաստանի հարցում

---

[46]Նույն տեղում:

[47]Տե՛ս ***Եսայան Ա.***, Հայկական հարցը…, էջ 230:

[48]Տե՛ս նույն տեղում, էջ 234:

[49]Տե՛ս ***Եսայան Ա.***, Հայաստանի միջազգային իրավական դրությունը, էջ 107:

[50]Նույն տեղում, էջ 108:

[51] ***Կարապետյան Ս.***,1920թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը,Եր.,1965, էջ 8:

[52]Նույն տեղում, էջ 10-11:

[53] ***Աղայան Ծ.***, նշվ. աշխ., էջ 288:

խուսափեց Ռուսաստանի միջնորդությունից և պայմանագիր ստորագրելուց: Կառավարության նման պահվածքը կարծում ենք պայմանավորված էր նրանով, որ մեծ տերությունները ավելին էին խոստանում, քան Խորհրդային Ռուսաստանը, որով կյանքի էր կոչվելու հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերաբերյալ: Այստեղ հարց է առաջանում, թե արդյոք Խորհրդային Ռուսաստանը իսկապես ՀՀ-ին խոստանում էր 3 նահանգներ, թե դա ընդամենը Լ. Կարախանի անձնական ցանկությունն էր: Դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ դա այդպես էլ կար: Այդ բանակցությունները ձախողվեցին միայն այն ժամանակ, երբ Մոսկվա ժամանեցին թուրք-ադրբեջանական տարրերը: Փաստորեն ՀՀ կործանումը պայմանավորված էր արտաքին գործոնով, ինչը խորհրդահայ պատմագիրների կողմից գրեթե անտեսվել էր:

Ելնելով բանակցությունների ձգձգման փաստից Ե. Սարգսյանը գրում է. «-Դաշնակցական կառավարությունը, հուսալով Անտանտի պետությունների օգնությամբ իրագործել Սևրի պայմանագիրը, անընդհատ ձգձգում էր բանակցությունները և իր պատվիրակության առջև այնպիսի հարցեր էր դնում, որոնք հանգեցրին բանակցությունների խափանմանը և Շանթի վերադառնալուն Երևան»[54]: Կարելի է պնդել նաև հակառակը, որ Խորհրդային կառավարությունը բանակցությունները ձգձգեց այնքան ժամանակ մինչև հասկանար ՀՀ-ն հրաժարվում է Սևրից, թե՝ ոչ: Ուստի տեսնելով, որ վերջինս հաստատակամ է իր որոշման մեջ, Մոսկվայում ձախողեց բանակցությունները՝ Երևանում շարունակելու նպատակով: Հայ-ռուսական բանակցությունների ձախողումը մեկ այլ խորհրդահայ պատմաբան Ա. Մնացականյանը համարում է բնական, քանի որ, ըստ նրա, ՀՀ կառավարությունը Շանթի պատվիրակությանը տվել էր այնպիսի հրահանգներ, որոնցով նա չէր կարող հասնել դրական արդյունքների[55]: Մ. Արզումանյանը ևս կարծում է, որ Մոսկվայի բանակցությունները ձախողվեցին «դաշնակների հանցանքով»: Այս առիթով հեղինակը հետևյալն է գրում. «Դաշնակները, ատելությամբ և թշնամությամբ լցված դեպի սովետական իշխանությունը, ամեն ինչ անում էին վիժեցնելու Մոսկվայի բանակցությունները: Դրա հաստատումն է նաև այն, որ նրանք նույն բանակցությունների ժամանակ Հայաստանում ձերբակալում ու գնդակահարում էին կոմունիստներին, դաժանաբար ճնշում հեղափոխական շարժումները, մղում հակառուսական-հակասովետական թունոտ պրոպագանդա ու կատաղի պայքար»[56]: Ի տարբերություն խորհրդահայ որոշ պատմաբանների, Ծ. Աղայանը գտնում է, որ Ադրբեջանի հետ ունեցած սահմանային վեճերի պատճառով հայկական պատվիրակությունը ձախողեց բանակցությունները և հենց այդ պատճառով էլ Խորհրդային կառավարությունը Բ. Լեգրանի գլխավորած պատվիրակությանն ուղարկեց Հայաստան, տեղում սահմանային վեճերի հարցը քննարկելու[57]: Իհարկե իմաստազրկվում էր Խորհրդային կառավարության այս քայլը, քանի որ եթե սահմանավեճը լուծելու լինեին կլուծեին հենց Մոսկվայում, ոչ թե այն կտեղափոխեին Երևան: Սա ևս տակտիկական քայլ էր Խորհրդային կառավարության կողմից հարցը ձգձգելու համար:

---

[54] ***Մարգսյան Ե.***, ***Բ.*** Լեգրանի միսիան, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1967, №3, էջ 22:

[55] Տե՛ս ***Մնացականյան Ա.***, Հայ ժողովրդի ազատագրումը և վերածնունդը, Եր., 1970, էջ 81:

[56] ***Արզումանյան Մ.***, նշվ. աշխ., էջ 317:

[57] ***Աղայան Ծ.***, նշվ. աշխ., էջ 288:

Ինչպես տեսանք խորհրդահայ պատմաբանների այս աշխատություններում խոսք անգամ չկա խորհրդա-քեմալական մերձեցման մասին, հայ-ռուսական հարաբերությունների վրա դրանց ունեցած բացասական ազդեցության մասին: Կարծում ենք, որ եթե այս հարցերը շոշափած լինեին խորհրդահայ պատմաբանները, ապա բոլորովին այլ կլինեին բանակցությունների ձախողման վերաբերյալ նրանց գնահատականները: Ի հակակշիռ այս տեսակետների, սփյուռքահայ պատմագրության մեջ իրավացիորեն զարգացվել է այն տեսակետը, որ ՀՀ-ն դարձավ խորհրդա-քեմալական համագործակցության զոհ: Սփյուռքահայ հեղինակ Հ. Իրազեկի կարծիքով բանակցությունների անհաջող ընթացքի համար մեղավոր է Խորհրդային կառավարությունը: Այդ առիթով հեղինակը գրում է. «Խորհուրդները բանակցութիւնները շարունակ ձգձգելով, անշուշտ այդպիսով իրենց դաշնակից տաճիկներին առաջ շարժուելու հնարաւորութիւն ընձեռելու նպատակով պատգամավորութիւնը երկար ժամանակ պահեցին այնտեղ և վերջն էլ դատարկաձեռն յետ ուղարկեցին»[58]: Դիպուկ է հեղինակի արտահայտած տեսակետը, բայց պետք է նշել, որ ՀՀ կառավարությունը ևս ուներ մեղքի իր բաժինը, քանի որ ուշացնում էր պատվիրակության դիմումի պատասխանը: Հ. Տերտերյանը այս առիթով գրում է. «Մեզ համար անյայտ մնաց մեր դիմումի այդքան ուշացման պատճառը: Արդեօք մեր կառավարութիւնն էր ուշացրել պատասխանը, թէ Խորհրդային կառավարութիւնը գիտակցաբար ուշ յանձնեց մեր կառավարութեան պատասխանը»[59]: Կարծում ենք, որ տվյալ պարագայում դա այդքան էլ էական նշանակություն չունի, քանի որ բանակցություններն արդեն ընդհատվել էին և պիտի շարունակվեին Երևանում: Իսկ քաղաքական իրադարձությունները այդ ընթացքում դասավորվեցին ի վնաս ՀՀ-ի, սկսեցին ակտիվանալ անգամ հայ բոլշևիկները, ովքեր Բաքվից աշխատում էին վիժեցնել հայ-ռուսական բանակցությունները և այս անգամ նպատակ ունեին «բոլշեւիկների և տաճիկների օժանդակութեամբ խորհրդայնացնել Հայաստանը»[60]: Այս մասին վկայում է նաև Լ. Կարախանը. «Բաքուի հայ բոլշեւիկները մեծ աղմուկ էին բարձրացուցեր, որ բոլշեւիզմը դաշնակցիլ կուզէր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հետ»[61]: Նրանք խանգարում էին պայմանագրի կնքմանը, պատճառաբանելով, որ դեռևս պարզված չեն Խորհրդային Ադրբեջանի և Դաշնակցական Հայաստանի սահմանները՝ հատկապես Ղարաբաղի և Զանգեզուրի հատվածից[62]: Լ. Շանթը 1925թ. Ս. Վրացյանին հղած նամակում նույնպես ակնարկում է այդ մասին. «Դաշինքը չստորագրվեցավ, որովհետև Բաքվի հայ, վրացի և թաթար կոմունիստները բոլոր միջոցներով սկսան ճնշում բանեցնել Մոսկվայի վրա, պահանջելով, որ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը թուրքական հողեր են, ***անվիճելի թուրքական*** և Հայաստանի հետ միացնելու խոսք անգամ լինել չի կրնար: Մոսկվան 1-2 ամիս ժամանակ գործ դրավ իր Բաքվի ընկերներու հետ համաձայնության մը գալու և տեսնելով, որ անկարելի է, որոշեց բանակցությունները տեղափոխել Կովկաս և ուղարկեց Լեգրանը Բաքու և հոնկե Երևան»[63]: Հիշենք նաև դեռևս հուլիսի 1-ին ՀՀ կառավա-

---

[58] ***Իրազեկ Յ.***, Մօտիկ անցեալից. պատմական դեպքեր և ապրումներ (1917-1922), Պեյրութ, 1956, էջ 69:

[59] «Հայրենիք», №1, էջ 17:

[60] «Հայրենիք», №1, էջ 15:

[61] «Յուսաբեր», 2 հունիս, 1960, թիւ 53:

[62] ***Միմոնյան Ս.***, Զանգեզուրի գոյամարտը 1920-21թթ., Եր., 2000, էջ 92:

[63] ***Վրացյան Ս.***, Հայաստանի Հանրապետություն, (Հավելված, Լ. Շանթի նամակները Մոսկվայի բանակցության մասին), Եր., 1993, էջ 645-646:

րությանը ուղարկված Լ. Շանթի գրությունը, ուր ևս հիշատակվում է ադրբեջանական գործոնի բացասական ազդեցությունը. «Առաջին տեսակցութիւնից պարզուեց, որ միակ դժուարութիւնը Ադրբէջանի սահմանն է, որովհետև Բագուից ամեն կերպ աշխատում են խանգարել պայմանագրի կնքումը:

Սովետական կառավարութիւնը ընդունում է մեր պահանջները իրաւացի, չի փափագում գոհացում տալ Սովետական Ադրբէջանի և հայ բոլշևիկների բոլոր բաղձանքներին, այնուամենայնիվ, վերջիններիս յամառ պնդումների և սուտ տեղեկութիւնների ազդեցութեան տակ պայմանագրի կնքումը դանդաղում է:

Սովետական Ադրբէջանի վարիչները ցանկանում են օգտուել ռուսական հեղինակութիւնից և ռուս զօրքից իրագործելու համար մուսաւաթական ծրագիրը, գրաւել Ղարաբաղն ու Զանգեզուրը և անվիճելի հայկական հողերը, այդպիսով ամրապնդելու համար իրենց դիրքերը ազգաբնակչութեան մեջ»[64]: Ս. Վրացյանը նույնպես բանակցությունների անհաջողության մեջ հայ բոլշևիկների մեղսակցությունն է տեսնում: «Ազրբէջանցի և հայ բոլշեւիկները,- գրում է Վրացյանը,- Միկոյեանի և Աւիսի մասնակցութեամբ, յատուկ պատուիրակութիւն ուղարկեցին Մոսկուա և կարողացան համոզել, որ դաշնագրի ստորագրութիւնը յետաձգուի և բանակցութիւնները փոխադրուեն Երեւան, որի համար Խորհրդային կառավարութիւնը լիազօր պատուիրակ նշանակեց Լեգրանին: Ազրբէջանցի և հայ բոլշեւիկների հաշիւը պարզ էր: Նրանց նպատակն էր բանակցութիւնները դանդաղեցնելով՝ ռուս բանակի միջոցով ստեղծել փաստական այնպիսի կացութիւն, որ Հայաստանի խորհրդայնացումը դառնայ անխուսափելի»[65]: Մենք ևս հակված ենք այն տեսակետին, որ հայ-ռուսական համաձայնագրի ստորագրմանը խանգարում էին հայ բոլշևիկների ակտիվ նամակագրությունն ու այդ նույն օրերին Մոսկվայում գտնվող քեմալական պատվիրակությունը: Եվ հենց Մոսկվա ուղարկված այդ կեղծ նամակներն էին, որ կողմնորոշիչ նշանակություն ունեցան Կենտրոնի համար, որը և բացասաբար ազդեց մոսկովյան բանակցությունների ընթացքի վրա[66]: Պատմաբան Ա. Հակոբյանը փաստում է, որ հայ-ռուսական բանակցությունների անհաջողության գործում որոշակի դերակատարություն են ունեցել մայիսյան ապստամբությունում պարտություն կրած հայ բոլշևիկները, ովքեր ամեն ջանք գործադրեցին, անգամ պատվիրակություն ուղարկեցին Մոսկվա, որպեսզի Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև համաձայնություն չկնքվի[67]: Այս տեսակետին է հակված նաև սփյուռքահայ հեղինակ Ռ. Փիրումյանը[68]: Հայ-ռուսական բանակցությունների ձախողվելը արդյունք էր նաև բոլշևիկների որդեգրած արևելյան քաղաքականության, «որուն առանցքը կը կազմէին թուրքերը»[69]:

Ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը իրավացիորեն նշում է, որ Խորհրդային Ռուսաստանը Հայաստանի հետ պայմանագիր կնքելու համար նախապես պետք է լուծած լիներ երկու հարց. նախ պետք է վերջնական դիրքորոշում ունենար Լեռ-

---

[64] «Մշակ», 17 հուլիս, 1920: «Յառաջ», 13 հուլիս, 1920:

[65] ***Վրացյան Ս.***, Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թուրքական սալի միջեւ, Պէյրութ, 1953, էջ 103:

[66] ***Հարությունյան Հ.***, Լեռնային Ղարաբաղը 1918-21թթ., Եր., 1996, էջ 260:

[67] ***Հակոբյան Ա.***, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-20թթ.), Եր., 2005, էջ 302:

[68] Տե՛ս ***Փիրումեան Ռ.***, նշվ. աշխ., էջ 215-216:

[69] ***Լազյան Գ.***, նշվ. աշխ., էջ 250:

նային Ղարաբաղի, Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի և Զանգեզուրի նկատմամբ, որոնք Ադրբեջանը Թուրքիայի օգնությամբ ցանկանում էր զավթել Հայաստանից, ապա պետք է ճշտեր տարածքային հարցերում Հայաստանի և Թուրքիայի ունեցած տարաձայնությունների նկատմամբ իր դիրքորոշումը: Սակայն 1920թ. հունիսին Ռուսաստանն իր համար չէր լուծել ո՛չ առաջին և ո՛չ էլ երկրորդ խնդիրը, ուստի հեղինակը գտնում է, որ նա դեռ պատրաստ չէր Հայաստանի հետ պայմանագիր կնքելուն, ավելին, հեղինակի խորին համոզմամբ այս հարցը հնարավոր էր լուծել միայն Թուրքիայի հետ վարվող բանակցությունների միջոցով, որտեղ Ադրբեջանը ևս պետք է դերակատարություն ունենար: Ուստի հեղինակի կարծիքով հայ-ռուսական բանակցությունների առաջին շրջանում Մոսկվայի նպատակն էր ծանոթանալու ՀՀ-ի դիրքորոշմանը, ձգձգել նոր սկսված բանակցությունները և սպասել թուրքական պատվիրակության ժամանմանը Մոսկվա[70]: Անշուշտ պետք է համաձայնել Լ. Խուրշուդյանի այս տեսակետի հետ, որովհետև բնական էր, որ առանց Թուրքիայի և արդեն խորհրդայնացված Ադրբեջանի հետ համաձայնության գալու Խորհրդային կառավարությունը չէր կարող պայմանագիր կնքել ՀՀ-ի հետ: Ուստի հենց դա էր պատճառը, որ Խորհրդային կառավարությունը բանակցությունները ձգեց այնքան ժամանակ, մինչև թուրքական պատվիրակությունը ժամանեց Մոսկվա: Բանակցությունների ձգձգմանը, ինչու չէ նաև ձախողմանը նպաստեցին նաև Բաքվից բոլշևիկների ուղարկած հեռագրերը, որոնց մեջ, ցավոք սրտի,կային նաև հայեր: «Հուլիսի սկզբներին սկսում է ձևավորվել Խորհրդային Ռուսաստանի հակահայկական քաղաքականության հայեցակարգը,- գրում է Լ. Խուրշուդյանը,- որն ամբողջական տեսք է ընդունում օգոստոսի ընթացքում: Այս ժամանակահատվածում է Ստալին-Օրջոնիկիձե առանցքին միանում Քեմալը՝ հիմք դնելով Մոսկվա-Բաքու-Անկարա եռանկյունուն»: Ըստ հեղինակի Բոլշևիկյան Ռուսաստանի քաղաքականության սկզբունքները և դրանց իրականացման եղանակները Անդրկովկասի վերաբերյալ մշակվում էին այս եռանկյունու շրջանակներում և հետո միայն, ներկայացվելով քաղբյուրոյին, դառնում պետական քաղաքականություն[71]:

Է. Զոհրաբյանը նույնպես իրավացիորեն կարծում է, որ հայ-ռուսական բանակցությունների ձախողման և պայմանագիր չստորագրելու պատճառը պետք է փնտրել Հայաստանի հարցում Ռուսաստանի դաշնակիցների՝ Խորհրդային Ադրբեջանի և Քեմալական Թուրքիայի դիրքորոշման մեջ: Այդ կապակցությամբ հեղինակը մեջբերում է Բաքվից Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին, Գ. Վ. Չիչերինին և Վլադիկավկազ՝ Գ. Կ. Օրջոնիկիձեին հասցեագրված հեռագրերը, որ ստորագրել էին Նարիմանովը, Մդիվանին և Միկոյանը: Հարկ ենք համարում մենք նույնպես մեջբերել հեռագիրը, որտեղ ասվում էր. «Հայաստանում հազարավոր կոմունիստներ ձերբակալվել և հարյուրները գնդակահարվել են, տասնյակ ապստամբած հայկական գյուղեր ոչնչացվել են դաշնակների կողմից: Բազմաթիվ մուսուլմանական գյուղեր կոտորվել են… Ինչ վերաբերում է իբրև վիճելի Զանգեզուրին և Ղարաբաղին, որոնք արդեն մտել են Ադրբեջանի կազմի մեջ, վճռականորեն հայտարարում ենք, որ այդ շրջանները անվիճելիորեն այսուհետ ևս պետք է մնան Ադրբեջանի կազմում… Մեր կողմից մենք դաշնակցական կառավարության հետ ա-

[70]Տե՛ս ***Խուրշուդյան Լ.***, նշվ. աշխ., էջ 56-57:

[71] Նույն տեղում, էջ 72:

մեն մի բանակցություն համարում ենք ավելորդ, իսկ Թուրքահայաստանի հարցը Ձեր մտադրության ձևով՝ անժամանակ»[72]: Փաստորեն այս հեռագրի հեղինակները հանդես էին գալիս Ադրբեջանի և Թուրքիայի պաշտպանությամբ: Հեղինակը նշում է, որ կարճ ժամանակամիջոցում Մոսկվա ուղարկվեցին մի շարք նամակներ և հեռագրեր, որոնք վատաբանում էին Հայաստանի կառավարությանը, պահանջում նրա հետ պայմանագիր չկնքել և ոչ մի զիջում չանել[73]: Եվ հենց այդպես էլ եղավ: Հունիսի երկրորդ կեսին արդեն Մոսկվան սկսել էր հեղեղվել Բաքվից և Կովկասում գործող ղեկավար կոմունիստներից ստացված հեռագրերով, որոնք պահանջում էին պայմանագիր չստորագրել Հայաստանի հետ: Հարկ ենք համարում մեջբերել Օրջոնիկիձեի հունիսի 19-ի հեռագիրը ուղղված Չիչերինին, որտեղ ասվում է. «Ադրբեջանը առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի ոչ մի կերպ չի կարող մնալ: Ընդհանրապես, իմ կարծիքով հարկավոր է Մոսկվա հրավիրել Ադրբեջանի ներկայացուցչին և նրա հետ միասին լուծել Ադրբեջանին և Հայաստանին վերաբերող բոլոր հարցերը: Դա պետք է անել մինչև Հայաստանի հետ պայմանագրի ստորագրումը, զաքաթալշչինայի կրկնությունը նաև հայերի հետ այստեղ մեզ վերջնականորեն կտապալի»[74]: Կարծում ենք այս մեջբերումը բավական է բավարար պատկերացում կազմելու ադրբեջանական գործոնի բացասական ազդեցության վերաբերյալ: «Հունիսի վերջերին կովկասյան կոմունիստները և Ադրբեջանի ղեկավարությունը ավելի ու ավելի էին մեծացրել ճնշումը Մոսկվայի վրա,- գրում է Է. Զոհրաբյանը,- միայն Օրջոնիկիձեն հունիսի երկրորդ կեսին վիճելի տարածքների հարցով երեք հեռագիր է ուղարկել Մոսկվա՝ Լենինին, Ստալինին և Չիչերինին, որոնցում պաշտպանում էր Ադրբեջանի իրավունքը Հայաստանի հետ վիճելի տարածքների հարցում»[75]: Վերոնշյալից բացի հեղինակը բերում է նաև մի հանգամանք ևս, որը նույնպես իր բացասական կնիքն է թողել Մոսկովյան բանակցությունների վրա: Խոսքը վերաբերում է Քեմալական Թուրքիային, որի տարածքային հավակնությունների մասին, ըստ հեղինակի, Չիչերինը մինչ այդ պատկերացում չուներ: «Չիչերինը կարծում էր,- շարունակում է հեղինակը,- թե Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններ ՀՀ-ին հանձնելու միջոցով հնարավոր կլինի լուծել թուրք-հայկական կնճիռը»[76]: Այնուհետև հեղինակը նշում է, որ հուլիսի 4-ին Չիչերինի այդ հույսերը չքացան, քանի որ այդ օրը Մոսկվայում ստացվեց Անկարայի կառավարության արտգործնախարար Բ. Սամի բեյի նամակը, որի համաձայն Անկարան ոչ մի թիզ հող չի ցանկանում զիջել Թուրքահայաստանից, ավելին՝ հավակնում է ՀՀ տարածքի շուրջ կեսին (Կարսի մարզին): Կարծում ենք՝ հեղինակի բերած փաստերը լիովին համոզիչ էին, թե ինչու հայ-ռուսական բանակցությունները մտան փակուղի:

Հետխորհրդային շրջանի հայ պատմագրության մեջ կա տեսակետ, ըստ որի, եթե Խորհրդային կառավարությունը ցանկանար ճանաչել ՀՀ անկախությունը գոյություն ունեցող պայմաններում, ապա պայմանագիրը կստորագրվեր Մոսկվայում: Իսկ թե ինչու չկայացավ այդ պայմանագիրը, ապա պատմաբան Կ. Սարդարյանը գտնում է, որ պատճառն այն էր, որ Ռուսաստանը ձգտում էր բավարա-

---

[72] ***Զոհրաբյան Է.***, 1920թ. թուրք-հայկական..., էջ 62:

[73] Նույն տեղում, էջ 65:

[74] ***Զոհրաբյան Է.***, Նախիջևանյան հիմնահարցը (1920-21), Եր., 2010, էջ 27:

[75] Նույն տեղում էջ 31-32:

[76] Նույն տեղում, էջ 45:

րել Ադրբեջանի և Թուրքիայի տարածքային պահանջները[77]: Ուստի հեղինակը ելնելով այս փաստից կարծում է, որ բանակցությունները ձախողվեցին ոչ թե «Շանթի անզիջում դիրքորոշման», այլ քեմալականների ու Ադրբեջանի ճնշման տակ[78]: Թուրքիայի ու Ադրբեջանի ունեցած բացասական ազդեցությունը հայ-ռուսական բանակցությունների վրա պատմաբան Կ. Խաչատրյանը համարում է բնական, քանի որ որոշվում էր Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի հարցը[79]:

Այսպիսով, մերժելով բանակցությունների ձախողման վերաբերյալ խորհրդահայ պատմագրության մեջ եղած տեսակետները, մենք ևս հակված ենք ընդունելու հետխորհրդահայ, մասամբ նաև սփյուռքահայ պատմագրության մեջ քաղաքացիություն ստացած այն տեսակետը, ըստ որի բանակցությունների ձախողմանը նպաստեցին Ադրբեջանի ղեկավարները հայ բոլշևիկների հետ միասին, ինչպես նաև այդ ժամանակ Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակությունը: Իսկ թե ինչ արդյունք տվեցին այդ բանակցությունները, ապա պետք է նշել, որ դրանք ավարտվեցին անարդյունք, քանի որ Խորհրդային Ռուսաստանը հունիս-հուլիս ամիսներին դեռևս չէր հստակեցրել իր դիրքորոշումը Քեմալական Թուրքիայի, Մուսավաթական Ադրբեջանի և Դաշնակցական Հայաստանի տարածքային պահանջների հարցում, ինչպես նաև դեռևս վստահ չէր այդ երեք հանրապետությունների՝ իր նկատմամբ ունեցած վերաբերմունքի անկեղծության մեջ: Խորհրդային Ռուսաստանին ժամանակ էր հարկավոր, որպեսզի այս ամենը խորությամբ հասկանա, ցավոք այդ ժամանակի ընթացքում թուրք-ադրբեջանական գործոնը ակտիվացավ և սկսեց հակահայկական մթնոլորտ ստեղծել: Խորհրդային կառավարության ղեկավարներից Չիչերինը նույնպես խոստովանել է Բաքվի բոլշևիկների ունեցած բացասական դերակատարությունը. «Բաքվի ընկերները իրենց գործողություններով խանգարում են փոխզիջումները, մերժում են Հայաստանի հետ համաձայնություն կնքելու Կենտկոմի պահանջը, նպաստում են ապստամբություններին, պնդում են, որպեսզի Ադրբեջանին միացվեն այն վիճելի տարածքները, որոնք պիտի զբաղեցվեն մեր ուժերի կողմից, իսկ դրանց միացումը Ադրբեջանին անհնարին կդարձնի Հայաստանի հետ համաձայնագրի կնքումը»[80]:

Ցավով պետք է նշել, որ ՀՀ ղեկավար գործիչները այս ժամանակահատվածում կառչած մնալով Արևմտյան դաշնակիցներից, անտեսեցին օրեցօր ուժգնացող ռուսական գործոնը տարածաշրջանում, իսկ քեմալականները կարողացան հմուտ կերպով համագործակցել բոլշևիկների հետ՝ հասանելով լուրջ արդյունքների: Հենց այս ընթացքում էլ կնքվեց խոստումնաշատ Սևրի պայմանագիրը, որից հետո Խորհրդային Ռուսաստանը կտրուկ շրջադարձ կատարեց, փոխելով իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ՝ նրան դիտելով որպես Անտանտի բարեկամ և դաշնակից:

Այսպիսով, ինչպես տեսանք, հայ-ռուսական հարաբերությունների հիմնահարցը հայ պատմագրության մեջ արժանացել է տարաբնույթ գնահատականների: Իհարկե այս հարցը միանշանակ գնահատվել չէր էլ կարող, քանի որ այն

---

[77] ***Մարդարյան Կ.***, Պատմություն և իրականություն, Եր., 1991, էջ 56:

[78] ***Մարդարյան Կ.***, Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում, Եր., 2007, էջ 62:

[79] ***Խաչատրյան Կ.***, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-22թթ., Եր 2007, էջ 17:

[80] Нагорны Карабах, стр. 509:

քննարկվել է երկու հակադիր քաղաքական, կուսակցական գործիչների ու պատմագիրների կողմից, որոնց տեսակետներում առկա է սուբյեկտիվ մոտեցումը, թեև պետք է նշել, որ այս հիմնահարցի վերաբերյալ խորհրդային, հետխորհրդային և սփյուռքյան պատմագրության մեջ եղած տեսակետները ճիշտ է տարբերվում էին միմյանցից, բայց այնուամենայնիվ դրանով կարևորագույն քայլ է կատարվել հայ-ռուսական հարաբերությունները համակողմանի ուսումնասիրելու տեսանկյունից:

Ара Азатян - ***Оценка деятельности делегации Л. Шанта в армянской историографии.***-В истории внешней политики Первой Армянской Республики вопрос о взаимоотношениях с Советской Россией постоянно находился в центре внимании историографии. Армяно-русские переговоры начавшиеся летом 1920-го года в Москве фактически положили ночало политическим отношениям между Советской Россией и Армянской Республикой. Нашей целью явилось систематизированное представление и анализ оценок данных армянской историографией, выявление ошибочных подходов связанных с обсуждаемым вопросом.

К сожалению, переговоры, прошедшие летом 1920г. в Москве, практически не дали никаких результатов, они прервалиеь с целью продолжения осенью в Ереване, в итоге чего Армения стала Советской.

Ara Azatyan - ***The assessment of L. Shant's Delegation activities in Armenian Historiography.***- In the history of the First Republic of Armenia's foreign policy the issue of relations with Soviet Russia has always been in the center of attention of historiography. In summer 1920, Armenian-Russian negotiations inchoated the beginning of the political relations between Armenia and Soviet Russia. Our goal was to introduce the assessment of the studies carried out by Armenian historians on these negotiations systematically, to analyze and clarify the incorrect approaches related to the discussed issued. Unfortunately in practice the Armenian-Russian negotiations held in Moscow in 1920 were not productive. They were interrupted in order to be continued in Yerevan in autumn. The result of all this became Armenia's sovietization.

ՎԱԶԳԵՆ (ՏԻԳՐԱՆ ՏԵՐՈՅԱՆ)
/ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ/

ԿԱՐԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

<<Հառաջ, քաղաքակրթութիւնը միշտ զոհ է պահանջէլ, փառք է մէզ, եթէ նրա արժանավոր զոհը լինենք>>:
Վազգեն

Տիգրան Տերոյանն (1872-1898 թթ.) առավել հայտնի է Վազգեն մականվամբ, հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ է և բանաստեղծ: Սկզբնապես անդամագրվել է Արմենական կուսակցությանը, ապա ՀՅԴ-ին: Վազգենը սովորել է Վանի Հայկազյան կենտրոնական վարժարանում: 1893 թ. ազատագրական գործունեության համար ձերբակալվել է: Բանտից ազատվելուց հետո մասնակցել է 1896 թվականի Վանի <<մեծ դեպքին>>: Դեմ է եղել Խանասորի 1897 թ. արշավանքին: Զոհվել է Վանից ոչ հեռու գտնվող Կուտուբաշ գյուղի ջրաղացում, երբ թուրքերը պաշարել էին նրան և զինակից ընկերներ Արշակ Չալկաղրյանին և Շատախցի Միքոյին:

Բանալի բառեր. Տիգրան Տերոյան (Վազգեն), Զարուհին (Ժենյա), Մկրտիչ Ավետիսյան (Թերլեմեզյան), Մարտիկ (Մարտիրոս Սարուխանյան), Պետո (Ալեքսանդր Պետրոսյան), Վան, ինքնապաշտպանություն, ազգային-ազատագրական պայքար, Հայ Յեղափոխական Դաշնակցություն:

Հայ ազատամարտի նվիրյալ, բանաստեղծ և հայդուկ Տիգրան Տերոյանը (Վազգեն) ծնվել է 1872 թ. Վան քաղաքի Այգեստան թաղամասում: Ուշիմ, աչքաբաց, ընդունակ ու աշխատասեր Տիգրանին բախտ է վիճակվում նախնական կրթությունը ստանալ Վանի Կեդրոնական վարժարանում: Նախակրթարանն ավարտելուց հետո, Տիգրանը 1876 թվականի աշնանը ընդունվում է Հանկույսների թաղամասում գտնվող Հանկույսների նախակրթարանը, որտեղ սովորեցնում էին արտասանել, հաշվել, հեքիաթներ, խմբակային երգեր, խաղեր, իսկ վերջին կիսամյակում՝ գունավոր 8 միլիմետրանոց թղթերից խսիր գործել, որը համարվում էր ավարտական աշխատանք[1]:

1878 թվականին Տիգրան Տերոյանն ընդունվում է Փորթուգալյանի Հայկազյան կենտրոնական դպրոցը: Հինգերորդ դասարանի աշխակերտ Տիգրանը որոշում է թերթ հրատարակել և նրա առաջարկությամբ դասարանական թերթը կրում է <<Զգտում>> անվանումը: <<Զգտում>> թերթը լուսաբանում էր դպրոցական, դասարանական կյանքը, ուսումնադաստիարակչական հարցեր, աշակերտական օրինակելի շարադրություններ, ոտանավորներ, ասացվածքներ, հայրենասիրական հոդվածներ: Հայրենասիրական խմորումների հնոցի վերածված Հանկույսների, ինչպես նաև Հայկազյան դպրոցում Վազգենի ուսանած տարիներն ապարդյուն չեն անցնում: Դպրոցական տարիքում էլ Վազգենը տոգորվում է հայրենասիրական, ազատասիրական գաղափարներով:

[1] Տե՛ս ***Երվանդ Շիրակյան***, Վազգեն. մի ջահակիր Վանի հերոսամատյանում, Էջմիածին, 2014, էջ 16:

Թուրքական իշխանությունները տեղեկանալով, որ Հայկազյան դպրոցը աշակերտությանը դաստիարակում է ազգային-հեղափոխական ոգով, 1885 թվականին փակում են այն: Տիգրանի քույրը Զարուհի Տերոյանը (Ժենյա՝ ծնված 1874 թվականին) 1880 թվականին ընդունվում է <<Գայանեի>> անվան դպրոցը: Քույր ու եղբայր խաղընկարներ էին, դպրոցական կյանքը, եղելություններն իրար հետ էին կիսում, մտքեր փոխանցում ու քննարկում, հետագայում երկուսն էլ նետվում են հեղափոխական պայքարի հորձանուտ:

Փորթուգալյանի դպրոցը փակվելու պատճառով Տիգրանն իր ուսումը թողեց անավարտ՝ նետվելով կյանքի ասպարեզ, սկզբում հոր մոտ իբրև դերձակի աշակերտ՝ ընտանիքի հոգսը հոգալու համար, ապա մեկ տարի անց՝ սկսում է դասավանդել դպրոցում: Հովհաննես Ագրիպասյանի և Մկրտիչ Ավետիսյանի պես խանդավառ ու գաղափարական ուսուցիչները մեծապես նպաստեցին Վազգենի, ինչպես նաև դպրոցի մյուս սաների հեղափոխական գաղափարների ձևավորման վրա. դպրոցականներից կազմվում է ինքնազարգացման խումբ. ընդարձակվում, խտանում ու ավելի ընդգրկուն է դառնում երիտասարդական շարժումը, ինչին չէր կարող իր մասնակցությունը չցուցաբերել աչքաբաց, ըմբոստ բնավորության տեր, ազատասիրական գաղափարներով տարված Տիգրանը:

Թուրքական իշխանությունները մշտապես հսկում և հետևում էին ազատամիտ երիտասարդության գործունեությունը, որոնց աչքից չվրիպեցին Գոլոշյանն ու Ագրիպասյանը. 1889 թ. մայիսի 26-ին տեղի ունեցած Չախ-Կետուկի կռվում հերոսաբար զոհվեցին Հովհաննես Ագրիպասյանն ու Վարդան Գոլոշյանը[2]: Իր ուսուցչի՝ Ագրիպասյանի ու նրա ընկերոջ մահը ցնցող տպավորություն գործեց Տիգրանի վրա. պետք էր խոսքից անցնել գործի: Վասպուրականի երիտասարդությունը բռնկված էր վրեժի բոցով, ուստի Տիգրանը սկսեց գործունեության խմբեր կազմակերպել, պատրաստել, ոգևորել նրանց. բնակիչների շահերը պաշտպանել աղաներու քմահաճույքին դեմ, բայց միշտ իր սովորական խոհեմությամբ[3]:

Վանի վիլայեթն ուսումնասիրելու և այնտեղ հեղափոխական գործունեություն ծավալելու նպատակով 1890-91 թթ. Վան է ժամանում ազգային-ազատագրական պայքարի անվեհեր գործիչներից մեկը՝ Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան): Վերջինս հանգրվանում է Տերոյանների տանը: Բոցավառված ազգային-ազատագրական շարժման կազմակերպման գաղափարով, Տիգրանը մտերմանում է Պետոյի հետ՝ դառնում նրա հավատարիմ զինակիցը: Տիգրանը որպես ազգային-հեղափոխական գործիչ ներկայանում է Վազգեն անունով:

Խելացի ու բանիմաց ուսուցչի համբավ ունեցող Վազգենը իր գրավիչ լեզվով համախմբում է Վանի և գյուղերի երիտասարդությանը, կազմում հեղափոխական խմբեր, ղեկավարում դրանք. Տերոյանների տունը աստիճանաբար վերածվում է հեղափոխական գաղափարների դարբնոցի: Հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, Վանի 1915 թվականի ինքնապաշտպանության կազմակերպիչ Արամ Մանուկյանի հուշերում կա հետևյալ վկայությունը. <<Վազգէնենց տունը, թէեւ աչքի ընկած, յայտնի յեղափոխական ան-

[2] ***Երվանդ Շիրակյան***, նշվ. աշխ., էջ 18£

[3] Տե՛ս նույն տեղում£

ցեալ ունեցող տուն էր, բայց եւ այնպէս մեր վստահելի տներից մէկն էր: Մենք յաճախ էինք գնում Վազգէնի մայրիկի մօտ, որը ամէնքիս մայրիկն էր:… Այն ժամանակը մայրիկը մի աղջիկ ուներ՝ օր. Սաթենիկ (վարժուհի էր Քաղաքամէջի մի դպրոցում…) եւ մի փոքրիկ տղայ՝ Վարազդատը, դեռ պատանի, 13-15 տարեկան, որը հաճախում էր Երամեան դպրոցը. հանդարտ, փափլիկ, սիրուն տղայ էր, աչքաբաց. ամէնքս սիրում ու գուրգուրում էինք: Նա Ահարոնյանի Վազրիկն էր[4] եւ, ինչ ասել կուզէ, որ թունդ դաշնակցական էր, նա էր մեր և Երամեան դպրոցի ուսուցիչների միջի կապը…

Այնուհետեւ եկան շատ փոթորիկներ: Շատ տներ ու մայրիկներ ունեցանք, բայց Վազգէնենց մայրիկը մնաց ամենալաւը, ամենաբարին, իսկ տունը՝ դարձեալ ամենքիս պարտադիր այցելութեան վայրը>>[5]:

Հեղափոխական գործերին Պետոն ներգրաւում է նաև Վազգենի քրոջը՝ Զարուհուն, որը դառնում է Վազգենի և Պետոյի գործակից ընկերը: Համագործակցությունն աստիճանաբար վերածվում է փոխադարձ սիրո: Պետոն ու Զարուհին նշանվում են, սակայն նրանց բախտ չի վիճակվում արժանանալ մեկմեկու[6]: Զարուհին (Ժենյա) կանանց շրջանում տանում է ազգային-ազատագրական քարոզներ, կանանց խմբեր կազմում յուրաքանչյուր թաղամասում՝ հորդորելով մասնակցել ազգային-ազատագրական պայքարին: 1896 թվականի մայիսին նա կարողանում է կազմակերպել կանանց մոտ 20 խմբեր քաղաքում և մոտակա գյուղերում: <<Դաշնակցութեան արմատացումը եւ ծաւալումը Վասպուրականի մէջ, ի հարկէ, նախնական ձևով, Պետոյէն վերջ Վազգենի գործը եղաւ, անոր ոգիով ներշնչուած երիտասարդութիւնն էր, որ վստահելի եւ ամուր պատուանդանը դարձաւ հետագային Երկիր մտնող պատասխանատու գործիչներուն: Իր քոյրը՝ Զարուհին եղաւ իր աջ բազուկը, մանավանդ, կիներու շրջանակին մէջ>>[7],- գրում է Վահան Փափազյանն իր հուշերում:

1893 թվականին խուզարկություն է կատարվում Տերոյանների տանը: Խուզարկության ժամանակ գտնված Ռափայել Պատկանյանի (Գամառ-Քաթիփա) <<Վանեցի գեղջուկը>> բանաստեղծությունն առիթ դարձավ Տիգրանին մեկ տարվա բանտարկության դատապարտելու: Մեկ տարի անց, բանտից ազատվելուց հետո Տիգրանը զրկվում է ուսուցչություն անելու իրավունքից: Բանտն էլ ավելի է կոփում ու հաստատակամ դարձնում երիտասարդ Վազգենին. նա անդամագրվում է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը, եղբոր օրինակին հետևում է նաև Զարուհին:

Պետոյի և Վազգենի ջանքերով կազմակերպված խմբերը պատկառելի ուժ էին կազմում Վասպուրականում: Անդրանիկ Օզանյանը, Տարոնի և Սասունի կռիվներին մասնակցելուց հետո, 1896 թվականի գարնանը տեղափոխվում է Վան և զինվորագրվում Վազգենի խմբին: Վազգենն առավել եռանդուն է լծվում Պարսկաստանից Վան զենք ու զինամթերք փոխադրելու

---

[4] Տե՛ս ***Ահարոնեան Ա.***, Ժողովածու երկերի, հատոր հինգերորդ, Ազատութեան ճանապարհին, Քրիստափոր Միքայէլեան, Անդրանիկ, Բոստըն, 1948, էջ 163-171£

[5] Արամը. Մահուան յիսնամյակին առթիւ, §Միքաէլ Վարանդեան¦ հրատ., ºրեւան, 1991, էջ 284£

[6] 1896 թվականի ամռանը Վանի ինքնապաշտպանության ժամանակ Պետոն զոհվում էէ Պետոյի մահից հետո Զարուհին, որին Պետոն էր կնքել Ժենյա անունով, երդվում է այլևս չամուսնանալ, և հավատարիմ է մնում իր երդմանը £

[7] ***Վահան Փափազեան***, Իմ յուշերը, հատոր առաջին, « Հայրենիք տպարան », Պոսթըն, 1950, էջ 143£

թեև դժվարին, բայց խիստ անհրաժեշտ գործին: Թուրքական իշխանությունների ամենատես աչքից չի վրիպում Վազգենի գործունեությունը: Նրանք անդադրում կերպով ջանում էին իրենց ձեռքը գցել Վազգենին (իրականացնում էին անընդհատ հետապնդումներ, խուզարկություններ Տերոյանների տանը), բայց անօգուտ: Վազգենը արհամարհելով թուրքական իշխանությունների հետապնդումները, էլ ավելի եռանդուն գործունեություն է ծավալում հայդուկային խմբերի հավաքագրման, հեղափոխական քարոզչության ու ինքնապաշտպանական խմբեր կազմելու գործում:

1896 թվականի հունիսի 3-ին թուրքական կանոնավոր զորամասերը, քրդական <<Համիդիե>> գնդերն ու մահմեդական խուժանը հարձակվեցին Վանի վրա: Վանեցիները համառ դիմադրություն ցույց տվեցին՝ համախմբվելով Մկրտիչ Ավետիսյանի (Թերլեմեզյան) և Մարտիկի (Մարտիրոս Սարուխանյան) շուրջը: Շան թաղի կռիվներում Վազգենն ինքնապաշտպանության ղեկավարներից էր: Հայերն այստեղ լուրջ դիմադրություն կազմակերպեցին և ետ շպրտեցին թշնամուն[8]: Թուրքական կառավարությունը Վան ուղարկեց նոր ուժեր: Թուրքական զորքը չկարողանալով գրավել քաղաքը՝ ավերակների կույտի վերածելով այն՝ հրդեհեց ու ավերեց: Քանդեցին բազմաթիվ բնակավայրեր, խարխլեցին որոշ պաշտպանական ամրություններ, սակայն չկարողացան ընկճել հայերի դիմադրական ոգին, աննկուն կամքն ու միասնությունը: Ինքնապաշտպանները ոչ միայն հաջողությամբ ետ էին մղում թուրքական գրոհները, այլև իրենք էին անցնում հակագրոհների, որոնց ընթացքում նրանց հաջողվեց գրավել թշնամու երկու թնդանոթ[9]: Այնուամենայնիվ, զգացնել էր տալիս զենք - զինամթերքի, ինչու չէ, նաև փորձառու կռվողների պակասը: Ուստի, անիմաստ համարելով թուրքական գերակշիռ ուժերի դեմ դիմադրությունը, հայերը դիմեցին անգլիական հյուպատոսի միջնորդությանը և որոշեցին դիմադրությունը դադարեցնել ու հեռանալ երկրից: Վանեցիները համաձայնում են Վանի անգլիական հյուպատոս Վիլեամսի և թեմական առաջնորդ Սահակ վարդապետ Բագրատյանի առաջարկությանը՝ դիմադրությունը դադարեցնելու մասին: Իշխանությունները խոստանում են թույլ տալ ազատամարտիկներին և նրանց միացած ժողովրդին անարգել հասնել Պարսկաստան: Սակայն ճանապարհին 200 զինված ու 600 անզեն հայեր պաշարվում են մահմեդական քրդերի ու թուրքերի 8-10 հազարանոց զորամասերի կողմից, 10-12 օր կատաղի կռիվ մղելով՝ հերոսաբար նահատակվում, փրկվում է ընդամենը 30-35 հոգի: Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերում կարդում ենք հետևյալը. <<Խումբը կիջնէ Աղբակի դաշտը եւ Ս. Բարթուղիմէոս վանքի շրջակայքը: Այստեղ կը պաշարուի բազմաթիւ քիւրտերէ ու զօրքի կողմէ: Տեղի կունենա կատաղի կռիւ մը: Խումբը յուսահատ ճիգեր կընէ, բայց բոլորը յոգնած են շարունակական կռիւներէ եւ երկարատեւ ճանապարհէ, եւ չեն յաջողիր ճեղքել թշնամիի շղթան: Մէկը միւսի ետեւէ կը կոտորուին բոլորը Ս. Բարթուղիմէոսի Նախավկայի ոտքերուն տակ>>[10]: Կռվում քրդերը շրջապատում են Պետոյի ու Մարտիկի խմբերը, որոնք արիաբար կռվում և հերոսա-

[8] Տ»°ս ***Երվանդ Շիրակյան***, նշվ. աշխ., էջ 37£

[9] Տ»°ս ***Ռուբեն Սահակյան***, Վազգեն (Տիգրան Տեպոյան), §Դրօշակ՝ պաշտոնաթերթ Հայ յեղափոխական դաշնակցութեան, 1998, թիվ 6, էջ 24£

[10] ***Ռուբէն***, Հայ յաղափոխականի մը յիշատակները, հատոր Բ, Թեհրան, 1982, էջ 105£

բար զոհվում են: Մինչև Պարսկաստան մեկնելը Վազգենին հաջողվում է 70-80 քաջերով բարձրանալ Վարագա լեռը: Վերջինս ճանապարհին վիրավորվում և պատսպարվում է մոտակա անտառում: Այնտեղ թաքնված երիտասարդները տարբեր գյուղերից ու գավառներից էին, որոնք հավաքվում են Վազգենի շուրջը, վերջինս նրանց ոգեկոչում է չընկճվելու և պայքարը շարունակելու, երիտասարդական խմբերը մեծացնելու և արտասահմանից զենք ու զինամթերք փոխադրելու գաղափարներով:

Վազգենը 1896 թ. օգոստոսի 2-ին և 7-ին նամակներ է գրում Թավրիզի և Տրապիզոնի կոմիտեներին Վանի ինքնապաշտպանության ու կոտորածի մասին, ինչպես նաև հայտնում Պետոյի մահվան բոթը[11]: Վազգենի կարծիքով՝ Մարտիկի ու Պետոյի խմբերի նահատակության պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է Պարսկաստանի կազմակերպության վրա, որի <<մեռելային դանդաղկոտութիւնէն…Պետօն վճռեց անձամբ գնալ եւ մեռածները սթափեցնելով մէկտեղ՝ գործերու մասին տեղեկանալ, չնայելով, որ իր հետ մնացած ուժերը շատ թոյլ, անփորձ էին, առանց ճանապարհի պատրաստութեան>>[12]: Այսպիսով, Վասպուրականի երեք կուսակցությունների ղեկավարները, իրենց հետևորդների հետ նահատակվեցին ազատության ճանապարհին: Դա ծանր հարված էր Վասպուրականի համար. կանհետանար երիտասարդության ամենակենսունակ ու ուժեղ տարրը, նրա մտավորական խավը: Հնչակյան կուսակցությունն ու արմենականները գրեթե դադարեցրեցին իրենց գոյությունը Վանում, բայց ամբողջությամբ չոչնչացան: Դաշնակցությունը կարողացավ պահպանել, իսկ հետագայում ընդլայնել ու ծավալել իր ուժերի մի մասը: Ռուբեն Տեր-Մինասյանի վկայությամբ. <<Պետոյի ու իր հետեւորդներու մահը այնքան ճակատագրական նշանակություն չունցաւ Դաշնակցութեան համար, որովհետեւ կային մարդիկ, որ յաջորդեցին անոնց եւ նոր ու ամուր հիմքերու վրայ դրին դեռ երիտասարդ այդ կազմակերպութիւնը, որուն վիճակուած էր շարունակել Աւետիսեանի եւ Մարտիկի մահով ընդհատուած գործը>>[13]:

Վանի ինքնապաշտպանության տխուր ավարտը խորապես ցնցել, ընկճել ու հիասթափեցրել էր Վանի հայությանը: Որոշ մարդիկ բացահայտ թշնամանք ու ատելություն սկսեցին տածել հատկապես ազգային-ազատագրական գաղափարներ տարածողների հանդեպ: Ռուբեն Տեր-Մինասյանի կարծիքով. <<Պատահած բոլոր դժբախտութիւնները ժողովուրդը կը վերագրէր ազատութեան խօսքը քարոզողներուն: Ան իր վշտի ու կսկիծի ազդեցութեան տակ մոռացեր էր, որ իր դժբախտութեան պատճառը ան էր, որ ինքնագիտակցութեան եկեր էր եւ որ կառավարութիւնը ատոր հետեւանքով էր, որ կը հալածէր ու կը կոտորէր զինքը: Միւս կողմէ, ժողովուրդին համակրութիւնը, առաջ դէպի Արմենականներն էր եւ այս վերջիններս գլխատուելէ յետոյ, Վանի մէջ խիստ նուազեր էր թիւը կուռ համոզումներ ունեցող մարդոց: Իսկապէս ծանր կացութիւն մը ստեղծուած էր Տէրոյանի եւ Վարդանի համար, որոնք վճռած էին եր-

[11] Տ»°ս ***Երվանդ Շիրակյան***, նշվ. աշխ., ¿ç 39£

[12] Տ»°ս ***Ռուբեն Մահակյան***, Վազգեն (Տիգրան Տերոյան), §Դրօշակ¦ պաշտոնաթերթ Հայ հեղափոխական դաշնակցութեան, 1998, թիվ 6, էջ 24£

[13] ***Ռուբէն***, նշվ. աշխ., էջ 106£

կիրը եւ ժողովուրդը չթողնել>>[14]: Անգլիական միսիան ևս իր բացասական դերը խաղաց՝ Վանի հայությանը տրամադրելով ազգային կուսակցությունների դեմ: Ժամանակ էր պետք, որպեսզի վերականգնվեր ժողովրդի հույսն ու հավատը, սերն ու համակրանքը ազգային-կուսակցությունների նկատմամբ: Վազգենի համառ ջանքերով հուսալքումը հետզհետե մարեց: Կարճատև դադարից հետո, 1896 թ. ամռանը կազմակերպվում է Պարսկաստանից Դեպի Երկիր հայդուկային ու զինատար խմբերի մուտքը: Հայդուկային մի քանի խմբեր հաստատվում են Վանում ու շրջակա գավառներում՝ նպատակ ունենալով ուժեղացնել տեղի ուժերը, որոնք ջլատվել էին հունիսյան դեպքերից հետո:

Ակներև է, որ Վազգենը մեծ հույսեր էր կապում Վանի հայության հետ: Քաջ գիտակցելով ժողովրդի ցասումն ու բողոքը, ճանաչելով վանեցու բնավորությունը, Վազգենն ըմբռնում է, որ ժողովուրդը հուսալքվել է՝ ժամանակ է պետք, որպեսզի դուրս գա այդ վիճակից և կրկին լարի իր ուժերը համիդյան բռնատիրության դեմ: Վազգենն ու Վարդանը աստիճանաբար, առանց շտապելու վերականգնում են Դաշնակցության դիրքերը Վանում և շրջակա հայկական գյուղերում: Ինչպես վկայում է Ռուբեն Տեր-Մինասյանը. <<Զարհուրելի փոթորկէն յետոյ, աննկուն Տէրոյեանի ու շրջահայեաց Վարդանի համար այդչափն ալ կը բաւէր>>[15]: Նա հույս էր հայտնում, որ ձմեռվա ընթացքում կկարողանա վերականգնել խմբերը և քայքայված ուժերը: Վազգենն այն տեսակետին էր, որ պետք է սկսել տեղական զանգվածային շարժում՝ ժողովրդից բխած ընդհանուր գործ, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ էր համարում երկարատև կռիվը ցույցերի, ահաբեկումների, խմբային գործողությունների միջոցով: <<Գործողության մասին մեր կարծիքն է եղած պատրաստի ուժերով կռիվը շարունակել անընդհատ, ցույցեր, շարժումներ անպակաս անել թե՛ քաղաքներու, և թե՛ գավառներու մէջ:…Ամեն ջանք թափել ռումբեր և դինամիտ ներմուծել գավառները, որոնք ապստամբական մեծ շարժումներու ժամանակ շատ գործ կարող են կատարել>>,- այս կարևոր խնդրի մասին գրում է Վազգենն իր 1896 թ. դեկտեմբերի 23-ի թվակիր նամակում: Առաջարկվում է դրամով զինել, գործակցություն հաստատել ասորիների հետ, պատրաստվել ընդհանուր ապստամբության համար>>[16]: Վազգենին հատկապես ոգևորում էր այն հանգամանքը, որ ժողովուրդը դուրս էր եկել թմբիրից և աշխուժորեն օգնում էր Դաշնակցությանը:

Վազգենին մեծ վիշտ ու ցավ էր պատճառում նախ մոր, ապա քրոջ՝ Զարուհու բանտարկությունը, որոնք Վազգենի հեղափոխական գործունեության պատճառով էին գտնվում փակի տակ: Թեև, այս ամենը չէր ընկճում ու չէր հուսալքում Վազգենին, որն անվհատ շարունակում էր հեղափոխական գործը և արտասահմանի ընկերներին ոգևորված հաղորդում, որ 1897 թվականի գարնանը Վան քաղաքում ու գավառներում արդեն կազմված են հեղափոխական կազմակերպություններ ու խմբեր: Ռուբեն Տեր-Մինայանը գրում է հետև-

[14] Նույն տեղում, էջ 107£

[15] ***Ռուբէն***, նշվ. աշխ., էջ 106£

[16] ***Գրիգոր Չիլինգիրյան***, նշվ. աշխ.,ից 39£

յալը. <<Զայն շահագրգռողը նախ եւ առաջ Վասպուրականն էր, որ մտրկութեան մէջ էր>>[17]:

Այդ ժամանակ ՀՅԴ Սալմաստի կոմիտեն պատրաստվում էր Խանասորի արշավանքին՝ վրեժխնդիր լինելու մազրիկ քրդական ցեղից, որը Վանի 1896 թ. ինքնապաշտպանության ժամանակ մասնակցել էր նահանջող Մկրտիչ Ավետիսյանի խմբի կոտորածին: Վազգենն էլ, Վարդանի, Իշխանի և ուրիշների հետ համամիտ չէր արշավանքին դրսից: Հունիսի վերջերին նա անցնում է Սալմաստ, ծանոթանում գործերի դրությանը, կատարված աշխատանքներին և համաձայնության գալիս նախապատրաստվող ձեռնարկի շուրջ: Որոշվում է մարտիկների ու ռազմամթերքի մի մասը մտցնել Վասպուրական, իսկ մնացածով կազմակերպել արշավանքը: Վազգենը հավատարիմ մնալով իր որդեգրած ուղուն, հուլիսի 15-ին, 30 ընկերներով ու մեծ քանակությամբ զենքով, մեկնում է Վան: <<1897 թ. աշնանը Վան մտաւ Վազգէնի՝ Տիգրան Տէրոյանի զինակիր խումբը: Վասպուրականի երիտասարդութիւնը գրկաբաց ընդունեց Պետոյին աշակերտած եւ կռիւներու մէջ թրծուած այդ մտաւորական հայդուկը: Այդ խումբին մէջ էր նաեւ Անդրանիկը, իբր պարզ զինուոր, որ Գուրգէնի հետ անցաւ Տարօն>>[18],- կարդում ենք Վահան Փափազյանի հուշերում: Վազգենի հետ էին արդեն մեծ հռչակ վայելող Շատախցի Միքոն (Միքայել Ազիզ-Մելիքյան), Բազիկը, Գուրգենը (Բաղդասար Մալյան) և ուրիշներ: Սալմաստի Դալասար գյուղում նկարվելուց հետո՝ խումբը, Սուրբ Թադեի վանքի ուղղությամբ՝ շարժվում է Վան: Ճանապարհին, Սպահան լճի մոտ քրդերի հետ ընդհարում ունենալուց հետո, խումբը ապահով հասնում է Վան: Վազգենի հայտնվելը Վանում, կրկին անհանգստության տեղիք է տալիս իշխանություններին. սկսվում են խուզակություններ, ձերբակալություններ: Կառավարությունը սկսում է դիմել խիստ միջոների: Տեսնելով, որ իր պատճառով կարող է տուժել ժողովուրդը, Վազգենն իր երկու զինակից ընկերների՝ Մուքոյի և Արշակ Չալկադրյանի հետ, ձմռան ցրտին հեռանում են քաղաքից՝ աշխատանքը գավառներում շարունակելու համար:

1898 թ. հունվարի 21-ին, երբ նրանք ապաստանել էին Վանից շուրջ 7 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կուռուպաշ գյուղի ջրաղացում, թուրքական 60 հոգանոց ջոկատը շրջապատում է ազատամարտիկներին: Վազգենը, Միքոն ու Արշակը փորձում են կռվով ճեղքել թուրք զինվորների շղթան դեպի Վարագա սար, փամփուշտները վերջանում են և երեքն էլ զոհվում են արիաբար: Երեք աճյունները կողք կողքի ամփոփվում են Վանի Արարոց Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցու <<Խաչաբակ>> գերեզմանատանը:

Վարազդատ Տերոյանի հուշերում կարդում ենք. <<1898 թ., 28 տարի առաջ Տաճկաստանում (Թուրքիա) սպանված եղբայրս եղել է դաշնակցական>>[19]:

Վազգենի մահը ծանր հարված էր ՀՅԴ-ի ու Վասպուրականի հայության համար, որոնք սգացին նրա կորուստը:

1901 թ. Բոստոնում տպագրվում է Վազգենի երգերի ժողովածուն <<Վազգենի երգարան>> խորագրով, իսկ 1906 թ. Ժնևում լույս է տեսնում Անդրանիկի

---

[17] ***Ռուբէն***, նշվ. աշխ, էջ 108:

[18] ***Վահան Փափազեան***, նշվ. աշխ., էջ 141£

[19] ՀԱԱ, ֆ. 1730, ց. 1, գ. 45, թ. 3£

<<Մարտական հրահանգներ>> կանոնագիրքը, որը նշանավոր զորավարն ի թիվս մյուս փառապանծ հայդուկների, նվիրում է նաև Վազգենի անմահ հիշատակին:

Карине Егиазарян - ***Вазген(Тигран Тероян)/Жизнь и деятельность/.*** - Тигран Тероян (1872-1898гг.), наиболее известный по прозвищу Вазген – известный деятель народного освободительного движения и поэт. Вначале вступил в партию Арменакан, затем в АРФД. Вазген учился в Айказском центральном училище Вана. Был арестован в 1893г. из-за освободительной деятельности. После выхода из тюрьмы участвовал в «большом событии» Вана в 1896г. Был против похода Ханасора в 1897г. Погиб в мельнице села Курубаш неподалеку от Вана, когда турки блокировали его и его боевых товарищей Аршака Чалкадряна и Шатахци Мико.

Karine Eghiazaryan - ***Vazgen(Tigran Teroyan)/ Life and activity/.*** -Tigran Teroyan (1872-1898), more known as sobriquet Vazgen, was a famous doer of national liberation movement and poet. At first he joined Armenakan party, then ARFD. Vazgen studied at Haykazyan central specialized school. He was arrested in 1893 for liberation activity. After getting out of jail, took part in «great event» of Van in 1896. He was against campaign of Khanasor in 1897. Tigran died in the mill of village Kurubash not far from Van, when Turks blocked him and his comrade –in-arms Arshak Chaldaryan and Shatakhtsi Miko.

ՀԱԿԱՅԱՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 1903 ԹՎԱԿԱՆԻՆ

ՄԿՐՏԻՉ ԴԱՆԻԵԼՅԱՆ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ցարական իշխանությունների՝ հայերի հանդեպ վարվող գաղութային քաղաքականության բարձրակետը դարձավ 1903 թ. հունիսի 12-ի ցարական հրամանագիրը, որով պետությունը բռնագրավում էր հայոց եկեղեցապատկան գույքն ու կալվածները: Բացի Արևելյան Հայաստանից, հայ ժողովուրդը հրամանագրի կիրառման դեմ պայքարեց նաև Կովկասի հայաշատ բնակավայրերում՝ Թիֆլիսում, Գանձակում, Բաքվում, Նոր Նախիջևանում և այլուր: Կովկասում տալով հակացարական մեծ ու փոքր ելույթներ՝ հայ ժողովուրդը փորձեց վիժեցնել ցարական կառավարության հայաձուլման և հայակործան ծրագրերը:

Բանալի բառեր. Կովկաս, կառավարություն, խնդրագիր, եկեղեցի, ցուցարար, քաղաքականություն, կալվածքներ, փոխարքա, հակացարական պայքար, Դաշանակցություն, Կովկասի փոխարքա

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ցարական իշխանությունների՝ հայերի հանդեպ վարվող գաղութային քաղաքականությունը հասել էր իր բարձրակետին: Ամեն գնով հայ ժողովրդին ճնշելու և ձուլելու այդ քաղաքականությունն առավել ցայտուն կերպով դրսևորվեց, երբ 1896թ. Կովկասի կառավարչապետ նշանակվեց Գոլիցինը: Ահա թե ինչպես է նրան բնորոշում Լեոն. <<…հայերի վերաբերմամբ գոլիցինյան ատելությունը կատարելապես մի հիվանդագին երևույթ էր կազմում: Իր առաջին իսկ քայլերից Գոլիցինը հայտարարեց, թե պիտի արմատախիլ անի Հայոց հարցը: Հետո, հետզհետե, բանը հասավ այն աստիճանին, որ Գոլիցինն անհանդուրժելի էր համարում, որ հայ ժողովուրդ է ապրում աշխարհիս վրա: Ոչնչացնե՛լ ամենքին և միայն մի հատ թողնել մարդաբանական թանգարանի համար՝ սա՛ էր ցարական կոպիտ ու ինքնահավան սատրապի իդեալը>>[20]: Մեծ ի մասամբ նույն այդ Գոլիցինը նախաձեռնեց և կառավարության հաստատմանը ներկայացրեց հայոց եկեղեցապատկան գույքերի ու դրամագլուխների բռնագրավման նախագիծը, որն էլ հրամանագրի տեսքով հաստատվեց Նիկոլայ 2-րդի կողմից 1903թ. հունիսի 12-ին: 1903 թվականի հունիսի 12-ի հայոց եկեղեցու գույքի և կալվածքների բռնագրավման մասին մինիստրների կոմիտեի հաստատած և ցարի կողմից ստորագրված բարձրագույն հրամանն ի կատար ածելու համար կովկասյան իշխանությունները սկսեցին նախապատրաստություններ տեսնել: 1903 թ. հունիսի 30-ին Ներքին գործերի նախարար Պլևեն հաստատեց Հայ առաքելական եկեղեցու կալվածները և դրամագլուխները պատկան նախարարություններին հանձնելու կարգի մասին կանոնները, որը համաձայնեցված էր երկրագործության և պետական գույքի նախարարների հետ[21]: Հիշյալ կանոնները բաղկացած էին 10 կետերից և մեկ ծանոթությունից: Եթե Եվրոպական Ռուսաստանի սահմաններում Հայոց եկեղեցուց վերցված գույքը Ներքին գործոց

[20] Տե՛ս ***Լեո***, <<Անցյալից>>, Երևան 2009 թ., էջ 138

[21] Տե՛ս ***<< Մշակ>>,*** 1903, N 195

նախարարությունից պետք է հանձնվեր Երկրագործության և պետական գույքի նախարարություններին, նահանգապետերին ու քաղաքագլուխներին, ապա՝ կովկասյան երկրամասերի թեմերում՝ կառավարչապետի վարչությունից՝ Կովկասում երկրագործության և պետական գույքի նախարարությունների լիազորներին ու տեղական նահանգապետերին ու կառավարիչներին[22]: Կանոնների մնացած կետերով սահմանվում էր Հայոց եկեղեցու գույքի և կալվածքների բռնագրավման կոնկրետ գործողություններն իրականացնելու համար պատասխանատու աստիճանավորների և եկեղեցական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, կատարելիք գործողությունները և կատարվածի արդյունքում կուտակված գույքի և միջոցների հանձնման ու բաշխման կարգը: Հաշվի առնելով այն փաստը, որ Էջմիածնի վանքի և Էջմիածնում գտնվող մյուս հոգևոր հաստատությունների գույքի և դրամագլուխների ընդունման ընթացքում կարող են խնդիրներ առաջանալ, գույքի և դրամագլուխների ընդունման պարտականությունը դրվում էր Երևանի փոխնահանգապետ Նակաշիձեի վրա: Ահա այդ մասին վկայող փաստաթուղթը. <<Նկատի ունենալով այդ գույքերի նշանակալիությունն ու բարձրարժէքութիւնը, դրանց կազմի բարդութիւնը և այն սերտ յարաբերութիւնները, որ ունի այդ գույքի կառավարման գործում Հայոց եկեղեցու առաջնորդը, սոյն գույքերն ընդունելու կատարողական գործողութիւնները անկասկած կյարուցեն որոշ բացառիկ իւրայատկութիւններ՝ համեմատած յիշեալ օրէնքում մատնանշուող ուրիշ գույքերի ընդունման հետ. ընդ որում ընդունողը շփուելու է իր՝ Պարիարք-կաթողիկոսի, Էջմիածնի սինոդի և հայոց եկեղեցու միւս բարձր հիերարխների հետ: Էջմիածնի գույքերն ու դրամագլուխներն ընդունողի խնդիրների այս առանձնայատկութիւնների բերումով անհրաժեշտ է, որ վերջինս ծառայողական բարձր դիրք ունենայ և աչքի ընկնի նրբանկատութեամբ: ՈՒստի անհրաժեշտ համարելով նշուած յանձնարարութիւնը դնել

Երևանի փոխնահանգապետ, Իսկական պետական խորհրդական, իշխան Նակաշիձէի վրայ, որին արուել է համապատասխան առաջարկութիւն>>[23]:

1903 թ. հունիսի 12-ին ցարի կողմից հաստատված բարձրագույն հրամանն առաջին անգամ լույս տեսավ <<Правительственний Вестник>> թերթի մեջ հուլիսի կեսին, ապա այն տպեց <<Кавказь>> պաշտոնական լրագիրը: Հիմնահարցին անդրադարձած հետազոտող Հայկ Ամեմյանը հրամանագրի ուշ հրատարակումը պայմանավորում է կառավարության գաղտնապահության հետ[24], սակայն մեր կարծիքով նա այնքան էլ ճիշտ չէ: Նախ՝ Ամեմյանը իր մեկնաբանության մեջ չի քննարկում գաղտնապահության պատճառը: Արդյոք՞ կառավարությունը վախենում էր հրատարակումից հետո ակնկալվող ժողովրդական հուզումներից: Կառավարչապետ Գոլիցինի ձեռնարկած գործողությունները չեն խոսում այդ մասին: Հակառակ դեպքում հայ ժողովրդից և Հայոց եկեղեցուց ակնկալվող դժգոհության չափն ստուգելու համար գոնե այդ մասին մինչ հրամանագրի հրատարակումը կտեղեկացվեր հայոց հայրապետին: Պատահական չէ, որ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը նույնպես հրամանագրի մասին տեղեկացավ նույն թերթերից: Հրամանագրի կիրառման պատասխանատվությունը Կովկասում դրված էր Գոլիցինի վրա, որը Թիֆլիս վերադարձավ միայն հուլիսի կեսերին և այդ ժամանակ էլ

[22] Տե՛ս ՀԱԱ., Ֆ. 94, ց. 9, գ. 58, թ. 1-4, տպագիր, ռուսերենից թարգմանություն
[23] Տե՛ս ՀԱԱ., Ֆ. 94, ց. 9, գ. 58, թ. 6-7
[24] Տե՛ս ***Հ.Ամեմյան***, <<Հայոց Հայրիկ (1820-1907), Պուենոս-Այրես 1957 թ. էջ 760

հրատարակվեց հրամանագիրը: Կովկասի հայաբնակ բոլոր վայրերի զինվորական և ոստիկանական իշխանությունները Թիֆլիսից ստացան շտապ և կտրուկ շրջաբերականներ, որոնցով կարգադրվում էր պահանջել եկեղեցական կալվածներն ու դրամագլուխները, թույլ չտալ բողոքել, հսկել, որ նյութական արժեքները չպահվեն: Հայերի դիմադրության դեպքում կարող էր զորք բերվել: Բանկերը հրաման ստացան արգելքի տակ առնել հայոց ազգապատկան գումարները, Էջմիածնի Սինոդին կարգադրվեց հանձնել դրամներն ու հաշիվները, թեմական առաջնորդներից պահանջեցին դրամագլուխների և գույքի ցուցակները, երեսփոխաներին հրահանգեցին ծախսեր չանել[25]: Հրամանագրի չեղարկման համար պայքարի առաջացման և ծավալման հարցում ուսումնասիրողների մոտ կան որոշ տարակարծություններ: Մասնավորապես նրանցից Վ. Երկանյանը գտնում է, որ պայքարը կրում էր տարերային բնույթ. <<...Առաջին միտքը, որ համակեց հայ հասարակության տարբեր խավերին, չենթարկվելու, դիմադրելու միասնական ձգտումն էր: Ամենուրեք տարերային հավաքներ ու ժողովներ էին կազմակերպվում, որոշում էին պայքարի ելնել, հանրագրեր էին կազմում և ուղարկում Էջմիածին ու թեմական առաջնորդներին՝ պահանջելով չենթարկվել ցարի որոշմանը, բողոքել, դիմադրել.>>[26]: Մինչդեռ Վարանդեանը հակացարական ելույթների սկիզբն ու ծավալումը կապում է հիմնականում ՀՅԴ-ի հետ. <<... Կովկասեան կառավարչապետը ցնծութեամբ դիմաւորեց ցարական ուկազը և տւաւ իր հրամանները նահանգապետներուն ու գաւառապետներուն: Այնքան դիւրին կը թւէր հայատեաց իշխանաւորին իր գալիք յաղթանակը: Նա խոստացեր էր ցարին, Պլէվէին՝ երկու շաբաթւան մեջ ի կատար ածել թալանի օրէնքը: Ո՞վ էր, որ պիտի յանդգնէր ըմբոստանալ ռուս վեհապետի կամքին դէմ... Կաթողիկոսը <<զառամեալ խամաճիկ>> մըն էր Գոլիցիններու աչքին, իսկ ռուսահայ ժողովուրդը՝ անխօս կատարող բռնապետական բոլոր հրամաններուն: Մոռցեր էին մէկ բան միայն: Հաշւի չէին առեր Հ. Յ. Դաշնակցութեան գոյութիւնը: Երբ հրատարակւեցաւ Յունիս 12ի <<օրէնքը>> կովկասեան թերթերուն մէջ, ասես ռումբ մըն է, որ պայթեցաւ Անդրկովկասի հայ գիտակից շրջաններում, ուր ազդեցիկ դիրք ունէին մեր (նկատի ունի ՀՅԴ (Մ.Դ.)) մարմինները, փորձւած ղեկավարներով: Անոնք անմիջապես գործի սկսան: Ժողովներ, խորհրդակցութիւններ, բուռն, եռուն վիճաբանութիւններ: Ամենք կը գտնէին, որ ատեն է բողոքելու, որ լեցւեր է հայոց համբերութեան բաժակը: Շտապ-շտապ կազմակերպւեցաւ, մերիններու նախաձեռնութեամբ (նկատի ունի դաշնակցականների (Մ.Դ.)) միջկուսակցային յատուկ մարմին, որ պիտի հանդիսանար պրոպագանդի ու շարժման բերան: Անւանեցին այդ մարմինը <<Հայկական Ինքնապաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէ>>: Անոր մեջ մտան այլ և այլ տարրեր՝ վարելու համար գործ մը, որ համազգային բնոյթ ունէր: Մտան նաեւ սոց.-դեմոկրատ հայազգի ընկերվարականները>>[27]: Հիմնահարցի ուսումնասիրողներից մեկ ուրիշը՝ Աճեմյանը, ընդունելով հանդերձ ՀՅԴ կարևոր դերակատարումը հակացարական շարժման կազմակերպման հարցում, գրում է. <<...Հ.Յ.Դաշնակցութիւնը կը ստանձնէր ժողովրդական ինքնապաշտպանութեան ղեկավարութիւնը: Դաշնակցութեան կուսակցական մարմին-

[25] Նույն տեղում, էջ 761

[26] Տե՛ս ***Վ. Երկանյան***, <<Պաքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում>>, Երևան 1970 թ., էջ 241-242

[27] Տե՛ս ***Մ.Վարանդեան***, <<Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն>>, Երևան 1992 թ., էջ274-275

ներու նախաձեռնութեամբ կազմուեցաւ <<Հայկական Ինքնապաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէ>> անունով գաղտնի մարմին մը, որ Կովկասի հայաբնակ քաղաքներու, գաւառական կեդրոններու և միչև անգամ գիւղերու մէջ ունեցաւ իւր մասնաճիւղերը...>>, բնավ չի թերագնահատում Հայոց հայրապետի և ժողովրդի դերը. <<Երկու ուժ միայն մնացին անտես ու մոռացուած, -Հայ ժողովուրդը, որ տերն է եկեղեցական հարստութեան և ժողովրդից ընտրւած կաթողիկոսը, որ մեկի ներկայացուցիչն է և միւսի աւանդապահ վերահսկողը>>[28]:

Հակացարական պայքարի մեջ ՀՅԴ դերակատարությանն անդրադառնալիս թեմայի մեկ այլ ուսումնասիրող Ա. Ներսիսյանը ևս համակարծիք է Վարանդյանի տեսակետին: Նա գրում է.<<…Ահա այս իրավիճակում կրկին ասպարեզ նետուեց Հ.Յ.Դաշնակցութիւնը՝գնալով երկրորդ, այս անգամ ընդդէմ ցարական Ռուսաստանի պայքարի ճակատի բացմանը: Մ.Վարանդեանի արտահայտութեամբ ցարական իշխանաւորները(յատկապես Գոլիցինը և ներքին գործոց նախարար Պլևեն) <<Մոռցեր էին մէկ բան միայն: Հաշուի չէին առեր Հ.Յ.Դաշնակցութեան գոյութիւնը>>[29]:

Այսպիսով, թեև ինչպես տեսնում ենք, որ ուսումնասիրողները հակացարական շարժման ղեկավարների և դերակատարների ճշգրտման հարցում համակարծիք չեն: Մեր կարծիքով հայ ժողովուրդը իր բոլոր խավերով՝ հոգևորական թե շինական, կուսակցական թե մտավորական, ռամիկ թե մեծահարուստ, ինչպես նաև գաղթօջախների հայությունը միավորված էր հրամանագրի չեղարկման համար մղվող պայքարում:

Թե ինչ ընթացք ստացան իրադարձությունները հրամանագրի հրապարակմանը հաջորդող շաբաթներին, ցույց են տալիս Կովկասի հայաշատ բնակավայրերում տեղի ունեցած հակացարական ելույթները: <<...Կաթողիկոսը այդ օրերին շրջագայում էր Երևանի թեմի եկեղեցիները: Շատերը ենթադրում էին (նաև Գոլիցինը), որ նա ցանկացել է դրանով ժամանակ շահել և ծանոթանալ ժողովրդի տրամադրությանը>>[30], -գրում է Երկանյանը: Չնայած այն հանգամանքին, որ Խրիմյանը հաճախ էր շրջագայում և այս շրջագայությունը նրանցից մեկը կարող էր լինել, բայց այս ենթադրությունը թերևս տեղին է, քանզի կաթողիկոսը Թիֆլիսում էր և բնական է, որ նրա առաջին մտահոգության առարկան եկեղեցապատկան դրամագլուխների և կալվածների պահպանման խնդիրն էր: Հակացարական շարժման առաջին ազդանշանը տվեց Թիֆլիսը: Հ.Աճեմյանը գրում է. <<Այս հրատապ օրերուն (1903 թ. Յուլիս) Հայոց Հայրիկը կը հասնէր Թիֆլիս: Տասնեակ հազարաւոր Հայ ժողովուրդ կայարանը խռնուած Կաթողիկոսի ժամանման կը սպասէր: Ոստիկանութիւնը խիստ կերպով կը հսկէր, որ ոևէ միջադէպ կամ ցոյց տեղի չունենար: Գնացքը կանգնելուն պէս ամբոխի <<Կեցցե՛ Հայրիկ>>, <<Չատրագրես Հայրի՛կ>> աղաղակներն ու որոտալից ծափերը թնդացուցին Թիֆլիս քաղաքը: Կայարանէն մինչև Վանքի եկեղեցին (Առաջնորդարան) ժողովուրդը <<Կեցցե՛ Հայրիկ>> աղաղակներով հետևեցաւ Հայրիկի կառքին: Քանի մը ցուցարարներ փորձեցին կառքի ձիերն արձակել և կառքը քաշել, բայց Խրիմեանը զայ-

[28] Տե՛ս ***Հ.Ամեմյան***, <<Հայոց Հայրիկ(1820-1907)>>, էջ 760

[29] Տե՛ս ***Ա.Ներսիսեան***, <<Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն>>(1898-1908), հատոր Բ, Բեյրութ 2008 թ., էջ214-215

[30] Տե՛ս ***Վ.Երկանյան***, <<Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում>>, էջ 242

րացաւ և յանդիմանելով հեռացուց անզուսպները: Թիֆլիսի Հայութեան պատգամաւորները ներկայանալով

Հայրիկին կը պահանջեն չը յանձնել կալւածները>>[31]:

Շատ ավելի դրամատիկ ընթացք ստացավ Գանձակում(Ելիզավետոպոլ(Մ.Դ.)) տեղի ունեցած հակացարական ելույթը: Օգոստոսի 29-ին Գանձակի հայ ժողովուրդը, մոտ 10.000 հոգի, շարժվում է դեպի առաջնորդարան՝ ցանկանալով Բենիկ վարդապետին հայտնել, որ նա չհանձնի եկեղեցապատկան կալվածքները: Ոստիկանապետը իր պահնորդախմբով մոտենում է և խնդրում է ցրվել: Դրան ի պատասխան, ամբոխը քարեր է նետում և հետ մղելով ոստիկաններին շարունակում է իր ճանապարհը դեպի առաջնորդարան: Տեղ հասնելով ժողովուրդը պահանջում է Բենիկ վարդապետին դուրս գալ: Նա դուրս է գալիս՝ հայտնելով, որ չի հանձնի գույքերը հոժարակամ, ինչպես այդ մասին հրահանգ է ստացվել վեհափառ կաթողիկոսից: Իրավիճակն ավելի է լարում եկեղեցուն մոտեցած վաշտը, որից հետո արդեն տեղ է հասնում փոխնահանգապետը: Հայ ժողովրդի՝ցարական իշխանության հանդեպ ունեցած հակակրանքը պատկերավոր է ներկայացնում Ա.Ճեմյանը. <<…Փոխնահանգապետը, ռուսացած հրեայ Անդրէեւը, ցոյցին վայրը հասաւ և հրամայեց զորքին ամբոխը ցրել: Կատաղած ցուցարարները չը հեռացան, այլ ընդհակառակն բարձրացան աղաղակներ.-<<Չենք տայ, չենք յանձնի>> և ապա քարերու կարկուտը ամէն կողմէ թափուեցաւ հայատեաց Անդրէեւի վրա, որ սարսափի մատնուած հրամայեց զօրքին կրակել…>>[32]: <<…Հանկարծ բազմության միջից դուրս է գալիս մի երիտասարդ արհեստավոր և դիմելով փոխնահանգապետին ասում է.<<Մենք չենք կամենում մեր ազգային գույքը ձեզ տալ և չենք ուզում քեզ պես փոխել մեր դավանությունը, աղտո՛տ>>: Սատրապը(Անդրեևը (Մ.Դ.)) իսկույն հանում է ատրճանակը և տեղն ու տեղը սպանում երիտասարդին: Ապա հրամայում է կրակ տեղալ: Գնդակահարությունը տևում է կես ժամ>>[33]: Գանձակի ելույթին զոհ գնացած և վիրավորված մարդկանց թիվը տարբեր աղբյուրներում տարբեր է: Եթե <<Դրօշակ>>-ում ասվում է, որ տեղում մահացել է 10 հոգի, վիրավորվել 70-ը, որոնցից 20-ը շուտով վախճանվեցին, ապա <<Մուրճ>>-ում հրատարակված պաշտոնական հաղորդագրության մեջ ասվում է. <<,, Правительственный Вьстникь"-ում տպագրված է հետևյալ կառավարչական հաղորդագրութիւնը…ամբոխը ցրուեց, թողնելով անկարգութիւնների տեղում 7 սպանուածներ և 27 վիրաւորուածներ>>[34]: Դ.Մուրադյանը, մեջբերելով <<Искра>> թերթից վերցրած տվյալները գրում է.<<1903թ. օգոստոսին Ելիզավետոպոլում(Գանձակ(Մ.Դ.)) տեղի ունեցավ առաջին զինված ընդհարումը, որի ընթացքում բնակչությունից եղան 80 սպանված և վիրավոր>>[35]: Ավելի քան հակասական են եկեղեցական աղբյուրների տվյալները: Ահա թէ ինչ է գրում Բենիկ վարդապետը կաթողիկոսին՝Գանձակի հայ ժողովրդի և եկեղեցու դեմ գործած դաժան հաշվեհարդարի ու կոտորածի մասին.<<…տեսաք զփոխնահանգապետն ի գլուխ զօրաց ելեալ գայր հասանէր ի վերայ ժողովրդեան ի թիկունս կու-

[31] Տե՛ս ***Հ.Ա՛ճեմյան***, նշվ.աշխ., էջ 765

[32] Տե՛ս ***Հ.Ա՛ճեմյան***, <<Հայոց հայրիկ>>, էջ 781

[33] Տե՛ս <<Դրօշակ>>, Օգոստոս 1903, N 7

[34] Տե՛ս <<Մուրճ>>1903, N 9

[35] Տե՛ս ***Դ.Մուրադյան***, <<Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին(1905-1907), էջ 50-51

սէ.ի միում վայրկեանի վերահաստատեալ խաղաղութիւնն վրդովեցաւ ահեղ ո-
րոտմամբ հրազէնաց, և դիաթաւալ անկան բազում յերիտասարդաց…>>[36]:

Գանձակի արյունահեղության լուրը ցնցեց Կովկասի հայությանը, որը չընկրկեց և տվեց հակացարական պայքարի խոշոր ելույթներ թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում: Այդ ելույթներից առաջինը տեղի ունեցավ Թիֆլիսում, որտեղ Գանձակի զոհերի համար հոգեհանգիստ տրվեց օգոստոսի 31-ին<<…ժամի 12[30]-ին տեղի ունեցավ հոգեհանգիստ, որին ներկա էին մօտ 2000 անձինք, որոնք դրանից առաջ եկեղեցում ժամերգութիւն էին լսում: Հոգեհանգստի վերջանալուց յետոյ՝ամբոխի մէջ սկսեցին ցրել պրոկլամացիաներ, և միևնույն ժամանակ ամբոխը յարձակուելով գաւթի մէջ գտնուող ոստիկան զինուորների վրայ՝սկսեց ծեծել նրանց…>>[37]:

<<Մշակ>>-ում Թիֆլիսի իրադարձությունները ներկայացվում են միջնորդավորված ձևով՝ <<„ Правительственный Вьстникъ"-ում տպագրված է հետևյալ հաղորդագրությունը <<…Տեր-Արարատեան քահանան նզովեց եկեղեցական կալվածների առումը: Ամբոխը քարեր նետեց ոստիկանության վրա, սկսվեց բախում.ամբոխից կար 1 սպանված, մի շարք վիրավորներ, ոստիկանությունից 1 սպանված, մնացածը թեթև վիրավոր>>[38]: Բախումից հետո ձերբակալվեց Տեր-Արարատեան քահանան 3 ուրիշ հայերի հետ: Երբ ամբոխը ցրվեց և բակը դատարկվեց, եկեղեցու դուռը կողպեցին և պահապաններ կանգնեցրին: Դեպքից հետո Թիֆլիսի փողոցներում ձիով շրջում էին կազակների խմբեր և բազմաթիվ ոստիկաններ: Հաջորդ օրը(սեպտեմբերի 1-ին (Մ.Դ.)) իշխանության ներկայացուցիչները եկան արձանագրելու Ներսիսյան դպրոցի գույքը: Նշանակված ժամին դպրոցի հոգաբարձուներից ոչ ոք չեկավ և հանձնաժողովը նրանց բացակայությամբ կազմեց արձանագրությունը[39]:

Հարկ ենք համարում նշել, որ օգոստոսի 31-ին Թիֆլիսի փոխնահանգապետի գրասենյակի վարիչը գրությամբ նախապես դիմել էր Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահին՝ դպրոցի գույքը հատուկ հանձնաժողովին հանձնելու վերաբերյալ անհրաժեշտ կարգադրություն անելու մասին: Այդ հանձնաժողովի մեջ էին մտնում իսկական պետական խորհրդական Վեյդենբաումը, արքունական խորհրդական Կոլոբովը, Երկրագործության և Պետական գույքերի նախարարության ներկայացուցիչներ Կուպչենկոն, Նևսկին և այլոք[40]: Հայկական կողմի չներկայանալու փաստը ցույց է տալիս, որ հայերը դեմ էին իշխանության հիշյալ գործելակերպին և այդպիսով արտահայտում էին իրենց անհնազանդությունը, ինչն աննախադեպ էր և ավելի էր գրգռում իշխանություններին:

Կառավարչապետ Գոլիցինը կարգադրեց նահանգապետերին նախապատրաստվել սեպտեմբերի 1-ից գույքը ընդունելուն: Ցուցում տրվեց դիմադրության հանդիպելու դեպքում դիմել բռնի միջոցների: Կարգադրություն արվեց խստությամբ ստուգել երկաթուղային գնացքները՝զենքի և արգելված իրերի փոխադրումը կանխելու համար, ուժեղացվեց սահմանի պահպանությունը՝էջ-

[36] Տե՛ս ՀԱԱ, ֆ.56, ց.16, գ.349, թ.49, ձեռագիր, բնագիր
[37] Տե՛ս <<Մուրճ>>, 1903, N 9
[38] Տե՛ս <<Մշակ>>, 1903, N 197
[39] Տե՛ս <<Դրօշակ>> , 1903 N 7
[40] Տե՛ս ՀԱԱ, ֆ.56, ց.16, գ.333, թ.169, ռուսերեն ձեռագիր

միածնին օգնելու նպատակով արևմտահայերի մուտքը արգելելու համար[41], - գրում է Երկանյանը: Հայոց եկեղեցու գույքը և կալվածները բռնագրավելուն ուղղված ցարական իշխանությունների կոնկրետ գործողություններն ընդլայնեցին հակացարական ելույթների աշխարհագրությունը և գույքի ընդունման հանձնաժողովները դիմադրության հանդիպեցին գրեթե բոլոր հայաբնակ և հայաշատ քաղաքներում ու գյուղերում: Սեպտեմբերի 2-ին Բաքվի հայությունը կազմակերպված դիմադրություն ցույց տվեց իշխանություններին: Օգնության էին եկել նաև Բալախան թաղամասի հայերը, որոնք էլ շրջափակել էին եկեղեցին և հարակից փողոցները: Իշխանությունները զորքեր են բերում և արյան մեջ խեղդում դիմադրությունը: <<Դրօշակ>>-ում այդ մասին կարդում ենք.<< Ի վերջո զորքը պաշարում է եկեղեցին: Պաշարվածների մի մասին հաջողվում է պատուհաններով դուրս գալ և ազատվել, սակայն մոտ 100 հոգի ձերբակալվում և ուղարկվում է բանտ: Հայերից սպանվում են 11 և վիրավորվում 45 հոգի: Հաջորդ օրը Բաքվում հայտարարվում է ռազմական դրություն>>[42]: Բաքվում տեղի ունեցած արյունահեղության ժամանակ հայկական կողմի տված զոհերի մասին ռուսական մամուլը լռում է.<<…Առգրավվեց և հայտնաբերվեց մեծ քանակությամբ զենք, նույնիսկ բուն տաճարում թողնվել էին ատրճանակներ, փամփուշտներ և կրակված պարկուճներ: Զորքերից եղան թեթև վնասվածք ստացած 1 սպա և 4 շարքային: Ցուցաբարների կողմից զոհերը առայժմ չեն ճշտվել>>[43]: Հայկական կողմի ունեցած մարդկային կորուստների մասին լռելը մեր կարծիքով պայմանավորված էր ոչ թե ճշգրտելու դժվարությամբ, այլ դա ուներ ճշմարտությունը ժողովրդից թաքցնելու նպատակ, քանզի զոհերի մասին տեղեկություն հրապարակելը կարող էր ըմբոստության նոր ալիք բարձրացնել:

Դիմադրության այս օրերին հատկապես կարևոր էր կաթողիկոս Խրիմյանի բռնած դիրքը, որն առավել ցայտուն կերպով երևաց սեպտեմբերի 5-ին, երբ Էջմիածին եկավ կառավարական ընդունող հանձնաժողովը Երևանի փոխնահանգապետ Նակաշիձեի գլխավորությամբ: Ահա Նակաշիձեի պահանջին կաթողիկոսի համարձակ պատասխանը վկայող փաստաթուղթը.<<Ես, Ամենայն Հայոց Կաթողիկոսս, որ հրամայեր եմ իմ ստորադրեալ հոգևորականութեան և խրատեր ժողովրդին որ ոչ մի մասնակցութիւն չունենան այս խնդրում, և ինչպէս մենք որևէ մասնակցութիւն չունեցանք Ձեզ հետ, ինչպէս կարող եմ ինքս մասնակցել Ձեր առաջարկութեան և իմ ձեռքովս իմ գանձարանը յանձնել, ինչ պիտի ասէ ինձ իմ ժողովուրդ յանձնելու դէպքում, չէ որ նա պիտի ասէ, մեզ հրամայեց չը մասնակցել, իսկ ինքը գանձարանը յանձնեց.այդ երբէք չի կարող լինել, պրօկուրոր շատ լաւ գիտէ Մեր գանձարանի հաշիւներ, նոյնիսկ 5-10 կոպէկներն էլ: Ուստի իմ վերջնական խօսքս է, որ երբեք իմ կողմից գանձարան չի յանձնուի.վարուեցէք ինչպէս Ձեր ցանկութիւնն է և օրէնքի տրամադրութեան, եթե հաճելի է Ձեզ, կարող եք կնքել. Այս իմ վերջին խօսքս>>[44]:

Հայոց եկեղեցապատկան կալվածներն ու դրամագլուխներն ընդունող հանձնաժողովների և ոստիկանության հետ բախումներ էին տեղի ունենում ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասի և Հյուսային Կովկասի

---

[41] Տե՛ս ***Վ. Երկանյան***, <<Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում>>, էջ 248

[42] Տե՛ս <<Դրօշակ>>, 1903, N 7

[43] Տե՛ս <<Новое обозрьніе>>, 1903 N 6499

[44] Տե՛ս ՀԱԱ, ֆ.56, ց.16, գ.333, թ.81-89, ձեռագիր, բնագիր

բազմաթիվ հայկական և հայաշատ քաղաքներում ու գյուղերում: Նոր Նախիջևանում իշխանություններին դիմադրելու փորձի մասին Ա.Ճեմյանը գրում է.<< Նոր Նախիջևանում ոստիկանությունը կիրառեց հրդեհաշեջ զորագունդը և կազակների օգնությամբ հազիվ ցրեց ցուցարարներին: Պայքարը գլխավորում էր Մուշէ վարդապետը>>[45]: Բաթումում սեպտեմբերի 8-ին նույնպես կատարվեց հոգեհանգիստ Գանձակի զոհերի համար: Ներկա էր մոտ 5000 մարդ, բայց ոստիկանության հետ բախում տեղի չունեցավ: Սուխումի մոտ գտնվող Մծարա գյուղում քահանան և ժողովուրդը հրաժարվում են եկեղեցին բացել և գույքը հանձնել, սակայն կացնով կոտրվում է եկեղեցու դուռը և հանձնաժողովը, ներս մտնելով, սկսում է արձանագրել գույքը: Ախալքալաքում Մուրադեան եպիսկոպոսի հոգեհանգստից հետո, շրջակա գյուղերի բնակիչները ներկայացնում են իրենց բողոքագրերը: Եկեղեցու բակում հավաքվում է մոտ 10.000 ստորագրություն, ընտրվում են 2 պատվիրակներ բողոքագրերը Էջմիածին տանելու համար: Ախալցխայում նույնպես պատարագ էր մատուցվել և նզովք կարդացվել կառավարության հասցեին,[46] -կարդում ենք <<Դրօշակ>>-ում: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ արդեն 1903 թվականի աշնանը ցարական իշխանությունները ցանկանում էին թաթարներին հրահրել հայերի դեմ: Այդ քաղաքականությունը հետագայում տվեց իր պտուղները և իշխանությունները սանձազերծեցին հայ-թաթարական ընդհարումներ: Նմանատիպ գործելաոճը ընդհանրապես բնորոշ է բոլոր կայսրություններին, որոնք առաջնորդվում են հռոմեական ժամանակներից եկող <<բաժանի'ր, որ տիրե'ս>> կարգախոսով: <<Դրօշակ>>-ը գրում է. <<…Շուշում և Նուխում գաւառապետները փորձեր են անում թուրքերին (թաթարներ(Մ.Դ.)) գրգռել հայերի դէմ: Շուշու գավառապետը հավաքել է թուրքերին և հետևեալ ակնարկներն արել.„ Լսել եմ, որ դուք զինւել էք և պատրաստւել էք մեզ պաշտպանելու ու հայերին կոտորելու: Անչափ շնորհակալ ենք, բայց առայժմ մենք զօրքի ուժով էլ կարող ենք պաշտպանւել": Թուրքերը պատասխանել են. <<Մենք ոչինչ չենք պատրաստում հայերի դէմ, նրանք մեր լաւ դրացիներն են>>: Նուխիում գաւառապետը հաւաքել է թուրքերին (թաթարներ(Մ.Դ.)) մզկիթում և հետևեալ ճառն է խօսել.<<Լսել եմ, որ դուք հայերի հետ ընկերանալու միտք ունէք, հայերը ձեզ խաբում են, նրանք ձեր թշնամիներն են, նրանք Տաճկաստանում (Օսմանյան Թուրքիա(Մ.Դ)) ջարդում են թուրքերին, դէմ են սուլթանին, դրա համար էլ ռուս կառավարութիւնը հիմա հալածում է նրանց>>…բայց թուրքերը լաւ են հասկացել, թէ բանը ինչումն է, որովհետև նրանց մզկիթների կալւածները նույնպէս գրաւել են յարքունիս 4-5 տարի սրանից առաջ>>[47]: Այն, որ ցարական իշխանությունները խուճապի մեջ էին հայտնվել և չէին կանխատեսել նման դիմադրություն ապացուցվում է այն փաստով, որ Ներքին Գործերի նախարար Պլևեն սեպտեմբեր 15-ի կարգադրությամբ Գանձակ, Շուշի և Նուխի քաղաքների համար սահմանեց հետևյալ պարտադիր կանոնները. Հոդված 1) Ժողովրդի համախմբումները և ժողովները փողոցներում, հրապարակներում, այգիներում, կայարաններում և հասարակական այլ տեղերում՝ խորհրդակցությունների կամ գործողությունների համար, որոնք հակառակ են հասարակական կարգին և խաղաղության, ինչպես նաև հետաքրքրվող հասարակության համախմբումները, արգելվում են:

[45] Տե'ս ***Հ. Ամեմյան***, <<Հայոց Հայրիկ>>, էջ 784

[46] Տե'ս <<Դրօշակ>>, 1903, N 8

[47] Նույն տեղում

Հոդված 2) Ժողովվածները պարտավոր են, ոստիկանության առաջին պահանջով, անհապաղ ցրվել : Հոդված 3) Ոստիկանության պահանջներին անխոս և անհապաղ չհնազանդվողները ենթարկվում են վարչական կարգով 500 ռուբլի տուգանքի կամ բանտարկության 3 ամիս ժամկետով: Այդպիսի պատիժներ տալու համար, համաձայն սաստկացրած(ուժեղացված(Մ.Դ.)) պաշտպանության դրության վերաբերյալ կանոնադրության 16-րդ հոդվածի 1 կետի, ես լիազորություն եմ տալիս Գանձակի նահանգապետին:

Հոդված 4)Այս պարտադիր կանոնները զորություն են ստանում հրատարակվելու օրից: Ստորագրել է սենատոր, գեներալ-աղյուտանտ Գոլիցին>>[48]:

Այնուհետև քաղաքների այդ շարքին ավելացվում է Կարսը և Ալեքսանդրապոլը.<<ՆԳ.նախարարի որոշմամբ Կովկասի քաղաքացիական մասին հայտնվում է, որ սեպտեմբեր 22-ից Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ քաղաքում հայտարարվել է հատուկ պաշտպանության դրություն>>[49]:

Այսպիսով, 1903թ. Կովկասի հայաբնակ և հայաշատ բնակավայրերում տեղի ունեցած հակացարական ելույթների թեման վերլուծելով կարող ենք որոշ եզրակացություններ կատարել.

1. Այդ ելույթները հայ ժողովրդի ցույց տված առաջին դիմադրության օրինակներն էին սկսած Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակից(1828թ.):

2. Դիմադրության այդ օրինակներով հայ ժողովուրդը ապացուցեց, որ դեռ կարող է պայքարել իր շահերը պաշտպանելու համար և այդ հարցում միակամ է:

3. Ցարական կառավարությունն իր գործողություններով ապացուցեց, որ իր ծրագրերն իրագործելու համար ոչնչի առջև չի կանգնի, որի արդյունքում հայ ժողովուրդը տվեց բազում զոհեր, վիրավորներ, բանտարկվածներ ու աքսորվածներ:

4. Եկեղեցապատկան կալվածների և գույքի բռնագրավումը ցարական կառավարությունը դիտում էր ոչ որպես նպատակ, այլ՝ որպես միջոց, որի օգնությամբ կարելի կլիներ հասնել մի ծրագրի իրագործման, որի էությունը հետևյալն էր.

1) Հարվածել Հայոց եկեղեցուն, որը ներկայանում է իբրև մեծ և միացյալ Հայատանի գլխավոր քարոզիչ:

2) Ոչնչացնել այն բոլոր հիմնարկությունները(դպրոց, թատրոն, մամուլ, գրականություն), որոնք ժողովրդի մեջ բորբոքում են անկախություն ձեռք բերելու երազանքները:

3) Թույլ չտալ հայերին ուղղափառների չափ իրավունքներ ունենալ արդյունաբերության և առևտրի մեջ, արգելել հայերին բարձր պաշտոն զբաղեցնել:

4) Նվազեցնել հայերի թիվը Կովկասում նրանց աքսորելու միջոցով և ոչ մի կերպ թույլ չտալ Արևմտյան Հայաստանից եկած գաղթականությանը բնակություն հաստատել հայաշատ բնակավայրերում:

5) Հայաշատ բնակավայրերում փոխել ժողովրդագրական պատկերը՝ այնտեղ բնակեցնելով մահմեդականների և ռուսների՝ վերջիններին տալով արտո-

[48] Տե՛ս <<Մշակ>>, 1903, N 203

[49] Տե՛ս <<Новое обозрьніе>>, 1903, N 6517, նույնը կա նաև <<Մուրճ>>, 1903 N 9-ում

նություններ: Ընդ որում մահմեդականներին և ռուսներին պատրաստում էին նվիրել հենց Հայոց եկեղեցուց խլած հողերը:

Мкртич Даниелян - *Антицарские выступлени 1903 года на Кавказе*. - В конце XIX и в начале XX века колониалная политика царских властей по отношению к армянам достигла своей вершины. Ею стал царский указ от 12 июня 1903 года, по которому государство изьяло все церкожные владения и имушество.Против применения этого указа армянский народ боролся не только в Восточной Армении, но и на Кавказе: в Тифлисе, Гандзаке, Баку, Новой Нахиджежани и в других местах.С помошью крупных и небольших выступлений на Кавказе армянский народ попытался сорвать губительные для армян планы царского правительства.

Mkrtich Danielyan - *Antitsarist speeches in the Armenian residences of the Caucasus in 1903*.-At the end of the 19th century and the beginning of the 20th century the colonial policy to Armenians by the tsarist authorities reached its peak.The culmination pf that polici became the proclomation according to which the State was going to confiscate the possessions and estates of the church.Besides in Eastern Armenia Armenians struggled against that proclamation in the Armenian residences of the Caucasus.in Tbilisi, Gandzak, Baku, New Nakhijevan and elsewhere.By making speeches in the Caucasus the Armenian people tried to make the plans of the tsarist authorities fait to melt and destroy Armenians.

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՆՉԵՎ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՋԱՎԱՀԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ

Հոդվածում հեղինակը արխիվային և այլ փաստական հարուստ նյութերի վրա անդրադարձել է հայ քաղաքական մտքի ուղղվածությունների Հայաստանի տարածքների վերաբերյալ,ովքեր ունեին տարաբնույթ մոտեցումներ տարածքային խնդիրների լուծման հարցում:

Հայկական պատվիրակությունները շարունակում էին պնդել իրենց պահանջները դաշնակիցներից,մի բան,որը դրական ազդեցություն չէր կարող ունենալ:Որոշ ՀՅԴ կուսակցական գործիչներ հանդես էին գալիս ավելի նեղ սահմաններով Հայաստանի պահանջին:Ցավոք Հայ քաղաքական վերնախավը միասնական չէր հանդես գալիս այս հարցի շուրջ և հաշվի չէր առնում իրականությունը:

Բանալի բառեր. բանակցություններ, պայմանագիր, տարածք, պատվիրակություն, քաղաքականություն, դաշնակիցներ, սահման, կառավարություն:

Հայտնի է, որ Բաթումի պայմանագրով Հայաստանի Հանրապետության սահմանները որոշակի էին միայն Թուրքիայի հետ, իսկ Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմանը հստակ չէր: Հենց այդ պատճառով էլ սկսվեցին տարածքային վեճերն այս երեք հանրապետությունների միջև, ավելի ճիշտ՝ Վրաստանն ու Ադրբեջանը սկսեցին տարածքային հավակնություններ հանդես բերել հայկական տարածքների նկատմամբ:

1918 թվականի նոյեմբերի 1-ին «Միություն և առաջադիմություն» («Իթթիհադ վե թերաքքի») կուսակցությունն ինքնալուծարվեց՝ դադարեցնելով իր քաղաքական գոյությունը: Նրա ղեկավարները փախան արտասահման: Դրանով Հայաստանի նորաստեղծ հանրապետության համար միաժամանակ վերացավ թուրքական վտանգը, թեև միշտ պայթունավտանգ մնաց ներքին թաթարական տարրը, որը գաղտնի կապի մեջ գտնվելով Ադրբեջանի հետ՝ ամեն րոպե պատրաստ էր ապստամբելու և ներսից քայքայելու Հայաստանը: Այս ամենին ավելանում էր նաև Վրաստանի, մեղմ ասած, անբարյացակամ վերաբերմունքը, նրա՝ ոչ պակաս դավադիր էությունը, որն սկսվելով Բաթումից շարունակվեց մինչև 1920թ.:

Հայաստանի Հանրապետության ղեկավար շրջանները Թուրքիայի անվերապահ անձնատվությունից սկսած,մինչև 1920թ. մայիսը տարածքային հիմնախնդիրների լուծումը գրեթե ամբողջությամբ կապում էին Դաշնակիցների հետ: Բացի այդ, 1920 թ. մայիսից, երբ իշխանության եկավ ՀՅԴ Բյուրոն և ուրվագծվում էր քեմալաբոլշևիկյան համագործակցությունը՝ ի հակակշիռ հայկական զույգ պատվիրակությունների նախագծերի,ձևավորվում է առավել նեղ սահմաններով Հայաստան պահանջելու տարբերակը: Հիշենք նաև, որ դեռևս 1917 թվականի հոկտեմբերի վերջերին դաշնակցության կովկասյան երկրային ժողովը հանդես էր եկել Անդրկովկասի պետական կառուցվածքի և վարչական բաժանման նոր նախագծով, ըստ որի Ռուսաստանը վերածվելու էր դաշնային

ռամկավար հանրապետության, որի կազմում ընդգրկվելու էր Անդրկովկասի դաշնությունը՝ բաղկացած հայկական, վրացական ու թաթարական կանտոններից (գավառներ.- Ջ. Թ.): Ըստ այդ նախագծի հայկական կանտոնն ընդգրկելու էր Երևանի նահանգը, Գանձակի նահանգի լեռնային՝ Հայկական մասը, Թիֆլիսի նահանգից Ախալքալաքի գավառը, Բորչալուի գավառի հայկական մասը, Կարսի մարզի Կարսի և Կաղզվանի գավառները[1]:

Հենց վերը նշված հանգամանքները նկատի ուներ ռուս հայտնի գեներալ Դենիկինը, երբ իր հուշերում գրում էր հետևյալը.«Երբ դեկտեմբերի վերջերին խորհրդարանում քննարկվում էին Փարիզ մեկնող պատվիրակությանը տրվող հանձնարարականները, կարծիքների նախկին միասնությունն այլևս չկար: Կառավարող Դաշնակցություն կուսակցության ձայները բաժանվել էին: Նրանց մի մասը պաշտպանում էր երկու Հայաստանների ավտոնոմ կամ ֆեդերատիվ հիմունքներով Ռուսաստանին միավորվելու գաղափարը, իսկ մյուսը՝ պահանջում էր «Մեծ ու անկախ Հայաստան» Կիլիկիայի հետ միասին և «ելք դեպի Սև ու Միջերկրականական ծովեր» (նկատի ունի Պողոս Նուբարի նախագիծը, որին կանդրադառնանք մի փոքր ուշ.- Ջ. Թ.): Վերջինն ըստ Դենիկինի «ամերիկյան նախագիծ էր» որը ծնվել էր որպես հաղթողների երևակայության արդյունք… և որի իրագործումը կհանգեցներ նոր տարաձքներում մուսուլմանական և հայ ազ•աբնակչության չորսին մեկ հարաբերակցությանը»[2]:

Փարիզի կոնֆերանսը բացվում է 1919թ. հունվարի 18-ին: Նրանում ներկայացված էին 17 պետություններ,այդ թվում Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան և ԱՄՆ-ը:

Հայկական հարցը Փարիզի վեհաժողովում ներկայացնում էին երկու պատվիրակություններ՝ Հայոց Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ:

Կարծում ենք, որ երկու պատվիրակությունների գոյության փաստն ինքնին քննադատելի էր, քանզի նպաստելու էր դաշնակիցների մոտ հայոց քաղաքական ձգտումների շուրջ եղած անմիասնականությունն ի ցույց դնելուն, որը չէր կարող նպաստավոր լինել Հայաստանի Հանրապետության համար:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր բոլոր քաղաքական ուժերի համախմբում նորաստեղծ պետության շուրջը: Մինչդեռ, հարցը դեռևս քննարկման առարկա չդարձած, Ազգային պատվիրակությունն առաջ էր քաշում խնդիրներ, որոնք չէին կարող բացասաբար չանդրադառնալ ՀՀ արտաքին քաղաքական վարկի վրա:

1919 թ. փետրվարի 12-ի Փարիզի վեհաժողովին ներկայացված հայկական պահանջների հոչակագրով Ավ. Ահարոնյանը և ՊողոսՆուբարը պահանաջում էին հետևյալ տարածքները.

«1. Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սվասի (Սեբաստիա), էրզրումի և Տրապիզոնի վիլայեթները՝ բացառությամբ Տիգրիսի վտակներից հարավ և Օրդու-Սվազ գծից արևմուտք ընկած շրջանների:

---

[1]Տե°ս «Հորիզոն» 191726 հոկտեմբերի, նույնը[a] ***Ավետիսյան Հ. Ա.***, Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, էջ 21:

[2]Տե՛ս ***Барсегов Ю. Г.***, указ.соч., с. 40-41.

2. Կիլիկյան չորս սանջակները՝ Մարաշը, Գոզանը (Սիս), Ջեբել-Բերեքեթը և Ադանան՝ Ալեքսանդրեթի նավահանգստով:

3. Հայկական Հանրապետությունը Կովկասում, ներառյալ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը (Լոռին և Ախալքալաքը), Ելիզավետպոլի նահանգի հարավարևմտյան մասը (Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը) և Կարսի մարզը, բացառյալ Հյուսիսային Արդահանը»[3]:

Վերոհիշյալ հռչակագրով, ուր հիմնավորվում էր նաև հայերի պատմական իրավունքն այդ տարածքներինկատմամբ, միաժամանակ առաջարկվում էր, որ Հայաստանն առնվազն քսան տարով դրվի որևէ խոշոր տերության ուղղակի ղեկավարության ներքո, «որ աջակցի Հայաստանին, փոխանցման շրջանին մը համար միայն: Յանձնակատար (mandataire) պետութեան ընտրութեան ատեն, պէտք է խորհրդակցել այժմ Փարիզի մէջ գումարուող Հայկական համագումարին հետ, որ կը ներկայացնիէ բովանդակ հայութիւնը»[4]:

Տարածքներից բացի վեհաժողովի առջև դրվում էին նաև հետևյալ պահանջները.

«1. ազատում թուրքական լուծէն,

2.ամբողջական Հայաստան մը, տրուած Ազգերու Դաշնակցութեան իշխանութեան տակ, ժամանակաւոր աջակցութեամբ յանձնառու պետութեան մը»[5]:

1919թ. փետրվարի 25-ին երկու պատվիրակությունների ղեկավարներն անձամբ ներկայացան Տասի խորհրդին, ուր ներկայացրին իրենց պահանջները:

Հայ քաղաքական ոչ բոլոր շրջանակներն էին իրատեսական համարում երկու պատվիրակությունների պահանջած սահմաններով Հայաստանը: Մասնավորապես ՀՅԴ Բյուրոյի անդամների մի մասը գտնում էր, որ հարկավոր է ավելի նեղ սահմաններով սահմանափակվել: Նրանցից կարելի է առանձնացնել Ռուբենին և Դրոյին:

Այս առումով բավական հետաքրքիր են Ռուբենի հետևյալ դատողությունները. **«Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը գնում էր աւելի պատուիրակութեանց յետեւից քան թէ առջեւից, ու ստիպուած էր նրանց առած այս կամ այն քայլը յետին թուով հաստատել եւ վաւերացնել՝ Դաշնակիցների եւ արտաքին աշխարհի առջեւ հակասութիւնները չցուցադրելու մեր ներքին կեանքի անհնարութեան**: Բայց ամենածանրակշիռ երեւոյթն այն էր, որ **Ազգային Պատուիրակութիւնը ունէր իր առանձին պահանջները, ցանկութիւններն ու քաղաքականութիւնը, որոնք ոչնչով էին կապուած Հայաստանի արտաքին գործերին՝ ո՛չ բարոյապես եւ ո՛չ իրաւապէս**: Այս հանգամանքը մեծապէս կը նպաստէր անկանոնութեանց եւ անպատասխանա–տուութեանց, որի առջեւն առնելու համար կար մի հիմնական միջոց՝ **գործերը բնականոն վիճակի մէջ դնելու համար չէզոքացնել եւ ոչնչացնել Ազգային Պատուիրակութիւնը եւ ունենալ Հայաստանի ներկայացուցչութիւն արտասահմանում, որ իր քայլերը նախօրոք չափէր եւ համաձայնեցնէր Արտաքին գործոց նախարարութեան հրահանգներին:** Այդ կտրուկ միջոցը քանիցս քննուել է Բիւրոյի եւ կառավարութեան նիստերին, բայց անհնար է եղել իրագործելը, **քանի որ Ազգային Պատուիրակութեան չէզոքացումը մեր ույժե-**

---

[3]Տե՛ս ***Հովհաննիսյան Ռ.***, Հայաստանի Հանրապետություն, հ. I, էջ 303:

[4]Տե՛ս ***Ահարոնեան Ա.***, Հայկական հարցը խաղաղութեան ժողովին առջեւ, էջ 9:

[5] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 19.

րից վեր էր եւ մեր իրաւունքներից դուրս: Այդ անկարողութեան առաջ կանգնելով, **մեր Պատուիրակութիւնն էլ իր քայլերը ստիպուած էր որոշ չափով համաձայնեցնել Պօղոս Փաշայի տրամադրութիւններին,որոնք համապատասխան չէին մեր ցանկութիւններին**(ընդգծումները մերն են – Ջ. Թ.)»[6]:

Այս երկարաշունչ հղմամբ ցանկանում ենք ապացուցել, որ ՀՅԴ Բյուրոն իրատեսական չի համարել և հիմնականում դեմ է եղել այն տարածքներով Հայաստանի պահանջին, որը դաշնակիցների առջև դնում էր ՊողոսՆուբարի պատվիրակությունը և, որ Ազգային պատվիրակության քաղաքականությունն ամենևին չէր համաձայնեցվում ՀՀ արտաքին քաղաքականությանը, որնէլ առաջացնում էր այդ պատվիրակությունը չեզոքացնելու,մեր կարծիքով, ծայրահեղ պահանջ:

Ստեղծված պայմաններում, Ռուբենի կարծիքով,հարցի լուծման երկրորդ միջոց կարող էր լինել Ազգային պատվիրակության տեսակետները ՀՀ պատվիրակության տեսակետներին մոտեցնելը՝ մեղմելով երկուսի միջև առկա հակասությունները և ստիպելով միասնական տեսակետով հանդես գալ արտաքին աշխարհում:

Այժմ համառոտ անդրադառնանք այն խնդրին, թե ինչպիսի մոտեցումներ ուներ Ավ. Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրակությունը Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի հարցի նկատմամբ, ինչպիսին դեպի ծով ելք ունենալու հարցն էր:

Փաստերը ցույց են տալիս, որ այս հարցը տարածքային ու սահմանային հարցերի թվում լուրջ քննարկումների նյութ է դարձել Անդրկովկասյան երեք հանրապետությունների պատվիրակությունների միջև ընթացած բանակցություններում նախ Լոնդոնում, ապա ապրիլի 13-ից Փարիզում և ապրիլի 21-ից Սան Ռեմոյում: Բանակցություններն ընթացել են Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնի առաջին քարտուղար Վանսետարտի (փաստաթղթում հիշատակվում է Վարզէնտադ և Վանզիդար ձևով, որը ճիշտ չէ.- Ջ. Թ.) անմիջական ղեկավարության ներքո[7]:

1. ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանի վկայությամբ, դեռևս Լոնդոնում ընթացած բանակցություններում կողմերին խորհուրդ է տրվել փոխադարձ համաձայնությամբ որոշել միմյանց միջև սահմանների հարցը: Ընդառաջելով այդ խորհրդին՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները բանակցությունների օրակարգում դնում են երկու հարց.

2. Երեք պետությունների միջև սահմանային վեճերի կարգավորում

3. Հայաստանին և Ադրբեջանին Բաթումից դեպի Սև ծով տնտեսական ելք տալու խնդիրը, եթե Գերագույն խորհրդի որոշմամբ Բաթումը հանձնվի Վրաստանին[8]:

1920 թվականի ապրիլի 13-ին Փարիզում վերսկսված բանակցությունների հենց առաջին օրը պարզ է դառնում, որ ի տարբերություն նշված օրակարգի առաջին հարցի նկատմամբ Հայաստանի Հանրապետության պատվիրակության կառուցողական մոտեցումների, հարևան վրացիներն ու թաթարներն անհիմն ու

---

[6]Տե՛ս ***Ռուբէն***, նշվ. աշխ., հ. է, էջ 238:

[7]ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 127:

[8] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 127:

անհարկի վիճաբանություններով անընդհատ փորձում էին ձգձգել բանակցությունները: Ի վերջո ապրիլի 16-ին կողմերը որոշում են, որ վեց շաբաթվա ընթացքում բանակցությունների միջոցով պետք է փորձեն սահմանային հարցերում համաձայնության գալ: Հակառակ դեպքում՝ պետք է դիմեին երեք անձից բաղկացած «արբիտրաժ»[9]:

Այնուհետև պատվիրակությունների քննարկման առարկա է դառնում օրակարգի երկրորդ հարցը՝ Բաթումի խնդիրը: Վանսետարտը հայտարարում է, որ Բաթումի հիմնահարցի վերաբերյալ դաշնակիցների Գերագույն խորհուրդն իր որոշումն ունի, սակայն երադասելի է, որ բանակցող կողմերը միմյանց հետ համաձայնության գան: Վրացական կողմը նշում է, որ իրենք պահանջելու են, որ «Բաթումն ու իր շրջանը կցվի Վրաստանին. թե հայերն ու թաթարները վրացոց այս պահանջները պաշտպանեն, նրանք պատրաստ են իրենց կողմից ապահովել երկու հարևանների տնտեսական ելք դեպի Սև ծովը Բաթումով՝ տալով դրա համար բոլոր անհրաժեշտ երաշխիքները»:

Հայակական կողմին երաշխիքների մասով վրացիների ձևակերպումն անորոշ է թվում և հայկական պատվիրակությունը վրացիներից գրավոր պահանջում է հետևյալը. «1. Բաթումը դարձնել անջատ… նավահանգիստ» 2. ՀՀ-ին «Բաթումում հատկացնել առանձին նավահանգիստ կամ ավելի ճիշտ քարափ 3… Ճորոխի ձախ ափը միացնել Հայաստանին, որպեսզի այդտեղից մեր (Հայաստանի.- Ջ. Թ.) երկաթուղագիծը անցնի 4. Ճորոխի գետաբերանից մինչև Բաթում վրացական հողի միջից … թույլ տալ անցկացնել մեր գիծը»[10]:

Վրացիները մերժում են այս պահանջները: Հայկական կողմն էլ իր հերթին հրաժարվում է «ճանաչել նրանց իրավունքը Բաթումի ու շրջանի վրա»: Վանսետարտը ափսոսանք է հայտնում կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերելու առիթով և նշում, որ «Հայաստանն իր երկաթուղային գիծն պետք է ունենա և՛ դեպի Բաթում, և՛ դեպի Աթէնա (այլ կերպ՝ Աթինե.- Ջ. Թ.) և Ռիզէ, և թե սա գերագույն խորհրդի անդառնալի վճիռն է»[11]:

Դրանից հետո Վանսետարտը կողմերին հրավիրում է բանակցությունները շարունակել Սան Ռեմոյում:

Կարծում ենք վերը նշված փաստերից դժվար չէ եզրակացնել, որ դաշնակիցների գերագույն խորհրդում Տրապիզոնից բացի քննարկվում էր, նաև Բաթումով Հայաստանին ծովային ելք տալու տարբերակը, որին առավել շատ հակված էր Ֆրանսիան:

1920 թվականի ապրիլի 21-ին, արդեն Սան Ռեմոյում վերսկսված բանակցություններում, հայկական կողմը կրկին ցուցաբերում է փոխզիջումային մոտեցում Բաթումով Հայաստանին դեպի Սև ծով ելք տրամադրելու հարցում, մի բան, որը կարծում ենք տվյալ պարագայում այնքան էլ արդարացված չէր:

Այսպես, Ա. Ահարոնյանի վկայությամբ հայկական կողմը պատրաստակամություն է հայտնել «հրաժարվել Ճորոխի ձախ ափին հողային պահանջից և բավականանալ միմիայն տնտեսական ելքով, պայմանով որ հողային Սուվերենիտետը Վրաստանին մնա, բայց երկաթուղային գիծն իր բոլոր շինություններով

[9]Նույն տեղում,Ա. 127-128:
[10]ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 128-129:
[11]ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 129:

դառնա Հայաստանի անձեռնմխելի սեփականությունը և երկրորդ, որ մենք իրավունք ունենանք Ճորոխի գետաբերանից մի փոքրիկ ճյուղ տանել դեպի նախկին Ռուս-թուրքական սահմանը հայկական Լազիստանին միանալու համար»[12]: Վրացական կողմը մերժում է նաև այս տարբերակը և, իր հերթին, հանդես գալիս հայերի համար անընդունելի առաջարկներով:

Ա. Ահարոնյանի վկայությամբ, նույն օրը Վանսետարտը բանակցող կողմերին հրավիրում է հանդիպման և քննադատելով բանակցություններում վրացական կողմի ապակառուցողական դիրքորոշումը «Լորդ Քերզոնի» և «համաժողովի կողմից» հայտարարում, որ «հայերը իրենց զիջողությունը հասցրել են ծայրահեղ մինիմումի. ավելի հեռուն գնալ չեն կարող»[13]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ անգամ այս հայտարարությունից հետո էլ հայկական պատվիրակությունը կրկին պատրաստակամություն է հայտնում գնալ զիջումների և վրացիներին հանձնել «Ախլքալակն ու Լոռու-Բորչալու շրջանից մի մասը», իր «սեփական հողի միջով» դեպի Սև ծով «հայ պետության իսկական ելք ունենալու» դիմաց(փաստաթղթի բառերն են.- Ջ. Թ.)[14]:

Վերջին անգամ պատվիրակությունները հանդիպում են ապրիլի 25-ին: Դրանից առաջ պարզվում է, որ վրացիներն ու թաթարները միմյանց հետ գաղտնի պայմանավորվածության արդյունքում միասնական զեկույց են ներկայացրել դաշնակիցների գերագույն խորհրդին, որտեղ աղավաղելով փաստերն ու իրադարձությունները՝ բանակցությունների ձախողման մեղքը բարդել են հայկական կողմի վրա:

Այսպիսով այս բանակցությունները ևս նախորդների նման ավարտվում են անարդյունք:

Անդրադառնալով բանակցություններում հայկական պատվիրակության դիվանագիտական մոտեցումների ու գործունեության գնահատականին Ա. Ահարոնյանը ինքնաքննադատաբար հետևյալն է գրում. «Մեր սխալն այս խնդրում (նկատի ունի Վրաստանի հետ տարածքային խնդիրները.- Ջ. Թ.) միշտ այն է եղել, որ մենք նրանց հողային պահանջների հանդեպ հողային պահանջ չենք հանել և բավականացել ենք միայն պաշտպանվելով[15]:

Այո,՛ ցավալի է, բայց պետք է արձանագրենք, որ ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները հայ պետական ու քաղաքական գործիչներից շատերը, փաստորեն, անտեսեցին Ա. Ահարոնյանի այս միտքը և, նաև որպես դրա հետևանք, Վրաստանի հետ տարածքային ու այլ բնույթի խնդիրները լուծելիս գրեթե միշտ հանդես եկան պաշտպանվելու դիրքերից:

Անդրադառնալով բուն նյութին, ուզում ենք ավելացնել, որ Վրաստանը, փաստորեն, դեմ էր նաև Տրապիզոնը Հայաստանին հատկացնելուն և այդ ճանապարհով դեպի Սև ծով Հայաստանի սեփական ելք ունենալուն, այն անհիմն պատճառաբանությամբ, թե հայերն այնտեղ կարող էին հասնել միայն ուրիշի տարածքներ գրավելով[16]:

---

[12] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 129:

[13] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 130:

[14] Նույն տեղում, Ã. 132:

[15] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ.132:

[16] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 27, նույնը՝ նաև ***Թորոսյան Շ.***, Լազիստանի խնդրում հայ-վրացական տարակարծությունները Լոնդոնի խորհրդաժողովում, հայոց պատմության հիմնահարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 166::

Այսպես կոչված «ուրիշի տարածքների» ճակատագրի նկատմամբ վրացիների նման «մտահոգությունն» անշուշտ բացատրվում է այդ տարածքների նկատմամբ նրանց ունեցած սեփական հավակնություններով:

Ամփոփելով ուզում ենք նշել, որ դեպի Սև ծով ՀՀ-ին ելք տրամադրելու հարցում Վրաստանի պատվիրակության նման մերժողական վերաբերմունքն առաջին հերթին պայմանավորված էր նրա տնտեսական ու քաղաքական շահերով, քանզի Սև ծով ելք չունենալու դեպքում Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող հաղորդակցության ուղիների հարցում Վրաստանից կախման մեջ էր հայտնվելու, իսկ վերջինս էլ դեպի Հայաստան տարանցիկ բեռնափոխադրումներից մեծ եկամուտներ էր ստանալու: Բացի այդ Վրաստանն իր ձեռքում կարևոր լծակ էր ունենում Հայաստանի նկատմամբ իր տարածքային հավակնությունները հօգուտ իրեն լուծելու գործում:

Մինչև Սևրի պայմանագիրը Հայաստանի տարածքների հարցում հնչակյանների հայացքները ևս զգալի հետաքրքրություն են ներկայացնում: Ուստի նպատակահարմար ենք գտնում համառոտ անդրադառնալ նաև դրանց վերլուծությանը:

Որպես սոցիալ-դեմոկրատներ, հնչակյաններն իրենց հայացքներով մոտ էին կանգնած մենշևիկներին, ուստի ամենևին էլ պատահական չէր, որ հնչակյանները բավականին զուսպ ընդունելով 1917 թվականի հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի լուրը՝ այնուամենայնիվ, դրական համարեցին «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Չնայած դրան հնչակյանները հայկական հարցի լուծումը կապում էին Ռուսաստանի սահմանադիր ժողովի հետ, որը սակայն իրականություն չդարձավ:1918 թվականի հունվարին բոլշևիկյան իշխանությունները նախ ցրեցին Սահմանադիր ժողովը, իսկ արդեն մարտին՝ կնքեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

Նման պայմաններում հնչակյանները դատապարտում են այդ պայմանագիրը, միևնույն ժամանակ քննադատելով բոլշևիկներին հայ ժողովրդի կենսական շահերն անտեսելու համար[17]:

Դրանից հետո քննադատության սլաքն ուղղելով դաշնակցության դեմ հնչակյանները դատապարտեցին Անդրկովկասյան սեյմի երկրամասը Ռուսաստանից անջատելու որոշումը, համարելով այն «քաղաքական անհեռատեսություն և արկածախնդրություն, որը հղի էր հայ ժողովրդի համար վտանգավոր հետևանքներով»[18]:

Այստեղ, փաստորեն, հնչակյանների կողմից հաշվի չի առնվում այն պարզ ճշմարտությունը, որ Խորհրդային Ռուսաստանից Անդրկովկասն անջատելու Սեյմի որոշումը միայն դաշնակցականների ցանկությամբ չէր պայմանավորված:

Այստեղ, փաստորեն, հնչակյանների կողմից հաշվի չի առնվում այն պարզ ճշմարտությունը, որ Խորհրդային Ռուսաստանից Անդրկովկասն անջատելու Սեյմի որոշումը միայն դաշնակցականների ցանկությամբ չէր պայմանավորված:

Հարկ է նշել, որ Ռուսաստանի և Կովկասի հնչակյանները լինելով ավելի շատ բոլշևիկամետ, այնուամենայնիվ, Հայկական հարցի լուծման գործում որոշակի հույսեր էին կապում դաշնակիցների հետ, իհարկե դրա հետ միասին չմո-

[17]Տե՛ս ***Հովհաննիսյան Գ. Հ.***, Հայկական հարցը 1912-1920 թթ. և հնչակյան կուսակցությունը, «Արարատ», բացառիկ, Բեյրութ, 2014, էջ 82::

[18] Նույն տեղում:

ռանալով շեշտել, որ «իմպերիալիստները ինչ լուծում էլ տան հարցին (Հայկական հարցին.- Ջ. Թ.) **այն չի կարող ազատագրություն լինել հայ ժողովրդի հարստահարված զանգվածների համար**(ընդգծումը մերն է.- Ջ. Թ.)»[19]:

Անդրադառնալով Փարիզի վեհաժողովում Հայկական հարցի նկատմամբ դաշնակիցների և, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի դիրքորոշմանը հնչակյաններն այն համոզմունքն էին հայտնում, թե պանթուրքիզմի գաղափարախոսությունը դեմ է բրիտանացիների շահերին, ուստի վերջիններս ի վերջո հանդես կգան Միացյալ Հայաստանի ստեղծման պաշտպանությամբ, որի կազմում կներառվեր նաև Ղարաբաղը: Հնչակյանների կարծիքով Ֆրանսիան ևս պետք է համաձայնվեր Կիլիկիան հայկական պետությանը միացնելու գաղափարին, քանի որ «Անատոլիայից դեպի Սիրիա խոյացող թրքության ձգտումները խափանող միակ ռեալ ուժը…կարող են լինել միայն հայերը»[20]:

Ինչպես նկատում ենք, հնչակյանները ճիշտ չգնահատելով կատարված աշխարհաքաղաքական փոփոխություններն ու տեղի ունեցած իրադարձությունները Հայաստանի տարածքների և, հատկապես, Կիլիկիայի հարցում անիրատեսական հույսեր էին փայփայում:

Ամփոփելով վերը նշվածը, կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ հնչակյանների մոտեցումները մեծ մասամբ իրատեսական չէին, մի բան, որն ապացուցվեց պատմական իրադարձությունների հետագա ընթացքով:

Հայաստանի տարածքների ու սահմանների վերաբերյալ հայ քաղաքական մտքի տարբեր ուղղությունների ներկայացուցիչների պատկերացումներն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով, հարկ ենք համարում համառոտակի անդրադառնալ նաև վերոհիշյալ խնդրի ու, ընդհանրապես, Հայկական հարցի վերաբերյալ հայ բոլշևիկյան մտքի ներկայացուցիչների տեսակետներին:

Խնդրո առարկա հիմնահարցն իր արտացոլումն է գտել նաև բոլշևիկյան կուսակցության Բաքվի կոմիտեի անդամ, հայազգի Ա. Միկոյանի, 1919 թվականի դեկտեմբերի սկզբներին Վ. Ի. Լենինին ուղարկած «Կովկասյան հարցի մասին» զեկույցի թեզիսներում: Դրանցում խոսվում է այն մասին, թե ստեղծված նոր պայմաններում ինչպիսին պետք է լինեն Արևմտյան Հայաստանի, ցեղասպանությունից փրկված արևմտահայերի և, ընդհանրապես, Հայկական հարցի վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանի մոտեցումներն ու դիրքորոշումները:

Թեզիսներում Ա. Միկոյանն առաջարկում է նախ հաշվի առնել այն փաստը, որ «եթե մինչև պատերազմը Թուրքահայաստանի տարածքում հայերը բնակչության զգալի տոկոս էին կազմում, իսկ շատ տեղերում՝ անգամ մեծամասնություն», ապա պատերազմից հետո «Թուրքահայաստանը մնացել է առանց հայերի՝ բառի ուղղակի իմաստով»: Բացի այդ ըստ Միկոյանի մոտ 300 հազ. արևմտահայ փախստականներ ապաստան են գտել Անդրկովկասում, իսկ բուն «Թուրքահայաստանում ապրում են համարյա միայն մահմեդականներ»[21]:

Այնուհետև թեզիսներում նշվում է, որ նման պայմաններում միայն իմպերիալիստների կամակատար հայ շովինիստներն են շարունակում կրել «յոթ վի-

[19] Տե՛ս «Գործավոր», Թիֆլիս, 1919, թիվ 1:

[20] Տե՛ս «Գործավոր», Թիֆլիս, 1919, թիվ 8:

[21] Геноцид армян: ответсвенность Турции и обязательства мирового сообщества. Документы и коментарий/ ред. И сост профессор ***Ю. Г. Барсегов***, т. 2, ч. 1, с. 37.

լայեթների կազմում Մեծ Հայքը վերստեղծելու պատրանքային ու հանցավոր գաղափարը», գաղափար, որն իրականանալու դեպքում, ըստ Միկոյանի, մեծ դժբախտություն կբերի Թուրքահայաստանի ներկայիս մահմեդական բնակչությանը: Զարգացնելով իր մտքերը Ա. Միկոյանն այնուհետև գրում է. «Պետք է ընդգծել, որ.

ա) Հայ ազգային շարժումն իր դիալեկտիկական զարգացման արդյունքում ազատագրականից վերածվել է հետադիմականի և նվաճողականի

բ) Թուրքահայաստանի և ընդհանրապես «Մեծ, Միացյալ ու Անկախ Հայաստանի» գաղափարը վնասակար է հանցավոր և հետադիմական, որի դեմ մեր կուսակցությունը պետք է պայքարի»[22]:

Իսկ ինչ վերաբերվում է Հայկական հարցին, ապա այն, ըստ Միկոյանի, «զրկված լինելով իր ամենագլխավոր մասից՝ Թուրքահայաստանից» որպես այդպիսին կորցրել է իր «Երբեմնի պատմական նշանակությունը» և դադարել «միջազգային հարց լինելուց»[23]:

Թեզիսներում Ա. Միկոյանը (և նրա իսկ խոսքերով՝ «հայ-ընկերների մի փոքր խումբ».-Ջ. Թ.) քննադատումէ Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի կողմից 1917 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունած «Թուրքահայաստանի մասին» հայտնի դեկրետը՝ համարելով այն «խոշոր սխալ»: Սակայն, ամենևին էլ ոչ այն բանի համար, որ Խորհրդային Ռուսաստանի կողմից զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից, փաստորեն, ի չիք էր դարձնում այդ դեկրետի իրականացման հնարավորությունը՝ այլ զուտ նրա համար, որ դեկրետում «Խորհրդային իշխանությունը օրինականացնելով հայ ազգաբնակչության բոլոր ցանկությունները՝ լռության է մատնել նման ցանկությունների առկայությունը մահմեդականների մոտ», դրանով իսկ «մահմեդական մասսաներին նետելով պանիսլամիզմի և գերմանաթուրքական իմպերիալիզմի գիրկը»[24]:

Ստացվում է, որ «մահմեդական բնակչության» ճակատագրով մտահոգ «հայ» լենինյանը հասկանալի պատճառով մոռանում էր այն պարզ ճշմարտությունը, որ իրենց պատմական հայրենիքում ապրող հայ քրիստոնյաները դժբախտություն ունեին գտնվելու թուրքական պետության կազմում և դա այն դեպքում, երբ մահմեդականները և հատկապես քրդերը, տիրացած լինելով հայկական տարածքներին առնվազն «դժբախտ» չպետք է լինեին ապրելու հարազատ, կամ քրդերի դեպքում՝ գոնե նույնակրոն պետության մեջ: Բացի այդ Ա. Միկոյանն անտեսում էր այն հանգամանքը, որ նաև հենց այդ «պանիսլամիզմի» ու «գերմանաթուրքական իմպերիալիզմի գիրկը» նետվող մահմեդականների «թեթև ձեռքով» արևմտահայությունը զրկվել էր իր պատմական հայրենիքում ապրելու և ընդհանրապես, ապրելու մարդկային ամենատարրական իրավունքից:

Կարծում ենք, այստեղից էլ դժվար չէ կռահել, որ ազատ ինքնորոշման իրավունքը առաջին հերթին պետք է տարածվեր իր պատմական հայրենիքում, բայց այլ պետության կազմում ապրող արևմտահայության վրա:Ավելացնենք նաև, որ «Թուրքահայաստանի մասին» դեկրետը քննադատելի է այն առումով, որ Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրսբերման պահանջն իրական երաշխիքներ չէր թողնում արևմտահայության ինքորոշման իրավունքը կյանքի կոչելու համար:

---

[22]См. там же.

[23]См. там же с. 38.

[24]См. там же.

Եզրակացությունը մեկն է. իր «ստեղծագործական» որոնումներում Ա. Միկոյանը շատ «հեռուն» է գնում և ընկնելով ծայրահեղությունների գիրկն անգամ «մեծ սխալ» անվանում ազգերի ինքնորոշման իրավունքի լենինյան պատկերացումների հիման վրա ստեղծված «Թուրքահայաստանի մասին» դեկրետը:

Ուստի, ամենևին էլ պատահական չպետք է համարել այն փաստը, որ Ա. Միկոյանի նշված թեզիսներում բարձրացված հակահայկական մտքերն ընդամենը մի քանի ամիս անց իրենց տրամաբանական շարունակություն են գտնում «կոմունիստ» ներկայացող քեմալականների մոտ:

Այսպես, 1920 թվականի ապրիլի 26-ին բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեի նիստումՀայաստանի ու հայժողովրդի նկատմամբ թուրքական պետության որդեգրած հիմնական սկզբունքների ու մոտեցումների վերաբերյալ համատեղ զեկույցով հանդես են գալիս Կ. Պոլսից ժամանած թուրք կոմունիստներ Հուսեյնը, Բակա-Ալին և Լյուֆրի Նեդժդեյը:

«Մեծ Հայքի» ստեղծման մասին վաղուց երազող հայ ազգը,- նշվում է զեկույցում,- Եվրոպայում ընթացող Խաղաղության կոնֆերանսին պատվիրակություն է ուղարկել՝ պահանջելով թուրքական վեց վիլայեթները (Էրզրում, Վան, Տրապիզոն, Դիարբեքիր, Խարբերդ և Սվազի մի մասը) և նախկին Ռուսաստանի չորս մարզերը (Երևան, Կարս, Նախիջևան, Բաթում և Արդահան): Չնայած այժմ թուրքական վիլայեթներում հայերը կազմում են 10-15 %-ը: Խաղաղության կոնֆերանսն որոշել է ընդառաջել նրանց և խոստացել նպաստել Հայաստանի կազմավորմանը… նպատակ ունենալով Հայաստանն օգտագործել **Խորհրդային Ռուսաստանից տարածվող և Թուրքիայում ծնվող բոլշևիզմի դեմ»**: Զեկույցի վերջում թուրք կոմունիստներն այն հաստատ համոզմունքն են հայտնում, որ Հայաստանին «… **դաժան պարտություն է սպասվում, քանի որ այն երեք կողմից շրջապատված է Խորհրդային Ռուսաստանով, Ադրբեջանով և ապստամբած ու ոտքից գլուխ զինված Անատոլիայով**(ընդգծումները մերն են.- Ջ. Թ.)**»**[25]**:**

Այստեղ ուզում ենք ուշադրություն հրավիրել այն կարևոր հանգամանքի վրա, որ թուրք կոմունիստների զեկույցում տեղ գտած «Թուրքիայում ծնվող բոլշևիզմի» մասին միտքն ամենևին էլ անհիմն չէր և ապացուցվում է կոնկրետ փաստերով:

Այսպես 1919 թվականի ապրիլի 24-ին, Ա. Ահարոնյանը Փարիզից տեղեկացնում էր ՀՀ արտգործնախարարին, որ երիտթուրք պարագլուխներ Թալեաթը, Բեհաէդդին Շաքիրը և դոկտոր Նազիմը իրենց համախոհների հետ ապաստանած լինելով Գերմանիայում աշխատում են Թուրքիայում բոլշևիկյան շարժում առաջացնել[26]:

Կասկածից վեր է, որ երիտթուրք պարագլուխների նման քայլը Խորհրդային Ռուսաստանի համակրանքը շահելու նպատակ էր հետապնդում:

Չբավարարվելով Հայկական հարցի և Միացյալ ու Անկախ Հայաստանի ստեղծման գաղափարների բացարձակ ժխտմամբ և համարելով դրանք «վնասակար», «հանցագործ» և «հետադիմական», Ա. Միկոյանը որոշ ժամանակ անց շատ ավելի հեռուն է գնում՝բազմիցս հանդես գալով այս անգամ արդեն «Կովկասյան Հայաստանից» (Ա. Միկոյանի բառերն են- Ջ. Թ.) Ղարաբաղն ու Զանգեզուրը անհապաղ Ադրբեջանին հանձնելու օգտին, փաստորեն լիովին անտեսե-

[25]Указ.соч., с. 51-52.

[26] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.290, թ.12:

լով Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Չիչերինի այն միտքը, որ «Ղարաբաղը բնիկ հայկական տարածք է»[27]:

Ցավոք Ա. Միկոյանն իր հակահայկական ու թուրքամետ հայացքներով միակը չէր հայ բոլշևիկների մեջ: Նման հայացքներն այս կամ այն չափով կիսում էին նաև Ա. Նուրիջանյանը, Ս. Կասյանը և ուրիշներ:

Ելնելով վերը նշված փաստերի վերլուծությունից ցանկանում ենք այն եզրահանգումներն անել, որ.

1.Տարածքային և սահմանային խնդիրների հարցերի լուծման գործում ՀՀ և Հայոց Ազգային պատվիրակություններըշարունակում էին հույսեր կապել գերազանցապեսԴաշնակիցների հետ՝ նույնիսկ այն ժամանակ, երբ ի վնաս հայոց էին դասավորվում պատմական դեպքերն ու իրադարձությունները:

2.Հայ բոլշևիկյան մտքի ներկայացուցիչները Միացյալ ու Անկախ Հայաստանի գաղափարը համարելով «վնասակար», «հանցավոր» և «հետադիմական» կոչ էին անում պայքարել դրա դեմ՝ դրանով իսկ դրսևորելով ընդգծված հակահայկական ու թուրքամետ ուղղվածություն:

3.Հայ բոլշևիկների նման մոտեցումներն ոչ միայն հակահայկական էին ու անընդունելի, այլև քննադատելի էին անգամ մարքս-լենինյան հիմնադրույթների տեսանկյունից:

Джаваир Торосян - ***Направленности политических взглядов относительно территории и границ Армении до Севрского договора***. В статье автор на аснове архивных н других документальных материалов коснулась задачи, которая посвящена направленности политических течений в Армении, которые имели разноречивые подходы к вопросу о территориальных требованиях. Армянские делегации выдвигали своим союзникам требования о создании государств с обширной территорией, которые не были удовлетворены. Некоторые деятели партии «Дашнакцутюн» выступали с более конкретными и, возможно, более реалистическими требованиями, которые также не были удовлетворены. К сожалению, армянская политическая элита не была единодушной в этом вопросе и не учитывала реалий.

Javahir Torosyan - ***The orientation of political views with regard to the territories and boundaries of Armenia before the Treaty of*** **Sèvres**. On the base of archives and other documental materials the author raised the problem which is devoted to the directions of the political orientations in Armenia,which had various approaches to the problem the territorial requirements.The political orientations in Armenia had contradictory approaches for the issue on territorial requirements. The Armenian delegations made demands that the allies would have approved the establishment of the state with vast territory which were not met. Some politicians, members of Armenian revolutionary federation “Dashnaktsutyun”, spoke with more explicit, maybe more close-to-reality claims but they were not satisfied as well. The political elite were not unanimous on that issue and did not consider the realities.

[27] ***Барсегов Ю. Г.***, указ.соч.,с. 76.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Լոնդոնի խորհրդաժողովը բացվում է 1921 թ. փետրվարի 21–ին և շարունակվում մինչև մարտի 16–ը: Փաստորեն այն տեղի էր ունենում այն նույն օրերին, երբ Մոսկվայում ընթանում էր ռուս–թուրքական կոնֆերանսը, որը Թուրքիային առավել համարձակ գործելու հնարավորություն էր տալիս: Այս կոնֆերանսի հրավիրման հիմնական դրդապատճառը խորհրդա-թուրքական մերձեցումն էր, որը լրջորեն անհանգստացնում էր դաշնակիցներին:

Պողոս Նուբարը ստեղծված պայմանների ազդեցության տակ այս անգամ ճիշտ էր արտահայտվում, երբ առանձնացնում էր Արևմտյան Հայաստանի հարցը արդեն խորհրդայնացված Հայաստանից՝ գտնելով, որ Սևրի պայմանագիրը դաշնակիցներն էին ստորագրել Թուրքիայի հետ և ոչ թե Ռուսաստանը, և որ Հայկական հարցը ծագել էր Թուրքիայում: Բայց նրա այդ հիմնավորուները բավարար չէին՝ նրանց ստիպելու՝ գրավել չորս վիլայեթները (Էրզրում, Տրապիզոն, Վան, Բիթլիս):

Լոնդոնի խորհրդաժողովը չավարտվեց պայմանագրով, բայց այն փաստորեն նշանակում էր հրաժարում Սևրի պայմանագրից:

Բանալի բառեր. Արևմտահայ, քաղաքական միտք, դաշանկիցներ, Հայոց Ազգային պատվիրակություն, ՀՀ պատվիրակություն, Լոնդոնի խորհրդաժողով, Սևրի պայմանագիր, Ազգային օջախ:

1920 թ. ամռանը Ռուսաստանը կրկին ակտիվացրելէրիր արևելյան քաղաքականությունը, ոչ մի տերություն չէր ստանձնում Հայաստանի մանդատը, իսկ Քեմալը միավորում էր Թուրքիան: Աշխարհաքաղաքական իրավիճակն այդպիսին էր, երբ տեղի ունեցավ Լոնդոնի խորհրդաժողովը 1921 թ. փետրվարի 21–ին և շարունակվեց մինչև մարտի 16–ը: Այսինքն այն նույն օրերին, երբ Մոսկվայում ընթանում էր ռուս–թուրքական խորհրդաժողովը, որը Թուրքիային առավել համարձակ գործելու հնարավորություն էր տալիս: Այս խորհրդաժողով հրավիրելու հիմնական դրդապատճառը խորհրդա-թուրքական մերձեցումն էր, որը լրջորեն անհանգստացնում էր դաշնակիցներին: Այնտեղ հրավիրված էին թուրքական երկու՝ սուլթանական (Կ. Պոլսի) և քեմալական (Անկարայի) կառավարությունների ներկայացուցիչները: Միանգամայն ճիշտ է Ալ. Խատիսյանը, երբ գրում է. «-Լոնտոնի խորհրդաժողովը արդիւնք էր այն դիմադրութեան, զոր Թուրքիա ցույց տուաւ Սեւրի դաշնագրի պայմաններուն ենթարկուելու դէմ»[1]: Հասկանալի է, որ այդ դիմադրությունը սակավարդյունք կվերջանար, եթե չլիներ Ռուսաստանի աջակցությունը:

Անգլիան հույսեր ուներ, որ խորհրդաժողովի ընթացքում Թուրքիային կստիպեր ճանաչելու Սևրի պայմանագրի գոնե հիմնական դրույթները, իսկ Ֆրանսիան և Իտալիան՝ նպատակ ունեին նրան պարտադրել ընդունելու կապիտուլյացիաները և ստանալու նոր կոնցեսիաներ՝ իհարկե դրա դիմաց փոխզի-

[1] ***Խատիսեան Ալ.,*** Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 337:

ջումներ անելով: Դրանով նրանք քեմալականներին փորձում էին ներքաշել հակախորհրդային կոալիցիայի մեջ, բայց չկարողացան հասնել հաջողության:

Ինչպես նշում է ՀՀ պատվիրակության նախագահ Ավ.Ահարոնյանը, որ՝Ֆրանսիայում այն կարծիքն է տիրում, թէ որքան մեծ լինեն Թուրքիային թողնուելիք հողերը, այնքան աւելի լաւ ֆրանսիական շահերի համար: Ահա թէ ինչու ֆրանսիական ներկայացուցիչներն այստեղ, Հայաստանի սահմանները գծելիս, աշխատեցին որքան կարելի է կրճատել մեր հողերը յօգուտ Թուրքիային»[2], քանի որ այնտեղ Ֆրանսիան ուներ ամենամեծ ներդրումները և վախենում էր Թուրքիայի մասնատման դեպքում կորցնել դրանք[3]:

Մինչ դեռ Ֆրանսիայի արտգործնախարար Բրիան, անկեղծորենե հայտարարում էր. «…ես Թիւրքիոյ անկախ եւ կենսունակ գոյութեան պաշտպանութեան կողմնակից եմ…»[4]:

Լոնդոնի խորհրդաժողովից արևմտահայ քաղաքական մտքի ակնկալիքներն արդեն չէին իրականանալու, քանզի դաշնակիցները միակամ չէին, և նրանց համար առաջնային խնդիրը Խորհրդային Ռուսաստանի դեմ պատվար ստեղծելն էր, որը քեմալական Թուրքիայի հետ նախատեսում էր նոր քաղաքական կուրսի մշակում: Եվ պատահական չէ, որ դաշնակիցները այս խորհրդաժողովից սկսեցին Արևմտյան Հայաստանի խնդիրը կամ Սևրի պայմանագիրը ի չիք դարձնելու գործընթացը, որն ավարտվեց Լոզանի 1922-1923 թթ. խորհրդաժողովով: Իսկ 1921 թ. մարտի 16–ի Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանը կանխեց դաշնակիցներին՝ Հայկական հարցը թաղելու առումով:

Լոնդոնի խորհրդաժողովում Կ. Պոլսի և Անկարայի կառավարությունների ներկայացուցիչներն էին Օսման Նիզամի փաշան և Բեքիր Սամի բեյը: Հայաստանի պատվիրակության կազմում էին վերջինիս նախա•ահ՝ Ավ. Ահարոնյանը, գեներալ Հ. Բագրատունին, Մ. Վարանդյանը, Գ. Փաստրմաճյանը, Ս. Արարատյանը, Հ. Մասեհյանը և Պողոս Նուբար փաշան: Ինչպես համոզվում ենք, ՀՀ անկումից հետո արևմտահայ և արևելահայ քաղաքական մտքի գործիչները միավորվել էին լուծելու Արևմտյան Հայաստանի խնդիրը, քանզի ՀՀ-ն արդեն խորհրդայնացած էր: Խորհրդաժողովը նախագահում էր Լլոյդ Ջորջը: Նշենք, որ այս խորհրդաժողովի գումարման կարևորագույն պատճառներից էր նաև Բեքիր Սամի բեյի՝ փետրվարի 2–ի պահանջը՝ «վերականգնել Եւրոպայի մէջ 1914 թ. Թուրքիոյ սահմանները, վերադարձնել Իզմիրը, Կիլիկիան, իսկ Հայաստանի եւ Քիւրտիստանի վերաբերմամբ արտայայտուեցաւ որոշ կերպով հետեւեալ խօսքերով. «Մենք կը գտնենք, որ հողային խնդիրներու ուշադիր ուսումնասիրութիւնը, մասնաւորապէս Հայաստանի եւ Քիւրտիստանի վերաբերմամբ, հնարաւորութիւն կու տայ արդարացի լուծում գտնելու էական կէտերու մէջ» (ընգծումը – հեղինակի)[5]:

---

[2] ***Մելիքյան Վ.,*** Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923թթ., Ե., 2007, էջ¬ 30: Այս մասին մանրամասն տե՛ս նույնի՝ Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ արևմտահայերի 3-րդ համագումարի անհրաժշտությունը. հայկական պահանջատիրություն, Ե., 2010, 61-77 էջ**:**

[3] Տե՛ս ***Հարությունյան Ա.Ա.***, Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, Ե., 2004, էջ 52:

[4] ***Փափազեան Վ.,*** Իմ Յուշերը, հ. Գ, Գահիրէ, 1957, էջ 109:

[5] ***Խատիսեան Ալ.,*** նշվ. աշխ., էջ 339:

Հայ պատվիրակներն այնքան էլ ճիշտ չէին պատկերացնում ստեղծված իրավիճակը. այդ մասին վկայում 1921 թ. փետրվարի 26–ի նիստի ընթացքը, որին մասնակցում էին Ավ. Ահարոնյանը, Պողոս Նուբարը, զոր. Հ. Բագրատունին և Լոնդոնում ՀՀ գործերի նախկին հավատարմատար, հայազգի Մալքոլմը (Մելքումյան Հովսեփ Հակոբի): Նիստը նախագահում էր Անգլիայի արտգործնախարար՝ Ջ. Քերզոնը, որը հայտարարեց. «Գերագույն խորհուրդը տեղեկացվել է, որ հայկական պատվիրակությունը ցանկանում է Սևրի պայմանագրի վերաբերյալ այժմ վարվող բանակցությունների կապակցությամբ շարադրել իր հայեցակետը: Բոլորին էլ հայտնի են այն դժբախտ իրադարձությունները, որոնք փոփոխեցին իրադրությունը Սան–Ռեմոյի կոնֆերանսից հետո: Ներկա նիստը հրավիրված է, որպեսզի հայկական պատվիրակությանը հնարավորություն ընձեռվի շարադրելու իր տեսակետը ներկա իրադրության վերաբերյալ: Կոնֆերանսը կունկնդրի պատվիրակությանը և կզեկուցի Գերագույն խորհրդին: Սակայն կոնֆերանսն առաջին հերթին պետք է իմանա երկու բան՝ ո՞վ է հայերի անունից խոսողը և հանուն ու՞մ է նա դիմում կոնֆերանսին»[6]:

Քերզոնը գիտեր, թե ինչ էր ասում. Հայաստանի Հանրապետությունն «անկում էր ապրել», որի հետևանքով Ավ. Ահարոնյանի պատվիրակությունը կորցնում էր իր իրավական ուժը[7]: Խորհրդաժողովներին մասնակցում են պետությունների ներկայացուցիչները, իսկ Պողոս Նուբարը որևէ պետություն չէր ներկայացնում:

Պողոս Նուբարը իր ելույթում բացատրում է, որ պատերազմի սկզբից ի վեր ինքը ներկայացրել է Թուրքիայի հայերին, իսկ ՀՀ-ի ստեղծումից հետո ձևավորված՝ Ավ. Ահարոնյանի պատվիրակության հետ գործել է համատեղ՝ «հուսալով ապահովել թուրքական և ռուսական Հայաստանի միավորումը: Անկասկած, վերջին իրադարձությունները բարդացրել են կացությունը, բայց դա չի արգելում երկու պատվիրակություններին՝ համատեղելու և շարունակելու իրենց միասնական ջանքերը»[8]:

Նա նշում է, որ ինքը և Ավ. Ահարոնյանը խոսելու էին իրենց պատվիրակությունների անունից, բայց որպես նախագահ հանդես էր գալու ինքը: Պողոս Նուբարն իր խոսքում փորձում էր խորհրդաժողովի մասնակիցներին համոզել, որ Հայաստանին խորհրդային կարգերի պարտադրելը տերություններին հետ չի կարող պահել թուրքական չորս վիլայեթներն ազատագրելուց. «Այն փաստը, որ Հայաստանին սովետական կարգեր են պարտադրվել, չպետք է ետ պահի տերություններին երկրի մյուս մասերը, այն է՝ թուրքական չորս վիլայեթները ազատագրելուց: Պետք է հիշել, անկասկած, որ Հայկական հարցը ծագեց Թուրքիայում. Թուրքիայում հայկական ջարդերն էին, որոնք դրդեցին տերություններին ջանալու հայերի ազատագրության համար: Պարտված Թուրքիայի հետ էր և ոչ թե նախկին դաշնակից Ռուսաստանի, որ տերությունները կնքեցին Սևրի պայմանագիրը: Ռուսական Հայաստանը մտցվեց հայկական պետության մեջ այն պատճառով, որ նա դեպքերի բերումով անկախ հռչակվեց: Ճիշտ է, անշուշտ, որ

[6]Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում(1828-1923), խմբագիր Կիրակոսյան Ջ., Ե., 1972, էջ 697-698:

[7] Տե՛ս ***Արզումանյան Մ.***, Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973, էջ 45¬5:

[8] Նույն տեղում, էջ 698:

չորս վիլայեթներն օկուպացված են քեմալական զորքերի կողմից, բայց դաշնակիցները ճնշում գործ դնելու տարբեր միջոցներ ունեն, որոնք կարող են օգտագործել էվակուացումն ապահովելու համար: Պարտադրելիք սանկցիաների թվում ամենից հեշտ կիրառելին այն տերիտորիաների օկուպացումը շարունակելն է, որոնք այժմ գտնվում են դաշնակիցների ռազմական հսկողության ներքո, բայց որոնք, եթե Թուրքիան իրագործի իր հանձնառությունները, վերջին հաշվով կարող են էվակուացվել»[9]:

Անհրաժեշտ է նշել, որ Պողոս Նուբարն այս անգամ, ստեղծված պայմանների ազդեցությամբ ճիշտ էր արտահայտվում, երբ առանձնացնում էր Արևմտյան Հայաստանի հարցը արդեն խորհրդայնացված Հայաստանից՝ գտնելով, որ Սևրի պայմանագիրը դաշնակիցներն էին ստորագրել Թուրքիայի հետ և ոչ թե Ռուսաստանը, և որ Հայկական հարցը ծագել էր Թուրքիայում: Բայց նրա այդ հիմնավորումները բավարար չէին նրանց ստիպելու՝ գրավել չորս վիլայեթները: Նա նաև անտեսում էր այն հանգամանքը, որ քեմալականներն այդ վիլայեթները գրավել էին Ռուսաստանի օգնությամբ, որի հետ նրա նախկին դաշնակիցներն ամենևին ցանկություն չունեին ընդհարվելու: Նրանք ավելի շատ ուզում էին քեմալականներին իրենց կողմը գրավել և ապա՝ տրամադրել ընդդեմ Ռուսաստանի:

Այնուհետև Պողոս Նուբարը Կիլիկիայում գտնվող ավելի քան 150 000 հայերի անունից խնդրում է Ֆրանսիային, որի ազդեցության գոտում էր Կիլիկիան, որ «նա չլքի հայ ազգաբնակչությանը, այլ Կիլիկիայի համար ձեռք բերի վարչական ինքնավարության ռեժիմ՝ խառը ժանդարմերիայով»[10]:

Ավ. Ահարոնյանը նույնպես իր խոսքում պնդում է Սևրի պայմանագրի իրականացման անհրաժեշտության մասին, քանզի դրանով ճանաչվել էր Հայաստանի անկախությունը, որը խորհրդայնացումից շատ չանցած վերականգնվել էր Փետրվարյան ապստամբության շնորհիվ: Ավ. Ահարոնյանը չէր սխալվում, երբ ասում էր. «…Քեմալականների ներխուժումը Հայաստան իրականում ուղղված էր Սևրի պայմանագրի և դաշնակիցների դեմ: Դա ապացուցվում է պարտությունից հետո Հայաստանին պարտադրված առաջին իսկ պայմաններով, որպեսզի Հայաստանի կառավարությունը հրաժարվի Սևրի պայմանագրից: Կային մարդիկ, որոնք ասում էին, թե՝ քանի որ Ռուսահայաստանը բոլշևիկացել է, այլևս կարիք չկա հայկական պետություն ստեղծելու: Նրանք մոռանում են, սակայն, որ Թուրքիայի ոչ բոլոր հայերն են բնաջնջվել: Նրանցից մոտ 300 000–ը ապաստան են գտել Կովկասում և սպասում են այն պահին, երբ կկարողանան վերադառնալ իրենց տները: Պետք է հիշել, սակայն, որ Վանի, Բիթլիսի և Էրզրումի երեք վիլայեթներում, համաձայն վերին տեղեկությունների, միայն 96 000 մահմեդականներ են մնում»[11]: Այսպիսով, Ավ. Ահարոնյանն արդեն, ինչպես Պողոս Նուբարը դաշնակիցների առջև դնում էր միայն արևմտահայերին առնչվող խնդրի լուծման անհրաժեշտությունը:

Լորդ Քերզոնը ներկայացրած պահանջների լուծման առումով մատնանշում է երեք խոչընդոտ. ա) բոլշևիզմի հաղթանակը Ռուսաստանում, բ) Մուստա-

---

[9] Նույն տեղում, էջ 699:

[10] Նույն տեղում, էջ 700, տե՛ս նաև ***Պողոսեան Ս.***, Պօղոս Նուբար փաշա.ազգային գործիչը, Ե., 2004, էջ 200:

[11] Հայաստանը միջազգային դիվանագիտության…, էջ 700 – 701:

ֆա Քեմալի կողմից հայկական տարածքների մեծագույն մասի գրավումը, գ) տերությունների՝ Հայաստանին օգնության համար մեծ ուժեր ուղարկելու անզորությունը[12]:

Այս մասին վկայում է նաև Ալ. Խատիսյանը, որը գրում է. «Լորտ Քըրզընը մատնանշեց այն դժուարին կացութիւնը, որուն մէջ կը գտնուէր խորհրդաժողովը Հայաստանի վերաբերմամբ-թուրքերը փաստօրէն գրաւած են բոլոր վիլայէթները, որոնք պէտք է անցնէին Հայաստանին, եւ նոյնիսկ Ռուսահայաստանի մէկ մասը. եւրոպական պետութիւնները չեն կրնար այնտեղ ուղարկել զորքեր, իսկ ռուսական Հայաստանը թէեւ ազատուած խորհրդային լուծէն, կը գտնուի նոր յարձակմանց սպառնալիքին տակ»[13]:

Հիշյալ նիստի արձանագրության մեջ մի հետաքրքիր հանգամանք է ի հայտ գալիս. փաստորեն, Լոնդոն գնացած Նուբար փաշան և Ավ. Ահարոնյանը տեղյակ չէին Վիլսոնի գծած սահմաններից: Դրանում համոզվելու համար բավական է մեջ բերել Քերզոնի՝ հայկական պատվիրակությանն արած հարցադրումները:

«Այսպիսով, - շարունակում է նա, - օգտակար կլինի իմանալ, թե հայկական պատվիրակությունը որո՞նք է համարում Հայաստանի էական տերիտորիալ սահմանները: Նրանք պետք է հիշեն, որ Սան–Ռեմոյի կոնֆերանսը Հայաստանի սահմանների որոշման հարցը վերապահեց պրեզիդենտ Վիլսոնին: Պրեզիդենտ Վիլսոնը գծեց մի սահման, որն ընդգրկում էր մի շարք թուրքական հողամասեր, ինչպես նաև Տրապիզոնի նավահանգիստը: Պարզ է, որ գործնականում խիստ դժվար կլինի նման սահմանագծի հաստատումը: Ուստի լորդ Քերզոնը կամենում է երկու որոշակի հարցեր տալ պատվիրակություններին, այն է՝

1.Որո՞նք են Հայաստանի անհրաժեշտ սահմանները, որոնք խնդրում են երկու պատվիրակությունները:

2.Որո՞նք են մարդկային և դրամական այն աղբյուրները, որոնք կկարողանա տրամադրել Հայաստանը՝ իր անկախությունը ձեռք բերելու համար»[14]:

Նկատենք, որ Հայկական հարցը զոհաբերելն ամենևին էլ չէր բխում մեծ տերությունների քաղաքական շահերից: Եվ Քերզոնի այս հարցադրումներն ամբողջությամբ տրամաբանական էին: Հայ և մասնավորապես արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ ընթանում էր սխալ ուղով՝ լուրջ քննության չենթարկելով այն խնդիրը, թե ինչու՞ պետք է դաշնակիցները կռվեին քեմալականների դեմ՝ հանուն հայ ժողովրդի: Եվ այն էլ այն դեպքում, երբ հայ գործիչները չգիտեին, թե ի՞նչ սահմաններ էին ուզում: Բնականաբար՝ Սևրի պայմանագրով նախատեսված, բայց չէ՞ որ Սևրով ոչ թե սահմաններն էին մատնանշվում, այլ՝ իրավական հիմք էր տրվում ԱՄՆ նախագահին՝ գծելու սահմանները՝ հայտնի վիլայեթներով: Իսկ որ նրա նշած սահմաններից, մասնավորապես Տրապիզոնով, ամենևին տեղյակ չէին հայ պատվիրակները, երևում է Պողոս Նուբարի պատասխանից, ըստ որի՝ «պրեզիդենտ Վիլսոնի որոշման մասին հայկական պատվիրակությունը չի տեղեկացվել»:

Այնուհետև Պողոս Նուբարը հայտնում էր, որ իրենք երբեք Տրապիզոնի նահանգը չեն պահանջել, քանի որ այնտեղ հայերը մեծամասնություն չեն կազ-

---

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 702:

[13] ***Խատիսեան Ալ.,*** նշվ. աշխ., էջ 340:

[14] Հայաստանը միջազգային դիվանագիտության…, էջ 702:

մել, այլ՝ միայն Տրապիզոնով ելք դեպի ծով, բացի այդ հայերը պատրաստ են հարմարվելու Վիլսոնի «սահմանագծին »[15]:

Փաստորեն, ստացվում է, որ Վիլսոնն իսկապես նախագահի պաշտոնը լքելուց առաջ ցույց է տվել իր «հայասիրությունը»՝ գծելով այնպիսի սահմաններ, որոնցից հայկական պատվիրակություններն անգամ տեղյակ չէին, որոնք անտեսում էին Լոնդոնի խորհրդաժողովում սահմանային հանձնաժողովի այն տեսակետը, որ «Տրապիզոնը չպետք է ընդգրկվի հայկական տերիտորիայում», որին համաձայնվել են հայկական երկու պատվիրակությունները[16]:

Ինչ վերաբերում է Կիլիկիայի խնդրին, ապա Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերտելոն հայտնում էր. «Ֆրանսիական կառավարությունը չի կարծում, որ հնարավոր կլինի Կիլիկիայի համար հատուկ ռեժիմ պահանջել: Երբևէ ոչ մի նման ռեժիմ չի ենթադրվել Սևրի պայմանագրով»: Նա նույնիսկ վիճարկում է Կիլիկիայում քրիստոնյաների մեծամասնություն կազմելու հարցը՝ հակադրվելով Պողոս Նուբարին[17]:

Այսպիսով, փաստորեն, դաշնակիցները ստեղծված նոր քաղաքական իրավիճակում հասկացնում էին, որ չեն պնդելու Սևրի պայմանագրի իրականացման մասին: Իսկ հայ քաղաքական մտքի ներկայացուցիչները չէին կամենում ըմբռնել, որ նրանց օգնությունն ակնկալելն այլևս անօգուտ է, և Սևրի պայմանագրի գործադրությունը Հայաստանի համար՝ քաղաքական ռոմանտիզմ[18]:

«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերումե մի հետաքրքիր հուշագիր է զետեղված: Այն կազմել են անգլիացի դիվանագետներ Օսբորնը և Նիքոլսոնը դեռևս Լոնդոնի խորհրդաժողովից առաջ, 1921 թ. փետրվարի 17–ին Անգլիայի արտգործնախարարությունում: Այնտեղ ներկայացված էին խնդիրներ, որոնց առնչությամբ պայմանագրում կարելի կլիներ փոփոխություններ մտցնել: Հայաստանին վերաբերող բաժնում կարդում ենք. «Հրաժարվել Վիլսոնի սահմաններից և փոխարինել հետևյալ հոդվածներով.

(ա) «Թուրքիան ճանաչում է Երևանի հայկական հանրապետության անկախությունը նախապատերազմյան ռուսական սահմաններում և հրաժարվում է Կարսի, Ալեքսանդրապոլի և Արդահանի շրջանների նկատմամբ բոլոր պահանջներից ի ճանաչումն այն բանի, որ Հայաստանը հրաժարվում է պահանջներից թուրքական վիլայեթների նկատմամբ»:

(բ) «Թուրքիան ճանաչում է թուրքական տերիտորիայում հայերի ինքնավարության իրավունքը և պարտավորվում է Ազգերի լիգային զիջելու սուվերեն իրավունքները և իրավունք Կիլիկիայում բավարար տերիտորիայի վրա ամփոփելու երկրում գտնվող թուրքահայերին աջակցելու հայ փախստականներին վերադարձին դրսից: Այս տերիտորիան, որը կառավարվելու է հայերի կողմից Լիգայի գերակայության ներքո, տարածվելու է մոտավորապես Մերսինից–Տարսուս-Ադանա-Օսմանիե սահմանագծից մինչև Հաճըն-Զեյթուն–Մարաշ սահմանագիծը, այն

---

[15] Նույն տեղում, էջ 702–703:

[16] Նույն տեղում, էջ 702:

[17] Նույն տեղում, էջ703–704:

[18] Տե՛ս ***Պօղոսեան Ս.***, Պօղոս Նուպարը և Հայկական հարցի զար·ացումները 1912-1921թթ.,(Հանդէս ամսօրեայ, Վիեննա - Երևան, 2005, N 1-12, էջ 442):

շրջանակներում, որը որոշվելու է Ազգերի լիգայի նշանակած հանձնաժողովի կողմից և ներառելու է Թուրքիայի և Հայաստանի ներկայացուցիչներին՝

(գ) «Թուրքիան պարտավորվում է դյուրացնել Թուրքիայի մյուս մասերից բոլոր հայերի տեղափոխումն այս տերիտորիան, ովքեր կցանկանան գնալ այնտեղ, ինչպես նաև օգնել բոլոր թուրքերին, ովքեր կկամենան հեռանալ այս տերիտորիայից և հաստատվել Թուրքիայի այլ վայրերում»[19]:

Այսպիսով, այս նախագծով, որը թեպետ կյանքի չկոչվեց, Անգլիան նախատեսում էր Թուրքիային պարտադրել 1914թ. սահմանները, որոնց դիմաց Հայաստանը պետք է հրաժարվեր Սևրի պայմանագրով նախատեսված Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի վիլայեթների պահանջից և փաստորեն ստեղծել այն, «օջախ», որի հնարավորությունը հետո մերժվեց Լոզանի խորհրդաժողովում:

Դաշնակիցներին կաշկանդում էր Մոսկվայի խորհրդաժողովը, որն ավարտվեց հայտնի ռուս–թուրքական պայմանագրով, որով, փաստորեն, Ռուսաստանի համար չպահպանվեցին 1914 թ. սահմանները: Իսկ խորհրդա-թուրքական մերձեցումը, որը Քեմալին իրենց կողմը գրավելու ցանկություն էր առաջացնում դաշնակիցների մեջ էլ, անտեսվում էր հայ քաղաքական գործիչների կողմից: Մարտի 16–ի պայմանագրով Թուրքիային էին անցնում Կարսի նահանգը և Սուրմալուի գավառը, Նախիջևանը տրվում էր Ադրբեջանին, իսկ Բաթումը՝ Վրաստանին[20]: Ի վերջո, Մոսկվայի պայմանագրով էին պայմանավորված դաշնակիցների զիջումները Թուրքիային, որի ներկայացուցիչները պահանջում էին.

«1.Եվրոպական մասում 1913թ. սեպտեմբերի 16–ի թուրք-բուլղարական պայմանագրով գծված սահմանի վերականգնում, այսինքն՝ Արևելյան Թրակիայի վերադարձը Թուրքիային:

2.Հարավում Կիլիկիայի և նրանից արևելք ընկած շրջանների (Ուրֆա և այլն) վերադարձը Թուրքիային:

3.Արևելքում Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանի պահպանում:

4.Արևմուտքում Իզմիրի մարզի վերադարձը Թուրքիային»[21]:

Այս բոլոր հարցերում էլ Թուրքիան հասավ հաջողության: Լոնդոնի խորհրդաժողովը չավարտվեց պայմանագրով, իսկ դա փաստորեն նշանակում էր հրաժարում Սևրի պայմանագրից, որով Թուրքիան ճանաչել էր Հայաստանի անկախությունը: Խորհրդաժողովն ընդունեց 10 կետից բաղկացած որոշում, որի 9–րդ կետը վերաբերում էր Հայաստանին: Այն ուներ հետևյալ բովանդակությունը. «9. Հայաստան.–Ինչ կը վերաբերի Հայաստանին, ներկայ պարտաւորութիւնները կրնան յարմարցուիլ, պայմանով որ Թուրքիան ճանչնայ Թուրքահայերու իրաւունքները Ազգային Օճախի մը համար Ասիական Թուրքիոյ արեւելեան սահ-

[19] Հայաստանը միջազգային դիվանագիտության…, էջ 696:

[20] Այս պայմանագրի մասին տե՛ս Документи внешней политики СССР, т.¬ 3¬, М., 1958, с. 597–604, ***Ասլանյան Մ.***, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ, (Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, N 1, էջ 76), ***Սահակյան Տ.***, Ցավալի պայմանագրեր, Ե., 2007, էջ 187-200, ***Ղազարյան Հ.***, Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Ե., 2010, էջ 267–335, ***Հակոբյան Ա.***, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010, էջ 145–316:

[21] Հայաստանը միջազգային դիվանագիտության…, էջ 775:

մաններու մէջ եւ համաձայնի ընդունիլ այն յանձնաժողովի որոշումը, որ կը նշանակուի Ազգերու Լիկայի Խորհուրդէն՝ նպատակ ունենալով տեղւոյն վրայ ուսումնասիրել այն հողամասերու խնդիրը, որոնք արդարացի պիտի ըլլար այդ նպատակի համար փոխանցել Հայաստանին»[22]:

Այսպիսով, վիլսոնյան սահմաններն անցնում էին պատմության գիրկը, «պետություն» բառին փոխարինում էր «ազգային օջախ» եզրույթը, և «Լոնտոնի մէջ Հայերուն տրուելիք «Ազգային Տուն»ը կուգար քանդելու Սէվրի մէջ տրուած «միացեալ եւ անկախ Հայաստան»ի օդակառույց շէնքը , այն էլ՝ ոչ հստակ սահմաններով, որը դարձյալ չընդունեցին թուրքերը: Ճիշտ է նկատել Հովի. Քաջազնունին. «Լոնդոնի կոնֆերանսում առաջին անգամ պաշտոնապես արտասանվեց ու արձանագրվեց Home բառը: Սեւրի դաշնագիրը մոռացվել էր հիմնովին: Այլեւս խոսքը անկախ հայ պետականության մասին չէր, ոչ իսկ ինքնավար նահանգների, այլ ինչ, որ ազգային Home–ի, մի կասկածելի օջախի ուրիշի տան մէջ»[23]:

Այս ամենի պատճառը դաշնակիցների անմիաբանությունն էր: Լլոյդ Ջորջը գրում է. «Այդ ողբալի իրադարձությունների ընթացքում որոշ դաշնակից տերություններ բացահայտ դավաճանական դեր կատարեցին: Իտալացիները Մուստաֆա Քեմալին հույների դեմ կռվելու համար զենք էին վաճառում, գնումների դիմաց վճարվում էր Մոսկվայից տրվող փողերով: Ֆրանսիական կառավարությունը Անգլիայի թիկունքում Քեմալի հետ բանակցություններ էր վարում գաղտնի պայմանագրի մասին»[24]: Իսկապես, ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Բրիանը գաղտնի բանակցությունների մեջ էր մտել քեմալականների հետ և դեռևս Լոնդոնի խորհրդաժողովի ավարտից առաջ, մարտի 9–ին, կնքել գաղտնի համաձայնագիր Բեքիր Սամի բեյի հետ, որով Ֆրանսիան կրճատում էր Սիրիայում իր ազդեցության շրջանակները հօգուտ Թուրքիայի՝ դրա փոխարեն ստանալով մի շարք արտոնություններ Կիլիկիայում, Դիարբեքիրում և Սեբաստիայում[25]:

Մարտի 12–ին Իտալիայի արտգործնախարարն էլ, իր հերթին առանձին համաձայնություն է ստորագրում Բեքիր Սամիի հետ, որով Իտալիան պարտավորվում էր վերջնական հաշտություն կնքելու ժամանակ պաշտպանել թուրքերի շահերը[26]: Անգլիան բոլորովին ուրիշ քայլ կատարեց: Նա մարտի 16–ին համաձայնագիր ստորագրեց Խորհրդային Ռուսաստանի հետ, որով պարտավորվում էր հրաժարվել. գաղութներում նրա դեմ քարոզչությունից, իսկ Անգլիան՝ չճանաչել այն նորանկախ երկրները, որոնք կազմավորվել էին նախկինում ցարական Ռուսաստանի մեջ մտնող տարածքներում:

Միանգամայն ճիշտ է նկատվել, որ թեև Լոնդոնի խորհրդաժողովը ձախողվեց, բայց «դրական նշանակություն ունեցավ քեմալականների համար, քա-

---

[22] ***Խատիսեան Ալ.***, նշվ. աշխ., էջ 341:

[23] ***Քաջազնունի Հ.,*** Հայ Յեղափոխական Դաշնակցությունը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 52:

[24] ***Джордж Л.,*** Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 460.

[25] Տե՛ս ***Խատիսեան Ալ.***, նշվ. աշխ, էջ 342-343, ***Salahi R. S.***,Turkich Diplomacy 1918–1923: Mustafa Kemal and the National Movement, London, 1975, ***Саакян Р. Г.***, Франко–турецкие от¬но-шения и К¬иликиа в 1918–1923 гг., Е., 1986, с. 205–206, ***Գալոյան Գ.***, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Ե.,1999, էջ 436–437:

[26] Տե՛ս ***Խատիսեան Ալ.***,նշվ. աշխ. էջ 343:

նի որ Անտանտի տերությունները դե-ֆակտո ճանաչեցին Անկարայի կառավարությանը»[27]:

Արդ ներկայացնենք այն պատճառները, որոնք նպաստեցին դաշնակիցների պառակտմանը և քեմալականների հաղթանակին: Լիովին կարելի է ընդունել Ալ. Խատիսյանի մատնանշած դրդապատճառները. դրանք են՝ 1.Եվրոպայի ժողովուրդները հոգնել էին պատերազմից և ծարավ էին խաղաղության: 2 Ռուս—թուրքական զինակցությունը և նրանց դավադրական գործունեությունը եվրոպական երկրների ասիական և աֆրիկյան գաղութներում: 3.Ներքին, քաղաքացիական կռիվների ավարտը Ռուսաստանում, որն ամրապնդում էր վերջինիս դիրքերը Կովկասում և Արևելքում՝ ավելի զգույշ գործելակերպի մղելով նրան կովկասյան հանրապետությունների նկատմամբ: 4.Հունաստանի պարտությունը Թուրքիայից, որով անտեսվում էր Սևրի պայմանագրի ուժը Իզմիրի վերաբերյալ[28]:

1921 թ. ամռանը, հույների՝ Քեմալից կրած պարտությունից հետո, Ֆրանսիան և Իտալիան հանդես եկան Սևրի պայմանագիրը վերանայելու օգտին: 1921 թ. հոկտեմբերի 21–ի պայմանագրով Ֆրանսիան ճանաչեց քեմալական Թուրքիան և իր զորքերը հետ քաշեց Կիլիկիայից: 1922 թ. գարնանը թուրքերը հույներից գրավեցին ամբողջ Անատոլիան, իսկ հոկտեմբերին Մուդանյա քաղաքում դաշնակիցների հետ կնքված զինադադարով թուրքերին անցավ Արևելյան Թրակիան, որով ավարտվեցին ռազմական գործողությունները: Փաստորեն, Քեմալը վերամիավորեց Թուրքիան, նոյեմբերի 1–ին վերացնելով նաև սուլթանական կառավարությունը[29]:

Վերջնական հաշտության համար շուտով նոր խորհրդաժողով հրավիրվեց Լոզանում: Այսպիսով, վերոշարադրյալը նկատի ունենալով կարող ենք եզրակացնել՝

1.Լոնդոնի խորհրդաժողովը գումարվեց աշխարհաքաղաքական այնպիսի գործընթացների պայմաններում, երբ խիստ կասկածելի էր Սևրի պայմանագրի իրականացումը:

2.Բոլշևիկյան Ռուսաստանի օգնությամբ հզորացած քեմալական շարժումը հասնում էր հաջող ավարտ, իսկ դաշնակիցներն այլևս անկարող էին խոչընդոտել այն:

3.Դեռևս Լոնդոնի խորհրդաժողովից առաջ դաշնակիցները ցանկանում էին վերանայել Սևրի պայմանագիրը, փորձելով իրենց կողմը գրավել Քեմալին, սակայն վերջինիս ներկայացուցիչներն արդեն իրենց ուժեղ զգալով՝ չհամաձայնվեցին անգամ մազաչափ զիջում անել նրանց, այդ թվում Արևմտյան Հայաստանի հարցում:

4.Լոնդոնի խորհրդաժողովում արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ ձախողում կրեց, քանզի նրա ներկայացուցիչները, ինչպես նաև Ավ. Ահարոնյանը, որն ստեղծված իրավիճակում պաշտպանում էր առավելապես արևմտահայերի շահերը, դարձյալ չխորանալով աշխարհաքաղաքական նոր գործընթացնե-

---

[27] ***Հասրաթյան Մ. Ա., Օրեշկովա Ս. Ֆ., Պետրոսյան Յու. Ա.,*** Թուրքիայի պատմության ուրվա·ծեր, Ե., 1986¬, էջ 241:

[28] Տե՛ս ***Խատիսեան Ալ.***, նշվ. աշխ., էջ 338:

[29] Տե՛ս Ասիայի և Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն, մաս 1, 1917–¬1945, Ե., 1982, էջ 219:

րի մեջ շարունակում էին պնդել Սևրի պայմանագրով Արևմտյան Հայաստանին նախատեսված տարածքներում հայկական պետություն ստեղծելու գաղափարը: Մինչ դեռ դաշնակիցները դեռևս Սան–Ռեմոյի խորհրդաժողովում հասկացնում էին, որ չեն օգնելու Հայաստանին՝ չորս վիլայեթները գրավելու համար, այն դեպքում, երբ արդեն չկար Հայաստանի Հանրապետություն, իսկ այն խորհրդայնացրած Ռուսաստանը Թուրքիայի դաշնակիցն էր:

Հետագայում Լ.Ջորջը քննադատեց Սան-Ռեմոյում «Պօղոսի կախարդական հեքիաթները» և Ահարոնյանի՝ կոյր լաւատեսութիւնը»:[30]

5.Լոնդոնի խորհրդաժողովը հայերի համար անպտուղ էր, սակայն նրա ընթացքում ձևավորվեցին ֆրանս–թուրքական, իտալա–թուրքական, անգլո–ռուսական համաձայնագրերը, որոնք Սևրի պայմանագրից հրաժարվելու իմաստ ունեին, և Հայկական հարցը թեքեցին դեպի մայրամուտ:

6.Ազատ և Միացյալ Հայաստանի փոխարեն Լոնդոնում ծնվեց «ազգային օջախ» եզրույթը՝ կարծես թե իրադրությունը փրկելու համար, առանց հստակ սահմանների. դա նույնպես չընդունվեց թուրքերի կողմից:

Ցավոք, այս ամենից հետո էլ արևմտահայ և արևելահայ քաղաքական գործիչները զուր հույսեր էին փայփայում այդ «օջախ» ստեղծելու համար, որոնք վերջնականապես ի դերև ելան Լոզանում:

Асмик Симонян - ***Отражение западноармянской политической мысли в Лондонской конференции.*** – Лондонская конференция состоялась 21 февраля до 16 марта 1921 года. В эти же дни в Москве проходила русско-турецкая конференция, что давало Турции предпринять более смелые действия.

В своем выступлении Погос Нубар отметил, что Севрский договор был подписан с Турцией союзниками, а не Россией и что Армянский Вопрос возник в Турции. Однако этих обоснований было недостаточно для освобождения четырех вилайетов - Эрзрум, Трабзон, Ван, Битлис.

Лондонская конференция не завершилась подписанием договорам, но она фактически означала отказ от претворения в жизнь Севрского договора.

Hasmik Simonyan - ***The reflection of Western -Armenian political thought in London conference.*** - London conference took place from 21 to 16 March 1921. Simultaneously Russian- Turkish conference took place in Moscow which gave Turkey a chance to take more active steps.

Poghos Nubar stated in his speech that Sevres Treaty had been signed with Turkey by allies not by Russia and that Armenian Issue had arisen in Turkey. That reasoning wasn't enough to free four vilayets: Erzurum, Trabzon, Van and Bitlis.

No treaty was signed in London conference, and it actually meant the refusal to bring Sevres Treaty to life.

[30] ***Պօղոսեան Ս.,*** նշվ. հոդվ., էջ 43¬8:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՐԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Արևմտահայերի ազգային սահմանադրությունը, որը թուրքական կառավարության (Բ.Դռան) կողմից վավերացվեց 1863 թ., ըստ էության իրական Սահմանադրություն չէր: Այն կանոնադրություն էր, որով կարգավորվելու էին արևմտահայերի՝ կրթության, մշակույթի, եկեղեցու հետ կապված խնդիրները, միաժամանակ Ազգային Սահմանադրությամբ սահմանափակվելու էին նաև ամիրաների կամայականությունները: Այդ ամենով հանդերձ, Ազգային Սահմանադրությունը չէր երաշխավորում արևմտահայերի ազգային և անձնական իրավունքների անձեռնմխելիությունը: Չնայած զգալի թերություններին, Ազգային սահմանադրությունը նոր և առաջադիմական երևույթ էր արևմտահայ կյանքում: Նրա նպատակն էր ավելի ժողովրդավարական հիմքերի վրա դնել Գ.Պոլսի պատրիարքարանի գործունեությունը, կարգավորել **Օսմանյան պետության** և արևմտահայության փոխհարաբերությունները:

Բանալի բառեր.Արևմտայերի ազգային Սահմանադրություն, Օսմանյան կայսրություն, պատրիարք, Գերագույն Ժողով, Հոգևոր ժողով, Ազգային ընդհանուր ժողով, Սահմանադրական հանձնաժողով, կանոնադրություն, թուրքական կառավարություն, հայ մտավորականություն**:**

19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի կարևորագույն երևույթներից մեկն Արևմտահայերի Ազգային Սահմանադրությունն է: Կյանքի, պատվի և ինչքի անապահովությունը, կրոնական անհանդուրժողականությունը, տնտեսական հալածանքները, վարչական հոռի համակարգը, աղաների ու բեկերի շահատակությունները, ազգային կենսունակության չարաչար սպանումը, քաղաքացիական իրավունքների ոտնահարումն արևմտահայության համար դարձան Արևմտահայերի Ազգային Սահմանադրությունը կյանքի կոչելու հիմնական ազդակները: Եվրոպական այն պայմանագրերը, որոնք անդրադարձել են Թուրքիայի բարենորոգումների հարցին, վկայում են, որ Թանզիմաթում մեծ դեր են խաղացել Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի դեսպանները, ովքեր գտնում էին, որ անխոհեմ քաղաքականություն և մեծ սխալ էր պետությունների կողմից թույլ տալ, որ թուրքական կառավարությունն ինքն իր կամքով ներմուծի ու գործադրի խոստացված բարենորոգումները, որոնք միշտ մնում էին թղթի վրա՝ իբրև մեռած տառ: Թանզիմաթում քրիստոնյաներին վերաբերող տրամադրությունները հետևյալներն էին. <<Իւրաքանչիւր քրիստոնեայ կամ ոչ-մահմեդական հասարակութիւն պարտաւորվում է մի որոշ ժամանակի ընթացքում իր միջից ընտրուած յանձնաժողովի միջոցով, Բ.-Դրան հսկողութեան տակ և իմ բարձր բարեհաճութեամբ, քննել իր ունեցած առանձնաշնորհումներն եւ արտօնութիւնները, սահմանել ժամանակի և քաղաքակրթութեան պահանջած բարենորոգումներն եւ հաղորդել Բ. Դրան>>[1]:

Հայերը, իրենց ներքին ազգային, հասարակական և կրոնական գործերը կարգավորելու նպատակով, 1850-1860-ական թթ. մտան սահմանադրական պայ-

[1] ***Սարուխան***, Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), Ա հատոր, Թիֆլիս, 1912, էջ 14:

քարի հորձանուտ: Սուլթան Մէջիդի առաջին հրովարտակից (1854 թ. օգոստոսի 26) անմիջապես հետո, Գերագույն ժողովը կազմեց մի մարմին՝ <<Սահմանադրական հանձնաժողով>> անունով, որին հանձնարարվեց կազմել նոր <<Ազգային կանոնադրություն>>: Հանձնաժողովը բաղկացած էր 9 հոգևորական և 12 աշխարհիկ անձանցից[2]: Ուսումնական խորհրդի անդամների մեծ մասը մասնակցություն ունեին այդ հանձնաժողովի աշխատանքներին և նրա գլխավոր գործող ոգին էին համարվում: Նրանց ուժերով փոփոխված 1857թ. կանոնադրությունը վերջնականապես խմբագրված տեսքով 1859թ. դեկտեմբերին քննության առնվեց Հոգևոր և Գերագույն ժողովների կողմից: Ազգային սահմանադրության հեղինակներն էին Ն. Պալյանը, Ն. Ռուսինյանը և Գր. Օտյանը. մասնավորապես երախտիքի է արժանի Ն. Պալյանը, որը Ն. Ռուսինյանի բացատրությամբ, «իր ձեռքը գծագրեց ազգային կանոնադրության հիմնական սկզբանց այն հոյակապ հատակագիծը, որ ետքերը խմբագրաց գրչին տակ ձևերու վայելուչ փոփոխություն կրած է»[3]:

Կանոնադրությունը կազմված էր ժողովրդական ոգով և առաջադիմական սկզբունքներով, սակայն այն որոշ շերտերի համար չափազանց անընդունելի էր, և, անշուշտ, չուշացավ խիստ դժգոհությունը: Ամիրաների և կղերականների մի խումբ հակառակվեցին նոր կանոնադրությանը: Նրանց պարագլուխները, իբրև, կրոնի և ազգային ավանդույթներին հակառակ կանոններ էին գտել նրանում: Գևորգ պատրիարքը, ով հակասահմանադրական ամիրաների կամակատարն էր, հրաժարական տվեց: 1860 թ. մայիսի 24-ին, պատրիարք Սարգիս Գույումճյանի նախագահությամբ Ընդհանուր ժողովը վավերացրեց կանոնադրությունը[4], որը Ռուսինյանը մկրտեց <<Ազգային Սահմանադրություն>> անունով:

Դեռևս 1877 թվականին եվրոպացի իրավաբան Մ. Գ. Ռոլեն-Ժեկմենը իր նշանավոր <<Հայաստանը, հայերը և դաշնադրությունները>> (բնագիրը՝ ֆրանսերեն, թարգմանվել է ռուսերեն՝ Մոսկվայում 1896 թվականին) [5] աշխատության մեջ նկատում է, որ արևմտահայերի սահմանադրությունը կառուցված է ժամանակակից եվրոպական սահմանադրությունների կառուցվածքով: Նրա մասն են կազմում նախաբանը, կենտրոնական ու գավառական վարչությունները, ժողովրդական ներկայացուցիչների տեղական՝ թաղերի և թեմական ժողովները, ընտրական իրավունքը, կրթությունը և անգամ սահմանադրության վերաքննությունը կարգավորող ազգային խորհուրդների գործունեության սահմանումը[6]: Ռոլեն-Ժեկմենն իրավացիորեն կարծում է, որ <<Կանոնադրությունը կրում է սահմանադրութիւն մեծադղորդ կոչումը, ուր որ իսկապէս աւելի յարմար և իր սովանդակութեան աւելի համապատախան կը լինէր անուանել պարզապես <<Կանոնադրութիւն հայ համայնքի>>, որի նպատակն ուրիշ բան չէ, եթէ ոչ կազմակերպումն կիսով չափ աշխարհական և կիսով չափ կրօնական մի հասարակութեան,

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

[3] ***Ալպոյաճյան Ա.***, Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը.–«Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 331:

[4] Տե՛ս ***Խտռտյան Ա.***, Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2008, թիվ 2, էջ 83:

[5] Տե՛ս ***Ролен - Жекмен М. Г.***, Армения, армяне и трактаты.– В кн.: Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. II-е изд. М., 1896.

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 18:

որի իրաւունքները դադարում են ճիշտ այնտեղ, որտեղ սկսում են մի իսկական պետութեան իրաւունքները…>>[7]:

1860 թ. մայիսի 24-ին ընդունված Ազգային Սահմանադրության նպատակն էր կազմակերպել կրոնական և աշխարհիկ մի հաստատություն: Ազգային Սահմանադրությունը, որպես քաղաքական փաստաթուղթ, կարգավորում էր ազգային, հոգևոր, կրթական գործընթացները: Այն կազմված էր ժողովրդավարական սկզբունքներով, բաղկացած էր ընդարձակ առաջաբանից և 150 հոդվածներից:

Ազգային Սահմանադրության հիման վրա 1860 թ. օգոստոսի 25-ին Կ.Պոլսում գումարվեց Ազգային ընդհանուր ժողով[8]: Ժողովին մասնակցում էին 120 ընտրված պատգամավորներ և նրանց այսպես կոչված անդամակիցները՝ թվով 60 (սահմանադրության 9-րդ հոդվածով՝ մտավորականներ, ազգային, պետական, կրթական, հոգևոր և պաշտոնյա հայեր, առանց ընտրության, ինչպես բոլոր եպիսկոպոսները, բարձրաստիճան պետական պաշտոնյաները և այլն): Ընդհանուր ժողովի առաջին[9] ատենապետ ընտրվեց Սահմանադրության հիմնադիրներից մեկը՝ Ս. Վիչենյանը (Սերվիչեն): Վերջինս անձամբ այցելել էր Երուսաղեմ: Ծանոթանալով ընտրական կարգին՝ նա պահանջում էր, որ Երուսաղեմի պատրիարքն էլ, Սահմանադրության համաձայն ազգային երեսփոխաններից ընտրվի և ոչ թե Երուսաղեմի վանքի Միաբանությունից, ինչպես ցանկանում էին պատրիարքն ու իր կուսակիցները: Անհամաձայնությունը վերաճեց բուռն վեճի: Սարգիս պատրիարքը մերժեց ազգային ժողովի որոշումները (1861 թ. հուլիսի 12) և նրան հակակշիռ միմիայն հոգևորականներից բաղկացած համագումար-ժողով հրավիրեց և սկսեց խառնակություններ տարածել ժողովրդի շրջանում: Կառավարության միջամտությամբ Ազգային ժողովի աշխատանքները դադարեցվեցին:

Սահմանադրության վերաքննության համար հոդված 150-ում ասվում է, որ. <<Սահմանադրութեան վերաքննութիւնը Ազգին համար անընդունելի է, երբ հիմնական սկզբանց տրամադրութեանցը համաձայն չըլլայ, այն սկզբանց, որոնցով ապահովեալ են Ազգային իրաւունքները, իրաւունք, որոնց վրայ ազգն անգամ չունի իշխանութեան տնօրէնութիւն, զի միանգամայն պարտիք են>>[10]:

Երկարատև պայքարից հետո, վերջապես, 1863 թ. մարտի 17-ին կառավարությունը, ի գործածություն պատրիարքարանին, հանձնեց վերաքննված և իր հաստատած սահմանադրությունը: Վերաքննված սահմանադրությունը Ազգային ընդհանուր ժողովն ընդունեց 1863 թ. մարտի 20-ին: Փաստորեն, Ազգային Սահմանադրության ընդունումն արևմտահայ ժողովրդավարական ուժերի հաղթանակն էր հետադիմական ուժերի դեմ: Հայոց պատրիարքարանի կողմից 1863 թ. առաջին անգամ հայատառ թուրքերեն և հայերեն հրատարակված փաստաթղթում թուրքերեն բնագրի ճակատամասում գրված է. «Նիզամնամէի միլլեթի էրմենեան (Հայ ազգային կանոնադրություն)», իսկ հայերեն տարբերակում՝ «Ազգային սահմանադրություն հայոց», այսինքն հայերեն թարգմանությունը չի համապատասխանում թուրքերեն բնագրին: Ուրեմն՝ թուրքական պետության համար այդ փաստաթուղթը հայոց պատրիարքարանի, առավելագույնը՝ Օսմանյան

[7] Տե՛ս ***Մարուխան***, նշվ. աշխ., էջ 17£

[8] Տե՞ս ***Մաղաքիա արք.Օրմանյան***, Ազգապատում, հատ.Գ, Բ հրատ., Էջմիածին, 2001, էջ 4685:

[9] Ազգային ժողովն ուներ 3 ատենապետներ, որոնք ընտրվում էին Ընդհանուր ժողովի կողմից:

[10] Տե՛ս ***Մարուխան***, նշվ. աշխ., էջ 27:

կայսրության հպատակ հայ ազգի կանոնադրությունն էր: Չնայած այն հիմնված էր սահմանադրական սկզբունքների վրա, բայց հիմնական, մայր օրենք չէր:

1863 թվականին թուրքական իշխանությունների կողմից Ազգային Սահմանադրության վավերացումը տեսականորեն նշանակում էր, որ պետությունն այդ փաստաթղթով ուրվագծված շրջանակներում պարտավորվում է սահմանափակել իր իրավունքները և ընդունում հայ համայնքի ներքին գործերը տնօրինելու իրավունքը: Վավերացված Սահմանադրությունը բաղկացած էր հիմնական սկզբունքներից և 99 հոդվածներից: Այստեղ նվազեցված էր եկեղեցու, պատրիարքի և հոգևորականության դերն Ազգային ժողովում: Այս իրողությունը, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Խառատյանը, արտացոլում էր միլեթներում (հայ, հույն, հրեա) եկեղեցու ազդեցությունը թուլացնելուն և ապա վերացնելուն ուղղված՝ օսմանիզմի գաղափարախոսության նպատակը, այն է՝ այդ հանրությունները հեռացնել իրենց դավանություններից և նախապատրաստել նրանց օսմանյան, մահմեդական զանգվածի մեջ ձուլելու գործը[11]:

Արևմտահայերի 1863 թ. Ազգային Սահմանադրությունը հայոց նոր պատմության ժամանակաշրջանի նշանակալի երևույթներից է, որը ժամանակի հոլովույթում արժանացել է ամենատարբեր գնահատականների: <<Պետութեան համար այս օրէնքը, կամ կանոնադրութիւնը Հայոց Պատրիարքարանի, առ առաւելն Թուրքիոյ հայ ազգի կանոնադրութիւնն է>>[12], - վկայում է Ատոմը:

Նշենք, որ <<Սահմանադրություն>> անվանումն իրականում չէր համապատասխանում մերօրյա սահմանադրական իրավունքի ըմբռնմանը: Ներկայումս սահմանադրականության հայեցակարգի համաձայն՝ սահմանադրության ընդունումը նպատակ է հետապնդում ուրվագծել իշխանության իրականացման սահմանները, սահմանափակել դրանք որոշակի շրջանակներով, որից դուրս գալը կդիտվեր իբրև կամայականություն և քաղաքացիների իրավունքների ոտնահարում:

Արևմտահայերի Սահմանադրությունը մերթ գերագնահատվել է՝ ազգային ներքին կյանքը կարգավորող կանոնադրությունից բարձրացվելով Սահմանադրության աստիճանի, մերթ էլ թերագնահատվել է նրա էությունը՝ որակվելով իբրև <<ոչինչ չարժեցող թղթի կտոր, սայլի քառակուսի անիվ>>, <<ազգային եկեղեցական կարկատան>> և այլն: Ազգային Սահմանադրությանը շատ դիպուկ գնահատական է տվել Ատոմը. <<Ազգային օրէնքի մէջ տիրող ոգին է սահմանադրութիւնը, վարչական ապակեդրոնացում, աշխատանքի բաժանում, բացարձակ աշխարհականացում, փոխադարձ պարտք եւ իրաւունք, պատասխանատուութիւն>>[13]:

Այսպիսով, Ազգային Սահմանադրությունը հայ ժողովրդի արևմտյան հատվածի ներքին կյանքը կարգավորելուն ուղղված գործուն միջոց էր: Նրա բացթողումն այն էր, որ Սահմանադրության մեջ որևէ երաշխիք չկար արևմտահայերի անձնական իրավունքների պաշտպանության մասին: Ինչ վերաբերում է վարչական կախվածությանը, ապա բոլոր գործառույթները վերջիվերջո կախում ու-

---

[11] Տե՛ս ***Խառատյան Ա.***, Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին: Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2008, թիվ 2, էջ 87:

[12] Ատոմ, Ազգային սահմանադրութիւնը. գիծեր մեր մշակույթի պատմութենէն, Կ.Պոլիս, 1914, էջ 7:

[13] Նույն տեղում, էջ 37:

նեին Բ.Դռան բարի կամքից, որն էլ հասարակական ուժի միակ տերն էր: Ազգային Սահմանադրության <<Հիմնական սկզբունքներ>> բաժնում ասվում է. <<Ազգին ամեն մէկ անհատը առ Ազգը պարտաւորութիւններ ունի.Ազգնալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի. դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգէն և Ազգն անհատներէն>>[14]:

Ինչպես 1860 թ., այնպես էլ 1863 թ. Սահմանադրությունները հանդես էին գալիս ոչ միայն որպես Կ. Պոլսի, այլև Արևմտահայաստանի և ամբողջ Թուրքիայի հայ ազգաբնակչության կրթական, լուսավորական, մշակութային կյանքը իրավականորեն կարգավորող փաստաթղթեր: Ըստ Սահմանադրության՝ Ազգային Ընդհանուր ժողովը (երեսփոխանական ժողով) ընտրվում էր ամբողջ ազգի կողմից իբրև օրենսդիր մարմին: Կազմվում էր Ազգային կենտրոնական վարչություն՝ իր քաղաքական (քաղաքացիական) և կրոնական ժողովներով: Պատրիարքը և այս երկու ժողովները ներկայացնում էին գործադիր իշխանությունը: Այս վերջինն իր իրավասություններն իրականացնում էր ազգային խորհուրդների (ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի) և հոգաբարձությունների (ելևմտից, կտակաց, հիվանդանոցի) միջոցով: Պատրիարքը հանդես էր գալիս որպես Ազգային ժողովի նախագահ:

Սահմանադրությունում ասվում է. <<Պատրիարքը Ազգային ժողովոց նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ: Պատրիարքը իրաւունք չունի ազգային ժողովները կամ խորհուրդները ինքնին լուծելու>>[15],-ասված է Ազգային Սահմանադրությունում: Պատրիարքից կարելի է զանգատվել և նրան պաշտոնանկ անել, եթե նա Սահմանադրության կանոններին հակառակ գործի: Առհասարակ, 1860 թ. Սահմանադրության համեմատ պատրիարքի իշխանությունը շատ էր սահմանափակված 1863 թ. տարբերակում:

Անշուշտ, 1860 թ. և 1863 թ. Սահմանադրությունների միջև կան զգալի տարբերություններ: Սահմանադրության նախնական (1860 թ.) տարբերակում նախատեսված էր 150 հոդված, Ազգային ժողովի պատգամավորների թիվը՝ 220: Ընդհանուր ժողովը տեղի է ունենում կանոնավորապես, ամեն տարվա մարտ ամսին, իսկ արտակարգ պայմաններում կարող են հրավիրվել արտահերթ նիստեր: Վերաքննված սահմանադրության հոդվածների թիվը հասցվել է 99-ի, Ազգային ժողովի պատգամավորների թիվը 220-ից իջեցվել է 140-ի, ժողովին մասնակցող անդամակիցների թիվը չպետք է անցներ 180 հոգուց: Երկու Սահմանադրություններում էլ ոչ համամասնաբար է սահմանված Կ. Պոլսի և գավառահայ բնակչությունների ներկայացուցչությունը: 1860 թ. Սահմանադրությամբ Կ. Պոլսի 200 հազարանոց համայնքը ընտրում է 220 երեսփոխան, որից 160-ը՝ Կ. Պոլսից, 60-ը՝ 2 միլիոնանոց գավառներից[16]: 1863 թ. Սահմանադրությամբ՝ երեսփոխանների թիվը հասնում էր 140-ի, 100-ը՝ Կ. Պոլսից, 40-ը գավառներից[17]: Նախատեսված էր սովորական ընդհանուր ժողովը գումարել երկու տարին մեկ անգամ[a] երկու ամիս տևողությամբ, իսկ արտակարգ նիստեր գումարելու համար ամեն անգամ նախօրոք պետք է տեղեկացվեր Բարձր Դռանը, վերջինիս հավանությունն ստանալուց հետո միայն կարելի էր հրավիրել նիստերը:

---

[14] Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1860, էջ 3:

[15] Նույն տեղում, էջ 13:

[16] Նույն տեղում, էջ 10:

[17] Ազգային սահմանադրություն հայոց, Կ. Պոլիս, 1863, էջ 39:

Ինչպես նկատելի է երկու Սահմանադրությունների համեմատական վերլուծությունից՝ 1863 թ. Սահմանադրության մեջ, նախորդի համեմատությամբ, ավելի է նվազեցվել եկեղեցու, պատրիարքի ու հոգևորականության դերը Ազգային ժողովում: Հոդված 18-ում կարդում ենք. <<եթէ Ս. Երուսաղէմի պատրիարքը Սուրբ Երուսաղէմի վանուց կանոնագրին հակառակ վարուի, ամբաստանութեան տակ կընկնի>>[18]: Նմանապես, 1860 թ. Սահմանադրությամբ պատրիարքը իրավունք ուներ վիճարկել ազգային ժողովների որոշումները և վերաքննել խնդիրը: Առանձին հոդվածներ վերաբերում էին պատրիարքին պաշտոնազրկելուն կամ պաշտոնազրկումն արգելելուն (պատրիարքին, եկեղեցիներին, վարժապետներին և այլն):

1863 թ. Սահմանադրության մեջ նորություն էր Երուսաղեմի պատրիարքի կարգավիճակի, Ազգային վարչության հետ նրա փոխհարաբերությունների և այլնի կանոնակարգումը (զետեղված են հոդվ. 17-23): Ամրագրվել է Երուսաղեմի պատրիարքի <<ներսեն>> ընտրակարգը, որը զգալիորեն զիջում էր կրոնական պահպանողականությանը: Հիմնավորման համար մեջբերենք հոդված 22-ը, որտեղ ասվում է. <<Ս. Երուսաղէմի պատրիարքը ընտրուելու անձը գոնէ երեսուն եւ հինգ տարին լրացուցած եւ ի ծնէ Օսմանեան Տէրութեան հպատակ, Միաբանութեան եպիսկոպոսներէն կամ վարդապետներէն պէտք է ըլլայ միանգամայն Միաբանութենէն զատուած մէկը պէտք չէ ըլլայ>>[19]:

Անտարակույս, 1863 թ. Սահմանադրությունն իր ազգային արժեքով ու ազատականության չափանիշներով զիջում էր 1860 թ. Սահմանադրությանը: 1863 թ. Սահմանադրության մեջ, ինչպես տեսանք, առավել ընդգծված է նրա կանոնադրական բնույթը, ընդարձակված է Օսմանյան տերությունից ազգի կախման ու ենթարկվածության իրավական հարթությունը:

1863 թ. վավերացված Սահմանադրությունը գործեց մինչև 1866 թ., երբ խորը տարաձայնություններ առաջացան ազգային ժողովների, ինչպես և նրանց ու պատրիարքի միջև: Պատրիարքն հրաժարական տվեց, որից հետո խնդրին միջամտեց Բ. Դուռը և դադարեցրեց Սահմանադրության գործածությունը:

Սահմանադրությունը բերեց նաև կարևոր օգուտներ: Այն առաջ մղեց հայ մտավորական խավի վերածնունդը: Հասարակության այդ լայնախոհ հատվածը հայ ազգի փրկությունը փնտրում էր դպրոցի, եկեղեցու, վանքերի, մամուլի, թատրոնի մեջ: Հատկապես անգնահատելի նշանակություն ունեցավ Սահմանադրության այն սկզբունքը, որը թելադրում էր անվճար ընդհանուր կրթություն տալ հայ երկսեռ երեխաներին՝ առանց դասակարգային և հասարակական դիրքի խտրության: Ինչպես <<Պոլոժենիեն>>, այնպես էլ թուրքահայոց սահմանադրությունը, լինելով հայության եկեղեցական կյանքը կանոնավորող կանոնակարգեր, միաժամանակ հանդիսացան ազգային-եկեղեցական առաջադիմության խարիսխներ: Այդ բոլորը նպաստեցին հայոց ազգային ինքնագիտակցության բարձրացմանը[20]:

Երիտթուրքական հեղափոխությունից շատ չանցած հայոց Ազգային Սահմանադրությունը վերացնելու փորձերի կապակցությամբ ակադեմիկոս Հր. Սի-

[18] Ազգային սահմանադրութիւն, Կ. Պոլիս, 1860, էջ 13:

[19] Նույն տեղում, էջ 14:

[20] ***Միմոնյան Հ.***, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք երրորդ, Երևան, 2009, էջ 863:

մոնյանը հանգամանորեն անդրադառնում է այդ փաստաթղթին, ներկայացնում նրա բոլոր բաժինների բովանդակությունը, տալիս անհրաժեշտ գնահատականներ: Այսպես՝ չժխտելով այն օգտակար դերը, որ Սահմանադրությունն ունեցել է թուրքահայոց կյանքում, նա միաժամանակ ընդգծում է, որ այն շատ պակասավոր էր: Սահմանադրությունը քիչ թե շատ արդյունավետ գործում էր միայն Կ. Պոլսում և մեծ դժվարությամբ, կիսատ-պռատ էր կիրառվում բուն երկրում՝ Հայաստանում: Դրա պատճառը, հեղինակի կարծիքով այն ձախորդ հանգամանքներն էին, որոնց մեջ ապրում էին թուրքահայերը: Մյուս կողմից՝ Կ. Պոլսի հայությունը չէր հասկանում գավառի իր եղբորը, չէր ապրում նրա ցավերով ու հոգսերով[21]: Սահմանադրության մյուս մեծ պակասությունը հիմնական չարիքի դեմ նրա անուժ լինելն էր, այլ խոսքով՝ Ազգային Սահմանադրությունը զուրկ էր քաղաքական-պետական իրավունակությունից:

Արևմտահայերի Ազգային Սահմանադրությունը վերացվեց 1916 թ. և վերականգնվեց Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո՝ 1919 թ.: Լոզանի կոնֆերանսից (1922 թ., նոյեմբերի 20–1923 թ., հուլիսի 24) հետո Ազգային Սահմանադրությունը, ինչպես և Թուրքիայի բոլոր հպատակ փոքրամասնությունների կանոնադրությունները, վերացվեցին:

Карине Егиазарян, Марине Геворгян- ***Национальная Конституция западных армян*** .- Национальная Конституция западных армян, которая была ратифицирована турецким правительством (О. Двери) в 1863г., по сути не являлась настоящей Конституцией. Это был статут, которым должны были регулироваться вопросы, связанные с образованием, культурой, церковью, в то же время Национальной Конституцией ограничились бы своенравности амир. При всем этом, Национальная Конституция не гарантировала неприкосновенность национальных и личных прав западных армян. Несмотря на большие недостатки, Национальная Конституция была новым и прогрессивным явлением в жизни западных армян. Его целью было поставить деятельность патриархата Константинополя на более демократические основы, урегулировать отношения Османского государства и западных армян.

Karine Eghiazaryan, Marine Gevorgyan - ***The national constitution of Western Armenians***. - The national constitution of Western Armenians, which was ratified by Turkish government (by O. Door) in 1863, in fact wasn't the real Constitution. It was a statute which would regulate issues related to education, culture and church of Western Armenians, at the same time it would limit amiras' contrariness. With all this, National Constitution didn't guarantee the integrity of national and personal rights of Western Armenians. Although big drawbacks, the National Constitution was a new and progressive phenomenon in Western Armenians' life. The aim of which was to put the activity of Constantinople patriarchate on more democratic basis, to regulate the relations of Ottoman state and Western Armenians.

[21] Տե՛ս նույն տեղում:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՀԱՏ–ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ / ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ /

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՐՈԲՅԱՆ

Պատմական ճանաչողությունը ապահովվում է պատմության շարժիչ ուժերի հետազոտմամբ: Այս իմաստով էլ կարևորվում է պատմական անհատ – ժողովրդական զանգված հարաբերակցության մեթոդական մշակումը: Մեծ է եղել անտիկ, միջնադարյան, նոր և նորագույն ժամանակների հեղինակների հետաքրքրությունը պատմական նշանավոր անհատների և ժողովրդական զանգվածների գործունեության հանդեպ՝ կապված իշխանական կառույցի էվոլյուցիայի և նրանում անհատի դերակատարման, պատմության շարժիչ ուժի, պատմական առաջադիմության և պատմական հետադիմության հիմնախնդիրների հետ: Արդի սոցիոլոգիայի և պատմագիտության մեջ գերիշխում է պատմության պլյուրալիստական ըմբռնումը՝ հանրույթի պատմությունը և ապագան պայմանավորվում է մի շարք գործոններով, այդ թվում նաև պատմական անհատների և ժողովրդական զանգվածների՝ միմյանց զուգակշռող դերակատարումով:

Բանալի բառեր. պատմություն, ճանաչողություն, համաշխարհային, անհատ, ժողովուրդ, ամբոխ, մոնիստական, պլյուրալիստական, շարժիչ, գործընթաց:

Պատմական գիտության առջև կանգնած են բազմաթիվ հիմնահարցեր. ի՞նչ է պատմական գործընթացը, ի՞նչ գործոններ են պայմանավորում այն, ո՞րն է պատմական այս կամ այն ժամանակաշրջանում տվյալ հանրույթի հատկանշական կողմը, ի՞նչ է պատմական երևույթը, պատմական գործընթացները արդյոք կունենա՞ն ավարտ և այլն: Առանց այս հիմնահարցերի համակողմանի լուսաբանման անհնար է պատմության ընկալումը, շարադրումը, ինչպես նաև դասավանդումը: Պատմական գործընթացների միասնականությունն ու բազմակերպությունը բացահայտելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ճշգրտել, թե ո՞րն է պատմաբանի հայեցողության օբյեկտը, ուսումնասիրության առարկան: Այն ամենից առաջ առարկայական ու ենթակայական գործոններով /սոցիալ – տնտեսական, աշխարհագրական, աշխարհաքաղաքական, կրոնական, ազգային – հոգեբանական և այլ/ պայմանավորված պատմական իրադարձություններն են: Պատմությունը կերտվում է մարդկանց սուբյեկտիվ գործունեությամբ: Այս իմաստով էլ նշանավոր անհատները և ժողովրդական զանգվածները, լինելով պատմական գործընթացների սուբյեկտ, միաժամանակ հանդիսանում են պատմաբան – հետազոտողի ուսումնասիրության օբյեկտ: Պատմական գիտելիքն ընդհանրապես և պատմական տեքստը մասնավորաբար ամբողջանում են պատմաբան – հետազոտողի կողմից պատմությունը կերտող այդ սուբյեկտների ընկալմամբ:

Ներկայումս պատմության դասավանդման ձևերը ևս բազմաթիվ են. դասավանդում պատմության պարբերացմանը համապատասխան, դասավանդում պատմության հիմնական հասկացությունների հետազոտման ձևով, դասավանդում քաղաքակրթությունների հետազոտման ձևով և այլն: Պատմության մեջ նշանավոր անհատի և ժողովրդական զանգվածի փոխհարաբերության հետազո-

տումը հնարավորություն է ընձեռում պատմության դասավանդումը կազմակերպել պատմության փիլիսոփայական իմաստավորման ձևով:

Ամենից առաջ անհրաժեշտ է բացահայտել, թե ինչ պայմաններում են ծնվում պատմական անհատները, և տալ նրանց գործունեության անկողմնակալ գնահատականը՝ անկախ այն բանից, թե որ ազգին են նրանք պատկանում: Բնականաբար, ուսումնասիրողի վերաբերմունքը և գնահատականը պատմական այս կամ այն անհատի գործունեության նկատմամբ չի կարող միանշանակ լինել, քանի որ, օրինակ, Քեմալ Աթաթուրքը Թուրքիայի պատմության մեջ հերոս է, որի անվան հետ է կապվում թուրքական <<հրաշքը>>, նոր, հանրապետական Թուրքիայի հիմնադրումը, իսկ մեր ժողովրդի պատմության մեջ՝դահիճ ու ոճրագործ: Հետևաբար, պատմական անհատի գործունեության լուսաբանման ժամանակ հարկ է կարևորել և ելակետ ունենալ այն, որ.

1-ին- պատմական անհատները պատմական տվյալ ժամանակաշրջանի ծնունդ են, այսինքն պատմական գործընթացը առաջ է քաշում պատմական անհատին,

2-րդ – պատմական անհատները ներգործում են ոչ միայն սեփական երկրի, այլև՝ համաշխարհային պատմական գործընթացների վրա:

Մեր կողմից քննարկվող հիմնախնդրի հանդեպ հետաքրքրություն են դրսևորել դեռևս անտիկ հեղինակները՝ կապված իշխանական կառույցի էվոլյուցիայի և նրանում անհատի դերակատարման խնդրի հետ: Դեռևս Թուկիդիդեսը /Ք.ա. 5-4-րդ դարեր/ նշում էր, որ պատմությունը առանձին իրադարձությունների ամբողջությունն է, որը կերտվում է մեծ անհատների կողմից: Նա հեղինակներից առաջինն էր, ով գտավ, որ պատմագիրը պետք է փնտրի ճշմարտությունը՝ պատմական սկզբնաղբյուրների քննական վերլուծությամբ: Իսկ անտիկ հեղինակներից Պլատոնը, Արիստոտելը և Պոլիբիոսը նշանավոր անհատ – պետություն փոխհարաբերությունների համատեքստում քննարկեցին նաև ամբոխը՝ իբրև սոցիալական երևույթ՝ այն որակելով որպես <<հսկա գազան>>, որին հակադրեցին անհատի մտահայեցողությունն ու աշխարհայացքը:[22] Հույն հեղինակների մոտ մեծ մարդկանց կամքը և գործողությունները որակվեցին որպես պատմության շարժիչ ուժ:

Միջնադարում անհատի գործունեությունը կապվեց աստվածային նախախնամության հետ. մարդու ճակատագիրը /ֆաթում/ կանխորոշված է, հետևապես նրա գործունեության սահմանները և հնարավորությունները ևս կանխորոշված են ու սահմանափակ: Պատմական գործընթացները առաջ են մղում ոչ անհատը, ոչ էլ ժողովուրդը: Պատմության <<լոկոմոտիվը>> աստվածային նախախնամությունն է: Միջնադարյան պատմիչները մեծ մարդկանց կամքն ու նպատակները համարում էին դիտնանաս պատմության ընթացքին՝ վերջինս բացատրելով ոչ մարդկային, օբյեկտիվ ուժի՝ ճակատագրի գոյությամբ:

Հումանիզմը և լուսավորականությունը եկան հակադրվելու միջնադարյան սխոլաստիկային և խավարամտությանը՝ կրկին վերարժևորելով մարդկային անհատի գործունեությունը, ընդգծելով նրա բարձր հասարակական կոչումը, հաստատելով նրա ազատության, երջանկության, կարողությունները դրսևորելու

[22] Տես ***Семенов Ю.***,Философия истории, М.,2003,стр92.

և զարգացնելու անկապտելի իրավունքը: Միջնադարյան ճակատագրապաշտությանը, միապետության և ֆեոդալական կարգերի աստվածային ծագման վերաբերյալ կղերաֆեոդալական դոգմաներին լուսավորիչները հակադրեցին հասարակության զարգացման դիալեկտիկական ըմբռնումը՝ մարդկության պատմության զարգացման հիմքում դնելով մարդկային բանականությունը և աշխատանքը: Շ. Մոնտեսքիոն, Ժ. Ժ.Ռուսսոն, Սեն –Ռեալը, Ն.Մաքիավելին և այլք կարմիր թելի նման անցկացրին այն գաղափարը, որ պատմական գործընթացը դրսևորվում է պատմական իրադարձություններում, իսկ վերջիններիս հիմքում ընկած են մարդկանց գործողությունները:[23] Հետևապես պատմության ուսումնասիրությունը ոչ այլ ինչ է, քան մարդու կրքերի, կարծիքի, գործողությունների դրդապատճառների հետազոտում և առարկայական արժևորում: Պատմաբան – հումանիստ Սեն – Ռեալը պատմության իմացությունը համարեց մարդկանց գործողություններում պատճառահետևանքային կապերի իմացություն՝ միաժամանակ իրավամբ նշելով նաև, որ հասարակական միջավայրը ծնում է հասարակական կարծիքը և պայմանավորում անհատի գործողությունները: Ժ.Ժ.Ռուսսոն գտնում էր, որ մարդկային ամբոխը ոչինչ է առանց առողջ բանականությամբ օժտված անհատի, որ գոյություն ունի մարդկանց անհավասարությամբ պայմանավորված արմատական տարբերություն անհատի կողմից ամբոխն իրեն ենթարկելու և հանրույթը կառավարելու մեջ: [24]

Լուսավորական գաղափարները տարածում գտան 18-19-րդ դարերում նաև ռուսական պատմագրության մեջ. Ս.Տատիշչևը պատմության շարժիչ ուժ էր համարում <<մեծ մարդկանց բարի ցանկությունները>>, իսկ Ն.Կարամզինը առաջ էր քաշում պատմական էստաֆետի գաղափարը՝ պատմական գործընթացների հիմքում դնելով նշանավոր անհատների կամքն ու գիտակցությունը: Վերջինս իր աշխատությունները պարբերացնում էր՝ հիմք ունենալով ռուսական ցարերի ու կայսրերի գործունեությունը:

Պատմության մոնիստական ըմբռնումը դրսևորվեց նաև ռուս նարոդնիկության գաղափարախոսությունում. Պ.Լավրովը պատմական առաջադիմությունը անհնար էր համարում առանց քննադատորեն մտածող անհատի գործունեության, իսկ Ն.Շելգունովը համաշխարհային պատմությունն ընկալում էր որպես անհատի գործունեության պատմություն՝ արդեն 1870թ. նշելով, որ առաջադիմության կրողը, շարժիչ ուժը քննադատորեն մտածող անհատն է:[25] Նարոդնիկության տեսաբան Ն. Միխայլովսկին հանրույթը բաժանում էր երկու մասի՝ քննադատորեն մտածող անհատների և պասիվ մասի: Նա գտնում էր, որ պատմությունն ընթանում է ընդհանուր, հիմնական օրենքներով, բայց մարդու անկախությունը դրանցից ապահովվում է նրա գիտակցությամբ, որն էլ պատմությանը հաղորդում է առանձնակի երանգ ու բովանդակություն և պայմանավորում պատմական գործընթացների յուրահատկությունները:[26] Նույն գաղափարն էր առաջ քաշում Գ.Պլեխանովը <<Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջ>> աշխատությունում՝ միաժամանակ չանտեսելով ժողովրդական զանգվածի դերակատարումը պատմական գործընթացներում:

---

[23]Տես ***Семенов Ю.***,Философия истории, М.,2003,стр262. Տես նաև Макьявелли Н.,Государь, М., 1990,С.74.

[24] Տես ***Руссо Ж.Ж.,Трактаты,М.***,1969,С.82.

[25]Տես ***Шелгунов Н.В.***, Историческая сила критической личности, Соч.,Т.2,СПб,1896,С.414.

[26]Տես ***Михайловский Н.К.***, Герои и толпа, Соч.,Т.2, СПб,1896,С.89.

Խորհրդային–մարքսիստական պատմագրությունը ընդգծելով համաշխարհային պատմական գործընթացների միասնականությունը և պատմական անհրաժեշտության գաղափարը, պատմական անհատ – ժողովուրդ հարաբերությունը լուծում էր՝ գերապատվությունը տալով ժողովրդական զանգվածների գործունեությանը, իսկ նշանավոր անհատներին դիտարկում էր որպես պատմական իրադարձությունները արագացնողներ կամ դանդաղեցնողներ: Առաջ քաշելով դասակարգային պայքարի գաղափարը նշվում էր, որ սխալ է <<ժողովրդական զանգված>> հասկացությունը նույնացնել <<էթնոս>>-ի հետ, քանի որ առաջինը սոցիոպատմական օրգանիզմ է, որին բնորոշ են լայն քաղաքական շարժումները, իսկ երկրորդին՝ զուտ ազգային գաղափարը, էթնիկական ինքնագիտակցությունը: Նշվում էր, որ սխալ է նաև <<ժողովրդական զանգված >> հասկացությունը նույնացնել հանրույթի <<ստորին խավ>> հասկացությանը:

Պատմագիտության մեջ արդի փուլում դասական վոլյունտարիզմի հետևորդներ Կ.Փոփփերը, Միզես Լ. Ֆոնը և այլք, ժխտելով պատմական անհրաժեշտության գաղափարը, գտնում են, որ պատմական անհատը կարող է պատմական գործընթացների վրա ներազդել կամ փոխել դրանք՝ ժողովրդական զանգվածի նպատակներին համապատասխան, որ մարդկային բանականությունն ա-րարում է առավել բանական աշխարհ: Բայց մյուս կողմից էլ, նրանք իրենց աշխատությունների հաջորդ էջերում չեն կարողանում հիմնավորել ասվածը, ընդհակառակը, ակամայից հերքելով՝ հիմնավորում են պատմական գործընթացներում ժողովրդական զանգվածների առավել մեծ դերակատարումը:[27]

Արդի սոցիոլոգիայի և պատմագիտության մեջ հետազոտողների մեծ մասը /Հ. Նազարեթյան, Ժ.Բլոնդել, Ժ. Տոշչենկո, Հ.Լինդենբերգ, Յու. Սեմյոնով և այլք/, լուսաբանելով հանրույթի ապագայի խնդիրը, առաջ են քաշում պատմական գործընթացների պլյուրալիստական ըմբռնումը՝ վերջիններս պայմանավորելով գործոնների ողջ շարքով:[28] Նրանք նշում են, որ ճիշտ է, պատմական նշանավոր անհատներն իրենց բնավորության, հանճարի, կրքերի, թուլությունների կամ ուժի առանձնահատկություններով դառնում են իրադարձությունների սուբյեկտ, բայց նրանք որոշակի պատմական ժամանակահատվածում առաջ են քաշվում ժողովրդի միջից և նրա կողմից: Պատմական անհատի ձևավորման հիմքում ընկած են ժառանգականությունը, դաստիարակությունը և միջավայրը: Անհատը ծնվում և գործում է կոնկրետ պատմական պայմաններում, որոշակի սոցիալական միջավայրում, հետևապես գործում է դրանց համապատասխան: Պատմական անհատի դերը արտահայտվում է կոնկրետ պատմական իրադարձություններում, երևույթներում և գործընթացներում, ընդ որում նրա ազդեցությունն առավել մեծ է պատմական իրադարձության վրա, պատմական երևույթին տալիս է յուրահատկություն, իսկ գործընթացները կարող է արագացնել կամ դանդաղեցնել: Պատմական անհատի ներգործությունը հատկապես մեծ է քաղաքական կառույցի, զանգվածների տրամադրությունների ու գաղափարների վրա: Մարդկության ապագան ունի այլընտրանք, քանի որ պատմական իրադարձություններ-ը երբեք էլ նախասահմանված չեն, և բոլորն ունեն մասնակցություն պատմութ-

[27]Տես ***Поппер К.***, Нищета историцизма,М.,1993,С.55-56. Мизес Л.Фон,Теория и история. Интерпретация социально – экономической эволюции, М.,2001,С.139.

[28] ***Семенов Ю.***,Философия истории, М.,2003,стр382-383.

յունը կերտելու մեջ: Նշանավոր անհատների գործունեությունում դրսևորվում է ժողովրդի ստեղծարար ուժը: Պատմական անհատի տաղանդն ու խորաթափանցությունը քիչ են, նրա ներգործությունը մեծ է, երբ մեծ է նրա կապը հանրույթի հետ: Ինչպես ընտանիքը իր անդամներին չի բաժանում իրենից, այնպես էլ ժողովուրդը չի կառուցակազմվում առանց իր անհատների: Պատմական դարաշրջանի / էպոխա/ կերտողը ժողովուրդն է: Հետևապես սխալ է պատմական գործընթացներում պատմական անհատ – ժողովրդական զանգված հարաբերակցության մեջ այս կամ այն կողմին գերապատվություն տալը: Մարդկության առաջադիմությունը հավասարապես պայմանավորված է երկուսի դերակատարումով, որովհետև, եթե անհատը պատմության պատվանդանին է բարձրանում իր անձնական որակներին համեմատ, ապա ժողովուրդը կենսական բովանդակություն է հաղորդում նրա գործունեությանը: Եթե առաջնորդը կարողանում է իր գիտելիքով թափանցել մարդկության ապագան և ընդհանրացումներ կատարել՝ տեսնելով << թե անտառը և թե ծառերը>>, ապա ժողովուրդը դնում է նրա առաջ կենսական նշանակություն ունեցող խնդիրները և, դրանով իսկ, պայմանավորում անհատի գործունեության նպատակները: Մարդկության առաջադիմությանը համապատասխան մեծանում է ժողովրդի ստեղծարար ուժը: Եվ որքան բարդ պատմական խնդիրներ են ծառանում, այնքան ավելի մեծ ժողովրդական զանգվածներ են ընդգրկվում հասարակական վերափոխումների ոլորտ: Պատմության փորձը ցույց է տալիս, որ ժողովուրդը պատմական որոշ շրջանում կարող է մոլորվել, օրինակ՝ գերմանական ժողովուրդը նացիզմի շրջանում կամ խորհրդային ժողովուրդները՝ հիմարացած ստալինյան առասպելաբանությամբ: Բայց յուրաքանչյուր ժողովրդի մոտ վաղ թե ուշ սկսվում է արթնացումը: Եվ եթե ամբոխի տարերքն ավարտվում է պարտությամբ, ապա ժողովուրդը հաղթում է, երբ կազմակերպված է, և նրան ղեկավարում են գիտելիքով ու նպատակների հստակությամբ օժտված անհատները:

Сусанна Серобян - ***„Соотношение исторической личности и народной массы в истории (историографический очерк)”.***-Исторический прогресс обусловлен объективными и субъективными факторами. В данной статье рассматривается вопрос движущей силы истории. Автор освещает проблему монистического и плюралистического взгляда на историю. Будущее человечества имеет альтернативу, поскольку творцом истории является человеческий разум.

Susanna Serobyan - ***The balance beetween historical figure and the masses in history (historiographical article)*** - Historical progress due to objective and subjective factors.This article discusses the driving forces of history. The author spotlights the problem of monistic and pluralistic view of history.

The future of humanity has an alternative as the creator of history is the human has an alternative as the creator of history is hishistory is the human intelligence.

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. 70-80-ԱԿԱՆ ԹԹ.

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

XIX դ. 70-80-ական թվականները հայ ազգագրության պատմության մեջ բնութագրվում են որպես տարերային բանահավաքչության հաղթահարման, ազգագրական հարցարանների ստեղծման, հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում հավաքչական բուռն գործունեության ծավալման պարբերաշրջան: Հոդվածում ներկայացվում է Գ. Սրվանձտյանցի՝ որպես ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման բուռն վերելքի նախաձեռնողի ու կազմակերպչի գործունեությունը: Նրա առաջին մեծ ծառայությունը հայրենի գիտությանը «Գրոց ու բրոց» աշխատությունն էր, որը աննախադեպ ծրագիր-հարցարան էր: Մյուս մեծագույն ծառայությունը «Սասնա ծռեր» դյուցազնավեպի հայտնաբերումը, գրառումն ու հրապարակումն էր:

Մեծ էր նաև ազգագրագետ Գրիգոր Խալաթյանցի ավանդը հայ ազգագրական գիտության կայացման և զարգացման գործում: Հանգամանորեն ներկայացվում է նրա կազմած ծրագրի բովանդակությունը և կառուցվածքը, խաղացած դերը, ինչպես նաև նրա խմբագրած «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի նշանակությունը հայ ազգագրական գիտության պատմության մեջ:

Տրվում է նաև Խրիմյան Հայրիկի, Ղևոնդ Ալիշանի երկերի համառոտ բնութագիրը, հիշատակվում են ռուս և եվրոպացի ճանապարհորդների նոթերը, ժամանակի հայկական պարբերականներում տեղ գտած ազգագրական և բանահյուսական բնույթի հրապարակումները:

Բանալի բառեր. ծրագիր-հարցարան, բանահավաքչություն, ազգագրություն, բանահյուսություն, ավանդույթներ, ազգագրական լեզվաբանություն, պատմական հուշարձաններ

XIX դ. 70-80-ական թվականները հայ ազգագրության պատմության մեջ բնութագրվում է որպես տարերային բանահավաքչության հաղթահարման, ազգագրական հարցարանների ստեղծման, հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում հավաքչական բուռն գործունեության ծավալման պարբերաշրջան՝ ընդգրկելով ազգագրության և բանահյուսության բոլոր ճյուղերը, պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շրջանները, ինչպես նաև հայկական գաղթօջախները: Այս շրջափուլում է, որ ստեղծվեցին հայ ազգագրության առաջին ծրագիր- հարցարանները: Հայագիտության մեջ կան շրջանառվող կարծիքներ, որոնց համաձայն՝ Մ. Միանսարյանցի և Ալ. և Սրբ. Երիցյանի ուսումնասիրությունները համարվում են որպես հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարաններ[29]: Մ. Միանսարյանցի (1830-1880) ազգային, մշակութային, լուսավորական գաղափարները ամփոփված են նրա «Մտածութիւնք ազգային լուսավորութեան մասին» հրապարակախոսական հոդվածում: Այստեղ նա մի ծրագիր-հարցարան է ներկայացնում հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի բազմաբնույթ

[29] Տե՛ս ***Ս. Վարդանյան,*** Միքայել Միանսարյանց: Կյանքն ու գործը, Երևան, 2002, էջ 21, ***Լ. Вардanян,*** Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005, с. 307, ***Դ. Վարդումյան,*** Ազգագրություն // Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 926:

կողմերից միայն մտավոր, մշակութային, բարոյահոգեբանական առանձնահատկությունների համալիր հետազոտության առումով: Հարցերի պատասխանները, ըստ Մ. Միանսարյանցի, հնարավորություն կընձեռեն հետազոտողներին ազգային վերածննդի, լուսավորության, քաղաքակրթության, հայ ժողովրդի համախումբ կեցության առաջնահերթ խնդիրները քննելու և վերլուծելու մշակութաբանական առավել լայն տեսադաշտում: Այն չի կարելի «Ազգագրական հարցարան» դիտարկել ազգագրական երևույթների սահմանափակ թվով հարցերի ընդգրկման պատճառով: Մ. Միանսարյանցի «Քնար Հայկական» (1868) ժողովածուն իր բնագրագիտական որոշակի սկզբունքներով թերևս առաջին լուրջ փորձերից մեկն է, որի ուղենշած բազմաթիվ դրույթներ նպաստել են XIX դ. երկրորդ կեսին նոր սկզբնավորվող հայ բանագիտության ձևավորմանն ու զարգացմանը: Նույնը կարելի է ասել Ալեքսանդր և Սրբուհի Երիցյանների ուսումնասիրությունների վերաբերյալ: Ալ. Երիցյանը հրատարակեց «Ընդհանուր հարցեր հայոց բանանց և սովորութաց (Թիֆլիս, 1874), իսկ Սրբ. Երիցյանը՝ «Տոմար ընտանեկան (Թիֆլիս, 1884), սակայն այս աշխատանքներն ընդգրկում են ազգագրության սոսկ սահմանափակ բնագավառներ՝ ընտանիք, իրավական սովորույթներ, վիճակագրական տվյալներ և այլն, որոնք չունեցան գործնական կիրառություն: Դրանք չդարձան դաշտային ազգագրական նյութերի գրառման ծրագիր-հարցարաններ:

1.1. Գարեգին Սրվանձտյանց (1840–1892). ազգագրական և բանահավաքչական գործունեությունը: Հայ ազգագրության մեջ XIX դարի 60-80-ական թթ. նշանավորվում է Գարեգին Սրվանձտյանցի բեղմնավոր գործունեությամբ[30]: Ծնվել է 1840թ. Վանում, վախճանվել է 1892թ. Կ.Պոլսում: Նախնական կրթությունը ստացել է Վանում, ապա ավարտել է Վարագա վանքի ժառանգավորաց դպրոցը, եղել է տեղի ուսուցիչ, «Արծուի Վասպուրական» թերթի փոխխմբագիր, 1862-ին Մշո Ս. Կարապետ վանքին կից ժառանգավորաց վարժարանի տնօրեն-ուսուցիչ, 1863-1865-ին՝ «Լրատար Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթի խմբագիր, 1866-ին Կ.Պոլսում հրատարակել է «Նոր ընթերցարան» դասագիրքը, նրա նախաձեռնությամբ բացվել են դպրոցներ: 1867թ. Կարինում ձեռնադրվել է վարդապետ, 1867-69թթ. ստանձնել է Կարինի վարժարանների լիազոր-տեսչի պաշտոնը, 1869թ.՝ Մշո Ս. Կարապետ վանքի վանահոր փոխանորդ, 1872թ. մասնակցել է

---

[30] Տե՛ս ***Հայկունի***, Գ. Սրվանձտյանցի մահվան 10-ամյակի առթիվ // «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 272-281, ***Հ.Մ. Երեմյան***, Գ. Սրվանձտյանցի կյանքն ու գրական գործունեությունը // «Բազմավէպը», 1912, N 1, էջ 4-12, N 2, էջ 50-53, ***Մ. Շահնազարյան***, Գարեգին Սրվանձտյանցի մահվան 20-ամյակի առթիվ // ԱՀ, գ.XXIV, Թիֆլիս, 1913, էջ 112-116, գ. XXV, էջ 85-107, ***Վ. Բդոյան***, Հայրենիքը և հայրենասիրությունը Գարեգին Սրվանձտյանցի երկերում // «Էջմիածին» ամսագիր, 1944, փետրվար-մարտ, էջ 38-46, ապրիլ-մայիս, էջ 27-36, **նույնի՝** Գարեգին Սրվանձտյանցը որպես ազգագրագետ // «Էջմիածին ամսագիր», 1946, թիվ 7-8, էջ 37-42, **Հ. Անասյան**, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց // «Էջմիածին ամսագիր», 1950, մայիս-հունիս, էջ 29-32, ***Մ. Ղանալանյան***, Գարեգին Սրվանձտյանց, «Հայ նոր գրականության պատմություն», հ.3, 1964, էջ 555-588, **նույնի՝** Գարեգին Սրվանձտյանց // Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հ.1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, էջ 7-26, ***Է. Գոստանդյան,*** Գարեգին Սրվանձտյանց, Կյանքը և գործունեությունը, Եր., 1979), ***Ռ. Նահապետյան***, Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը // «Էջմիածին» ամսագիր, 2007, Ժ, էջ 110-122, **նույնի՝** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական գործունեությունը // Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 85-ամյակին նվիրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2007թ. նոյեմբերի 7-9), I պրակ, ՀՊՄՀ, Երևան, 2008, էջ 217-219:

Վանի «Միություն ի փրկություն» ազգային-ազատագրական խմբակի ստեղծմանը: Կ.Պոլսի պատրիարքի կոնդակով եղել է Արևմտյան Հայաստանի՝ Տիգրանակերտ, Մեբաստիա, Մարզվան, Թոքատ, Կամախ, Երզնկա, Դերջան, Կարին, Արաբկիր, Բաղեշ, Վան, Մուշ և այլ հայաբնակ վայրերում: 1879-81-ին եղել է Վանի հոգևոր առաջնորդի փոխանորդ, մասնակցել է «Սև խաչ» հայրենասիրական գաղտնի կազմակերպության աշխատանքներին, ապա վիճակավոր առաջնորդի պաշտոն է վարել Բաղեշում, Խարբերդում, 1886թ. Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, նշանակվել է Տրապիզոնի, ապա Ս. Կարապետի վանքի վանահայր, հետո պաշտոնաղրվել և առնվել է իշխանությունների հսկողության տակ: Ազգագրության ու հնագիտության բնագավառում կատարած բեղմնավոր գործունեության համար ընտրվել է Պետերբուրգի Կայսերական հնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ: Մկրտիչ Խրիմյանի (Հայոց Հայրիկ) հետ համագործակցությամբ և հոգևորականի կոչման բերումով նա տասնամյակներ ի վեր շրջեց հատկապես Արևմտյան Հայաստանում ու ստեղծեց արժեքավոր մենագրություններ՝ առաջնորդվելով ժամանակի գործիչներին հատուկ՝ «Ծանիր զքեզ» խորհրմաստ նշանաբանով: 1860-1861թթ. «Արծուի Վասպուրական» ամսաթերթի փոխխմբագիր եղած ժամանակ որպես նվիրակ և քարոզիչ Մ. Խրիմյանի հետ ճանապարհորդում է Արևելյան Հայաստանի գավառներում, որի ընթացքում գրում է մի շարք ազգագրական և հրապարակախոսական հոդվածներ. «Երևան քաղաք», «Տփղիս քաղաք», «Սյունյաց աշխարհ և Շուշի քաղաք» վերտառություններով: Վերջիններս հագեցած էին ազգագրական ուշագրավ տվյալներով: Արժանահիշատակ են հատկապես կրոնական ծեսերի, Թիֆլիսի հայ համքարությունների օրենքների, պատանեկան խաղերի, արհեստների ու առևտրի, տների կառուցվածքի, հայ, ռուս, պարսիկ և այլ ժողովուրդների կյանքից վերցված դրվագները: Ազգագրական բնույթի հոդվածներ է տպագրում նաև իր հրատարակած «Լրատար Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթում (1863-1865): Գ. Սրվանձտյանցը այդ տարերայնությունից շատ շուտ ազատվեց, երբ հրապարակ հանեց իր հռչակավոր «Գրոց ու բրոց» աշխատությունը:

Գ. Սրվանձտյանցը իր նախորդներից տարբերվում էր արդեն որպես ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման բուռն վերելքի նախաձեռնող ու կազմակերպիչ, որպես ազգագրական հարցարանի ստեղծման նախաձեռնող: Իր հայտնաբերած հայոց ազգային էպոսն էլ հենց միտք հղացրեց ազգագրական և բանահյուսական նյութերի գրանցման սկզբնապես տարերային, ապա համակարգված նախնական հարցարան հիմնելու, որպիսին հանդիսացավ նրա «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը (Կ.Պոլիս, 1874): Վերջինս նրա կարևորագույն գործն էր, սովորական գիրք չէր, այլ, ինչպես դիպուկ նկատել է ազգագրագետ Վ. Բդոյանը, երկու կարևորագույն հայտնագործությունների ժողովածու է[31]:

«Գրոց ու բրոց»-ը գիտական հանրությանը ներկայացվեց որպես նախադեպը չունեցող ծրագիր-հարցարան: Հանգամանքների բերումով Գ. Սրվանձտյանցը ճանապարհորդել ու շրջագայել է Արևմտյան Հայաստանի մեծ մասում և նկարագրել հայ ժողովրդի նյութական, կենցաղային, մտավոր-լուսավորական, սո-

[31] ***Վ. Բդոյան,*** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 16-17:

ցիալական ու քաղաքական վիճակը: 1870-ական թվականներից հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում նա ծավալեց հավաքչական բուռն գործունեություն՝ ընդգրկելով Պատմական Հայաստանի ազգագրական հիմնական շրջանները: «Գրոց ու բրոց» յուրօրինակ ծրագիրն իր «կառուցվածքով ու հարցերի առաջադրումով, իհարկե, միանգամայն տարբերվում էր Եվրոպայում և այլուր կազմվող ծրագրերից, որովհետև հեղինակն անծանոթ էր դրանց: Նա իր ծրագիրը, դարի քաղաքական ու մշակութային պահանջներին համաձայն, առաջադրել է բնատուր խելքի ու տաղանդի շնորհիվ: Այդ ծրագիրը՝ որպես հայ իրականության մեջ առաջին փորձ, ինչ խոսք՝ պարզ էր ու հասարակ, նախնական: Որպես առաջին, խիստ նախնական փորձ, հարցերը համակարգված, թեմատիկ խմբավորման ենթարկված ու համարակալված չէին, դրանք շաղկապված էին պատասխան նկարագրերի հետ: «Գրոց ու բրոց»-ը ընդգրկում էր հայ ազգագրության գրեթե բոլոր հիմնական խնդիրները՝ տեղագրություն, բնության նկարագրություն, տնտեսական կենցաղ (գյուղատնտեսական գործիքներ, փոխադրամիջոցներ, աշխատանքային պրոցեսներ), զբաղմունքներ (կաթնամշակություն, այգեգործություն, մեղվապահություն, արհեստներ, ժողովրդական բժշկություն), նյութական մշակույթ (տան կահկարասի, տարազ և այլն), ընտանեկան և հասարակական կենցաղ (ընտանիք, ամուսնություն, մանկան ծնունդ, հուղարկավորություն), հոգևոր մշակույթ (ժողովրդական հավատք, պաշտամունք և այլն): Այն հորդոր էր՝ ուղղված գավառական մտավորականությանը՝ զբաղվելու ազգագրությամբ և բանահավաքչությամբ: Թուրքական հարստահարությունների և քաղաքական հալածանքների դեմ մաքառելու տարիներին Սրվանձտյանցը պարզապես հայտնագործեց ազգագրությունն ու բանահյուսությունը նաև որպես հոգևոր զենք և դրանով ազգային զարթոնքի մի նոր խթան գտավ: «Ծանիր զքեզ»-ի գաղափարը նստած էր նշանավոր գործչի յուրաքանչյուր տողում: Այն լեցուն էր հայրենաբաղձ Սրվանձտյանցի մեղրանուշ խոսքերով, որոնք օգտագործվեցին հետևորդների կողմից: Այդ են վկայում ժամանակակից գրական ու գիտական նշանավոր գործիչները, որոնք խոստովանել են «Գրոց ու բրոցի» թողած ազդեցությունն իրենց վրա:

Այդուհանդերձ, թեև ընթերցողները և գիտնականները ընդունել են «Գրոց ու բրոց»-ի բարերար ու վարակիչ ազդեցությունը, բայց չեն նկատել, որ հեղինակն այն ներկայացրել է իբրև ծրագիր: Չեն նկատել նույնիսկ ակնհայտ փաստերը, որ գրանցված են «Գրոց ու բրոց»-ի էջերում: Ուստի, հաստատելու համար, որ գրքի ամբողջ կեսը հայ ազգագրության ծրագիր է եղել, բերենք հեղինակի հետևյալ խոսքերը. «Եվ որովհետև այս իմ գրական գործս իբրև հուշարար և ծրագիր կուզեմ ներկայացնել, բավականին ավելին չեմ ուզեր երկարել: … Ուր տարավ և ուր բերավ զիս այս նկարագիրը, զոր միայն իբր ծրագիր կը գրեմ: Դառնամ պիտի, դադրիմ պիտի, քանզի անսահման են այսպիսի վայրերը և անսպառ՝ անոնց վրա խոսվածներն ու երևցածները»[32]: Կամ՝ «Իմ փափագս եղած է, որ բանասերք ուշադրություն դարձնեն Հայաստանի մեջ բնակած հայոց ժողովրդական լեզվաց և այն լեզուներով հրատարակեն վեպեր, տրամախոսություններ և այլն. և այսպիսով սիրելի և ծանոթ կացուցանեն զանոնք գրագիտաց…»[33]: Կարևոր է հիշել, որ

[32] ***Սրվանձտյանց Գ.,*** Երկեր, հ.1, Երևան, 1978, էջ 79:

[33] Նույն տեղում, էջ 116:

հեղինակը «Գրոց ու բրոց»-ի տիտղոսաթերթի վրա դրոշմել է՝ «Ծրագրեաց Գ.Վ. Սրվանձտեանց»: Մակագրության այս ձևը չի կրկնվել հեղինակի մյուս գրքերից և ոչ մեկի վրա[34]:

Ազգագրագետ Ա. Պետրոսյանը «Հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանի խնդրի շուրջ» հոդվածում ջանք չի խնայում Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց»-ը ազգագրական նյութերի գրառման ծրագիր-հարցարան լինելը մերժելու համար, սակայն, բերված փաստերը համադրելով, ընթերցողը հաճախ հակառակ կարծիքի է հանգում, մանավանդ որ հեղինակը ևս գրում է. «Ակնհայտ է, որ Գ. Սրվանձտյանցը «Գրոց ու բրոց»-ի առաջին մասը դիտում է որպես ծրագիր՝ այն առաջարկելով ուրիշներին ևս»[35]: Այնուամենայնիվ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց»-ը չկարողացավ կատարել այն դերը, ինչ հետագայում վիճակվեց կատարել Գր. Խալաթյանցի հարցարանին:

Գ. Սրվանձտյանցի երկրորդ մեծագույն ծառայությունը «Սասնա Ծռեր» դյուցազնավեպի հայտնագործումը, գրառումը և հրապարակումն էր: 1873թ. Գ. Սրվանձտյանցը ժողովրդագրական նյութեր գրառելիս երջանիկ պատահականությամբ Մշո Առնիստ գյուղում գյուղի երեսփոխան Կրպեից (Կարապետ) գրի առավ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» դյուցազնավեպը, որը իրավամբ ճանաչվեց մեր ազգային հերոսական էպոսը: Հայ մշակույթի դարավոր պատմության մեջ կատարված մեծագույն հայտնագործումներից մեկն էր դա, որի համար մենք պարտական ենք Գ. Սրվանձտյանցի տարիների ուշադիր հետամուտներին և գործադրած անձանձիր ջանքերին: Սրվանձտյանցի պատումն ունի բացառիկ նշանակություն մեր մշակույթի պատմության մեջ: Այդ պատումի հետ է փաստորեն կապվում ոչ միայն հայ ժողովրդական վեպի հայտնագործման կարևոր փաստը, այլև հերքումը ոմանց այն թյուր ըմբռնման, ըստ որի հայ ժողովուրդն իբր չի ունեցել ազգային վեպ: Սրվանձտյանցի այս հայտնագործության արժեքը, սակայն, չի սահմանափակվում միայն դրանով: Այն աչքի է ընկնում նաև իր ամբողջականությամբ, բովանդակության ու ձևի արժանիքներով, գրառման հարազատությամբ[36]: Այն մինչ օրս գրառված ավելի քան 160 տարբերակներից ամենակատարյալն է ու անփոխարինելին: Դա հրաշք հայտնագործություն էր:

Այսպիսով, բացառիկ էին «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գիրքը (Կ. Պոլիս, 1874) և ազգագրագետի դերը հայ ազգագրության և բանագիտության ասպարեզում՝ ազգագրության և բանահավաքչության գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու առումով:

«Գրոց ու բրոց»-ին հետևեցին Սրվանձտյանցի «Հնոց-նորոց» (1874), «Մանանա» (1876), Թորոս Աղբար՝ երկու հատորով (1879, 1884), «Համով-հոտով» (1884) ժողովածուները: Մեծ էր դրանց դերը ազգագրությունը և բանագիտությունը գիտության վերածելու, բանահավաք կադրեր պատրաստելու գործում: Այդ աշխատությունները ծառայեցին որպես նպատակային բանահավաքչության ա-

---

[34]Մանրամասն տե՛ս ***Նահապետյան Ռ.,*** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը էջ 110-122, **նույնի՝** Գ. Սրվանձտյանցի ազգագրական գործունեությունը, էջ 217-219, **նույնի՝** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, թիվ 3, էջ 132-148:

[35] ***Ա. Պետրոսյան***, Հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարանի խնդրի շուրջ // ՊԲՀ, 2008, թիվ 2 (178), էջ 232:

[36] Տե՛ս ***Ա. Ղանալանյան,*** Գարեգին Սրվանձտյանց // Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, էջ 12-13:

ռաջին օրինակ, որին հետևելու էր գավառաբնակ մտավորականության մի ամբողջ սերունդ:

«Համով-հոտով»-ի զգալի մասը Վան-Վասպուրականի, Մուշ-Բուլանըխի և Արևմտյան Հայաստանի ուրիշ գավառների, քաղաքների ու գյուղերի, բնաշխարհի լեռների, ձորերի, անտառների, դաշտերի, լճերի, կղզիների, գետերի, աղբյուրների տեղադրության, բնակչության ազգագրական սովորույթների, շրջապատի բերդերի, վանքերի, ավանների ու շենների նկարագրությունն է: Այստեղ համապատասխան տվյալներ կարելի է գտնել Վան քաղաքի ու շրջակայքի, Բերկրիի, Խոշաբի, Աղբակի, Դատվանի, Նանըկանցի, Գոմքի, Կարմրակի, Նարեկի, Մոխրաբերդի, Ախավանցի, Արտոսի, Ոստանի, Առտերի, Ախթամարի, Շատախի, Մոկսի, Սպարկերտի, Կարկառի, Խլաթի, Արճեշի, Մանազկերտի, Խնուսի, Բաղեշի, Մոտկանի, Տատիկի և շատ ուրիշ վայրերի վերաբերյալ[37]: Այն նաև ընդգրկում է բանահյուսական տարբեր ժանրի գրառված նյութեր:

1876-ին «Գրոց ու բրոց»-ի երկրպագուները ընծա ստացան Գ. Սրվանձտյանից մի նոր ժողովածու՝ «Մանանա» խորհրդավոր խորագրով, որը մոտ երկու և կես անգամ ավելի մեծ ծավալ ուներ նախորդից[38]: Սա ազգագրական տեսակետից մի նոր երևույթ էր և՛ քանակի, և՛ որակի առումով: Գիրքը բաղկացած է մի քանի մասից. ա) «Հայրենեաց համն ու հոտը», որտեղ զետեղել է ազգագրական նյութերի մեծ մասը, բ) «Հայրենեաց վեպք և զրույցք» ուր տեղավորված են հեքիաթներն ու առակները, գ) «Երգք և նվագք հայրենեաց», որտեղ տեղ են գտել ձեռագրերից քաղված միջնադարյան բանաստեղծների մի շարք բանաստեղծություններ, ապա աշխարհիկ ժողովրդական երգեր, այնուհետև հանելուկներ, դյութանք, բժշկարան և այլն:

Գրքում բերված են Վանի Այգեստան թաղամասի տեղագրությունը, բնակիչների կյանքի հանգամանքները, ընտանեկան սովորությունները, մանկական խաղերը, ժողովրդական նախապաշարումները, ծածկագրերի, խաղերի, բարբառային անունները և այլն: Այս երկում նա հատկապես անդրադարձավ Վասպուրականի ժողովրդական երգերին, վիպական զրույցներին, հեքիաթներին: Նրա՝ հայկական հեքիաթներին տված այն բնորոշումը, թե բոլոր հեքիաթներն ունեն որոշակի ուղղվածություն և հաջող ավարտ, այսօր էլ միանգամայն ընդունելի են: Ըստ Սրվանձտյանցի՝ ժողովրդական երգն ու երաժշտությունը հայերի մեջ այնքան հին են, որքան և ինքը՝ ժողովուրդը:

«Մանանան» Վասպուրականի վերաբերյալ բանահյուսական-ազգագրական ուշագրավ հետազոտություն է, որը «Գրոց ու բրոցի» նման մեծ հետաքրքրություն առաջացրեց հայ իրականության մեջ: Սրվանձտյանցը քաղել է նյութը ժողովրդի բանավոր լեզվից՝ հարազատ մնալով տվյալ բարբառին, մշակել է այն ու դրել գիտական շրջանառության մեջ: Իր այս գործով Գարեգին Սրվանձտյանցը մեծապես հարստացրեց հայ գրական անդաստանը:

1878-ին Կ.Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ, երեք վարդապետ գործուղվեցին արևմտահայ գավառները, նրա բնակչության դժգոհության առիթները, կարիքները, ժողովրդագրական վիճակագրությունը տեղեկագրելու սուլթանական թուրքական պետությանը ներկայացնելու նպատակով: Այդ վար-

[37] Տե՛ս նույն տեղը, էջ 365-586:

[38] Տե՛ս նույն տեղը, էջ 117-364:

դապետներից մեկը Գ. Սրվանձտյանցն էր՝ իր ժողովրդի նիստ ու կացին քաջատեղյակ մի հայրենասեր մտավորական: Նրա ուղևորությունը տևեց երկու տարի՝ 1878-1880, որի ընթացքում շատ ավելի մոտիկից շփվեց հարազատ ժողովրդի հետ, ավելի լավ ճանաչեց նրա հոգևոր կարողությունները: Գ. Սրվանձտյանցը շրջագայում է հայաբնակ բազմաթիվ վայրերում՝ Տիգրանակերտ, Սեբաստիա, Մարզվան, Ամասիա, Թոքատ, Պաֆրա, Սինոպ, Տիվրիկ, Ակն, Կամախ, Երզնկա, Դերջան, Կարին, Արաբկիր, Բաղեշ, Վան, Մուշ: Իր տպավորությունները ամփոփում է «Թորոս Աղբար» երկում[39]: Գրքում տրված է այդ վայրերի և տեղի հայ բնակչության կյանքի ու կենցաղի ճշմարտացի պատվերը՝ համապատասխան վիճակագրական տվյալներով, վերարտադրված է նրանց անցյալը, ներկան, տնտեսական, քաղաքական կացությունը: Յուրաքանչյուր վայրի համառոտ նկարագրի հետ տրվում են տեղեկություններ նրա կլիմայի, առևտրական կամ արդյունաբերական նշանակության, աչքի ընկնող շինությունների, դպրոցների, ուսուցիչների աշակերտության, տեղական կենդանիների ու բույսերի և այլնի մասին:

Թորոս Աղբարը այն երևակայական թռչունն էր, որին հեղինակը հանդիպել էր Նարեկացու ծննդավայրում գտնվող Ծովք լճում. ինչպես թռչունը ողբում էր Նարեկացու մահը, այնպես էլ Սրվանձտյանցը ողբում էր արևմտահայության շուրջ ստեղծված մթնոլորտը արյունարբու սուլթան Համիդի կողմից: Նա զգուշացնում էր մոտեցող վտանգի մասին: Ցավոք, Սրվանձտյանցի կանխատեսումը հայերին սպառնացող կոտորածների մասին իրականացավ 1994-1996 թթ.: «Թորոս Աղբար»-ում հեղինակը վեր հանեց սերնդեսերունդ փոխանցված և ժողովրդի բանավոր լեզվում պահպանված հսկայական քանակությամբ ազգագրական նյութեր: «Թորոս Աղբարի» ազգագրական-աշխարհագրական արժեքը բարձր է գնահատվել Ռուսաստանի Աշխարհագրական ընկերության կողմից և համառոտված թարգմանվել ու տպագրվել «Торос Ахпар. Путеводитель по Армении» խորագրով[40]:

Ի տարբերություն մյուս աշխատությունների՝ «Հնոց-նորոցը» գրված է բացառապես գրավոր աղբյուրների հիման վրա: Զգալով թուրքական կառավարությունից եկող վտանգը՝ նա հայոց եկեղեցիներից վերցրեց ձեռագիր հավաքածուներ, ավանդազրույցներ, ցուցակներ, որոնք էլ հրապարակեց նշյալ աշխատության մեջ[41]:

Մինչ Գ. Սրվանձտյանցը հայ ազգագրությունն իբրև գրական ատաղձ օգտագործվում է գեղարվեստական գրականության մեջ: Այդ ձևով մեծ քանակությամբ նյութեր են հայթայթել Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Րաֆֆին, գյուղագիրները և ուրիշներ: Եվ եթե գրողները ազգագրությունը ծառայեցրել են գեղագիտությանը, ապա Գ. Սրվանձտյանցը, ընդհակառակը, գեղագիտությունն է ծառայեցրել ազգագրությանը: Իսկ սա հայ ազգագրության մեջ երևույթ էր, որը հայտնագործել և տաղանդավոր կերպով կիրառել է Գ. Սրվանձտյանցը: Ի պատիվ իրեն՝ Գ. Սրվանձտյանցը ազգագրական տվյալները գեղագիտական խոսքով մատուցելիս չի

---

[39] Տե՛ս ***Գարեգին Սրվանձտյանց,*** Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, Երկեր, հ. 2, Երևան, 1982 (մասն առաջին), էջ 169-323 (մասն երկրորդ), էջ 324-514:

[40] «Известия Кавказского отдела императорского Русского географического общества». Т.IX, Тифлис, 1887.

[41] ***Գ. Սրվանձտյանց,*** Հնոց-նորոց, Կ.Պոլիս, 1874:

աղավաղել, չի խաթարել, որովհետև բուն նպատակը ազգագրությանը հարազատ մնալն է եղել[42]: Նախքան Գ. Սրվանձտյանցի աշխատությունների հրապարակումը արևմտահայ մտավորականները աղոտ պատկերացում ունեին իրենց ժողովրդի բառ ու բանի, հավատալիքների, վարք ու բարքի, ծեսերի, սովորությունների, հայրենի բնաշխարհի առանձնահատկությունների վերաբերյալ: Այդ նյութերը մեզանում մեծ մասամբ մնում էին, Թումանյանի խոսքով ասած, «ավերակների ու հողի տակ», իրենց պարծանքները՝ մոռացության ու անհայտության մեջ[43]:

Գ. Սրվանձտյանցը առաջիններից մեկն էր, որն իր հայտնաբերած հարուստ նյութերով մեծապես նպաստեց հայ բանագիտության, ազգագրության, գրականության ու հնագիտության զարգացմանը: Նրա աշխատությունները չէին սահմանափակվում միայն ճանաչողական նշանակությամբ. նա նաև իսկական գեղագետ էր, գրող ու բանաստեղծ: Հովհաննես Թումանյանը նրան համարել է «-Մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերն էլ համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ: «Մի Աբովյան կամ մի Սրվանձտյանց,- գրել է նա,- կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»[44]: Գ. Սրվանձտյանցի երկերի արժանիքն այն է, որ նա, ամենայն հմտությամբ պահպանելով նյութերի անաղարտությունը, դրանք ներկայացրեց գեղարվեստական շնչով՝ միաժամանակ անելով ազգաբանական ու բանագիտական նուրբ դիտողություններ: Ուստի նրա ժողովածուները, ճանաչողականից բացի, ունեն գիտական որոշակի արժեք:

Ունենալով մեծ երևակայություն, ճոխ լեզու և մոտիկից ծանոթ լինելով արևմտահայության բարքերին ու սովորություններին՝ Սրվանձտյանցը ամբողջացրեց Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից գրառած ազգագրական նյութը: Նրա յուրաքանչյուր գիրքը մեծ աշխուժություն էր առաջացնում մտավորականների շրջանում, եւ պատահական չէ, որ Սրվանձտյանցի երկերի ազդեցությամբ սկսվեց մտավորականների շարժը դեպի գավառներ՝ ազգագրական, բանահյուսական նյութեր գրառելու համար: Սրվանձտյանցի հսկայական ժառանգությունը, հետաքրքրություն առաջացրեց դեպի ազգագրությունն ու բանահյուսությունը, իսկ երկերի ինքնատիպ ոճը, լեզուն համապատասխան ճաշակ ձևավորեցին:

Գ. Սրվանձտյանցը ազգագրական նյութեր շատ է գրանցել: Սակայն տպագրվել է ոչ ամբողջությամբ: Հեղինակը քանիցս նշել է, թե իր գրական վաստակների զգալի մասը ուղևորությունների, պաշտոնափոխությունների և զանազան անպատեհությունների ժամանակ կորստի մատնվել: Ազգագրի մեծ եղբոր դուստր Անթառամը 1944-1945թթ. ասել է թե հայ-թուրքական մի միջադեպի ժամանակ, ըստ երևույթին 1895-1896 թթ. արևմտահայերի կոտորածների օրերին, թուրքերն սկսում են խուզարկել Վանա գրագիրների տները և շատերին բանտարկում են: Գարեգինի կրտսեր եղբայրը՝ Սիմոնը, երկյուղ կրելով, թե ընտանիքի անդամները բանտ կնետվեն, թոնրի կրակին է հանձնում Գ. Սրվանձտյանցի այնտեղ ունեցած ամբողջ արխիվն ու գրադարանը:

---

[42]Տե՛ս ***Ռ. Նահապետյան,*** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական բանահավաքչական գործունեությունը, էջ 116-117:

[43] ***Հովհաննես Թումանյան,*** Երկերի ժողովածու, հ.4, Եր., 1951, էջ 146-147:

[44] Նույն տեղում, էջ 377-378:

Գ. Սրվանձտյանցի երկերի դերը և նրա «Ծրագրի» հետևորդները: Սրվանձտյանցի կատարած գործը հասարակական մեծ արձագանք գտավ և ջերմ ընդունելության արժանացավ: Ինքը՝ Սրվանձտյանցն էլ իր կատարած գործը ներկայացնում էր որպես ուրիշներին խրախուսելու և ազգօգուտ գործունեության մղելու օրինակ: Նա գրում է. «Մեր մտադրությունն է ժողովրդական կյանքե ծանոթություններ հիշել, որոնք լույս կարող են տալ մեր ազգային պատմության և լեզվին կամ գրականության. ուշադրության առնելու է, ուրեմն, անոնց մեջ եղած տնական, գեղջկական, քաղաքական ու կրոնական արարողությունները, առածները, երդումները, անեծքները, օրհնանքները, երգերը, պարերը, տղայոց խաղերը, որոնք առհասարակ կյանքի և լեզվի պատմությունը կը կազմեն»[45]:

1870-1890-ական թթ. ասպարեզ իջավ բանահավաքների մի ամբողջ սերունդ, որը, ոգևորված Գ. Սրվանձտյանցի օրինակով, առավել արդյունավետ ազգագրական-բանահյուսական հավաքչական գործունեություն ծավալեց: Հրապարակվեցին մեծ թվով ազգագրական ու բանահյուսական ժողովածուներ, որոնք ավելի լայնորեն ընդգրկեցին պատմական Հայաստանի ազգագրական շրջանները, մեծապես հարստացնելով հայ ազգագրության գանձարանը նորանոր նյութերով: Նշենք մի քանի հեղինակների՝ **Արիստակես վարդապետ Սեդրակյան** («Քնար մշեցվոց և վանեցվոց», Վաղարշապատ, 1874, «Ամուսնական խնդիրներ» Մոսկվա, 1891), **Արիստակես վրդ. Սարգսենց** («Պանդուխտ վանեցին», Կ. Պոլիս, 1874), **Պետրոս վրդ. Կալհոկեցի** («Ասիական ճանապարհորդություն ի հայրենիս», Կ. Պոլիս, 1881), **Գևորգ Գ. Շերենց** («Վանա սազ», Թիֆլիս, մաս Ա, 1885, մաս Բ, 1899), **Մ.Կ. Միրախորյան** («Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի…», Կ. Պոլիս, Մասն Ա. 1884, Բ. 1885, Գ. 1886), **Հակոբ Հ. Ալահվերդյան** («Ուլնիա կամ Զեյթուն», Կ. Պոլիս, 1884), **Հովհաննես Նազարյանց** («Նախապաշարմունք», Թիֆլիս, 1878, «Անեկդոտներ», Թիֆլիս, հ. 1, 1876, հ. 2,1877), **Երեմիա եպ. Տեր-Սարգսենց-Տնկանց** («Տոհմային հիշատակարան», գիրք Ա և Բ, Վարագ, 1881), **Սիմոն վ. Ճուղարտյան** («Առածք ազգայինք», Վենետիկ, 1880), **Հ.Կ. Ճանիկյան** («Հնություն Ակնա», Թիֆլիս, 1895), **Գևորգ Տեր-Աղեքսանդրյան** («Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», Թիֆլիս, 1886) և այլք: Այսպիսով, ժամանակի հայ գավառաբնակ մտավորականության ջանքերով ազգագրության և բանահյուսության ասպարեզում մեծաքանակ նյութեր կուտակվեցին տարբեր գավառներից և բնակավայրերից՝ ընդգրկելով և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստանը, նաև հայկական գաղթօջախները: Նրանց շնորհակալ գործունեության շնորհիվ կորստյան վտանգից փրկվեցին հայ ազգային մշակույթի անթիվ գանձեր:

Սփյուռքի հայության համար ազգային ոգին պահպանելուն ուղղված ազգագրական նյութերի սրվանձտյանական գրանցման հայրենաբաղձ ոճը ներկայումս էլ իշխող ձև է մնում: Հավաքված ու հրատարակված ազգագրական և բանահյուսական նյութերը, սակայն, վերը հիշատակված ժողովածուներում չունեցան ազգագրության ու բանահյուսության գիտական պահանջներին համապատասխան մակարդակ: Դրանք ազգագրական-բանահյուսական համալիր հետազոտություններ չէին և չէին էլ կարող լինել առանց դրանց գործունեությունը ուղղորդող գիտական ազգագրական ծրագրերի առկայության, ժամանակի հասարակական-քաղաքական պայմանների:

---

[45] ***Սրվանձտյանց Գ.,*** «Գրոց ու բրոց», հ. 1, մ.Ա, էջ 81:

1.2. Գրիգոր Խալաթյանցը (1858–1912) որպես հայ գիտական ազգաբանության հիմնադիր: Հայ ազգագրության հետագա զարգացման գործում մեծ է եղել Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, նշանավոր հայագետ, պատմաբան, բանասեր Գրիգոր Խալաթյանցի՝ պատմագիտության, ազգաբանական գիտության, լեզվի ու գրականության բնագավառներում ունեցած դերն ու նշանակությունը[46]: Ն-րա գրչին են պատկանում ավելի քան 20 տպագիր աշխատություն, հայ և օտար մամուլում սփռված բազմաթիվ հոդվածներ, ինչպես և անտիպ ուսումնասիրություններ[47]:

Ծնվել է 1858թ. սեպտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) քաղաքում, վախճանվել է 1912թ. փետրվարի 8-ին Թիֆլիսում: Գիտության դոկտոր էր 1903 թվականից, պրոֆեսոր՝ 1906թ.: 1868-77-ին սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, 1877-80թթ.՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, ապա՝ տեղափոխվել պատմա-լեզվաբանական ֆակուլտետ և ավարտել 1884-ին: Այնուհետև կատարելագործվել է Գերմանիայում: 1886-ից մինչև կյանքի վերջն աշխատել է Լազարյան ճեմարանում՝ դասավանդելով հայագիտական տարբեր առարկաներ: 1890-ից գլխավորել է հայագիտության ամբիոնը, իսկ 1897-1903-ին եղել է ճեմարանի տեսուչը: Նրա անդրանիկ գործն է «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսի ռուսերեն թարգմանությունը (1881), «Ղազար Փարպեցի եւ գործք նորին» (1883), «Հայ ժողովրդական հեքիաթների ընդհանուր ուրվագիծ» (1885, ռուս.), «Հայոց վեպը Մովսես Խորենացու Պատմության մեջ» (1896, ռուսերեն լեզվով), «Գիրք մնացորդացը» ըստ հնագույն հայ թարգմանության (1899), «Մովսես Խորենացին և յուր աղբյուրները» (1898), «Մովսես Խորենացու նորագույն աղբյուրների մասին» (1898), «Հայ Արշակունիները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (1903), «Ակնարկ Հայաստանի պատմության…» (1910, ռուս.): Թեև որոշ երկերում առկա են թյուր կարծիքներ, դրույթներ ու տեսակետներ, որոնք հետագայում մերժել է հայագիտությունը, սակայն այսօր էլ Խալաթյանցի բազմաթիվ երկեր պահպանել են իրենց գիտական արժեքը:

Ազգագրության և բանահյուսության զարգացումն ու նվաճումները Եվրոպայում և Ռուսաստանում ազդակ հանդիսացան 1880-ական թթ. վերջին և հատկապես 1890-ական թվականների սկզբին հայ ազգագրության և բանահյուսության գծով կատարվող աշխատանքներն էլ գիտության նոր պահանջների համեմատ իրականացնելու համար: Այդ էր պահանջում նաև հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում կուտակված նյութերի ու հարուստ փորձի ուսումնասիրությունը: Այդ գործը վիճակված էր Գր. Խալաթյանցին և Երվանդ Լալայանին: Գր. Խալաթյանցի՝ որպես եվրոպական ազգագրության քաջածանոթ տեսաբանի, ազգագրական գործի կազմակերպչի գործուն մասնակցությամբ 1880-ական թթ. սկզբներին հրատարակվում է ռուսերեն ազգագրական ծրագիր: Դրա օրինակով Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսուցչապետ Գրիգոր Խալաթյանցը 1887թ. հրատարակեց «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» (Մոսկվա, 1887) ուղեցույց ծրագիր-հարցարանը, որն անգնահատելի դեր ունեցավ հայ ազգագրական գիտության կայացման և զարգաց-

[46] Տե՛ս ***Շահնազարյան Ա.,*** Պրոֆ. Գրիգոր Աբրահամյան Խալաթյանց // «Ազգագրական հանդես», գ.XXII, N1, Թիֆլիս, 1912, էջ 249-263:

[47] ***Վարդանյան Վ.,*** Գր. Խալաթյան // ՊԲՀ, 1968, թիվ 4, էջ 143-149:

ման գործում: Այն համակարգված, կուռ կառուցվածք ուներ և նորույթ էր: Խալաթյանցի ծրագիր-հարցարանը բացառիկ դրական դեր խաղաց ազգագրագետ կադրերի պատրաստման, նպատակադրված դաշտային ազգագրական հետազոտությունների իրականացման, բանահավաքչական նյութերի համակարգված գրառման, գիտական արշավախմբերի կազմակերպման գործում: Այն մեծապես խթանեց հայ ազգագրական գիտության ձևավորումն ու հետագա զարգացումը:

Գր. Խալաթյանցը նախաբանում լուրջ ուշադրություն է դարձրել հայ ազգագրության վերաբերյալ նյութերը մշակելու խնդրին՝ ցավով արձանագրելով. «Ժողովրդի խոսքն ու բարբառը, հին ծեսն ու սնապաշտությունը, առասպելական վեպն ու ավանդությունը, հին երգն ու խաղը, հեքիաթն ու առակը, որպես և շատ ազգային իրավաբանական սովորությունները – մեր աչքի առաջ պակասում, նվազում, մաշվում, արհամարհանքի կամ մոռացության են տրվում և հետզհետե անհետանալու վիճակին մոտենում, շփվելով ու ընդհարվելով նորաձևությունների հետ, կյանքի նոր գաղափարների ու պայմանների, գրավոր օրենքների հետ, նոցա հոսանքին չդիմանալով և նոցա տեղի տալով»[48]:

«Ծրագրով» սահմանվում էր առարկան, ուղղություն տրվում բանահավաքներին՝ բազմապատկելով նրանց թիվը: Ծրագիրը ընծայված է Գ. Սրվանձտյանցին: Ծրագրից հետո մեծ հետաքրքրություն է առաջանում դեպի ազգաբանությունը («Ծրագրիդ ճառագայթներով, ուր կլուսավորեր, կառաջնորդեր և կցուցաներ ամեն բան պարզ ու կատարյալ, մեծ գործի պիտանի է Ծրագիրդ»,- գրում է Գ. Սրվանձտյանցը):

Ծրագրի բովանդակությունը, կառուցվածքը: Ծրագիրն ընդգրկում էր 500 հարց և 10 բաժին, որ վերաբերում են կենցաղի և մշակույթի ամենատարբեր բնագավառներին. 1) աշխարհագրական և պատմական տեղեկություններ, 2) մարդաբանական տեղեկություններ, 3) բնակարանը և իր պարագաները, 4) զգեստ և զարդ, 5) կերակուր և խմիչք, 6) կենցաղ և զբաղմունք, 7) ընտանեկան բարք ու սովորույթ, 8) հավատք, 9) լեզու և գիր, արվեստ, ձեռագիր, 10) ժողովրդական բանավոր գրականության տեսակները: Ծրագրի երկրորդ բաժինը վերաբերում է իրավունքին և կազմված է երեք գլխից՝ 1) հասարակական կացություն և վարչություն, դատ ու պատիժ, 2) քաղաքացիական իրավունք, 3) քրեական իրավունք[49]: Գ. Խալաթյանցի «Ծրագիրը» արդյունք էր խոր ու բազմակողմանի հետազոտության: Այն ժամանակի գիտության համատեքստում ընդհանրացնում և ամփոփում է ազգագրության բնագավառը, նրա սահմանումն ու ընդգրկումը, դասակարգումը, ինչպես նաև վեր հանում մշակույթի այլ բնագավառների հետ ունեցած առնչություններն ու կապերը՝ ելնելով հայ իրականության և հայկական նյութի պահանջներից: Յուրաքանչյուր բաժնի և ենթաբաժնի մեջ նա հարցադրումների հետ տվել է մի շարք ծանոթություններ, օրինակներ ու նմուշներ՝ նպաստելու բանահավաքի աշխատանքին: «Ծրագիրն» իր ներքին կառուցվածքով և հարցադրումներն իրենց բնույթով նպատակ ուներին ազգագրական երևույթների և մշակութային տարբեր մարզերի փաստերը ներկայացնել ոչ թե մեկուսացված, այլ համակցված և փոխադարձ ներթափանցումնե-

[48] ***Խալաթյանց Գր.,*** Նյութեր հայ ազգագրության պատմության // «Էմինյան ազգագրական ժողովածու», հ.Է, Մոսկվա, 1908, էջ 48:

[49] ***Խալաթյանց Գր.,*** Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887, էջ 44:

րով: Միաժամանակ ուշագրավ խորհուրդներ ու ցուցումներ էր տալիս բանահավաքներին, թե ինչպես պետք է զրուցել բանասացների հետ, ինչ կերպ գրի առնել և դասավորել համապատասխան բաժինների հարցադրման արդյունքները: Գիտնականը հատուկ ուշադրություն է հրավիրում նյութերի հարազատ և անաղարտ գրանցման հանգամանքին: Նա գրում է. «**Բանահավաքը մեծ ուշադրությամբ և հարգանքով պետք է վերաբերվի այն բոլոր տեղեկություններին, որ իրան կհաղորդեն կամ ինքը կժողովե անմիջապես… Հարկավոր է դիտել ու գրել այն, ինչ որ կա, և ոչ թե այն, ինչ որ պետք է լինի՝ բանահավաքի կարծիքով**»[50]: Այնուհետև Գր. Խալաթյանցը իր «Ծրագրի» մեջ մատնանշում է, որ ազգագրական-բանահյուսական նյութերի հավաքման գործին պետք է հաջորդեն առանձին հավաքածուների հրատարակությունը, ուր ներկայացված լինեն և ազգագրական նկարագրություններ ու բանահյուսական ստեղծագործություններ և հետազոտություններ:

Գ. Խալաթյանցը «Նյութեր հայ ազգագրության պատմության համար» հոդվածում մատնանշում էր հայ ազգագրագետների անելիքները. 1) պետք է շտապեցնել դաշտային ազգագրական նյութեր հավաքելու խնդիրը, 2) պետք է հոգ տանել կազմելու ազգագրական մատենախոսական լիակատար նկարագրություններ, 3) նյութեր հավաքելուն զուգընթաց, պետք են մեզ դրանց հիման վրա կատարել ուսումնասիրություն, հետազոտություն, վերլուծություն, 4) պետք է աշխուժացնել հայոց ազգագրական գործունեությունը, 5) ձեռնարկել անհապաղ գիտական արշավախմբեր, գիտական համաժողովներ, 6) պետք է հիմնել ազգագրական թանգարաններ, բուհերում դասավանդել կովկասյան և հայ ազգագրության վերաբերյալ առարկաներ, 7) մեծ կարևորություն ունի հայ ազգագրության համար և դրացի ազգերի ընկերական և հասարակական կենցաղի համեմատական ուսումնասիրությունը[51]: Գ. Խալաթյանցի կարծիքով, ազգագրությունը օգնում էր պարզելու շատ կարևոր խնդիրներ: Ժողովրդի բուն պատմությունը վերականգնելու անսպառ նյութը պարուրված է հեքիաթների, առասպելների, հանելուկների, առակների, գեղջկական երգերի և բանահյուսական այլ ստեղծագործությունների մեջ, որոնք, «դարերի ընթացքում փոփոխվելով, բարդվելով, ձևակերպվելով», իրենց մեջ պարփակել են կյանքի իսկական պատկերը, «ժողովրդի ձգտումներն ու իդեալները»: Ժողովրդագիտությունը, ըստ գիտնականի, ինքնաճանաչման մի հզոր միջոց է, բացի այդ, այն նպաստում է լեզվի, գրականության, բարոյագիտության, իրավագիտության զարգացմանը: Նա հրամայական պահանջ է համարում ազգագրական բաժիններ հիմնել Պոլսում, Էջմիածնում, ընդլայնել բանահավաքման միջոցները, Թիֆլիսում կովկասագիտական համալսարան բացել: Գ. Խալաթյանցին մտահոգում է, որ շատ ավանդություններ, իրավական սովորություններ, շփվելով նորամուծություններին, գրավոր կանոններին՝ «նվազում, մաշվում, արհամարհանքի կամ մոռացության են տրվում», «կանցնի շատ-շատ մի կես դար և այդ մեր պապերից ավանդած հազարավոր տարիների շատ կողմերից թանկագին կտակը կկորչի անդարձ, եթե օրով առաջ հոգ չտանենք խնամքով արձանագրելու նրան և պահելու գիտության համար»: Նա նշում ու կարևորում է, որ երբ կարողանանք մեզանում էլ գիտության վերածել ազգագրությունը, այնժամ հիմք կգոյանա գրելու մեր մշակույթի ու երկրի պատմությու-

[50] Նույն տեղում, էջ ԺԸ:

[51] ***Խալաթյանց Գր.,*** Նյութեր հայ ազգագրության պատմության, էջ 57-58:

նը՝ «ճշմարտացի ու պատշաճավոր»[52]:

«Ծրագիրը» էական դեր խաղաց ազգագրական գործը հայ իրականության մեջ գիտական սկզբունքներով իրականացնելու հարցում: Այդ ժամանակաշրջանի հայ գրականությունը, դրա ամենալայն ըմբռնմամբ, ողողված է ժողովրդի առօրյան, կենցաղն ու սովորույթները համակողմնաիորեն արտացոլող առատ նյութերով: Այն իր արտացոլումը գտավ թե՛ գեղարվեստական գրականության մեջ՝ Րաֆֆի, Պ. Պռոշյան, Ռ. Պատկանյան, Մուրացան, Հ. Թումանյան, Մ. Նալբանդյան և թե՛ Վ. Սուրենյանցի, Լանսերեի, Ֆեթվաճյանի, Գ. Բաշինջաղյանի, Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Ռ. Մելիքյանի, Թ. Թորամանյանի և ուրիշների արվեստի գործերում: Հայ ազգագրական նյութի մատուցման ու մեկնաբանման գործում նշանակալի ներդրում կատարեցին Ս. Ամատունին[53], Ա. Ղլտճյանը[54], Մ. Միրախորյանը[55], Ս. Հայկունին[56], Գ. Ախվերդյանը[57] և այլք: Մի շարք հանդեսներ՝ «Արաքս», «Բյուրակն», «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Մշակ» և այլն, և ապա՝ «Ազգագրական հանդես», «Էմինյան ազգագրական ժողովածու» նվիրվեցին հայ ազգաբանական գործունեությանը:

Գր. Խալաթյանցի հորդորով են հիմնվել «Հայոց ազգագրական ընկերությունը» և «Ազգագրական հանդեսը» («Այժմ մնում է,- գրում է Լալայանը Խալաթյանցին,- մի ուրիշ ցանկության իրականանալը, դուք վերադառնաք Կովկաս և ստանձնեք այս ընկերության ղեկավարությունը»):

1906թ. Խալաթյանցը հրավիրվում է Մոսկվայի Կայսերական համալսարան և վարում հայ ազգագրություն դասընթացը:

Նշանավոր հայագետը զբաղվել է նաև հայ մատենագիրների, մասնավորապես Մ. Խորենացու քննությամբ և նրանց գործերի թարգմանություններով: Նա ռուսերեն և գերմաներեն թարգմանել է «Սասունցի Դավիթ» էպոսը, գրել այդ լեզուներով «Հայ ժողովրդական հեքիաթների ուրվագիծ» աշխատությունը:

1.3. «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի (1901-1913թթ., 9 հ.) դերն ու նշանակությունը հայ ազգագրական գիտության պատմության մեջ: Համաձայն Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինի կտակի՝ որոշվում է նրա դրամագլխի եկամուտներն ուղղել հայ ազգագրության և հայ ժողովրդական գրականության վերաբերյալ ուշադրության արժանի նյութերի և հետազոտությունների ժողովածուներ հիմնելուն: «Դրամագլխի հաշվով տպագրվելիք թե՛ ժողովածուները և թե՛ առանձին գրվածքները պետք է գիտական նշանակություն ունենան և վերաբերվեն **Հայ ազգագրության**, հայոց հավատքին, հնություններին, պատմության, որպես և լեզվին, բանավոր ու գրավոր գրականության, արվեստներին: Ժողովածուները պետք է նվիրվեն Էմինի հիշատակին»[58]: Ահա Էմինյան

---

[52] ***Խալաթյանց Գր.,*** Նյութեր հայ ազգագրության պատմության, էջ 46-48:

[53] ***Ամատունի Ս.,*** Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:

[54] ***Ղլտճեան Ա.,*** Հայոց հին իրաւունքը, Ալեքսանդրապոլ, 1918: **Նույնի՝** Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն և քաղաքացիական պսակ, Ալեքսանդրապոլ, 1904:

[55] ***Միրախորյան Մ.,*** Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի (տեղագրությունք սարեն ու ձորեն, հնեն ու նորեն պտանի գիտնոց), Կ.Պոլիս, հ.1, 1884, հ.2, 3, 1885:

[56] ***Հայկունի Ս.,*** Բագրևանդ, ջրաբաշխ գավառ, 1, Էջմիածին, 1894:

[57] ***Ахвердов Ю.,*** Тифлисские амкары, Тифлис, 1883.

[58] «Մկրտիչ Էմինի երկասիրությունները», հ.4, Մոսկվա, 1898:

ազգագրական այդ դրամագլխի միջոցներով, ի թիվս այլ գործերի, տպագրվում են նաև «Էմինյան ազգագրական ժողովածուի» 9 հատորները: Ժողովածուի խնդիրն էր հայ ազգագրության և ժողովրդական գրականության վերաբերյալ ուշադրության արժանի հավաքածուներ, նյութեր և գիտական հետազոտություններ հրատարակելը: Գր. Խալաթյանցը մեծ աշխատանք է կատարել «Էմինյան ազգագրական ժողովածուն» գիտական պատշաճ մակարդակով հրատարակելու համար: Ժողովածուի 1-8-րդ հատորների անփոփոխ խմբագիրը Գր. Խալաթյանցն էր, իսկ 9-րդ հատորը (նրա մահից հետո) խմբագրել է հայագետ Կ. Կոստանյանը: Այն համառ ջանքերը, եռանդուն ստեղծագործական աշխատանքը, որ թափել է Խալաթյանցը հանդեսի 8 հատորների խմբագրման, ծանոթագրության ու տպագրության ուղղությամբ, վեր է ամեն տեսակի գնահատությունից: ԷԱԺ-ի առաջին գիրքը (1901) նվիրված է պատմական Հայաստանի ազգագրական ինքնատիպ շրջաններից մեկին՝ Շիրակի ազգագրությանն ու բանահյուսությանը, որի նյութերը ամբողջությամբ հավաքել է ճանաչված ազգագրագետ Ալեքսանդր Մխիթարյանը (1846-1916)՝ «Փշրանքներ Շիրակի ամբարներից» վերնագրով: Նրանում ներառված են՝ առաջին մասում՝ Ժողովրդական բանավոր գրականության տեսակները՝ հեքիաթ, առակ, առած, հանելուկ, օրհնանք, անեծք, երդում և այլն: Երկրորդ մասը վերաբերում է ազգագրությանը, որտեղ ներկայացված է տեղացիների ընտանեկան բարքն ու սովորույթը, կենցաղն ու զբաղմունքը և հատկապես հավատքը (սնոտիապաշտություն, նախապաշարմունքներ, երազներ, բժշկություն, կախարդություն, թովչություն, բժժանք), իբրև հավելված՝ Շիրակի բարբառի համառոտ բառարանը: Խոսելով հավաքածուի նշանակության ու արժեքի մասին՝ հատորի առաջաբանում Գ. Խալաթյանցը նշում է, որ շատ երևույթներ ու նյութեր նման կլինեն և կհիշեցնեն այլ գավառների ազգագրական նկարագրությունները և, միաժամանակ, գիտնականը իրավացի դիտողություն է անում. «Բայց նաև այս կրկնությունը՝ որոշ սիստեմի հետ միասին յուր անհերքելի արժեքն ունի՝ վերստուգելով ու հաստատելով նախընթաց հաղորդածները և հայ ազգագրության համեմատական ուսումնասիրության համար ավելի առատ և ապահով նյութ պատրաստելով»[59]: Քննության առարկա նյութերից բացի, Ա. Մխիթարյանը հրատարակել է նաև «Տաղեր և խաղեր» (Ալեքսանդրապոլ, 1900) ուշագրավ ժողովածուն:

Ժողովածուի 4 գիրք նվիրված է վաստակաշատ բանահավաք Սարգիս Հայկունու (1838-1908) բանահյուսական նյութերի հավաքածուներին՝ Հայ ժողովրդական վեպեր (6 հատ, որոնց թվում՝ «Դավիթ և Միեր» վեպի Մոկաց ճյուղը) և հեքիաթներ (42 հատ), (հատոր Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901): «Հայ ժողովրդական հեքիաթ» (հատոր Դ, 1902), «Դավիթ և Միեր» դյուցազանվեպի Շատախի և Արարատյան ճյուղերը, «Հայ-քրդական վեպ» (հ. Ե, 1904), «Հայ ժողովրդական երգ» և բանահյուսական այլ ժանրի ստեղծագործություններ (հ. Զ, 1906): Գրի է առնված «Սասնա Ծռեր»-ի 4 պատում, ժողովրդական վեպերի ու սիրավեպերի 32 պատում, 117 հեքիաթ ու առակ, 276 երգ, մոտ 800-ի հասնող առած, ասացվածք, հանելուկ և այլն: Անհրաժեշտ է ընդգծել չորս հատորներում տեղ գտած Ս. Հայկունու բանահյուսական նյութի ժանրային բազմազանությունը՝ էպոսի 4 պատում, հեքիաթներ, երգեր, առածներ ու հանելուկներ, անեծքներ, օրհնանքներ,

[59] «Էմինյան ազգագրական ժողովածու», այսուհետ՝ ԷԱԺ, հ.Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 8:

երդումներ, շուտասելուկներ, որոնք հարուստ են ոչ միայն քանակով, այլև իրենց գրառման վայրերով: Գր. Խալաթյանցը շատ բարձր է գնահատում Ս. Հայկունու բանահավաքչական գործունեությունը՝ ազգագրական տարբեր շրջաններից գրառած մեծաքանակ և բազմազան նյութերի և դրանց արժանահավատության ու բարեխղճության, բացի հայկական նյութերից, հարևան ժողովուրդներից բանահյուսական նյութեր գրառելու համար[60]: Ի դեպ, Սարգիս Հայկունու գործունեությունը ըստ արժանվույն գնահատել է Վերժինե Սվազլյանը[61]:

ԷԱԺ-ի ընդգրկած մյուս բնագավառը ազգագրական լեզվաբանությունն է՝ էթնոլինգվիստիկան: Երեք հատորներում լույս է տեսել Հ. Աճառյանի (1876-1953)՝ «Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա և թուրքերեն փոխառյալ բառերը» (հ.Գ, 1902), «Հայ բարբառագիտություն», (հ.Ը, 1911), «Հայերեն գավառական բառարան», (հ.Թ, 1913) աշխատությունները: Սրանով ԷԱԺ-ը բարձրացրեց ժողովրդական լեզվի, ազգագրական լեզվաբանության հիմնախնդիրը:

ԷԱԺ-ի Է հատորը (1908) Գր. Խալաթյանցը ներկայացրել է որպես ազգագրության և բանահյուսության տեսության ու պատմության ընդհանուր հոդվածների ժողովածու: Հայերեն թարգմանությամբ ներկայացված են Լ. Շտերնբերգի «Ազգագրություն», «Համեմատական կրոնախոսություն», Ե. Անիչկովի «Ֆոլկլոր», Հ. Լիպպերտի «Կուլտուրի պատմություն» և մի քանի այլ հոդված: Այստեղ է հրատարակված Գր. Խալաթյանցի «Նյութեր հայ ազգագրության պատմության» ուշագրավ հոդվածը, որում առաջ քաշված անելիքները առ այսօր էլ մնում են առաջնահերթ պահանջ:

1.4. Մկրտիչ Խրիմյանի երկերի ազգագրական և բանահավաքչական համառոտ բնութագիրը: Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ) հայտնի է ոչ միայն իբրև հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակական-քաղաքական և կրոնական խոշոր գործիչ, գրող, այլև նշանավոր բանահավաք-ազգագրագետ: Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Ա. Վանեցի) ծնվել է Վանում 1820թ. ապրիլի 4-ին, վախճանվել է 1907թ. հոկտեմբերի 29-ին Վաղարշապատում: Հայոց կաթողիկոս էր 1893 թվականից: Սովորել է Վասպուրականի Լիմ և Կտուց անապատների դպրոցներում, 1842թ. հաստատվել է Կ.Պոլսում: 1847թ. ճանապարհորդել է Պարսկաստանում, Անդրկովկասում, այցելել Երուսաղեմ: 1848-1850 թթ. ուսուցչություն է արել Կ.-Պոլսի Խասգյուղ թաղամասի դպրոցում: 1851թ. Կ.Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ մեկնել է Կիլիկիա՝ հայության կյանքը ուսումնասիրելու և տեղի կրթական գործին նպաստելու համար: 1854թ. ձեռնադրվել է վարդապետ: 1855թ. Կ.Պոլսում հիմնադրել է «Արծուի Վասպուրական» պաբերականը: 1856թ. Վարագավանքի վանահայրն էր, 1857-ին հիմնադրել է տեղի Ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը: 1860-ին այցելել է Արևելյան Հայաստան, ծանոթացել հայ կյանքին: 1862թ. ստացել է Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնն ու Ս.Կարապետ վանքի վանահայրությունը՝ ձեռնարկել է նոր Ժառանգավորաց վարժարանի հիմնադրումը: Ժողովրդի մեջ նա մեծարվել է «Հայրիկ» պատվանվամբ: 1868թ. Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, 1869թ. ընտրվել է Կ.Պոլսի Հայոց պատ-

[60] Տե՛ս ԷԱԺ, հ. Ջ, Մոսկվա-Վաղարշապատ, 1906, էջ 14:

[61] ***Վերժինե Սվազլյան,*** Սարգիս Հայկունի. Կյանքը և գործունեությունը // «Հայ ազգագրություն և բանահյուսություն», Նյութեր և ուսումնասիրություններ, հ. 4, Եր., 1973:

րիարք (մինչև 1873-ը): 1878թ. եղել է Բեռլինի կոնգրեսի հայկական պատվիրակության ղեկավարը: 1879թ. ընտրվել է Վանի հոգևոր առաջնորդ, 1880թ. Վանում բացել է երկրագործական ուսումնարան: Աջակցել է Վանի «Սև խաչ» և Կարինի «Պաշտպան հայրենյաց» ազգային ազատագրական գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը, 1892թ. մայիսին ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, 1893թ. սեպտեմբերի 26-ին օծվել է Էջմիածնում: 1895թ. մեկնել է Պետերբուրգ և Նիկոլայ II ցարից հայցել նրա պաշտպանությունը Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների իրականացման համար: Եռանդուն պայքար է մղել հայ եկեղեցապատկան ունեցվածքը բռնագրավելու մասին 1903-ի հունիսի 12-ի ցարական օրենքի դեմ և այլն[62]: Մկրտիչ Խրիմյանի հասարակական գործունեությանն են անդրադարձել Ա. Մադոյանը, Հ. Պետրոսյանը[63], ազգագրական գործունեությանը՝ Ա. Պետրոսյանը[64]: Խրիմյանի գրական ժառանգության ուսումնասիրության տեսակետից ուշադրության արժանի են նաև Վ. Պալճյանի[65], Կ. Դանիելյանի[66], Հ. Պետրոսյանի[67] ուսումնասիրությունները:

Նրա «Պապիկ և Թոռնիկ», «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուել», «-Վանգոյժ», «Հայգոյժ» աշխատությունները[68] կարևոր ազգաբանական աղբյուրագիտական արժեք ունեն: Դրանցում (հատկապես «Պապիկ և Թոռնիկ»-ում) Մ. Խրիմյանը ուշագրավ և եզակի նկարագրություններ ունի տնտեսական կենցաղի՝ երկրագործության շարացան ու շաղացան համակարգերի, վար ու ցանքի ձևերի, երկրագործական աշխատանքային գործիքների, հատկապես վարի ու հնձի, ոռոգման ու պարարտացման, բերքահավաքի և կալսոցի, շտեմարանելու, երկրագործական պաշտամունքի, ժողովրդական հմտությունների ու կիրառված դարավոր փորձի, աշխատանքի համագործակցության ձևերի (հարակաշ) և այլնի վերաբերյալ: Հանգամանորեն ներկայացնում է Վանա լճի ավազանում կիրառված վարուցանքի «արդյունավետ» շարացան համակարգը, որը ապահովում է բարձր բերքատվություն. «մինչև մեկին քսան ու քսանհինգ» բերք էր ստացվում, սերմի կորուստ չէր լինում: Շարացան համակարգը Խրիմյանն անվանել է «տիր» կամ «դիր» դնել («Պապիկ և Թոռնիկ», էջ 49-51): Այնուհետև տալիս է շարքացան արորի բացառիկ նկարագիրը. «Հարօրի խոփի ետև կցված կան երկու տախտակներ կանգուն ու կես երկարությամբ և թզաչափ լայնությամբ: Այս երկու տախտակներ կցված են իրարու, եռանկյուն ձև ունեն. Վերին մասն բաց է թզաչափ լայնությամբ, իսկ վարի մասն մի մատի չափ բաց է տախտակներու երկարությամբ, այնպես, որ սերմնացան այդ հարօրին ետևեն երթալով սերմը փոքրիկ բուռով կը ձգե տախ-

---

[62] ***Հ. Ամեմյան***, Հայոց հայրիկ, Թավրիզ, 1929, ***Մ. Գաբրիելյան***, Խրիմյան Հայրիկ, Նյու Յորք, 1892, ***Գ. Գյոզալյան***, Խրիմյան Հայրիկ (Գաղափարների աշխարհը), Պեյրութ, 1962, **Ս. Երեմյան,** Ազգային դեմքեր, Գրագետ հայեր, առաջին շարք, Վենետիկ, Ս. Ղազար, 1913, **Խ. Մալումյան**, Մ. Խրիմյան, Թիֆլիս, 1892, ***Է. Կոստանդյան,*** Մկրտիչ Ա Վանեցի, ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 641-642:

[63] Տե՛ս ***Ա. Մադոյան, Հ. Պետրոսյան***, Գաղափարի և ազատության ջահակիրը (առաջաբան) // Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 5-18:

[64] Տե՛ս ***Ա. Պետրոսյան***, Մկրտիչ Խրիմյանը բանասաց, բանահավաք, ազգագրագետ, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Զ, 2011: Տե՛ս նաև **նույնի**՝ Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 139-171:

[65] ***Վ. Պալճյան***, Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ, Պուքրեշ, 1943:

[66] ***Կ. Դանիելյան***, Հայ գյուղագրությունը 19-րդ դարում (1860-1890), Երևան, 1973:

[67] ***Հ. Պետրոսյան***, Գեղամ Տեր-Կարապետյան, Երևան, 1983:

[68] Տե՛ս ***Խրիմյան Հայրիկ,*** Երկեր, կազմողներ Ա. Մադոյան, Հ. Պետրոսյան, Երևան, 1992:

տակներու մեջ և անտի ակոսին մեջ կիյնան կարգավ սերմի հատիկներ. ակոսի երկու կողմի հողեր թափելով կը ծածկեն սերմեր: Դու տեսնաս բուսած ժամանակ որչա՜փ սիրուն ձեւ կունենան ուղիղ գծով ակոսէն կը բարձրանան, եւ հաջող տարին մինչև մէկին քսան և քսանհինգ (բերք) կուտան»[69]: Շարքացան արորով մշակվում էին գերազանցապես լանջային, անջրդի հողերը: Այս համակարգի օգտագործման շնորհիվ Վասպուրականը հռչակված էր ցորենի բարձր բերքատվությամբ[70]:

Խրիմյանի վկայությամբ, երբ ցանքը սկսվում էր, սերմնացանը «… տուն չէր դառնար դաշտէն», քնում էր բացած ակոսի մեջ՝ բաց երկնքի տակ, մինչև ավարտվեր սերմից հանելու ժամանակը: Ցանքը սկսելու համար նա «… գոտին պինդ կկապէր բուռն մի սերմէն առնելով շապկի սրտաբացեն կը ցանէր ծոցին երկու կողմը մինչև անթատակեր.ետոյ երես խաչակնքելով կսկսէր ցանել արտը»: Ցանքը տևում էր 20-30 օր՝ «… մինչև կը ձլէին ցանվորի ծոցի հատիկներ»: Դա «…մի բարեգուշակ նշան կը համարվէր ցանված արտերուն պտղաբերութեան…» («Պապիկ և Թոռնիկ», էջ 57-58): Խրիմյանը անդրադառնում է գարնանացան և աշնանացան համակարգերին, արհեստական ոռոգման համակարգերի անհրաժեշտությանը, ցանքաշրջանառությանը, արտերը քարերից մաքրելու, գոմաղբով պարարտացնելու, սերմը պարբերաբար փոխելու և այլ հարցերի՝ հմուտ հողագործի բանիմացությամբ: Դրանք ներկայացված են բացառապես իր դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Նույն կերպ արժեքավոր են անասնապահության, հատկապես լծկանի, օժանդակ զբաղմունքների, շերամապահության, մետաքսի ստացման, արհեստագործության, փոխադրամիջոցների տեսակների վերաբերյալ տեղեկությունները: Տնտեսական կենցաղի վերաբերյալ Մ. Խրիմյանի անդրադարձները ունեն ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրի արժեք:

Կարևոր տեղ են գրավում ընտանիքին և ընտանեկան կենցաղին վերաբերող նյութերը: «Դրախտի ընտանիք»-ում գլխատանը, գերդաստանին, նրանում գործող սովորութային իրավունքի չափանիշներին, աշխատանքի սեռատարիքային բաժանումներին, կնոջ և տղամարդու կարգավիճակին, ամուսնական, հարսանյաց արարողություններին, ամուսնացող զույգի իրավունքներին ու պարտականություններին, ծնողների ու զավակների փոխհարաբերություններին, ընտանեկան դաստիարակության հարցերին, հուղարկավորության սովորույթներին և այլ խնդիրների վերաբերող հարցեր են արտացոլված (էջ 180-186):

Մ. Խրիմյանն ընտանեկան կյանքի բարեկեցության համար առաջ է քաշում երեք պայման՝ ուսում, դաստիարակություն և տնտեսություն. «Լուսով հաց գտէք, դաստիարակութեամբ բարի ընտանիք կազմեցէք, իսկ իմաստուն տնտեսութեամբ հոգացէք… ձեր ներկան և ապագան» (նույն տեղում, էջ 185): Հարկ ենք համարում նրա ուսանելի մի քանի մտքեր մեջբերել, որոնք այսօր էլ ունեն դաստիարակչական մեծ արժեք.

- Գիտե՞ս, Թոռնիկ, Աստուած մի արասցէ, եթե քո ամուսին Շուշան մեռնի, մի ուրիշ Շուշան կարող ես առնել, բայց երբ հող քեզ համար մեռնի, այսինքն կամ ծա-

[69] ***Խրիմյան Հայրիկ,*** Երկեր, էջ 50:

[70] Տե՛ս ***Վ. Բդոյան***, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 252-253:

խես, կամ ձեռքէդ հանես եւ զրկուիս քո ժառանգած հողէն, էն ժամանակ դու էլ կը մեռնիս, Շուշանն էլ հետ քեզ կը մեռնի եւ Պապիկի տուն եւ օճախ կը քանդուի («-Պապիկ և Թոռնիկ», էջ 24):

«Իշխանության առաջին խանձարուրն ընտանիքն է» («Սիրաք և Սամուել», էջ 329):

- «Նահապետական ընտանեաց մեջ շատ նշանավոր էր ծնողաց յարգանք ու որդւոց պատկառանք» («Դրախտի ընտանիք», էջ 195):

- «Ընտանեկան կյանքին և տան շինութեան հիմնաքարեր կը համարուին հայր ու մայր» (նույն տեղում):

- «…Աշխարհիս չարեաց ու բարեաց սկզբնաձնունդ մայր ընտանիքն է» (նույն տեղում, էջ 205-206):

- «Հայրենի կրոն, հավատ և եկեղեցին, այո այդ սուրբ ավանդները անեղծ, անկորուստ պահելու խորանն ընտանիքն է» (նույն տեղում, էջ 207):

- «Յորժամ տան ծերունի նահապետ ողջ է, ու կը կառավարէ որդիքները և աթոռները, նմանապէս մայր տանտիկին իւր հարսները և աղջիկները… նորածին մանուկներու օրորոցներով կը լեցուի և կը ցնծայ տունը» (նույն տեղում):

- «Հայրս… զարմացեր է, երբ քսանի չափ նորածին տղոց օրորոցները համրած է»,-խոսքը Մշո Հացեկաց գավառ կատարած ուղևորության մասին է (նույն տեղում, էջ 207-209):

- «Ամուսնութիւն Աստծոյ հաստատած մի օրէնքն է՝ մարդկային սեռ պահելու համար» («Պապիկ և Թոռնիկ», էջ 128):

- «Ամուսնութիւն Աստծոյ խորհրդաւոր ձեռագործ և բնական օրէնքն է, … ամուսնական օրենքը դրախտէն կը սկսի, …ամուսնութեան բուն օրէնքը բնական սէրն է, որ մարդուն բնութենէն անբաժանելի է, … ամուսնական օրէնքը աշխարհի մարդկութեան հիմն է… մեր կեանքը շարունակող ստեղծագործ ձեռքն է» (նույն տեղում, էջ 126):

- «Ամուսնական միության մեջ այր և կին՝ մի մարմին է» («Դրախտի ընտանիք», էջ 221):

- Ամուսնությունը պետք է «առանց արենակցութեան լինի», քանի որ դա ոչ միայն «բարոյապէս հակառակն է», այլև «վնասակար և ազնուասերունդ ընտանիք կազմելու… բժիշկները փորձով կապացուցեն ազգակից ամուսնութեան չար հետևանքները» (նույն տեղում, էջ 247):

- «Ամուսնական արմատէն ընտանիքը կը հաստատուի, ընտանիքէն ժողովուրդ, ժողովուրդէն այլ եւ այլ ազգերը, ազգերէն իշխանական պետությունները և պետութիւներէն ընհանուր մարդկային համաշխարհական ընկերութիւն» («Դրախտի ընտանիք», էջ 221):

- «Հարսանիքը՝ պսակի սուրբ խորհուրդին հրապարակական ու հանդիսաւոր արարողութիւնն է… մարդոյն Նոր Կենաց մուտքն է և տոնահանդեսն է», որը պետք է իրականացնել «չափով, կշռով և պարկեշտութեամբ» (նույն տեղում, էջ 205-206):

- «Իրենց զավակներ շուտ կը կարգեն, որպեսզի տան աշխատաւորներ հասնին» (նույն տեղում, էջ 227):

- Նշանադրությունից հետո «կոյսն պարտաւոր է իւր պատկառանաց քողով ծածկուիլ միշտ ի պատիւ փեսային. և միանգամայն ցոյց տալով, թէ ինքն նուիրեալ է

և այլևս ազատ չէ» (նույն տեղում, էջ 225):

- «Կենակից ամուսին և հարսն ընտրելու իրավունքը ամուսնացող փեսային իրավունքն է», սակայն «ծնողք ևս մեծ իրաւունք ունին այս պարագային մեջ» (նույն տեղում):

- «Առեվանգութիւնք կը լինեին, որոց ըստ մեծի մասի պատճառը ծնողաց խստասիրտ յամառութիւնը և ընծայասիրութեան բաղձանքն է..» (նույն տեղում):

Մենք նմանատիպ շատ հարցերի պատասխաններ և խորհուրդներ պարունակող մտքերի՝ որպես «մշտախօս կտակ եւ յիշատակ», կիանդիպենք ընտանեկան դաստիարակության, հուղարկավորման սովորույթների և սոցիալական այլ խնդիրների վերաբերյալ:

- Տղամարդը «արտաքին վաստակաւորն է», իսկ կինը՝ «տան տիկինն» է, որի խնդիրն է «տան կառավարութիւն» և «մայրական դաստիարակութիւն»: «Ինչպես «միակտուր լծափայտ՝ եզներու վզի վերայ հաւասար դրուած է», այնպես էլ կնոջ և տղամարդու միջև տան հոգսերի բաժանումը: «Լծակից» բառը թույլ է տալիս հասկանալու «առն և կնոջ հաւասար կեանք և ընթացքը» (նույն տեղում, էջ 250):

- Կինը աղախին չէ. «Այլ տան տիկին ու թագուհի» (նույն տեղում, էջ 245), «- Կին մարդոց կեանքն է» (նույն տեղում, էջ 137)[71]:

- «Ծնողները պետք է «բարի գործոց օրինակով դաստիարակեն իրենց զավակները», «Ծնողները պետք է «նախ իրենց կեանքն ուղղեն և ապա իրաւունք ունենան իրենց զավակները խրատելու», իրենց զավակներին դաստիարակեն այնպես, որ նոքա հայրենատուր սուրբ կրօն, հաւատք անարատ ու անեղծ պահեն, Հայաստանեայց եկեղեցին սիրեն, եղբայր սիրեն, ընկեր սիրեն, մարդասեր լինին, ազգ սիրեն, հայրենիք սիրեն եւ նոր հին անշքացեալ փառք ու յիշատակը չի մոռանան, նոքա կիսակործան տաճարները յիշեն, ուսումն սիրեն, գիտութիւն սիրեն, դպրոց սիրեն, գիրք սիրեն, եթե քաղաքացի են՝ նոր աշխարհի այլ եւ այլ արհեստները սորվին. անխարդախ լինին վաճառելոյ եւ գնելոյ մեջ: Իսկ եթե շինական են, հող սիրեն, մաճ սիրեն եւ աշխատութիւն սիրեն»: «Օրինեցեք, որ նոքա [զավակները.-Ռ.Ն.] ամուսնասէր լինին, տնաշէն եւ տնտես լինին. Բարի եւ ազնուական ընտանիք կազմեն, որով միայն հնար է, որ ազգային կեանքը բարւոքի, բարձրանայ իւր համբաւ եւ փառք» (նույն տեղում, էջ 279-280):

1.5. Ղևոնդ Ալիշանի երկերի ազգագրական համառոտ բնութագիրը: Բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ Ղևոնդ Ալիշանը ծնվել է Կ.Պոլսում 1820թ. հուլիսի 6-(18)-ին դրամագետ-հնագետի ընտանիքում: 1832թ. մեկնել է Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ ուսումնառության, 1840թ. պաշտոնապես ճանաչվել է Մխիթարյան միաբանության անդամ: Եղել է Հռոմում, Փարիզում, Վիեննայում, Բեռլինում, Լոնդոնում, Գենտում (Բելգիա), Միլանում, Բրյուսելում, սակայն երբեք չի եղել Հայաստանում: 1872թ. մինչև կյանքի վերջը մշտապես ապրել է Վենետիկի Ս. Ղազար կղզում, որտեղ էլ մահացել է 1901թ. նո-

[71] Ի դեպ, Ա. Պետրոսյանը Խրիմյանի ազգագրական գործունեությանը անդրադառնալիս առանձնացրել է նրա՝ հայ բանարվեստի ընտանեկան դաստիարակության համար մեծ խորհուրդ ունեցող նշխարներին (տե՛ս ***Ա. Պետրոսյան,*** Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, էջ 161-171):

յեմբերի 9(22)-ին[72]: Ալիշանը եղել է հայ ժողովրդական բանարվեստի առաջին գնահատողներից և բանահավաք ուսումնասիրողներից[73]: «Հայոց երգք ռամկականք» (1852) ժողովածուն մեր գիտական բանագիտության առաջին աշխատություններից է: Գիտական հոդվածներով Ալիշանը հանդես է եկել 1843-ից՝ «Բազմավեպ»-ի էջերում: «Տեղագիր Հայոց մեծաց» (1855) աշխատության մեջ տեղագրել է պատմական Հայաստանի նահանգները (Վասպուրական, Սյունիք, Արցախ, Այրարատ, Տայք և այլն»), տվել նրանց համապատասխան գիտաաշխարհագրական բնութագրությունը: Գրքում տրված է Հայաստան աշխարհի «բնական նկարագիրը», այսինքն՝ գետեր, լեռներ, տարբեր վայրերի կլիմայական բնութագրություններ, կենդանական աշխարհի գիտական նկարագրություն, արհեստների տեսակներն ու ըստ գավառների տարածված լինելը: Աշխատությունն ավարտվում է տեղանունների հանգամանալի ցանկով: «Տեղագիր Հայոց Մեծաց»-ը՝ իբրև պատմական Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ հմտալից տեղեկատու ձեռնարկ, դարձել է ոչ միայն Հայաստանի պատմությամբ ու աշխարհագրությամբ, այլև ազգագրությամբ զբաղվողների սեղանի գիրքը:

Ալիշանը նախատեսել էր գրել պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգների մասին պատմաաշխարհագրական և ժողովրդագրական բնույթի աշխատություններ, որոնք պետք է զետեղվեին 20-22 մեծադիր հատորներում: Շարքի առաջին գործն է «Շիրակ, տեղագրություն պատկերացույց»-ը(1881), որտեղ Ալիշանը հանգամանալից քննության է ենթարկել այդ գավառի պատմությունն ու աշխարհագրությունը՝ ազգագրական պատկերներով հանդերձ: Այնուհետև իրար են հաջորդել «Սիսուան, համագրություն Հայկական Կիլիկիո և Լևոն Մեծագործ» (1885), «Այրարատ, բնաշխարհ Հայաստանյաց» (1890) և «Սիսական, տեղադրություն Սյունյաց աշխարհի» (1893) աշխատությունները, որոնք կոթողային ուսումնասիրություններ են: Այդ գործերում Ալիշանը մասնագիտական մանրակրկիտությամբ տեղագրել է Հայաստանի պատմական նահանգների լեռները, գետերը, լճերը, ձորերը, բուսական ու կենդանական աշխարհը, արժեքավոր տեղեկություններ հաղորդել քաղաքներում, շեներում ու գյուղերում եղած մեծ ու փոքր պատմական հուշարձանների մասին: Նրա տեղագրական երկերում հավաքված են բազմաթիվ մեծարժեք նյութեր հայկական վանքերի, զանազան հուշարձաններիի վրա եղած արձանագրություններից, ամփոփված են իր նկարագրած տեղավայրերից մինչ այդ հրատարակված բոլոր արձանագրությունները: Ուշագրավ են Ալիշանի «Հայապատում» (1901) և«Հայ բուսակ կամ հայկական բուսաբանություն» (1895) աշխատությունը, ուր հեղինակը հավաքել, դասդասել և գիտականորեն բնութագրել է Հայկական լեռնաշխարհի ավելի քան 3400 բույսեր ու ծաղկատեսակներ՝ 150-ից ավելի նկարներով:

«Այրարատ», «Շիրակ», «Սիսական», «Սիսուան», «Նշմարք հայկականք» (պր. 1-3), «Հայաստան-Վենետիկ», «Բնախոսություն Հայաստանի», «Հայապատում» նայլ ծավալուն աշխատությունները անխոնջ հետազոտական աշխատանքի, տեղագրական, պատմաքաղաքական, մատենագիտական, հնագիտական,

---

[72] ***Ս. Երեմյան***, կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ, 1902: Տե՛ս նաև ***Ս. Շտիկյան***, Ղևոնդ Ալիշան, (Ծննդյան 150-ամյակի առթիվ) // ՊԲՀ, 1970, N 2, էջ 13-263:

[73] ***Մարգիս Յարութիւնեան***, Ղեւոնդ Ալիշանը եւ հայոց երգերն ու հավատալիքները // «Բազմավէպ», 1-4, 2001, էջ 233-241:

ազգագրական անհամար փաստերի համահավաք շտեմարաններ են: Մեծ Հայքի մի քանի գավառներին և Կիլիկյան Հայաստանին նվիրված պատմամշակութային մենագրությունները ցայժմ մնում են չգերազանցված:

Հետազոտական մեղվաջան աշխատանքի և խոր հմտության շնորհիվ հեղինակը կազմել է համանման գավառների մանրամասն տեղագրությունը, խոսել է նրանց բուսական ու կենդանական աշխարհի մասին, նշել կարևոր վարչական, կրոնական, մշակութային կենտրոնները, նաև հիմնական գծերով ներկայացրել Հայաստանի քաղաքական պատմությունը: Ի տարբերություն նախորդ հեղինակների ծայրաստիճան կցկտուր, երբեմն էլ միմյանց հակասող պատմաաշխարհագրական պրպտումների՝ Ալիշանի ստվարածավալ մենագրությունները հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջերը քննական վերլուծությամբ այս կամ այն գավառի կամ նահանգի ճշգրտված պատմաաշխարհագրական ու մշակութային համալիր բնութագրումներ են: Դրանցում աչքաթող չեն արվել գիտակրթական, ճարտարապետական կենտրոնները, նրանց տեղագրական մանրակրկիտ նկարագրությունները, վիմագրական, հնագիտաազգագրական, ժողովրդագրական, պատմական իրադարձությունների, նշանավոր գործիչների վերաբերյալ: Ցավոք, չհասցրեց հրատարակել «Վասպուրական» երկու հատորով ստվարածավալ աշխատությունը, որի հրատարակումը մեծ նպաստ կբերեր հայագիտությանը: Նրա աշխատություններից յուրաքանչյուրը պատմաազգագրական հատուկ ուսումնասիրության գործեր են: Միայն այս կարգով հնարավոր է ամբողջական պատկերացում կազմել Ղևոնդ Ալիշանի ներդրած բազմաբնույթ գիտական վաստակի մասին: Ղ. Ալիշանի յուրաքանչյուր աշխատության իր տեսակի մեջ նախորդը չի ունեցել:

«Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց» (1895) աշխատությունը հոգևոր մշակույթի արժեքավոր ուսումնասիրություն է: Այն ընդգրկում է հայոց բնապաշտության, կենդանապաշտության, ոգիների աշխարհի, հայ հեթանոսական դիցարանի, մոգության, հմայության և այլ հարցերի բնութագրությունը: Աշխատությունում քննվում են հայկական հեթանոսության ծագումնաբանական ակունքները և այլն: Այս ինքնատիպ մենագրությունն արդյունք էր հեղինակի՝ հայ միջնադարյան ձեռագիր ու տպագիր աղբյուրների, վիմագրության, տեղագրության, հնագիտական հուշարձանների, ժողովրդական հավատալիքների երկարատև պրպտումների, որոնց հիման վրա նա քաղել էր մեծաքանակ արժեքավոր նյութեր, ենթարկել գիտական կուռ համակարգման և հետազոտել ժամանակի միջազգային կրոնագիտության մեջ ընդունված մեթոդներին համապատասխան: Աշխատության մեջ ուսումնասիրվել էր հայ հեթանոսական հավատալիքների, պաշտամունքի, դիցաբանության գրեթե ամբողջական համակարգը: Քննության էր առնվել քրիստոնեությունից հազարամյակներ առաջ հայկական ցեղերի նախնադարյան հավատալիքների ու պաշտամունքների մեծածավալ համակարգը՝ իր տարբեր դրսևորումներով՝ տարրապաշտությամբ, երկնային լուսատուների, բույսերի, կենդանիների, լեռների ու քարերի, գետերի ու աղբյուրների, բարի ու չար ոգիների, աստվածային հերոս-նախնիների պաշտամունքներով, նախնադարյան կրոնապաշտամունքային ձևերով՝ հմայությամբ, գուշակությամբ, ախտարքային հավատալիքներով, հանդերձյալ կյանքի նկատմամբ ունեցած նախնական ու հետագա պատկերացումներով: Այլ կերպ ասած՝ հայոց նախաքրիս-

տոնեական ժամանակների հավատալիքների, դիցաբանության և կրոնական պաշտամունքների ամբողջական համակարգը, որն աննախադեպ երևույթ էր հայագիտության պատմության մեջ:

«Բազմավեպի» էջերում գիտնականի տպագրած ժողովրդական տոներին և հավատալիքներին վերաբերող հոդվածների ազգագրական, գիտական արժեքը առ այսօր ըստ արժանվույն գնահատված չէ: Ղևոնդ Ալիշանի բանագիտական ակնառու գործունեությանն են անդրադարձել Ա. Ղանալանյանը[74], Ս. Հարությունյանը: Ըստ Ս. Հարությունյանի՝ Ալիշանը իր գործունեությամբ դառնում է հայ ժողովրդագիտության նախակարապետներից մեկը[75]: Ուշագրավ է Ղ. Ալիշանի՝ 1852թ. Վենետիկում հրատարակած «Հայոց երգք ռամկականք» աշխատությունը: Այն հայ միջնադարյան գուսանա-ժողովրդական և աշուղական երգերի անդրանիկ ժողովածուներից մեկն էր՝ դասական օրինակ հայ բանասիրության պատմության մեջ: Ղ. Ալիշանն իր ժողովածուում էր ամփոփել Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի մատենագրություններում պահվող հայ միջնադարյան ձեռագրերից անձամբ քաղած և ԺԹ դարում բանավոր ավանդությունից վկայված մոտ երկու տասնյակ ժողովրդական երգեր, դրանց զուգակցել նաև նույն երգերի իր իսկ կատարած անգլերեն թարգմանությունները, որով ոչ միայն մեր միջնադարյան և բուն ժողովրդական երգերի ընտրանին առաջին անգամ արժանանացավ առանձին հրատարակության, այլև դրվեց թե՛ ազգային, թե՛ միջազգային գիտական լայն շրջանառության մեջ[76]: Նշենք, որ Ալիշանի այս ժողովածուով է ի հայտ եկել հանրահայտ «Կռո՛ւնկ, ուստի՞ կու գաս» երգը:

Իր գիտական հսկայական ժառանգությամբ Ալիշանը մեծապես նպաստել է հայրենական գիտության զարգացմանը: Նրա գործերի մեծ մասը նաև հայ ազգագրության համար այսօր էլ ունեն ճանաչողական արժեք և սկզբնաղբյուրի նշանակություն:

Վերջում նկատենք, որ հոդվածում քննարկվող ժամանակաշրջանից են ռուս և եվրոպացի ճանապարհորդներ **Իվան Շոպենի** (1798-1870)[77], **Էլիզե Ռեկլյուի** (1830-1905)[78], **Հենրի Լինչի** (1862-1913)[79] և այլոց ուղեգրությունները, XIX դ. երկրորդ կեսին հրապարակ եկած մի շարք հայերեն պարբերականներ և ռուսալեզու մատենաշարեր, որոնք, կարելի է ասել, առ այսօր անսպառ ազգագրական նյութ են բովանդակում՝ տակավին չօգտագործված:

XIX դ. երկրորդ կեսին հանդես են գալիս հայկական մի շարք նոր թերթեր և ամսագրեր, որոնք ավելի, քան դարասկզբի մամուլը, ուշադրություն են դարձնում ազգագրական թեմաներին[80]: Հայերի ներքին կյանքի ու սովորույթների, մասնա-

---

[74] ***Ա. Ղանալանյան***, Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985:

[75] ***Մարգիս Յարութիւնեան***, Ղեւոնդ Ալիշանը եւ հայոց երգերն ու հաւատալիքները // «Բազմավէպ», 1-4, 2001, Վենետիկ, Ս. Ղազար, 2001, էջ 233-241:

[76] Տե՛ս նույն տեղը, էջ 235-236:

[77] **Шопен И. И.,** Исторический памятник состояния Армянской области в эпоху ееприсоединения к Российской империи. СПб., 1852.

[78] **Ռեկլյու Է.,** Լազիստան, Հայաստան և Քրդստան, Վաղարշապատ, 1893:

[79] **Линч Х.Ф.Б.,** Армения. Тифлис, 1910, т. 1-2.

[80] Այդ պարբերականներից էին՝ «Մասիս» օրաթերթը՝ Կ.Պոլսում (1884-1908), «Արծիվ Վասպուրականի» ամսաթերթը նախ՝ Կ.Պոլսում (1855-1856), ապա՝ Վարագա վանքում (1858-1864, 1873-1874), «Հյուսիսափայլը»՝ Մոսկվայում (1858-1864), «Կռունկ Հայոց աշխարհի»-ն՝ Թիֆլիսում (1860-1863), «Լրատար Արծուիկ Տարօնոյ»-ն՝ Մշո Ս.Կարապետ վանքում (1863-1865), «Արարատ»

վորապես տնտեսական զբաղմունքների ու կենցաղի վերաբերյալ առատ նյութեր են պարունակում նաև XIX դարի վերջերին և XX դ. սկզբներին հրապարակված ռուսական մի շարք մատենաշարեր ու պարբերականներ[81]:

Рафик Наапетян - ***Армянская этнография 70-80-х годов XIX века (второй период формирования армянской научной этнографии)*** - 70-80-е годы XIX века в истории армянской этнографии – это период преодоления спонтанного сбора фольклорных материалов: создаются этнографические вопросники на научной основе, интенсивно и осмысленно собираются этнографические и фольклорные тексты и артефакты. В статье представлена деятельность Г. Срвандзтянца и Гр. Халатянца по созданию программы-вопросника для этнографических исследований, анализируются ее структура и содержание. Дается оценка вкладу, которую внес в науку журнал "Эминовский этнографический сборник". Кроме того, особо отмечаются работы последователей М. Хримяна, Г. Алишана, посвященные разным историко-этнографическим регионам Армении. Так же отмечается важная роль периодических изданий, на страницах которых нашли место многочисленные фольклорные и этнографические публикации.

Rafik Nahapetyan - ***Armenian Ethnography 70-80 years of the XIX century (the second period of the formation of the Armenian scientific ethnography)*** - 70-80s of the XIX century in the history of Armenian Ethnography is characterized as a period of overcoming the spontaneous gathering of folkloric materials, the creation of ethnographic questionnaires on the scientific basis, an intensive collection of ethnographic and folkloric materials. The article describes the activities of G. Srvandztyants and Gr. Halatyants in establishing a Programme-questionnaire for ethnographic research, the structure of the program and the content. The scientific contribution of the magazine “Emins ethnographic collection” in the field is appraised. In addition, the research of the followers of the above-mentioned scientists (M. Khrimyan, G. Alishan) about different historical and ethnographic regions of Armenia are particularly noted. Besides, the important role of the periodicals of those days where numerous folkloric and ethnographic publications were found, is noted.

ամսագիրը՝ Էջմիածնում (1868-1919), «Արևելյան մամուլ» ամսագիրը՝ Զմյուռնիայում (1871-1909), «Մշակ» օրաթերթը (1872-1920), «Փորձ» ամսագիրը՝ Թիֆլիսում (1876-1881), «Բիւրակն» ամսաթերթը՝ Կ. Պոլսում (միայն նոր շրջանը՝ 1897-1900թթ.), «Նոր դար» օրաթերթը՝ Թիֆլիսում (1884-1908), «Արաքս» ամսագիրը՝ Պետերբուրգում (1887-1898), «Հանդես ամսօրյա» ամսագիրը՝ Վիեննայում (1887 թվականից մինչև այսօր):

[81] “Кавказский календарь” (Тифлис, 1845-1917); “Материалы для описания местностей и племен Кавказа” (Тифлис, 1883-1903); “Свод материалов по изучению экономического края” (Тифлис, 1887-1889 (в 5 томах); “Материалы дня изучения экономического быта государственных крестьян Закавказского края” (Тифлис, 1885-1887 (в 7 томах); “Известия Кавказского отдела Русского географического общества” (Тифлис, 1872-1917) և այլն:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՐԱՖՖԻՆ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ[1]

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Ուսումնասիրության առանցքում ունենալով մեծանուն գրականագետ Արշակ Չոպանյանի՝ Րաֆֆու ծննդյան 100-ամյակի կապակցությամբ գրած հոդվածը, ցույց է տրվում, թե ինչպես Ա. Չոպանյանը, հանգամանորեն քննության առնելով մեծ գրողի ստեղծագործությունը և նրա գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները, ունեցել է նպատակ՝ բացահայտելու Րաֆֆու վիթխարի մեծությունը, հայտնաբերելու նրա համաժողովրդական ճանաչման բացատրությունը, նրա հզոր արվեստի աննախադեպ ազդեցության գաղտնիքը: Այդ գաղտնիքը դիտվում է Րաֆֆու հայրենասիրության, նրա գաղափարախոսության խանդավառ, վարակիչ կորովի, գեղարվեստական խոսքի ու համոզիչ հավատի մեջ:

Բանալի բառեր. Րաֆֆի, Արշակ Չոպանյան, պատմություն, գրականություն, ազգային-ազատագրական պայքար, գրականագետ, վիպասան, քաղաքական ըմբռնում, գեղարվեստական տիպար, ռոմանտիզմ, իրապաշտություն, լեզու և ոճ, հայրենասիրություն, գաղափարախոսություն

Հայ գրականագիտության պատմության մեջ բազմիցս է ասվել ու խոսվել Րաֆֆու մասին, շատերն են ծանրացել մեծ գրողի ժառանգության զանազան երևույթների ու ամենատարբեր մանրամասների վրա, ստեղծվել է հարուստ գրականություն: Սակայն, թվում է, իրեն հատուկ խորաթափանցությամբ ու մեր ժողովրդի ապրած պատմության փորձի ըմբռնումով դարձյալ առանձնանում է տաղանդավոր գրականագետը՝ Արշակ Չոպանյանը:

Չոպանյանը հաճախ է անդրադարձել Րաֆֆուն: Մինչև 1937 թ. հատուկ որևէ ուսումնասիրություն չգրելով մեծ գրողի և նրա ստեղծագործության մասին՝ Չոպանյանը տարբեր առիթներով, ավելի հաճախ հայ ազգային-ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ իր հայացքները շարադրելիս հակիրճ բնութագրումներով խոսել է Րաֆֆու մասին, արել հետաքրքիր ու նրբին դիտարկումներ գրողի ստեղծագործության որոշ առանձնահատկությունների վերաբերյալ, արծարծել տարբեր հարցեր: Այդ դիտարկումների մի հիմնական մաս հաճախ ունի թռուցիկ բնույթ. կա՛մ ակնարկային գրվածք է, կա՛մ, ասենք, օրինակ, գրված է բանախոսությունների ոճով կամ ընդհանուր գնահատանքի մակարդակով:

Այսպես, դեռևս 1897 թվականի մարտին Փարիզում՝ «Աշխարհագրական ընկերության» սրահում, Չոպանյանը բանախոսություն է կարդում «Հայաստանը, նրա պատմությունը, նրա գրականությունը, նրա դերը արևելքում» թեմայով: Իր այս անդրանիկ հրապարակային ելույթում բանախոսը հակիրճ շարադրում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական էջերը, վեր հանում հին ու նոր գրականությունները, բարձր ու խոր գնահատականներով Խորենացու, Եղիշեի, Նարեկացու, Աբովյանի, Նալբանդյանի և ուրիշ երախտավորների հետ միասին

[1] Հոդվածն իբրև զեկուցում կարդացվել է 2015 թ. նոյեմբերի 17-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ Րաֆֆու ծննդյան 180-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում:

ներկայացնում նաև Րաֆֆուն[2]: Իսկ 1901 թ. «Անահիտում» տպագրած մի հոդվածում արևմտահայ ու արևելահայ նշանավոր շատ գործիչների հետ Րաֆֆուն էլ տեսնում է մեկը նրանցից, ովքեր «կատարած են գործ մը աւելի կենդանի, ժողովրդին ամբողջական պէտքերուն աւելի գոհացում տուող»[3]: Այստեղ Չոպանյանը ամենից առաջ գիտակցել է տալիս Րաֆֆու գործի պատմական նշանակությունը:

Կողմնակի առիթով Րաֆֆուն տված բնութագրումների տեսանկյունից ուշագրավ և հատկապես շահեկան է 1902 թ. Ա. Չոպանյանի՝ Փարիզում Վիկտոր Հյուգոյի ծննդյան 100-ամյակի պաշտոնական հանդիսությանը կարդացած ճառը, որում հեղինակը, իր հարգանքը մատուցելով ֆրանսիացի մեծ գրողին ու նրան ծնունդ տվող երկրին, վերջինիս տված գնահատականների դիրքից բացահայտում է Րաֆֆու արժեքը մեզ համար. «Վիքթոր Հիւկոյի անունը,- գրում է նա,- սրբազան անուն մը դարձած է Հայոց համար, որոնք զայն կ'արտասանեն այնքան երկիւղածութեամբ, որքան անունը Րաֆֆիին, մեր ազգային մեծ վիպասանին որ հրեղէն էջերու մէջ վերապրեցուց մեր հայրերուն փառաւոր պայքարները եւ իր եղբայրները մղեց պապենական արի աւանդութիւնը վերանորոգել՝ զիրենք խեղդող ու նուաստացնող լուծը թօթափելու համար»[4]: Այս տողերում ակնառու է գրականագետի ջերմ ոգևորությունը Րաֆֆու ստեղծագործության հասարակական նշանակության, նրա ժողովրդային բովանդակության նկատմամբ, որ արտահայտվել է այնքան ինքնատիպ անմիջականությամբ:

Չոպանյանը, ինչպես իմանում ենք 1903 թ. «Անահիտի» թիվ 2-3 համարից, նպատակ է ունեցել մեկ մատենաշարով ֆրանսերենով հայ գրականության լավագույն էջերը թարգմանաբար տրամադրելու օտար ընթերցողին: Այդ լայն ծրագրի մեջ նա կարևոր տեղ էր հատկացրել նաև Րաֆֆուն[5]: Ցավոք, Չոպանյանին չհաջողվեց այդ մտահղացումը ամբողջությամբ իրականացնել ու հրատարակել գործեր նաև Րաֆֆուց, սակայն այն հանգամանքը, որ Չոպանյանը Եղիշեի, Նարեկացու, Շնորհալու, Աբովյանի, Պարոնյանի, Դուրյանի և մեր այլ մեծերի ստեղծագործությունների հետ կարևորել է նաև Րաֆֆու գործերի թարգմանությունը, դարձյալ հուշում է, որ նա էական տեղ է գրողին հատկացրել մեր գրականության պատմության մեջ: Շատ մեծ տեղ հատկացնելով Րաֆֆուն՝ Չոպանյանը, սակայն, մի առիթով արտահայտում է շատ վիճելի տեսակետ՝ գրելով, թե Րաֆֆու գործերում խիստ պակասում է §հայկական¦ գեղեցկագիտական նոթը¦[6]: Այս հատկանիշի կապակցությամբ Րաֆֆու համեմատությամբ առաջնությունը տալով Աբովյանին, Պռոշյանին, Դուրյանին, Պարոնյանին, Ալիշանին՝ Չոպանյանը, կարծում ենք, ամենևին էլ ճիշտ չի վարվում Րաֆֆու հետ. չէ± որ Րաֆֆու գրեթե ողջ ստեղծագործությունը իր բովանդակությամբ ու ձևով թևդում է հայկականությամբ, անգամ կարելի է ասել, որ ազգային §նոթը¦ նրա ստեղծագործության բնորոշ էությունն է: Ինչևիցե…

---

[2] Տե՛ս ***Դալլաքյան Կ.***, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 96-97:

[3] ***Չօպանեան Ա.***, Մխիթարի գործը, §Անահիտ¦, 1901, թիւ 8, էջ 179:

[4] ***Չօպանեան Ա.***, Ազգային քրոնիկ, Վիքթոր Հիւկօ եւ հանոթօ., §Անահիտ¦, 1902, թիւ 2, էջ 35:

[5] Տե՛ս ***Չօպանեան Ա.***, Հայկական մատենադարան, §Անահիտ¦, 1903, թիւ 2-3, էջ 40:

[6] Տե՛ս ***Դալլաքյան Կ.***, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 199-200:

Մեծ վիպասանին նվիրված հատուկ աշխատություն գրելու առիթը Չոպանյանը, ինչպես արդեն նշեցինք վերևում, ունեցավ միայն 1937 թվականին՝ Րաֆֆու ծննդյան 100-ամյակի կապակցությամբ՝ երկրորդ շրջանի «Անահիտի» էջերում հրապարակելով մի ծավալուն հոդված[7], ուր արդեն խոր և բազմակողմանի, ամբողջական ու հանգամանորեն ներկայացնում է գրողի դիմանկարը: Պետք է նկատել, որ այդ հոդվածը աչքի է ընկնում առաջադրված հարցերի բազմազանությամբ, որոնց շարքում էական տեղ են զբաղեցնում նաև Րաֆֆու քաղաքական ծրագրերի, ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ հեղինակային վերլուծությունները: Այդ վերլուծություններում մարմնավորվել են նաև գրականագետի ու ազգային մեծ գործչի քաղաքական ըմբռնումները, որոնք, որքան էլ հետաքրքիր, այնուամենայնիվ դուրս են մեր զեկուցման նպատակներից, ուստի մենք մտածված անհրաժեշտություն չենք տեսել անդրադառնալու դրանց:

Հոդվածի սկզբում Չոպանյանը տարբերակում է գրողների երկու խումբ. մեկը՝ «տիեզերական կյանքը», համամարդկային հարցերը վարպետորեն արտահայտող, իսկ մյուսը՝ միայն իր ազգին հուզող կենսական խնդիրները ներկայացնող: Քննադատը Րաֆֆուն անվերապահորեն զետեղում է երկրորդի մեջ՝ նկատելով, որ «հայը ունեցած է այդպիսի գրագետներու և բանաստեղծներու բույլ մը, որ կսկսի հին ժամանակներու Եղիշեեն, Խորենացիեն ու Ֆրիկեն և կուգա կհանգի Րաֆֆին կանխող Չամչյան վեհաշունչ պատմագրին, Արսեն Բագրատունի և Ղևոնդ Ալիշան դյուցազներգականերուն, Աբովյանին, Ծերենցին»[8]: Հայրենաշունչ գրողների շարքը լրացնելով նաև արդի գրական դեմքերի՝ Թումանյանի, Իսահակյանի, Սիամանթոյի, Վարուժանի և ուրիշների անուններով՝ գրականագետը «այդ շքեղ բույլին մեջ» մի առանձնահատուկ տեղ է հատկացնում Րաֆֆուն, ով, ինչպես ինքն է գրում, «կմնա մեծագույնը՝ գրական այն սեռին մեջ, որուն ընդլայնող ու զարգացնողը եղավ, ամենեն հզոր դեմքը հայ վեպին»(681):

Մեզանում Րաֆֆու՝ «իբր ազգային հարցին կամ հայ պատմութենեն քաղված նյութերու նվիրված վեպեր գրողի» անմիջական նախորդներ ճանաչելով Աբովյանին, Մեսրոպ Թաղիադյանին, Չամչյանին, Արսեն Բագրատունի և Ալիշան Մխիթարյաններին և հատկապես Ծերենցին՝ Չոպանյանը Րաֆֆու ամենամեծ արժանիքը տեսնում է մեզանում դեռ նորամուտ վեպի ժանրին նոր բովանդակություն, իր «անձնական հզոր շունչով» առավել ներգործության ուժ, հուզականություն և հատկապես արդիական հնչեղություն հաղորդելու մեջ(տե՛ս 681): Րաֆֆու գրական ճաշակի ձևավորման գործում Չոպանյանը կարևոր տեղ է վերապահում նաև եվրոպացի վարպետներից՝ Հյուգոյից, Դյումայից և Վալտեր Սքոտից կրած ազդեցություններին՝ չանտեսելով նաև գրողի «գերզգայուն քնարերգական հրավառ խառնվածքի» էական նշանակությունը:

Ուշագրավ է, որ հոդվածում Չոպանյանը Րաֆֆու գործը գնահատում է ոչ թե ինքնամփոփ և ինքնաբավ ձևով, այլ համաշխարհային, ընդհանուր հայ, մասնավորապես հայ նոր գրականության տեսադաշտի վրա, անհրաժեշտ զուգահեռներով ու զուգորդումներով: Չնայած որ այդ համեմատությունները ավելի հաճախ

---

[7] Տե՛ս ***Չոպանեան Ա.***, Րաֆֆի, §Անահիտ¦, 1937, թիւ 5-6, էջ 27-58: Այս հոդվածը տպագրվել է §Հայ դասականների գրադարան¦ մատենաշարի §Արշակ Չոպանյան¦ հատորում, որից էլ օգտվել ենք մենք. տե՛ս ***Չոպանյան Ա.***, Երկեր, Եր., 1988, 872 էջ, առաջաբանը՝ Կարլեն Դալլաքյանի:

[8] ***Չոպանյան Ա.***, Երկեր, Եր., 1988, էջ 681: Այսուհետև այս հրատարակությունից կատարած մեջբերումների համապատասխան էջը կնշվի տեքստում՝ փակագծերի մեջ:

ծավալվում են ընդամենը մի քանի տողով, սակայն տված գնահատականները ունեն գիտական լրջություն և ցույց են տալիս, թե ըստ ամենայնի որքան ճիշտ է Չոպանյանը ըմբռնել ու հասկացել Րաֆֆու ստեղծագործության առանձնահատկությունները, նրա գործի դերը մեզ համար: Օրինակ. «Չեմ կրնար ըսեր թե Րաֆֆի ավելի մեծ է քան Աբովյանը: Աբովյան ամենեն մեծ դեմքերեն մեկն է, որ հայ ցեղեն բղխած ըլլան, ան հիմնադիրն է արևելյան Հայոց նոր գրականության գրե- թե բոլոր սեռերուն, և իր լավագույն էջերուն մեջ՝ անոր ոճը ավելի ջղուտ, գունագեղ և ինքնատիպ է քան Րաֆֆիինը. բայց և ան, շատ տեսակ բանի ձեռնարկած ըլլալով, մեծապես անհավասար է իր արտադրության մեջ. **Վերքն** իսկ զուրկ է որոշ հատակագծե մը, ամեն ինչ կա հոն վեպի հետ, ու շատ տկար մասեր կգտնենք շատ զորեղ էջերու քով: Րաֆֆի ավելի սիստեմավոր, ավելի զուսպ վիպագիր մըն է,- իսկական վիպագիր: Եվ անիկա ավելի ընդարձակ, ավելի բազմատարր վիպագիր, ավելի մեծաթռիչ ու ներուժ գրագետ է քան Ծերենցը…»(683): Իսկ Րաֆֆու՝ Արսեն Բագրատունու ու Ալիշանի հետ ունեցած համեմտության համատեքստում ընդգծվում է հատկապես Րաֆֆու լեզվի առավելությունը, նրա՝ արևելահայ գրական-գեղարվեստական խոսքի ձևավորման ասպարեզում ունեցած նշանակալից դերը. «…Արևելյան Հայոց գրական լեզուն… այդ հանճարեղ գրագետին բնազդական ճաշակին շնորհիվ եղավ պարզ, հստակ, ճկուն, կորովի աշխարհաբար մը, արևելյան գրական նոր հայերենի առաջին գեղեցիկ ու հղկված կիրարկումը…»(683),- գրում է Չոպանյանը:

Եվ վերջապես Չոպանյանը Րաֆֆու արվեստի ամենակարևոր հատկանիշներից մեկը համարում է այն «ինքնաստեղծ» տիպարները, որոնք, ի տարբերություն գրական նախորդների ստեղծած պատմական հերոսների և իրական դեմքերի, կոչված էին իրենց մտացածին արարքներով ժողովրդին ոգևորելու և նրան մղելու ազատագրական պայքարի: «Այդ նորանշան սիստեմը, զոր հայ գրականության մեջ դեռ ոչ մեկը չէր կիրարկած, եվրոպական գրականության մեջ ալ տակավին հազվադեպ էր այն ատեն» (693),– եզրակացնում է գրականագետը:

Ուշադրության արժանի է նաև քննադատի տեսակետը Րաֆֆու ռոմանտիզմի առանձնահատկությունների վերաբերյալ: «Րաֆֆի ռոմանտիկ մըն է էապես, բայց և ունի դիտելու կարողություն» (683),– գրում է նա: Գրողի ստեղծագործական համակարգում հանգուցային նշանակություն ունեցող այդ իրողությամբ է Չոպանյանը բացատրում նրա ստեղծագործության մեջ կենցաղի, բարքերի, իսկ հաճախ էլ առանձին դեպքերի ու դեմքերի ռեալ, իրական նկարագրությունը, հանգամանք, որ հիմք է տալիս գրականագետին նաև ենթադրելու, թե Րաֆֆու մի շարք գործեր «արդեն առաջին փորձերն են հայ իրապաշտ վեպին, որ հետո, Շիրվանզադեի, Մուրացանի, Նար-Դոսի, Արփիարյանի, Զոհրապի և այլոց գրչին տակ իր լիալիր զարգացումը պիտի ստանար»(702): Այս և հատկապես Րաֆֆու ստեղծագործական երևակայության ուժը նկատի ունենալով՝ Չոպանյանը իրավացիորեն նրա գրական մեթոդը կապում է Հյուգոյի ռոմանտիզմի հետ՝ եզրակացնելով. «Րաֆֆի ռոմանտիկ մըն է Հյուկոյի տեսակեն, որուն խանդավառ հոգին ու մեծաթռիչ միտքը ոչ միայն կարող են մերթ իրականությունը դիտել և գոյություն ունեցող մարդկային տիպարները ճշգրտությամբ ներկայացնել, այլև կարող են, ինչոր բարձրագույն արվեստի մը մեծագույն տաղանդի մը ապացույցն է, երևակայությամբ հղացված դեմքեր կենդանի տիպարներու վերածել»(706–707): Նման գնահատմամբ, կարծում ենք, Չոպանյանը ոչ այնքան ուզում է ցույց տալ ռո-

մանտիկ Րաֆֆու գրական մտածողության առանձնահատկությունը, որքան նրա ստեղծագործության գործնական, առարկայական ու պատմական նշանակությունը:

Կարլեն Դալլաքյանը այս դատողությունների մեջ նկատում է երկու գրողների ստեղծագործական առանձնահատկությունների համադրման այլ եզր. «Չոպանյանը Րաֆֆուն համեմատելով համաշխարհային գրականության մեծ ռոմանտիկների հետ, նրան համարում է «Հյուգոյի տեսակեն» այն բանի համար, որ նրա հերոսները «ժողովրդի ծոցեն ելած ու մարդկային ընկերության անարդարություններեն զզված ըմբոստ ու պայքարասեր» մարդիկ են, որոնք պայքարում են «չքավոր ժողովուրդը կեղեքող ու շահագործող գեշ հովիվներուն դեմ»[9]:

Գալով Րաֆֆու ստեղծագործական ժառանգության գրական-պատմական արժևորմանը՝ Չոպանյանը շատ բարձր է գնահատում հատկապես գրողի գործի ազատատենչ ու մարտասեր ոգին, ներշնչման ու ոգևորման հզոր ուժը և վերջինիս՝ սերունդների վրա թողած մեծ ազդեցությունը: Այդ կերպ գրականագետը հաստատում է Րաֆֆու գործի պատմական արժեքի հեռանկարային բովանդակությունը. «Ո՛չ մեկ հայ հեղինակ– ասիկա պետք է ըսել ու կրկնել,– գրում է ուսումնասիրողը,– Եղիշեեն ու Խորենացիեն ի վեր, այնպիսի խոր ազդեցություն ունեցած է իր դարաշրջանի հայ երիտասարդության վրա, ինչպիսին ունեցած է Րաֆֆին»(707):

Այսպիսի եզրահանգման համար քննադատին հիմք են ծառայում նախ հայ իրականության մեջ տեղ գտած շարժումները 1890-97 թվականներին: Չոպանյանը նկատի ունի ամենից առաջ ազգային-ազատագրական շարժման աննախընթաց համաժողովրդական բնույթը, որի առաջին օրինակները արդեն պատկերվել էին Րաֆֆու գործերում: Քննադատը ինքնատիպ ու զորեղ այս երևույթը բացատրում է Րաֆֆու՝ իր ժամանակի հետ ունեցած բացառիկ փոխազդեցությամբ. «Տիպարները, զոր Րաֆֆի ստեղծեց…, իրոք երևան եկան Րաֆֆիի մահեն քիչ հետո»(694): Ճիշտ է, ինչպես նկատում է Չոպանյանը, հայ ժողովուրդը ամբողջությամբ չհետևեց Րաֆֆու գաղափարներին, «փոքրաթիվ երիտասարդություն մը միայն խանդավառվեցավ այդ իդեալով ու ջանաց կետ առ կետ գործադրել ինչ որ Րաֆֆիի հերոսները կ'ըսեին ու կ'ընեին», սակայն միաժամանակ «շատերը գլխավորապես Րաֆֆիի հերոսներու հետևողներ եղան, ոմանք նույնիսկ այդ հերոսներու անուն առին իբրև իրենց ստանուն կամ մարտանուն»(694):

Րաֆֆու վեպերի հերոսների անունները ձեռք են բերում խորհրդանշական բովանդակություն և խտացնելով իրենց մեջ գաղափարական նշանակություն՝ շարունակում են իրենց առաքելությունը արդեն որպես իրական հերոսներ, կենդանի անուններ: Չոպանյանը նման դեպքերից վկայակոչում է Սասունի՝ 1894 թվականի առաջին ապաստամբությունը կազմակերպող երկու հնչակյան հեղափոխական գործիչներ Համբարձում Պոյաճյանին և Միհրան Տամատյանին, որոնք «Մուրատ և Ֆահրատ կեղծանուններն առած էին և անոնցմե հետո,- ինչպես գրում է քննադատը,- հնչակյան, արմենական, դաշնակցական, վերակազմյալ՝ ինչքան գործիչներ Սաքո, Կարո, Ասլան, Համո, Որսորդ կոչվեցան»(694): Անունների այս ընդհանրացումը ցույց է տալիս, թե Րաֆֆին ինչ ազդեցություն է գործել սերունդների վրա: Չոպանյանը Րաֆֆու վեպերի գործած այդ խոր ներգործութ-

[9] ***Դալլաքյան Կ.***, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 436-437:

յունը հայտնաբերում է նաև նոր ժամանակներում՝ Վանի ու Մուսա լեռան, իսկ հետո նաև Ղարաքիլիսայի ու Սարադարապատի բախտորոշ կռիվներում հայ զինվորների դրսևորած պատերազմական հանդգնության, «զաղափարապաշտ գերազնիվ անձնազոհության» մեջ: Քննադատը բացահայտում է նաև այդ ազդեցության գաղտնիքը. «Եվ ատիկա անոր համար, որ ան (Րաֆֆի-Վ. Ա.) իր հայրենասիրական և ազատասիրական գաղափարները կտարածեր ոչ թե հասարակ քարոզներով, այլ տաղանդավոր վիպասանի կենդանի տիպարներով ու պատկերներով» (707):

Րաֆֆու արվեստի այս և նախորդ անկրկնելի յուրահատկությունները նկատի ունենալով էլ ահա Չոպանյանը նրան արժանացնում է «Հայոց «ազգային վիպասան» բարձրագույն տիտղոսին:

Այսպիսով, ամփոփելով վերը ասվածը, կարող ենք ասել, որ Ա. Չոպանյանը իր ազգային-հասարակական, գրականագիտական գործունեության ընթացքում գրեթե միշտ էլ տեսադաշտում ունեցել է Րաֆֆուն, բազմաթիվ առիթներով անդրադարձել է նրա ստեղծագործությանը, իսկ վերջինիս ծննդյան 100-ամյակին նվիրված հոդվածում հանգամանորեն քննության առնելով մեծ գրողի ստեղծագործությունը և նրա գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները՝ ունեցել է նպատակ՝ բացահայտելու Րաֆֆի-գրողի վիթխարի մեծությունը, հայտնաբերելու նրա համաժողովրդական ճանաչման բացատրությունը, նրա հզոր արվեստի աննախադեպ ազդեցության առեղծվածը: Այդ առեղծվածը դիտվում է Րաֆֆու հայրենասիրության, նրա գաղափարախոսության խանդավառ, վարակիչ կորովի, գեղարվեստական խոսքի ու համոզիչ հավատի մեջ:

Вачаган Авагян - ***Раффи по оценке Аршака Чопаняна*** - Исследуя статью именитого литературоведа Аршака Чопаняна, которая была посвящена столетию Раффи, мы показали, как А. Чопанян, обстоятельно рассматривая творчество великого писателя и особенности его художественного мышления, имел целью выявить величие Раффи, найти объяснение его общенародному признанию и раскрыть секрет беспрецедентного влияния его могущественного искусства. Этот секрет рассматривается в патриотизме Раффи, в восторженной и заразной мощи его идеологии, в художественном слове и убеждающей вере.

Vachagan Avagyan - ***Raffi in the evaluation of Arshak Chopanyan***.- Based on the article written on the occasion of Raffi's 100th anniversary of birth by the prominent literary critic Arshak Chopanyan the present article dwells upon the latter's research (having studied thoroughly the work of the distinguished writer and the characteristics of his artistic thinking) to uncover Raffi's enormous greatness, to find out the explanation of his immense and world-wide popularity and the secret of the unprecedented influence of his powerful art. That secret lies in Raffi's patriotism, in the enthusiastic and infectious lustiness of his ideology, in his artistic speech and persuasive faith.

ԿԻՆԸ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ բազմադարյա գրականության պատմության մեջ դժվար է պատկերացնել կանացի հոգեբանության ավելի մեծ գիտակ, քան Գրիգոր Զոհրապն է: Նա սիրում և գնահատում էր գեղեցիկը, սիրում միշտ շրջապատված լինել գեղեցիկ իրերով, կյանքը զարդարել գեղեցիկ կանանց ընկերակցությամբ: Զոհրապի նկարագրած կանայք բոլորն էլ գեղեցիկ են: Նրանք եղնիկի աչքեր ունեն, երբեմն բարձրահասակ են, մարմնեղ, ավելի հաճախ՝ նրբամարմին: Սակայն հեղինակը կնոջ գեղեցկությունը միայն արտաքին գեղի իմաստով չի հասկանում, այլ հոգեկան: Նա իր կերպարի մեջ կրքոտությամբ որոնում է հոգու գեղեցկությունը, օժտում է նրանց այդ գեղեցկությամբ:

Բանալի բառեր. նորավեպ, կերպար, սիրո հոգեբանություն, համեմատություն, երկ, հոդված, գաղափարական բովանդակություն, գեղարվեստական լուծում, նկարագրություն, կառուցվածք

Կանացի հոգեբանության ավելի մեծ գիտակ, քան Գրիգոր Զոհրապն էր, դժվար է պատկերացնել մեր բազմադարյա գրականության պատմության մեջ: Նրա նովելների գերակշիռ մասը առնչվում է կնոջ և սիրո՝ մարդկային հարաբերությունների շարժիչ ուժի, վերլուծությունների ճանաչմանը:

Զոհրապը սիրում և գնահատում էր գեղեցիկը, սիրում միշտ շրջապատված լինել գեղեցիկ իրերով, կյանքը զարդարել գեղեցիկ կանանց ընկերակցությամբ: Զոհրապի ընկեր և գրչակից Հր. Ասատուրը իր «Դիմաստվերների» մեջ նրան ներկայացնում է մարդկային նկարագրի մանրամասներում: «Ինչպես գրականութեան մէջ, ինչպէս ներքին կեանքի մէջ, Զօհրապ խանդավառ գեղապաշտ մըն էր,- գրում է Ասատուրը: Երբ տեսնէր սիրուն գեղօր մը (պիպլօ), գեղարուեստական շէնք մը, արուեստագէտի նկար մը, չէր կրնար անտարբեր աչքերով անցնիլ անոնց առջեւէն: Ներդաշնակ նուագ մը իր հոգիին խորը թաքուն թելեր թրթռացնելով, իր աչքերուն մէջ հրճուանքի փայլիւնը կը շողացնէր միշտ»[1]: Տան մեջ ևս նա գեղապաշտ էր: Կահ կարասին՝ նրբարվեստ ու ճոխ, Էդգար Շահինի կտավների հարևանությամբ, գեղահյուս գորգեր, թանկարժեք ու հազվագյուտ ճաշի սպասներ: Սիրում էր համադամ խորտիկներ, ճաշի սեղանը միշտ զարդարված էր դաշտային թարմ ծաղիկներով: Սիրում էր շուտ-շուտ փոխել կահույքը՝ հետևելով նորաձևությանը: Հագնվում էր բացառիկ ճաշակով ու գեղեցիկ, արդուզարդի համար մեծ գումարներ էր ծախսում: Երբ տեղական դերձակներից գոհ չէր լինում, դիմում էր Փարիզի վարպետներին: Գերագույն հաճույք էր զգում կնոջ և աղջկա «արդուզարդի ուղղեցույց ըլլալ»: Ժապավենի երանգները, կիսազգեստի կամ իրանազգեստի կտրվածքը նրա ճաշակով կամ ցուցումներով էր համաձայնեցվում: Գեղապաշտ տանը, կենցաղում, մարդկանց մեջ, երաժշտություն լսելիս, ամեն տեղ նա համակ ազնվական էր: Այս ամենից հետո պատահական չէր Զոհրապի տածած սերը դեպի կին արարածը և այն, որ նովելների մեծ մասը առնչվում էր կնոջ և սիրո թեմաներին:

[1] http://www.azator.gr/yushatetr/3304--1861-1915

Զոհրապը, որ ամեն հարցում նորարարության, նոր բարքերի կրքոտ ջատագովն ու պաշտպանն էր, ամեն ինչ անում էր ձերբազատվելու դարերով եկած նահապետականությունից, զարմանալիորեն պահպանողական էր, երբ հարցը վերաբերում էր կանանց ուսման հարցին: Այդ տարիներին գրված հոդվածներից մեկում Զոհրապը գրում է. «Ինչո՞ւ էրիկ մարդիկ չեն ամուսնանար շատ ուսյալ աղջիկներու հետ,- կին ըլլալե կըդադրի իմ աչքիս. արհեստավոր մըն է մտքի որոճումներու մեջ ընկղմված, գիտության կամ գրագիտության հետամուտ, որ կանացի պչրանքը մերժած է առնական խոհունությունը, լրջությունը առնելու համար, որ իր մազերը շտկելուն խնամք չի տանիր, շրջազգեստին վայելուչ հանգրիճումին չի մտածեր, ու փողոց ելած պահուն իր ոտքին սիրուն պճեղը ցույց տալու չանցներ մտքեն»:

«Ես այն կինը կսիրեմ միամիտ իր պարզության մեջ, իր իգական շնորհին ու կոչումին մեջ ամփոփված,- ամփոփումներու ամենեն հեշտալին,- որ կամուսնանա ոչ թե մտքի, այլ սրտի ընկեր մը առնելու համար, որ ուսման ռամկացուցիչ ազդեցութենեն զերծ մնալով, անայլայլ պահած է անկեղծ սրտի մը մաքուր ու վայրենի հրապույրը:

Տեսա՞ծ եք այն անտառները անխնամ, անշնորհ՝ իրենց պարզունակ շքեղության մեջ: Մարդկային ավերիչ գիտությունը չի անցած այդտեղեն ու չէ դպած անոր»: «Այդ անկյունը... զոր մարդիկ հավետ կարոտով պիտի փնտռեն, այդ նավահանգիստը՝ կանացի սիրտն է ահա, և հոն պիտի ապաստանենք մենք աշխարհի փոթորիկներեն: Կը բաղձանք, կը պահանջենք, որ գիտությունը, ուսումը չեղծանեն այդ վերջին դադարը մեր երազներուն և զայն գեղեցկագույն ընծայելու ջանքով իր բնական վայելչութենեն ու շնորհեն չմերկացնեն»:

Հոդվածի տպագրությունից անմիջապես հետո մամուլը հեղեղվում է թեր և դեմ կարծիքներով: Զոհրապին պատասխանում են Ռեթեոս Պերպերյանը, Սիպիլը և ուրիշներ: Ուշադրության արժանի է հատկապես Սիպիլի դիտարկումները, որ գրում է, թե «Չեմ հասկընար, թե ինչպես կրնա հաշտվիլ պչրանքի գաղափարը տանտիկնության ու մայրության գաղափարներուն հետ, և թե ինչպես կրնա ուսումը սպանել այդ գերազանցապես մարդկային ու բնական պարտականությանց զգացումը կնոջ մը սրտին մեջ»:

Միայն ամիսներ անց Զոհրապը անդրադառնում է այս դիտողություններին և գրում «Մեր աղջկանց վարժարանները» հոդվածը, ուր հակադրվելով իր քննադատներին նա առաջ է տանում իր հայացքները աղջիկների կրթության մասին. «Անոնք որ կը ճանչնան զիս իբրև ոխերիմ հակառակորդ մը իգական սեռի կրթության,- գրում է Զոհրապը այդ հոդվածում,- պիտի զարմանան, երբ մեր աղջկանց վարժարաններու խնդիրը ձեռք առնեմ հոս, զանոնք օգտակար ընծայելու միջոցներուն վրա խորհիմ քիչ մը:

Ստույգն այն է, որ ես աղջկանց համար բարեկրթություն կուզեմ և ոչ չոր կրթություն. կը փափագիմ, և հառաջադիմության գերագույն օրենքն այս կը պահանջե, որ ամեն ոք իր կոչման, իր նախասահմանության շրջանակին մեջ զարգանա և կանանց նախասահմանությունը չէ փճանալ ու կորչիլ կյանքի ամենօրյա պայքարին ու խոնջանքին մեջ: Առօրյա աշխատության ու վաստակի տաղտկալի մակարդակեն վեր բռնելով իգական սեռը, կը կարծեի որ իրեն նպաստավոր բան մը ըրած կըլլայի, ոմանք, մեծագույն մասը, եթե ոչ բոլորը մեկեն, բողոքեցին այս

բարձրացումին դեմ: Ուզեցի որ նախախնամություն մը ըլլան կանայք մեզի համար, ուղղիչը մեր զգացումներուն ու ճաշակին և անոնք ստորադաս բան մը կը համարեն այս էապես բարձր ու վեհ կոչումը. երկինքը ցույց կուտանք իրենց ու հողը ըլլալ կուզեն անոնք»[2]:

Չբավականանալով վերը նշված հոդվածով, Զոհրապը գրում է նաև մի նորավեպ, որի հարցադրումները հիմնականում վերաբերվում էին քննարկվող խնդիրներին: Այս նորավեպի («Սխալ») բովանդակությունը համընկնում է «Մեր աղջկանց վարժարանները» հոդվածի բովանդակության, ինչպես նաև տպագրության ժամանակի հետ: 1-ինը տպագրված է 1892 թվականի հուլիսի 6-ին, 2-րդը՝ 7-ին: Նորավեպի խորագիրը նույնպես ունի բանավիճային բնույթ: Այն վերաբերվում է ոչ այնքան նորավեպի հերոսուհուն, որքան «Ինչո՞ւ էրիկ մարդիկ չեն ամուսնանար շատ ուսյալ աղջիկներու հետ» հոդվածի քննադատներին, որոնց տեսակետը Զոհրապը համարում է սխալ: Վերոհիշյալ երկու հոդվածների և այս նորավեպի միջև կա նաև ուղղակի կապ: Նորավեպի հերոսուհուն հեղինակը հարմարեցնում է իր արտահայտած գաղափարներին, հարմարեցնում է կնոջ այն ըմբռնումին, որ ինքը արտահայտել էր վերոհիշյալ հոդվածում: Հատվածներ կան, որ ուղղակիորեն կրկնում են հոդվածի արտահայտած գաղափարները: «Ճաշակի տեր կին մը ըլլալու էր, որ գիտնար հովանոցը բռնել, սիրուն փոքրիկ կոշիկ մը ունենալ և գուլպային երեսը ցույց տար ամեն քայլափոխին, անհոգ ու անփույթ կերպով մը, գլխու թեթև ողջույնի մը մեջ սեղմեցնել կես ժամվա խոսակցության մը բոլոր հմայքը: Գրել ու կարդալ չգիտնար բնավ, ո՛հ, բնավ չգիտնար. կին մը ըլլար, որ իր լեզվին վստահեր միայն, որուն ձայնը ներդաշնակություն մը ըլլար ինքնին, ու խոսքերը ամբողջ քերթված մը, առանց իր գիտության»[3]:

«Մեր աղջկանց վարժարանները» հոդվածում Զոհրապը արտահայտում է այն կարծիքը, որ կինը պետք է վեր լինի «առօրյա աշխատության ու վաստակի տաղտկալի մակարդակեն», որ նա պետք է չփչանա կյանքի պայքարի մեջ: Իսկ «Սխալ» նորավեպի հերոսուհին այդպիսի պայքարի մեջ է մտել և դրանով կորցրել իր կանացի ամբողջ հմայքը: Փոխանակ ժպտալու, ցույց տալու բնության ստեղծած հրապույրները, նա դարձել է ատելի. «Իր խոժոռ, թթված երեսը, փոթփոթած ճակատը, պրկված շրթունքը՝ արհամարհանքով լեցուն՝ կը զայրացնեին զիս» (303),- գրում է հեղինակը: Դառնալով ժամանակի ամուսնական հարաբերությունների զոհը, բոլորովին դեռատի տարիքում, նա ստորագրել է մի փաստաթուղթ, որով զրկվում է հայրական կարողությունից: Ամուսնությունը, ըստ երևույթին, եղել է մի որոգայթ՝ կողոպուտի նպատակով: Եվ այժմ նրա ամբողջ հոգսը այդ կարողությունը փրկելն էր:

Հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ բնությունը օժտել էր այդ կնոջը երջանիկ լինելու և երջանկություն բաշխելու բոլոր տվյալներով, սակայն գոյապայքարը իր անսպառ հոգսերով, պատուհասներով ու ցավերով, խորտակում են նրան:

Բնության ստեղծած գերագույն արժեքներից մեկը կինն է իր հոգեկան և արտաքին գեղեցկությամբ: Նա ստեղծված է իբրև բնության պարգև՝ կյանքի ժպիտ,

---

[2] ***Զոհրապ Գր.***, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. Գ, Ե., 2002, էջ 134:

[3] ***Զոհրապ Գ.***, Երկեր, Ե., Խորհրդ. գրող, 1989, էջ 304: Այսուհետև նշված գրքի բոլոր հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն մեջբերվող էջը:

կյանքի բանաստեղծություն լինելու համար, իսկ հասարակությունը, իր առօրեականությամբ խորտակում է այդ գեղեցկությունը և կործանում երջանկության աղբյուրներից մեկը:

1880-ն թվականների վերջերից Զոհրապը տպագրում է կանացի սիրտն ու քմայքները մեկնաբանող սքանչելի նովելներ՝ «Արմենիսա», «Փոթորիկ», «Թեֆարիկ», «Առջի սեր, առջի բարի», «Կատակ», «Ճոկո», «Դիմակ», «Տալիլա» և այլն: Առաջին անգամ հայ գրականության մեջ կինը գտնում էր իր գեղագետ մեկնաբանին, արվեստագետի, որ ճանաչում և հասկանում էր նրա բառի, նայվածքի, ժպիտի, ձեռքմեկնումի ու ձեռքսեղմումի, ժանյակի, կորսետի, սրտատրոփի և հևոցի այնպես նուրբ ու չնկատվող գեղեցկությունները, որ նրան դարձնում էին այդ մեծ աշխարհի գիտուններից մեկը:

Հետաքրքիր սիրո պատմություն է ներկայացվում «Արմենիսա» նովելում: Հայ պատանին հունական միջավայրում հանդիպում է մի գեղեցկուհու, որին, նրան հետապնդող հույն երիտասարդները Արմենիսա (հայուհի) են կոչում: Հայ երիտասարդին բոլորը նախանձում են, քանի որ նա ևս հայ է: Բայց հետաքրքիր է այն փաստը, որ Արմենիսան ֆիզիկապես խորշում է հայերից և կաթոլիկություն դավանելով իրեն հայ չի համարում: Պատանուն մի ելք է մնում: Այնպես անել, որ աղջիկը կարծեր, թե ինքը ևս կաթոլիկ է: Դրա համար նա երևում է կաթոլիկ եկեղեցում և նրանց միջև սիրո դաշինք է կնքվում: Տղային ճնշում էր այն զգացումը, որ ինքը իր սիրուն հասել է ուրանալով հավատը: Սակայն, այդ խնդիրը չէ, որ քննվում է նորավեպում: Սիրո հոգեբանության ու սիրո ուժն է, որ ցուցադրվում է չափազանց արտահայտիչ կերպով: Իրեն մեղավոր զգացող պատանին փողոցում հանդիպում է քահանային, ով պարսավում է նրան երկար ժամանակ հաղորդության չգնալու համար: Արմենիսան տեսնում է նրանց և զգում, որ ինքը խաբված է:

Հոգեկան տվայտանքները նրան անկողին են գցում ու երբ կարողանում է հաղթահարել ապրումները, առաջարկում է շարունակել իրենց հանդիպումները, բայց այժմ արդեն տղան է հրաժարվում: Ո՞րն էր պատճառը: Երևի այն, որ այդ կինը կորցրել էր իր անհատականությունը, տարօրինակությունները, և դրանով իսկ կորցնում իր հրապույրի մեծ մասը. «Իր նախապաշարումները կորսնցնելով՝ այս կինը իր հրապույրներեն գլխավորը կորսնցուց, տարօրինակ ու սովորականեն տարբեր հանգամանքը նվազեցավ: Հիմա կզգամ, որ պետք է թողուլ կիներուն միշտ իրենց նախապաշարումները, սխալ համոզումները, մինչև անգամ հոռի կողմերնին» (144): Զոհրապի ցանկությունն էր մարդկային կենցաղը մոտեցնել բնականությանը:

«Թեֆարիկ» նովելը մի միամիտ սիրո ողբերգական պատմություն է: Նորավեպի հերոսուհին՝ Աշխենը, նրա սերը, ապրումները պատկերված են քնարական ջերմությամբ, որի մեջ տիրապետող երանգն է թախիծը, որը կարծես պարուրում է Աշխենի կերպարին, նրա վիշտը, ողբերգական մահը և նկատելի է դառնում հեղինակի խղճմտանքի ձայնը:

Լեռների մեջ կորած հեռավոր գյուղացի աղջիկը կարիքից դրդված ստիպված է քաղաքում աշխատանք փնտրելու: Ամուսնու կորստյան ծանր վիշտը սրտում նա կարծես ապրում է նրա հիշատակով: Աշխենը, վստահ իր կամքին, ենթադրում է, որ սիրո նոր զգացումի համար իր սրտում այլևս տեղ չկա: Ինքնամոռացությամբ ամուսնու հիշատակին նվիրված սիրտը իր դիրքերը զիջում է նոր զգացմանը: Այս նոր սերը այնքան հուժկու էր, որ կինը ինքն է արտահայտում իր

սերը, արտահայտում է լուռ, ինքն իր մեջ ամփոփված, առանց փոխադարձության որևէ պահանջի: Իր ապրած հոգեկան տանջանքներից հետո, նրա սերը ընդունում է յուրահատուկ բնույթ. մեղմ, գորովալիր, անձնազոհությամբ, նվիրվածությամբ համակված: Աշխենի միակ պահանջը թույլտվությունն է՝ «Իր խնամքներեն շինված...խանձարուրի մեջ» ամփոփել իր սիրածին որպեսզի նա «ցավ մը կամ վիշտ մը» (40) չունենա:

Բնության մեջ մեծացած պարզ գեղջկուհուն օտար և խորթ են մայրաքաղաքի կանանց «խաբեբա զգվանքները»: Նրա ազդած հրապույրները բոլորովին այլ չէ, ինչ վարժված է տեսնել քաղաքի մեղկության ու հեշտանքի սովոր, «կեղծ հրապույրների» վարժված երիտասարդը: Աշխենի սիրո վեհությունը ճնշում է նրան «այն ամսվան պայծառ օրերուն պես որոնց ջերմության ու անդորության մեջ կխեղդվիս» (40): Աշխենի առաջի սերը թերևս այնքան գիտակցված չի եղել, որքան զգալի է նրա կարոտը, բայց այժմ նա իր սիրտը նվիրել է ամբողջովին, այրելով նահանջի բոլոր կամուրջները: Այդ անկեղծ ու կաթոգին սերը և գեղջուկ միամտությունը անբացատրելի են դարձնում սիրած երիտասարդի խուսափումները: Նույնիսկ մահացու հիվանդությունը՝ սիրած տղայի պատճառով առաջացած, չի կարողանում խախտել, նվազեցնել նրա սերը, և մահվան մահճում նա «զոհ է», որ հնարավորություն ունեցավ «անձնվիրության նոր ապացույց» (41) տալու:

Նովելի ողբերգական ավարտը ավելի է խտացնում ափսոսանքի ու խղճահարություն այն զգացմունքները, որոնք ծնվում են անպաշտպան ու անմեղ այդ կնոջ պարզ ու շիտակ նվիրվածության, մաքուր սիրո ու առաքինության ներգործությունից:

Զոհրապը բժշկի նման է քննում իր հերսների սիրտը՝ կարողանում լսել ամենանուրբ ու ամենավտանգավոր զարկերը: Միջամուխ լինելով ապրումի հարատև գաղտնի ու անկրկնելի գաղտնիքներին, գրողը բացում է մարդկային հոգու ու սրտի այն անկյունները, որոնց հետ հնարավոր չէ առնչվել սովորական հպումով կամ խոստովանություններով: Արտակարգի ու անսովորի մեջ հայտնաբերվածը վերջին հաշվով այն է, ինչը այդ սերը պահում է երջանիկ անգիտության մեջ: Զոհրապը կարողանում է հասկանալ ու ճանաչել կնոջ սրտի քմայքները, և նրա առջև բացվում է մի ամբողջ գաղտնի աշխարհի թաքուն գեղեցկությունները:

Թագուկ տուտուն («Առջի սեր առջի բարի») արդեն խաղողի հատիկի պես թոռոմելով ավելի քաղցրացած, հնամենի ու ծեր մի կին, երեխաներով շրջապատված, խաղաղ, հանգիստ, լուռ, ամաչկոտ հեզությամբ թույլատրում է նրանցից համարձակներին բացել երիտասարդական օրերի իր սնդուկը և տեսնել այն աշխարհը, որտեղից եկել էր ինքը:

Սրտառուչ է որբ աղջկա պատմությունը, որն իր որդեգիրների տղայի հետ մեծացած՝ սիրում է նրան և սիրվում փոխադարձաբար, սակայն հոգեզավակ, «ընկեցիկ» աղջիկը չի կարող աչք ունենալ հարուստ որդեգիրների զավակի վրա: Ահա նորավեպի հանգույցը, որի լուծումը մի ամբողջ ողբերգություն է, «լուռ ցավ», որ Թագուկ տուտուն ավելի քան երեսուն տարի շարունակ պահել է իր սրտի մեջ, առանց որևէ մեկին հայտնելու և որ գերեզման պիտի տանի իր խորտակված սիրո անձնազոհ հավատարմության հետ:

Թագուկ տուտուն այն անսահման բարի անձնավորություններից է, որոնք գոյամարտի բախումների մեջ գերադասում են զոհ լինել, քան վնասել ուրիշին: «Ո՛ւր էր թե...երախտիքի մը պարտքին տակ չճնշվեր հիմա. փողոցի աղջիկ մը ըլ-

լար, անոք ու անտեր, մազերը թափած ու ոտքը բոբիկ մուրացիկ մը, սիրելու ազատությունը պահելով» (206)- այդպես էր մտածել Թագուկն այն օրերին, երբ վճռվում էր նրա ճակատագիրը, բայց «երախտիքի պարտքը» շատ ավելի գերակշռող զգացում է եղել, ավելին իր անձնական երջանկությունից, և նա գերադասել է դժբախտ լինել, քան վիշտ պատճառել ուրիշներին: Այս պարագան Թագուկի ողբերգության պատճառներից մեկն է, բայց գլխավոր պատճառը նրա սիրո մեծությունը, նրա հաստատամտությունը, անձնազոհության պատրաստակամությունը: Այժմ ինքն ազատ էր իր զգացմունքների հետ և կարող էր իր սրտի խորքում կրել այն «...Իր սերը կպահեր սակայն սրտին մեջ, հանցանքի մը պես, որ թողություն ստացած է, պարտքի մուրհակ զոր հատուցած էր իր բոլոր երջանկությունը տալով, և զորբիրավունք ուներ ա՛լ քովը պահելու» (207):

Փոքր, աննշան թվացող եղելությունները Զոհրապի գրչի շնորհիվ ընթերցողին հնարավորություն են տալիս իր համար հայտնաբերել աշխարհի շարժումը, կրքի, սիրո, տառապանքի, դժբախտության, երջանկության տարածքներում գտնելով այն, ինչ թանկ է ու գեղեցիկ, նվիրական, երբեք կասկածի չենթարկվող զգայություններ, որով անկասկած յուրաքանչյուր անհատ կապվում է մեծ կյանքի ռիթմին:

Զոհրապի կանանց կերպարները միանշանակ չեն բարոյական լիցքավորվածությամբ, բայց նրա համակրանքը ունեցող հերոսուհիների կենսագրականներում չի կարելի գտնել փաստեր, որոնք կասկածի տակ դնեն նրանց առաքինությունը: Այն գեղեցիկ ու հմայիչ կանայք, որ շարժել են նրա հետաքրքրությունը, բոլորը անխտիր, մարդկային տեսակետից բարձր անձնավորություններ են, առաքինի ու զոհաբերող, սիրո մեջ անձնուրաց ու հետևողական:

«Մագթաղինե» նորավեպի հերոսուհին՝ տասնյոթամյա հասարակաց տան աղջնակը, պատկերված է տպավորիչ ընդգծումներով: Նա մարմնավաճառությամբ վաստակում է ընտանիքի գոյատևման իրավունքը: Կյանքի հատակում հայտնված աղջիկը ջերմեռանդ ու մեղավոր մարդու բարոյական մաքրություն ուներ: Պահոց օրերին չէր խախտում որևէ կարգ, չէր պառկում այցելուների հետ, վերջին օրն էլ ծոմ էր պահում հաստատ գիտենալով, որ իր նմաններին չեն թողնում հաղորդության: Հեղինակը չի մեղադրում նրան, ընդհակառակը, նա իր հերոսուհուն օժտում է մարդկային լավագույն գծերով, ցույց է տալիս, որ Մագթաղինեն այդ ապականության մեջ անգամ պահպանել է հոգեկան մաքրությունը, միամտությունը: Նա ընդունակ է անձնազոհության և ինքն էլ գիտակցում է իր զոհողության մեծությունը:

«Երջանիկ մահը» նովելում Զոհրապը անդրադառնում է ամուսնական հավատարմության խնդրին: Հարցի գեղարվեստական լուծումը հանձնում է երկուստեք ճաշակած երջանկության փիլիսոփայական ավարտին՝ սիրած տղամարդու գրկում մեռնելու փափագին, որն իրականանում է կնոջ համար գերագույն մի ակնթարթում՝ պարահանդեսի վալսի գլխապտույտի մեջ, սրտատրոփի ու նվաղման, վայելքի ու երջանկության ամենաթեժ պահին: Սիրած տղամարդու գրկում գտած մահը Զոհրապը համեմատում է իր բնի մեջ զարնված թռչունի հետ: Եղելությունները պատկերելուց հետո Զոհրապը դատողություններ է կատարում կնոջ կյանքի վերաբերյալ: Այս կնոջ կյանքը, ի տարբերություն սպասուհիների ձեռքում ամանները լվանալու ժամանակ կեղտոտ ջրի մեջ կոտրվող ափսեների ու բաժակների, նմանեցնում է խնջույքի պահին բուռն զգացմունքներ արտահայտող

իրար բախվող ու փշրվող հախճապակե բաժակի: Այնուհետև Զոհրապը կարծես կանացի գեղեցկության ներբող է հյուսում, ասելով, որ. «Հիվանդություններու, ցավերու մեջ չտառապեցավ, ծերությունը չփճացուց իր շնորհները, պաշտելի ու պաշտված կին մնաց մինչև վերջի վայրկյանը» (87):

Կինը Զոհրապի համար սովորական էակ չէ, այլ գեղեցիկը տեսնելու և զգալու միջոց, ստեղծագործելու աղբյուր: Ահա թե ինչու նա կնոջ լավագույն հատկությունը համարում է նրա մարմնական ու հոգեկան գեղեցկությունը և այնքան վախենում է այդ գեղեցկության, կյանքի բանաստեղծության աղբյուրներից մեկի խաթարման համար: Իր այս միտքը Զոհրապը արտահայտել է. «Կինը ծիծաղ մըն է, պետք չէ, որ լացի փոխվի» (84):

Անուրջի մեջ «ընդհնշմարվող» կինը չի կարող տգեղ լինել, և Զոհրապի նկարագրած կանայք բոլորն էլ գեղեցիկ են, «նրբացողուն ծաղիկի» պես դյուրաթեք, ճկուն, սլացիկ իրաններով: Նրանք եղնիկի աչքեր ունեն, ինչպես և «թաքուն կայծակներով» լի աչքեր, որոնք «տիեզերքին երանությունը իրենց ծոցին մեջ կը պահեն»:

Կնոջ գեղեցկությունը ցույց տալու համար Զոհրապը ընդարձակ նկարագրություններ չունի, մի երկու ուրվագիծ, որ միայն շրջանակ է ստեղծում, իսկ մնացած լրացումները թողնում է ընթերցողներին:

Չնայած սեղմ ու ուրվագծային նկարագրություններին, քիչ հեղինակներ են կարողացել արտացոլել կնոջ գեղեցկությունն այնպես, ինչպես այն հաջողվել է Զոհրապին: Գեղեցիկը զգալու և պատկերելու Զոհրապի ունակությունները արտահայտվել են նաև այդ նկարագրությունների մեջ:

Զոհրապի հերոսները երբեմն բարձրահասակ են, մարմնեղ, ավելի հաճախ՝ նրբամարմին, սակայն ըմբոստ և լիքը կրծքով, առատ մազերով, որ հեղինակը ամենից ավելի է սիրում նկարագրել, ձյունափույր և փոքրիկ թաթիկներով, մանրիկ ոտքերով, հաճախ վես, խրոխտ, զգացմունքների արտակարգ ջերմությամբ օժտված: Սակայն հեղինակը կնոջ գեղեցկությունը միայն արտաքին գեղի իմաստով չի հասկանում, այլ հոգեկան: Նա իր կերպարի մեջ կրքոտությամբ որոնում է հոգու գեղեցկությունը, օժտում է նրանց այդ գեղեցկությամբ: Զոհրապը ցանկանում է, որ կնոջ «ձայնը ներդաշնակություն մը ըլլար ինքնին, ու խոսքերը ամբողջ քերթված մը»: Ահա այսպիսի կինն է, Զոհրապի կարծիքով, կյանքի ժպիտ լինելու ընդունակ:

Ունենալով այդպիսի վերաբերմունք կնոջ նկատմամբ, Զոհրապը իր նկարագրությունների մեջ երբեք չի գրել վավաշոտություն և մեղկության զգայությունը: Սերը և կինը նա պատկերել է դասական ներշնչմամբ, մերժելով տռփանքը, հեշտամոլությունը: Սերը, ըստ Զոհրապի, այնպիսի բնական, անաղարտ զգացմունք է, որ չի ապականվում: Իր հրապույրները վաճառելու հարկադրված Մագթաղինեն անգամ պահպանել է սիրո մաքուր զգացմունքը:

Զարմանալի գեղեցիկ են գրված Զոհրապի նովելները, գեղեցիկ են նրանց կառուցվածքի միշտ նորատիպ մտահղացումները, նրանց մուտքերը, վերջավորությունների գյուտերը, գեղեցիկ է շարադրելու, պատմելու ձևը, հարուստ ու հյութալի լեզուն, ինքնատիպ ոճը, անսպառ համեմատություններն ու նկարագրությունները, որոնք ընթերցողին անմիջապես կապում են երկի հետ, փոխադրում հերոսների աշխարհը:

Асмик Григорян - *Женщина в новеллах Григора Зограпа.* - В многовековой армянской литературе трудно представить себе более крупного знатока женской психологии, чем Григор Зограп. Он любил и ценил прекрасное, любил находиться в окружении красивых вещей и украшать свою жизнь дружескими отношениями с красивыми женщинами.

Все описанные Зограпом женщины прекрасны. У них глаза, как у серны, они иногда высокие, полные, в теле, но чаще- стройные. Однако автор видит и ценит не внешнюю красоту женщины, а внутреннюю, духовную. Он в своих образах страстно ищет красоту души, и сам наделяет их этой красотой.

Hasmik Grigoryan - *The Notion of Woman in Grigor Zohrap's Novels.* - In the long history of Armenian literature one cannot imagine a greater expert of woman's psychology than it is Grigor Zohrap. He liked and evaluated the beauty, and was fond of being surrounded by beautiful things, and embellished the life with the presence of beautiful women.

The women that Zohrap describes are all beautiful. They all have eyes of deer, sometimes they are tall, stout, and more often slim. Despite the author does not realize the beauty of woman only by the notion of the appearance, but by their inner beauty. He is passionately looking for the inner beauty in his image, and endows them with that beauty.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐՆ ԱՇՈՒՂԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՆԴՐԱՆԻԿ ԺԱՄԿՈՉՅԱՆ

Հոդվածում քննության են առնված հայ ժողովրդա-մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստի այնպիսի նմուշներ, որոնք իրենց մեջ ներառում են աստվածաշնչյան թեմատիկա կամ վերաբերվում են աստվածաշնչյան որևէ կերպարի: Ի հակադրություն խորհրդային տարիների այն կարծիքին, որ գուսանական-աշուղական և առհասարակ ժողովրդա-մասնագիտացված պոեզիան որոշակիորեն հակադրված է եղել եկեղեցուն՝ հայ հոգևոր և աշուղական երաժշտության համեմատական քննությամբ հիմնավորվում է այն փաստը, որ Աստվածաշունչը հայ ժողովրդի համար կատարել է ոչ միայն օրինաստեղծ դեր, ոչ միայն ընկած է նոր պետականության գաղափարի և նոր գրականության ու եկեղեցական արվեստի հիմքում, այլև դարեր շարունակ կենդանի հավատի և հուզական դրսևորումների հիմք է հանդիսացել ժողովրդա-մասնագիտացված արվեստի՝ մասնավորապես գուսանական-աշուղական պոեզիայի համար, ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը:

Բանալի բառեր: Աշուղական, Աստվածաշունչ, աշուղ, Նոր Կտակարան, Դավիթ մարգարե, Հիսուս, աստվածաշնչյան կերպար, Ներսես Շնորհալի

Ժողովրդա-մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստը, որն ընդունված է անվանել աշուղական, հաճախ անդրադարձել է աստվածաշնչյան թեմաներին և կերպարներին, իսկ աշուղական համքարությունների խորհրդանիշը, կամ աշուղների հովանավոր փիրը համարվել է աստվածաշնչյան Դավիթ մարգարեն[1]:

Մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելը հայ աշուղների միջավայրում լայնորեն տարածված էր աստվածաշնչյան թեմաներով ավանդապատումները և երգերը: Կոնստանդնուպոլսի Բյուրակն հանդեսի համարներից մեկում Մուշեղ վարդապետը հրատարակել է հոդված՝ նվիրված այդպիսի երգերին[2]: Արևմտահայ աշուղները, անգամ եթե երգում էին թուրքերեն, հաճախ այդ երգերում ընդգրկում էին աստ-վածաշնչյան մոտիվներ և քրիստոնեական բարոյախոսություն: Մուշեղ վարդապետը հիշատակում է Ակեահ, Ֆահզի և Խրիտար աշուղների հոգևոր թեմաներով երգերը, որոնք իրենց հորինվածքով և տաղաչափության կանոններով տիպիկ հայկական են: Հեղինակի մեջբերված տեքստերից մեկն աշուղ Խրիտարի թեճնիսն է.

Իպրիտա ստեղծեց տէրն Ադամ Եւա,
Թէնպիհ ըրավ մ'ուտէր Այբ ու Յի ու Սէ
ԱՅՍ թէնպիհը տէրսը ըրաւ Եւայի,
Վեց հազար տարի քաշեց Եչ ու Այբ ու Սէ
ԵԱՍ քաշեց լմնցուց վեց հազար տարին
Թէքրար սատանայէն ձեռագիր առին,

[1] ***Ա. եպս. Ժամկոչյան,*** Աստվածաշունչը և հայ բանավոր ավանդույթը, Երևան, 2012, էջ 203:

[2] ***Մուշեղ վարդ.,*** Երգը իբր հոգեկան պէտք, §Բիւրակն¦, Կ. Պոլիս, 1900, էջ 57-59:

Լուսըն ծագեց Ադամ Եւայի տարին,
Սրտերնուս լըմընցաւ Փիւր Այբ ու Սէ:
ՓԱՍէն[3] գերի խալըսեց ըստեզծող տէրը
Ուրախացաւ Ադամ Եւա մեր հէրը,
Մէկ խոսաց վըրայ Աբրահամ հէրը,
Քառսուն օր ծոմ կեցաւ Պէ ու Այբ ու Սէ:
ՊԱՍ ու ծոմ կենալն լաւ է ինսանին,
Պարզերես Աստուծոյ տիվանը տանին,
Սուրբ Կարապետ տայ մուրատն ԽՐԻՏԱՐԻՆ
Ձեռնէդ լից տուր խմեմ Թօ ու Այբ ու Սէ :[4]

Աշուղական պարզ հանելուկի ձևի մեջ շարադրված այս երգը, որի յուրաքանչյուր քառատողի վերջում տառերով արտասանվում է հաջորդ քառատողի սկզբի բառը, իրա-կա-նում բացատրում է քառասնօրյա պասի առաջացումը, հիշելով նույնիսկ կիսա-առաս-պե-լա-կան տոմարագետ, քրիստոնեական ծիսական տոմարի հեղինակներից մեկին՝ Էաս Աղեք-սանդրացուն:

Աշուղական խրատական բանաստեղծությունն առատորեն օգտագործում է ինչպես Աստվածաշնչի թեմաները, այնպես էլ խորհրդապաշտությունը: Աշուղ Միրզայի ՙՄաքուր պահեք սուրբ կիրակին» երգը հրատարակված է մի շարք բանահայուսական ժողովածուներում, ինչը վկայում է երգի մեծ ժողովրդականություն վայելելու մասին[5]: Նույն աշուղի «Մեղայ քըզի, Հիսուս որդի» երգը ծանոթ է Գ. Սրվանձտյանցի գրառած նյութերից[6]:

Այս երգում Տէր Հիսուսը ներկայանում է որպես տիեզերաստեղծ և օրենսդիր.

Ստեղծեցիր երկինք գետինք,
Ձանազան օրենք կապեցիր,
Արև, լուսին խուլուզ խանաթ
Տվեցիր լուսեղեն սարիֆաթ,
Աստղունք ըտիր երկինք զիննաթ,
Մեղա քըզի, Հիսուս որդի[7]:

Երգը, որի մեջ զգացվում է Ս. Ներսես Շնորհալու «Հիսուս որդի» պոեմի ոգորոշակի ազդեցությունը, անդրադառնում է ինչպես հինկտակարանյան, այնպես էլ նորկտակարանյան սյուժեներին, որոնք այս կամ այլ կերպ կապում է Հիսուսի հետ՝ «Դավիթ մարգարեն շիներ քո տուն», «Երեք թագավոր եկան, քեզ տեսան»[8]

---

[3] §Փաս¦ բառն այստեղ, հավանաբար, հոմանիշ է մթին, այսինքն, §փասէ¦ն –գերի պետք է հասկանալ §մթի գերի¦, ակնարկվում է վերը հիշատակված ադամամութը, որից ազատում է լուսաբացը: Հավանաբար, բառը կապված է §փասպան¦ գիշերապահ բառի հետ (տես՝ ***Հ. Աճառյան***, Հայերենի արմատական բառարան, հատ. IV, Եր., 1979, էջ 484):

[4] ***Մուշեղ վարդ.,*** նշվ. աշխ., էջ 58:

[5] ***Գ. Սրվանձտյանց,*** Երկեր, հատ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978., էջ 604-605: ***Տ. Նավասարդեանց, Հ***այ ժողովրդական հէքեաթներ, Վեցերորդ գ., Թիֆլիս, 1890, էջ 78-80, ***Բենսե,*** Հարք. Մշո Բուլանըխ//Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 3, Եր., 1972, էջ 139:

[6] ***Գ. Սրվանձտյանց,*** նշվ. աշխ., էջ 601-603:

[7] Նշվ. աշխ., էջ 601-602:

[8] Նշվ. աշխ., էջ 602:

և ամփոփում է «Քու դատաստան Ուռնայի կալ»[9] տողով, որը վերաբերում է Ահեղ դատաստանին:

Հոգևոր, մասնավորապես, աստվածաշնչյան թեմատիկա է բնորոշ նաև Սինանօղլու, Հովհաննեսի և ուրիշների ստեղծագործությանը: Ժողովրդից ելած աշուղը ժողովրդական իմաստնության, խրատի ու առակի տարածողն էր, ուստի հատկապես աշուղական ար-վեստում ներկայացված աստվածաշնչյան դիցաբանությունը վկայում է այն ակն-ա-ծան-քի մասին, որը տածում էր Ս. Գրքի հանդեպ ժողովուրդը:

Մյուս կողմից, այդ արվեստը վկայում է նաև այն մասին, թե ինչ գիտեր ժողովուրդը Աստվածաշնչից: Քննությունը ցույց է տալիս, որ հատկապես Նոր Կտակարանին ժողովուրդը բավականին լավ ծանոթ էր, իսկ Հին Կտակարանից լավ գիտեր միայն Ծննդոց և Ելից գրքերը, ծանոթ էր առանձին մարգարեների և որոշ չափով՝ Թագավորաց գրքերին:

Ժողովրդի մեջ սիրով երգվում էին հայ եկեղեցու շարականները, Ս. Ներսես Շնորհալու հոգևոր տաղերն ու երգերը, որոնք այնքան տարածված էին (որոշ չափով՝ տա-րած-ված են և այսօր), որ գոյություն ունեն դրանցից մի քանիսի («Խորհուրդ մեծ և սքանչելի», «Առաւօտ լուսոյ»[10], «Առաքելոյ աղաւնոյ», «Զարթիք») մեծ թվով ժողովրդական տարբերակներ: Գոյություն ունեն նաև Հիսուսի խաչելության մասին երգեր, որոնց մեծ մասը տարածված է եղել Արևմտյան Հայաստանում ինչպես հայերեն, այնպես էլ թուրքերեն և քրդերեն:

Աստվածաշնչյան թեմաներով աշուղական երգերը ժողովրդա-մասնագիտական արվեստի առանձին ժանր են կազմում: Աշուղների համար աստվածաշնչյան թեմաները խրատական բանաստեղծության մի տեսակ են, այսինքն, Աստվածաշնչի հերոսները և սյուժեները կիրառվում են ճիշտ այնպես, ինչպես եկեղեցական հայրերի գրվածքներում՝ օրինակ ծառայելու համար: Աշուղական երգերում, սակայն, ընտրվում են հիմնականում դրա-կան օրինակները:

Եթե խորհրդային տարիներին համարվում էր, որ գուսանական-աշուղական և առհասարակ ժողովրդա-մասնագիտացված պոեզիան որոշակիորեն հակադրված էր եկեղեցուն[11], ապա մեր օրերում ավելի օբյեկտիվ մոտեցումը հիմնավորում է մեկ այլ դրույթ. չափազանցված դրսևորումներից դուրս հայ եկեղեցու և ժողովրդի ճաշակն արվեստի ու գրականության բնագավառում շատ մոտ էր՝ ինչպես գրականության, այն-պես էլ հատկապես մանրանկարչության և զարդաքանդակի վերաբերյալ: Աստվածաշունչն ընկալվում էր ժողովրդի կողմից առաջին հերթին որպես օրինակելի գրականություն, և հատկապես Հին Կտակարանում զետեղված երգային քնարական նմուշները (հատկապես, Սաղմոսարանը և Երգ երգոցը) ժողովրդական օժտված երգահանի համար խթան և չափանիշ էին ծառայում: Ավելին, այնպիսի օժտված հոգևորականներ, ինչպես ս. Ներսես Շնորհալին, Հովհաննես Թլկուրանցին, Հովհաննես Երզնկացին, Դավիթ Սալա-

[9] Նշվ. աշխ., էջ 603:

[10]Որպես հարսանեկան ծիսական երգ երգվում էր առավելապես Արևմտյան Հայաստանում, տես՝ ***Բենեք,*** Բուլանըխ, կամ Հարք գաւառ, ԱՀ, գ. Ե, Թիֆլիս, 1899-N 1, էջ 114:

[11]§Ինչպիսի բովանդակություն ել վոր ասելու լինեյին գուսանները, բուն ուրախության, այսինքն գինու, թե սիրու կամ լացի, դրանց հակառակ է եղել եկեղեցին|. տես՝ Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական երգեր, Յեր. Արմֆան, 1940, էջ 11:

ձորեցին, ըստ էության ստեղծագործում էին նաև աշուղական արվեստի կանոնի մեջ՝ ինչպես տա-ղա-չափության, այնպես էլ ժանրային առումով: Այսպիսով իսկ ժողովրդական և մասնագիտական պոեզիայի միջև հակասություն չկար, և դա էր այն որոշիչ հանգամանքը, որի շնորհիվ աստվածաշնչյան սյուժեներն ու գաղափարներն ազատ կենցաղավարում էին ժողովրդական ստեղծագործության մեջ:

Ժողովրդական բանաստեղծի, այդ թվում՝ գուսանի երևակայությունը լիցք էր ստանում նաև աստվածաշնչյան կերպարներից ու պատմություններից: Պատահական չէ հատ-կապես դրախտից քշված Ադամի կերպարը հայրեններում.

Դու յայն պտուղն ի նման,
Ջինչ Ադամ կերաւ խաբուելով...[12]
կամ
Ծոցիկդ Ադամայ պաղչայ,
Մէջէն պաղ աղբիւր կու բխայ[13]:

Աստվածաշնչյան մյուս հերոսներից հիշատակվում են Հովսեփը, Հուդան և չարախոս օձը, որը դարձավ Ադամին դրախտից վտարելու պատճառ, Աբրահամը, աղքատ Խազարը [14]:

Հայ աշուղների սուրբ-հովանավորն է համարվել աստվածաշնչյան Դավիթ մարգարեն: Ալեքսանդրապոլի (Գյումրիի) աշուղական համքարության դրոշի վրա պատկերվել է Դավիթ մարարեն՝ քնարը ձեռքին (Տեքստեր Բ N 61): Դավիթ մարգարեն հայրեններում հանդես է գալիս միաժամանակ որպես սրբազան երգիչ և մեղքեր թողնող սուրբ.

Դաւիթ մարգարէ, իմ հոյս,
Շատ մեղտունք ունիմ, թէ թողու՞ս [15]:

Ինչպես գիտենք, Դավիթ մարգարեն քնարական խորհրդանիշ է հայ բնահայուսության մեջ: Հայրեններում, ինչպես զուտ ժողովրդական, այնպես էլ հեղինակային, նա հա-ճախ ներկայանում է սիրահարված հերոս[16]: «Աղվան և Օսան» աշուղական սիրավեպում նրա արարքն է հիշատակում հուսահատորեն սիրահարված հերոսը որպես մի մար-դու, որը Ուրիայից խլել է նրա միակ տիկնոջը՝ Բերսաբեին (բ Թագ. ԺԱ).

Ախ, Դավիթ մարգարէի պէս մի կտրի ծառըս,
Ձեռքիցս մի խլի մի հատիկ գառըս, աման օյ, օյ...[17]

Անկախ այն բանից, թե հատկապես հայրեններն ու անտունիներն ընկալվել են որպես հեղինակային թե ժողովրդական ստեղծագործություններ, հայ քնարական բանահյուսությանը բնորոշ է դիմել Հիսուս Քրիստոսին, քրիստոնեական սրբերին, խրատել՝ ապավինել եկեղեցուն, ժամ գնալ՝ սիրո ու երջանկության համար աղոթելու, այդ երգերին բնորոշ է նաև խոր հավատն առ Աստծո ամենակարողությունը, գթասրտությունը: «Աստվածամարտության» մոտիվները, որոնք իրականում իրենցից ներկայաց-նում են դժբախտ սիրահարների ան-

[12] ***Մ. Աբեղյան,*** նշվ. աշխ., էջ 114:
[13] Նշվ. աշխ., էջ 128:
[14] Նշվ. աշխ., էջ 82, 132, 148, 162, 195, 263:
[15] Նշվ. աշխ., էջ 184:
[16] ***Հայրեններ,*** (լիակատար ժողովածու), աշխ. Ա. Մնացականյանի, Մատենադարան, §Նաիրի¦, Եր., 1995, էջ 59, 115, 392:
[17] ***Սպ. Մելիքեան,*** Շիրակի երգեր, Թիֆլիս, 1917, էջ 71:

հասցե բողոքը, և ինչպիսիք ինքնասպանության չիրագործվող մղումներ ու «գափրիելական փողին» արժանանալու, անգամ գերեզմանից դուրս, անարգ ու անպատիվ թաղված լինելու բաղձանք արտահայտող տողերում տեսնում էին խոր-հր-դա-յին շրջանի մասնագետները, խիստ չափազանցված են: Նույնքան չափազանցված է գոնե մինչև 14-րդ դ. եկեղեցու պայքարը գուսանական արվեստի դեմ: Որքա՞ն անարդյունավետ պիտի լիներ այդ պայքարը, եթե ժողովրդա-մասնագիտացված արվեստի ներկայացուցիչների զգալի մասը դեռևս 20-րդ դ. սկզբին կազմում էին հոգևորականները, և արդյոք կա՞ր այդպիսի պայքարի կարիք, եթե աշուղական արվեստի գոհարների մեջ ոչ թե հեթանոսական, այլ հենց աստվածաշնչյան դիցաբանության հետ կապված կեր-պար-ների գերակայություն կա:

Այսպիսով, ակնհայտ է, որ Աստվածաշունչը հայ ժողովրդի համար ոչ միայն կատարել է օրինաստեղծ դեր, ոչ միայն ընկած է նոր պետականության գաղափարի և նոր գրականության ու արվեստի հիմքում, այլև դարեր շարունակ կենդանի հավատի և հուզական դրսևորումների խարիսխ է ծառայել: Աստվածաշնչյան կերպարները սիրված էին այնքան, որ փոխարինում էին հին տեղական դիցաբանության կերպարներին, նրանց հետ էր կապվում աշխարհընկալումը և պատկերացումները տիեզերակառույցի մասին: Միա-ժա-մանակ, բուն աստվածաշնչյան սյուժեները նույնպես սիրված ու տարածված են եղել հայոց մեջ՝ նաև որպես բարոյագիտական հիմք և սովորույթների հիմնավորում:

Андраник Жамкочян - ***Библейские мотивы в ашугской лирике.*** - В статье исследованы такие примеры армянского народно-профессионального музыкально-лирического искусства, которые включают библейскую тематику или касаются какого то персонажа из Библии. Вопреки мнению, распространенному в советские времена, что гусано-ашугская и вообще народно-специализированная поэзия в некотором смысле был противопоставлена церкви, с помощью сравнительного исследования армянской духовной и ашугской музыки доказывается тот факт, что для армянского народа Библия сыграла не только законосозидающую роль и не только стала основой идеи новой государственности, новой литературы и церковного искусства, но и веками являлась вдохновительницей живой веры и эмоциональных проявлении для народно-профессионального искусства, в частности для гусано-ашугской поэзии: вплоть до начала 20-ого века.

Andranik Zhamkochyan - ***Biblical motifs in the poetry of ashughs.*** - In the article such examples of the Armenian folk-professional musical-poeyical art are investigated, which include biblical fabulas or concern any biblical personage. Despite the opinion distributed in Soviet times, that gusaon-ashugh's and generally folk professional poetry in some sense was opposed to the church, the comparative analysis of the Armenian spiritual and ashugh's music the proves the fact that for the Armenian folk the Holy Bible not only played the role of creating regulative norms and not only became the basis for the idea of state, new literature and church art, but also during centuries was a motivator for the living faith and emotional revelations for the folk-professional art and particularly for the gusan-ashugh's poetry up to the beginnings of the 20th century.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ Ռ. ՍԵՎԱԿԻ, Վ. ԹԵՔԵՅԱՆԻ ԵՎ Տ. ՉՐԱՔՅԱՆԻ (ԻՆՏՐԱ) ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐՄԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

Հոդվածում դիտարկվում են հայկական նեոռոմանտիզմի որոշ դրսևորումներ արևմտահայ գրողներ Ռ. Սևակի, Վ. Թեքեյանի և Տ. Չրաքյանի (Ինտրա) ստեղծագործության մեջ:

Ռ. Սևակի սիրո ռոմանտիկական աշխարհը ծփում է թարմագեղ ու ինքնաբուխ հույզերով, հորդուն զգացմունքի հեթանոս արտափայլումներով: Այդ կենսազգացողության սևակյան ընկալումը հայկական նեոռոմանտիզմի «հեթանոս տարեգրության» հմայիչ էջերից է:

Վ. Թեքեյանի ստեղծագործության մեջ ևս նկատելի են 20-րդ դարասկզբի ռոմանտիկական տրամադրությունները, մասնավորապես նոր ռոմանտիզմի գեղագիտության էական դրույթները:

Արևմտահայ գրականության ամենահակասական ներկայացուցիչներից մեկի՝ Տ. Չրաքյանի ստեղծագործության մեջ իշխում է նեոռոմանտիկական հոսանքի խորհրդապաշտական թևը՝ դեկադանսի որոշ երանգներով:

Բանալի բառեր. Նեոռոմանտիզմ, Ռ. Սևակ, սիրային քնարերգություն, դասական ռոմանտիզմ, դիցաբանական սիմվոլիկա, գեղագիտական դրույթներ, արևմտահայ գրականություն, Վ. Թեքեյան, խորհրդապաշտական ուղղություն, Տ. Չրաքյան, հեթանոս աստվածներ, մահվան խորհրդանիշ, դեկադանս:

Հայկական նեոռոմանտիզմի բնորոշ արտահայտություններից են արևմտահայ հեղինակներ Ռ. Սևակի, Վ. Թեքեյանի և Տ. Չրաքյանի ստեղծագործական համապատասխան էջերը:

20-րդ դարասկզբի արևմտահայ բանաստեղծների շարքում իր նրբաթով քնարով առանձնանում է Ռ. Սևակը. հայ գրականագիտության մեջ (Հր. Թամրազյան)* իրավացիորեն արտահայտվել է այն տեսակետը, որ նրա տաղանդի փայլատակումը դեռ առջևում էր…

Սիրո տառապանքի, վայելքի ու աստվածացման նրբաթելերից են հյուսված այդ թեմայով գրված սևակյան բանաստեղծությունները, որոնք, ըստ հեղինակի ցանկության, պետք է ամփոփվեին «Սիրո գիրքը» խորագրի ներքո, բայց, ինչպես հայտնի է, հետագա ողբերգական իրադարձությունները և բանաստեղծի եղերական մահը անավարտ թողեցին ինչպես այս, այնպես էլ մի շարք այլ ստեղծագործական մտահղացումներ:

Ռ. Սևակի սիրո ռոմանտիկական աշխարհը ծփում է թարմագեղ ու ինքնաբուխ հույզերով, հորդուն զգացմունքի խորունկ արտափայլումներով: Իբրև սի-

* Հր. Թամրազյանը «Ռ. Սևակի առեղծվածը» հոդվածում գրում է. «Դանդաղ աճի մի բանաստեղծ էր, անվերջ որոնում էր, նվաճում… Ճանապարհի վրա էր: ….Եվ դրանով հանդերձ՝ Ռուբեն Սևակն իր՝ համեմատաբար դանդաղ աճի ընթացքում չի նսեմանում: ….Դանդաղ աճ ունեցող տաղանդները թերևս ավելի երկար ճամփա են բռնում, ապրում տևական զարգացում» (տե՛ս ***Հր. Թամրազյան***, Հայ քնարերգուներ, Գիրք Ա, Եր., 1996, էջ 311, 312):

րերգակ՝ բանաստեղծը թովում է սիրո գույների զարմանահրաշ կերպընկալմամբ:

Սևակի սիրային քնարերգության մեջ նուրբ ու ինքնօրինակ են ապրումի և գեղեցկության հեթանոս խավավորումները: Գեղագիտական հարուստ լիցքերով հատկանշվող այդ կենսազգացողության սևակյան ընկալումները հայկական նեոռոմանտիզմի «հեթանոս տարեգրության» հմայուն էջերից են:

Սիրած էակը «խենթեցնող հավերժահարս է բողբոջ», իսկ կարոտի և սպասման քաղցրամշուշ հոգեվիճակում գտնվող բանաստեղծը՝ նրա «տաճարի քուրմ-երգիչը դողդոջ», որ օրհներգում է սիրո զգացումն իբրև կյանքի բարձրագույն խորհուրդ և անհրաժեշտություն. այն «կյա՛նքն է կյանքին» («Եկո՛ւր»):

Ռոմանտիկական հախուռն տարերքով են լեցուն Ռ. Սևակի սիրո երգերը, որ տենչավառ հիացքի, մեղքի ու վայելքի արբշիռ թրթիռներով են շնչում: Ահա «Երգ- երգոց»-ը, որտեղ մերթ տեսլային ու մշուշոտ, մերթ տաք ու իրական գույներով հառնում է սևակյան գեղեցկուհու՝ «հյուսիսայգի աչքերով տժգույն աղջկա» կերպարը:

Ռոմանտիզմի տիրական հմայքը, ձուլվելով սիրերգակի ներանձնական հուզապրումներին, գեղարվեստական հիասքանչ պատկերներ է նրբագրում.

Քու կապույտդղ վճիտ, աղվոր ջուրերու
Եթերային անո՛ւշքի՛ն է հանգույն.
Ու քու կարմի՛րդդ Պենկալյան վարդերու
Երազամած կարմըրության պես տժգո՛ւյն…

Սիրած էակի հազիվ որսալի ուրվապատկերը, որ նախ ճառագայթի կամ փրփուրի խաղ է հիշեցնում, քմայապաշտ ծաղկի կամ ցնորաշուք ստվերի պես կանչում է բանաստեղծին, հետզհետե, տուն առ տուն լցվում ու նյութեղենանում է՝ ի վերջո, խիստ շոշափելի գծեր ստանալով. «Ու անութիդ որոշ մեկ ծալքը նորեն/ Գիտեմ որ զիս պիտի տանջե մինչև լույս…»: Մեղքի մասնիկը թափանցում է նույնիսկ աստվածաշնչյան քողի մեջ. Քանանի գինուց առավել քաղցր է սիրուհու մարմնից ծորացող մեղսաբույր խունկը…

Ռ. Սևակի թե՛ «Երգ-երգոց», թե՛ մի շարք այլ բանաստեղծություններում («Գինով սեր», «Բույրը», «Սիրո աղբյուր», «Համբույրը», «Եկո՛ւր»…) քողազերծվում են հեթանոս, չամբարվող սիրո մշուշագեղ ու խորհրդավոր ըղձանքները: Զգացական կիզակետում հայտնված հերոսուհին սիրո նախավայելքն ապրող երիտասարդի սպասումներում մարմնավորվում է որպես «մսեղեն խենթեցնող տաճար», որ գերում, արբեցնում է իր միստիկական թունավոր խնկումներով: «Խորհրդամոլ անտառներու շուքին պես» սիրուն ու թաց աչքերով այս գեղուհին չքնաղ եռամիասնության տենչալի ամբողջացումն է.

Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սերն ես:

Նշենք, սակայն, որ սիրո երջանկությանն անձնատուր քնարական հերոսին ծանոթ են կանացի հոգու մութ ու դավադիր քմայքները, անհաստատ սրտի սին խոստումներն ու մոռացման ցավը: Պաշտամունքի, արցունքի ու կեղծիքի միաձույլ հրաշակերտ է կանացի սիրտը, ուր կարկաչող սիրո չքնաղ ակունքին կից լուռ ու նենգորեն տարածվում է մոռացության անդունդն ահավոր… («Պատասխանը»):

Չենք կարող չհիշել զոհրապյան զուգահեռը. «Կանացի աչքը, անոր մէջ խորունկ նայողին համար, վիհի մը վրայ բացուող լուսամուտի մը տպաւորութիւնը

կ՚ընէ միշտ, եւ այնքա՛ն անստուգութիւններ, յեղակարծ անակնկալներ կ՚ընդնշմարուին հոն…» («Կարծեմ թէ»)[1]:

Սիրո էության բնութագրման մի գեղեցիկ փորձ է Ռ. Սևակի «Սերը» բանաստեղծությունը, որտեղ սիրո զգացմունքը «սահմանելիս» քնարերգուն խիզախում է «երկխոսության» մեջ դնել երկու հակոտնյա եզրեր՝ հեթանոսական և քրիստոնեական սիմվոլները.

Սերն՝ հեթանոս երջանկությու՛նն է խաչվա՛ծ.
Սերն ա՛յն կուռքն է, որուն առջև ծնրադրած
Որբի՛ մը պես պիտի ողբար ի՛նքն Աստված…

Դիցաբանական սիմվոլիկան գրավիչ աղբյուր է դառնում քնարերգուի համար, և ծայր են առնում նրբագույն պատկեր-զգացողությունները.

Ու տեսա որ, հինավուրց դիցուհիի պես աղվոր,
Իրենց ձյունի անարատ սրբության մեջ համորեն,
Թևերնին վեր, անծանո՛թ ափունքներու ուխտավո՛ր,
Անրջանքիս կարապները սահեցա՛ն համրորեն…
(«Սիրո մրմունջ»)

Կամ՝

Արցունքիդ մեջ նայադներ պար կը դառնան:
(«Երգ-երգոց»)

Մեկ անգամ ևս համոզվում ենք, որ խորհրդապաշտությունը դարասկզբի արևմտահայ բանաստեղծների գործերում ձեռք բերեց ուրույն, անկրկնելի գծեր և չդարձավ եվրոպական խորհրդապաշտական հոսանքի կույր պատճենումը:

Ռ. Սևակը ևս, ինչպես նրան սերնդակից արևմտահայ մյուս բանաստեղծները, անտարբեր չմնաց ժամանակի ազգային-քաղաքական աղետների և համաեվրոպական մշակութային տեղաշարժերի հանդեպ:

Հայոց ազգին պատուհասած դաժան փորձությունները, կիլիկյան ջարդերը անջնջելի հետք թողեցին նրա հոգում: Այդ տարիներին հայրենի երկրից հեռու գտնվելով՝ նա խորապես տարված էր արյան տաք շամանդաղի մեջ հոշոտվող հայրենիքի ու նրա եղերաբախտ զավակների ողբերգությամբ:

Հեռավոր ու գեղածիծաղ Լեմանի ափերը, ալպյան երկնակամարից ժպտացող լուսինը չէին կարող փարատել նրա անհուն վիշտն ու ցավատանջ ապրումները և մոռացնել այն ամենը, ինչ կատարվում էր հայրենի հողում…: Եվ որքա՛ն տարբեր էին շվեյցարական ու հայկական իրականությունները: Բանաստեղծը կերտում է այդ երկու ազգային միջավայրերի խոսուն հակապատկերը. արծաթալույս դշխոյի պես Ժնևի լճի վրա նազող լուսնկան հակադրվում է հայոց երկնքի մթնադեմ լուսնին, ձյունահրաշ, անխռով Ալպերը՝ իր հովվերգություններով կորցրած վեհանիստ Արարատին, Ռոն գետը՝ Արաքսին ու Եփրատին, իսկ մեղմանուշ ցայգի մեջ նիրհող Լեմանը՝ իր երազագեղ կարապներից զրկված Վանա ծովակին…:

Ու այս հակադրության պատկերի վրա խտանում է անլուր ոճրի իրատեսիլ մղձավանջը՝ «ընդդիմադրումի մը պահուն վսեմ» պիղծ ու ահեղ յաթաղանով սրատված կույսերի, անպաշտպան մանուկների ու ծերունիների ճիչերն ու ողբա-

[1] ***Գրիգոր Զոհրապ***, Երկ. ժող. չորս հատորով, հ. Ա, Եր., 2001, էջ 213:

ձայն հառաչանքները, հին, շքեղ ցեղի կործանվող զավակների անեծքը խավարի հետնորդներին…:

Ռ. Սևակի քնարական քերթվածները նոր երանգներ հաղորդեցին հայկական նեոռոմանտիզմի գունապնակին:

Վ. Թեքեյանի ստեղծագործության մեջ ևս նկատելի են դարասկզբի ռոմանտիկական տրամադրությունները, մասնավորապես ուրույն են ներքին հուզապրումների, վերհուշի, կարոտի ու ափսոսանքի «հեթանոս» ընկալումները: Նախկին Տենչանքներն այլևս չեն այցելում մենավորիկ հոգուն. երբեմնի արբեցումից ու սիրո վայելքից խոնջ են թե՛ շրթունքները, թե՛ սիրտը, բայց մնում է ինչ-որ դառնագին, հասուն ու իմաստավորված կսկիծ անցյալի կիսամեռ ու դեռևս երգող հիշատակների հանդեպ… «Հեթանոս» այլաբանությամբ են կերպավորվում, նյութեղեն մարմին առնում քմահաճ Տենչանքներն ու լքված հոգին.

Եվ տենչանքներն, որ մութին մեջ կ՛այցելեն,
Որոնց ի տես կը դողայի հրճվանոք՝
Մոլորեցա՞ն արդյոք ճամբան… կամ հոգիս՝
Մեհյա՛ն իրենց, աստվածներու թափառիկ,
Շատ հի՞ն գտան ու լքեցի՞ն արդյոք զիս…
(«Եվ նորեն խոնջ են շրթունքներս»)

Անձկալի ու բացակա այս տենչերը հիշեցնում են հիվանդ, հանճարեղ պատանու տարագնացիկ մեղու-տենչանքները և գուցե ծնվել են մեծարենցյան նույն այդ ակունքից.

Ալ հոգնա՛ծ եմ
Ըսպասելեն տենչանքներուս մեղրին անույշ,
Ու տարաժամ այս հածումին մեջ երջանի՛կ պիտի ըլլամ՝
Եթե թունեղ խա՛յթ իսկ բերեն
Ուղեմոլար մեղուներն իմ տենչանքներուս:

Հետաքրքիր է Թեքեյանի «Ես երազիս տիրեցի» բանաստեղծությունը, որտեղ հին առասպելի ծանոթ գուներանգներով ուրվագծվում է ցանկության ուժով նվաճված և մեռցված Երազի խորհրդանշական պատկերը: Երազակորույս բանաստեղծն ասես ստանձնել է տարփավառ թագուհու՝ Շամիրամի դերը, որ դառնագին հեծեծում է Արայի անշնչացած մարմնի հետ զուգորդվող անկյանք Երազի համար: Գեղարվեստական այս հնարքը ևս վկայում է, որ Թեքեյանի դարասկզբյան ռոմանտիկական խոկումների ու որոնումների գեղագիտական կառույցը զուրկ չէ խորհրդապաշտական տարրերից, որոնք ոչ միայն սուր ու կաշկանդիչ բնույթ չեն կրում, այլև հաղորդում են հեղինակի մտքի գողտր ու ինքնաբուխ գալարումները:

Համբույրներովս հիմա զո՛ւր կենդանացնել կ՛ուզեմ քեզ
Եվ կը կանչեմ հուշերուս հնօրյա գունտն հարալեզ
Լիզել վերքերըդ անբույժ.- դուն արդ մեռա՛ծ ես իսպառ…:

Ու թեև ցնդել, փոշիացել է նախկին անուրջը, բայց չի անէացել քաղցր ինքնախաբկանքը, թե երազն անմեռ է, անկողոպտելի: Թեքեյանի քնարերգությունն «իր հիմնական որակով ու բնույթով» ռոմանտիկական արվեստի հատկանշական

արտահայտություն է՝ սիմվոլիզմի որոշ գծերի արտացոլմամբ, իրավացիորեն հավաստում է Էդ. Ջրբաշյանը[2]:

Թեքեյանի քնարերգության խորհրդապաշտական ակունքները չեն վրիպել նաև Վ. Գաբրիելյանի ուշադրությունից: Գրականագետը, քննելով նրա բանաստեղծական արվեստի առանձնահատկությունները, բանաձևում է քնարերգուի խորհրդապաշտության յուրահատկությունը. «Թեքեյանի ապրումները, խոհերը առավելապես նկարագրական են և տպավորվում են ամբողջականության, կառուցիկության, պատկերավորության և հղկվածության շնորհիվ: Այս և հատկապես այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ապրումի խտացումը, խորհրդանիշ-պատկերը, Թեքեյանը սովորել էր ֆրանսիացի խորհրդապաշտ բանաստեղծներից՝ հավելելով իր՝ հայ մարդու մտածողության ինքնատիպ երանգը»[3]:

Երազը մոգական խորհուրդ ունի քնարապաշտ հոգու համար. անձիր ու տիրական է այդ «անդավաճան սիրելույն» հմայքը, որի առջև տարիներ շարունակ ծնրադրել է բանաստեղծը, ինչպես գահին ընկողմանած թագուհու առաջ… Մտերմիկ ու գորովալից հիացմունքով է ներբողվում անժպիտ կյանքի սադրանքին չտրվող ու «անկարելի» չճանաչող Երազը.

Կյանքին վրա, կյանքեն վեր կը բնակի անիկա,
Ան աղվոր է, ամենեն աղվորներեն ավելի,
Գուրգուրացված՝ զավկի պես, կնոջ նման՝ տարփալի:
(«Երազներ»)

Երազի ծաղկավետ ճամփաներով ընթացող հոգին, այնուամենայնիվ, հստակ գիտակցում և ընդունում է անտեղիտալի ճշմարտությունը՝ երազի վերքերին կյանքը բալասան չեղավ, և ոչ իսկ երազն ապաստան դարձավ՝ կյանքի հոգնությունը փարատելու համար («Ապրի՞լ թե ոչ երազել»):

Չառինք երազ մը կյանքեն, ու երազեն չառինք կյանք:

Ապրված կյանքի բյուրավոր էջերից և ոչ մեկը ճաճանչավոր ու համափայլ չեղավ բանաստեղծի երազին, որից տող անգամ չապրվեց («Երազ ու կյանք»): Ու լուսեղեն երազի և մթար կյանքի հակադրության ֆոնի վրա խտանում է տարակույսը. իսկ գուցե կյա՞նքը պիտի համարել անկատար ծնունդ շքեղ երազի…:

Ինչևէ, մի բան անվիճելի է. երազի խնկարկումը Թեքեյանի նախասիրած մոտիվներից է: Ներքին երկխոսությունը, հաշտ ու անտրտունջ վեճը՝ բանաստեղծի և իր Երազի միջև, ապա և անխուսափելի հաշտեցումը (բանաստեղծը չի կարող ապրել առանց իր Երազի) կրկնվող ու ցանկալի նրբագծեր են Թեքեյանի երազակենտրոն մտածումների տիրույթում:

Էդ. Ջրբաշյանը գրում է. «Նրա (Թեքեյանի - Ա. Ա.) բնորոշ և կայուն մոտիվներից

մեկը միշտ եղել է երազանքի և իրականության ցավագին հակադրությունը»[4]:

Այս իրողությունը ևս վկայում է, որ դասական ռոմանտիզմի էական դրույթներից մեկը՝ երազի և իրականության բախումը, փոխանցվեց նաև դարասկզբյան կամ նոր ռոմանտիզմի գեղագիտությանը:

---

[2] Տե՛ս ***Էդ. Ջրբաշյան***, Գրողը և ժողովուրդը, Եր., 1989, էջ 160:

[3] ***Վ. Գաբրիելյան***, Սփյուռքահայ գրականություն, Եր., 2008, էջ 45:

[4] ***Էդ. Ջրբաշյան***, Գրողը և ժողովուրդը, էջ 160:

Երազը և սերը միաձուլվում են Թեքեյանի քնարական համակարգում. անէացած երազների կորուստը կյանքի ընթացքում փայփայված ու «տենչանքիդ ընդմեջեն» սահած-անցած սերերի, խուսափուկ իդեալի կորուստն է, չհասկացված խորունկ զգացմունքների դրամատիկ դատապարտվածության դառն գիտակցումը: Այս միտումը կարմիր թելի պես անցնում է Թեքեյանի սիրերգության միջով: Օրինակները բազմաթիվ են ու մեկը մյուսից պերճախոս՝ «Ես սիրեցի», «Աղվորները», «Անունդ», «Քու հիշատակդ այս գիշեր…», «Ահավասիկ կուզեի…», «Ես զինք կարծեմ», «Դուն չգիտցար», «Երջանկություն», «Փափաք», «Անկարելին», «Ողջույն», «Խաղի համար», «Կի՛ն մը, կը հավտամ»…:

Թեքեյանի սիրո մտածումներում միայնակ ու տառապած սիրտն անչար է և շնորհապարտ է իր կյանքի բոլոր նավզիկեներին՝ այն աղվորներին, որոնք թեև առկայծեցին ու անցան, բայց նվիրական խորհուրդ հաղորդեցին նրա կյանքի հուշամատյանին, որոնք, չսիրելով հանդերձ, սիրելու հնարավորություն տվեցին մեծավոր հոգուն և թեև թախծալի, բայց տաք ու ապրեցնող հիշատակներ նվիրեցին նրան, այնպիսի հիշատակներ, որոնք կարելի է գթությամբ բաժանել աշխարհի բոլոր խեղճերին…

Անո՛նց, անուշ էակներուն, այժմ ողջո՛ւյն
Իմ անցյալիս գեղեցկության մեջ անմահ,
Անոնց ողջո՛ւյն՝ այս բառերով դողդոջուն…

Իրենցմե բա՛ն չեմ ուզեր ես ա՛լ հիմա,
Չի ստացա, ինչ որ ինձ տալ կրնային,
Չի իրենցմով հիմա շեն է ամային…

(«Ողջույն»)

Սա խոսում է բանաստեղծի մեծ ու բարի սրտի մասին, որը լեցուն էր միմիայն ջերմությամբ ու պայծառ տխրությամբ…

Այս իմաստով համակարծիք ենք լիբանանահայ վաստակաշատ բանասեր Ժ. Դանիելյանին. «հայ բանաստեղծության իշխան» Վ. Թեքեյանն իր ողջ կյանքի ընթացքում, «ապրելով հանդերձ իր ժողովուրդին դիմակալած տաքն ու պաղը, մնաց առանձին՝ իր ներքին փոթորկուն ապրումներուն ու չբացայայտուած սէրերուն առանձնութենէն գերեվարուած»[5] (ընդգծումը մերն է - Ա. Ա.):

Արևմտահայ գրականության ամենահակասական ու «մթնասքող» ներկայացուցիչներից մեկի՝ Տիրան Չրաքյանի (Ինտրա) ստեղծագործությունը ներքին կուռ կապով բաղադրվում է դարասկզբի հայկական նեոռոմանտիզմին: Ինտրայի ստեղծագործության մեջ, կարելի է ասել, իշխում է նեոռոմանտիկական հոսանքի խորհրդապաշտական թևը (եթե առաջնորդվենք հայկական նեոռոմանտիզմի դասական դարձած կամ ընդունված ընկալումով)՝ անկումայնության որոշ երանգներով, թեև հիշարժան են նաև ռոմանտիկական գեղեցիկ պատկերները:

Տ. Չրաքյանի ստեղծագործության նշանակալից էջերից են «Ներաշխարհ» արձակ պոեմը և «Նոճաստան» սոնետների ժողովածուն:

Ժամանակին հակասական արձագանքների թիրախ դարձած «Ներաշխարհ»-ը խոհաքնարական երկ է, որտեղ արտացոլվել են բանաստեղծի ներզգայական ընկալումներն ու տպավորությունները, բնության, տիեզերքի մանրազնին

[5] ***Մհրայր Դանիէլեան***, Բանասիրութեան բաւիղներուն մէջ, Եր., 2011, էջ 547:

դիտարկումներն ու խորհրդածությունները: Բանաստեղծի հիացմունքն ու քննական հայացքը հավասարապես ուղղված են և՛ մասնավոր երևույթներին, և՛ ամբողջական ու համածավալ իրողություններին. նրա «ներէական» դիտումների առջև բաց են կենսական բոլոր ոլորտներն ու տիեզերական խորությունները: Ինտրայի խոհերը՝ սիրո, սիրած էակի, կրոնի և գեղարվեստի, մահվան, Սև ծովի, Արևելքի, եգիպտական բուրգերի և այլնի մասին, մատնում են մտածողի գերզգայուն հոգին ու նրա անհմանալի, մանվածապատ բավիղները, որ գուցե անձեռնմխելի են այլ մտքի ու բանականություն համար: Եվ այդ պատկերավոր ու միաժամանակ ներսույզ մտածումներն ու նկարագրությունները բնորոշվում են մերթ խորհրդապաշտական, մերթ ռոմանտիկական խավավորումներով, գրավիչ ու անդիմադրելի են իրենց գեղանկարչական արտահայտչականությամբ:

Հատկանշական են Սև ծովին նվիրված էջերը: Հզոր ու ալեծածան տարերքով մռայլված ծովն իր ահագնաթափ վայրենությամբ ու բնագեղ կապույտով բորբոքում է բանաստեղծի երևակայությունը, առասպելական տեսիլների պատրանք ստեղծում. միահյուսվում են իրականն ու ցնորականը երկնակապույտ անսահմանության գրկում. «Հրաշավիպական Ծովը զոր սիրէր էի, զոր պիտի տենչամ յաւիտեան՝ աղջկան մը, ծովանոյշի վեհութեամբ մը լուսողող էակի մը տեսիլը կը պայընծայէր ինձի…: ….Ծովին յաւերժաձայն շշունջներուն մէջ տարուած՝ կը զգայի մտքիս մէջ ցաթիլը լուսեղէն իգութեան մը բարութեան՝ Ծովուն խաւարներուն առնավայրի զօրութեան վրայ. Պոսիդոնին վսեմութեան մէջէն Ամփիդրիդի մը գեղեցկութիւնը կը փթթէր…»[6]:

Հեթանոսական ահեղ հմայք է տեսնում հեղինակը «դիւաստուածային յայտնութիւններով» փոթորկվող ծովի անսանձ տարերքի մեջ. ասես ի հեճուկս տրտմությամբ օծված լեռների՝ ջրեղեն անդունդների «երանավայրի հեթանոսութիւնն» է փրփրում…: Բայց այլ են երանգները և զգացողությունները մայրամուտին, երբ մարում են ցերեկվա հրահալած գույները, և թրթռում են լաջվարդ ստվերները, իսկ երեկոյի ծփանքների մեջ «թալացման նայ երանգներն են երկնածաղկում»:

Այսպիսով՝ բնության, ծովի մերթ բուռն ու հրաշազան, մերթ մեղմ ու նրբաթով փոխակերպումները զգայուն հոգին պարուրում են հավերժ գեղեցիկ ու վեհ զգացողություններով:

Ինտրան յուրովի է վերծանում եգիպտական բուրգերի և նրանց պահապանի՝ սֆինքսի առեղծվածային խորհուրդը:

Սֆինքսը Եգիպտոսի՝ երբեմնի քրմապետությունների ու համաստվածությունների երկրի Հանճարն ու Ոգին է, «եգիպտականության» աննահանջ խորհրդանիշը, որի հարևանությամբ լեռնանում են բուրգերը՝ մարդկային բոլոր հղացումներին ստիպելով տեղի տալ իրենց «անագորույն մեծության» առջև:

Բուրգերի «զարհուրելի համրությունն» ու հավիտենական հմայքը մտորումների տեղիք են տալիս: Սֆինքսը Կյանք և Հրաժեշտ, Գործ և Միտք, Կույս և Առյուծ է միաժամանակ, «մինչեւ դշխոյափառ իմացականութի՛ւնը վերացած անասնականութիւն», դա «բարոյակալուած, բարոյապսակուած» բնությունն է, իսկ բուրգերը «աշխարհի հսկայական ու յաւերժական ոչնչութեան Գիտակցութիւնն են»՝ իրենց անքնին խորհրդով առասպելացած[7]:

---

[6] ***Տիրան Չրաքեան. Ինտրա,*** Ընտիր երկեր, Պէյրութ, 1974, էջ 24:

[7] Տե՛ս նույն տեղը, էջ 158:

Խիստ հետաքրքրական է հեթանոս աստվածների ընկալումը Ինտրայի մտահայեցություններում: Կրոնները և Գեղարվեստը, Ինտրայի մտաընկալմամբ, խորհրդանիշ երևույթներ են. խորհրդակիր, մարդակերպ Գաղափարներ էին հին աշխարհում պաշտված աստվածները, որ վաղուց ի վեր անհետացել են իրենց ծնունդ տվող ազգերի դիցախորհուրդ հանգրվաններում. «Եգեյան Ծովին մանիշակագոյն տեսիլներուն մէջ, հնդկական անտառներու, սկանտինաւեան թանձրամայրիներուն մէջ հետակորոյս են աստուածները…: Ամէն բան աստուած մ'էր. ամէն բան աստուածային է միշտ»[8]: Նրանց պատկերները փնտրելու փոխարեն նորօրյա բանաստեղծն ապրում է տիեզերքի անհուններում սփռված իր անպատասխան ձգտումների թրթիռներով: Բայց եթե Դ. Վարուժանը ցավով և ափսոսանքով է խոսում հեթանոս աստվածների կորստյան մասին, ապա Ինտրան, պատկերելով նրանց բանաստեղծական լույսի և փառքի մեջ, նվազ տրտմությամբ է լցվում, ասես հաշտվում է դիցերի «հետակորույս» լինելու իրողության հետ՝ առավելապես վերագրելով նրանց սիմվոլիկ նշանակություն: Նա պայծառ ժպիտով է հիշատակում Լույսի խորհրդի մասին, որ տարբեր ազգային դիցարաններում տարբեր դիցակերպ արտացոլումներով է հանդես եկել: Դա մի դեպքում «Տիգրիսին խաղացքին մեջ» պարող միջագետքյան պերճ երկնակամարն է, մյուս դեպքում՝ եգիպտական Ամոնն ու Հորը, մի դեպքում Դեմավենդի ձյուների մեջ պաղպաջող որմզդական լույսն է՝ իրանական առաքինությունները ներկայացնող, մյուս դեպքում՝ Գանգեսի սրբությամբ խորհրդափայլող և Հիմալայների ձյունափառ գերաշխարհը օծող Աթման, իր ճաճանչներով ողջ Հելլադան թրթռացնող Ապոլոնը, Սինայի ամպրոպների փայլակը…:

«Ներաշխարհ»-ում կերպավորվում է Իռենան, որ նույն Վերժին Պէյազյանն է՝ Ինտրայի հարսնացուն: Վերժինի կամ Իռենայի պատկերը մշտապես ուղեկցում է բանաստեղծին. «ներաշխարհային» մտածումների ողջ ծփանուտում քնարական հերոսը զգում է նրա ներկայությունը, ներքին երկխոսություն ծավալում նրա հետ, սրտի նուրբ անկյուններում փայփայում և ոգեղենացնում աղջկա լուսեղեն կերպարը: Իռենան հանդես է գալիս իրական և անիրական գծերով. նա այն քաղցր վերացումն է, որով համակված է Ինտրայի ներէությունը, բանաստեղծի «լուսնագիշերէն հիակերտուած այն Կոյսը», որի գոյության գաղափարն իսկ տակնուվրա է անում խռովված հոգին:

Իռենան իշխում է Ինտրայի մտքերի, տենչերի ու զգացումների վրա. «….կ'ամբառնա՛յ իբրեւ թէ երկնային մահիկը ըլլար ան, իմ մշտածուփ էութեանս կոհակին վերեւ դալկաժպիտ ու հզօր»[9]:

Հատկանշական է, որ Վերժին-Իռենային ուղղված քնքուշ խոստովանությամբ է եզրափակվում «Ներաշխարհը»:

Ինտրայի «Ներաշխարհ»-ում հանդիպում ենք նաև անկումային բնույթ կրող խորհրդածությունների: Տրտմություններ են թափառում բանաստեղծի խղճի ափունքներին, թախիծով համակված աշխարհը, անցած կյանքի ուղին, սիրած էակի՝ Իռենայի քնքուշ հուշը զուգահեռվում են մահվան գաղափարի շուրջ մտորումներին: Եվ զարմանալիորեն հաշտ ու մերձ է մահվան առաջ. խոնարհում ունի նա մահվան գերազանցության և անհրաժեշտության, նրա աներկբայելի Կա-

[8] Նույն տեղում, էջ 85:

[9] Նույն տեղում, էջ 68:

տարման առաջ, խոնարհում, որ վերածվում է տարտամ հիացմունքի. «Մահուան ահագին տրտմութիւնը կ՛զգամ, որ մահուան կարօտի մը կը նմանի»[10]:

Եվ բնությունը հաճախ զուգահեռվում է այս տրամադրություններին: Իբրև մահվան մելամաղձիկ ու մոխրականաչ խորհրդանիշ՝ ուրվագծվում է նեխաբույր ծաղիկը՝ Բանգը՝ իր «աղուամազին կակղութեան մէջ» ամփոփված ժանտ ու գիշատչային համրությամբ: Իր բնութագրումներում Ինտրան երբեմն հասնում է անհամադրելի թվացող փոխներթափանցումների: Բանգին նվիրված էջերում, օրինակ, անքակտելիորեն ներհյուսված են գեղարվեստականն ու բնապաշտականը, և դժվար է տարբերակել նրանց սահմանները. սուր, նույնիսկ վանող տպավորություն են թողնում որոշ համեմատություններ*:

Տ. Չրաքյանի ստեղծագործության հետաքրքիր էջերից է «Նոճաստան» սոնետների ժողովածուն: Այն բացվում է բանաստեղծի մոր՝ Աննա Չրաքյանի հիշատակին նվիրված «նոճեդալար և նոճեսօսափ սիրոյ» ձոնով: Ինտրայի հուշերում մայրը հավերժանում է իբրև քնքշության և գթասրտության մարմնացում. նրա հոգին լի է բնության ամեն մի էակի հանդեպ տածած գորովի ու հիացմունքի հարուստ շեղջերով:

«Նոճաստան»-ում հյուսվում և ծավալվում է մենավոր սրտի զրույցը նոճիների հետ. քնարական հերոսը սփոփանք ու հանգստություն է գտնում մթնաստվեր ծառերի բացատում՝ նրանց վստահելով իր խոհերն ու տրտմությունը:

Քրմական խորհրդավորությամբ վեր են ձգվում նոճիները՝ կարոտի ու հառաչի իրենց մեղմիկ սոսափը փոխանցելով գիշերային խաժասփյուռ երկնքին: Ծածանվում է նրանց վեհ քրմապարը, օրորվում են «ըղձանուրջները», իսկ բանաստեղծը սուզվում է Անհունի գոյության տխուր կասկածների մեջ («Ըսէք»):

Նոճիների ցնորքին հաղորդակից է երկնանույշ «կոյսն աղու»՝ լուսնի չքնաղ մահիկը, որ անզոր է փարատել նրանց տխրությունը.

Բայց ի՛նչ յագուրդ կրնայ բերել հիմակ ան
Մեծ մեծ նոճեաց այս դարաւոր աղօթքին
Իր ժըպիտովն իսկ աստուածազն աղջըկան…

(«Մահիկը»)

Երբեմն հեթանոսական անցյալի գայթակղիչ հիշատակները, ցանկալի պատկերները ձուլվում են բանաստեղծի մտածումներին, համալրում նրա ըղձանքների շարքը.

Ու վարդոսկեհուր կանթեղին տակ աղվամըրափ,
Գուսան նաժիշտներ թռչկոտեին տարփահույզ,
Ու գային ինձ տալ համբույրնին մուշկ ու շարաբ՝
Գիրկս հանգչեցնելով եղկ մարմինին թրթռողկույզ:

(«Հեշտարան»)

Եվ, այնուամենայնիվ, քնարերգուի բարձրագույն ու տենչալի խոհընկերները դարձյալ նոճիներն են:

---

[10] Նույն տեղում, էջ 131:

* Սահմանափակվենք հետևյալ օրինակով. «Ծաղիկները դիակի, գանկի գոյն ունին, եւ անոնց նեխաբոյր ծակը մեռելի բաց մնացած ու մոռ բերնի մը գոյնովը կը փոսուի, կ՛անյատակուի: Կարծես ամբողջովին ողողուն ու կպչուն է այն գորշասպիտակ փոշիով որ մեռելին թարթիչներուն ու ռունգերուն եզրը կը գոյանայ…» (տե՛ս ***Տիրան Չրաքեան. Ինտրա,*** Ընտիր երկեր, Պէյրութ, 1974, էջ 144):

Հայկական նեոռոմանտիզմը, այսպիսով, ազգային կյանքի առանձնահատկություններով պայմանավորված իր ուրույն դրսևորումներն ունեցավ Ռ. Սևակի, Վ. Թեքեյանի և Ինտրայի ստեղծագործություններում:

Арминэ Адамян - ***Проявление армянского неоромантизма в творчестве Р. Севака, В. Текеяна и Т. Чракяна (Интра).***- В статье рассматриваются некоторые проявления армянского неоромантизма в творчестве западноармянских писателей Р. Севака, В. Текеяна и Т. Чракяна (Интра).

Любовная лирика Р. Севака характеризуется языческими проявлениями любви и красоты, искренними и свежими эмоциями. Такое севаковское восприятие жизни стало одной из прекрасных страниц «языческой летописи» армянского неоромантизма.

В творчестве В. Текеяна также заметны романтические настроения начала 20-ого века, в частности основные эстетические принципы нового романтизма.

Творчество Т. Чракяна, одного из самых противоречивых представителей западноармянской литературы, можно отнести к символистическому направлению неоромантического течения с определенными оттенками декаданса.

Armine Adamyan – ***The Manifestation of Armenian Neoromanticism in R. Sevak's, V. Tekeyan's and T. Chrakyan's (Intra) Literary Works.*** - In the article certain manifestations of Armenian Neoromanticism in Western Armenian writers R. Sevak's, V. Tekeyan's and T. Chrakyan's (Intra) literary works are examined.

R. Sevak's love lyrics is characterized by fresh and spontaneous emotions, pagan overtones of love and beauty. Life perception by Sevak is one of the beautiful pages of ''Pagan Chronicle'' of Armenian Neoromanticism.

In V. Tekeyan's literary works the romantic mood of 20th century and particularly, the essential provisions of the aesthetics of new romanticism is noticeable.

In T. Chrakyan's literary works, one of the most controversial representatives of Western Armenian literature, the symbolic direction of Neoromanticism dominates with certain shades of decadence.

Վ. ԴԱՎԹՅԱՆԻ «Ո՞ՏԱՅՐ ԻՆՁ ՁԾՈՒԽ ԾԽԱՆԻ…» ՊՈԵՄԸ /ԷՏՅՈՒԴ/

ԱԻԴԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

Էտյուդը նվիրված է հայ տաղանդաշատ բանաստեղծ Վ. Դավթյանի պոեմներից մեկին, որն գեղարվեստական կատարելությամբ ու գաղափարադաստիարակչական հնչեղությամբ բացառիկ արժեք է հայ քնարերգության մեջ: Պոեմում խոր հուզականությամբ ու լեզվական շքեղ ու բարձր արվեստով արտացոլված է հայոց պատմության դրամատիկ դրվագներից մեկը՝ Արտավազդ արքայի գերվելը նենգ Անտոնիոսի կողմից, չխոնարհվելը Կլեոպատրայի առաջ և գլխատվելը՝ հոգում անմար կարոտը հայրենի երկրի աչքերի առաջ՝ ճերմակ Արարատը, ականջին՝ բամբիռների տխուր զնգոցը… Գեղանկարչական հմայք ունեցող սյուժետային այս դրվագները գնահատվել են որպես էտյուդներ…

Բանալի բառեր. Գեղանկարչական էտյուդ, լեզվական շքեղ արվեստ, եգիպտական բնապատկեր, շղթայակապ արքա, Կլեոպատրա թագուհի, այրական հպարտություն, հայրենի երկիր

Գրական հզոր երկի ծնունդը հավանաբար երկինքն ու երկիրը բռնկած երկունք է, երկունքի հաճելի ու սպասված ցավը, որը խոստանում է լույս աշխարհ բերել սիրո պտուղ մի հրաշամանուկի… Հանճարեղ Դ. Վարուժանը բանաստեղծության ծնունդը համեմատել է մայրական երկունքի հետ. «Մայրը ըլլալ և բանաստեղծ ըլլալ միևնույն բանն է. երկունք ալ արյունելով կը բաժնվին և կանմահանան ուրիշ էակներու մեջ»:

Հայ բազմադարյան քնարերգության մեջ երկունքով են ծնվել հոգևոր շա՜տ գանձեր, այդ թվում նաև Վ. Դավթյանի՝ պատմական ակունքներից սնված «Ո՞ տյար ինձ զծուխ ծխանի…» պոեմը: Այս ի՞նչ կուտակումներ է ունեցել նա, ինչպե՞ս է հոգում տեղավորել այդքան սեր ու ատելություն, ունեցել մարդու էության ու բնության գեղեցկության հրապույրն զգալու և սքանչելիորեն արտացոլելու աստվածատուր ձիրք, ինչպե՞ս է նա դիմացել ծովածավալ հուզերի հուժկու պոռթկմանը, որն ասես քարաժայռից բխող կարկաչաշառաչ բառեղեն շատրվան լինի…

Քանի՞ դար է կտրել-անցել նա, այդ ի՞նչ փոթորիկների միջով է անցել նա, ի՞նչ դեպքերի ու իրադարձությունների ականատես է դարձել, ի՞նչ հանդիպումներ է ունեցել նա արքաների ու թագուհիների հետ, նրանց հետ ապրել սեր ու կարոտ, կիրք ու տառապանք, դավաճանություն ու այրող-վավաշոտ մարմնական ցանկություն, նվաստացում, հպարտության ու արժանապատվության վեհացնող զգացում…

Իրականության ու երևակայության վարպետ համադրմամբ ինչպե՞ս է շնչավորվել պատմական մի քանի հայտնի փաստ՝ հաղորդելով նրանց գեղարվեստական անզուգական հմայք…

Այս ասք-պոեմը ճոխ, ճկուն ու գունագեղ լեզվով վրձնած գեղանկարչական էտյուդների շարք է՝ պատկերավոր ու մեղեդային, հետաքրքիր ու դրամատիկ՝

համահունչ մերթ Կլեոպատրայի զգայացունց գեղեցկությանը, մերթ Արտավազդի այրական առնականությանը… Ընթերցողիս թվում է՝ այն էտյուդների համանվագ է՝ արարված պատմության դրվագներից, եգիպտական բնապատկերներից, մարդկային ապրումներից, այրական չգայթակղվող ժայռեղեն աներերությունից, կանացի գեղեցկությունից ու քմայքներից, տառապագին հրայրքից ու չհագեցրած կրքի գալարումներից, նենգության արտանետումներից…

Ու փորձում եմ ահա դավթյանական էտյուդների շքեղ հրավառությունից արտանկարել մի քանիսը:

Ծագող պղնձե արեգակ, պղնձե արեգակից փայլատակող և պղնձաձայն ծիծաղող հազար ծնծղա, պղնձե շեփորներ, պղնձադեմ հազար քուրմեր, հազար կրակ քրմուհիներ, Նեղոսն ի վար հոսող հազար ճերմակ ու կարմիր բոց առագաստներ, որ անշարժացել են Նեղոսի մեջ, ու կարմիր ու բոց մի առագաստ դեպի ափն է լողում դանդաղ… Եվ նրանց ներքո կանգնած մի կին՝ մարմինը որպես բոցի սյուն… Կլեոպա՞տրան…

Արեգակի ու պղնձի գույներով, բառակրկնություններով ու բաղաձայնություններով է վրձնած այս բնանկար-համապատկեր էտյուդը, որ նաև պղնձաձայն համանվագ է, կենդանի կինոկադր ու բոցեղեն կնոջ մի ուրվագիծ…

Ահա թագուհին ոսկեմուճակ ոտքը հողին դրեց. Դողաց զիստը մետաքսի տակ, թրթռաց ստինքը տաք, ու գալարվեց մեջքը բեկ-բեկ, ինչպես մեջքը պիթոն օձի, և հազար-հազար հայացքներ գալարվեցին նրա մարմինն ի վեր, ապա խոնարհվեցին ու փռվեցին նրա ոտքերի տակ… Սա անձեռակերտ կենդանի քանդակ է…

Կլեպա՞տրան… սքանչելի հպարտությու՞նը, թագակիր շողուն օձը, միրաժի պես անմատչելի Կլեպա՞տրան, այրամարդու տաք ձեռքերի տաք տենչանքը, այրամարդու արյան մրրիկն ու փոթորկանքը, իր գեղեցիկ իգությունը շողին, պարզած աշխատող արեգակ Կլեպա՞տրան…

Ու հանկարծ որոտում է մունետիկի թմբուկի բամբ ձայնը.

-Արմենիան է հավետ պարտված ու նվաճված, և նրա շղթայակապ արքան գլուխ պիտի թեքի Կլեպատրա արեգակի առջև…

Այդ պահին ընթերցողի հայացքի դեմ հետ-հետ են գնում տասնյակ դարերի ծանր վարագույրները, ու ժամանակների աղետաբեր մշուշների միջից հառնում են դեպքեր ու իրադարձություններ /մ. թ. ա. 34-ին պարթևական ու հայկական արշավանքների ժամանակ Անտոնիոսը մտնում է Հայաստան և հասնում մինչև Արտաշատ: Արտավազդ Բ-ն՝ հույն պատմիչ Պլուտարքոսի վկայությամբ՝ հմուտ դիվանագետը, ռազմական գործիչը, իրատես քաղաքագետը, որ գրում էր ողբերգություններ, ճառեր ու երկասիրություններ, բանակցելու նպատակով ներկայացնում է հռոմեական ճամբար, բայց նենգ հռոմեացիք ձերբակալում են նրան և շղթայակապ տանում Անտոնիոսի մոտ:

Իջևանի խոսվածքով խոսող հանրությունը երկու շերտ է կազմում՝ բնիկներ և Արցախի գավառներից տեղափոխվածներ: Բնակչության խոսվածքը նույնպես երկվություն է դրսևորում՝ մի շարք հատկանիշներով այն հարազատ է Արարատյան բարբառին, իսկ մի շարք այլ հատկանիշներով նույնանում է Ղարաբաղի բարբառի հետ: Այսպիսի երկվությունը պատճառ է դարձել հայ լեզվաբանների անորոշ, երբեմն էլ հակասական կարծիքների համար: Հր. Աճառյանը իր՝ 1911թ. լույս տեսած «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Ղարաբաղի բարբառի տարածման սահմանների մեջ ընդգրկում է նաև Դիլիջանը, Ղազախի գավառը. «Այսպիսով Ղարաբաղի բարբառին գրված գլխավոր տեղերը հետևյալներն են. Շուշի, Գանձակ, Նուխի, Բագու, Դարբանդ, Շամախի գյուղերը, Աղստաֆա, Դիլիջան, Ղարաքիլիսա, Ղազախի գավառը»[3]:

Իսկ ահա Ա. Ղարիբյանն իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ գրում է. «Արարատյան բարբառը Դիլիջանի և Ղազախի ու Շամշադինի շրջանում խառնվելով Ղարաբաղի բարբառի հետ կամ ազդելով այդտեղի խոսվածքների վրա՝ զգալի չափով փոխել է Ղարաբաղի բարբառի ընդհանուր պատկերը, որի հետևանքով դժվար է լինում որոշել, թե այդտեղի բարբառները Երևանին են պատկանում, թե Ղարաբաղին»[4]:

Ավելի ուշ վերոհիշյալ տեսական դիտողությունները հիմնավորելու և խոսվածքի՝ որպես բարբառային միավորի առանձնացման հարցը որոշելու նպատակով լեզվաբան Բ. Մեժունցը դիմել է հայերենի բարբառների համար ընդունված բազմահատկանիշ դասակարգման սկզբունքին[5]: Խոսվածքի հնչյունական և քերականական հատկանիշների քննության համար համեմատության եզր ընդունելով մի դեպքում Աշտարակը, մյուս դեպքում՝ Բոլնիս-Խաչենը (առաջինը բար-

[3] ***Հ. Աճառյան***, Հայ բարբառագիտություն, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911թ., էջ 61:

[4] ***Ա. Ղարիբյան,*** Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 220:

[5] Տե՛ս ***Գ. Ջահուկյան***, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972թ., Բ. Մեժունց, Շամշադին-Դիլիջանի խոս -վածքը, Երևան, 1989:

բառային կենտրոն է ընդունված Արարատյան բարբառի, իսկ երկրորդը՝ Ղարաբաղի բարբառի համար)՝ Բ. Մեժունցը Շամշադին-Դիլիջանի տարածքի հայերի խոսակցական լեզուն առանձնացնում է որպես մի խոսվածք, քանի որ «տարբերակիչ հատկանիշների միևնույն քանակով (իհարկե, ոչ միևնույն հատկանիշներով) Շամշադին-Դիլիջանի խոսվածքը հեռանում է թե՛ Արարատյան, թե՛ Ղարաբաղի բարբառից, ուստի այն կոչում ենք «միջին խոսվածք»[6]:

Մեր հոդվածում քննության ենք առնում Իջևանի խոսվածքի ձայնավոր հնչյունների առանձնահատկությունները, որոնք, նույնանալով ժամանակակից հայերենի համապատասխան հնչյունների հետ, միաժամանակ առաջ են բերում նաև գործառական մի շարք տարբերակներ, որոնք ունեն հետևյալ պատկերը՝ ա, ա̈, ը, ի, ու, ու̈, օ, ö[7]:

Իջևանի տարածքի խոսվածքների քմային ձայնավորներն առաջացել են պատմական զարգացման ընթացքում հնչյունական համակարգերի ներքին օրինաչափությունների ձևավորման հետևանքով, քանի որ, ինչպես տեսանք, տարաբնակեցումների, տեղաշարժերի հետևանքով փոփոխությունների է ենթարկվել նաև տարածքի բնակչության խոսվածքը:

Հայերենագիտության մեջ մինչև 20-րդ դարի կեսերն իշխում էր այն տեսակետը, ըստ որի՝ հայ բարբառներում ետին շարքի ձայնավորների քմայնացումը հիմնականում պայմանավորված է այլ (օրինակ՝ թյուրքական) լեզուների ազդեցությամբ: Դրանից էլ բխում էր, որ քմային ձայնավորներով բարբառների հնչյունական համակարգերը կազմավորվել են ուշ՝ նմանատիպ հնչյուններ ունեցող լեզուների հետ շփումների հետևանքով:

Հրաչյա Աճառյանը գտնում էր, որ «մեր բարբառներից նրանք, որ ապրում են ä չունեցող լեզուների շրջանում, զուրկ են մնացել այդ ձայնից, ինչպես Տփղիսի, Պոլսի և Նոր Նախիջևանի բարբառները, իսկ նրանք, որ մեծապես ազդված են ä ունեցող լեզուներով, գիտեն այդ ձայնը»[8]: Նա թվարկում է բարբառախոս վայրերի մի ստվար ցանկ՝ Ղարաբաղ, Շամախի, Ագուլիս, Վան, Տիգրանակերտ և այլն, որոնցում գործառում է ա̈ ձայնավորը, որովհետև հիշյալ տարածքները գտնվում են այդ հնչյունն ունեցող լեզուների շրջապատում: Այնուհետև հեղինակը եզրակացնում է, թե «ä ձայնը բնիկ հայերեն չէ, այլ հետո մտած փոխառությամբ»[9]:

Ավելի ուշ՝ «Քննություն Վանի բարբառի» աշխատության մեջ, Հրաչյա Աճառյանը հայտնաբերում է հնչյունական մի օրենք, որով ապացուցում է, որ հայերեն բարբառների հնագույն բառապաշարում հետին շարքի ձայնավորների քմայնացման դեպքերի բավական մասը պայմանավորված է հենց այդ բարբառների պատմական հնչյունական յուրահատկություններով: Այդ փաստն արդեն իսկ հերքում է հին տեսակետը: Հետևաբար, հայերեն այն բարբառները, որոնք առանձնանում են այդպիսի հնչյունափոխությամբ, ունեն շատ ավելի հին ծագում, քան մինչ այդ ենթադրվում էր:

Կարևորելով իր հայտնագործությունը՝ հեղինակը գրում է. «Այս կանոնը այնպիսի հեռանկարներ է բաց անում մեր առաջ և այնպիսի գաղտնիքների բա-

---

[6] ***Բ. Մեժունց***, Շամշադին-Դիլիջանի խոսվածքը, Երևան, 1989, էջ 9:

[7] Հոդվածում քննության են առվում միայն Իջևան քաղաքի խոսվածքին բնորոշ քմային ձայնավորները:

[8] ***Հր. Աճառյան***, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 115:

[9] Նույն տեղում:

նալին է հանդիսանում, որ ես համարում եմ իմ բոլոր բարբառագիտական աշխատանքների պսակը և հրճվանքով անվանում եմ «Աճառյանի օրենք»[10]:

Հետազոտության մեջ Աճառյանը տալիս է հետևյալ ձևակերպումը. «Գրաբարի **բ, գ, դ, ձ, ջ** բաղաձայնները Վանի բարբառում բառասկզբում դառնում են **պ, կ, տ, ծ, ճ,** և նրանց կողքին գտնվող **ա** ձայնավորը դառնում է **ա̈**, իսկ **պ, կ, տ, ճ** մնում են անփոփոխ, իսկ նրանց կողքին գտնվող **ա** ձայնավորն էլ մնում է անփոփոխ»[11]:

Օրենքը թեև ձևակերպված է Վանի բարբառի համար, սակայն Աճառյանը այն կիրառելի է համարում նաև մի շարք այլ բարբառներում: Այս կապակցությամբ նա նշում է. «Այս օրենքով պիտի բացատրենք կամ հիմնավորենք Մարաղայի, Խոյի, Սալմաստի, նաև Ղարաբաղի, Շամախիի բարբառների մեջ, մի կողմից, ա ձայնավորի գոյացման երևույթը, մյուս կողմից, թրթռուն բաղաձայնների խլանալու երևույթը»[12]:

Հ. Մուրադյանը իր «Հայոց լեզվի պատմական քերականության» մեջ նշում է, որ «Աճառյանի օրենքը» գործում է ավելի մեծ տարածքում՝ Վասպուրականից դեպի Սյունիք՝ մինչև Արցախ, և վերաբերում է ոչ միայն ա ձայնավորին, այլև առհասարակ հետին շարքի ձայնավորներին, որոնք ձայնեղ պայթականներից հետո դառնում են առաջնային շարքի ձայնավորներ[13]: Ըստ լեզվաբանի՝ **ա>ա̈** փոփոխության պատճառները միշտ չէ, որ հայտնի են, սակայն Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում այդ փոփոխությունը պատճառաբանվում է հետևյալ կերպ. «Այստեղ այն կատարվել է հին ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքում և պայմանավորված է այդ բաղաձայնների երբեմնի ունեցած հնչարտասանական մի ինչ-որ առանձնահատկությամբ, որը մեզ անհայտ է»[14]:

Բարբառներում, ըստ էության, Աճառյանի օրենքի սկիզբը կարելի է տեսնել դեռևս պատմական անցյալի խորքերում՝ նախագրաբարյան շրջանում: Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» մեկնիչներից մեկի՝ Դավիթ Անհաղթի կողմից նշված *գաւմ* բայի *գեաւմ* տարբերակն արդեն վկայում է 5-րդ դարում վերոհիշյալ օրենքի գործածության մասին[15]:

Ձայնավորների զարգացման նույն ընթացքը տեսնում ենք նաև Իջևանի խոսվածքում: Սակայն պետք է նշել, որ «Աճառյանի օրենքը» չի վերաբերում միայն **ա** ձայնավորին: Թեև ետին շարքի ձայնավորների քմայնացումը նշված դիրքում Վանի բարբառի համար հստակորեն դրսևորվում է **ա**-ի մեջ, և օրենքն էլ ձևակերպված է հատկապես այդ ձայնավորի համար, սակայն նույնիսկ այս բարբառում Աճառյանը նկատել է օրենքի տարածումը նաև **ո** ձայնավորի վրա, երբ վերջինս, գտնվելով ձայնեղ բաղաձայններից հետո, դարձել է ո(**ӧ**), մինչդեռ հին խուլերի մոտ՝ ո(**օ**)՝ առանց քմայնացման: Մի շարք օրինակներ բերելով՝ Աճառ-

---

[10] ***Հր. Աճառյան***, Քննություն Վանի Բարբառի, Երևան, 1963, էջ 20:

[11] ***Հր . Աճառյան***, Քննություն Վանի բարբառի, էջ 19:

[12] Նույն տեղում, էջ 21:

[13] ***Հ. Մուրադյան***, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ընչյունաբանություն, Եր., 1982, էջ 92-93:

[14] Նույն տեղում, էջ 106-107:

[15] ***Հ. Մուրադյան***, նշվ. հոդվ., էջ 168-169:

յանը փորձում է ցույց տալ, որ երբ «ո-ն գտնվում է նախկին թրթռուն **բ, գ, դ, ձ, ջ** բաղաձայններից առաջացած խուլ **պ, կ, տ, ծ, ճ** բաղաձայններից հետո, դառնում է ո(**üö**), իսկ երբ այդ խուլերը հենց նախկին խուլերից են առաջանում, ո-ն դառնում է ո(**uo**)»[16]:

Հ. Աճառյանն իր հայտնաբերած օրենքը վերագրում է հատկապես *ա* ձայնավորին, և Իջևանի խոսվածքում գրաբարյան ձայնեղ հպական և կիսաշփական բ, գ, դ, ձ, ջ բաղաձայններին համապատասխանող խուլերից հետո առավել հաճախ հանդիպում է առաջնալեզվային **ա՝ բաժինք>պաժինք, բան>պան, դանակ>տյանակ, բանջար>պանջար, բաց>պաց, բարակ>պարակ, բարձել> պարցել, բարձր>պարցր, բազուկ>պազուկ, գաթա>կյաթա, գալ>կյալ, գառն>կյառ, գազար> կյազար, գարի>կյարի, գարուն>կյարուն, դառն>տյառը, դառնալ>տյառնալ, դատարկ>տյառտակ, ձագ>ծաք, ձավար>ծավար, ձախ>ծախ, ձախլիկ>ծախլիկ, ջարդել>ճառթել:**

Վերոնշյալ օրենքից դուրս բառամիջի շեշտակիր ա-ի դիմաց ունենք քմային **ա** նաև հետևյալ դեպքերում՝ **մանանի** (լսել), կիրակի > **գիրակի, ճանճ > ճանջ, մանգաղ > մանգեղ, մարտ** (ամիս) **> մարդ, շաբաթ > շափաթ:**

Հատկանշական է, որ Իջևանի խոսվածքում հետին շարքի ձայնավորների առաջնային արտասանություն ենք արձանագրում ոչ միայն հին ձայնեղ հպականներից, այլ նաև **զ, ժ, վ** շփականներից հետո: **Ա** ձայնավորի քմայնացում ենք նկատում վ ձայնեղ շփականից և՛ առաջ, և՛ հետո՝ **վարթ, լըվածք, ծավար,** փոխառյալ՝ **վարթան** (բառում), **ժ, զ** բաղաձայններին հաջորդող դիրքերում՝ **ժաժք, զանքյաչ,** փոխառյալ՝ **զավզակ** (շատախոս) բառում: Ձայնեղ շփականների մոտ հետին շարքի ձայնավորների քմայնացումը խոսվածքում ոչ հաճախ է հանդիպում: Դրանից կարելի է եզրակացնել, որ այդ երևույթը հաջորդել է հպական և կիսաշփական ձայնեղներից հետո՝ նույն ձայնավորների առաջնալեզվային արտասանությանը:

Ա ձայնավորի առաջնային արտասանություն ենք նկատում նաև **լ, մ, ն, ր** ձայնորդներից հետո՝ **լաց, լավ, լազան, լափիլ, մանանի** (լսել), **շալակ, թանաք, տրմանկ,** որն ըստ էության կարելի է բացատրել ա-ի՝ շեշտի տակ լինելու հանգամանքով:

Օտար փոխառյալ մի շարք բառերում նույնպես առկա է ձայնավորների քմայնացում՝ **շաշ, ֆանդ,** ինչպես նաև **ա** քմային ձայնավորի գործածության առումով նկատելի է, որ մեկից ավելի ա ունեցող բազմավանկ բառի **ա-**ին սովորաբար հաջորդում են նույնպես քմային ա-եր՝ **անգալ** (ծույլ), **աղաթ, ամանգ, դաստա, լամփա, թամբալ, քալամ, քաբաբ, գալլա, զավզագ** (շատախոս), **զահըրմար, հալբաթ, հասրաթ** (կարոտ), **սաբաբ, բառադի, դաստա, թավաքալի, մասալա, հարզալ** (արձակ): Խոսվածքում փոխառությունները պատճենվել են իրենց բնիկ արտասանությամբ:

[16] Նույն տեղում, էջ 39-40:

Նկատելի է, որ օրենքը միտում է ունեցել ընդհանրանալու հետին շարքի ձայնավորների վրա, որոնք ձայնեղ պայթականների ու պայթաշփականների մոտ հակված են եղել փոխվելու առաջնային շարքի ձայնավորի՝ **ա>ա̈:**

Ժ. Միքայելյանն իր «Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները» աշխատության մեջ նկատում է, որ ձայնավորների քմայնացման առումով ռնգայինները տարբերվում են մյուս ձայնորդներից, և «Վասպուրականի բարբառային քիչ միավորներում է դիտվում այդ հնչյունների ազդեցությամբ ձայնավորների քմայնացում, այն էլ հաճախ՝ ոչ կանոնական ձևով: Խնդրո առարկա դիրքում ձայնավորները առաջնալեզվայնություն են ստանում մեծ մասամբ ներդաշնակության օրենքի գործառության հետևանքով»[17]:

Հ. Աճառյանը նույնպես նկատել էր այն հանգամանքը, որ Վանի բարբառում քմային **ä̈** հնչյունը հանդիպում է նաև իր սահմանած օրենքից դուրս գտնվող դիրքերում, և բառային օրինակներ է բերում, որոնցում քմային այդ հնչյունը դրսևորվում է բացարձակ բառասկզբում, բառասկզբի ձայնեղ և խուլ շփական, շնչեղ խուլ, ձայնորդ բաղաձայններից հետո, բառի ոչ առաջին վանկերում[18]:

Հ. Աճառյանի հիշյալ աշխատության հետագա շարադրանքում՝ Վանի ենթախոսվածքում նկատվող հինհայերենյան ձայնեղ հպական և կիսաշփական բաղաձայններից հետո, ո(օ)-ի քմայնացումը ևս նա դիտում է որպես իր օրենքի դրսևորում՝ առանց այն սահմանման մեջ ներառելու: Իջևանի խոսվածքում կան օրինակներ, որոնցում առանց «որոշակի օրենքի» տեղի է ունենում **ո>ö** անցում (խնձ**ö**ր), ինչպես նաև բառամիջում նախաշեշտ, շեշտակիր և շեշտին հաջորդող ո ձայնավորի դիմաց Աճառյանի օրենքի համաձայն ունենք հետևյալ օրինակները՝ **գոգ>կյ̈օք, գոռալ>կյ̈օռալ, գող>կյ̈ող, գողություն>կյ̈ողություն, գորտ>կյ̈օրտ, գորտնուկ>կյ̈օռտնուկ, դող>տ,ö̈ղ, ձոր>ձ̈ör, գովել>կ,ö̈վալ//ել//իլ, գործել> կյ̈օռծիլ, դողացնել>տ,ö̈ղըցնիլ, գոգնոց> կյ̈օքնօց, գոմ>կյ̈ом, գոմեշ>կ,ö̈մեշ, ջորի>ճ̈ör̈ի:**

Հովհաննես Մուրադյանը նույնպես գտնում է, որ Վանի խոսվածքում ո-ն ենթարկվում է Աճառյանի օրենքին: Այսինքն՝ վերը նշված բաղաձայններից հետո ո-ն, դառնալով առաջին շարքի ձայնավոր, փակ վանկում տալիս է քմային երկբարբառ, իսկ բաց վանկում՝ պարզ **ö**[19]: Ի դեպ, գրաբարյան աւ երկբարբառից ծագող օ-ն՝ **գոտու-կ,ö̈տիկի** (գոտու տակը պնդացնել, ամրացնել- կ,ö̈տիկի տակը պընդըցնել) օրինակում նույնպես ենթարկվում է Աճառյանի օրենքին:

Վանի բարբառում *ու* ձայնավորի կրած փոփոխության մասին խոսելիս Հ. Աճառյանը բերում է 35 բառ, որոնցում տեղի է ունենում **ու>ü̈** անցում: «Թե ինչ դեպքերում ու-ն մնում է ու կամ դառնում **ü̈,** չկարողացա որևէ կանոն գտնել», - գրում է Հ. Աճառյանը[20]: Մինչդեռ նմանօրինակ ձևերի հանդիպելով նաև Իջևանի խոսվածքում՝ նկատում ենք, որ այստեղ ևս ու-ն ենթարկվում է Աճառյանի օրեն-

---

[17] ***Ժ. Միքայելյան***, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները, Երևան, 2009, էջ 107:

[18] Տե՛ս ***Հ. Աճառյան***, նշվ. աշխ., էջ 24-26:

[19] ***Հ. Մուրադյան***, Ինչպես հասկանալ «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 2, Երևան, 1973:

[20] ***Հ. Աճառյանը***, նշվ. աշխ. էջ 44:

քին, ինչպես՝ **ձուկն>ծուկը, ձու>ծու, բուրդ>պուրթ, բուռն>պուռը, բույն>պուն, գունդ>կյունդ, դու>տու, ջուր>ճուր, դուր/գործիք/> տուր, դուրս>տուս, դուռն>տուռը:**

Բերված օրինակներում ու-ն քմայնացել է գրաբարյան ձայնեղ հպականներին և կիսաշփականներին համապատասխանող բաղաձայններին հաջորդելիս և, ըստ էության, ու-ն այստեղ նույնպես ենթարկվում է Աճառյանի օրենքին:

Մի քանի բառերում **լ** ձայնորդին հաջորդում է քմային **ու՝ լյուզու, լյու**:

Իջևանի խոսվածքում նկատում ենք նաև ձայնավորների քմայնացում «Աճառյանի օրենքից» դուրս, որը, սակայն, բարբառի արտասանական բազայի որևէ առանձնահատկությամբ պայմանավորված տարբերակ չէ: Ժ. Միքայելյանը, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորների հանգամանալից քննություն կատարելով, եզրակացնում է, որ հայերեն բարբառների մի որոշակի խմբի պատմականորեն հատուկ է եղել ձայնեղ բաղաձայնի և նրան հաջորդող ձայնավորի փոխազդեցական կապ, որի հետևանքով ոչ առաջնային շարքի ձայնավորը քմայնացել է: Նա, ուսումնասիրելով «Աճառյանի օրենքը» և ընդհանրացնելով եղած կարծիքները քննվող հարցի կապակցությամբ, առաջարկում է «Աճառյանի օրենքը» սահմանել հետևյալ կերպ. «Հայերեն որոշ բարբառներում գրաբարյան ձայնեղ (հպական, կիսաշփական, շփական) բաղաձայններին համապատասխանող հնչյուններից հետո ձայնավորները ձեռք են բերել առաջնալեզվային արտասանություն»[21]: Լեզվաբան Վիկտոր Կատվալյանը «Ա» ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը» հոդվածում իրավացիորեն նկատում է, որ բարբառից բարբառ առաջընթաց կամ քմային արտաբերության միտումը կարող է տարբեր ուժ և ընդգրկում ունենալ, դրսևորվել տարբեր իրողություններով պայմանավորված, սակայն «որքան էլ ուսումնասիրողները փորձեն քմայնացման՝ «Աճառյանի օրենքից» դուրս մնացող դեպքերը մեկնաբանել համաբանության, ներդաշնակության կամ նշույթավորման կանոններով, շեշտափոխական իրողություններով, միևնույնն է, քմայնացման բոլոր այդ երևույթները (նաև «Աճառյանի օրենքով» բացատրվողները) կարող են դրսևորվել, եթե տվյալ խոսվածքում առկա է առաջընթաց արտաբերության կամ քմայնացման միտում, որը կարող է առաջանալ տվյալ խոսվածքը կրողների արտաբերական համակարգում և արտաբերական սովորույթներում տեղի ունեցած ինչ-ինչ տեղաշարժերով»[22]:

Այսպիսով, գրական հայերենին բնորոշ ձայնավորներից բացի՝ Իջևանի խոսվածքին բնորոշ են նաև հետին շարքի ձայնավորները, որոնք հիմնականում հանդես են գալիս ձայնեղ պայթականներից, շփականներից, ձայնորդներից հետո: Նշված փոփոխությունները արտասանական բազայում այդ հնչյունն ունեցող Ղարաբաղի բարբառի ազդեցություններ են, քանի որ Իջևանի խոսվածքը իր մի շարք հատկանիշներով նույնանում է այդ բարբառի հետ: Հինհայերենյան ձայնեղներից հետո Իջևանի խոսվածքում առավել հաճախ քմայնանում է **ա** ձայնավորը, և կարելի է եզրակացնել, որ այս տարածքում Աճառյանի օրենքն սկսել է գործել նախ՝ **ա**, ապա՝ **ո** ձայնավորով վանկերում: Իսկ ավելի ուշ հնչյունական այս փո-

[21] ***Ժ. Միքայելյան***, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Եր., 2009, էջ 69:

[22] ***Վ. Կատվալյան***, «Ա» ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, Երևան, 2012, N 2, էջ 59:

փոխությունը տարածվել է նաև **ու** ձայնավորի վրա, քանի որ այն քմայնացման շատ թույլ երանգ ունի, քան մյուս ձայնավորները:

Лусине Туманян - ***Проявления небных гласных в иджеванском говоре*** - В статье рассматриваются небные гласные иджеванского говора. Кроме гласных, присущих литературному армянскому, говору Иджевана характерны небные гласные заднего ряда, наличие которых обусловливае,,законом Ачаряна'', согласно которому звонкие согласные в начале слова оглушаются, а находящиеся с ним гласный становится небным.

Иджежанский говор занимает среднюю позицию между Карабахским и Араратским диалектами, поэтому такие проявления гласных передались говору из диалекта Карабаха, где,,закона Ачаряна'' весьма последовательно. Причем, в говоре мы замечаем палатализацию звонких и в заимствованных словах, и также в других позициях однако это в основном фонетико-орфоэпические проявления, которые обусловлены или сочетаемостью звуков, или изменением ударения.

Lusine Tumanyan - ***The Manifestation of Palatal Vowels in Ijevan Dialect***- In the article the palatal vowels of Ijevan dialect are examined. Besides the vowels typical to literary Armenian, back palatal vowels are also characteristic to Ijevan dialect, the existence of which is conditioned by Acharyan's law, according to which at the beginning of the word a voiced consonant is changed into voiceless and the vowel next to it is palatalized.

Ijevan dialect occupies a middle position between karabakh and Ararat dialects, so such manifestations of vowels are influenced by Karabakh dialect, where Acharyan's law works very consistently.

The palatalization of vowels is noted in loan words and in many other different cases as well, but basically they are phonetic-articulatory manifestations of the dialect, which are conditioned either with harmonic realities or changes of the stress.

ԼԱՏԻՆԵՐԵՆԻ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՏԻՊԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ ԷԴԻՏԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Հոդվածը վերաբերում է գրաբարի և լատիներենի հոլովման տիպերի քննությանը: Ցույց տալով երկու դասական լեզուների հոլովման տիպերի առանձնահատկությունները՝ պարզ է դառնում, որ դասավանդման գործընթացում երկու լեզուների փաստերի վկայակոչումը և կիրառումը կնպաստի թեմայի լիարժեք յուրացմանը և լեզվական խնդիրների պարզաբանմանը:

Բանալի բառեր. հայերեն, լատիներեն, համեմատական քերականություն, լեզվական ցեղակցություն, հոլով, հոլովում, հնդեվրոպական լեզուներ, թեքական լեզուներ, ներքին թեքում, արտաքին թեքում:

Հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրություններում հայերենի և լատիներենի՝ ցեղակցական միևնույն հիմքից ծագած լինելու բնույթը վաղուց դասագրքային ճշմարտություն է[1]: Հայերենի և լատիներենի մոտավոր ցեղակցությունը նկարագրելու, նրանց միջև եղած լեզվական ընդհանրությունները վեր հանելու մի փորձ կկատարենք ստորև՝ փորձելով ցույց տալ երկու լեզուների հոլովման տիպերի ընդհանուր բնութագիրն ու առանձնահատկությունները*:

Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ երկու լեզուների հոլովման համակարգերն ունեն բարդ թեքական բնույթ. քերականական իմաստների ձևաբանական արտահայտվածությունը դրսևորվում են թեքական մասնիկավորմամբ, ներքին թեքմամբ և տարարմատությամբ: Սակայն թե՛ լատիներենում, թե՛ հին հայերենում կան թեքական կառուցատիպը խախտող միտումներ ու սաղմեր, որոնք, ինչպես կտեսնենք, արտահայտվում են շեղումների և բացառությունների տեսքով: Երկու լեզուների հոլովման համակարգերը նախևառաջ արտացոլում են հնդեվրոպական հիմք լեզվի հոլովման համակարգերի օրինաչափությունները, ապա՝ ներկայանում իրենց բնորոշ, ինչպես նաև սաղմավորովող օրինաչափություններով: Ըստ այդմ, ծագումնաբանական ու տիպաբանական ընդհանրությունները վկայում են հին հայերենի ու լատիներենի բարդ թեքական բնույթը՝ դառնալով երկու դասական լեզուների ընդհանրությունը մատնանշող առաջնային խոսուն արտահայտությունը:

Հին հայերենի և լատիներենի հոլովման տիպերի տարբերակման գործում դեր են խաղում հնչյունական, իմաստային, քերականական ու խաչաձևման օրինաչափությունները*, որոնցից կարևոր նշանակություն ունի հնչյունականը: Այն,

[1] ***И. Тронский***, Историческая грамматика латинского языка. Общеиндоевропейское языковое состояние (вопросы реконструкции), М., 2001, стр. 5-7:

* Այս դեպքում հայերեն և լատիներեն եզրույթների գործածությունը ժամանակագրորեն վերաբերում է նրանց զարգացման վաղ փուլերին և, սրանով պայմանավորված, համեմատության եզրեր ընտրվել են դասական հայերենի և դասական լատիներենի լեզվական օրինաչափությունները:

*Խաչաձևումն այնպիսի օրենք է, որ բառերի հոլովման տարբեր օրինաչափությունների խաչավորման դեպքում գերակշռում է հոլովման հիմքերից մեկը, սովորաբար այն հոլովաձևը, որը ամենից ավելի

որպես դրսևորում, կապված է բառերի՝ ակնհայտորեն երևացող հնչյունական հատկանիշների հետ: Այդ հարցում կարևոր նշանակություն են ստանում վանկերի քանակը և փոխազդեցական մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ առնմանությունը և տարնմանությունը: Պատահական չեն, որ կիրառական քերականություններում լատիներենի համար տարբերակվել են **առաջին**, **երկրորդ**, **երրորդ**, **չորրորդ**, **հինգերորդ** հոլովումները[2], իսկ հայերենի համար՝ **պարզ** և **խառը** հոլովումները[3] կամ **ձայնավոր** ու **բաղաձայն, միջմասնիկավոր** և **վերջամասնիկավոր**, **ներքին** և **արտաքին թեքման** հոլովումները[4]: Ինչպես կտեսնենք, երկու լեզուներում էլ հոլովման տիպերի տարբերակման հարցում նախևառաջ կարևոր գործառույթ են ստանձնում մասնիկների արժեք ունեցող, մեկը մյուսից տարբերվող հնչյունները: Գ. Ջահուկյանը, նշելով բառերի հոլովման տիպերի պատկանելությունը որոշող օրինաչափությունները, հին հայերենի համար տարբերակում է երեք գլխավոր և հիմնական տիպեր՝ **ձայնավորահիմք** հոլովումներ, **ձայնորդահիմք** հոլովումներ, **տարահիմք** (ձայնավորաձայնորդահիմք) հոլովումներ[5]:

Դասական հայերենում բառերի՝ այս կամ այն հոլովման տիպին պատկանելու հարցը որոշելը պայմանավորված է բառի սեռական հոլովում ի հայտ եկող ձայնավոր հնչյունով: Ըստ այդմ, դասական հայերենում բառերի սեռական հոլովը՝ լինի արտաքին կամ ներքին թեքման, ունենում է **ա**, **ո**, **ու**, **ի**, **է** ձայնավորներից որևէ մեկը: Սեռական հոլովում այս ձայնավորներից մեկի առկայությունը որոշում է տվյալ բառի հոլովական պատկանելությունը:

Հայերենի ձայնավորահիմք հոլովումները ներկայանում են վեց ենթատիպերով, որոնց տարբերակումը, որպես հիմքեր, պայմանավորված է **ո**, **ա**, **ո/ա**, **ի/ա**, **ի**, **ու** ձայնավորների գոյությամբ: Ընդ որում, ձայնավորահիմք հոլովումները ենթարկվում են ենթատիպային խմբավորման, որոնք կներկայացնենք ստորև:

Ո-ով հիմքերն ունեն հետևյալ երեք ենթախմբերը՝ ա) **Զրո/ո**-ով հիմքեր (***գայլ> գայլը, գայլոյ>գայլոց**, *ձի>ձիք, ձիոյ>ձիոց***), բ) **Ի/ւո**-ով հիմքեր (***որդի>որդիք, որդւոյ/ որդւոջ>որդւոց, հոգի>հոգիք, հոգւոջ/հոգւոյ>հոգւոց*)**, գ) դերանվանատիպ հոլովում (***ասացեալ>ասացեալք, ասացելոյ>ասացելոց, հին>հինք, հնոյ>հնոց, առաջին> առաջինք, առաջնոյ> առաջնոց, մի>միոյ/միոջ*)**:

տարածված ու գործուն է: Երկուսից ավելի օրինաչափությունների խաչաձևման դեպքում գերակշռում է այն տիպը, որ ավելի շատ օրենքներով է պայմանավորված (**Լեզվաբանական բառարան**, Ե., 1975թ., էջ 137), այլկերպ ասած՝ խաչաձևման օրինաչափությունը պայմանավորված է տարբեր օրինաչափությունների խաչաձևմամբ, ինչպիսիք են՝ բառերի ծագումը, սաղմավորվող երևույթները և հնչյունական, իմաստային օրենքների համակցումը:

[2] ***Л. Виничук***, *Латинский язык*, М., 1985, стр. 23-52, ***А. Подосинов***, *Грамматика латинского языка*, часть 5, М., 1999, стр. 12-24, ***Էդ. Աղայան***, *Լատիներեն լեզվի քերականություն*, Ե., 1950թ., էջ 11-34, ***Հ. Առաքելյան***, *Լատիներեն լեզու*, Ե., 1982, 21-25, ***Մ. Գ. Տեր-Ղազարյան***, *Լատիներեն լեզվի դասագիրք*, Գիրք Ա., Ե., 1971, 91-217:

[3] ***Ա. Աբրահամյան***, *Գրաբարի ձեռնարկ*, Ե., 1958, էջ 21, ***Վ. Առաքելյան***, Գրաբարի քերականություն, Ե., 2010, էջ 22-23,

[4] ***Պ. Շարաբխանյան***, *Գրաբարի դասընթաց*, Ե., 1974, էջ 140-152, ***Հ. Ավետիսյան***, ***Ռ. Ղազարյան***, *Գրաբարի ձեռնարկ*, Ե., 2003, էջ 48:

[5] ***Գ. Ջահուկյան***, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, Ե., 1959, Ե., 95-109:

* Որպեսզի հոլովման տիպի ընդհանուր պատկերը հստակ լինի, բերում ենք միայն եզակի, հոգնակի ուղղական և եզակի, հոգնակի սեռական հոլովները, քանի որ հիմնականում այս հոլովներում է դրսևորվում բառերի թեքման առաջնային օրինաչափությունները:

Ա-ով հիմքերն ունեն հետևյալ չորս ենթախմբերը՝ **ա**) **ա**-ով, **եա**-ով, **իա**-ով և **ա/եա**-ով հիմքեր (***Աննա>Աննայ, Ղուկաս>Ղուկայ, Ասիա>Ասիայ, Գալիլիա>Գալիլիայ, Կեսարիա>Կեսարիայ, Սիբիլլա, Սիբիլլեայ***), **բ**) **Զրո/ա**-ով հիմքեր (հիմնական տիպ)՝ (***տիտան>տիտանայ,Արշակ>Արշակայ, Քուշանք>Քուշանաց***), **գ**) **է/ա**-ով, **է/եա**-ով, **ի/եա**-ով հիմքեր (***Վրթանէս>Վրթանայ, Արիստակէս>Արիստակայ/եայ, Մանէ> Մանեայ, Հերակլէս>Հերակլեայ, Տիգրանուհի>Տիգրանուհեայ***), **դ**) **Ո/ա**-ով, **ո/եա**-ով, **էո/եա**-ով և **իո/եա**-ով հիմքեր՝ (***Հոմերոս>Հոմերայ, Կադմոս>Կադմեայ, Տիմոթէոս>Տիմոթեայ, Տիբերիոս>Տիբերեայ***)**:**

Ո/ա-ով հիմքերն ունեն երկու ենթախումբ՝ **ա**) **ի/ւո/եա** հիմքեր (հիմնական տիպ)՝ (***մաքի>մաքիք, մաքւոյ>մաքեաց, այգի>այգիք, այգւոց>այգեաց, տեղի>տեղիք, տեղւոյ>տեղեաց***), **բ**) **Իա/ իո/եա**-ով հիմքեր՝ (***Կեսարիա>Կեսարիոյ***)**:** Ըստ Գ. Ջահուկյանի տրամադրած փաստերի՝ ***Կեսարիա*** բառը այս հիմքով հանդիպում է ուշ շրջանում, իսկ նախնական ձևը ներկայանում է **ա**-ով հիմքերի մեջ[6]:

Ի/ա-ով հիմքերն ունեն ընդամենը մեկ խումբ՝ (***ամ>ամք, ամի>ամաց***):

Ի-ով հիմքերն ունեն երեք ենթախումբ՝ **ա**) **Ի**-ով հիմքեր՝ (***դիք>դից***), **բ**) **Ե/ի**-ով հիմքեր՝ (***երեք>երից***), **գ) Զրո/ի**-ով հիմքեր (հիմնական տիպ)՝ (***սիրտ>սիրտք, սրտի> սրտից***):

Ու-ով հիմքերեն ունեն երկու ենթախումբ՝ **ա**) **Ու**-ով հիմքեր՝ (***երկու>երկուց***), **բ**) **Զրո/ու**-ով հիմքեր (հիմնական տիպ)՝ (***ցուլ>ցուլք, ցլու>ցլուց, զարդ>զարդք, զարդու> զարդուց***):

Հայերենում ձայնորդահիմք հոլովումներն ունեն երեք ենթատիպ և ձևավորում են **ն**-ով, **ր**-ով, **ղ**-ով հիմքերը, որոնք ունեն հետևյալ պատկերը: **Ն**-ով հիմքերն ունեն հետևյալ տասներկու ենթախմբերը՝ **ա**) **Ուն/ան**-ով հիմքեր՝ (***տուն>տունք, տան> տանց***), **բ**) **Իւն/եան**-ով հիմքեր՝ (***սիւն>սիւնք, սեան>սեանց, բազմութիւն>բազմութիւնք, բազմութեան>բազմութեանց, անկիւն>անկիւնք, անկեան>անկեանց, մրջիւն>մրջիւնք, մրջեան>մրջեանց***), **գ**) **Ուն/ ուան**-ով հիմքեր՝ (***անուն>անուանք, անուան>անուանք, ձեղուն>ձեղուանք, ձեղուան>ձեղուանց***), **դ**) **Ին/ եան**-ով հիմքեր՝ (***ստին>ստինք, ստեան>ստեանց***), **ե**) **Ն/ան/ուն**-ով հիմքեր՝ (***պաշտաւն>պաշտամունք, պաշտաման> պաշտամանց***), **զ**) **(Ը)ն/ան/**-ով հիմքեր՝ (***կողմն>կողմանք, կողման>կողմանց***), **է**) **(Ը)ն/ ան/ուն**-ով հիմքեր՝ (***ատաման>ատամունք, ատաման>ատամանց***), **ը**) **(Ը)ն/ին/ան**-ով հիմքեր՝ (***անձն>անձինք, անձին>անձանց, եզն>եզինք, բեռն>բեռինք, բեռին>բեռանց***), **թ) (Ը)ն/ին/ուն/ան**-ով հիմքեր՝ (***հարսն>հարսունք, հարսին>հարսանց***), **ժ**) **(Ը)ն/ ուն**-ով հիմքեր՝ (***յոգն>յոգունք, յոգուն>յոգունց***), **ժա**) **(Ը)ն/եան/(ան)/**-ով հիմքեր՝ (***եռանդն> եռանդեան/եռանդան***), ժբ) **Ին/ուն**-ով, **եան/ուն**-ով հիմքեր՝ (***երկոքին/երկոքեան>երկոցունց, երեքին/երեքեան>երեցունց***):

Ն-ով հիմքերն ունեն հետևյալ վեց ենթախմբերը՝ **ա**) **այր/աւր/ար**-ով հիմքեր՝ (***հայր>հարք, հաւր>հարց/հարանց***), **բ**) **Այր/եր/եո/որ**-ով հիմքեր՝ (***քոյր>քորք/քուերք, քեռ>քերց***), **գ**) **Ր/ուր**-ով հիմքեր՝ (***աւր>աւուրք, աւուր>աւուրց***), **դ**)**Եւր (իւր)/եր**-ով հիմքեր՝ (***աղբեւր>աղբերք, աղբեր>աղբերց***), **ե**) **(Ը)ր/եր**-ով հիմքեր՝ (***դուստր>դստերք, դստեր>դստերց***), զ) **Ուր/եր**-ով հիմքեր՝ (***բլուր>բլուրք, բլեր>բլերց***): Նշենք, որ այս հոլովումն ուշ շրջանի է, ինագույն հոլովումը **ո**-ով հիմք ունի:

[6] **Գ. Ջահուկյան**, *նույն տեղը*, էջ 98:

Ղ-ով հիմքերն ունեն ընդամենը մեկ խումբ՝ ա) **(Ը)ղ/եղ**-ով հիմքեր՝ (***աստղ>աստեղք, աստեղ>աստեղց***):

Տարահիմք (ձայնավորաձայնորդահիմք) հոլովումները ներկայանում են երկու ենթատիպով: Նրանք ձևավորում են կրկնակի հերթագայությամբ և միայն հիմքակազմ տարրի հերթագայության ենթարկվող հիմքերը: Կրկնակի հերթագայությամբ հիմքերն ունեն հետևյալ չորս ենթախմբերը՝ **ա) Ո/ա/այ**-ով հիմքեր (արմատի **ի/ա** հերթագայում)՝ (***կին>կանայք, կնոջ-կանաց/ կանանց, տիկին>տիկնայք, տիկնոջ>տիկնաց/ անց/ այց***), **բ) Զրո/ն/ան**-ով հիմքեր (արմատի **այ/ա** հերթագայում)՝ (***այր>արք, առն>արանց, տէր>տէրք, տեառն>տերանց***), **գ) Զրո/ի**-ով հիմքեր (արմատի **իւ(եւ)/ե** հերթագայում)՝ (***գիւղ/գեւղ>գիւղք/գեւղք, գեղջ>գիւղից***), դ) Տարարմատ հիմքեր՝ (***ունկն*>ականջք, ունկան>ականջաց***): Միայն հիմքակազմ տարրի հերթագայության ենթարկվող հիմքերն ունեն տասնյոթ ենթախմբեր՝ **ա) Ր/ու**-ով հիմքեր՝ (***ծաղր>ծաղու***): Ընդ որում, այս տիպի հոլովում ունեցող գոյականները կարող են հոլովվել նաև ձայնորդահիմք (**ր**-ով) և ձայնավորահիմք (**ու**-ով) հոլովումներով: **բ) Ր/ուա**-ով հիմքեր՝ (***արտաւոր> արտասուք, ->արտասուաց***), **գ) Ր/ու/ուն**-ով հիմքեր՝ (***մանր>մանուք, մանու>մանուց***), **դ) Ր/ու/ուն/ան**-ով հիմքեր՝ (***բարձր>բարձունք, բարձու>բարձանց***), **ե) Զրո/ու/ան**-ով հիմքեր՝ (***երէց>երիցունք, երիցու>երիցանց***), **զ) Զրո/ի/ին/ան**-ով հիմքեր՝ (***քար>քարինք, քարի>քարանց***), **է) (Ը)ն/ան/զրո/ա**-ով հիմքեր՝ (***դուռն>դուրք/դրունք, դրան> դրաց/ դրանց***), **ը) (Ը)ն/ին/զրո/ի**-ով հիմքեր՝ (***ոտն>ոտք, ոտին>ոտան/ոտից>ոտաց***), **թ) Զրո / (ը)նջեան**-ով հիմքեր՝ (***տիւ>տիւք, տու(ը)նջեան-***), **ժ) Զրո/ան**-ով հիմքեր՝ (***գարուն> գարունք, գարնան>գարնանց***), **ժա) Զրո/ան/ ուն**-ով հիմքեր՝ (***մանուկ>մանկունք, մանկան>մանկանց***), **ժբ) Զրո/եան**-ով հիմքեր՝ (***տեսիլ>տեսիլք, տեսլեան>տեսլեանց***), **ժգ) Զրո/եան**-ով հիմքեր՝ (***ծնունդ>ծնունդք, ծննդեան>ծննդոց***), **ժե) Զրո/ուան/ուն**-ով հիմքեր՝ (***մահ*>մահունք, մահուան>մահուանց***), **ժդ) Զրո/ո**-ով և **ուր**-ով հիմքեր՝ (***ջուր*>ջուրք, ջրոյ>ջուրց***), **ժզ) Զրո/ո/այ**-ով հիմքեր՝ (***աղախին*>աղախնայք, աղախնոյ>աղախնայց/-անց/-աց***), **ժե) Զրո/ի**-ով և **ը**-ով հիմքեր՝ (***ինն>ինունք, ընի>ննից***): **Ինն** թվականն ունի նաև **ինամբք, իննամբք, ինուց, յինուց, ինումբք, իննունք, իննուց, իննամբք, իննուք** հոլովաձևերը:

Հին հայերենում հոլովման տիպերի սահմանազատումը, ինչպես երևաց, կախված է բառի եզակի թվում ի հայտ եկող այս կամ այն ձայնավորի գոյությամբ: Այդ ձայնավորները ձևաբանական մակարդակում հանդես են գալիս որպես հոլովիչներ և հիմքակազմ հնչյուններ: Եվ, ինչպես 5-րդ դարի լեզվական նյութի ընձեռած փաստերն են ցույց տալիս, հայերենում ստեղծվել է հոլովման տիպերի ոչ միայն բարդ, այլև որոշակիորեն կանոնավոր համակարգ, որի քայքայումը և պարզեցումը պետք է տեղի ունենար միայն հետագա դարերում:

Եթե հայերենում հոլովման տիպերի տարբերակման գործում վճռական դեր ունեն ձայնավոր հոլովիչները, ապա լատիներենում, ինչպես փաստերն են ցույց տալիս, դեր են խաղում և՛ հնչյունական գործոնները, և՛ հատկապես բառի

---

* **Ունկն** «կանթ, բռնատեղ» իմաստով ունի հոգնակի **ունկունք-ունկանց** տիպի հոլովում:

* **Մահ** բառը հոլովվում է նաև ձայնավորահիմք **ու** հոլովմամբ:

* **Ջուր** բառը հոլովվում է նաև ձայնավորահիմք **ո** հոլովմամբ:

* **Աղախին** բառը հոլովվում է նաև ձայնավորահիմք **ո** հոլովմամբ:

ձևավորումը: Գրեթե բոլոր քերականները նշում են, որ ոչ միշտ է հնարավոր գոյականի ուղղական հոլովի միջոցով գտնել թե տվյալ բառը որ հոլովման է պատկանում[7]: Այս հիմունքով էլ լատիներենում անունների հոլովական պատկանելությունը որոշվում է հատկապես բառի սեռական հոլովով ու նրա վերջավորությամբ: Ըստ այդմ՝ լատիներենի հինգ հոլովումների (**declinatio**) սեռական հոլովների վերջավորություններն են՝ **Առաջին հոլովում**՝ -ae, **Երկրորդ հոլովում**՝ -i, **Երրորդ հոլովում**՝ -is, **Չորրորդ հոլովում**՝ -us, **Հինգերորդ հոլովում**՝ -ei*: Բառերի՝ այսպիսի սկզբունքով դասդասումը լիովին հիմք է հանդիսանում, որ լատինական հոլովումները բաժանվեն որոշակի տեսակների և խմբերի[8]:

Լատիներենում հինգ հոլովումների տարբերակման հարցում կարևոր է նաև հիմքային, հիմքակազմ ձայնավոր հնչյունը: Բացառությամբ **երրորդ** հոլովման գոյականների, որոնց հիմքի վերջին հնչյունը բաղաձայն է կամ **i** ձայնավոր, մնացյալ չորս հոլովումների հիմքի վերջին հնչյունը ձայնավոր է: Ինչպես նշում է Էդ. Աղայանը, լատիներենում հիմքային հնչյունները փոփոխության են ենթարկվել բոլոր հոլովներում ժամանակի ընթացքում՝ անփոփոխ մնալով միայն հոգնակի սեռականում, հետևաբար հիմքի հնչյունը գտնելու համար պետք է հոգնակի սեռականից անջատել հոլովական վերջավորությունը[9]: Լատիներենում միայն այսկերպ է հնարավոր որոշել բառի հիմքը, որի վերջին հնչյունը կլինի հիմքային հնչյունը:

Լատիներենում Առաջին հոլովման ենթարկվում են **-a** վերջավորություն ունեցող բառերը: Առաջին հոլովման հիմքային հնչյունն է **-a**-ն: Այս հոլովման բառերը բացառապես իգական սեռին պատկանող բառեր են, որը իմաստի տեսանկյունից նույնպես բնորոշող տարբերակիչ հատկանիշ է այս հոլովման բառերի համար: Օրինակ՝ **rosa** «վարդ», **causa** «պատճառ», **tabula** «տախտակ», **herba** «խոտ», **cella** «սենյակ», **catena** «շղթա», **terra** «հող», **via** «ուղի», **vita** «կյանք», **poena** «պատիժ» և այլն: Սակայն կան արական իմաստ արտահայտող բառեր, որոնց այս հոլովման պատկանելը պայմանավորված է սոսկ ձևով՝ **poeta** «բանաստեղծ», **agricola** «հողագործ» և այլն:

Երկրորդ հոլովման ենթարկվում են արական սեռի **-us**, **-er** և չեզոք սեռի **-um** վերջավորություն ունեցող բառերը՝ **hortus** «պարտեզ», **annus** «տարի», **populus** «ժողովուրդ», **amicus** «բարեկամ», **discripulus** «աշակերտ», **vesper** «գիշեր», **gener** «փեսա», **socer** «աներ», **faber** «արհեստավոր», **magister** «ուսուցիչ», **liber** «գիրք», **appidum** «քաղաք», **pomum** «խնձոր», **ballum** «կռիվ», **vinum** «գինի», **verbum** «բայ» և այլն: Այս հոլովման բառերի հիմքի ձայնավորը **o**-ն է: Լատիներենի Երկրորդ հոլովման այս համակարգվածությունը ներկայանում է որոշակի բացառություններով, որոնք են՝ ա) բացի ծառերի, երկրների, գետերի և քաղաքների՝ **-us** վերջավորություն ունեցող անուններից, իգական սեռի են պատկանում նաև **humus** «հող», **colus** «ճախարակ», **alvus** «փոր» բառերը, 2) **-us** վերջավորությունն ունեցող բառե-

---

[7] ***Լ. Դերմոյան***, *Լատիներեն լեզու*, Ե., 2010թ., էջ 22, ***А. Попов***, ***П. Шендяпин***, *Латинский язык*, М., 1970, стр. 216-218.

* Ընդ որում, դասական հայերենի և լատիներենի բացատրական բառարաններում բառերի հոլովական պատկանելությունը հստակ որոշելու համար բառերի դիմաց նշվում է նաև եզակի սեռականի վերջավորությունը:

[8] ***И. Тронский***, *стр. 147:*

[9] Տե՛ս ***Էդ. Աղայան***, *Լատիներեն լեզվի քերականություն*, Ե., 1950թ., էջ 10-11:

րից չեզոք սեռին են պատկանում՝ **pelagus** «ծով», **virus** «թույն» և **vulgus** «ժողովուրդ» բառերը: Այս բառերի համար բնութագրական է նաև այն, որ հոգնակի թիվ չունեն և նրանց հայցական հոլովը նման է ուղղականին: **-er** վերջավորություն ունեցող բառերի մի մասի **-e** ձայնավորը պատկանում է հիմքին և մնում է բոլոր հոլովներում, իսկ մի մասն ունի **-e** միայն ուղղական և կոչական հոլովներում, քանի որ թեք հոլովներում այն ընկնում է: Թեք հոլվներում **e**-ն պահում են հետևյալ բառերը՝ **puer** «տղա», **adulter** «անհավատարիմ ամուսին», **vesper** «գիշեր», **gener** «փեսա», **socer** «աներ»: Շեղումներ ունեն նաև **-us** վերջավորություն ունեցող բառերը: **-ius** վերջավորությունն ունեցող հատուկ և մի քանի հասարակ անուններ ու մեկ դերանուն եզակի կոչականում **-e**-ի փոխարեն ունենում են **-i**՝ **Tullius>Tulli**, **Gajus>Gai**, **meus>mi** «իմ», **filius>fili** «որդի» բառերը: Նկատենք, որ այս հոլովման պատկանող **deus** «աստված», **vir** «տղամարդ» բառերը հոլովման հարացույցում ինչյունական որոշակի յուրահատկություններ են հայտաբերում[10]:

Լատիներենում Երրորդ հոլովման են պատկանում թե՛ արական, թե՛ իգական, թե՛ չեզոք սեռերի գոյականները: Եթե Առաջին և Երկրորդ հոլովման գոյականների ուղղական հոլովի վերջավորությունը գրեթե միօրինակ էր, ապա Երրորդ հոլովման գոյականների ուղղական հոլովը ներկայանում է բազմապիսի վերջավորություններով: Ուղղական հոլովում նրանք կարող են ստանալ կա՛մ որևէ ձայնավոր, կա՛մ **c, l, m, n, r, s, t, x** բաղաձայններից որևէ մեկը՝ **leo** «առյուծ», **mare** «ծով», **labor** «աշխատանք», **mos** «սովորույթ», **miles** «զինվոր», **culex** «մոծակ», **vox** «խաղաղություն», **caput** «գլուխ», **nomen** «անուն», **vactigal** «հարկ», **carmen** «երգ» և այլն: Այս հոլովման բառերը սեռական հոլովում անխտիր ստանում է **-is**, որի շնորհիվ այս հոլովման տարբերակումը մյուս հոլովումներից հեշտանում է: Այս հոլովման մյուս առանձնահատկությունը, ինչպես փաստել է. Աղայանը[11], այն է, որ եզակի թվի բոլոր հոլովներում բառերի մի մասն ունի վանկերի նույն քանակը, այսինքն՝ **հավասարավանկ** են՝ **nubes>nubis** «ամպ», իսկ բառերի մի մասը թեք հոլովներում մի վանկ ավելի ունեն և կոչվում են **անհավասարավանկ՝ palus >paludis** «ճահիճ» և այլն: Անհավասարավանկ բառերն ընդունված է համարել բաղաձայնահիմք հոլովում, իսկ այն գոյականները, որոնք չեզոք սեռի գոյականներ են և լինում են և՛ հավասարավանկ, և՛ անհավասարավանկ, ընդգրկվում են ձայնավորահիմք հոլովումների մեջ[12]:

Լատիներենում Երրորդ հոլովումը ձևային հոլովում է, որի տարբերակվածությունն արտացոլվում է նաև բառերի սեռերի հարցում:

Այս հոլովման բառերից արական սեռին են պատկանում **-or**, **-o**, **-es**, **-er**, **-os**, **-ex** վերջավորություններն ունեցող բառերը: Բերված համակարգվածությունից կան բացառություններ, որոնք կբերենք ստորև՝ **ա)** 1. **-o** վերջավորություն ունեցող բառերից իգական սեռին են պատկանում **-do, -go, -io** վերջավորություն ունեցող բառերը, բացառություն են կազմում արական սեռի **ordo,-inis** «կարգ» և **pugio, -onis** «դաշույն» բառերը, 2. **caro, carnis** «միս» բառը, **բ) -or** վերջավորություն ունեցողներից իգական է **arbor> arboris** «ծառ» և չեզոք՝ **cor>cordis** «սիրտ» բառը, **գ) -os** վերջավորություն ունեցող բառերից իգական է **dos>dotis** «օժիտ» և չեզոք՝ **os>oris**

---

[10] ***Ա. Հայրապետյան, Ն. Մկրտչյան***, *Լատիներենի ձեռնարկ/Շնաբանություն*, Ե., 2004թ., էջ 33-34:

[11] ***Էդ. Աղայան***, *Լատիներեն լեզվի քերականություն*, Ե., 1950թ., էջ 17:

[12] ***Ա. Հայրապետյան, Ն. Մկրտչյան***, *նույն տեղը*, էջ 65-66:

«բերեն, երես», **os>ossis** «ոսկր» բառերը, **դ) -er** վերջավորություն ունեցող բառերից չեզոք են **cadaver>cadaveris** «դիակ», **iter>itineris** «ուղի», **ver>veris** «գարուն», **verbera>verberum** «հարվածներ», **ե) -es** վերջավորություն ունեցող բառերից իգական են **quies>quietis** «հանգիստ», **merces>mercedis** «պարգև», **seges>segetis** «ցանք», իսկ չեզոք է **aes>aeris** «պղինձ» բառը, **զ) -ex** վերջավորություն ունեցող բառերից իգական է **lex>legis** «օրենք» բառը:

Այս հոլովման բառերից իգական սեռին են պատկանում **-as, -aus, -is, -us, -x, -s, -es** վերջավորություններն ունեցող բառերը, որոնք հավասարավանկ են: Եղած բացառությունները բերվում են ստորև՝ **ա) -as** վերջավորություն ունեցող բառերից արական է **as>assis** «դրամ» և չեզոք **vas>vasis** «անոթ» բառերը, **բ) -is** վերջավորություն ունեցող բառերից արական են՝ 1. **-cis, -guis, -nis** վերջավորություններ ունեցող բառերը՝ **piscis>piscis** «ձուկ», **sanguis>sanguinis** «արյուն», **finis> finis** «վերջ» և այլն, 2. մի շարք բառեր՝ **lapis>lapidis** «քար», **pulvis>pulveris** «փոշի», **collis>collis** «բլուր», **axis>axis** «առանցք», **orbis>orbis** «շրջան» և այլն, **զ) -x** վերջավորություն ունեն նաև արական սեռի բառերը, միայն տարբերությունն այն է, որ արական սեռի բառերում **-x**-ին նախորդում է **-e**, իսկ իգական սեռի բառերում՝ որևէ այլ ձայնավոր կամ որևէ բաղաձայն՝ **vertex>verticis** «ջրապտույտ» բառը արական է, մինչդեռ **vox>vocis** «ձայն», **calx> calcis** «կրունկ» բառերը՝ իգական, **դ) -s** վերջավորություն ունեցող և նրան որևէ բաղաձայն նախորդող բառերից արական են **fons>fontis** «աղբյուր», **mons>montis** «լեռ», **dens> dentis** «ատամ», **pons>pontis** «կամուրջ», **rudens>rudentis** «պարան», **ե) -es** վերջավորություն ունեն արական սեռի մի քանի անհավասարավանկ բառեր՝ **miles> militis** «զինվոր» և այլն, իսկ իգական սեռի մի քանի բառեր հավասարավանկ են՝ **vulpes>vulpis** «աղվես», **զ) -us** վերջավորություն ունեցող չեզոք սեռի բառերը եզակի սեռականում ունենում են **-oris, -eris** մասնիկները՝ **corpus>corporis** «մարմին», **onus>oneris** «բեռ», իսկ իգական սեռի բառերը՝ **-udis**, **-utis** մասնիկները՝ **palus>paludis** «ցից», **salus>salutis** «ապահովություն»:

Երրորդ հոլովման բառերից չեզոք սեռի են պատկանում **-a**, **-e**, **-c**, **-l**, **-n**, **-t**, **-ar**, **-ur**, **-us** վերջավորություն ունեցող բառերը: Եղած բացառությունները սրանք են՝ **ա) -l** վերջավորություն ունեցողներից արական են **sal>salis** «աղ» և **sol>solis** «արև» բառերը, **բ) -us** վերջավորություն ունեցողներից արական են **lepus>leporis** «նապաստակ», **mus>muris** «մուկ», **tripus>tripodis** «եռոտանի» բառերը, իսկ իգական է **tellus>telluris** «հող» բառը:

Լատիներենի Երրորդ հոլովման գոյականներին ներհատուկ են մի շարք այլ առանձնահատկություններ նույնպես: Կան փաստեր, որ թեք հոլովներում բառահիմքերին համակարգային մասնիկների փոխարեն կցվում են այլ մասնիկներ[13], որոնք, ըստ ամենայնի, հնչյունական տարբեր օրենքներով են պատճառաբանվում, օրինակ՝ եզակի հայցականում **-em**-ի փոխարեն մի քանի բառեր ստանում են **-im** վերջավորությունը, այն է՝ **sitis>sitim** «ծարավ», **puppis>puppim** «նավախել», **securis> securim** «կացին», **vis>vim** «ուժ», **febris>febrim** «տենդ», **turris>turrim** «աշտարակ», **Neapolis>Neapolim** «Նեապոլ» և այլն: Այդ մասնիկները, սակայն, պետք է նշել, խնդրո հարցում որևէ նշանակություն չունեն:

Լատիներենում Չորրորդ հոլովման ենթարկվում են արական սեռի **-us** և չեզոք սեռի **-u** վերջավորություն ունեցող բառերը: Հիմքի ձայնավորը **u**-ն է, իսկ ե-

[13] ***Էդ. Աղայան***, *նույն տեղը*, էջ 23-24, ***Ա. Հայրապետյան, Ն. Մկրտչյան***, *նույն տեղը*, էջ 66-67:

զակի սեռականի վերջավորությունը՝ **-us՝ senatus** «ծերակույտ», **sensus** «զգացմունք», **fructus** «պտուղ», **cornu** «եղջյուր», **genu** «ծունկ», **acus** «ասեղ», **manus** «ձեռք» և այլն: Միայն այս հոլովման պատկանող **domus** «տուն» բառն է հայտաբերում որոշակի առանձնահատկություններ, քանի որ եզակի բացառականում ունենում է Երկրորդ հոլովման վերջավորությունը, իսկ մնացյալ հոլովներում զուգահեռաբար ունենում է չորրորդ հոլովման կամ երկրորդ և չորրորդ հոլովումների վերջավորությունները:

Հինգերորդ հոլովման պատկանում են **-es** վերջավորությամբ բառերը, որոնց քանակը չի հատուկ երեք տասնյակը՝ **dies** «օր», **res** «բան», **meridies** «միջօրե», **acies** «սայր, շեղբ», **canities** «գորշություն», **fides** «հավատ», **macies** «նիհարություն», **spes** «հույս» և այլն: Այս հոլովման բառերը եզակի սեռականում ունենում են **-ei** վերջավորությունը: Այս հոլովման բառերն իգական սեռի են պատկանում: Բացառություն են կազմում միայն արական սեռի **dies** «օր» և **meridies** «միջօրե» բառերը: Այս հոլովման միայն **dies** «օր», **res** «բան» բառերն ունեն հոլովակա ողջ հարացույցը, իսկ մյուս բառերը հոգնակի թվի բոլոր հոլովներով չեն չեն գործածվում. այդ բառերը կամ ընդհանրապես չեն գործածվել հոգնակի թվով, կամ գործածվել են մի ընդամենը մի քանի հոլովներով[14]:

Հայերենի և լատիներենի հոլովման տիպերի տարբերակումը ցույց է տալիս, որ հայերենում անունները ձևաբանորեն տարբերակված չեն, իսկ լատիներենում ընդհակառակը՝ տարբերակված են: Միևնույն ժամանակ լատիներենում հոլովական տիպերի տարբերակման հարցում կարևորություն ունեն անունների՝ իգական, արական և չեզոք սեռերին պատկանելը: Սա, կարծեք թե, նպաստում է բառերի ուղիղ ձևերով որոշել լատիներենում բառերի հոլովական պատկանելությունը, մինչդեռ հայերենում սեռական հոլովն է վճռորոշ՝ առաջ բերելով մի շարք կնճռոտ ու ոչ վերջնական հարցեր: Ի զուր չէ, որ հին հայերենի հոլովման հիմքերի տարբերությունների հարցը հայ լեզվաբանության կնճռոտ հարցերից մեկն է, քանի որ երկու և ավելի տարբերակային հիմքերի առկայության դեպքերում դժվարանում է որոշել բառի առաջնային հիմքը: Պատեհ է հիշատակել խնդրո բարդության վերաբերյալ Գ. Ջահուկյանի բնութագրումը. «Այստեղ, իհարկե, որակարարը հին հայերենի ներքին օրինաչափություններն են, որոնք առաջացել են գերազանցապես հնդեվրոպական լեզվասիստեմի աստիճանական որակական վերափոխությամբ և նյութի վերախմբավորմամբ, բայց այդ օրինաչափությունները կազմող գծերը հատվում են հնից եկող և նոր օրինաչափություններին լրիվ չենթարկված, նրանց հետ չմերված օրինաչափությունների, մասամբ էլ հին հայերենի ընդերքում սկիզբ, նրա հոլովման սիստեմի հակասություններով պայմանավորված օրիանաչափությունների հետ»[15]:

Երկու լեզուների հոլովման տիպերի տարբերակման քննությունը ցույց է տալիս, որ որպես ընդհանուր չափանիշ, սեռական հոլովն է հոլովման տիպերի տարբերակման առաջնային հիմունքը՝ համապատասխան թեքական մասնիկավորումներով: Սակայն դիտարկվող լեզուների հոլովման տիպերի բնութագրումը կարելի է ներկայացնել նաև իմաստային և քերականական օրինաչափությունների տեսանկյունից, որոնց դեպքում կդիտարկվեն բառերի իմաստային և քերակա-

[14] ***Էդ. Աղայան***, *նույն տեղը*, էջ 32:

[15] ***Գ. Ջահուկյան***, *նույն տեղը*, էջ 114-115:

նական խմբավորումները: Իմաստային և գործառական խմբավորման օրենքների կիրառման դեպքում երկու լեզուների հոլովման տիպերի բնութագրումը տարբեր արդյունքները կունենա:

Հայերենում այս գործոնները գրեթե չեն գործում, քանի որ կարևորություն են ստանում թեքական մասնիկավորման օրինաչափությունները: Որպես տարբերակիչ հատկանիշի ցուցիչ՝ իմաստային օրինաչափությունը որոշ հոլովման տիպերում նկատելի խմբավորումներ է հայտաբերում: Որպեսզի ասվածը հիմնավոր լինի, կատարենք հետևյալ խմբավորումները՝ **ա**, **եա**, **իա**, **ա/եա**, **է/ա**, **է/եա**, **ի/եա**, **զրո/ա**, հիմքերն ունեցող անունների մեջ խմբավորվում են բացառապես հատուկ անունների երկու խմբերը՝ տեղանուններն ու անձնանունները, **զրո/ու** հիմքերն ունեցող անուների զգալի մասը կենդանանուններ են, իսկ **(ը)ն/ան** և **իւն/եան** հիմքերն ունեցող անունների մեծ մասը ցույց են տալիս վերացական ու շարժում, գործողություն ցույց տվող անուններ: Վերոնշյալ հիմքերի տարբերակման գործում դեր ունեն նաև անունների բառավերջի ձևավորման առանձնահատկությունները: Սակայն այս օրինաչափությունը համակարգային բնույթ չի կրում, որը կհանգեցներ հայերենի հոլովման տիպերը ամբողջական իմաստային դասակարգման ենթարկելուն:

Պետք է նշել, որ այս սկզբունքը լատիներենի դեպքում նույնպես գործում է մասնակիորեն: Արդեն կարևորել ենք, որ լատիներենում հոլովման տիպերի տարբերակման գործում կարևոր նշանակություն ունեն անունների ձևավորվածությունը. բառերի որոշակի վերջավորություններով են որոշվում նրանց հոլովական պատկանելությունը: Բայց իմաստային և գործառական խմբավորման օրենքները կարելի է կիրառել նաև լատիներենի դեպքում՝ կարևորելով բառերի համապատասխան սեռերով հոլովման տիպերի որոշման հարցը: Ըստ այդմ էլ, լատիներենի անուններին բնորոշ իգական, արական, չեզոք սեռերը, որպես իմաստային խմնավորման հիմունք, կարող են դառնան հոլովման տիպերի ոչ առաջնային, այլ երկրորդական սկզբունք, չափանիշ: Ի զուր չէ, որ լատիներենում Առաջին և Հինգերորդ հոլովման բառերը հիմնականում իգական սեռի են, Երկրորդ հոլովման բառերը՝ արական, Չորրորդ հոլովման բառերը՝ արական և չեզոք, իսկ Երրորդ հոլովման բառերը՝ և՛ արական, և՛ իգական, և՛ չեզոք: Սակայն եղած բացառությունները և շեղումները թույլ չեն տալիս, որ անունների սեռերի տարբերումը դարձնել ընդհանուր հիմունք լատիներենի հոլովման տիպերը տարբերակելիս:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ցեղակից երկու լեզուներում հոլովման տիպերը ժառանգվել են հնդեվրոպական հիմք լեզվից՝ պատմական զարգացման գործընթացում ձևավորելով սեփական համակարգերը: Ծագումնաբանական ընդհանրությամբ է պայմանավորված, որ երկու լեզուներում էլ գործում է թեքական մասնիկավորումը՝ հնչյունական տարաբնույթ արտահայտվածությամբ ու հերթագայություններով: Որպես ընհանուր գնահատական՝ կարող ենք նշել, որ հին հայերենի հոլովման տիպերի համակարգն իր բարդությամբ հանդերձ ավելի համակարգային է, քան լատիներենի ունեցած համակարգ: Լատիներենում հոլովման տիպերը որոշելիս հավելյալ հատկանիշ է դառնում նաև անունների սեռերը: Հատկանիշ, որից զուրկ են հայերենի գոյականները, թեև լեզվաբանական ուսումնասիրություններում եղել են հիշատակություններ այն մա-

սին, որ ինչ-որ մի պատմական ժամանակաշրջանում հայերենում նույնպես գոյականները տարբերակել են իգական, արական, չեզոք սեռերը, սակայն այդ սեռերի տարբերակումը ժամանակի ընթացքում անհետացել է մեր լեզվի համակարգից:

Гарик Мкртчян, Едита Асатрян-***Характеристика типов склонения в латинском и древнеармянском***– Исследования показывают, что в обоих языках для разграничния типов склонений имеют значение звуковые, смысловые и грамматические закономерности, а также закономерности сочетания. Особенно важным является звуковой фактор: в обоих языках для разграничния типов склонений значимыми являются некоторые закономерности флективной аффиксации, которые имеют непосредственно звуковую выраженность. В этих родственных языках типы склонений произошли от индоевропейского языка-основы, образовав собственные системы в процессе исторического развития.

Garik Mkrtchyan, Edita Asatryan-***The characteristics of the types of declension in latin and old armenian***-Research shows that vocal, semantic, grammatical and combination regularities play a significant role in differentiating between the types of declension in both languages. The vocal factor is of particular importance: in both languages there are remarkable regularities of inflexional affixation which have a vocal expression. In the two related languages the types of declension originated from Indo-European language family, forming their own systems in the process of historical development.

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խոսակցական ֆրանսերենը՝ ֆրանսերեն լեզվի տարատեսակներից մեկն է, որը կիրառվում է անհատական, անբռնազբոսիկ շփման ժամանակ՝ կենցաղում, ընտանիքում, ընկերական միջավայրում: Այն օգնում է մարդուն ավելի մոտ զգալ դիմացինին, խոսքին տալիս է անմիջականություն, հյութեղություն, բնականություն ու բազմազանություն: Խոսակցական ֆրանսերենին անդրադառնալը պայմանավորված է նրանով, որ ֆրանսերեն ուսումնասիրողները հանդիպում են մեծ դժվարությունների խոսակցական լեզվի բառերը, արտահայտությունները, ինչպես նաև լեզվական կառուցվածքները հասկանալու համար, ուստի վերջինիս առանձնահատկությունների իմացությունը կարող է օգտակար լինել այն լիարժեքորեն կիրառելու համար:

Բանալի բառեր. ֆրանսերեն լեզվաբանություն, լեզվական համակարգ, խոսակցական լեզու, բառակազմություն, հաղորդակցություն

Մենք սովորում ենք ֆրանսերեն, անգիր ենք անում երկխոսություններ, տարբեր ազատ թեմաներ և դրանց համապատասխանող բառեր ու արտահայտություններ, սակայն հետո, ֆրանսիացու հետ հենց առաջին շփման ժամանակ դժվարանում ենք հասկանալ բառերի կեսը: Դժվարություններ են առաջանում նաև գեղարվեստական ֆիլմեր դիտելիս և գրական ստեղծագործություններ ընթերցելիս: Ինչու՞: Որովհետև դա կենդանի խոսակցական լեզուն է, որն էականորեն տարբերվում է այն լեզվից, որին հանդիպում ենք դասագրքերում:

«Խոսակցական լեզուն բանավոր հաղորդակցման ժամանակ գործածվող հանպատրաստից, անկաշկանդ խոսք է, որը ձևավորվում և դրսևորվում է խոսելու պահին: Այն մարդկանց հաղորդակցման հիմնական միջոց է, ունի կիրառության մեծ բնագավառ: Լեզվական որոշակի համակարգ է, որը հակադրվում է պաշտոնական, գրքային խոսքին իր անմիջականությամբ և ոչ պաշտոնական բնույթով»[1]:

Ժամանակակից լեզվաբանության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում խոսակցական լեզվի համապարփակ ուսումնասիրությանը: Ինչ վերաբերում է խոսակցական ֆրանսերենին՝ FF[2], ապա այն ունի իրեն բնորոշ հնչյունաբանական, ձևաբանական, բառակազմական և շարահյուսական առանձնահատկությունները, որոնք պարտավոր են գիտենալ և՛ֆրանսերեն դասավանդողները, և՛ սկսնակ սովորողները:

Քանի որ հնարավոր չէ մեկ հոդվածի շրջանակներում վերլուծել լեզվի այս չորս ասպեկտները, մենք կսահմանափակվենք միայն բառակազմության և շարահյուսության մի քանի առանձնահատկությունների քննարկմամբ:

I. Բառակազմության մի քանի առանձնահատկություններ.

[1]Разговорная речь в системе функциональных стилей современного русского литературного языка. Под редакцией ***О. Б. Сиротининой***, Саратов, 1992, ст. 312:

[2]FF (français familier)՝ խոսակցական ֆրանսերեն

Յանկացած խոսակցական լեզվի, այդ թվում նաև ֆրանսերենի, առանձնահատկություններից են անկաշկանդությունը, իրադրության և համընթաց խոսքի հետ սերտ կապը, արտահայտչականությունը: FF–ի բառերը կազմվում են վերջածանցների, հապավումների և փոխակերպումների օգնությամբ[3]: Նրանում գործածվում են գրական լեզվի հետ կանոնակարգված համընդհանուր **վերջածանցներ,** որոնք արտահայտում են.

ա) գործողության իմաստ կամ հետևանք.

Օր.՝ **- ade:** engueuler - engueulade - հայհոյանք

- age: cafarder – cafardage - մատնություն

- ance: rouspéter – rouspétance - փնթփնթոց

բ) գործողություն կատարող անձի անունը.

Օր.՝ **- ard**: pellicule – pelliculard - կինոգործիչ

- eur: traficoter – traficoteur - խարդախ մարդ

գ) այնանձի անունը, որը բնութագրվում է բառի հիմքից բխող հատկանիշով.

Օր.՝ **- ard:** frousse –froussard - վախկոտ

դ) փաղաքշական կամ դրական գնահատական.

Օր.՝ **-et, -ette**: gentile – gentillette - լավիկ:

-ot,-otte: parler – parlotte – շաղակրատանք, sec – sécot - նիհար, հյուծված, վտիտ

-in: roux, rouge – rouquin - շիկակարմրիկ; **-inet**: blond –blondinet - խարտյաշիկ

Այս վերջածանցները համադրվելով բառաստեղծիչ հիմքի հետ, նպաստում են FF–ի արտահայտչականությանը:

FF–ում կիառվում են ոչ միայն գրական լեզվի հետ կանոնակարգված համընդհանուր վերջածանցներ, այլև յուրահատուկ, պատկերավոր վերջածանցներ.

Օր.՝ **-os**: musicien – musicos – երաժիշտ

-ache: brave – bravache - քաջ, քաջարի

-aille: politique – politicaille – պոլիտիկանություն՝ աննկզբունք քաղաքագետի վարքագիծ, flic – flicaille – ոստիկանություն, ոստիկաններ)

-aillon: pipe – pipaillon – անփորձ ծխող, avocet – avocaillon–փաստաբանիկ

-asse : fille – fillasse – գեր, գռեհիկ աղջիկ; bête – bêtasse – միամիտ, անխելք մարդ; fin – finasser – խորամանկել; jaune – jaunasse– դեղնավուն

-(d)ingue: valise - valdingue - ճամպրուկ

-iche: bonne - bon(n)iche - աղախնիկ և այլն:

FF–ում զարգացած է բառակազմական ածանցների հոմանիշությունը, որոնք ստեղծում են արտահայտչամիջոցների բազմազանություն, ինչպես օրինակ բայերի բառակազմության մեջ՝ tourner - tournailler, tourniller, tournicoter, tourniquer, tournoter, tournasser, tournicher, tournocher, tournouiller, tournacher, tournoyer.թարգմանաբար՝ պտտվել, պտույտ գալ, շուրջը պտույտ կատարել, պտույտներ անել, բոլորածիր պտտվել:

---

[3] ***Гринева Е.Ф.***, Некоторые особенности словообразования стилистически окрашенных форм французской разговорной лексики, Вестник МГУ. Филология, 1969, № 1; George K.E. M., L'apocope et l'aphérèse en français familier, populaire et argotique, Français moderne, 1980, №1

Հապավումները կարող են ստանալ բառի կարգավիճակ, ունենալ ածանցում. Օր.՝ CAPES (certificat d'aptitude pédagogique à l'enseignement secondaire - բուհական դիպլոմ, որը իրավունք է տալիս դասավանդել միջնակարգ դպրոցում), capésien (ուսանող, ով ձգտում է ստանալ միջնակարգ դպրոցում աշխատելու իրավունք տվող դիպլոմ): Բառավերջի կրճատման եղանակով ստեղծված բառերի շարքում շատ են **o**-ով բառերը. Օր.՝ editorial –édito, թեև կան նաև բառավերջի այլ ձայնավորներով վերջացող բառեր՝ **ampli**/ficateur/,**géné**/ral/, **sana**/torium/, **docu**/mentaire/, **pneu**/matique/ և այլն: Կարող են կրճատվել ոչ միայն վերջին, այլև առաջին վանկը՝ **Con**/servatoire:

Ստեղծվում են նաև արդեն գոյություն ունեցող ձևերին զուգահեռ ձևեր՝ proviseur – provo – provi**,** կրճատված բառերը կարող են ենթարկվել կրկնակի կրճատման՝ Saint-Lazare- Saint-Lago - Saint Lag: Կրճատված բառերի մեծ մասը երկվանկ են, մի քանիսը ավարտվում են բաղաձայնով՝ magasin – mag, magase, magaze; copain, copin – cop: Միևնույն բառը կարող է կորցնել կամ սկիզբը, կամ վերջը՝ Sébas/Topol/ - Sébasto/pol/ (ծառուղի Փարիզում): Մի շարք կրճատված բառեր կարող են ունենալ մեկից ավելի ձևեր՝ rendez-vous – rendève, rendez, rende, rembo, rembro, rencad, renque - ժամադրություն, հանդիպում: Կրճատված բառերից կարող են առաջանալ նոր բառեր՝ baccalauréat – bac (back), bachot (բակալավրի քննություն); bachotage (քննությունների համար անհրաժեշտ գիտելիքների սովորեցում); bachoteur (վերջին պահին քննություններին պատրաստվող աշակերտ); bachoter (անգիր անել): Փարիզի խոսակցական լեզվին բնորոշ է տեղանունների՝ փողոցների, շրջանների անունների կրճատում՝ jardin du/Luco, Lux/embourg/; Monpar/no/asse/; ինչպես նաև ուսումնական և այլ տեսակի հաստատությունների՝ (Lycée) Charl/magne/; Samar/itaine/:

Կրճատումներ հազվադեպ են տեղի ունենում ածականների մեջ՝ off/iciel/, dégueu/lasse/, էլ ավելի հազվադեպ՝ բայերի մեջ: Մակբայերի մեջ սովորական –ment վերջածանցի փոխարեն կարող է հայտնվել – o վերջածանցը՝ directement – directo: Կրճատման են ենթարկվում նաև բառակապապակցություններ, ընդ որում, տարրերը կրճատվում են երկու բառերից միաժամանակ՝ **restau**/rant/ **u**/niversitaire/- ուսանողական ճաշարան կամ միայն մեկ բառի տարրը՝ Cité **U**/niversitaire/ - ուսանողական ավան; Marie -**Thé**/rèse/:

FF–ում լայնորեն կիրառվում է նաև փոխակերպումը՝

ա) գոյականացում. Օր.՝ aller jusqu'au bout - գնալ մինչև վերջ - aller jusqu'au boutisme (նրանց դիրքորոշումը, ովքեր ծայրահեղ միջոցների կողմնակից են), jusqu'au boutiste (մարդ, ով կողմ է ծայրահեղ միջոցների կիրառման)

բ) ածականացում. Օր.՝ une arrivée vraiment surprise - անակնկալ ժամանում; une femme saindoux - թմբլիկ կին:

Իբրև ուժեղ արտահատչական միջոց, օգտագործվում է կրկնությունը՝ գոյականների և ածականների արմատների կրկնապատկումը, ինչպես օրինակ՝ fifille- դուստր, դստրիկ; sosot - հիմարիկ; mémée – mémère - կինարմատ, կին, տատիկ: Կրճատման և կրկնապատկման եղանակով են առաջացել նաև որոշ փաղաքշական երկարմատանի հատուկ անուններ. André – Dédé; Alice, Amélie – Lili; Henri – Riri**;** Eugénie – Nini և այլն:

FF–ում բարդ բառերը հաճախ առաջանում են պարզ գումարման եղանակով՝ Et vous avez un statut - étudiant -- Եվ դուք դառնում եք լիիրավ ուսանող:

Ինչ վերաբերում է նախածանցներին, ապա FF–ում չկան հատուկ նախածանցներ: Արդյունավետ նախածանցներից են՝

ա) գերադասություն **hyper -, ultra -, sur -, archi** -: hyperminable - ամենախղճուկ, սաստիկ խղճուկ; ultrachouette - գերգերազանց

բ) հակադրություն, ժխտում **dé -, dés** -: désaimer – չսիրել; décréateur - կործանող անձ, ավերիչ

գ) կրկնություն **re** -: repipe - նոր անհաջողություն; regrouper - կրկին խմբավորել արտահայտող նախածանցները:

II. Շարահյուսության մի քանի առանձնահատկություններ

Մտքի, խոսքի մասնատումը, որը հատուկ է տարբեր լեզուների խոսակցական լեզվին, ֆրանսերենում կարող է ի հայտ գալ, մասնավորապես, հարաբերակից (կորելյատիվ) կառուցվածքի միջոցով՝ (Et) Paul, il va au théâtre – (Իսկ) Փոլը, նա գնում է թատրոն: Այս կառուցվածքը կիրառելի է նաև նորմավորված գրական լեզվում, սակայն նրա գործածության հիմնական ոլորտը խոսակցականն է: Դիտարկենք հետևյալ նախադասությունները՝ Eh! L'taxi, j' (suis) pas partisan du taxi, moi pourquoi? (pourquoi un taxi?) mais l'métro, ça c' qui va le plus rapide dans Paris. L'métro, l'fait une moyenne de cinquante à l'heure à peu près. - Ես տաքսիի կողմնակից չեմ: Ինչու՞: Դե, մետրոն Փարիզում ամենաարագն է: Միջինով, ժամում մոտավորապես հիսուն կիլոմետր է:

Այսպիսի կառուցվածքները կարող են արտահայտել հետևյալ իմաստները՝

- c'est bien cela, c'est justement cela - հենց դա է (Et Pierre où va-t-il? - C'est bien Pierre qui m'intéresse… où va-t-il?)

- quant à cela - ինչ վերաբերում է սրան (Jean, il boit du café.- Quant à Jean, il boit du café)

- je parle de cela - ես խոսում եմ այդ մասին (I(l) boit du café, Jean? - Il boit du café? … je parle de Jean).

Ինչպես տեսնում ենք, այսպիսի կառուցվածքները մոտ են իրենց նշանակությամբ և կազմությամբ: Նրանց մեջ բառը, որը կարող է կապվել մյուս բառերի հետ ինչ-որ համընդհանուր հատկանիշով՝ ներկայացված է սկզբում, մեջտեղում կամ վերջում անձնական դերանուններով՝ il, elle, ils…, en, y դերանուններով՝ Au théâtre, il **y** est déjà allé – Թատրոնում, նա այնտեղ արդեն եղել է; ce, ça դերանուններով՝ l'Obélisque, **c'**est venu par le bateau – Օբելիսկը … նրան բերել են ծովով; 12 ans, **ça** n'est pas n'importe quel âge; 12 տարի … սա արդեն հասուն տարիք է:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ FF–ում ուղիղ և անուղղակի խնդիրների տեղը հաստատուն չի: Օր.՝ Jean, i(l) boit du café; Du café, Jean i(l) boit; Du café, i(l) boit, Jean - Ժանը, նա սուրճ է խմում; Jean, y pense à Marie; A Marie, Jean, y pense; A Marie, i(l) pense, Jean; I(l) pense, Jean à Marie - Ժանը, նա մտածում է Մարիի մասին[4]:

FF–ում բավականաչափ տարածված են բառույթի կրկնությունները, որոնք ուժեղացնում են ածականների ու մակբայների հատկանիշների արտահայտչականությունը, ընդգծում են բայերի գործողության կատարման տևողությունը՝ Pas de constructions gigantesques-gigantesques!; Il y avait beaucoup-beaucoup d'hommes!; J'ai très-très faim!; … comme quelqu'un qui tourne et tourne autour du pot…; իսկ գոյականների կրկնությունը նախադասության մեջ կարող է հանդես գալ c'est bien

[4] ***Cadiot P.***, Ordre des mots et Interlocution, Paris, 1980, p. 225-239

cela, c'est justement cela նշանակությամբ. Օր.՝ La télévision vole le temps qu'on a autrefois consacré au livre-livre, pas à la bande dessinée. - Հեռուստացույցը խլում է այն ժամանակը, որը նախկինում տրամադրվում էր գրքեր կարդալուն, հատկապես գրքեր, ոչ թե կոմիքսներ:

FF–ում բացատրություն տվող անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններում կարող է չգործածվել ուղիղ և անուղղակի խոսքը: Օր.՝ Il m'a dit, mamy viendra bientôt - Նա ինձ ասաց, տատիկը շուտով կգա; Mais il dit, vous pouvez pas. –Բայց նա ասում է, դուք չեք կարող: Dire բայի que շաղկապի վալենտականությունը բավական է, որպեսզի համապատասխան ստորոգելիական կառուցվածքը հասկացվի որպես բացատրական՝ Mais il*dit*, vous pouvez pas:

Այսպիսով, խոսակցական ֆրանսերենը՝ ֆրանսերեն լեզվի տարատեսակներից մեկն է, որը կիրառվում է կենցաղում, ընտանիքում, ընկերական միջավայրում: Նրան երբեմն անվանում են «հողաթափերով ֆրանսերեն»[5]:

Սակայն չպետք է մոռանալ, որ լեզվակիր ժողովրդի խոսակցականը ընդօրինակելու փորձերը երբեմն կարող են ծիծաղելի թվալ: Ռուս լեզվաբաններ Ե.Ֆ Գրինևան և Տ.Ն. Գրոմովան այս կապակցությամբ նշում են, որ ամենևին պարտադիր չէ, որ օտարերկրացին ակտիվորեն յուրացնի լեզվի խոսակցական բառապաշարը՝ հիշատակելով ակադեմիկոս Լ.Վ.Շչերբայի նախազգուշացումն այն մասին, որ «խիստ բնորոշ ֆրանսիական բառերը և պատկերավոր արտահայտությունները, դեռ ավելին՝ ժարգոնները գործածել պետք է հմտորեն և տեղին, որպեսզի ծիծաղելի չլինես»[6]:

Мира Карапетян - ***Особенности французского разговорного языка.*** - Французский разговорный язык – один из разновидностей французского языка, который используется в личной непринужденной беседе в быту, в семье, в дружеской обстановке. Он помогает человеку чувствовать себя ближе к собеседнику, придает слову непосредственность и многообразие.

Обращение к французскому разговорному языку обусловлено тем, что изучающие французский язык сталкиваются с большими трудностями в использовании слов и выражений разговорного языка, а также для понимания языковых структур, поэтому знание их особенностей может быть полезно для их полноценного использования.

Myra Karapetyan - ***The Peculiarities of Spoken French*** - Spoken French is a kind of French language, which is used in personal unembarrassed contact in the family, friendly company. It helps the person to feel each other better, it makes the speech more natural, different, juicy and frank. Reference to spoken French is due to the fact, that people studying French find difficulties in understanding words, expressions and structures of spoken language. So knowing the expressions of spoken language can be helpful to use it fully and freely.

[5] ***Garmadi J***, La sociolinguistique - P., 1981. P.79

[6] ***Гринева Е.Ф.***, ***Громова Т.Н***. Словарь разговорной лексики французского языка, М.,1987, с.6

ԳՈՅԱԿԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոդվածում քննարկվում են գոյականի քերականական կարգերը և դրանց դրսևորման յուրահատկությունները Հովհ. Թումանյանի արձակ ստեղծագործություններում: Հայ մեծ գրողն ապրել և ստեղծա-գործել է 19-րդ դարավերջում և 20-րդ դարասկզբում, այսինքն՝ մի այնպիսի շրջանում, երբ արևելահայ լեզուն մշակվում և կայունանում էր, բացի այդ՝ նրա ստեղծագործության լեզուն սերտորեն առնչվում էր ժողովրդական ակունքներին: Ուստի և քերականական կարգերի զուգաձևությունները, մասնավորապես՝ գոյականի քերականական կարգերի, բավական հետաքրքիր դրսևորում ունեն նրա ստեղծագոր-ծություններում:

Բանալի բառեր. Գոյական, քերականական կարգեր, թվի քերականական կարգ, հոլովի քերականա-կան կարգ, առկայացման (որոշյալի և անորոշի) քերականական կարգ, անձի և իրի քերականական կարգ, զուգաձևություն, գրական ձև, բարբառային ձև, գրական նորմա, նորմայից շեղում

Խոսքում ունեցած իր կարևոր դերով ու նշանակությամբ գոյականը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայերենի խոսքիմասային համակարգում, քանի որ առարկայա-կան աշխարհի բոլոր իրերն ու երևույթները, իրողություններն ու անձերն արտհայտ-վում են գոյականների միջոցով: Որպես խոսքի մաս՝ լեզվի քերականական համա-կարգում գոյականն ունի իրեն բնորոշ քերականական առանձնահատկություններ: Գոյականը ձևաբանորեն մյուս խոսքի մասերից առանձնանում է իր քերականական կարգերով: Ժամանակակից հայերենում դրանք հետևյալն են՝ թվի, հոլովի, առկայաց-ման, անձի և իրի:[1] Մեր նպատակն է ուսումնասիրել գոյականի ձևաբանական կարե-վոր առանձնահատկություններ՝ նրա քերականական կարգերը և դրանց արտահայ-տությունը Հովհ. Թումանյանի արձակ ստեղծագործություններում:

Հովհ. Թումանյանի լեզուն ժողովրդական, պարզ, կենդանի, անպաճույճ, անբռնա-զբոս, ժողովրդի կենսական ակունքից բխող լեզվի կատարելատիպ է, որն իր անմի-ջական հմայքով զարմացրել և մեկընդմիշտ գերել է ընթերցողին՝ անկախ տարիքից, կրթությունից և հասարակության մեջ զբաղեցրած սոցիալական դիրքից: Մեծ լոռեցու լեզվի հմայքն ու անմիջականությունը պայմանավորված են ժողովրդական լեզվամը-տածողությամբ, որը նյութական է դառնում ժողովրդական դարձվածքների, արտա-հայտությունների, պատկերավորումների միջոցով: Լեզվի պարզությունն ու կենդանի շունչը բխում են ներքին ունակությունից, լեզվազգացողությունից և փորձառությու-նից:[2]

Հովհ. Թումանյանի լեզվում կան նաև ժողովրդախոսակցական և բարբառային լեզ-վական միավորներ՝ ինչպես բառեր, այնպես էլ բառաձևեր՝ հնչյունա-

[1] Տե՛ս ***Ա սատրյան Մ***., Ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանություն), Եր.,1983, էջ 48:

[2] Տե՛ս ***Մնակ Գ***., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Եր., 1948, էջ 124-139:

փոխված տար-բերակներ, հոգնակիի կազմության և հոլովաձևերի ոչ գրական դրսևորումներ:

Մեր խնդիրն է թվի և հոլովի քերականական կարգերն ուսումնասիրելիս ուշադրու-թյուն դարձնել նաև այդ ձևերին՝ համեմատելով գրական ձևերի հետ: Մյուս երկու՝ առկայացման և անձի և ոչ անձի քերականական կարգերի արտա-հայտությունն առա-վել պայմանավորված է հեղինակի նախընտրությամբ: Ուս-տի և այս քերականական կարգերի արտահայտությունն ուսումնասիրելիս էլ ու-շադրություն ենք դարձրել գրա-կան հիմնական օրինաչափությունների և Թու-մանյանի նախընտրած ձևերի համա-մասնությանը կամ տարբերությանը:

Գոյականի թվի քերականական կարգը և նրա արտահայտությունը: Գոյա-կանի թվի քերականական կարգի հիմքում ընկած է առարկաների քանակային հարաբերության հատկանիշը:

Յուրաքանչյուր հակադիր եզր (եզակի-հոգնակի) բնորոշվում է ձևաբանա-կան, իմաս-տաբանական և այլ առանձնահատկություններով:

Հայերենում գոյականի եզակի թիվն արտահայտության առանձին ձև չու-նի, կամ քե-րականորեն ձևակերպելով՝ կարող ենք ասել, որ նրա վերջավորութ-յունը 0 /զրո/ է:

Եզակի թվի գործածությունը ընդհանուր հավաքական նշանակությամբ ա-ռավել հատուկ է գիտական լեզվին, թեև լայնորեն տարածված է նաև հրապարա-կախոսա-կան ոճում: Այս նշանակությամբ եզակի թվի գործածությունը հանդի-պում է նաև գե-ղարվեստական գրականության մեջ: Ինչպես, օրինակ՝

Գելը ոչ մի բանից էնպես չի վախենալ, ինչպես կրակից: (Գլ, 319)

Կամ՝

Գիլն էնքան արագավազ է, որ մի գիշերվա մեջ երեք-չորս օրվա ձիու ճամ-փա կը-կտրի: Իսկ **գիլի** սրատեսության վրա էապես մի զրույց կա ժողովրդի մեջ: (Գլ,318)

Գոյականի հոգնակի թիվը կազմվում է լեզվական նորմով սահմանված օ-րինաչա-փությամբ՝ վանկաքանակության սկզբունքով, **-եր**, **-ներ** և առավել սահ-մանափակ գործածություն ունեցող **–ք, -իկ, -այք** հոգնակերտներով:[3]

Օրինաչափորեն կազմվող հոգնակի բազմաթիվ ձևերի կողքին Թումանյա-նի արձա-կում կան ժողովրդախոսակցական կամ բարբառային զանազան ձևեր, որոնց վրա էլ սևեռել ենք մեր ուշադրությունը:

Գրաբարում գործածված **ձեռն** և **ոտն** բառերը ժամանակակից հայերենում արտա-հայտվում են **ձեռք** և **ոտք** ձևերով: Վերջիններս էլ գրական լեզվում հոգ-նակի են կազ-մում **-եր** վերջավորությամբ՝ ձեռքեր, ոտքեր: Սակայն ժողովրդա-կան լեզվում գործա-ծական են **ձեռներ**, **ոտներ** ձևերը: Հենց այս ձևերն ենք տես-նում Հովի. Թումանյանի ստեղծագործության մեջ: Ինչպես՝

-Ապի, **ոտներս** ցավում են…(Գ, 276)

Իսկ նա կամաց-կամաց կողքըհան մոտենում է, ու **ձեռներիս** էլ հրացան չկա:(Ար, 280):

Միավանկ բառերը հոգնակի ստացականության իմաստ արտահայտելիս ստանում են **–ներ** հոգնակերտ մասնիկ: Օրինակ՝

[3] Տե՛ս ***Աղաջանյան Ջ.***, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 170-171:

Սրանք եկել են, ինչքա՛ն են եկել. չորս **կողմներս** կտրել են, հեռու կանգնոտել ժընգ-ժընգում են ու ատամները չխկչխկացնում: **Աչքները** ծմակի մթան մեջ քուքուրթի բո-ցի նման ջուխտ-ջուխտ վառվում են: (Գլ, 320)

-Ք հոգնակերտ մասնիկով կազմությունները (**ացի, եցի** ածանցով վերջավորվող բա-ռեր) ժողովրդախոսակցական երանգ ունեն: Այդ երանգն ավելի է ընդգծվում, երբ բառի մեջ կա հնչյունափոխություն: Օրինակ՝

Տանըցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամ-փա դրին: (Գ, 261)

Գեղացիք ճրագներով, աղմուկով առաջ եկան, մնացին զարմացած: (Գլ, 323)

Վերը նշված բառերը գրական լեզվում ունեն զուգահեռ **–ներ**-ով կազմվող հոգնակի-ներ, որոնք գրական լեզվի համար առավել կանոնավոր են դիտվում և առավել տա-րածված են: Բերենք այդպիսի օրինակ.

Էս ասելով՝ **գյուղացիներից** մեկը մի նամակ հանեց, տվավ Գիքորին ու ասավ: (Գ, 273)

Ոճական ուսումնասիրության տեսանկյունից առավել մեծ հետաքրքրություն են ներ-կայացնում Հովի. Թումանյանի արձակում գործածված այն հոգնակերտ մասնիկները, որոնք բուն ժողովրդախոսակցական կամ բարբառային են և ժողովրդական շունչ ու երանգ են հաղորդում խոսքին: Խոսենք այդպիսի հոգնակերտ մասնիկների մասին: Այսպես, օրինակ, տղա բառը հոգնակի է կազմել **-երք** կամ **-եք** հոգնակերտ վերջա-վորություններով: Օրինակ՝

-Համբոյի հոդը մեր գլխին. տե՛ս, նա իր տղին ո՛րտեղ հասցրեց, մեր **տղերքը** էնտեղ խոզ են արածացնում…(Գ, 273)

-Ա՛ղջի, մի երկու հաստ լեհեք բերեք, մի չորս ու հինգ ուժով **տղեք** էլ էկեք էստեղ: (ՆՔ, 300)

Կին բառի հոգնակին գրական լեզվում գրաբարաձև է՝ **կանայք**: Գրական կազմութ-յունների կողքին հանդիպում է նաև **կին** բառի բարբառային հոգնակիի ձև՝ **-անիք** վերջավորությամբ՝ **կնանիք**.

Տան **կնանիքն** էին միայն դռան առջև հավաքված վաշ ու վիշ անում: (Գլ, 311)

-Երք-ով հոգնակի է կազմել նաև **աղջիկ** բառը՝ **աղջկերք**: Օրինակ՝

Հարսներն ու **աղջկերքը** լուռ, տխուր ներսուդուրս էին անում: (Ահ, 288)

Ա-ով ավարտվող բառերից կազմվել են **–ք** վերջավորությամբ հոգնակիներ, որոնք ամբողջովին բարբառային են: Օրինակ՝

-Իմ հերը ո՞նց ա…մեր **էրեխեքը** ո՞նց են…իմ հերը ընչի՞ չեկավ…(Գ, 273)

Այդ գուժավոր ձայնը ձգվելով տարածվում է լեռներում, ու հանկարծ երկու կողմն էլ **քինեքում** իրարով են անցնում: (Գր, 289)

-Ա՛յ **ուստեք**, բա հարսանքավորնե՞րը որտեղ են: (Գլ, 323)

Պատմվածքներում և հեքիաթներում գործածվել են նաև հոգնակի կազմող բարբառա-յին այլ վերջավորություններ: Օրինակ՝

-ան-ը՝ ձու բառի համար.

Մարիկ ծղրիդը էսքան ձու է ածել մի էն տեսակ հարմար ու ապահով տեղ, որ համ վտանգից ու փորձանքից ազատ լինեն **ձվանը**, համ էլ, երբ ձագերը դուրս գան, հենց տեղն ու տեղը կերակուր լինի նրանց համար: (Ծ, 309)

-նի-ն՝ մոշուտ բառի համար.

Եկա, շիտակ գնացի ներքի **մոշուտնին**, որտեղ գիտեմ արջի տեղն է: (Ա, 281)

-նիք-ը՝ եզ բառի համար.

Մի օր **եզնիքը** սելում լծում է, կացինը առնում գնում անտառը՝ փետի: (ՁՓՀ, 393)

Բարբառային այս բառաձևի կողքին գործածվել է նաև բառի հոգնակիի գրական կազ-մությունը.

Եզներով սելը բերում է մի մեծ ծառի ներքև կանգնեցնում, ինքը անցնում վերի կող-մը, կացինը քաշում՝ թրը՛խկ հա թրը՛խկ: (ՁՓՀ, 393)

Կան նաև գրաբարյան **–ք** վերջավորության մնացուկային ձևեր, որոնք այլևս հոգնակի նշանակություն չեն արտահայտում: Օրինակ՝

Միայն որսկան Փիրումը խելոք մարդ էր. գլխի ա ընկնում, որ էս որսի տերն ա, ձե-ռաց թվանքը զցում ա մի ծառի **ճյուղքի**, անիծելուն պես ծառի **ճյուղքը** տեղն ու տեղը չորանում ա: (Ե, 296)

Քշում ա տանում հասցնում Զորավոր **կաղնըքու** տակը: (Ե, 296)

Հայերենում կան զգալի թվով գոյականներ, որոնց սովորաբար հոգնակի թիվը հա-տուկ չէ: Այսպիսի բառերն անվանվում են անհոգնական բառեր:[4] Այս բառերի քերա-կանական այդ յուրահատկությունը պայմանավորված է սրանց բառային իմաստնե-րով: **–Ություն**-ով կազմված բուն հավաքական գոյականները հոգնակերտ ստանալ չեն կարող, որովհետև եզակի ձևով հոգնակի նշանակութ-յուն են արտահայտում, սա-կայն Թումանյանի պատմվածքներում այսպիսի բա-ռերի հոգնակի կիրառություն ևս կա: Օրինակ՝

Էնպես տեղ էլ կա, որ ամբողջ **հասարակություններով** հավաքվում են, գնում են շըր-ջապատում անտառի որոշ մասերը: (Գլ, 327)

-Անք,-ենք,-ոնք,-ունք ձևույթներով կազմվում են անեզական գոյականներ: Նշված ձևույթները առանց սահմանափակության կարող են դրվել բոլոր հատուկ անձնա-նունների, ինչպես նաև անձերի հարաբերություն նշանակող բազմաթիվ գոյական-ների վրա (Արամենք, Սուրենենք, պապոնք, մերոնք, խնամոնք և այլն): Նշենք, որ հոգ-նակիի կազմության այս ձևերը սովորական հոգնակիներից տար-բերվում են իրենց յուրահատուկ իմաստով: Օրինակ՝ **Սուրենենք** նշանակում է ոչ թե **Սուրեններ**,այլ՝ **Սուրենը և յուրայինները**: Հոգնակիի կազմության այս ձևերը հատուկ են առավելա-պես ժողովրդախոսակցական լեզվին: Ընդ որում, հարկ է նշել, որ հատուկ անունից կազմվում է հատուկ անուն անեզական գոյական (-Վարդան-Վարդանանք), հասարակ անունից՝ հասարակ անուն (խնամի-խնա-մոնք): Բերենք համապատասխան օրինակներ.

Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի հոգի են ազատվել քարաբաղնիսով՝ **Մատ-նանց** Դանելը, **Մաթոսանց** Մինասը, **Ծատուրանց** Ստեփանը, **Մաշկավո-րանց** Միկոն, մինչև որ ջուրն եփ էկավ, քարերն էլ կարմրեցին: (ՆՔ, 300)

Շատ էի սիրում իմ **տատոնց** տունը ու միշտ այնտեղ էի լինում: (Ահ, 287)

Գոյականի հոլովի քերականական կարգը և նրա զուգաձևությունները: Գո-յականի կարևորագույն քերականական առանձնահատկություններից մեկը նրա

[4] Տե՛ս ***Աստղյան Մ.***, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Եր., 1970, էջ 134-136:

թեքման հատկանիշն է, որն արտահայտվում է հոլովման միջոցով: Գոյականի յուրաքանչյուր թեք ձև կազմում է մի առանձին հոլով:

Ըստ այն բանի, թե հարացուցային մակարդակում բառը տվյալ լեզվում ձևաիմաստա-յին քանի տեսակի փոփոխության է ենթարկվում, տվյալ լեզվում այդքան էլ հոլով կա: Յուրաքանչյուր հոլով որոշվում է հոլովական ձևի և իմաստի միասնությամբ:[5] Յուրա-քանչյուր հոլով ունի իր ձևային և իմաստային հատկանիշները: Բայց հայտնի է նաև, որ նույն հոլովը կարող է ունենալ տարբեր ձևեր և տարբեր իմաստներ: Այսպես, օրի-նակ, սեռական հոլովը կարող է ունենալ **ի, ու, ան, վա, ոջ, ց** արտաքին թեքման ձևերը, բացառականը՝ **ից** և **ուց** ձևերը և այլն: Մյուս կողմից՝ յուրաքանչյուր հոլով արտա-հայտում է ոչ թե մեկ, այլ մի քանի, երբեմն նաև շատ շարահյուսական հարաբերու-թյուններ: Առանձին դեպքերում դժվար է լինում որոշել, թե այդ հարաբերություններից որն է գլխավորը: Մենք առանձնաբար չենք անդրադառնում հայերենի յոթ հոլովներից յուրաքանչյուրին իր կազմությամբ և շարահյուսական կիրառություններով, այլ ուշա-դրություն ենք դարձնում հոլովական համակարգում եղած զուգաձևություններին:

Ժամանակակից հայերենը քերականական տարբեր իմաստներ արտահայտելու հա-մար նույնանիշ ձևույթներ է գործածում: Այս ձևույթների առկայությունը պայմանա-վորված է նրանց զուգորդելիության տարբեր ոլորտներով: Սրանք կոչվում են լրացու-ցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևույթներ: Այսպիսի ձևույթներ են գոր-ծում հոլովական համակարգում՝ հատկապես սեռական հոլովի իմաստն արտահայ-տելու համար: Իսկ սեռականն այն հոլովն է, որի կազմությունը հիմք ընդունելով՝ դասակարգում և միմյանցից սահմանազատում են ժամանակակից հայերենի հոլո-վումները: Սեռականի նշանակությունն արտահայտող նույնանիշ ձևույթներն են՝ **ի, ու, ան, վա, ոջ, ց, ա, ո, յան**: Սրանցից յուրաքանչյուրն ունի գործառական և զուգորդե-լիության իր ոլորտը, սակայն այդ նույն ձևույթները հաճախ զուգորդվում են միևնույն բառին՝ ստեղծելով բառերի քերականական զուգահեռ ձևեր, որոնց մի մասը գրական նորմի սահմաններում է (օրի-օրվա, թոռի-թոռան…), իսկ մի մասն էլ շեղվում է գրա-կան լեզվի նորմից և առավելապես հանդիպում է ժողովրդախոսակցական լեզվում:

Հոլովական համակարգում զուգահեռ ձևերը և լեզվական նորմից կատարված շեղում-ները հիմնականում հետևանք են խոսակցական լեզվի ազդեցության, ինչպես նաև տարբեր հոլովումների փոխադարձ ներթափանցման, նմանակման, մասամբ էլ՝ բար-բառների անմիջական ազդեցության:[6] Հոլովական օրինաչափ ձևերից շեղումներ կա-տարվում են նաև այն պատճառով, որ տարբեր հոլովումների պատկանող բառերի մի-ջև որոշակի հատկանշային տարբերություններ չեն առանձնացվում. այնպիսի տար-բերություններ, որոնցով հնարավոր լինի որոշել տվյալ բառի հոլովումը: Այսպես, օրի-նակ՝ թեև ժամանակի անուն գոյականները պատկանում են **վա** հոլովման, սակայն այս հոլովիչով չեն հոլովվում ժամանականիշ այնպիսի գոյականներ, ինչպիսիք են՝ վայրկյան, րոպե, սեպտեմբեր, կիրակի, լուսադեմ, իրիկնամուտ և այլն: Նշված գոյա-կանները պատկանում են **ի** հոլովման: Կամ՝ **-ի** վերջնահնչյուն ունեցող երկու և ավե-լի վանկ ունեցող բառե-

[5] Տե՛ս ***Բադիկյան Խ.***, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր., 2010, էջ 34:

[6] Տե՛ս ***Աղաջանյան Ջ.***, նշվ. աշխ., էջ 144:

րը պատկանում են **ու** հոլովման: Սակայն այնպիսի բառեր, ինչ-պիսիք են՝ Սոֆի, կեպի, չեն հոլովվում նշված հոլովիչով:

Միևնույն բառի համար հոլովական այս կամ այն տարբեր ձևերն առաջ են գալիս նաև հոլովումների փոխանցման հետևանքով: Այս կարգի տարբեր հոլովաձևերը համար-վում են միևնույն հոլովաձևի տարբերակները: Ըստ այսմ՝ **ամ-սի** և **ամսվա** տարբե-րակները սեռականի եզակի թվի ազատ տարբերակներ են: Մյուս կողմից, օրինակ՝ **ընկեր** բառի սեռականն է **ընկերոջ** և **ընկերի**, **անկողին** բառի սեռականն է **անկողնու** և **անկողնի** և այլն: Այս կարգի զուգահեռ ձևերը չի կարելի նույնացնել ազատ տարբե-րակների հետ, որովհետև սրանք ստացվում են ոչ թե միևնույն ձևույթի կամ ենթաձե-վույթի տարբեր տեսակների, այլ տարբեր ենթաձևույթների գործառության հետևան-քով: Այստեղ մեկ ենթաձևույթի ոլորտին պատկանող բառն անցնում է մի այլ ենթաձե-վույթի ոլորտ: Որպես օրինակ բերված **ընկեր** բառը պատկանում է **ոջ** հոլովման, բայց **ընկերի** ձևով անցնում է սեռականի **ի** ենթաձևույթի ոլորտը: Այսպիսի զուգահեռ ձևե-րը ազատ տարբե-րակներից զանազանելու համար լեզվաբանական գրականության մեջ դրանք անվանվում են **հոլովական զուգաձևեր**: Այս զուգաձևերը լեզվի մեջ հան-դես են գալիս տարբեր պատճառներով: Այսպես՝ **տարի** բառը ենթարկվում է **ու** հոլով-ման՝ ըստ վերջնահնչյունի, իսկ ըստ իմաստի, որպես ժամանակ ցույց տվող բառ, են-թարկվում է **վա** հոլովման: Այստեղ զուգաձևերի առկայությունը պայմանա-վորված է ձևաբանական համակարգին հատուկ երևույթներով (հոլովում ըստ ձևի և հոլովում ըստ իմաստի): **Ճաշ** բառն իր գլխավոր իմաստով գործածվելիս ենթարկվում է **ի** հոլով-ման, իսկ «ճաշի ժամանակը» իմաստով՝ **վա** հոլովման: Այս բառերի հոլովական զու-գաձևությունը պայմանավորված է նրանց տարբեր իմաստներով: Կան նաև զուգա-ձևությունների առաջացման այլ պատճառներ՝ գրական լեզվի կանոնական և ոչ կա-նոնական, ժողովրդական-խոսակցական կամ պարզապես բարբառային ձևերի գոր-ծածությունը (քրոջ-քվոր, տեգրոջ-տե-գոր), հին, ավանդաբար պահպանված, լեզվի արդի հոլովական ձևերի համա-կարգին չպատկանող ձևերի և արդի համակարգին համապատասխանող ձևերի առկայությունը (կայսեր-կայսրի,հրո-հրի, ծննդյան-ծնունդի) և այլն: Պետք է նշել, որ լեզվի ներքին զարգացման ընդհանուր միտումը տա-նում է դեպի հոլովաձևե-րի միօրինականացում: Այս պարագայում զուգաձևերը լեզվի տարբեր ոճերին հատուկ ձևեր են, ուստի և դրանք առավելապես ոճական զուգաձևեր են:[7]

Այսպիսով, մեր լեզվում գոյականների մեծ մասը պատկանում է **ի** հոլով-ման: Սա ընդ-հանրական հոլովում է, որով հոլովվող բառերը ձևաիմաստային տարբերակման չեն ենթարկվում: Բերենք օրինակներ.

Դեռ արտասուքը չէր ցամաքել նրա **<u>երեսին,</u>** դեռ այրվում էին **<u>խազեինի ապտակ-ների</u>** տեղերը, դեռ նոր էր լռել աղջիկ **<u>պարոնի</u>** ձենը, շվշվացնելով ներս մտավ Վա-սոն՝ **<u>բազազի</u>** աշակերտը: (Գ, 270)

Ի հոլովմամբ են հոլովվում նաև այլ հոլովումների պատկանող բառեր, ո-րովհետև այս հոլովումը գերիշխող է դարձել հոլովական հարացույցում և այն միօրինականացնելու միտում ունի: Այսպես, օրինակ՝ **ընկեր** բառը սովորաբար հոլովվում է **ոջ** հոլովմամբ, սակայն Հովհ. Թումանյանի արձակում այն հոլովված է միայն **ի** հոլովիչով.

[7] Տե՛ս ***Աղայան Է.***, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 277-278:

-Ա՛յ տղա, իսկի ճանաչեցի ոչ, էս ի՛նչ բան էր,-զարմացած բացականչեց գյուղացինե-րից մինն ու դարձավ **ընկերին**: (Գ, 273)

Քանի ժամանակ է՝ ես էլ մի կարգին **ընկերի** եմ ման գալի: (Ճ, 344)

Այդպես նաև **մարդ** բառը, որը պատկանում է **ու** հոլովման, միայն երկու գործածու-թյան մեջ է հոլովվել ըստ օրինաչափության. մյուս գործածություննե-րում հոլովվել է **ի** հոլովիչով, որն այս դեպքում ժողովրդախոսակցական բառաձև է ձևավորել: Օրինակ՝

-Սովը **մարդին** էլ կդարձնի սարսափելի, ու՞ր մնաց էն անտառի գիլին,-խոսքը վեր-ջացրեց քեռի Անդրիասը: (Գլ, 329)

Որոշ աշխարհագրական տեղանուններ, հիմնականում ենթարկվելով **ի** հո-լովման, ա-ռանձին կիրառություններում պահպանում են գրաբարյան **ա** վերջա-վորությամբ ձևը, որով և զուգաձևություն է առաջանում՝ Սևանա// Սևանի, Վա-նի// Վանա, Սասունի// Սասնա և այլն: Սրանց նմանությամբ **ա** արտաքին հոլով-ման են ենթարկվում նաև Լո-ռի, Շուշի, Գյումրի տեղանունները, որոնք ըստ ձևի պետք է պատկանեն **ու** հոլովման: Սրա հետևանքով ստացվում են զուգահեռ տարբերակներ՝ Լոռվա, Շուշվա, Գյումրվա (սրանցում **վ**-ն **ի** վերջնահնչյունի հնչյունափոխված ձևն է): Ընդհանրապես պետք է ա-սել, որ **ա** ձևույթով սեռակա-նի ձևը դուրս է մղվել այսօրվա գրական լեզվի նորմից. հանդիպածները հնաբա-նություններ են կամ պահպանվել են իբրև բաղադրյալ աշ-խարհագրական ա-նունների քարացած ձևեր: Թումանյանի արձակում հանդիպում ենք այսպիսի հնացած ձևերի.

Մոտկորա ծմակը լիքը փետ: (Գլ, 320)

Դե գիտեք էլի, որ **Շորագյալա** հացը համ լավն է լինում, համ առատ, իսկ մեզանում՝ սարերում, սակավ է լինում, եղածն էլ շատ անգամ կարկուտը տա-նում է: (Գլ, 322)

Երբեմն էլ հնաբան կիրառությունները գրաբարյան ընդգծված շունչ ունեն.

Գելը կապեմ երկու բըթով…

Նահատակաց կարմիր քարով: (Գլ, 311)

Տարի բառը՝ որպես **ի**-ով վերջացող բառ, պատկանում է **ու** հոլովման.

Երկու **տարուց** հետո էստեղից էլ հերս ինձ տարավ մեծ քաղաք, ավելի մեծ ուսում-նարան: (ԻՀՆ, 332)

Որպես ժամանակ նշանակող բառ՝ այս բառը զուգահեռաբար հոլովվում է նաև **վա** հոլովմամբ.

Նեսոն ու մյուս դուրսը մնացած ընկերներս էլ **տարվա** վերջը էլ չէին գալիս ուսում-նարանի պատի տակին նստոտում ու սպասում ինձ: (ԻՀՆ, 331)

Ժողովրդախոսակցական լեզվում կամ բարբառներում **ա** հնչյունով վերջա-ցող որոշ բառեր, որոնք գրական լեզվում պատկանում են **ի** հոլովման, հոլովվում են **ու** հոլովի-չով՝ առաջացնելով զուգաձևություն: Այսպիսի ձևերը ձևաբանական նորմից շեղում-ներ են և ընդունելի չեն գրական լեզվում: Սակայն սրանք բավա-կան մեծ կիրառու-թյուն ունեն Թումանյանի արձակում: Բերենք օրինակներ.

Լոռու գյուղերից մեկում մի իրիկնադեմ Ուհանես **քիձու** դռան գերանների վրա նըս-տոտած զրույց էինք անում: (ԵՇ, 277)

Ղանթափու ծաղիկ բերին, չայ շինեցին, խմացրին, պրաշոկ բերին, ջուր ա-րին, տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ: (ՆՔ, 300)

Ըստ ձևաբանական կանոնի՝ **ան** հոլովման պատկանող գրաբարյան **ն** վերջնահնչյուն ունեցող միավանկ բառերից մի քանիսը զուգահեռաբար կարող են հանդես գալ **ի** հո-լովմամբ: Գառան // գառի, լեռան // լեռի, բեռան // բեռի, թռռան // թռռի, ծոռան // ծոռի, եզան // եզի զուգաձևություններում նորմով սահմանվածը առաջիններն են, երկրորդ-ները բնորոշ են խոսակցական լեզվին, գրականի խոսակցական տարբերակում որ-պես շեղում չեն դիտվում: Դեռ ավելին. պետք է նշել, որ ժամանակակից գրական հա-յերենում արդեն գրական չեն **շուրթ** բառի **շրթան**, **ծունկ** բառի **ծնկան** ձևերը:

Հովհ. Թումանյանի արձակում այս բառերը հոլովվել են բացառապես **ան** հոլովմամբ: Բերենք օրինակներ.

-Ի՛նչ թզուկ, **ծնկան** ծերին աքլորը ծուղրուղու կանչի, ձենը ականջը չի հասնիլ: (ԽՁ, 363)

Մին էլ տեսնում է աշխարհքը իր **բռան** մեջ: (ՔՆ, 389)

Այս միավանկ բառերի նմանությամբ ժողովրդախոսակցական լեզվում **ան** հոլովմամբ են հոլովվում մի քանի այլ միավանկ բառեր, որոնք նշված շարքին չեն պատկանում: Օրինակ՝

Գնացի ձորիցը մի շալակ **թթան** տերև բերի, կապեցի մենծ տան ամբարի ոտիցն ու ճիճուն վրեն ածի: (ԳԲՇ, 285)

Մտիկ տամ, որ աջ կողմս ՝ հեռվում, **մթան** մեջ, ջուխտ-ջուխտ վառված ճրագների մի բազմություն է շարժվում: (Գլ, 315)

Խփան ճեղքիցը նայեցի, տեսա պղնձի միջին կաթը, կաթնի երեսին էլ մի սպիտակ մազ: (Գլ, 318)

Այս հոլովման են պատկանում **գարուն, ամառ, աշուն, ձմեռ** բառերը : Օրինակ՝

Հասնում են **աշնան** ցրտերը: (Ծ, 309)

Հարուստը դարձյալ ժամանակը որոշում է մինչև **գարնան** կկվի ձեն ածելը: (ՏԾ, 355)

Սրանք, որպես ժամանակ ցույց տվող բառեր, հոլովվում են նաև **վա** հոլովմամբ: Ինչպես՝

-Չէ՛, ասում է, ո՛վ է լսել, որ տարու էս եղանակին՝ **ձմեռվա** կիսին, կկուն ձեն ածի, որ սա ձեն է ածում: (ՏԾ, 357)

Ամառվա շոգ օր՝ գազազած ճանճեր: (ՔՆ, 381)

Այս ձևերը կանոնական համազոր զուգաձևություններ են, որոնք գործառում են գրա-կան լեզվի նորմի շրջանակներում: Մինչդեռ **աշուն** և **գարուն** բառերը **վա** հոլովիչով հոլովվում են **-ք** վերջածանց ստանալուց հետո՝ առաջացնելով ժողովրդախոսակցա-կան երանգ ունեցող զուգաձևություններ, որոնք հնացած են համարվում և գործած-վում են լեզվի բարբառային տարբերակներում: Օրինակ՝

Մտնում է իր դռշակի ետևն ու սկսում է դողալ, ոնց որ **աշունքվա** տերևը կդողա: (ՔՆ, 385)

Նշենք, որ **գարունք** բառը հոլովվել է նաև **ի** հոլովիչով.

Հե՛յ պարոններ, տեսա կանանչ **գարունքին**

Էս սարերում լաց էր լինում մի պախրա: (Ե, 297)

Իսկ **ձմեռ** բառը հոլովվել է նաև **վան** հոլովմամբ.

Մեզանում գելերը **ձմեռվան** գիշերը գալիս են գեղի մեջը ման գալիս: (Գլ, 314)

Ընդհանրապես ժողովրդական լեզվի բարբառային տարբերակներում և արևմտյան գրական լեզվում **վա** հոլովումը **վան** ձևն ունի, որն արտահայտված ենք տեսնում Թումանյանի ստեղծագործություններում.

-Էս կաթնատու կովը ես քեզ կտամ երեք **տաքվան** ժամանակով: (ԽՉ, 361)

Պետք է նշել,որ **վա** հոլովումը չի ընդգրկում ժամանակ ցույց տվող բոլոր բառերը: Այս-պիսի որոշ բառեր ենթարկվում են **ի** հոլովման, ինչպես՝ վայրկյան-վայրկյանի, րոպե-րոպեի, մարտ-մարտի, հունիս-հունիսի և այլն: Նշենք նաև, որ **ի** հոլովիչով կարող են հոլովվել **վա** հոլովման պատկանող մի շարք բառեր՝ կազմելով զուգաձևություններ, որոնք գործառում են գրական նորմի սահմաններում՝ ժամվա // ժամի, ժամանակվա // ժամանակի, օրվա // օրի, կեսօրվա // կեսօրի, գիշերվա // գիշերի, շաբաթվա // շաբա-թի և այլն: Բացի այդ, **վա** հոլովումն ունի գործածության ոլորտի որոշակի սահմանա-փակումներ. շարահյուսական կիրառություններ կան, որտեղ նշված բառերը թեքվում են միայն **ի** հոլովիչով.

Մին էլ **կեսգիշերին** դուռը դղրդում է: (ԽՉ, 362)

Խորն **աշունքին** Լոռու սարերով անցկենալիս մի գյուղում մութը վրա հասավ: (Գլ, 310)

Ոջ հոլովման պատկանող բառերից միայն երկու բառ են հանդես եկել զուգաձևութ-յուններով՝ **ընկեր** և **կին**: **Ընկեր** բառի հոլովական զուգաձևության վերաբերյալ խոսել ենք **ի** հոլովումը ներկայացնելիս: Իսկ **կին** բառը Թումանյանի արձակում հիմնակա-նում հանդես է եկել **կնկա** ձևով: Այս ձևը բարբառային է, սրա ուղիղ ձևը ոչ թե **կին**-ն է, այլ **կնիկ**-ը: Օրինակ՝

Անցվորականը նկատում է, որ էս **կնկա** ծալը պակաս է, ասում է՝ հա՛ ասեմ, տես-նեմ՝ ինչ է դուրս գալի: (Բ, 365)

Նշված բառաձևում երբեմն հանդիպում է հնչյունափոխություն՝ **կնգա**.

Էս վախկոտ Նազարը մի գիշեր **կնգա** հետ շեմքն է դուրս գալի: (ՔՆ, 380)

Կին բառը այս ձևով է հոլովվել նաև բարդության կազմում.

-Բաս ես որ հիմի գնամ՝ **քեռեկնկանդ** ի՞նչ ասեմ: (ՔԽ, 304)

Հոգնակի հոլովումը հիմնականում օրինաչափ գրական դրսևորում ունի: Ժողովրդա-խոսակցական լեզվում **ց**-ով են հոլովվում հոգնակին **ք**-ով կազմող մի շարք բառեր, և զուգաձևություններ են առաջանում գրական-ժողովրդախոսակցական հակադրու-թյամբ՝ գյուղացիների // գյուղացոց, աղջիկների // աղջկերանց, տղաների // տղերանց, երեխաների // երեխոց. երկրորդ տարբերակները խորթ ու մերժելի են գրական լեզվի համար: Օրինակ՝

Պարզ ճանաչեցի ախպորս ու մեր գեղացի **տղերանց** ամեն մեկի ձենը: (Գլ, 317)

Տրական հոլովի կիրառությունները ընդհանուր առմամբ գրական են և օրինաչափ: Միայն նշենք, որ Թումանյանի արձակում **սեռական հոլով + տակ** կապային կառույցում, որը տեղի պարագայի շարահյուսական պաշտոն է զբաղեցնում, կապը գործածվել է տրական հոլովով: Օրինակ՝

-Ա՛խ, նանի՛ ջան, ի՛նչ լավ էր սիրտդ իմացել,- հառաչում էր Գիքորը **տեղի տակին** ու հաց ու պանիրը ուտում՝ ականջը սրած, թե խազեինը հո չի գալի: (Գ, 272)

Հաջորդ օրինակում տրական հոլովով դրված տեղի պարագան ժողովրդա-խոսակցա-կան կիրառություն է.

Խանութի դռանը կանգնած ձեն էր տալի Գիքորը, մուշտարի էր կանչում ու բարձր ձենով գովում իրենց ապրանքը: (Գ, 272)

Տրական հոլովի ձևակազմական զուգաձևություն է **երեխաներին** բառաձևի ժողովըր-դախոսակցական հետևյալ տարբերակը.

Մենք խոսում ենք՝ մեր **էրեխանցն** էլ տեղ անես՝ բերենք, դու էդ ի՞նչ ես ասում: (Գ, 274)

Նույնպիսի զուգաձևություն է նաև **կտուրին** բառաձևի բարբառային հետևյալ տարբե-րակը.

Միկիչն ու Զանին հրեն **կտերը** կանգնած քեզ ճամփա են պահում: (Գ, 276)

Հայտնի է, որ վերաբերության խնդիրը կազմվում է բացառական հոլովով կամ կապա-յին կառույցով (սեռական հոլով + **մասին** կամ **վերաբերյալ** կապեր): Թումանյանի ար-ձակում այս խնդիրը գրական ձևերին զուգահեռ ձևավորվել է նաև կապային կառույ-ցով, սակայն ոչ թե գրական լեզվին բնորոշ վերը նշված կապերով, այլ **վրա** կապով, որն այս նշանակությամբ բարբառային է: Օրինակ՝

Հետո սկսեցին խոսել **կռվի վրա**, հացի **թանկության վրա**, բայց Գիքորը շատ էր հոգ-նած, քունը տարավ: (Գ, 262)

Առկայացման քերականական կարգը և նրա զուգաձևությունները: Առկա-յացման քերականական կարգն իր արտահայտությունն է ստանում **ն, ը, ս, դ** հո-դերի միջոցով, որոնցից **ս**-ն և **դ**-ն որոշյալությունից բացի ստացականության և դիմորոշության են-թակարգերն են արտահայտում: Այսպիսով, «մաքուր» որոշյա-լություն են արտահայ-տում **ն** և **ը** հոդերը, որոնք դիրքային կիրառության որոշա-կի առանձնահատկություն ունեն: Սովորաբար ձայնավորից հետո դրվում է **ն**-ն, իսկ բաղաձայնից հետո՝ **ը**-ն: Օրինակ՝

Դեղին սովորեցնում էր **Գիքորին**, թե ինչ պետք է անի, ինչպես **սամովարը** գցի, **ռտ-նամանները** սրբի, **չոտկը** բռնի, **ամանները** լվանա…(Գ, 265)

Քերականական առումով մասնիկները հավասարազոր են, սակայն **ն** հոդի գոր-ծածության ոլորտն ավելի մեծ է, քանի որ այն **ը**-ի փոխարեն կարող է դրվել բաղա-ձայնահանգ բառերի վրա, երբ հաջարդող բառը սկսվում է ձայնավորով:

Օրինակ՝

Այնտեղ **սարերն** իրար են հանդիպել, իրենց արանքում մի մեծ ձոր են ստեղծել, որ կոչվում է Մութը Ձոր: (Գ, 289)

Երբեմն ձայնավորով սկսվող բառերից առաջ ոչ թե **ն**, այլ **ը** է գործածվում՝ պայմա-նավորված արտասանական դադարով կամ տրամաբանական շեշտով: Օրինակ՝

-Ա՛յ տղա, իսկի ճանաչեցի ոչ, էս ի՛նչ բան էր,- զարմացած բացականչեց գյուղացինե-րից **մինը** ու դարձավ ընկերին:(Գ, 273)

Իմացել եմ, որ **արջը** ականջ է դնում, տեսնի շունչ կա, թե չէ: (Ար, 282)

Ը-ի դիրքում **ն**-ի գործածությանն ենք հանդիպում նաև ձայնավորով սկսվող **էլ, ու** համադասական շաղկապներից և էական բայից առաջ: Օրինակ՝

Հացն էլ են փողով առնում, **եղն** էլ, **կաթն** էլ, **մածունն** էլ, **փետն** էլ, **ջուրն** էլ…(Գ, 264)

Գիշերներն էդ կիրճով եղջերուներն իջնում են **ձորերն** ու հովիտները, ա-րածում են, արշալույսից առաջ ջուր են խմում ու էլ ետ իրենց «**պնդոցն**» են տալի: (Ե,293)

Ժամանակակից հայերենի վաղ շրջանում հոդառու են եղել բոլոր հոլովները, բացա-ռությամբ սեռականի: Հատկապես բացառական, գործիական և ներգոյական հոլովա-ձևերը զուգահեռաբար հանդես են եկել ինչպես հոդով, այնպես էլ անհոդ: Այս իրողու-թյունը գրական լեզվի համար հիշատակում են ինչպես Ս. Պալասանյանցը, այնպես էլ Մ. Աբեղյանը: Նշենք, որ ժողովրդական խոսքում մինչ օրս էլ շատ սովորական և տա-րածված են բացառական, գործիական և ներ-գոյական հոլովներով գոյականների ո-րոշյալ ձևերը: Գեղարվեստական խոսքում հոդավորման այս իրողությունը խոսքը դարձնում է ավելի հասարակ ու պարզ:[8]

Նշված հոլովաձևերի ինչպես հոդով, այնպես էլ անհոդ զուգահեռ գործա-ծությունների հաճախ ենք հանդիպում Հ. Թումանյանի արձակում: Բերենք հոդով գործածության օ-րինակներ.

Սոված ժամանակներս էլ վազում էինք հացի **տաշտիցը** մի կտոր հաց առ-նում, պան-րի **կարասիցը** մի կտոր պանիր ու էլ ետ շտապում իրար մոտ: (ԻՀՆ,330)

Մինչև գլուխս կախ ես **թակարդովն** էի էղած, մին էլ տեսնեմ վեր կացավ կաղին տալով փախավ: (Գլ,318)

Ասի, քանի ուշքը **քոթուկումն** է, վեր կենամ կորչեմ: Փորսող տալով փետե-րի **տակիցը** դուրս եկա, փախա մտա մոտիկ մամխուտը, տապ արի: (Ար,283)

Բերենք նաև այնպիսի օրինակներ, որոնցում նշված հոլովաձևերը ներկա-յացված են անհոդ կիրառությամբ՝ համապատասխան արդի լեզվական նորմին.

Խեղճ Հասանի **ձեռքից** էլ բիզը խլում են, վզակոթին տալով դուրս անում իր նեղլիկ **խանութից** ու դուռը փակում: (ՔԱՔՉՊ,372)

Սրան տանում են իր **դրոշակով** սուփրի վերի ծերին բազմեցնում: (ՔՆ,383)

Ապրում է տաք **անկյուններում**, սովորաբար բուխարու կողքին կամ վա-ռարանի ետևը, մի որևէ փոքրիկ **ճեղքում**: (Ծ,305)

Ինչպես հայտնի է, արդի լեզվում հոդառու չէ նաև **մարդ** բառի հոգնակին, սակայն ժամանակակից հայերենի վաղ շրջանում, ինչպես նաև ժողովրդախո-սակցական և բարբառային լեզվում այն կարող է հոդառու լինել: Օրինակ՝

Նրա **մարդիկը** այդ սարերի ամենահռչակավոր գողերն էին: (Գր,290)

Այս կիրառությանը զուգահեռ հանդիպում են նաև անհոդ օրինաչափ կի-րառու-թյուններ.

Ինչպես բոլոր արտիստ **մարդիկ**, ծղրիդն էլ ատում է ամբոխը և սիրում է մենակու-թյունը: (Ծ,308)

Անձի և ոչ անձի (իրի) քերականական կարգը և նրա զուգաձևությունները: Ժամանա-կակից արևելահայ լեզուն գոյականի համար տարբերակում է մի քե-րականական կարգ ևս, որը մեր լեզվի նախորդ շրջաններում չի եղել, չկա նաև արևմտահայ լեզվում: Այդ քերականական կարգն ընդունված է անվանել անձի և իրի, անձի և ոչ անձի, շըն-չավորի և անշունչի: Քերականական կարգի առաջա-ցումը պայմանավորված է անձի անուն, իրի անուն և կենդանու անուն գոյական-ների ուղիղ խնդրի հոլովական ձևա-վորմամբ: Նշենք, որ աշխարհաբարի լուսա-վորչական շրջանում առատորեն տարած-ված էին անձի անունների՝ հայցական-նով կիրառությունները, մինչդեռ մեր օրերում պատկերը լիովին փոխված է, և անձի որոշյալ անունները ուղիղ խնդրի պաշտոնում միայն տրականով են

[8] Տե՛ս ***Պողոսյան Պ.***, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, I, Եր., 1990, էջ 231:

դրվում: Արդի լեզվում բավական մեծ հաճախականություն են ստացել նաև կենդանու որոշյալ անունների կիրառությունները տրական հոլովով: Այս իրողությունը չի կարելի բացատրել միայն անձնական վերաբերմունքով, այսին-քըն՝ խոսքի պահին անձնավորման երևույթով: Գուցե ճիշտ է Հ. Պետրոսյանի նկատա-ռումը, ըստ որի լեզուն ձգտում է տարբերակել շնչավորն ու անշունչը:[9] Ինչևէ, քերականական անկայուն վիճակը զուգաձևությունների աշխուժացման պատճառ է դառ-նում:

Հովի. Թումանյանի արձակում իրի անուն գոյականները, անկախ այն բանից, թե որո-շյալ կամ անորոշ առումով են գործածված, ուղիղ խնդիրը ձևավորում են հայցական հոլովով: Օրինակ՝

Դեղին սովորեցնում էր Գիքորին, թե ինչ պետք է անի, ինչպես սամովարը գցի, **ոտնամանները** սրբի, **չոտկը** բռնի, **ամանները** լվանա…(Գ,265)

Երբեմն գեղարվեստական գրականության մեջ, անձնավորմամբ պայմանավորված, իրի անուն գոյականները կարող են ուղիղ խնդիր ձևավորել տրական հոլովով: Օրինակ՝

Բայց զգույշ կաց Սպիտակ դևից, նա եղեմական **ծաղկին** հսկում է: (ԵՕ,377)

Անձի անուն գոյականներն անորոշ առումով դրվելիս ուղիղ խնդիրը կարող են ձևավորել հայցական հոլովով.

Նա դես-դեն ընկավ, նրանց կողմերից **մարդ** գտավ, ապսպրեց, որ Համբոն գա, իսկ Գիքորին տարավ քաղաքային հիվանդանոցը: (Գ,275)

Որոշյալ առումով դրվելիս անձի անունները ուղիղ խնդիրը ձևավորում են տրական հոլովով.

Մութը Ջորը բաժանում է **հայերին** ու **թուրքերին** իրարից: (Ար,283)

Ուզել ենք գտնել, տեսնել մեր փոքրիկ ու նշանավոր **երգչին** ու չենք կարողացել: (Ծ,306)

Երբեմն ժողովրդախոսակցական լեզվում անձի անուն գոյականները կարող են ուղիղ խնդրի պաշտոնում դրվել հայցական հոլովով: Օրինակ՝

Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց **աղջիկն ու տղեն** իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց: (ՈԿ,353)

Արևմտահայ գրական լեզվում, անկախ գոյականի առումից, անձի անունները ուղիղ խնդիրը ձևավորում են հայցական հոլովով: Այս պարագայում ենթական և խնդիրը հստակ շարադասություն ունեն. ենթական միշտ նախադաս է: Սակայն խոսակցական լեզվում, ենթակայի բացակայության պարագայում, ուղիղ խնդիրը կարող է հանդես գալ նախադաս: Բերենք համապատասխան օրինակ Թումանյանի արձակից.

Տղաներս կոտորեցին, **հարսներս** տարան, թոռներս կորան, տունս թալանեցին, վառեցին, մնացի այսպես…(ԵՀ,286)

Կենդանու անուն գոյականները որոշյալ առումով գործածվելիս կարող են դրվել հայցական հոլովով.

Ես չէինք կարող **հավերը** կոտորել կամ **ձագն** սպանիլ: (ԳԲՇ,285)

Դու մի ասիլ՝ գիշերը գայլերը **մոզին** կերել են: (ԽՈՒՀ,358)

[9] Տե՛ս ***Պետրոսյան Հ.***, Գոյականի առումները հայերենում, Եր., 1960, էջ 157:

Որոշյալ առմամբ գործածվելիս կենդանու անունները կարող են ուղիղ խնդիր ձևավո-րել նաև տրական հոլովով: Օրինակ՝

Էկա ասի՝ Աբգար, արջի բուն եմ գտել, արի գնանք **<u>արջին</u>** բնիցը հանենք: (ՆՔ,301)

Անորոշ առումով գործածվելիս կենդանու անուն գոյականներն առավել հաճախ դրվում են հայցական հոլովով.

Գողերը միշտ մի կամ երկու հոգով վազում-ընկնում են բինեն, **<u>ոչխար, ձի, տավար</u>** խրտնացնում, խառնում են իրար: (Գր,291)

Երբեմն ժողովրդախոսակցական լեզվում կամ բարբառներում անորոշ առումով գոր-ծածված գոյականը կարող է **ը** կամ **ն** հոդ ստանալ: Օրինակ՝

Ծիրան անունով մի **<u>եզն</u>** ունեինք: (Գլ,315)

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն **<u>ձուկն</u>** է բռնում, տալիս իր շալակտարին, որ պահի, ինքն էլ ետ ջուրն է մտնում: (ԽՋ,360)

Այսպիսով, ուսումնասիրելով գոյականի քերականական կարգերի զու-գաձևություն-ները Հովի. Թումանյանի արձակում՝ եկանք հետևյալ եզրակացութ-յան.

ա. Թվի քերականական կարգը Թումանյանի պատմվածքներում և հե-քիաթներում ար-տահայտվել է բազմազանությամբ՝ գրականի, ժողովրդախո-սակցականի և բարբառա-յինի միահյուսումով և համադրումով: Գրական լեզվի կանոնավոր, օրինաչափ ձևերի հետ մեկտեղ գործածվել են ժողովրդական լեզ-վում տարածում ունեցող հոգնակիա-կերտ քերականական մասնիկներ, որոնք խոսքում բազմաձևություն են ստեղծել, ժո-ղովրդական խոսքի թարմությունն ու շունչն են բերել, գյուղացի մարդկանց կենդանի զրույցի գրավչությունն են հաղորդել ասելիքին: Այդ հոգնակիակերտ մասնիկներից են՝ ք, եք, երք, անիք, իք, ան, նի:

բ. Հոլովի քերականական կարգը ևս հանդես է եկել զուգաձևությունների իր մեծ հնա-րավորությամբ: Փոխարինող տարբերակների, հոլովական անցումների հնարավորու-թյունները հատկապես ակնառու են սեռական հոլովում, որտեղ կան բազմաթիվ զու-գաձևություններ ինչպես գրական լեզվի շրջանակում, այն-պես էլ նրանից դուրս: Այս-պես՝ արձանագրել ենք հետևյալ զուգաձևություննե-րը՝ ի // վա, ոջ // ի, ի // ու, ու // ի, ան //վա, ի // ան, ոջ // ան, ա ներքին // ի, ի // ա, ու // վա, ոջ // ա : Մյուս թեք հոլովնե-րում ևս կան կազմության զուգաձևություն-ներ, որոնց անդրադարձել ենք շարադ-րանքի ընթացքում:

գ. Առկայացման քերականական կարգն արտահայտվում է հոդերի միջո-ցով, որոնք հիմնականում կիրառված են ընդունված օրինաչափության համա-ձայն: Ժամանակա-կից ձևաբանական նորմից շեղում է բացառական, գործիա-կան և ներգոյական հոլով-ների հոդառու կիրառությունը, որը Թումանյանի ապ-րած ժամանակներում զուգա-ձևության արժեք ունեցող օրինաչափ երևույթ էր նաև գրական լեզվի համար: Այսպի-սի արժեք ունեցող իրողություն էր նաև **<u>մարդիկ</u>** բառաձևի հոդով կիրառությունը, որը զուգահեռաբար գործածվել է անհոդ ձևի հետ:

դ. Անձի և ոչ անձի (իրի) քերականական կարգը Հովի. Թումանյանի արձա-կում հան-դես է եկել արտահայտման իր բազմազան հնարավորություններով: Ի-րերի անուն գո-յականները և՛ անորոշ, և՛ որոշյալ առումով գործածվելիս ուղիղ խնդիրը ձևավորել են հայցական հոլովով, բացառությամբ այն պարագայի, եթե

կա անձնավորում: Այս դեպ-քում ուղիղ խնդիրը դրվել է տրականով: Անձերի անուն գոյականներն անորոշ առու-մով գործածվելիս ուղիղ խնդիրը հիմնականում ձևավորել են հայցական հոլովով, իսկ որոշյալ առումով դրվելիս՝ տրական հոլովով: Սակայն պետք է նշել, որ որոշյալ առումով վերցված գոյականները ուղիղ խնդիր են ձևավորել նաև հայցական հոլովով, ինչը բնորոշ էր ինչպես ժամանակի գրական, այնպես էլ ժողովրդախոսակցական լե-զուներին: Արդի լեզվում այսպիսի կիրառություններ չկան: Կենդանու անուն գոյա-կանները անորոշ առումով գործածվելիս առավելապես դրվել են հայցական հոլովով, մինչդեռ որոշյալ առմամբ գործածվելիս հավասարապես դրվել են հայցական և տրա-կան հոլովներով: Նշենք, որ արդի լեզվում որոշյալ առման դեպքում կենդանու անուն գոյականները ուղիղ խնդիրը ձևավորում են առավել հաճախ տրական հոլովով՝ որպես շնչավորներ նմանվելով անձի անուններին:

Ուսումնասիրված քերականական կարգերն իրենց ողջ հնարավորություններով ար-տահայտվել են Հովհ. Թումանյանի արձակում՝ մեծ ոճական լիցքավորում, անմիջա-կանության հմայք հաղորդելով գրվածքներին:

Карине Погосян – ***Выражение грамматических категорий имени существительного в прозе Оганнеса Туманяна.*** – В данной статье рассматриваются грамматические категории имени существительного и особенности их проявления в прозе Оганнеса Туманяна.

Великий армянский писатель жил и творил в конце 19-го и в начале 20-го века, то есть в такой период, когда восточноармянский литературный язык развивался и стабилизировался, кроме этого язык его произведений тесно связывается с народными источниками родного языка. Поэтому параллельные формы грамматических категорий, в частности грамматических категорий существительного, имеют достаточно интересные выражения в его произведениях.

Karine Poghosyan – ***Expression of Grammatical Categories of the Noun in H. Tumanyan's Prose Works.-*** Grammatical categories of the noun and peculiarities of their expression in H. Tumanyan's prose works are discussed in this article.

The Armenian great writer lived and created at the end of the 19th century and at the beginning of the 20th century. It was the period of East Armenian development and stabilization. Besides, Tumanyan's Armenian relates to folk sources. So parallel forms of grammatical categories, particulary grammatical categories of the noun, have quite interesting expressions in his works.

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ա. ԱՆԴԱՅԻ «ԱՆԿԻՄՅՈՒՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ» ՀԵՔԻԱԹ-ՎԵՊՈՒՄ

ԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Սույն հոդվածում քննության ենք ենթարկել Արմինե Անդայի (Աբրահամյան) «Անկիմյուրի բնակիչները» հեքիաթ - վեպում տեղ գտած հեղինակային նորակազմությունները և դրանց դերը ու նշանակությունը գրողի բառապաշարում: Անդայի ստեղծագործության մեջ կիրառված նորակազմությունները կազմված են բառակազմական տարբեր կաղապարներով: Լայնորեն կիրառվում են հատկապես ածանցմամբ կազմված նոր բառերը: Ոճական առումով հատկանշական են դիպվածային (օկազիոնալ) բառերի կիրառությունները, որոնք բացառապես համատեքստային կազմություններ են և իրենց ոճական նրբերանգներով ավելի են ընդգծում գրողի լեզվաոճական մտածողությունը:

Բանալի բառեր. Հեղինակային նորակազմություն, դիպվածային բառեր, ոճ, բառապաշար, բարդություն, ածանցում

Լեզուն շարունակ փոփոխվող ու առաջընթաց ապրող համակարգ է: Պայմանավորված հասարակական առաջընթացով՝ լեզվի բառապաշարն անընդհատ փոփոխվում է՝ անմիջականորեն արտացոլելով հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերը: Այդ փոփոխությունները տարածվում են նաև բառակազմական օրինաչափությունների վրա. նույն ձևով փոխվում են բառակազմության ձևերն ու եղանակները: Այսօր՝ հատկապես վերջին տասնամյակում, մեր լեզուն հարստացել է բազմաթիվ նոր բառերով, որոնց բառակազմական - կաղապարային ուսումնասիրությունը նոր ու հետաքրքիր շերտեր է բացում հայերենի բառակազմական հնարավորությունների քննության խնդրում: Նշված նպատակադրումով ուսումնասիրել ենք Արմինե Անդայի (Աբրահամյան) «Անկիմյուրի բնակիչները» հեքիաթ - վեպում տեղ գտած անհատական նորաբանությունները (հեղինակային նորաբանությունները):

Հեղինակային նորակազմությունները հիմնականում ստեղծվում են լեզվում առկա բառերի ու արմատների օգտագործումով, բայց որպես ոճական իրողություն համատեքստային իրողություններ են, որոնց իմաստը հասկացվում է ենթատեքստում: «Ի տարբերություն լեզվական նորաբանությունների՝ հեղինակային նորակազմությունները ոչ թե նոր երևան եկած առարկաների, երևույթների անվանումներ են, այլ հասկացությունը, երևույթը նոր ձևով արտահայտող լեզվամիջոցներ»[1]: Նորակազմ բառերը գրողին հնարավորություն են տալիս խուսափելու անընդհատ շրջանառվող բառերի և կապակցությունների հաճախակի գործածություններից՝ նպաստելով նաև խոսքի արտահայտչական հնարավորությունների ընդլայնմանը: Ինչպես Ս. Մելքոնյանն է նշում, «նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թե գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտա-

[1] ***Մ. Հովհաննիսյան***, Նորաբանությունները Վահան Տերյանի խոսքարվեստում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2011, N 133.2, էջ 32:

հայտելը»[2]: Հեղինակային նորակազմությունների մեծ մասը համատեքստից դուրս հասկանալի չեն և հաճախ կառուցվում են բառակազմական անհամատեղելի միավորներով:

Հարկ է նկատել, որ հեղինակային նորակազմությունների ստույգ որոշումը լի է թյուրիմացություններով ու խնդիրներով: Այս առումով Ա. Անդայի հեքիաթ-վեպում որպես հեղինակային նորակազմություն դիտարկել ենք բոլոր այն բառերը, որոնք չկան Ստ. Մալխասյանցի (ՀՀԲ), Էդ. Աղայանի (ԱՀԲԲ), Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում (ԺՀԲԲ)[3]:

Հեղինակային նորակազմությունների կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ Ա. Անդայի ստեղծագործության մեջ գործածված նոր բառերը հիմնականում կազմված են ածանցման կաղապարներով: Բարդությամբ կազմված նորակազմությունները մեծ թիվ չեն կազմում: Դիտարկենք օրինակներ՝

Tina Amiraghyan- ***The main characteristics of advertising*** **-** The first commercial advertisements appeared in Pompeii in 79 BC. IN 1440 the creation of Gutenberg printing house promoted the development of posters. It is impossible to imagine modern world without advertising. In the article an attempt was made to find out the characteristic aspects of advertisment texts and their influence on the society. We have found different tricks that advertisement can be used to influence the target group: linguistic elements such as attractive titles, convincing argumentation, laconic speech and non-linguistic elements, such as pictures, symbols, colors and their contradiction. We have obsereved the main means of advertising : media, TV, radio, posters. So advertising is an inseparable part of our society and we all consciously or unconsciously may undergo its influence. A good advertisment must know the habits, psychological needs and interests of the target group.

ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՐԹՈՒՐ ՄԻՐԶՈՅԱՆ

Հոդվածը կերպարվեստի բնագավառում գծանկարչություն առարկայի առաջատար դերի մասին է, նաև առաջնային այն պայմանների և քայլերի, որոնք անհրաժեշտ են գծանկարչություն առարկան ուսուցանողներին: Գծանկարչության ուսուցումը սկսվում է բնորդի ուսումնասիրությունից, դիրքի ընտրությունից: Որևէ առարկա պատկերելու համար անհրաժեշտ է պատկերացում կազմել նրա ձևի, չափի մասին՝ ծավալատարածական պատկերացում կազմել: Մարդու գլխի դետալային և ընդհանուր ուսումնասիրության ընթացքում կարևորվում է նաև ճեպանկարի դերը:

Բանալի բառեր. գծանկարչություն առարկա, նկարչության ուսուցում, ճեպանկար, բնորդ, ձև, չափ, ծավալատարածական պատկերացում, ուսուցման մեթոդական բնույթ:

Հին ժամանակներից մինչ օրս կերպարվեստի հիմքը համարվել է գծանկարչությունը: Անգամ նախնադարյան մարդն իրեն շրջապատող իրականության մասին իմացությունները գծապատկերներով է հաղորդել քարաժայռերի վրա:

Գիտական մոտեցման շնորհիվ առաջին անգամ վերածննդի ժամանակաշրջանում գծանկարչությունը ստանում է կատարյալ ավարտուն տեսք: Նշանավոր արվեստագետ Լեոն Բատիստա Ալբերտին (1404-1472թթ.)[1] իր աշխատությունում խոսում է ոչ այնքան գեղանկարչության և գույնի, որքան գծանկարչության և հարթության վրա պատկերի կառուցման հիմնական սկզբունքների մասին: Նա գծանկարչությունը համարում է գիտական լուրջ առարկա, որն օրենքների և կանոնների սահմանման համար ունի նույնքան ճշգրիտ ու հասկանալի տարրեր, որքան մաթեմատիկան[2]:

Գծանկարչության կարևորության մասին արտահայտվել են համաշխարհային արվեստի նշանավոր դեմքերը: Չեննինո Չեննինին[3] սկսնակներին խորհուրդ էր տալիս. «Նկատի ունեցիր, որ ամենակատարյալ ղեկավարը, որը փորձելու է քեզ հաղթանակ կամարի միջով տանել արվեստի լուսավոր աշխարհը, դա նկարչությունն է բնորդից: Վերջինս անհրժեշտն է ուսուցման բոլոր տարբերակներից: Պետք է վստահել այդ եղանակին ջերմ հոգով ու սրտով, մանավանդ, երբ կարողանաս ձեռք բերել գծանկարին տիրապետելու որոշակի կարողություն»[4]: Ի դեպ, վերածննդի դարաշրջանում գծանկարչությունն որպես ուսուցման մեթոդական բնույթի հատուկ առարկա գոյություն չի ունեցել: Ժամանակի նշանավոր

[1] Վաղ վերածննդի իտալացի գիտնական, ճարտարապետ, գրող և երաժիշտ:

[2] ***Альберти Леон Батиста***, Десять книг о зодчестве, 2, Москва, 1937, С. 57:

[3] Իտալացի նկարիչ: Ծննդյան ստույգ թիվը անհայտ է: Հայտնի է, որ ծնվել է XIV դարի առաջին կեսին Կոլլե դի Վալ դա Էլսա վայրում: Անհայտ է նաև նրա մահվան տարեթիվը: Ըստ Դինիի (1905) նա մահացել է 1437-ից հետո: Նրա վարկածը հիմնված է այն փաստի վրա, որ «Արվեստի մասին գիրք» ամենահին ձեռագիրը (Ֆլորենցիա) թվագրված է 1437 թ. հուլիսի 31:

[4] ***Ченнино Ченнини***, Трактат о живописи, Москва, 1933, С. 37-38.

վարպետները յուրովի զգում էին ուսուցման օգտակար եղանակները և դրանք կիրառում իրենց արվեստանոցներում:

Լեոնարդո դա Վինչին (1452-1519թթ.)[5], ինչպես և Լեոն Ալբերտին, գտնում է, որ գծանկարի ուսուցման օգտակար մեթոդը բնորդից նկարելն է, նկատի ունենալով շարժման և համամասնությունների բնույթը: Գեղանկարչության աշխատանքի ընթացքի մասին խոսելիս նա մատնանշում է երեք հաջորդական փուլ, որոնցից առաջինը և կարևորը համարում է գծանկարչությունը: «Արվեստի գիտության մեջ խորանալ ցանկացող պատանուն, որն ուզում է ընդօրինակել բնության հրաշագործությամբ ստեղծված մարդկանց կերպարներն ու զանազան առարկաներ, նրա միտքն ու եռանդն ամբողջովին պետք է ուղղել ու նվիրել գծանկարին, այն ուղեկցելով լույսերի ու ստվերների ճիշտ հարաբերության օգտագործմանը»[6]:

Մեր ժամանակներում գծանկարչություն առարկայի դերը էլ ավելի է կարևորվում: Գծանկարչություն առարկան առաջնայի և առանցքային է կերպարվեստի բնագավառի բոլոր մասնագիտությունների համար: Այն հանդես է գալիս որպես ուսուցման մեթոդական բնույթի հատուկ առարկա:

Գծանկարչության ուսուցումը սկսվում է բնորդի ուսումնասիրությունից, դիրքի ընտրությունից, որտեղից պատրաստվում է ուսանողը նկարել: Որևէ առարկա պատկերելու համար անհրաժեշտ է պատկերացում կազմել նրա ձևի, չափի մասին՝ ծավալատարածական պատկերացում կազմել: Աշխատելու ժամանակ նկարը պետք է լավ լուսավորված լինի, սակայն պետք է բացառել արևի ճառագայէների ուղիղ անկումը նկարի վրա:

Առարկաների ձևերը կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի՝ անկյունատաշ, կլոր և կոնստրուկտիվ: Նկարելիս անհրաժեշտ է անընդհատ համեմատել և համադրել, մտածել և վերլուծել: Նկարել նշանակում է գիտակցել: Մինչ մարդու գիպսե գլուխ նկարելը անհրաժեշտ է ուսումնասիրել և նկարել գլխի առանձին մասերը: Դետալային ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի լավ պատկերացնել մարդու գլխի անատոմիական կառուցվածքը: Ընդունված է ուսումնասիրելու համար նկարել Միքելանջելոյի (1475-1564թթ.) «Դավթի» մարմարե քանդակի գլխի առանձին հատվածների գիպսե կրկնօրինակները՝ աչքը, քիթը, շուրթերը, ականջը: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր բարդ կառուցվածքը: Դեմքի առանձին հատվածները նկարելուց հետո կարելի է փորձել նկարել «Դավթի» գիպսե գլուխը: Դա կամրապնդի դասընթացը:

Նկարելու համար՝ մարդու գլուխը բարդ կոնստրուկտիվ օբյեկտ է, որում կարելի է տեսնել ձևերի բազմազանություն: Գիպսե քանդակը, ի տարբերություն կենդանի բնորդի, հնարավորություն է տալիս առավելագույնս կենտրոնանալ ձևերի և կառուցվածքի վրա մի պարզ պատճառով, որ միշտ միագույն է: Գլխի մկանային ծածկույթի ուսումնասիրության համար անհրաժեշտ է կատարել բազմազան նկարներ, էսքիզներ՝ տարբեր շրջադարձերով:

Մարդու գլխի դետալային և ընդհանուր ուսումնասիրության ընթացքում կարևորվում է նաև ճեպանկարի դերը: Ճեպանկարը, հատկապես նկարչություն

---

[5] Լեոնարդո դա Վինչիի հեղինակությանն է պատկանում «Գիրք գեղանկարչության մասին» աշխատությունը: Այդ տրակտատը Լեոնարդոյի մահից հետո կազմել և պատրաստել է հրատարակման նրա աշակերտ Ֆրանչեսկո Մելցին: Հավանաբար նա էլ խմբագրել է որոշ դրույթներ. (տե՛ս ***Н. Н. Ростовце***, методика преподования изобразительного искусства в школе, М., 1975, С. 65):

[6] ***Леонардо да Винчи***, "Рисунок, живопись, композиция", Москва, 1989, С. 13.

սովորողների համար, մեծապես նպաստում է առարկան կամ ֆիգուրան ամբողջականության մեջ արագ տեսնելու կարողությանը, օգնում է զարգացնել դիտողականությունը, աչքաչափը, համաչափությունների զգացողությունը: Ճեպանկարի ոլորտում ամենահետաքրքրականն ու դժվարը մարդն է՝ իր անատոմիական կառուցվածքով: Վերջապես, կերպարվեստի բոլոր ճյուղերում հիմնական դերը պատկանել և պատկանում է մարդու կերպարին:

Мирзоян Артур-*Начальные условия обучения рисунка.* -Статья о ведущей роли графического рисунка в области изобразительного искусства, а так же об основных условиях, которые необходимы преподователям графического рисунка. Изучение графического рисунка начинается с исследования модели и выбора положение. Для того, чтобы изобразить любой предмет необхадимо иметь понятие о его форме, размере и пространственное восприятие. Важную роль в детальном изучении человеческой головы имеет эскиз или набросок.

Artur Mirzoyan -The initial conditions of training to drawing. -The article about the leading role of graphic design in the field of fine art and as the basic conditions needed teacher of graphic design. Studying graphic design begins with research models and selection status. An important role in the detailed study of the human head is a sketch.

ԶԱՐԴԱՆԱԽՇԸ ԿԱՐՊԵՏԱՅԻՆ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ԱՆՈՒՇ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

Հոդվածը հայ ժողովրդի ստեղծած արվեստի ամենահին, բայց ամենակենսունակ բնագավառներից մեկի մասին է: Զարդանախշերի կիրառությունը կարպետագործության մեջ հնարավորություն է տալիս գեղեցիկ ձևավորել և ապահովել կարպետի մակերեսի զարդանկարային ողջ կառուցվածքը: Կարպետի մեջ պահպանվել են ամենահին զարդաձևերը, որոնց զուգահեռ ստեղծվել են նորանոր ու մերվել հների հետ:

Հայ կարպետագործության մեջ զարդանախշերը չափազանց բազմազան են և կիրառելի: Ամեմ մի նախշ ունի մի քանի տարատեսակ: Հայկական կարպետագործության շնորհիվ պահպանվել է զարդանախշերի մի ահռելի ամբողջություն:

Բանալի բառեր. զարդանկար, զաղանախշ, կարպետի մակերես, հայկական կարպետագործություն, պատկերների ոճավորում

Զարդանախշը հայ ժողովրդի ստեղծած արվեստի ամենահին, բայց ամենակենսունակ բնագավառներից մեկն է, որի մի ծայրը թաղված է նախնադարյան անդասակարգ հասարակության ծոցում, իսկ մյուսն, այսօր էլ ծաղկելով, ձգվում է դեպի ապագա[1]:

Թեյշեբաինիի և Էրեբունիի որմնանկարները խոսում են ժամանակի հարուստ, մշակված զարդանկարչության մասին: Էրեբունիի և Արինբերդի որմնանկարներում պահպանված զարդանկարները պատին փակցված մանր կարպետների տպավորություն են թողնում: Նրանց քառանկյունի ձևը, զարդանախշերի հորինվացքը՝ կենտրոնական նախշազարդ շրջանակներով, փոխանցվել են մինչև մեր օրերը:

Ուրարտական բրոնզե վահանների զարդանախշերի դասավորությունը հիշեցնում է հետագա դարերի հայկական սինիների և այլ իրերի զարդափորագրությունը:

Զարդանախշերի կիրառությունը կարպետագործության մեջ հնարավորություն է տալիս գեղեցիկ ձևավորել և ապահովել կարպետի մակերեսի զարդանկարային ողջ կառուցվածքը:

Զարդանկարների հորինվացքում կարևոր նշանակություն ունի գունային լուծումը՝ թե՛ նախշերի, թե՛ դաշտի, թե՛ շրջանակի առումով:

Կարպետի մեջ պահպանվել են ամենահին զարդաձևերը, որոնց զուգահեռ ստեղծվել են նորերը ու մերվել հների հետ: Ժամանակի ընթացքում մոռացվել են նրանց բովանդակությունը, իմաստը, նշանակությունը, անունները: Այժմ շատ մեծ դժվարությամբ է հաջողվում ծեր կարպետագործուհիներից իմանալ որևէ նախշի անուն. ընդ որում, նույն զարդանկարը տարբեր վայրերում տարբեր անուններ է կրում:

Ռոմբաձև «գաթան» կենտրոնում՝ հիմնական զարդանկարը, եզերված է տարբեր տեսակի, քանակի ու չափերի կեռերով, որոնց զույգը՝ խոյակները, կոչվում են «խաչպոզ», «խոյեղջյուր»:

[1] ***Մնացականյան Ա.***, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 7:

Կարպետի զարդանախշերի մեջ աչքի է ընկնում խաչը՝ կապված հեթանոսական պատկերացումների, առաջին հերթին արևի, բնության ուժերի գաղափարների հետ, որը հետագայում դառնում է քրիստոնեության խորհրդանշան: Այդ առումով հետաքրքրական են հայկական գտածոներն, որոնց անվանում են շտանդարտ (Ք.ա. XIII-XII դդ.)[2]:

«Մի առանձին խումբ են կազմում բրոնզե աստղապատկերները, որոնցից մի քանիսը կապվում են արևի և մեկը նաև աստղային երկնքի (արևի ու մոլորակների) պաշտամունքի հետ: Դրանք հիմնականում գտնվել են Սևանի ավազանում: ... Դրանց մի մասը սկավառակաձև է՝ իբրև երկնքի պատկեր, ներսում՝ խաչաձև[3]»:

Խաչի հետ տարածված է աստղածաղիկը՝ հինգ, ութ ծայրերով: Հատկապես ռոմբաձև ութ թերթիկով աստղածաղիկը մեծ տեղ ունի հայկական կիրառական արվեստի բոլոր բնագավառներում, առավել ևս կարպետագործության, գորգագործության մեջ:

Երզնկայից պահպանված մի կարպետի ողջ մակերեսը զբաղեցնում են խոշոր չափերի աստղածաղիկներ: Հանդիպում է նաև կրկնակի քառակուսուց ստացված ութ սուր ծայրերով նախշը, կամ հատված ութանկյունի ձևը, մեջը ռոմբեր, կեռեր և ամենից առաջ՝ հավասարաթև խաչ:

Վեցանկյունները կարպետի մակերեսին դասավորվում են մեղրամոմի բջիջների նման: Վեցանկյան մեջ լինում են ռոմբաձևեր, կենաց ծառեր, բզեզներ և այլն:

Կենդանական ու մարդկային պատկերները խիստ ոճավորման են ենթարկվում և արտահայտվում են լակոնիկ գծերով: Կան գործիքների, զենքերի, կենցաղային իրերի նկարներ՝ գութան, չարխ, ակիշ, անիվ, պուլիկ, թուր, մոմ, մկրատ, սանր, կանթեղ, սանդուղք և այլն: Բազմաթիվ են բուսական բնույթի զարդանախշերը՝ ցորեն, ծաղիկ, մարջան, հավաքական՝ վարդ, նարգիզ, խնձոր, նուռ և այլն: Հավանաբար զարդերի մեջ կան ձևափոխված սեպագրեր, հայկական տառեր:

Հետաքրքրական են նաև շրջանակի կամ եզրային ժապավենաձև երիզի նախշերը: Խոշոր զարդանկարները՝ «գաթաները», «կրկենիները» տեղադրվում են կարպետի կենտրոնական մասում, իսկ շրջանակի մեջ՝ որևէ փոքրիկ նախշ: Բացի անջատ-անջատ դրված, կողք-կողքի շարված միևնույն նախշից, կարպետի եզրային եզրով անցնում են նեղ շերտի զիգզագաձև զարդաձևեր, մի դեպքում՝ «եզան հետք», մի այլ դեպքում «կենաց ծառեր»: Կարպետի ամենահին և տարածված զարդաձևերից պետք է համարել ոճավորված շուշանը, որը երկու զուգահեռ շարքով և երկու տարբեր գույներով, «ծաղիկ» գլուխները դեպի ներս միահյուսված, շրջանակում է կարպետը:

Հայ կարպետագործության մեջ զարդանախշերը չափազանց բազմազան են և կիրառելի: Ամեն մի նախշ ունի մի քանի տարատեսակ: Հայկական կարպետագործության շնորհիվ պահպանվել է զարդանախշերի մի ահռելի ամբողջություն:

Чибухчян Ануш- ***Орнаменты безворсовых ковров.*** **-** Статья о старейшем, но наиболее жизнеспособном искусстве армянского народа. Использование орна-

[2] Հնագույն գտածոների համար պարտական ենք ազգագրագետ Ե. Լալայանին:

[3] ***Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան***, Հայ արվեստի պատմություն, «Զանգակ-97», 2009 թ., էջ 22:

мента в безворсовых коврах дает возмжность красиво оформлять и декорировать всю поверхность, сохроняя композиционное равновесие. В безворсовых коврах сохранились самые древние орнаменты, наряду которым были созданы новые.

В искусстве армянского безворсового ковра применялись разнообразные орнаменты, каждый из которых имеет свои разновидности.

Anush Chibukhchyan - ***Ornaments of pile carpets.*** -Article on the oldest, but the most viable art of the Armenian people. Ornaments carpet preserved in the oldest of which is parallel to reconcile themselves with the new and old ones. Armenian carpet ornaments are extremely diverse. A pattern has several different types. Armenian carpet ornaments preserved to a formidable whole.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՆՈՒՆ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

ԱՆԻ ԽԵՉՈՅԱՆ

Հեղինակի գիտական հոդվածում ներկայացվում է Սևրի պայմանագիրը, որպես միջազգային իրավունքի պրակտիկայում առաջին անգամ միջազգային հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով մշտական հիմունքներով գործող միջազգային քրեական դատարանի ստեղծում նախատեսող իրավական փաստաթուղթ:

Հոդվածում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Սևրի պայմանագրով նախատեսված միջազգային քրեական դատարանի գործունեության առանձնահատկություններին, մասնավորապես դատարանի ստեղծման նպատակին, գործունեության իրավական հիմքերին, բացահայտվում է Սևրի պայմանագրի դերը ընդհանրապես միջազգային քրեական իրավունքի և դատավարության զարգացման տեսակետից:

Բանալի բառեր. միջազգային հանցագործություններ, միջազգային քրեական իրավունք, պետությունների և ֆիզիկական անձանց միջազգային իրավական պատասխանատվություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, միջազգային քրեական դատարան:

Միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի պատմական զար-գացումը միջազգային իրավունքի գիտության մեջ սովորաբար կապվում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հիմնված՝ Նյուրնբերգի և Տոկիոյի ռազմական դատարանների գործունեության հետ: Այդուհանդերձ, Առաջին աշխարհամարտից հետո Դաշնակից պետությունների կողմից ընդունված մի շարք կարևոր փաստաթղթերի, մասնավորապես 1920թ.-ի օգոստոսի 10-ին Թուրքիայի հետ կնքված Սևրի պայմանագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում ամրագրված միջազգային քրեական արդարադատությանը վերաբերող սկզբունքները ընկած են ներկայումս գործող Միջազգային քրեական դատարանի 1998թ.-ի Հռոմի կանոնադրության և ընդհանրապես միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի պատմական զարգացման հիմքում:

Դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը միջազգային հարաբերություններում ընդունված էր միջազգային տարբեր իրավախախտումների գործերով միջպետական մարմինների կողմից դատաքննության անցկացումը, սակայն դրանք քրեական արդարադատություն իրականացնող մարմիններ չէին և իրավասու էին միայն հաստատել կամ ժխտել անհատների կողմից միջազգային իրավախախտում կատարելու փաստը, որի համար պատիժը այդուհանդերձ պետք է սահմանվեր ազգային դատարանների կողմից:

Օրինակ, 19-րդ դարի առաջին կեսին Մեծ Բրիտանիայի և այլ պետությունների միջև կնքված երկկողմ պայմանագրերի հիման վրա ստեղծված դատարանները իրավասու էին բռնագրավել ստրկավաճառության նպատակով օգտագործ-

վող նավերը, սակայն դրանց անձնակազմի անդամները պետք է հանձնվեին որոշակի պետությունների՝ վերջիններիս օրենքներին համապատասխան պատիժներ կիրառելու համար:

Այդ դատարանների կողմից արդարադատության իրականացմանը խոչընդոտում էր քրեական արդարադատությանը վերաբերող համընդհանուր միջազգային քրեաիրավական նորմերի բացակայության հարցը, իսկ ոլորտում պետությունների նորմաստեղծ գործունեությունը սահմանափակվում էր միայն հանցագործների հանձնմանը վերաբերող նորմերի ստեղծմամբ:

Ընդհանրապես, մինչև Առաջին աշխարհամարտը միջազգային համընդհանուր քրեաիրավական նորմերի ստեղծման գաղափարը միջպետական հարաբերություններում քննադատվում էր՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջազգային իրավունքի համակարգում գոյություն չուներ դրա իմպլեմենտացիայի մշտական մեխանիզմ, մասնավորապես՝ չկար համընդհանուր և համապարտադիր իրավասությամբ օժտված որևէ միջազգային դատական մարմին:

Մինչև Առաջին աշխարհամարտը պատերազմի կանոնների խախտման վերաբերյալ բոլոր դատավարությունները իրականացվում էին պատերազմող կողմերից մեկի (որպես կանոն՝ հաղթող պետության) կողմից հատուկ այդ դեպքերի համար ստեղծված ad hoc դատարանների կողմից :

Պետությունները մշտապես վերապահումով էին մոտենում միջազգային հանցագործություններ կատարած սեփական քաղաքացիներին պատասխանատվության ենթարկելու խնդրին, իսկ պետությունների իրավական համակարգերի միջև գոյություն ունեցող տարբերությունները խոչընդոտում էին քրեական արդարադատություն իրականացնող միասնական մարմնի ստեղծմանը:

Կարծում ենք, Սևրի պայմանագրի պատմաքաղաքական նախադրյալների ձևավորմանը զուգահեռ, միջազգային իրավունքում ձևավորվել էին նաև միջազգային հանցոգործությունների կատարման համար ֆիզիկական անձանց միջազգային իրավական պատասխանատվության սկզբունքի՝ միջազգային պայմանագրային ձևակերպման նախադրյալները, ինչը և իրականացվեց Սևրի պայմանագրով: Որպես այդպիսին՝ առաջին հերթին պետք է նշել միջազգային հարաբերություններում պետությունների, այսպես կոչված, միջազգային իրավագիտակցության ձևավորումը: Սևրի պայմանագրի կնքման պահին գործող միջազգային իրավունքում պետությունների կողմից առանձնացվել էին միջազգային հանցագործությունների առանձին տեսակներ, որոնց համար պատասխանատվության հարցը դարձել էր ողջ միջազգային հանրության մտահոգության առարկա (օրինակ, ստրկավաճառությունը, պատերազմական հանցագործությունները և այլն):

Այդուհանդերձ, միջազգային քրեական դատարանի միջոցով միջազգային հանցագործություններ կատարած անհատներին պատասխանատվության ենթարկելու սկզբունքի միջազգային իրավական համընդհանուր ճանաչմանը խոչընդոտում էր նաև այն հանգամանքը, որ միջազգային հանցագործությունների կատարման համար պատժի կիրառման հարցերը միջազգային իրավունքը թողնում էր պետությունների հայեցողությանը, որոնք նման դեպքերում ղեկավարվում էին սեփական օրենքներով:

Հաագայի 1899 և 1907 թթ.-ի խաղաղության կոնֆերանսներում ընդունված որոշ կոնվենցիոն դրույթներ նպաստեցին քրեական արդարադատության ոլորտում միջազգային նորմաստեղծ գործընթացի զարգացմանը:

Պատերազմի օրենքների և սովորույթների խախտման համար պետության պա-տասխանատվության խնդիրը առաջին անգամ դրվեց 20-րդ դարասկզբին Հաագայի 1907 թ.-ի՝ <<Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին>> IV կոնվենցիայում, որտեղ ամրագրված էր, որ <<պատերազմող կողմը պատասխանատու կլինի իր ռազմական ուժերի կազմում գտնվող անձանց կատարած բոլոր գործողությունների համար>>: Թեև Կոնվենցիայում նշվում էր պետությունների պատասխանատվության մասին, այն անուղղակիորեն լուծում էր նաև պատերազմական հանցագործություններ կատարած անհատների պատասխանատվության հարցը: Այդուհանդերձ, Հաագայի կոնվենցիան չէր նախատեսում այդ պատասխանատվության իրագործման նպատակով միջազգային դատարանի ստեղծում:

Առաջին աշխարհամարտում Գերմանիայի և նրա դաշնակիցների կատարած հանցագործությունները աննախադեպ էին իրենց ծավալներով և դաժանությամբ: Դրանք միջազգայնորեն դատապարտելու և հետագայում նման հանցագործությունների կատարումը կանխելու անհրաժեշտությունը հրատապ դարձրին միջազգային քրեական արդարադատություն իրականացնող մարմնի ստեղծման խնդիրը:

1918թ. նոյեմբերի 11-ին պատերազմական հանցագործների պատասխանատվու-թյան հարցը քննարկելու նպատակով Գերմանիայի դեմ պատերազմած պետությունները ձևավորեցին Դաշնային հանձնաժողով, որն իրավասու էր քննել հետևյալ հարցերը՝

1. պատերազմի սանձազերծման համար մեղավոր անհատների միջազգային պատասխանատվության հարցը,

2. պատերազմի այն օրենքների և սովորույթների խախտման վերաբերյալ փաստերի քննությունը, որոնք տեղի էին ունեցել Գերմանիայի և նրա Դաշնակիցների կողմից,

3. միջազգային հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անհատների պատասխանատվության հարցը

Այլ հարցերի թվում Հանձնաժողովի քննությանը դրված հարցերից էր հանցագործներին պատասխանատվության ենթարկելու նպատակով համապատասխան միջազգային դատական ատյանի ստեղծման և դրա կողմից իրականացվելիք դատավարության կարգի հաստատման հարցը:

Հանձնաժողովի նախապատրաստական զեկույցում առաջարկվում էին միջազգային հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ քրեական արդարադատության իրականացման մի քանի ձևերի ստեղծում՝հաղթող տերությունների ներկայացուցիչներից կազմված միջազգային դատարանի, միջպետական խառը (հիբրիդային) դատարանների և այլն: Ընդ որում, միջազգային քրեական դատարանի ստեղծման գաղափարը միանշանակ չէր ընդունվում Դաշնակից պետությունների ներկայացուցիչների կողմից, այն նկատառումով, որ պետությունների համար պարտադիր իրավազորությամբ օժտված միջազգային քրեական դատարանի ստեղծումը հակասում էր պետությունների ինքնիշխանության սկզբունքին: Պատերազմական հանցագործություններ կատարած անձինք բարոյական պատասխանատվություն էին կրում մարդկության առաջ, սակայն իրավական տեսակետից ենթակա էին պատասխանատվության ազգային դատարանների կողմից:

Միջազգային քրեական դատարանի ստեղծմանը խոչընդոտող մյուս հիմնախնդիրը վերաբերում էր միջազգային հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության համապատասխան միջազգային իրավական հիմքերի բացակայությանը:Հանձնաժողովի կողմից նկատի էր առնվում այն հանգամանքը, որ Հաագայի 1907թ.-ի կոնվենցիան, որը սահմանում էր միջազգային հանցագործությունների համար անհատների պատասխանատվության սկզբունքը, չուներ համապարտադիր բնույթ բոլոր պետությունների համար:

Այդուհանդերձ, Հանձնաժողովի վերջնական զեկույցի եզրափակիչ դրույթներում նշվում էր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կոպիտ ոտնահարումների գործերով քրեական արդարադատություն իրականացնող և մշտապես գործող միջազգային դատական մարմնի ստեղծման անհրաժեշտության մասին:

Հանձնաժողովի զեկույցում ամրագրված դրույթները հիմք հանդիսացան

1919թ.-ի Վերսալի և 1920թ.-ի Սևրի հաշտության պայմանագրերում քրեական դատարանի մասին համապատասխան դրույթների ընդունման համար:

Սևրի պայմանագրի առաջադիմական նշանակությունը միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի զարգացման տեսակետից ընդգծելու նպատակով հարկ ենք համարում նշել այն, որ Առաջին աշխարհամարտից հետո կնքված հաշ-տության մյուս պայմանագրերը, մասնավորապես Ավստրիայի հետ կնքված Սեն-Ժերմենի, Բուլղարիայի հետ կնքված Նեյի պայմանագրի համապատասխան հոդվածները ընդամենը վերարտադրում էին Վերսալի պայմանագրի՝ միջազգային հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ արդարադատության իրականացմանը վերաբերող հոդվածների դրույթները:

Կարծում ենք՝ Սևրի պայմանագիրը առաջադիմական նշանակությունը Վերսալյան համակարգի մյուս պայմանագրերի՝ քրեական դատարանի ստեղծմանը վերաբերող դրույթների համեմատությամբ կայանում էր հատկապես միջազգային քրեական դատարանի ստեղծման նպատակի և անհրաժեշտության պայմանագրային իրավական ձևակերպման առումով:

Վերսալի պայմանագրում միջազգային դատարանի ստեղծման նպատակը բացառապես միջազգային բարոյականությանը և պայմանագրերի սրբազան ուժին բարձրագույն անարգանք հասցնելու համար մեղավոր Գերմանիայի քաղաքացիներին պատասխանատվության ենթարկելն էր: Վերսալի պայմանագրի 227-րդ հոդվածում նշվում էր. <<Դաշնակից և միավորված պետությունները նախկին գերմանական կայսր Վիլհելմ II Հոհենցոլերին ներկայացնում են միջազգային բարոյականությանը և պայմանագրերի սրբազան ուժին բարձրագույն անարգանք հասցնելու հրապարակային մեղադրանք:

Պետք է ստեղծվի հատուկ դատարան, որպեսզի դատի մեղադրյալին…>>:

Ընդ որում, Պատասխանատվության և Պատժի հանձնաժողովը նկատի ուներ ոչ թե Վերսալի պայմանագրի կնքման պահին գործող համընդհանուր միջազգային պայմանագրերը, այլ Բելգիայի և Գերմանիայի միջև կնքած՝ 1839 թ.-ի ապրիլի 19-ի Լոնդոնի պայմանագիրը չեզոքության մասին, ըստ որի՝ Գերմանիան պարտավորվել էր չխախտել Բելգիայի չեզոքությունը, և 1867 թ.-ի մայիսի 11-ի Լոնդոնի պայմանագիրը Գերմանիայի և Լյուքսեմբուրգի միջև չեզոքության պահպանման մասին:

Պատերազմական հանցագործությունների և իր քաղաքացիների դեմ գործած միջազգային հանցագործությունների համար Թուրքիային ներկայացվող մեղադրանքը միջազգային իրավական ձևակերպում ստացավ 1920 թ.-ի օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրում:

Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածում տրված է թուրքական հանցագործների այն արարքների իրավական որակումը, որոնց պատասխանատվության ենթարկելու համար սահմանվում էր միջազգային քրեական դատարանի ստեղծման նպատակը: Հոդվածում նշվում է. <Օսմանյան կառավարությունը պարտավորվում է Դաշնակից տերություններին հանձնել այն անձանց, ովքեր պահանջվում են, որպես այն կոտորածների համար պատասխանատվություն կրողներ, որոնք պատերազմական դրության ընթացքում կատարվել են Օսմանյան կայսրության մաս կազմող ցանկացած տարածքի վրա>> (այս հանցագործությունները Պատասխանատվության և Պատժի հանձնաժողովի՝ Փարիզի կոնֆերանսին ներկայացված զեկույցում որակվում էին որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություններ):

Թուրքիայի քաղաքացիների կողմից իրականացված հանցագործությունների իրավական այս որակումը Սևրի պայմանագրում, կարծում ենք, ունի կարևոր նշանակություն՝ նախ քրեական իրավունքի տեսակետից հստակ ձևակերպված են այն իրավախախտումները, որոնք որակվում են որպես միջազգային հանցագործություններ, մյուս կողմից՝ պայմանագրում տրվում է Առաջին աշխարհամարտի ընթացքում թուրքական իշխանության և դրա ներկայացուցիչների կատարած հանցագործությունների համարժեք իրավական գնահատականը, և առավել որոշակի է պետության պարտավորությունը մեղավոր անձանց միջազգային դատարանին հանձնելու հարցում:

Սևրի պայմանագրով նախատեսվում էր միջազգային քրեական արդարադատություն իրականացնող ինչպես ժամանակավոր, այնպես էլ մշտական մարմնի ստեղծման հնարավորությունը: Այսպես, Սևրի պայմանագրում նշվում էր 1914 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ թուրքական կայսրության մաս հանդիսացող տարածքում իրականացված կոտորածների համար մեղադրվող անհատների դատական հետապնդման համար Դաշնակից տերությունների և Ազգերի լիգայի կողմից միջազգային դատարանների ստեղծման և պետությունների համար դրա պարտադիր իրավազորության ընդունման մասին: Պայմանագրի 230-րդ հոդվածում մասնավորապես նշվում էր. <<Դաշնակից տերությունները իրենց իրավունք են վերապահում ստեղծել դատարան վերը նշված մեղավոր անձանց դատելու համար, և թուրքական կառավարությունը պարտավորվում է ընդունել այդ դատարանի իրավազորությունը>>:

Պայմանագրի 230-րդ հոդվածը նախատեսում էր նաև միջազգային քրեական արդարադատություն իրականացնող մշտական մարմնի ստեղծման հնարավորությունը. հոդվածում մասնավորապես նշվում էր. <<Եթե Ազգերի լիգան բավարար ժամանակում ստեղծի դատարան, որն իրավասու կլինի քննել կոտորածներին վերաբերող գործերը, Դաշնակից պետությունները իրավունք կունենան մեղավոր անձանց պատժի ենթարկել այդ դատարանի միջոցով, և թուրքական կառավարությունը պարտավորվում էր ընդունել այդ դատարանի իրավազորությունը ևս>>:

Համեմատության համար պետք է նշել, որ Վերսալի պայմանագրով նախատեսված միջազգային դատարանի ստեղծումը պատերազմում հաղթող պետությունների կողմից միջազգային քրեական իրավունքի գիտության մեջ ներկայումս էլ ընկալվում է որպես հաղթողների արդարադատություն: Նույնիսկ Երկրորդ աշխարհամարտում հաղթող պետությունների կողմից ստեղծված Նյուրնբերգի և Տոկիոյի զինվորական դատարանները ևս, որոնք կազմված էին Երկրորդ աշխարհամարտում հաղթող պետությունների ներկայացուցիչներից, միջազգային իրավունքի գիտության մեջ հաճախ որակվում են որպես հաղթողների արդարադատություն: Դրանք մեղադրվում էին օբյեկտիվության բացակայության մեջ՝ որպես post factum դատարաններ[1]:

Փաստորեն, Սևրի պայմանագրով Թուրքիան ստանձնում էր միջազգային դատարանի պարտադիր իրավազորությունը ճանաչելու պարտավորություն, ինչը նոր երևույթ էր միջազգային իրավունքի կիրառման պրակտիկայում :

Կարծում ենք՝ միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի զարգացման տեսակետից առաջադիմական նշանակություն ունեցան նաև Սևրի պայմանագրի այն հոդվածները, որոնք միջազգային հանցագործություններ կատարած անձանց դատական հետապնդման հնարավորություն էին նախատեսում ոչ միայն Դաշնակից, այլև երրորդ պետությունների համար, որոնց տարածք էր անցել կամ պետք է անցներ նախկին Օսմանյան կայսրության տարածքից:

Սևրի պայմանագրի 229-րդ հոդվածում մասնավորապես նշվում էր. <<226-228 հոդվածների դրույթները հավասարապես պետք է կիրառվեն այն պետությունների նկատմամբ, որոնց տարածք է անցել կամ պետք է անցնի նախկին թուրքական կայսրության տարածքից, այն անձանց նկատմամբ, ովքեր մեղավոր կճանաչվեն պատերազմի օրենքներին և սովորույթներին հակասող գործողությունների կատարման մեջ, եթե այդ անձինք հայտնվել են այդ պետությունների տարածքում կամ դրանց իրավազորության ներքո:

Եթե պահանջվող անձինք ստացել են նշված պետություններից որևէ մեկի քաղա-քացիություն, այդ պետության կառավարությունը պարտավորվում է շահագրգիռ պե-տության կամ պետությունների պահանջով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները այդ անձանց հետապնդումը կամ պատիժը իրականացնելու համար>> :

Սևրի պայմանագրի վերը նշված հոդվածը զարգացնում էր նաև միջազգային հանցագործների հանձնման վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային իրավական պրակտիկան, քանի որ մինչև Սևրի պայմանագրի կնքումը միջազգային հարաբերություններում տարածված չէր հանցագործների հանձնման մասին հատուկ պայմանագրերի կնքումը միջազգային հարաբերությունների մասնակիցների՝ պետությունների միջև:

Այսօր միջազգային իրավունքը պարտավորեցնում է յուրաքանչյուր պետության դատական հետապնդում սկսել կամ հանձնել իր տարածքում կամ իր իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց, ովքեր մեղադրվում են ցեղասպանության, պատերազ-մական, խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ իրականացնելու մեջ : Ունիվերսալ իրավազորության սկզբունքը թույլատ-

[1] î»°ë ***E. Greppi***, The evolution of individual responsibility under international law, International Review of the Red Cross, 1999, p. 53; ***L. Synanyan***, The International Criminal Court, University of South California, 1997, p. 1083.

րում է յուրաքանչյուր պետության կիրառել քրեական պատասխանատվության միջոցներ միջազգային իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարումների դեպքում, եթե մեղադրյալը գտնվում է այդ պետության տարածքում: Այդ սկզբունքի իմաստով՝ միջազգային որոշ հանցագործություններ այնպիսի վտանգավորություն են ներկայացնում միջազգային հանրության համար, որ յուրաքանչյուր պետություն, որի տարածքում գտնվում է մեղադրյալը, կարող է դատական հետապնդում սկսել և պատասխանատվության ենթարկել դրանց կատարման համար մեղադրվող անձանց միջազգային հանրության անունից՝ անկախ մեղադրյալի կամ տուժողի ազգությունից կամ հանցագործության վայրից: Կարծում ենք, Սևրի պայմանագիրը կարևոր նշանակություն ունեցավ նաև այս սկզբունքի ունիվերսալիզացիայի տեսակետից:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Սևրի պայմանագրում միջազգային քրեական դատարանի ստեղծումը և դրա գործունեության օբյեկտիվ և արդյունավետ հիմքերի սահմանումը ոչ միայն օբյեկտիվ անհրաժեշտություն էին միջազգային քրեական իրավունքում, այլև առաջադիմական նշանակություն ունեին Վերսալի պայմանագրի համեմատությամբ, որի հետ միջազգային իրավունքի գիտությունը կապում է միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի պատմական զարգացումը: Սևրի պայմանագրում միջազգային քրեական արդարադատության օբյեկտիվ իրա-կանացման տեսակետից կարևոր էր միջազգային արդարադատություն իրականացնող մարմնի ստեղծումը ոչ միայն պատերազմում հաղթող, այլև պետությունների համընդհանուր կազմակերպության՝ Ազգերի լիգայի կողմից:

Սևրի պայմանագրում արտահայտված պետությունների վճռականությունը միջազգային կայուն իրավական հիմքերի վրա դնել միջազգային հանցագործությունների համար անհատների պատասխանատվության հարցը, էապես ազդեց հետագայում՝ 1998 թ.-ին մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանի ստեղծման համար:

Ани Хечоян - Статья автора посвящена Севрскому мирному договору как международно-правовому документу, впервые в истории международного права предусмотревшего создание международного уголовного суда, действующего на постоянной основе.

В статье особо подчеркиваются особенности деятельности международного уголовного суда, предусмотренного Севрским договором, в частности договорное закрепление цели создания суда, правовые основы деятельности и т.д.

Ani Khechoyan - Tha article is devoted to the Sevr treaty, the first document in the history of international law which defined the creation of international permanent criminal court for the responsibility of persons who have commited international crimes.The article also concerns to the specifics of the aim, legal basis of the jurisdiction of the court and other important issues that contributed to the development of international criminal law and procedure in general.

НЕКОТОРЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ЭВТАНАЗИИ.

ЛУСИНЕ ВАРДАНЯН

В статье обсуждается понятие и виды эвтаназии, дается определение данного феномена. Отмечается необходимость установления отдельного состава преступления, предусматривающего ответственность за эвтаназию, предлагается редакция диспозиции данной статьи. В юридической литературе эвтаназия является причиной острых дискуссий, исходя из нерешенности многочисленных моральных, этических и правовых проблем, связанных с ней: зачастую эвтаназия рассматривается с позиции реализации права на смерть или распоряжения жизнью. Автор приходит к заключению о том, что Уголовный кодекс не может допустить лишения жизни человека, даже исходя из положительных мотивов, в том числе сострадания.

Ключевые слова: Право на смерть, эвтаназия, уголовный кодекс, сострадание, неизлечимая болезнь, самоубийство, медицинская помощь.

Эвтаназия – одна из проблем, концентрирующая в себе биоэтические противоречия между нравственностью и возможностями биомедицинских технологий. Ее зачастую путают с самоубийством. Между тем, это разные феномены, которые имеют и различную историю развития. Примечательно, что отношение к самоубийству на различных этапах истории было различным. Э. Дюркгейм указывает, что регламентация самоубийства прошла две фазы: «В первой фазе личности запрещено кончать с собой самовольно, но государство может выдать на это свое разрешение... Во второй фазе осуждение носит абсолютный характер и не допускает никаких исключений»[1].

Вторая фаза связана с приходом христианства. В Армении в Судебниках Мхитара Гоша и Смбата Гундстабля предусматривались специальные статьи о самоубийцах. Мхитар Гош указывает, что лицо, которое осуществляет самоубийство грешит перед Б**огом.** Церковь в качестве тяжкого преступления считает совершение самоубийства, так как если убийца имеет возможность покаяться, исправиться, то самоубийца - нет. Мхитар Гош указывает, что человека совершившего самоубийство, не отпевали в церкви.

И только в 20-ом веке к самоубийству не только начали относиться толерантно, но и смерть стала ценностной категорией. Как отмечает Г.Чхартишвили “главный титул нашего столетия должен звучать так: век самоубийств”.[2] Такое отношение к этому феномену привело к тому, что в правовой теории право на смерть начали рассматривать как естественное право человека, при этом указывая, что право на смерть складывается из двух составляющих: право на суицид и право на эвтаназию.[3] А. Н.Красиков указывает,

1 ***Дюркгейм Э***. Самоубийство: Социологический этюд/Пер, с фр. с сокр.; Под ред. В. А. Базарова.М. Мысль. 1994.С.102.

2 ***Чхартишвили Г***. Писатель и самоубийство.М. 2001. С.59.

3 ***Моисеева Е. Ю.*** Право на смерть. Перспективы легализации эвтаназии в Российской Федерации /Молодой ученый. 2015. №7. С. 569-572.

что "право на смерть - это такое же естественное право человека, как и право на жизнь, а эвтаназию следует рассматривать как разновидность реализации человеком права на смерть".[4] То есть право на смерть – обособленное право человека, не являющееся производным от других неотъемлемых прав человека.

Ю. А. Дмитриев, обращаясь к необходимости рассмотрения с правовых позиций феномена смерти, пишет: "Во-первых, это важно для определения правосубъектности лица; во-вторых, с моментом смерти одного лица может быть связано возникновение важных правовых последствий для других лиц (открытие наследства, квалификация преступления как неосторожного убийства, назначение уголовной ответственности за лишение человека жизни и другие). В-третьих, важно затронуть вопрос об обязанности умирать человека, вызванной интересами всего общества и государства. В-четвертых, причинение смерти рассматривается как нарушение права на жизнь как физического существования. В-пятых, категория смерти важна для определения понятия право на смерть, о котором все чаще говорят как о самостоятельном праве, противоположном праву на жизнь[5]. В правовой литературе исходя из таких суждений, дается определение права на смерть. Так, Е.К.Фомичев указывает, что "право на смерть - это естественное, неотчуждаемое, абсолютное, охраняемое законом право человека прекратить существование на основании собственного волеизъявления, путем самостоятельного определения времени, способа и причин ухода из жизни, реализуемое любым неопасным для общества способом"[6].

А. Малиновский указывает, что «отказывая человеку в праве на смерть, государство и общество тем самым ограничивают человека в свободе. Исключая даже саму мысль о том, что, человеку принадлежит право на смерть, отказываясь от детальной правовой регламентации данного вопроса, юристы, как представляется, находятся в плену устаревших представлений о гуманизме»[7].

Современная концепция права на жизнь в качестве структурного элемента этого субъективного права называет право на распоряжение своей жизнью. При этом содержание данного права трактуется весьма неоднозначно. Так, Ю.А. Дмитриев и Е.В. Шленева утверждают, что "Право на жизнь предполагает возможность человека самостоятельно распорядиться своей жизнью, в том числе добровольно принять решение о сроках и способах ухода из нее." [8] Авторы считают, что право на жизнь юридически закрепляет и ее пределы, т.е. право на самоубийство. По мнению И.А. Михайловой «Право на жизнь и право на смерть неразрывно связаны между собой, причем, поскольку смерть неизбежна, право на смерть как единственная форма правомочия на распоряжение жизнью является,

---

[4] ***Красиков А.Н***. Преступления против права человека на жизнь.- Саратов, Изд-во Сарат. ун-та, 2001. С.201.

[5] ***Дмитриев Ю. А***. Право человека в РФ на осуществление эвтаназии/ Ю.А.Дмитриев, Е.В. Шленева// Государство и право. 2000. № 11. С. 52

[6] ***Фомичев Е.К***.Эвтаназия как форма реализации права на смерть (общетеоретический аспект),автореф.дисс. канд. юрид. Наук. Тамбов.2006.С.16.

7 ***Малиновский А***. Имеет ли человек право на смерть? // Российская юстиция. 2002. N 8. С. 54 - 55.

8 ***Дмитриев Ю.А***., Шленева Е.В. Право человека в Российской Федерации на осуществление эвтаназии // Государство и право. 2000. N 11. С. 58 - 59.

по существу, не более чем правом сознательно выбрать подходящий управомоченному субъекту — конкретному гражданину — способ и момент ухода из жизни, действуя "по своему усмотрению"[9].

Согласно позиции М.Н. Малеиной право на жизнь состоит: из правомочия на сохранение жизни индивидуальности и правомочия на распоряжение жизнью, что и определяет содержание права на жизнь. Автор указывает, что в правомочие на сохранение жизни (индивидуальности) проявляется в возможности человека самостоятельно решать вопросы об изменении пола, пересадке органов и тканей животных. [10] Нам представляется, что сохранение жизни и сохранение индивидуальности различные категории, а изменение пола не может каким-либо образом обеспечить сохранность жизни.

В.М. Танаев формирует право на жизнь из трех блоков: собственно право на жизнь, право на риск и право на прекращение жизни (право на смерть). [11] Его трактовка первого блока очень широка и включает в себя: право на охрану здоровья и медицинскую помощь, право на благоприятную окружающую среду, право на достаточный жизненный уровень и право на защиту жизни

Особенностью такого подхода следует считать попытку определения структуры и содержания права на жизнь через выделение негативной и позитивной обязанности государства по отношению к жизни, потому что определенные проблемы возникают при изучении права на собственные юридические действия в контексте права на жизнь. Надо заметить, что многие указанные в теории трактовки права на жизнь имеют довольно широкое содержание, что приводит к тому, что рассматриваемое право "вбирает в себя" практический весь комплекс прав и свобод человека.

О.Капинус, анализируя в правовой науке подходы относительно понимания права на смерть групирует их в четыре условные группы: 1.право на смерть есть реализация человеком права на жизнь. 2. Права на смерть не существует, оно лишь аспект права на жизнь. Обращаясь к первому пункту классификации автор указывает, что субъект личного неимущественного права имеет правомочия по владению, пользованию, распоряжению объектом (нематериальным благом). Следовательно, содержание права на жизнь складывается из правомочия на сохранение жизни (индивидуальности) и правомочия на распоряжение жизнью (в том числе и на отказ от жизни).

Представляется, что ни один из приведенных подходов нельзя назвать бесспорным.

Признанием права на смерть под угрозу будет поставлено право на жизнь. Так, нельзя будет запрещать пропаганду самоубийства, а значит, не может быть уголовной ответственности за доведение до самоубийства, пособничество и помощь в ее совершении. Это, в свою очередь, приведет к сложности разграничения инсценировки самоубийства при убийстве человека и помощи в самоубийстве.

---

9 ***Михайлова И.А***. Распоряжение жизнью по действующему законодательству (философско-правовые аспекты) Российский судья, 2005, 7.

[10] ***Малейна М.Н.*** О праве на жизнь //аргументы и факты 1997. N 3

[11] ***Танаев В.М***.Право на смерть//Вестник гос.университета. Сер.Право Екатеринбург 1999. N. С.16

Конституция РА указывает, что жизнь человека является ценностью. Такой ценностный подход противоречит концепции качества жизни. Распоряжаться жизнью – это не значит решать вопрос о его конце. Распоряжение жизнью в контексте права на жизнь обозначает возможность предприятия таких шагов, которые обеспечивают продолжение жизни. Поэтому невозможно делегировать право распоряжаться своей жизнью другому человеку, ибо невозможно представить использование такого блага на жизнь другому человеку. В этом контексте невозможно представить возможность существования эвтаназии как правовой категории и уж тем более как структурного элемента права на жизнь. Кроме того, концепция качества жизни и категория "жизнь" не равноценны. Для того, чтобы определить качество жизни, нужна сама жизнь, поэтому жизнь первична и является главнейшей социальной ценностью. Относительно правомочия по распоряжению жизнью есть еще одно мнение, которое не входит в рамки вышеуказанных подходов. О. Капинус указывает, что «в некоторых случаях поведение гражданина связано с высоким риском для собственной жизни, однако оно носит общеполезный характер и в связи с этим не запрещается государством. Эвтаназия же не несет общественно полезной нагрузки». Далее, рассматривая право на свободное распоряжение своей жизнью как структурный элемент права на жизнь, автор указывает, что его следует рассматривать как возможность добровольного принятия лицом решения о поставлении своей жизни в опасное положение, обусловленное свободным волеизъявлением, направленная на достижение некой положительной цели личного или общественного характера. Примечательно, что среди форм правомерного поставления личностью своей жизни в опасное положение относят, например, отказ от медицинской помощи (хирургическое вмешательство переливания крови, курс химиотерапии и т.п.), при наличии медицинских показателей, свидетельствующее о реальной угрозе жизни.[12] Позволим себе не согласиться с этой точкой зрения. Так, если лицо не соглашается, например, на химиотерапию, какую же в этом случае полезную цель он ставит перед собой? Он лишь выбирает дальнейший путь своей жизни.

Кроме того, интересен гражданско-правовой подход к жизни как нематериальном благе. Т.А.Фадеева к числу признаков нематериальных благ относит отсутствие материального (имущественного) содержания, неотделимость от личности, а также индивидуализацию личности их обладателя. Может ли однако нематериальное благо являться обьектом соответствующего личного неимущественного права? Одним из подходов, распространенных в литературе, является то, что нематериальное благо не выражено в какой-либо обьективной (материальной) форме или неотделимо от личности его носителя (жизнь, честь, достоинство), то в отношении такого нематериального блага невозможно совершить какие-либо действия. Следовательно, по поводу этих благ не могут складываться общественные отношения, они не являются обьектом личных неимущественных прав и не существует право на жизнь или право на достоинство.

[12] Ведомости Съезда народных депутатов Российской Федерации и Верховного Совета Российской Федерации. 1993. № 33. Ст. 1318.

Такой подход выражен М.Л.Нохриной[13]. Таким образом, пользоваться многими нематериальными благами можно и не имея на них субъективного права. Нематериальное благо вполне может защищаться непосредственно или в том случае, когда поведение заинтересованного лица действительно должно быть обеспечено посредством личного неимущественного права, появляется смысл в его предоставлении.

Особенность осуществления личных неимущественных прав состоит в том, что законом определяются не пределы реализации нематериальных благ управомоченным лицом, а устанавливаются границы вторжения посторонних лиц в личную сферу и, если эти пределы нарушаются, допускается применение принудительных мер к их восстановлению. При установлении границ поведения управомоченных и обязанных лиц существенное значение приобретают нормы морали, которые устанавливаются и религией. /Общеизвестная заповедь "Не убий"/. Может ли быть способом защиты жизни причинение смерти. Абсолютно нет, поэтому говорить о том, что в право на смерть есть реализация права на жизнь не совсем верно.

Некоторые ученые указывают, что право на жизнь, не охватывающее право на смерть, в действительности выступает не как право, а как обязанность жить. Н. Е.Крылова указывает: "Если допустить, что человек не только имеет право, но и обязан жить, то выполнение такой обязанности должно было бы повлечь для него ответственность, как это происходит в других случаях неисполнения обязанностей. Кроме того, обязанности жить должна была бы соответствовать и обязанность подвергаться медицинского вмешательства, в случаях, когда жизнь человека находится под угрозой. Однако, согласно основам законодательства РФ необходимым предварительным условием медицинского вмешательства является информированное или добровольное согласие гражданина... Нет никаких правовых оснований обязывать человека, страдающего тяжелой, угрожающей его жизни болезнью, например, раком подвергнуться лечению".[14]

Закон ставит под защиту блага и в определенных границах дает возможность использования этого блага, но, грубо говоря, не позволяет портить его, потому что оно находится под охраной государства и права. Выход за рамки дозволенных границ использования блага является противоправным, становится злоупотреблением правом. Так, УК Италии определяет, что освобождение от уголовной ответственности лица, действовавшего с согласия потерпевшего, возможно только, если последний дал согласие на причинение вреда его личному или имущественному праву, которым он действительно владеет. При этом согласие на причинение вреда может быть дано только в пределах допустимого законом распоряжения своим правом.

Поэтому представляется, что запрет эвтаназии не является своеобразным установлением юридической обязанности жить. Оно, скорее всего, запрет

---

13 ***Норхина М.Л.*** Гражданско-правовое регулирование личных неимущественных отношений, не связанных с имущественными Изд-во Р. Асланова «Юридический центр Пресс». 2004.

[14] ***Крылова Н. Е.*** «Эвтаназия: уголовно-правовой аспект» // Вестник московского университета серия 11 право, 2000, № 2, С.23

злоупотребления правом, запрет уничтожения блага.

Таким же злоупотреблением является осуществление суицида, что однако в подавляющем большинстве законодательств мира не является уголовно-наказуемым преступлением, таковым не является и покушение на него. Однако связано ли это с тем, что самоубийство – это форма реализации права человека на смерть, ведь в таком случае верно суждение тех авторов, которые указывают на противоречие о том, что суицид в национальном законодательстве декриминализирован, а эвтаназия запрещена.[15] Установлено, что 90% людей, покончивших жизнь самоубийством, в момент смерти страдали тем или иным психическим заболеванием, нередко в тяжелой форме. В основу многих случаев лежит дезадаптация человека с обществом. Как указывает П.Ширихев, основная причина суицида – ощущение человека бессмысленности своего существования, оно имеет связь с положением, в котором находится данное общество, в частности с экономической нестабильностью, идеологической неразберихой, переоценкой общественных норм морали.[16] Поэтому и частная, и общая превенция, а равно исправление человека, нельзя добиться путем применения наказаний. Превенция самоубийства может быть достигнута лишь решением тех общественных проблем, которые привели человека к безысходности, обеспечением достойной жизни. Обычно в росте количества самоубийств значительную роль играет неправильная политика государства, когда не уделяется внимания обеспечению реализации всех элементов права на жизнь, особенно права на достойный уровень жизни и права на свободное духовное развитие. Следовательно, не потому, что государство признает за человеком право на самоубийство и поэтому не устанавливает уголовно-правовой запрет, а потому, что уголовно-правовыми средствами не может влиять на явление. Поэтому, реабилитируя человека после попытки самоубийства, государство и общество исправляют свои ошибки, в обратном случае государство снимает с себя всякую ответственность за духовное здоровье как общества в целом, так и отдельных его членов.

Если даже исходить из того предположения, что человек имеет право самостоятельно распоряжаться своей жизнью, вплоть до отказа от нее, то эвтаназия как одно из средств осуществления этого права не может быть рассмотрена, потому что открытым остается вопрос о возможности переложения функции по прекращению жизни на другое лицо, например, врача. Кроме того, в этом случае нет необходимости в оказании медицинской помощи несостоявшимся самоубийцам, наоборот, врач должен не только облегчить ему страдания, но и помочь довести задуманное им до конца.

Имеется ли такое право или обязанность у врача? Законодательство об этом умалчивает, хотя справедливости ради следует указать, что ответы на некоторые

---

15 ***Исаев Ю.С., Воропаев А.В., Диллис А.Д., Караваева Е.И.*** Эвтаназия, определение медико-правовых аспектов “права на достойную жизнь”// Вопросы конституционного права. 2004.

16 ***Ревяко Т. И., Трус Н. В.*** Катастрофы сознания. Энциклопедия самоубийств. серия "Энциклопедия преступлений и катастроф" Изд. Литература, 1997. http://www.bibliotekar.ru/

вопросы можно косвенно получить, исследуя правовые акты, определяющие правовые основы оказания медицинской помощи. При совершении самоубийства появляется угроза опасности жизни человека, а это одно из оснований, когда медицинская помощь будет оказываться без согласия самого пациента, и в любом случае медик, оказывая помощь несостоявшемуся самоубийце относится к свершившемуся как к несчастному случаю, и воля самого пациента отходит чуть ли не на последний план.

Отметим, что часто формой активной эвтаназии называют самоубийство, ассистируемое врачом. Однако данное деяние, по нашему мнению, не может считаться эвтаназией, потому что совершается самим пациентом. Заметим, что такое различие между эвтаназией и самоубийством при врачебном содействии можно проследить и в законодательстве многих стран, которые в качестве разграничительного указывают критерий «распределения ролей», то есть кто совершил объективную сторону преступления, врач или сам больной. В первом случае – это убийство по просьбе больного, во втором случае – это содействие самоубийству. В частности, уголовная ответственность за подстрекательство и помощь в самоубийстве предусмотрена в УК Австрии, Аргентины, Великобритании, Венгрии, Испании, Канады, Нидерландов и других стран.

Кроме добровольной и недобровольной эвтаназии в литературе указывается в качестве одного из видов эвтаназии также непреднамеренная эвтаназия, которая однако не имеет широкого применения. Joe Jenkins указывает, что таковым является убийство из сострадания тех дееспособных больных, которые в состоянии выразить свою волю, но которым вопреки их воле делается эвтаназия.[17] Однако данный вид эвтаназии не может считаться таковым в уголовно-правовом аспекте, так как его осуществление будет влечь ответственность на общих основаниях и причина этому – отсутствие волеизъявления компетентного больного.

Новый проект УК РА предусматривает ст.169, которая имеет следующую редакцию: «Предоставление предметов или орудий для совершения самоубийства или умышленное пособничество в его совершении, если лицо не было лишено возможности осознать или действовать по своей воли, и если отсутствуют признаки состава ст. 166 УК РА». Хотя необходимо отметить, что под эвтаназией понимают и содействие при самоубийстве, 18 тем не менее содействие в самоубийстве и эвтаназии, то есть в убийстве по просьбе больного не одно и то же. Так, А.Н. Красиков указывал, что - содействие самоубийству, когда человек сам решил расстаться с жизнью, но, хотя его желание и возникло без постороннего вмешательства, ему все же по его просьбе была оказана помощь в лишении себя жизни.

Причем сам человек, решивший совершить сиуцид, вовсе не обязательно смертельно больной и страдающий от физических страданий лицо. Лицо, содействующее в самоубийстве, может предложить свою помощь, исходя и из

---

[17] ***Joe Jenkins***. Ethics and religion. P. 92-93

[18] ***Рыбин В.А***. Проблема эвтаназии в биоэтике и медицине как предпосылка аксиоматизации культуры Первые Лойфмановские чтения (Аксиология научного познания): Материалы Всероссийской научной конференци. Вып.2. Екатеринбург, 2006. С. 306-315.

совершенно иных мотивов, нежели сострадание, например, корыстных. Вместе с тем, при эвтаназии действие субъекта предполагает определенную цель прекращения физически невыносимых страданий.

Надо заметить, что ассестируемое самоубийство и эвтаназия не отождествлены и в "Положениях о самоубийстве с помощью врача" ВМА где указывается, что самоубийство с помощью врача, подобно эвтаназии (курсив наш) является неэтичным и должно ныть осуждено медиками. Эвтаназия именно акт лишения одним человеком другого, поэтому норма о содействии самоубийству, не может применяться к случаям склонения к эвтаназии. Нам представляется, что это законодательный пробел.

Любой медицинский работник направляет свою деятельность на облегчение страданий пациента, на борьбу за его здоровье и жизнь. Однако ситуация, в которой эти составляющие начинают противоречить друг другу, то есть когда сохранение жизни неминуемо порождает и усугубляет тяжелые страдания, становится для него трудноразрешимой нравственной проблемой.

Весьма неоднозначно отношение в правовой литературе к уголовно-правовой квалификации эвтаназии. Некоторые ученые считают, что эвтаназию необходимо включить в систему обстоятельств, исключающих преступность деяния. Такого мнения придерживается, например, А. Денисова.[19] М.Д.Шаргародский, В.И. Ткаченко указывают на эвтаназию как на деяние, совершенное при крайней необходимости.[20] Надо заметить, что говоря об эвтаназии как об обстоятельстве, исключающем преступность деяния, ученые рассматривают ее в контексте согласия потерпевшего. Предложенный проект УК РА также включает данное обстоятельство в систему, исключающем преступность деяния. При реформировании российского законодательства вопрос об учете такого вида частной воли как согласие потерпевшего, так же обсуждался, однако не был включен в УК. «Согласие потерпевшего, - как отмечает Е.К.Газданова, - является "многоаспектной и комплексной проблемой, ее отдельные компоненты имеют как правовое, так и морально-этическое содержание. Она представляет существенный интерес для правовых и философских наук, а также для недавно оформившегося междисциплинарного направления в этическом учении биоэтики».[21] А.Н.Красиков указывает, что «согласие потерпевшего дает оценку последствий отказа от наиболее важных прав самого потерпевшего, таких прав как жизнь, здоровье, физическая свобода, которые выступают объектами уголовно-правовой охраны». Согласие потерпевшего, так сказать, ''многофункциональная'' правовая категория, ее роль не исчерпывается лишь признанием или не признанием его обстоятельством, исключающим преступность деяния. Автор в качестве условия правомерности согласия указывает «то, что согласие распространяется на те права и интересы, которые находятся в свободном

[19] ***Денисова А.***Эвтаназия как обстоятельство, исключающее преступность деяния ВЮИ Минюста России Владимир 2004.С.107-109.

[20] Советское уголовное право. Часть общая. Л. 1960. С. 370.

[21] ***Газданова, Е. К.*** Согласие потерпевшего в уголовном праве: понятие, характеристика, значение : автореф. Дис…канд юрид. наук. М. 2011. С. 24

распоряжении своими личными правами и интересами».[22] Среди прав, которыми может распоряжаться лицо, могут быть половая свобода, честь или достоинство. Однако представляется, что согласие лица нельзя считать правомерным, если согласие дается на лишение жизни. В таких случаях это или привилегирующий признак состава преступления или обстоятельство, смягчающее наказание.

Большинство исследователей все же указывают, что согласие потерпевшего не устраняет преступность деяния лица, лишившего жизни потерпевшего. Как отмечает И.Я.Фойницкий убийство не перестает быть убийством, хотя и было сделано с согласия убитого.[23] Заметим, что обстоятельства, исключающих преступность деяния, отсутствуют общественная опасность и уголовная противоправность. По своему социальному содержанию они полезны, поощряются моралью и законом. Однако эвтаназия не поощряется моралью и не является деянием, устраняющим общественную опасность деяния. И это ни коим образом не устраняется даже при наличии согласия потерпевшего. Таким образом, такое деяние должно влечь уголовную ответственность.

Заметим, что в теории уголовного права дискуссия ведется также относительно конструкции состава эвтаназии среди тех ученых, которые признает ее убийством. Здесь можно выделить два подхода. Так, Г.Н. Борзенков указывает, что «Никто не вправе приводить в исполнение смертный приговор, вынесенный человеком самому себе...эвтаназия — то же убийство. Смягчающие же обстоятельства такого убийства, включая мотивы, если они действительно имели место, могут быть учтены при выборе наказания».[24] Другие исследователи высказываются за включение в УК привелигированного состава эвтаназии.[25] Авторы указывают на необходимость включения в УК специального состава, представляющего ответственность за убийство с согласия потерпевшего, признавая наличие согласия потерпевшего в качестве конструктивного признака, который может стать дифференцирующим для ответственности основанием.

Нам представляется, что убийство с согласия потерпевшего не охватывает только случаи эвтаназии, так как такое согласие может выразить и лицо, которое не является больным и не страдает от невыносимых физических болей. Следует согласиться с Н.С.Таганцевым, который указывает, что лишение жизни, произведенное по желанию или требованию лица, остается убийством, так как отсутствие собственного желания пострадавшего не является необходимым условием преступности лишения жизни. Просьба потерпевшего, таким образом, может быть лишь обстоятельством, смягчающим уголовное наказание. Другое дело, что конструктивным признаком специального состава должен стать цель лишения жизни. При эвтаназии всегда наличествует цель, без которой деяние перестает считаться собственно эвтаназией и превращается в качественно иную категорию.

---

[22] ***Красиков А.Н***.Сущность и значение согласия оптерпевшего в советском уголовном праве. Саратов .1976. С.58

[23] Фойницкий И.Я. Курс уголовного права. Пг.,1916. С. 130

[24] Курс уголовного права. Особенная часть. Том 3: Учебник для вузов. Под ред. Г.Н. Борзенкова и В.С. Комиссарова. М.: Зерцало-М, 2002.С. 144.

[25] ***Князев Д.С***. Эвтаназия и ее уголовно-правовая оценка/ Российский следователь 2010 Ном.16 С. 30

Анализ составов убийств, предусмотренных в УК, указывает, что по крайней мере в двух случаях цель становится квалифицирующим признаком. Таковым являются убийство с целью использования органов и тканей и убийство в целях облегчения или скрытия другого преступления. Это значит, что цель может быть элементом, который может учитываться именно при дифференциации уголовной ответственности, а не при индивидуализации наказания.

Показательно, что проект УК РА предусмотрел эвтаназию в качестве специального состава убийства, однако сама конструкция состава имеет ряд существенных недостатков. Так, согласно ему с обьективной стороны эвтаназия - не лишение жизни, а именно ускорение смерти, но ускорение может и не привести к наступлению смерти, а обязательность наступления такого последствия не охватывается рассматриваемым составом. Между тем, все составы убийств материальные. К.А. Чернега, ссылаясь на научный комментарий УК РФ, указывает, что акт убийства квалифицируется как насильственные, предполагающий насилие над личностью потерпевшего. Таким образом, объективная сторона криминальной эвтаназии не совсем тождествена объективной стороне убийства.[26] Объектом убийства является жизнь, которая отнимается помимо воли носителя этого блага. О.С. Капинус пишет, что предполагаемый объект убийства по мотиву сострадания значительно уже объекта убийства, предусмотренного статьей 105 УК РФ, поскольку обьектом эвтаназии может быть жизнь только неизлечимого больного (например, из увеченного) человека, обреченного на мучительную смерть, причем лишение жизни согласуется с волей потерпевшего.[27] Таким образом, выделение отдельного состава эвтаназии приведет к более полной реализации принципа справедливости в уголовном праве, поскольку наказание за осуществление эвтаназии будет соответствовать характеру и степени общественной опасности преступления, обстоятельствам его совершения и личности виновного.

Надо заметить, что Закон РА о медицинском обслуживании и медицинской помощи в статье 5 указывает, что каждый при обращении за медицинской помощью, а также при получении медицинской помощи и обслуживании имеет право отказаться от медицинского вмешательства, кроме случаев, предусмотренных в законе. Последними являются указанные в статье 16 случаи: угрожающее жизни человека опасность и болезнь, являющаяся опасным для окружающих.Указывается, что в РА запрещается эвтаназия, т. е. ускорение смерти по согласию больного какими-либо действиями или средствами, а иные лица, которые умышленно подстрекают к совершению эвтаназии или осуществляют его, несут ответственность по установленному УК РА порядку.

Умышленное бездействие врача, выразившееся в неосуществлении реанимации, которую он должен был и мог произвести, при отсутствии признаков наступления биологической смерти, образует так называемое бездействие-невмешательство, влекущее уголовную ответственность за неоказание

[26] ***Чернега К.А***. Правовые проблемы эвтаназии России/Гражданское право и право. Ном.1.2003.

[27] ***Капинус О.С***. Убийства: мотивы и цели – М, издательство ИМПЭ-ПАБЛИШ. 2003. С. 204

помощи больному, но не убийство. Аргументы, которые при этом приводятся, сводятся к следующему: врачи-реаниматологи не имеют отношения к причинам, приведшим пациента к угрожающему жизни состоянию (клинической смерти), выступающему в качестве основания для проведения реанимационных мероприятий. В.А.Глушков также указывает, что при эвтаназии действия виновных в подобной ситуации должны квалифицироваться либо убийством по согласию, либо как неоказание помощи больному лицом медицинского персонала по соответствующим условиям.[28] Предусмотренные УК РА составы - неоказание помощи больному и оставление в опасности - на первый взгляд устанавливают уголовную ответственность за осуществление пассивной формы эвтаназии, однако для разграничения эвтаназии и данных составов следует анализировать их субъективные стороны. Пассивная эвтаназия не может квалифицироваться как неоказание помощи больному, так как квалифицированный состав неоказания помощи больному предполагает лишь неосторожную форму вины по отношению к смерти потерпевшего. Между тем, при пассивной эвтаназии наличествует направленный умысел. При эвтаназии деяние представляет собой бездействие, выраженное в неоказании помощи больному и направленное на такое последствие, как смерть потерпевшего, то есть неоказание помощи является признаком состава убийства, является элементом его объктивной стороны. Представляется, что в первом случае это склонение к эвтаназии, за которую ответственность не предусматривается в Уголовном законе.

Заметим, что во Франции пассивная эвтаназия нередко квалифицируется как преступное неоказание помощи больному, однако там же убийство законного или естественного родственника по восходящей линии либо приемных отца или матери, а также убийство лица, особая уязвимость которого по причине его возраста, болезни, увечья, физического или психического недостатка очевидна или известна исполнителю, расценивается как квалифицированный вид убийства.

Общественная опасность убийства посредством бездействия не отличается от убийства посредством активного действия. Ответственность врача наступает за неприятие мер, которые могут нейтрализовать действия процессов, которые приводят к смерти. Как указывают В.Е. Стеценко и Н.А. Федорова убийство посредством бездействия заключается в доказанности существования обязанности действия. “Анализ современного закона о медицинском обслуживании доказывает, что помощь при угрозе жизни пациента без его согласия возлагается на врача, то есть на него возлагается обязанность действовать. Убийство путем бездействия предполагает, что на виновном лежала обязанность предотвратить наступление смертельного исхода. Например, смертельно больному человеку не была сделана необходимая инъекция для продления жизни”.[29] Что касается склонения больного к эвтаназии, о котором говорится в Законе об обслуживании населения, ответственность за него в УК не предусмотрена. Под склонением больного к эвтаназии, на наш взгляд, следует понимать возбуждение в нем

[28] ***Глушков В.А***. Социологические правовые аспекты эвтаназии .1992. С. 18

[29] Российское законодательство об эвтаназии/ электронное научное издание ученой заметки ТОГУ. 2014. Том 5. Ном. 4. С. 486-494

решимости уйти из жизни и обратиться с просьбой об эвтаназии к врачу. Такого рода действия нельзя рассматривать с позиций института соучастия или какого-либо другого уголовно-правового института. Даже если признать акт эвтаназии формой самоубийства при помощи врача, то и в этом случае нельзя наказать лицо, склонившее больного к эвтаназии.

Думается, что следует привести в соответствие друг с другом правовые акты, установив уголовную ответственность и за склонение к эвтаназии.

Объектом убийства является жизнь, которая отнимается помимо воли носителя этого блага. О.С. Капинус, что «предполагаемый объект убийства по мотиву сострадания значительно уже объекта убийства, предусмотренного ст. 105 УК РФ, поскольку объектом эвтаназии может быть жизнь только неизлечимо больного (например, изувеченного) человека, обреченного на мучительную смерть, причем лишение жизни согласуется с волей потерпевшего» . [30]

Как уже указывалось, эвтаназия всегда преполагает цель, она является его обязательным элементом, без нее эвтаназия превращается в простое убийство. Хотя весьма занимателен тот факт, что в значительной группе зарубежных стран в конструкции убийства по просьбе потерпевшего вообще нет упоминания о мотивах сострадания, целях избавления от страданий или болезни жертвы.

Так, УК Австрии в § 77 предусматривает: "Кто убивает другого человека по его серьезному и настойчивому требованию, наказывается лишением свободы на срок от шести месяцев до пяти лет". За склонение к самоубийству установлено аналогичное наказание (§ 78).

В Японии, устанавливется, что "тот, кто убил человека по его настоянию или с его согласия, наказывается лишением свободы с принудительным физическим трудом или тюремным заключением на срок от шести месяцев до семи лет". Такая законодательная конструкция позволяет трактовать его более широко, чем собственно эвтаназию.

Надо заметить, что цель сама по себе не входит в список обстоятельств, смягчающих наказание или ответственность, Как известно, цель может быть квалифицирующим признаком состава, а это значит, что цель может быть элементом, который должен учитываться при квалификации преступления, а не при индивидуализации наказания. То есть нам представляется, что состав эвтаназии оправдано отмечено в проекте УК РА в качестве специальной нормы по отношению к основному виду убийства и требуется ее выделение в отдельную ст. 104.1 УК РА.

Однако как уже отмечалось, сама конструкция состава эвтаназии несколько сомнительна в том плане, что уголовная ответственность наступает не за лишение жизни чековека, которая является свойственным для всех видов убийств последствием, а ускорение смерти неизлечимого больного.

Немаловажным мометом при квалификации преступления следует считать то обстоятельство, что то просьба потерпевшего должна быть единственным побудителем такого преступного деяния.

---

[30] ***Капинус О.С.*** Убийства: мотивы и цели. М. Изд- во ИМПЭ-ПАБЛИШ, 2003. С. 204

Исходя из вышеизложенного можно предложить следующие законодательные изменения:

1. Статью, предусматривающую ответственность за эвтаназию, изложить в следующей редакции:

Умышленное лишение жизни умирающего больного, осуществленное медицинским работником по просьбе и на основании выраженного согласия информированного больного по мотиву сострадания и с целью его прекращения его от непрекращающихся и невыносимых физических страданий, обусловленных его неизлечимой болезнью или патологической травмой.- наказывается….

Примечание. Статья не применяется в случае применения эвтаназии на основании согласия, сформулированного под воздействием обмана, заблуждения насилия, а равно при согласии несовершенолетнего, лица, страдающего психическим расстройством или страдающего депрессивным состоянием.

2.Дополнить УК РА составом, предусматривающим ответственность за подстрекательство и помощь при самоубийстве, совершенные по эгоистическим мотивам.

3. К статье, предуматривающей уголовную ответственность за подстрекательство и помощь при самоубийстве, в качестве примечания указать следующее положение: “Лицо, побудившее к совершению самоубийства несовершенолетнего, лица, находящегося в состоянии опьянения, умственного или психического расстройства, подлежит уголовной ответственности за совершение деяния, предусмотренного в статье 104 УК РА данного Кодекса.”

4. Дополнить п.5 ч.1 статьи 62 УК РА указанием на цель совершения преступления.

Լուսինե Վարդանյան - *Էվթանազիայի իրավական հիմնախնդիրները:*-Հոդվածում ուսումնասիրվում են էվթանազիայի հասկացությունը և ձևերը, նշվում է դրա կիրառման հետ կապված հիմնախնդիրների լուծման արդիականության մասին, տրվում է էվթանազիայի սահմանումը, ինչպես նաև նշվում է օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը: Գրականության մեջ էվթանազիայի հիմնախնդիրը սուր բանավեճերի կիզակետում է, հաշվի առնելով նրա բարոյական կողմը: Որոշ դեպքերում էվթանազիան դիտարկվում է մահվան իրավունքի համատեքստում:

Քրեական իրավունքը չի կարող թույլ տալ զրկել կյանքից մարդուն նույնիսկ դրական դրդապատճառների առկայության դեպքում:

Lusine Vardanian - *Legal issuies of euthanasia.* - The article explores the concept and forms of euthanasia, according to its application to problems of modernity, is given the definition of euthanasia, as indicated by the need for legislative amendments. In the literature and in the public debate, there are also arguments in favour of euthanasia and physician-assisted suicide. One such argument invokes the right to die. The regulation of euthanasia by the criminal law has tended to be one of the more contentious areas of medical law, and continues to be the subject of debate. Few areas of the criminal law have been so consistently the target of reformist pressure, and certainly few areas have so strongly resisted change. Understandably, legislators are unwilling to involve themselves in a matter of law reform which engenders such moral disagreement. The criminal law does not countenance the taking of life, no matter how good the motive.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻՑ

ԷԴԳԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հոդվածում համակարգված ուսումնասիրվել է Հայաստանի առաջին հանրապետության կոալիցիոն կառավարության փորձը: Հիմնավորված է հայ իրականության մեջ առաջին կոալիցիոն կառավարության ձևավորման հրամայականները: Արդի քաղաքական ժամանակը ճիշտ գնահատելու համար վերլուծված է Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920 թթ.) կոալիցիոն կառավարության գործունեությունը:

Բանալի բառեր. կուսակցություն, կոալիցիա, կառավարություն, կոալիցիոն կառավարություն, խորհրդարան, մեծամասնություն, երկխոսություն, կուսակցական համագործակցություն, ընդդիմություն, ընդդիմադիր կուսակցություն:

1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախության հռչակումից հետո Հայոց Ազգային խորհրդի հիմքի վրա կազմվեց ՀՀ գերագույն օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը), որը նույն թվականի օգոստոսի 1-ից իր աշխատանքները սկսեց մայրաքաղաք Երևանում: 1918 թ. հունիսի 7-ին Հայոց Ազգային խորհուրդը (13 կողմ և 2 դեմ) կառավարության նախագահ ընտրեց **Հովհաննես Քաջազնունուն**, որին և հանձնարարվեց կազմել կաբինետը: Վարչապետ ընտրված Հ. Քաջազնունին **կոալիցիոն (խառը)** կառավարության ձևավորման նպատակով ամբողջ հունիս ամսվա ընթացքում կուսակցությունների ներկայացուցիչների հետ վարած բանակցություններում լուրջ դժվարությունների հանդիպեց: Հայ ժողովրդականները (Մ. Պապաջանյան և Ս. Հարությունյան) հրաժարվեցին մտնել նորակազմ կաբինետ, որովհետև ցանկանում էին, որ Մ. Պապաջանյանին տրվի վարչապետի պաշտոնը, ուստի և՝ կաբինետի ձևավորման իրավունքը[1]: Ժողովրդականները պահանջում էին, որ դաշնակցականները հեռանան քաղաքական ասպարեզից՝ գտնելով, որ Թուրքիայի հետ ընդհանուր լեզու գտնելու համար անհրաժեշտ է քաղաքական նոր ուժ: Նոր ուժ ասելով՝ նրանք նկատի ունեին իրենց[2]: Հ. Քաջազնունին, բացի ժողովրդականներից, կառավարության մեջ մտնելու առաջարկ էր արել թե՛ էսէռներին և թե՛ սոցիալ-դեմոկրատներին, սակայն տարբեր պատճառաբանություններով մերժում էր ստացել: Հայ քաղաքական կուսակցությունները չկարողացան համաձայնության գալ միմյանց հետ կուսակցական սկզբունքով **կոալիցիոն (խառը)** կառավարություն կազմելու համար: Տեսնելով, որ այդ ճանապարհով գործը չի հաջողվում, հունիսի վերջին վարչապետ Հ. Քաջազնունին կառավարություն կազմեց անհատական կարգով: Անդրանիկ կառավարության մեջ մտան չորս դաշնակցական (Հ. Քաջազնունի՝ նախարար-նախագահ, Ալ. Խատիսյան՝ արտաքին գործերի նախարար, Ա. Մանուկյան՝ ներքին

[1] ***Հակոբյան Ա.*** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.). Երևան, 2005 թ., էջ 46:

[2] ***Վրացյան Մ.*** Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958թ., էջ 178:

գործերի նախարար, Խ. Կարճիկյան՝ ֆինանսների նախարար) և երկու անկուսակցական (զորավար Հ. Հախվերդյան՝ զինվորական և մի փոքր ուշ՝ հուլիսի 28-ից Գ. Պետրոսյան՝ արդարադատության նախարար): Վերջինս համակիր էր Ժողովրդական կուսակցությանը: ՀՅԴ անդամ Հ. Քաջազնունին, լինելով պետականության ջատագով, ջանում էր ուժեղացնել պետական իշխանությունը և կուսակցական կառույցներին հնարավորին չափ հեռու պահել պետական, կառավարության գործերին միջամտելուց և ուղղակի ցուցումներ տալուց[3]:

1918 թ. աշնանը տեղի ունեցավ **Հ. Քաջազնունու կառավարության առաջին ճգնաժամը:** Հանրապետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր իրավիճակի թելադրանքով՝ բավական բարդ հակասություն էր գոյացել խորհրդարանական մեծամասնության և կառավարության միջև: Խորհրդարանի ներսում և նրա պատերից դուրս քննադատության թիրախ էր դարձել կառավարությունը, որովհետև անցնում էին ամիսներ և երկրում դրական տեղաշարժեր չէին նկատվում: Խորհրդարանը մի տեսակ անգործության էր մատնվել, լուրջ կերպով կաղում էր օրինաստեղծ աշխատանքը: Քննադատությունը գնում էր ոչ միայն ընդդիմության, այլև հենց իրենց՝ դաշնակցականների կողմից: Կառավարության հասցեին դժգոհության ու անբավականության ելույթներ եղան ՀՅԴ Հայաստանի շրջանային ժողովի նիստերի ժամանակ (1918 թ. սեպտեմբեր): Կառավարության ճգնաժամին նպաստեց նաև օրավուր խորացող հայ-վրացական սահմանային վեճը: Այս առնչությամբ խորհրդարանում Հ. Քաջազնունու կաբինետը մեղադրվում էր «ձախից»՝ արկածախնդրության, հրահրիչ քաղաքականության, իսկ «կենտրոնից» ու «աջից»՝ պասիվության մեջ: Չնայած սեպտեմբերի վերջերից փաստացիորեն սկսվել էր կառավարության ճգնաժամը, սակայն վարչապետը պաշտոնապես խորհրդարանին հրաժարական չէր ներկայացրել: Մինչև 1918 թ. հոկտեմբերը Հայաստանի պետականության հեղհեղուկ վիճակը և նրա գլխին կախված արտաքին՝ թուրքական մահացու վտանգը իրենց դրոշմն էին թողնում հայ քաղաքական կուսակցությունների գործելակերպի վրա, հարկադրում նրանց հնարավորին չափ լինել ավելի զուսպ ու ըմբռնողական: 1918 թ. աշնան ամիսները հանդիսացան հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումների հստակեցման ժամանակաշրջան: Արդեն 1918 թ. աշնանը ժողովրդականները ցանկություն հայտնեցին մտնել կոալիցիոն (խառը) նոր կառավարության մեջ և ՀՅԴ-ի հետ միասին կիսել պատասխանատվությունը ժողովրդի, հայրենիքի ու պետության առջև: Հոկտեմբերի սկզբներին Թիֆլիսում գումարված ՀԺԿ երկրորդ խորհրդաժողովը կայացրեց հետևյալ որոշումը. *«Նկատի ունենալով Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական դրությունը՝ ժողովը անհրաժեշտ է համարում, որ Հայաստանի կառավարությունը կազմվի կոալիցիոն սկզբունքով»*: **ՀԺԿ ԿԿ սկզբունքային որոշում ընդունեց մտնել կոալիցիոն (խառը) նոր կառավարության մեջ:** Հոկտեմբերի երկրորդ կեսին Թիֆլիսից Երևան ժամանեցին ՀԺԿ ԿԿ-ի անդամներ Մ. Բերբերյանը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը, Ս. Հարությունյանը, Լ. Ղուլյանը և ուրիշներ: Հոկտեմբերի 31-ին կայացած ՀՅԴ և ՀԺԿ ներկայացուցիչների խորհրդակցությունում կայացվեց այդ համաձայնությունը՝ ՀԺԿ-ականները պահանջում էին կառավարության կազմի կեսը: Նախարար-նախա-

[3] ***Հակոբյան Ա.*** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.). Երևան, 2005 թ., էջ 48:

գահ Հ. Քաջազնունին միաժամանակ բանակցություններ էր վարում խորհրդարանի մյուս խմբակցությունների ավագների հետ՝ կոալիցիոն (խառը) կառավարություն ձևավորելու շուրջ: ՀԺԿ-ից զատ՝ խառը կառավարության մեջ մտնելու հավակնություններ ունեին նաև սոցիալ-դեմոկրատները և էսէռները: Բանակցությունների ընթացքում պարզվեց, որ սոցիալ-դեմոկրատները պահանջում են առնվազն երկու տեղ և անպայման՝ ներքին ու արտաքին գործոց նախարարների աթոռները: «Զախակողմյան» կուսակցությունները առանձնապես շատ էին խորշում ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանից, որը «կարգ պահելով»՝ նրանց նկատմամբ վարում էր կոշտ ու զսպող քաղաքականություն: Զախերն ուզում էին ստանձնել հատկապես այդ պորտֆելը, որպեսզի ազատ, հեղափոխական գործունեություն ծավալեն ու լայն հնարավորություն ստանան: Յուրահատուկ վարքագիծ ցուցաբերեցին էսէռները: Նախնական հավակնություններից հետո նրանք հրաժարվեցին մտնել նոր կազմվելիք կոալիցիոն (խառը) կաբինետ: Էսէռների անդրկովկասյան տարածաշրջանային կոմիտեն հավանություն տվեց խմբակցության այդ քայլին: Հայ էսէռները, հրաժարվելով հանդերձ մտնել նոր կազմվելիք կառավարության մեջ, պահանջեցին, որ արտաքին գործերի նախարարի պորտֆելը չտրվի ժողովրդականներին, իսկ ներքին գործերինը՝ սոցիալ-դեմոկրատներին: Բանակցությունների արդյունքում՝ խառը կառավարության մեջ մտնելուց հրաժարվեցին նաև սոցիալ-դեմոկրատները:

ՀՅԴ-ն առանձնապես մեծ հակում չուներ համագործակցելու «ձախ» ընդդիմության հետ: ՀՅԴ ընդառաջ գնաց ՀԺԿ հետ՝ կազմելու ՀՀ առաջին խառը կառավարությունը: Բանակցությունները շարունակվեցին միայն «կենտրոնի» (ՀՅԴ) և «աջակողմի» (ՀԺԿ) միջև: ՀՅԴ և կառավարությունը լավ էին հասկանում, որ իրենք խորհրդարանում չունեն կայուն մեծամասնություն. 46-ի դիմաց՝ ընդամենը 18 տեղ: Հասկանալի է, որ ձայների նման հարաբերակցության դեպքում կառավարության ամեն մի ձեռնարկ կամ ծրագիր կարող էր խորհրդարանում տապալվել: Ուստի, անհրաժեշտ էր գնալ փոխզիջման: Դաշնակցությունը նախընտրեց համագործակցել ազգային նպատակներ հետապնդող ժողովրդականների հետ: ՀՅԴ ընդառաջ գնաց ժողովրդականներին. ՀՅԴ և ՀԺ կուսակցություններին արտաքին քաղաքականության հարցում իրար էին մերձեցնում այն, որ Հայկական հարցում երկուսն էլ միակամ էին, իսկ ներքին սոցիալ-տնտեսական քաղաքականության ասպարեզում Դաշնակցությունը, իրեն անվանելով «սոցիալիստական», երես դարձրեց իսկական սոցիալիստներից, որովհետև գտնումէր, որ ընկերվարային բարեփոխումները ՀՀ-ում դեռևս անժամանակ են ու չհասունացած[4]: Ամերիկահայ պատմաբան Ռ. Հովհաննիսյանի կարծիքով՝ Դաշնակցությունը Ժողովրդական կուսակցության հետ խառը կառավարություն կազմելու համաձայնություն տվեց նաև այն դրդապատճառով, որ «ակնկալվում էր ստանալ Արևմուտքի դրամատիրական պետությունների աջակցությունը, որովհետև Դաշնակցության ծրագիրը ընկերվարական էր: Այս քայլը պիտի բարձրացներ հանրապետության հեղինակությունը[5]»: Համաձայնություն կայացնելով ժողովրդականների հետ՝ Դաշ-

[4] ***Հակոբյան Ա.*** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.). Երևան, 2005 թ., էջ 90-93:

[5] «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

նակցությունը հույս ուներ (ՀԺԿ խմբակցության հետ միասին) խորհրդարանում ստեղծել կայուն մեծամասնություն և դրանով իսկ բարձրացնել խորհրդարանի արդյունավետությունը:

Վերոգրյալ նախապատրաստական քայլերից ու նկատառումներից հետո՝ 1918 թ. նոյեմբերի 4-ին, գումարված խորհրդարանի նիստում լսվեց կառավարության հրաժարականի հարցը: Պատգամավոր Ս. Թորոսյանը (ՀՅԴ) առաջարկեց ընդունել կառավարության հրաժարականը և հանձնարարել նույն Հ. Քաջազնունուն կազմել նոր կաբինետ: Այդ առաջարկին դեմ արտահայտվեցին սոցիալ-դեմոկրատական և էսեռական խմբակցությունները: Սոցիալ-դեմոկրատները Հ. Քաջազնունու փոխարեն վարչապետի թեկնածու են առաջադրում Խ. Կարճիկյանին: Ի վերջո, ձայների մեծամասնությամբ (25 կողմ, 14 դեմ և 1 ձեռնպահ) հանձնարարվում է Հ. Քաջազնունուն կազմել **կոալիցիոն (խառը) նոր** կառավարություն: Համաձայն նախնական պայմանավորվածության՝ նոր կաբինետը կազմվեց միայն ՀՅԴ և ՀԺԿ ներկայացուցիչներից: «Ձախակողմյան» սոցիալիստական կուսակցությունները չեզոքացվեցին խառը կառավարությանը մասնակցելուց: Վարչապետ Հ. Քաջազնունու ներկայացմամբ նոր կառավարության մեջ մտան 4 դաշնակցական, 4 ժողովրդական և 1 անկուսակցական: Նրանք էին՝ Ս. Տիգրանյան (արտաքին գործերի նախարար, ՀՅԴ), Ա. Մանուկյան (ներքին գործերի նախարար, ՀՅԴ), Հ. Հախվերդյան (զորական նախարար, անկուսակցական), Ա. Էնֆիաջյան (ֆինանսների նախարար, ՀԺԿ), Ս. Հարությունյան (արդարադատության նախարար, ՀԺԿ), Մ. Աթաբեկյան (լուսավորության նախարար, ՀԺԿ), Լ. Ղուլյան (պարենավորման նախարար, ՀԺԿ), Խ. Կարճիկյան (հանրային խնամատարության նախարար, ՀՅԴ): Դաշնակցությունը ստանձնեց վարչապետի, արտաքին, ներքին և խնամատարության նախարարությունները, իսկ ժողովրդականները՝ ֆինանսների, արդարադատության, պարենավորման և լուսավորության: Կոալիցիոն կառավարություն ստեղծելով՝ ՀՅԴ և ՀԺԿ կազմեցին խորհրդարանական մեծամասնություն, և խորհրդարանի ղեկավար կենտրոնը մի փոքր թեքվեց «աջ»: Ընդդիմության մեջ մնացին միայն էսէռները և սոցիալ-դեմոկրատները: Վերջիններիս ընդդիմությունը ստացավ ավելի բացահայտ ու անհաշտ բնույթ[6]: Այս կապակցությամբ Ռ. Հովհաննիսյանը հայտնում է, որ «չնայած «ձախ» (էսէռ և սոցիալ-դեմոկրատ) խմբակցությունները թույլ էին, սակայն նրանց ընդդիմությունը «ուժեղանում էր մահմեդական առաջնորդների աջակցությամբ[7]»: Կոալիցիոն կառավարության մի քանի ամիսների համատեղ աշխատանքը ցույց տվեց, որ այս խառը դաիլիճը չդարձավ մեկ միասնական, համախումբ, կուռ ու համերաշխ կոլեկտիվ (մարմին): Նախարարությունները, ըստ կուսակցական պատկանելության, գործում էին իրարից անջատ, մի կողմը իրեն պատասխանատու չէր համարում մյուսի համար:

Ի տարբերություն կառավարության, այդ ընթացքում համեմատաբար ավելի արդյունավետ է եղել համագործակցությունը ՀՅԴ և ՀԺԿ խորհրդարանական խմբակցությունների միջև, «ձախերի» դեմ մղվող պայքարում. սրանք, որ-

---

[6] ***Հակոբյան Ա.*** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.). Երևան, 2005 թ., էջ 93-95:

[7] ***Հովհաննիսյան Ռ.*** Հայաստանի Հանրապետություն, հ. 1, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., 2005 թ., էջ 153:

պես կանոն, հանդես են եկել միասնաբար, իսկ ընդունված օրենքներն ու որոշումները, որպես կանոն, եղել են երկուսի համատեղ ձայնատվության արդյունք[8]:

Ինչպես նշում է Ա. Վաղարշյանը. «Առաջին հանրապետությունում կառավարության ձևավորման կարգը հստակ իրավական կարգավորում չուներ: Առաջին օրենսդիր մարմնի գործունեության շրջանում խորհրդարանը նախընտրում էր վարչապետին, որի թեկնածությունն առաջադրում էին խորհրդարանական խմբակցությունները, բնականաբար, ամենամեծ խմբակցությունն էր որոշում այդ հարցը: Ընտրելով վարչապետին՝ խորհրդարանը նրան հանձնարարում էր կազմել կառավարություն: Խորհրդարանի արձանագրությունների ուսումնասիրությունից բխում է, որ կառավարության կառուցվածքը, այսինքն՝ նախարարությունների քանակը, որոշված էր կոալիցիոն համաձայնագրով: Դրան համապատասխան՝ վարչապետը «կառավարության կազմը», որպես ի գիտություն, ներկայացնում էր Հայաստանի խորհրդին, որը կառավարության կազմի վերաբերյալ որոշում չէր ընդունում: Սակայն կառավարության խորհրդարանական ինվեստիտուրա (հաստատում), այնուամենայնիվ, կատարվում էր: Դա կառավարության դեկլարացիայի (հայտարարագրի)՝ իրացվելիք քաղաքականության ծրագրի քննարկումն ու հաստատումն էր Հայաստանի խորհրդում, որից հետո կառավարությունը համարվում էր լրիվ կազմավորված և իր պարտականություններն ստանձնած: Սակայն, չունենալով ընդհանուր իրավական կարգավորում, կառավարության ձևավորման կարգը երբեմն ձեռք էր բերում անհատական, յուրահատուկ իրավակարգավորումներ իբնույթ: Այսպես, 1918 թ. նոյեմբերին ձևավորված կառավարությունը չունեցավ իր գործունեության ծրագիրը: Ըստ էության, այստեղ վարչապետի ընտրությունը նշանակվեց նաև կառավարության խորհրդարանական ինվեստիտուրա՝ նախկինում, այսինքն՝ 1918 թ. օգոստոսին հաստատված հայտարարագրի հիման վրա: Հետագայում ընդդիմությունն այդ կառավարությանն անընդհատ մեղադրում էր հայտարարագիր չունենալու և այն խորհրդարանում չներկայացնելու մեջ:

Այսպիսով, Առաջին հանրապետության կառավարության ձևավորման կարգը, կառավարության ու խորհրդարանի հարաբերությունների իրավական կարգավորման բացը Հայաստանի խորհրդում հանգեցնում էր իրավիճակային, երբեմն նաև՝ անհատական կարգավորման: Եթե Հայաստանի խորհրդում 1918 թ. օգոստոսին չընտրվեց վարչապետ՝ նախորդ գերագույն մարմնի ընտրած վարչապետին համարելով լեգիտիմ իրավահաջորդ, ապա նոյեմբերին կոալիցիոն կառավարության ինվեստիտուրան կատարվեց միայն վարչապետ ընտրելով, առանց կառավարության հայտարարագրի ներկայացման և հավանության[9]»:

Հանրագումարելով վերոնշյալը եկանք այն եզրահանգման, որ առաջին կոալիցիոն կառավարությունը ուշացած էր՝ մեր կարծիքով, այն պետք է ձևավորվեր հուլիս ամսին և ընդգրկեր ավելի մեծ թվով կուսակցություններ:

---

[8] ***Հակոբյան Ա.*** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.). Երևան, 2005 թ., էջ 95-96:

[9] ***Վաղարշյան Ա.*** Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918–1920 թթ.): Եր.: ԵՊՀ հրատ.,- ԵՊՀ, 2012թ., էջ 32-33:

Эдгар Алексанян - ***Из опыта коалиционного правительства первой республики Армения*** -В статье систематически исследовался опыт первого коалиционного правительства Республики Армения. Обосновано императивы формирования первого коалиционного правительства в армянской действительности. Чтоб правильно оценить сегодняшняя политическая ситуация анализировано деятельность коалиционного правительства первой республики Армения.

Edgar Aleksanyan – ***The experience from the coalition government of the First Republic of Armenia*** - The article presents a systematic study of the coalition government attempt in the First Republic of Armenia. The imperatives of the first coalition government formation in Armenian reality are thoroughly grounded in the paper. The activities of the first coalition government have been consequently analysed to evaluate the current political period appropriately.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ. ՆՈՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆԱՑՈՒՄ

ԻՍՐԱՅԵԼ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Դասական եվրասիականության ակունքները սկիզբ են առել անցած դարի 20-ականներից և մարել 30-ականների ավարտին: Եվրասիականության գաղափարական հայրերին միավորում էր այն գաղափարը, որ ռուսական մշակույթն արևմտյան և արևելյան մշակույթների ինքնատիպ խառնարան է:

Հոդվածում հատկապես հիշատակվել են Եվրասիական շարժման կարկառուն ներկայացուցիչները. իշխան Ն. Տրուբեցկոյը, Ն. Դանիլևսկին, Պ. Սավիցկին և այլոք:

Հոդվածում նշեցինք, որ եվրասիական շարժումը 20-ականների կեսերից մտնում է երկարատև ճգնաժամի մեջ՝ բաժանվելով աջ ու ձախ թևերի, իսկ XX դարի 60-ականների վերջին և 70-ականների սկզբին շարժումը նոր ինտելեկտուալ իմպուլս է ստանում: Ի հայտ է գալիս մի նոր հոսանք՝ նեոեվրասիականությունը: Վերջինիս գաղափարական հայրը դարձավ Լ. Ն. Գումիլյովը:

Նոր եվրասիականության գաղափարների զարգացման մեջ նշեցինք նաև Ա. Դուգինի դերը, որը եվրասիականության հետագա զարգացումը կապում էր «Երրորդ ուղու» գաղափարի հետ, և, մասնավորապես, Ս. Հանթինգթոնի հետևյալ դրույթի հետ՝ «արդիականացում առանց արևմտականացման» (modernization without westernization):

Բանալի բառեր. եվրասիականություն, դուալիզմ, պասիոնարություն, գերէթնոս, արդիականացում, արևմտականացում,ավտարկիա, ատլանտիզմ, գլոբալիզմ, ուլտրալիբերալիզմ:

Համագործակցությունը երբեք ինքնանպատակ չի լինում: Համագործակցելիս յուրաքանչյուր պետություն կամ պետությունների դաշինք հստակեցնում է ինչի շուրջ և ինչ նպատակով է համագործակցում, ինչ խնդիրներ է դրանով լուծում: Այսպես հասկանալու համար ինչ է իրենից ներկայացնում եվրասիական նախագիծը, անհրաժեշտ ենք համարում դիտարկել վերջինիս սկզբնավորման ակունքները մինչ արդի զարգացումներ:

Դասական եվրասիականության ակունքները, որպես գաղափարական, հասարակական-քաղաքական շարժում և աշխարհաքաղաքական ուղղություն, սկիզբ են առել անցած դարի 20-ականներից ռուսական գաղթականության շրջանում և մարել 30-ականների ավարտին, սակայն ինչպես նշում է Ի. Իսաևը, «Եվրասիականության արմատները զնում են խորը պատմության մեջ: Մեր ժամանակներին ավելի մոտ, և հնարավոր է խորն ու հետևողականորեն դեռևս XIX դարում նրա հիմնական գաղափարները ձևավորել են Կ. Լեոնտևը և Ն. Դանիլևսկին»[1]: Եվրասիականությունը՝ որպես հասարակական-քաղաքական շարժում,

[1] ***Исаев И. А.***, Евразийство: идеология государственности /ecsocman.hse.ru/data/718/894/1217/005_Isaev.pdf

թելադրված էր պատմական ժամանակի ու հստակ տարածությունում տեղի ունեցող հրամայականներով: Եվրասիականությունը 1917-ի «ռուսական աղետին» ռուսական ազգային գիտակցության ստեղծագործական հակազդեցությունն էր[2]: Եվրասիականության գաղափարական հայրերին՝ Ն. Ս. Տրուբեցկոյին, Պ. Սավիցկուն, Պ. Պ. Սուվչինսկուն, Գ. Վ. Ֆրոլովսկուն և այլոց միավորում էր այն գաղափարը, որ ռուսական մշակույթն արևմտյան և արևելյան մշակույթների ինքնատիպ խառնարան է. Ռուսաստան-Եվրասիան[3] յուրօրինակ քաղաքակրթություն է, ինքնատիպ մշակույթով և աշխարհագրական դիրքով:

Եվրասիականության զարգացմանը նպաստեց XIX դարի գիտնական Ն. Դանիլևսկու «Ռուսաստանը և Եվրոպան» (1869) աշխատությունը, որտեղ հեղինակը զարգացրեց լոկալ քաղաքակրթությունների գաղափարը, առաջ քաշելով պատմամշակութային տիպերի տեսությունը: Համաձայն տեսության, պատմամշակութային տիպը ներառում է թե՛ մշակութային, թե՛ քաղաքակրթական ինքնատիպությունը: Յուրաքանչյուր պատմամշակութային տիպ ունի միայն իրեն բնորոշ ինքնատիպ զարգացման փուլեր: Ն. Դանիլևսկին հակադարձվում էր մարդկության պատմության զարգացման եվրոպակենտրոն մոտեցմանը, գտնելով, որ այն օբյեկտիվ գիտական բացատրություն չի տվել Ռուսաստանի պատմությանը, Արևելքի ժողովուրդների զարգացմանը[4]: Նա մշակեց պատմամշակութային տիպերի ծնունդի և աճի հինգ օրենքները՝ կարևորելով պատմամշակութային տիպի քաղաքական կարգավիճակը: Երկրորդ օրենքում նշվում է. «Որպեսզի քաղաքակրթությունը, բնորոշ ինքնատիպ պատմա-մշակութային տիպին, կարողանա ծնվել ու զարգանալ, անհրաժեշտ է, որպեսզի նրան պատկանող ազգերը, օգտվեն քաղաքական անկախությունից»[5]: Ըստ գաղափարախոսի, չկա քաղաքակրթություն, որը սկիզբ առներ և զարգանար առանց քաղաքական ինքնուրույնության: Չնայած, հասնելով որոշակի զարգացման, քաղաքակրթությունը կարող է որոշ ժամանակ շարունակել գոյությունը ինքնուրույնության կորստից հետո: Պատմամշակութային տիպի քաղաքական ինքնուրույնության կորուստը հանգեցնում է նրան, որ այն զրկում է ազգություններին զարգանալուց և վերածվում միջոցի ուրիշի նպատակներն իրականացնելու համար: Դանիլևսկին նշում էր, որ ոչ մի պատմամշակութային տիպ չի կարող ներկայացվել իբրև մարդկության զարգացման բարձրագույն կետ: Հին պատմամշակութային տիպերի փոխարինումը նորով անխուսափելի է, քանզի համապատասխանում է բնության տարածաժամանակային օրենքների զարգացմանը: Անընդհատ պնդելով, որ «Արևմուտքը փտում է», Դանիլևսկին նշում էր նաև, որ ռուս ժողովրդի մշակույթը վարակված է «եվրոպականացման» հիվանդությամբ: Հակադրվելով Եվրոպային, Ն. Դանիլևսկին նշում է, որ «Եվրոպան մեզ ոչ միայն խորթ է, այլև թշնամի է, նրանց շահերը որպես կանոն, հակադիր են մեր շահերին: Եթե նույնիսկ չհաջողվի լիովին հեռու մնալ եվրոպական գործերից, ապա հարկավոր է միշտ այդ գործերին նայել մեր հատուկ՝ ռուսական տեսակետից: Դանիլևսկուց հետո եվրասիականությունը նոր ակտիվ զարգացում ստացավ XX-րդ դարի 20-ականների սկզբին: Եվրասիա-

[2] ***Ենգոյան Ա.*** Եվրասիականության գաղափարի փոխակերպման հարցի շուրջ /noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6965

[3] ***Савицкий П. Н.*** Комтинент Евразия, М., 1997, էջ 24

[4] ***Нартов Н. А*** Геополитика/ Под ред. Староверова В. И., М., 2003, էջ 119

[5] ***Данилевский Н. Я.*** Россия и Европа, М., 2004, էջ 58

կանության զարգացմանը նպաստեց նաև տպագիր պարբերականների առկայությունը: Առաջին տպագիր պարբերականների շարքը լույս տեսավ 1920 թվականին Սոֆիայում, իսկ հետագայում նաև Պրահայում, Փարիզում և Բեռլինում[6]:

Եվրասիական շարժման կարկառուն ներկայացուցիչն է իշխան Ն. Տրուբեցկոյը (1890-1938 թթ.): Եվրասիականության մի շարք ուսումնասիրողներ գտնում են, որ եվրասիականությունը ծնունդ առավ 1920 թվականին, երբ Ն. Տրուբեցկոյը հրատարակեց «Եվրոպան և մարդկությունը» աշխատությունը: Ն. Տրուբեցկոյի տեսությունն ամբողջովին հիմնված է քաղաքակրթությունների կոշտ դուալիզմի վրա: Քաղաքակրթության միակ ու եզակի զարգացման ուղի չկա, այդպիսի դրույթի հետևում թաքնվում են մեկ ագրեսիվ քաղաքակրթության՝ ռոմանո-գերմանականի բացարձակ, հեգեմոն, զավթողական ձգտումները: Ռոմանո-գերմանական քաղաքակրթությունը բազմաբևեռ, բազմամշակութային պատմական իրականության միայն մասն է: Մարդկությունը, ըստ Տրուբեցկոյի, ազգերի, մշակույթների և քաղաքակրթությունների ամբողջություն է, որն որակապես տարբերվում է եվրոպականից: Սա էլ այն դուալիզմն է, որը զարգացրել է գիտնականը: Նա դեմ չէր գերմանո-ռոմանական քաղաքակրթությանը իրեն հատուկ մշակույթով, նա դեմ էր վերջինիս ագրեսիվ վերաբերմունքին, նրա միտվածությանը «քաղաքակրթական ցեղասպանությանը»[7]: Եվրոպական մշակույթը չի հանդիսանում մարդկության մշակույթ: Դա որոշակի էթնիկ խմբի պատմության արտադրանք է[8]: Եվրասիական շարժման զարգացման հիմնաքարը դրել է իշխան Տրուբեցկոյը, մշակելով նրա տեսական դրույթները, որոնք զարգացրեցին Պ. Սավիցկին, Ն. Ալեկսեևը, Լև Կարսավինը և այլք:

Եվրասիականությունը կոլեկտիվ, բազմանդամ շարժում էր, որն ուներ իր գաղափարախոսների յուրօրինակ կորիզը, սակայն շարժման կենտրոնական դեմքը, նրա անխոս առաջնորդը՝ Պ. Սավիցկին էր: Նա հանդիսանում է նաև ռուսական աշխարհաքաղաքական դպրոցի ամենավառ և ազդեցիկ ներկայացուցիչը: Պ. Սավիցկին դիտարկել է եվրասիականության աշխարհաքաղաքական հայեցակարգը: Համաձայն Սավիցկու տեսության՝ Եվրասիա ասելով, հասկանում ենք ոչ թե Եվրոպայի և Ասիայի ամբողջությունը, այլ հենց Միջին մայրցամաքը՝ որպես հատուկ, ուրույն աշխարհ: Աշխարհագրորեն այդ աշխարհը կարող է ընկալվել, որպես մեծ հարթավայրերի համակարգ: Սավիցկին Ռուսաստանը դիտարկում է որպես ինքնուրույն աշխարհաքաղաքական իրականություն: Եվրասիականության գաղափարախոսները մեծ դեր էին հատկացնում կրոնին՝ Ուղղափառությանը: Պ. Սավիցկին ևս առանձնակի նշանակություն է տալիս կրոնին, ըստ նրա, կրոնը ստեղծում է մշակույթ: Սավիցկու աշխարհաքաղաքական մոտեցումները ելնում են Ծովի ու Ցամաքի մշտական հակամարտության գաղափարից[9]: Նա Հելֆորդ Մակքինդերի պես Եվրասիան դիտարկում է որպես «Հարթլենդ» (Heartland)[10]: Եթե Մակքինդերը գտնում էր, որ «Հարթլենդ»-ի անապատնե-

---

[6] ***Исаев И. А.,*** Евразийство: идеология государственности /ecsocman.hse.ru/data/718/894/1217/005_Isaev.pdf

[7] ***Дугин А.*** Основы геополитики. Геополитическое будущее России. Мыслить Пространством./Арктогея-центр, 2000, էջ 480

[8] ***Трубецкой Н. С***. Европа и человечество / http://gumilevica.kulichki.net/TNS/tns03.htm

[9] ***Савицкий П. Н.*** Континент Евразия, М., 1997, էջ 252

[10] ***Маккиндер Х. Дж***. Демократические идеалы и реальность / http://www.politstudies.ru/fulltext/2011/2/12.pdf

րից մեխանիկական հրում է տեղի ունենում, որը ստիպում է մերձափնյա գոտիներին (ներքին կիսալուսին) ստեղծել մշակույթ և պատմություն, ապա Սավիցկին պնդում է, որ Ռուսաստան-Եվրասիան հենց համաշխարհային մշակույթի և պատմության համադրությունն է:

Եվրասիացիները բացասական վերաբերմունք ունեին Եվրոպայի նկատմամբ: Եվրասիայի ինքնատիպությունը բացահայտվում էր Եվրասիայի հետ հակադրույթի միջոցով: Համաձայն եվրասիականների կարծիքի «դեպի Եվրոպա պատուհան բացելով» Պետրոս Մեծը կործանեց Եվրասիայի ինքնատիպ մշակույթը:

Եվրասիականների գաղափարներում հետաքրքիր է այն տեսակետը, ըստ որի, Եվրոպայի և Եվրասիայի հակադրումը աշխարհաքաղաքական ու տնտեսական բնույթ է կրում: Սավիցկին պնդում էր, որ Ռուսաստանի համար, առաջին հերթին, վտանգավոր է կապը եվրոպական և ամերիկյան կապիտալի հետ, որը կարող է մեր մայրցամաքային երկիրը ներքաշել համաշխարհային շուկայի մեջ, որտեղ գործում են «օվկիանոսային օրենքները», և հեռավորությունները որևէ դեր չեն խաղում: «Օվկիանոսային» շուկայում Ռուսաստանին սպասում է «համաշխարհային տնտեսության հետնաբնակի» տեղ[11]: Նշենք, որ եվրասիական շարժումը 20-ականների կեսերից մտնում է երկարատև ճգնաժամի մեջ՝ բաժանվելով աջ ու ձախ թևերի: Աջերը շարունակում են իրենց գործունեությունը նեղ մասնագիտական ոլորտում՝ պատմություն, աշխարհաքաղաքականություն, տնտեսագիտություն, իսկ ձախերը՝ Մոսկվայի ձեռքում վերածվում են հնազանդ գործիքի:

Դասական եվրասիականների գաղափարները հայ ժողովրդի՝ որպես պատմամշակութային տիպի, ընդունելի են այն կտրվածքով, որ նրանք ելնում են աշխարհի պլյուրալ էությունից: Դա նշանակում է, որ նրանք ընդունում են յուրաքանչյուր մարդկային հանրույթի ինքնատիպություն:

Եվրասիականությունը բավականին լուրջ գաղափարական հիմքեր ուներ, որն արտացոլում էր Ռուսաստան-Եվրասիայի քաղաքակրթական և մշակութային ինքնատիպությունը: Ճիշտ է եվրասիականության զարգացման ընթացքը ընդհատվեց տասնամյակներ տևող ճգնաժամով, սակայն չմարեց: XX դարի 60-ականների վերջին և 70-ականների սկզբին շարժումը նոր ինտելլեկտուալ իմպուլս ստացավ: Առաջ եկավ նեոեվրասիականությունը, որը որակապես նոր հոսանք էր: Նեոեվրասիականությունը դասական եվրասիականների գաղափարների վրա հիմնված և պատմական տվյալ ժամանակահատվածին համահունչ, արդիականացման ենթարկված շարժում էր: Նոր եվրասիական հոսանքի գաղափարական հայրը դարձավ հայտնի պատմաբան, աշխարհագրագետ, ազգագրագետ նշանավոր ռուս բանաստեղծներ Նիկոլայ Գումիլյովի և Աննա Ախմատովայի որդի՝ Լ. Ն. Գումիլյովը (1912-1992 թթ), որն առաջ քաշեց պասիոնարության գաղափարը: Վ. Ի. Վերնադսկին, հանդիսանալով եվրասիականության դասական շրջանի վառ ներկայացուցիչներից մեկը, 1970 թվականին Լև Գումիլյովին ուղղված նամակում ընդգծել է. «Տեսնում եմ, որ Դուք ամեն ինչ ընդհանրացնում եք, զարգացնում ու խորացնում եք հասկացությունների՝ «էթնոս», «լանդշաֆտ» և այլն, Ձեր այդքան կարևոր ուսումնասիրությունները կենսոլորտի ֆոնին: Այս ա-

[11] ***Савицкий П. Н.***, Континент Евразия, М., 1997, стр. 405.

մենը մտքի մեծ առաջխաղացում է»[12]: Ինչպես նշում է մեկ այլ հայտնի եվրասիականության գաղափարախոս Դուգինը, Գումիլյովը դարձավ Սավիցկու լավագույն աշակերտը: Գումիլյովն ի տարբերություն Սավիցկու, Տրուբեցկոյի և Վերնանդսկու եվրասիականության գաղափարի շուրջ մոտեցումները շարադրում էր ելնելով պատմությունից, աշխարհագրությունից և բնագիտությունից, կիրառելով օրգանականության մեթոդը: «Օրգանականությունը» պատմական և փիլիսոփայական վերլուծության յուրահատուկ մեթոդ էր, որը բնորոշ էր գերմանական դպրոցին: Գումիլյովը զարգացնում և տրամաբանական ամբողջության է հասցնում եվրասիականության այն գաղափարը, որ ռուսները միայն արևելասլավոնների մի ճյուղը չեն, այլև հատուկ էթնոս, ձևավորված թյուրք-սլավոնական միաձուլումից: Այդ միաձուլումն իրենից ներկայացնում է Անտառի և Տափաստանի դաշինք: Այս դաշինքը ինքնատիպ էթնոմշակութային սիմբիոզ է, այսինքն՝ էթնոսների փոխշահավետ համակեցություն, որի պարագայում յուրաքանչյուր էթնոս պահպանում է սեփական ինքնատիպությունը: Հենց այդ աշխարհաքաղաքական դաշինքն էլ կազմում է Ռուսաստանի պատմական էությունը, կանխորոշելով մշակույթի, քաղաքակրթության, գաղափարախոսության ու քաղաքական ճակատագրի բնույթը: Այստեղից էլ անուղղակի հիմնավորվում է ռուսական վերահսկողությունը եվրասիական այն հողերի վրա, որոնք բնակեցված են թյուրքական էթնոսներով:

Եզրափակելով Գումիլյովի եվրասիականության, էթնոգենեզի և պասիոնարության տեսությունները, աշխարհաքաղաքական տեսանկյունից կարող ենք անել հետևյալ հիմնական եզրակացությունները՝

1.Համամարդկային մշակույթ միանման բոլոր ազգերի համար հնարավոր չէ: Յուրաքանչյուր էթնոս ինքնատիպ է.

2.Եվրասիայի և այլ էթնոսների միջև կապը գերէթնոսների մակարդակում բացասական արդյունքների է հանգեցնում: Երբ երկու և ավելի գերէթնոս է բախվում, աճում է աղետների թիվն ու խախտվում է ստեղծագործական գործընթացը[13]: Այդ պատճառով է, որ Եվրասիայի և Արևմտյան Եվրոպայի միջև բախումը, ինչպես երկու գերէթնոսների, կարող է ողբերգական հետևանքներ ունենալ ամբողջ աշխարհի համար.

3.Եվրասիական ժողովուրդների հոգեղենությունը գերէթնոսի միասնական ամբողջությունն է. յուրաքանչյուր տարածքային խնդիր կարող է լուծվել եվրասիական միասնության հիմքի վրա:

Կարևոր ենք համարում նշել, որ Գումիլյովը մարդկության պատմությունը կախվածության մեջ է դնում գաղափարների պատմությունից, բաժանելով վերջինը երկու խմբի: Առաջինը, լավատեսական (թեիստական) և հոռետեսական (աթեիստական):

Եզրահանգելով Գումիլյովի տեսության առանձնահատկությունները, կարող ենք ասել, որ նրա էթնոգենեզի տեսությունը և եվրասիական պասիոնարության գաղափարը եվրասիականության տեսության զարգացմանը նոր վերահիմաստավորում տվեցին:

---

[12] ***Гумилев Л. Н.***, Ритмы Евразии, М., 1993, էջ 15

[13] ***Гумилев Л. Н.***, Этногенез и биосфера Земли, М., 2010

Եթե Լև Գումիլյովը խորհրդային շրջանի նոր եվրասիականության գաղափարախոսն էր, ապա հետխորհրդային շրջանում այդ դերը ստանձնեց ռուս հասարակական գործիչ, փիլիսոփա, քաղաքագետ, սոցիոլոգ Ա. Գ. Դուգինը (1962թ.): Ա. Դուգինը բավականին մեծ ներդրում ունի նոր եվրասիականության գաղափարների զարգացման մեջ ոչ միայն տեսության հարթությունում, այլև կիրառական: Դուգինը եվրասիականության հետագա զարգացումը կապում է «Երրորդ ուղու» գաղափարի հետ, և, մասնավորապես, Ս. Հանթինգթոնի հետևյալ դրույթի հետ՝ «արդիականացում առանց արևմտականացման» (modernization without westernization)[14]: Այս սահմանման բուն էությունը նրանում է, որ որոշ երկրներ (որպես կանոն՝ Երրորդ աշխարհի) հասկանալով, որ իրենց անհրաժեշտ են քաղաքական և տնտեսական ավելի զարգացած և կատարելագործված մեխանիզմներ, միաժամանակ հրաժարվում են կուրորեն հետևել Արևմուտքին և, ընդհակառակը, ձգտում են արևմտյան տեխնոլոգիաներն ի նպաստ դնել քաղաքական, ազգային և կրոնական բնույթի ավանդական արժեհամակարգի բարօրության համար[15] : Դուգինն Երրորդ ուղու գաղափարը զարգացնում է ոչ միայն քաղաքակրթական ու սոցիալ-մշակութային հարթության վրա, այլև աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական: «Աշխարհաքաղաքականության հիմունքներ» գրքում գաղափարախոսը նշում է, որ Երրորդ ուղին ամբողջությամբ ընդգրկվում է եվրասիական նախագիծ: Դա նշանակում է, պարզաբանում է Դուգինը, որ Բեռլին--Մոսկվա-Տոկիո աշխարհաքաղաքական առանցքը այն նախագիծն է, որը լավագույն կերպով լուծում է ռուսների տեխնոլոգիական հետամնացությունը: Անհրաժեշտ է նշել նաև, որ Կ. Հաուսհոֆերի «Բեռլին-Մոսկվա-Տոկիո աշխարհաքաղաքական առանցքի»[16] գաղափարը, ելնելով արդի աշխարհաքաղաքական զարգացումներից,կիրառական կտրվածքով պահանջարկ չի վայելում, քանզի խախտվում է եռամիասնության տարրերից մեկը՝ Տոկիոն՝ փոխարինվելով Պեկինի, իսկ Բեռլին-Մոսկվա (Կ. Հաուսհոֆերը նշում է, որ Եվրասիան հնարավոր չէ խեղդել, քանի դեռ նրա երկու ամենախոշոր ազգերը՝ ռուսները և գերմանացիներն ամեն կերպ փորձում են խուսափել բախումներից...) առանցքը դեռևս կայացման փուլում է, քանզի սերտ համագործակցությունը Ռուսաստանի և Գերմանիայի միջև մեկնարկեց ՌԴ ներկայիս գործող նախագահ Վլադիմիր Պուտինի պաշտոնավարման ժամանակ: Այնուամենայնիվ Դուգինի Երրորդ ուղին աշխարհատնտեսական կտրվածքում թույլ է տալիս Ռուսաստանին արդիականանալ, պահպանելով ինքնատիպությունն ու քաղաքակրթական առանձնահատկությունները: Մեծ հաշվով, Երրորդ ուղին դա հենց Պահպանողական հեղափոխականությունն է:

Պահպանողական հեղափոխականությունը մի գաղափարախոսություն է, որին չի կարելի դասել ո՛չ աջ, ո՛չ ձախ կարգին: Այլ կերպ այդ գաղափարախոսությունն անվանում են «Երրորդ Ուղի, «Երրորդ Դիրքորոշում»: Ռուսաստանի և

---

[14] ***Хантингтон С.*** Столкновение цивилизаций / Пер. с. Англ. Т. Велимеева, Ю. Новикова. – М.: ООО «Издательство АСТ», 2003 г., էջ 158

[15] ***Дугин А. Г.***, Русская вещь /
http://webcache.googleusercontent.com/search?q=cache:http://arctogaia.com/public/rv/9.shtml

[16] ***Хаусхофер К.*** Континентальный блок: Берлин-Москва-Токио/
http://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/Haus/kontbl.phphttp://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/Haus/kontbl.php

ամբողջ Եվրասիայի արդիականացումը նեոեվրասիականները և մասնավորապես Դուգինը դիտարկում են Պահպանողական հեղափոխականության՝ Երրորդ ուղու համատեքստում: Հանդես գալով արդիականացման ջատագով առանց արևմտականացման, Դուգինը հղում է հայտնի տնտեսագետ-տեսաբան Ֆրիդրիխ Լիստի այն գաղափարներին, ըստ որի մասամբ կամ ամբողջապես ոչ շուկայական հարաբերությունների մեջ գտնվող երկրները, հարաբերվելիս զարգացած շուկայական համակարգ ունեցող երկրների հետ, ավելի են խորացնում առկա բևեռացումը: Հարուստներն ավելի են հարստանում, իսկ աղքատները՝ աղքատանում: Այս պարագայում, ելնելով Լիստի տեսությունից «մեծ տարածությունների ավտարկիայի» մասին, այդ խնդիրը լուծվում է հետևյալ կերպ: Ոչ շուկայական տնտեսվարության երկրները, գտնվելով մրցակցության մեջ շուկայական հարաբերություններ վարող երկրների հետ, պետք է ինքնավար զարգացման մոդել մշակեն, օգտագործելով լիբերալ համակարգի տեխնոլոգիական ձեռքբերումները, սակայն խիստ սահմանափակված լայնածավալ «Մաքսային միության» շրջանակներում:

Ռուսաստանի համար նմանատիպ մոդելի իրագործումը դժվարություններ չի առաջացնի, եթե վերջինս համագործակցի ԱՊՀ բարեկամական երկրների հետ: Հայաստանը նույնպես ԱՊՀ անդամ է: Ռուսաստանի հետ ունի բազմադարյան համագործակցության պատմություն, հետևապես Հայաստանի ինտեգրացիան Եվրասիական նախագիծ առավել քան իրատեսական է: Նոր եվրասիականության գաղափարախոսներն ոչ միանշանակ վերաբերմունք ունեն Հայաստանի և հայերի, որպես էթնիկ խմբի, նկատմամբ: Հավանաբար դա պայմանավորվում է նրանով, որ իրենց գաղափարներում նրանք վերաիմաստավորում են եվրասիական մշակութաքաղաքակրթական զարգացումը, կենտրոնական դիրք շնորհելով նոր էթնոսներին, փորձելով բացահայտել և նորովի ներկայացնել վերջիններիս առանձնահատկությունները: Հայերը նման խնդիր չունեն: Հայերիս խնդիրն ուրիշ էր, և մենք լուծել ենք այն. վերականգնել պետականությունը, որն անցած դարում երկու, եթե ոչ երեք անգամ տեղ է գտել պատմության մեջ:

Դուգինը կարևորում է աշխարհաքաղաքական զարգացումների, ուժի բևեռների դիրքերի իմաստավորումը, նշելով, որ դա անհրաժեշտ է մարտահրավերներին հակազդելու համար: Այսպես Ս. Հանթինգթոնը միջազգային քաղաքականության ուժերի հարաբերակցությունը սահմանում է «the West against the Rest» («Արևմուտքը մնացածի դեմ») բանաձևով: Դա նշանակում է ատլանտիզմը եվրասիականության դեմ, կամ Ծովը՝ ցամաքի (ինչպես տեսնում ենք դուալիզմն ընկած է եվրասիականության հիմքում):

Ատլանտյան և Եվրասիական (Ծովի ու ցամաքի) նախագծերի հակամարտությունը դիտարկվում է նոր իրականության՝ պոստմոդեռնի տիրույթում: Պոստմոդեռնը գլոբալիզմ է, ուլտրալիբերալիզմ, միաբևեռ աշխարհի ու ցանցերի գերակայություն, նույնականացման ավանդական ձևերի՝ պետության, կրոնի, ազգի, էթնոսի, անգամ ընտանիքի ու սեռերի պարզեցում: Այս ամենի մեջ են թաքնված եվրասիականությանն ուղղված մարտահրավերները: Վերջինների ցանցային բնույթը սպառնալիք է ուղղված եվրասիականության դեմ: Դուգինը ցանցը բնորոշում է որպես «կայսրության» կյանք: Նրա խնդիրն է հաստատվել որպես կյանքի միակ բովանդակություն: «Կայսրությունը», կերպափոխելով իրակա-

նությունը, դառնում է վիրտուալ, իսկ վիրտուալությունը դառնում միակ իրականությունը, որին էլ պետք է հակազդի «կոնտր-կայսրությունը»՝ ժամանակակից եվրասիականության հայեցակարգը: Դուգինը, օգտվելով Վ. Պարետոի մոդելից, գլոբալ աշխարհաքաղաքականության տիրույթում «էլիտային» («կայսրություն») հակադրում է «կոնտր-էլիտան» («կոնտր-կայսրություն»): Եվ այստեղ է, որ վերադառնում ենք համագործակցության զարգացման խնդրին: Ռուսաստանը պետք է առաքելություն ստանձնի, դառնալով բազմաբևեռ աշխարհի ջատագով, եվրասիական մայրցամաքի ինքնատիպության պահպանման երաշխավոր, ձեռք բերելով աջակիցներ: Լավագույն տարբերակը համընդգրկուն ու բոլորի կողմից ընդունելի գաղափարի կրող դառնալն է:

Исраел Мовсесян - *Закономерности образования и периоды развития евразийского экономического сотрудничества* - Источники классического евразийства возникли с 20-ых годов прошедшей эпохи и утихли в конце 30-ых. Отцов единомышленников евразийства объединяет одна основная идея: русская культура является своеобразным слиянием западной и восточной культуры.

В этой статье упоминаются имена выдающихся представителей евразийского движения: князь Н. Трубецкой, Н. Данилевский, П. Савицкий и другие.

В середине 20-ых годов евразийское движение входит в период кризиса и делится на правых и на левых. В конце 60-ых и в начале 70-ых годов XX века, движение получает новый интеллектуальный импульс.Появляется новая волна-неоевразийство, идеологическим отцом которого является Л. Н Гумилев (1912-1992).

В развитии идей нового евразийства упоминается главная роль А. Дугина, который связывал дальнейшее развитие евразийства с идеей ''Третьей линии'', и в частности со следующей теорией С. Антингтона: ''модернизация без вестернизации''.

Israel Movsisyan-*The regularities and Development Periods of the Eurasian Economic Cooperation: new Eurasianism.* - Classical Eurasianism goes back to the 20s of the previous century and it was put out in the late 30s. The ideological fathers of Eurasianism were united by the idea that Russian culture is a unique melting pot of eastern and western cultures.

In the article the names of the prominent Eurasian movement representatives were particularly mentioned: the Prince N. Trubetskoy, N. Danilevskiy, P. Savitsky etc.

XX century, the movement got a new intellectual impulse.

A new stream appears: Neo- euroasianism. The ideological father of the latter became L. N. Gumilyov (1912-1992).

We mentioned Dugin's role In the development of the new ideas of Eurasianism, who stated that the further development of eurasianism was linked to the concept of "third way" and, particularly, to the following provision of S. Hantington: "modernization without westernization".

ГЛОБАЛИЗАЦИЯ ЭКОНОМИКИ И ЕЕ ВЛИЯНИЕ НА ПРОИЗВОДСВЕННЫЙ ПОТЕНЦИАЛ ПРЕДПРИЯТИЯ

РЕНАТ ЗЕЙНАЛОВ

Данная статья посвящена проблеме влияния глобализации на производственный потенциал предприятий. Рассмотрены элементы производственного потенциала предприятия и как на них влияет глобализация экономики. Глобализация сложный процесс, который объединяет все экономики стран мира и влияет на производственный потенциал через конкуренцию. Сегодня цель конкуренции предприятий – борьба за каждого потребителя. Глобализация экономики может нести как позитивные, так и негативные последствия.

Ключевые слова: глобализация, глобализация экономики, производственный потенциал, конкуренция, либерализация.

Глобализация – это процесс, с помощью которого весь мир формируется в единую глобальную систему. Одной из закономерностей мирового развития является глобализация экономики. Возрастающая глобализация экономики характеризуется резким увеличением масштаба и темпа перемещения капитала, который опережает рост международной торговли по сравнению с ВВП. За последнее время, значительно усилилась способность финансового капитала к незамедлительному перемещению информационных систем. Этот фактор включает в себя способность разрушать устойчивые экономические системы[1].

На стадии становления тенденции глобализации случился один из самых печальных периодов в истории современной РФ. Под угрозу было поставлено сохранение интеграции территории России и распад СССР. В 90-е гг. отставание глобальной конкуренции РФ выросло с помощью системного внутреннего кризиса и не просчитанной экономической политики государства. Государственная политика не учла в полном объеме интересы экономической безопасности страны. Только в первом десятилетии XXI в. произошел спад потребления и производства прошлых лет. Это позволило достичь по макроэкономическим показателям дореформенного уровня. В настоящее время появляются новые экономические угрозы, которые порождают открытость экономики России. В 2012 г. оборот внешней торговли достиг 45% от показателя ВВП. Это довольно таки высокий показатель, даже среди стран с развитой экономикой. Следует отметить, что результаты исследования Всемирного экономического форума (ВЭФ) говорят о том, что, несмотря на улучшения, экономика РФ все же одна из самых закрытых в мире, она поддерживает барьеры, которые препятствуют широкому участию нашей страны в мировой торговле, несмотря на включение России в ВТО[2].

[1] ***Титов В.И.*** Экономика предприятия: Учебник / В.И. Титов. – М.: Эксмо, 2011.

[2] ***Долгов С.И.*** Глобализация экономики: новое слово или новое явление?: Учебник. - М.:ИНФРА-М, 2010.

Производственный потенциал предприятия – это совокупность ресурсов, которые предоставлены в распоряжение предприятию для созидательной деятельности. А элементы производственного потенциала – это все ресурсы, связанные с развитием и функционированием предприятия. Все элементы функционируют в совокупности и одновременно, чем вызвана трудность анализа производственного потенциала предприятия. Именно поэтому, закономерность развития потенциала должна раскрываться как сочетание элементов.

Основное место испокон веков в производственном процессе отводилось рабочей силе – как ведущей производительной силе. Глобализация экономики влияет на трудовые ресурсы, путем потребности всего мира в квалифицированных кадрах. Понятно, что от количества, а особенно от качества персонала зависит производительная способность хозяйствующего субъекта. Производственная способность предприятия определена количеством используемых орудий труда.

Технико-экономические показатели воспроизводятся самой системой путем капитального ремонта и модернизации. Орудия труда взаимозаменяемы с другими видами ресурсов. Особенно высока взаимозаменяемость между основными фондами и живым трудом.

Учитывая глобализацию экономики, следует отметить, что развитие производительных сил в условиях научно - технического прогресса характеризуется радикальными изменениями не только орудий труда, но и методов производства, то есть технологии изготовления продукции.

Глобализация влияет на технологическую часть, так как существует множество технологических разработок ученых мира, и предприятие должно выбрать оптимальные для своей деятельности технологии. Технология является одним из важнейших элементов производственного потенциала. Технология всегда соответствует производимой продукции, всегда тождественна виду используемых орудий труда, рабочей силы и энергетических ресурсов. Технологическая база предприятия напрямую зависит от уровня организации и управления, наличия опыта и традиций трудового коллектива, его восприимчивости к достижениям научно - технического прогресса.

В условиях глобализации экономики и научно-технического прогресса быстро растет роль информации, специфического ресурса эпохи научно-технической революции. Знания становятся самым ценным жизненным продуктом. Информация – это необходимое условие и элемент любой производственной деятельности, которая по своей значимости все больше приравнивается к энергетическим и сырьевым ресурсам и используется для замещения живого труда, сырья и энергии. Информация приобретает характер товара и превращается в объект межгосударственной состязательности. Практически сложилась индустрия программирования, выпускающая ежегодно тысячи программ для ЭВМ и станков с ЧПУ. Информация обладает рядом специфических свойств: она не расходуется в процессе использования, расширение ее потребления практически не имеет ограничения, она обладает высокой ресурсосберегающей способностью. Информация регулирует функционирование процесса производства, способствует повышению произ-

водительности живого труда, эффективности использования предметов труда и энергетических ресурсов, помогает поднять уровень и эффективность технологий.

Информация в промышленном производстве используется в виде результатов научных разработок по совершенствованию основных фондов и предметов труда, навыков и знаний производственного персонала. Кроме того, глобализация влияет и на такие формы информации, как результаты научных разработок в области организации производства, труда и управления, данные по изучению рынка сбыта, программ управления машин и оборудования и т.д. Информация в полной мере соответствует признакам элемента производственного потенциала. Она наиболее эффективно замещает промышленно-производственный персонал, большой замещающий эффект в отношении основных фондов, позволяет экономить и другие ресурсы. Значительная часть ресурсов в виде информации получается в самом хозяйственном звене как результат действия его служб, а также от других специализированных организаций[3].

Следует отметить тот факт, что глобализация влияет на производственный потенциал через конкуренцию. Глобализация мировой экономики не могла не отразиться на формах конкурентной борьбы, которая привела к новой форме межфирменного соперничества, под названием «глобальная конкуренция».

В современных условиях принятый в классической экономической теории подход к национальному развитию, росту и процветанию с позиций природных ресурсов, рабочей силы, процентных ставок, курса и покупательной силы национальной валюты оказывается явно не достаточным. Характеристика конкурентоспособности как основы национального процветания должна исходить из основополагающего принципа - способности конкретной страны, ее промышленности своевременно вводить и осваивать новшества и модернизироваться. При этом ни одно государство не может быть конкурентоспособным во всех или хотя бы в большинстве отраслей. Даже страны с наиболее высоким уровнем жизни имеют много отраслей, в которых их местные компании оказываются неконкурентоспособными. Конкретные страны достигают успеха только в определенных отраслях и за счет того, что их внутренние условия оказываются наиболее благоприятными, динамичными и перспективными.

Прежде важным фактором конкуренции всегда было расстояние. В условиях высоких транспортных затрат на преодоление расстояний наличие собственных природных ресурсов и более дешевой рабочей силы имело огромное значение для обеспечения относительного преимущества. Фирмы всегда пользовались локальными преимуществами, проистекавшими из доступности местного сырья, а также преимуществом спроса местных потребителей. В регионах развитых стран фирмы пользовались преимуществами большого внутреннего рынка, которые характерны для зажиточных стран вследствие высокой стоимости жизни. Но удешевление коммуникаций, развитие сетевых фирм, системы многоуровневого маркетинга, виртуальной торговли и маркетинга с помощью сети Интернет сняли

[3] ***Титов В.И.*** Экономика предприятия: Учебник / В.И. Титов. – М.: Эксмо, 2011.

с регионов эту «защиту расстоянием» от конкуренции, появились новые формы конкуренции за территории. Если раньше борьба за территории происходила в форме захватнических войн, сегодня она приобретает новую форму - мирного экономического захвата. Одни регионы используют возможности других, делая их территории местом своего производства или сбыта (например, утилизации вредных отходов на территории других стран, или утилизации поддержанных автомобилей путем их сбыта, освоение предпринимательского пространства путем развития мелкого бизнеса на территории других регионов). Формой использования ресурсов других регионов является привлечение квалифицированной рабочей силы. Фирмы США, стран Западной Европы притягивают себе наиболее качественные трудовые ресурсы из других стран, причем современные виртуальные технологии позволяют работать в фирме другой страны, оставаясь «дома»[4].

Глобализация лишает регионы традиционных преимуществ в силу того, что многие локальные возможности становятся глобальным достоянием. Низкая стоимость труда или природных ресурсов, емкий внутренний рынок – все эти преимущества называют локальными «прозрачными ресурсами», которые могут быть мобильно использованы глобальными фирмами, стремление получить доступ к ним является двигателем глобализации и глобальных фирм. Эту тенденцию можно назвать глобализацией локальных ресурсов. Обеспеченность региона собственными природными или трудовыми ресурсами больше не является важным конкурентным преимуществом в условиях, когда эти ресурсы можно приобрести на глобальных рынках по схожим с внутренними ценами. Глобализация обуславливает постановку проблемы конкурентоспособности региона как готовности отвечать на вызовы глобальной среды, способности к изменению, способности искать и защищать локальные конкурентные преимущества. Конкурентоспособность региона – первая из проблем, которую можно назвать глобальной проблемой современности, проблемой присущей регионам самого разного уровня в самых разных странах.

Следует отметить, что все страны стремятся друг к другу при развитии мировой экономики, становясь взаимосвязанными, интегрированными и взаимозависимыми. Итогом этого является изменение соотношений сил в масштабе международного уровня, исчезновение и появление отраслей, изменение сравнительных преимуществ и идеи национальной экономики. Таким образом, происходит созидательно-разрушительный процесс. В конкурентных отношениях принимают участия отрасли, регионы, страны. Данный подход можно назвать «гонка без финиша», поскольку продолжается погоня, и никто не стоит на месте[5].

Преимущества большого внутреннего рынка не являются больше преимуществами в условиях, когда транспортные затраты несущественны и когда

---

[4] ***Титов В.И.*** Экономика предприятия: Учебник / В.И. Титов. – М.: Эксмо, 2011.

[5] ***Михайлов А.И.*** ВТО и социально-экономическое развитие России // Современные аспекты развития экономики России: проблемы и перспективы: сборник материалов Всероссийской научно-практической конференции. – М.: МГИУ, 2013.

покупатели все чаще и чаще выбирают предметы потребления прежде всего на основе цены, качества и марки. А соображения о национальной принадлежности производителя уходят на второй план. Глобализация может ставить вызов и принести последствия разрушительного характера для регионов с высокими издержками (Европа, Северная Америка, Япония). Существует такое опасение, что предприятия стран с большими издержками смогут перемещать свою сферу деятельности в страны с наименьшими издержками, или же вариант, что они не смогут выдержать конкуренции с дешевыми товарами из низкозатратных регионов и вскоре исчезнут. Этим самым, старые индустриальные страны придут к состоянию безработицы и опустошения.

Новые конкурентные условия деятельности международных предприятий формирует глобализация мировой экономики. Конкурентные условия влияют объективно на все сферы и уровни взаимодействия их с окружающей средой. Процесс либерализации финансовой сферы и мировой торговли, развитие «новой экономики», НТП, увеличение импорта капитала, совершенствование международной интеграции и разделения труда поспособствовало сложности структуры мирохозяйственных отношений. Так же произошло возникновение и развитие новых видов обеспечения конкурентоспособности на всех этапах мировой экономической системы.

Разнообразие и специфика реализуемой продукции на мировом рынке предусматривает конкуренцию на всех его уровнях. Глобализация влияет на факторы конкурентоспособности, особенно на предприятия глобальных отраслей, например, предприятия, занимающиеся информационной, электронной, телекоммуникационной техникой. В конце процесса либерализации, дерегулирования, с ростом капитала промышленных групп количество предприятий данных направлений значительно увеличивается. Характеризуемая тенденция явно усиливает конкуренцию, при которой сложнее добиться и удержать конкурентные преимущества, так как увеличиваются издержки на НИОКР, увеличиваются сроки их проведения, снижается жизненный цикл продукта. А так же происходит вертикальная интеграция фирм, относительно низкие барьеры выхода на рынок. И международное антимонопольное регулирование в рамках ВТО увеличили число конкурентов, способных не только преодолеть рыночные барьеры, но и на равных соперничать с существующими на рынке предприятиями.

Глобализация экономики влияет на производственный потенциал предприятия путем взаимодействия с его элементами: а в основном с потребностью в квалифицированных кадрах, с освоением новых технологий и обменом информацией.

Конкурентное соперничество предприятий эффективно изменило процессы глобализации мировой экономики. Об этом говорит создание предпосылок для наиболее дифференцированного метода к цели конкурентной борьбы. Следует отметить, что раньше целью конкуренции была борьба между предприятиями за

получение прибыли. На сегодняшний день цель соперничества – это борьба за каждого потребителя[6].

Литература

1.Долгов С.И. Глобализация экономики: новое слово или новое явление?: Учебник. - М.:ИНФРА-М, 2010.-250 с.

2.Титов В.И. Экономика предприятия: Учебник / В.И. Титов. – М.: Эксмо, 2011. – 416 с.

3.Михайлов А.И. ВТО и социально-экономическое развитие России // Современные аспекты развития экономики России: проблемы и перспективы: сборник материалов Всероссийской научно-практической конференции. – М.: МГИУ, 2013. – 386 с.

Ռենատ Զեյնալով - *Տնտեսության գլոբալացումը և նրա ազդեցությունը ձեռնարկության արտադրական ներուժի վրա:* - Սույն հոդվածը նվիրված է տնտեսության գլոբալացման խնդրին և նրա ազդեցությանը ձեռնարկության արտադրական պոտենցիալի վրա: Ուսումնասիրված են ձեռնարկության արտադրական ներուժի բաղադրիչները և թե ինչպես է դրանց վրա ազդում տնտեսության գլոբալացումը: Գլոբալացումը բարդ գործընթաց է, որը միավորում է բոլոր երկրների տնտեսությունը և ազդում է արտադրական ներուժի վրա մրցակցության միջոցով: Այսօր մրցակցությունների նպատակը յուրաքանչյուր սպառողի համար պայքարն է: Տնտեսության գլոբալացումը կարող է հանգեցնել ինչպես դրական այնպես էլ բացասական հետևանքների:

Renat Zeynalov - *Globalization of the economy and its impact on the productive capacity of the enterprise.* -This article is devoted to the problem of the impact of globalization on the productive potential of enterprises. The elements of the productive capacity of the company are examined and how they are affected by the globalization of the economy. Globalization is a hard process, which unites all countries of the world and affects on productive potential through competition. Today the aim of competition of enterprises is the fight for every consumer. The globalization of economy can have a positive or negative impact.

[6] ***Титов В.И***. Экономика предприятия: Учебник / В.И. Титов. – М.: Эксмо, 2011.

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍԹՐԵՍ-ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՆՆԱ ՔԱՄԱԼՅԱՆ

Ադրբեջանի կողմից արցախահայության նկատմամբ ճնշումները հիմք հանդիսացան 1988 թվականին հայ-ադրբեջանական հակամարտությունների համար: Դրա հետևանքով Ադրբեջանին հարակից հայկական տարածքներում ևս ծավալվեցին պատերազմական գործողություններ, որոնք բացասական ազդեցություն թողեցին ՀՀ-ի սահմանամերձ գոտում բնակվող ազգաբնակչության վրա: Մինչ օրս, զինադադարի բազում խախտումների հետևանքով, շարունակվում է հանրապետության սահմանի երկայնքով հայ ազգաբնակչության նկատմամբ դիսթրեսային տևական ազդեցությունը՝ ռազմական, ինֆորմացիոն, սոցիալական ու տնտեսական ավերիչ գործոններով: Սոցիալ-հոգեբանական և նյարդահոգեկան ծայրաստիճան լարվածության պատճառով խախտվում է օրգանիզմի ներքին հավասարակշռվածությունը: [1] Ավելին՝ զանազան դժվարությունների հաղթահարումը պահանջում է ուժերի գերլարում, որը տևական անորոշության և ավերիչ սթրեսորների ազդեցությամբ հաճախ հանգեցնում է հոգեբանական սահմանային վիճակների: Այդ իսկ պատճառով կարևորագույն խնդիր է հանդիսանում նմանատիպ պայմաններում անձի հոգեֆիզիոլոգիական ֆունկցիոնալ տեղաշարժերի ուսումնասիրումը:

Բանալի բառեր. Սահմանամերձ գոտի, սթրես-կայունություն, երիտասարդ, հոգեվիճակ, անբարենպաստ պայմաններ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի՝ ՀՀ՝ պետական սահմանագծից Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքը կոչվում է սահմանային գոտի: Իսկ սահմանային գոտու մի մասը, որը հարում է պետական սահմանին՝ մինչև 1 կմ լայնությամբ, կոչվում է սահմանային շերտ:

Սահմանային գոտին ձգվում է 9 մարզերի տարածքով՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի:

«Սահմանամերձ բնակավայր», «սահմանամերձ համայնք» հասկացությունները ՀՀ օրենքներում ամրագրված չեն: Սակայն ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» թիվ 713 որոշմամբ, սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) ցանկերը հաստատելիս, հիմք են ընդունվել հետևյալ չափանիշները՝

ա)Ադրբեջանի Հանրապետության հետ պետական սահմանի սահմանային գոտում գտնվելը.

բ)Հայաստանի Հանրապետության սահմանային շերտում գտնվելը.

գ)Հայաստանի Հանրապետության կառավարության 1993-1995 թվականների որոշումներով հաստատված ցանկերում ընդգրկված լինելը:

[1] ***Петров Н.Н.***Человек в черезвычайных ситуациях. Челябинск. 1997.-352 с.

Նշված չափանիշներին համապատասխան՝ սահմանամերձ տարածաշրջան ունեն Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերը:

Սահմանամերձ տարածաշրջանների հիմնախնդիրներն են՝

- տնտեսական ներուժի անկումը,
- հողային ֆոնդի անարդյունավետ օգտագործումը,
-օգտագործվող ցանքատարածությունների ու բազմամյա տնկարկների կրճատումը,
- ֆինանսական միջոցների բացակայությունը կամ սակավությունը,
- մարտական գործողությունների և տարերային աղետների հետևանքով շարքից դուրս եկած կամ խիստ վնասված ենթակառուցվածքները (բնակարանային ֆոնդ, շինություններ, ճանապարհներ, խմելու ջրագծեր, առողջապահական, կրթական, կուլտուր-կենցաղային օջախներ, ոռոգման ցանցեր և կոյուղագծեր),
-ականապատման և կյանքի անվտանգության երաշխիքների բացակայության պատճառով սահմանամերձ տարածքների օգտագործվող հողատեսքերի կրճատումը,
-տարիներով չնորոգված դպրոցական շենքերը, բուժկետերի, մշակույթի օջախների բացակայությունը կամ քայքայված վիճակը,
- բնակչության թվի զգալի նվազումը,
- երիտասարդության արտահոսքն ու ծնելիության մակարդակի անկումը և այլն,
-մարդատար-բեռնատար տրանսպորտային և հեռախոսային կապի անմխիթար վիճակը,
- բեռնափոխադրումների հեռահարությունը, բարձր սակագները,
- մշտական աշխատատեղերի բացակայությունը և ցածր աշխատավարձը,
- վերամշակող ձեռնարկությունների գրեթե անգործությունը,
-մատակարար-գնորդ ենթակառուցվածքների բացակայությունը և այլն [180]:

Վերոնշյալ դժվարություններն է՛լ ավելի են սրվում, երբ վերաբերում են այն տարածաշրջանների սահմաններին, որտեղ անկայուն, անորոշ և թշնամական հարաբերություններ են տիրում:[2]

Կարծում ենք, որ հիմնախնդրի հոգեբանական ուսումնասիրությունները հնարավորություն կտան առավելագույնս ամբողջական դարձնելու սթրես-կայունության վերաբերյալ տեսական և կիրառական պատկերացումները: Իսկ մեր հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս նաև բացահայտելու սահմանամերձ գոտում ապրող երիտասարդների սթրես-կայունության դրսևորման նախադրյալները, դրանցում ինտերնալ և էքստերնալ տեղորոշման հիմնավորվածությունը: Սա իր նպաստը կբերի սթրես-գործոնների կանխարգելման և երիտասարդների հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնելու ընթացակարգերին:

Հետազոտական համակազմ ընդգրկվել են ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի (Բերքաբեր, Սարիգյուղ, Վազաշեն, Այգեհովիտ, Կիրանց) 22-30

[2] ***Медведев В.И***. Устойчивость физиологических и психологических функции человека при действии экстремальных факторов – Л., 1982.- 103с.

տարեկան 100 երիտասարդներ (արական և իգական սեռերի ներկայացուցիչները՝ հավասարապես բաշխված)՝ որպես թիրախ խումբ և ՀՀ Երևան քաղաքի 22-30 տարեկան 100 երիտասարդներ (արական և իգական սեռերի ներկայացուցիչները՝ հավասարապես բաշխված)՝ որպես ստուգիչ-համեմատական խումբ:

Սահմանամերձ գոտում բնակվող երիտասարդների շրջանում գերլարված, բացասական հոգեվիճակներն արտահայտվում են սթրես-կայունության թույլ հնարավորություններով, անձի ինքնագնահատականի և ինքնազգացողության ցածր մակարդակներով, տագնապալիության բարձր աստիճանով, տրամադրության հաճախակի անկումների միտումով, ագրեսիվ վարքի նախատրամադրվածությամբ, ֆրուստրացվածությամբ ու ռիգիդությամբ: Սրանք պատճառ են դառնում, որ սթրեսորների նկատմամբ անձի հոգեբանական հակազդումները անընդհատ հապաղեն կամ հետաձգվեն՝ ավելացնելով սթրեսորների տևականությամբ ծագող բացասական էֆեկտները:[3]

1.Սթրեսակայունության ձևավորման ու պահպանման հոգեբանական բովանդակությունն են կազմում սթրես-գործոնների նկատմամբ անձի մոբիլիզացիոն հնարավորությունները՝ կամային կարգավորման հետևյալ բաղադրիչներով.

- միջավայրում անբարենպաստ փոփոխություններ նկատելիս հույզերի նկատմամբ չհետաձգված ինքնավերահսկողություն իրականացնելու ունակություն,
- դրական հոգեվիճակի պահպանման ունակություն,
- ինքնագնահատականը միջավայրի անկայուն փոփոխվող պայմաններին համապատասխանեցնելու կարողություն,
- տևական սթրեսորներին դիմադրելու հոգեբանական հմտություն՝ հաստատուն ինքնազգացողություն հակադրելու միջոցով:

2.Սահմանամերձ բնակավայրերում, կյանքի համար անբարենպաստ ու վտանգավոր պայմաններում, երիտասարդների սթրես-կայունության հավանական տեղաշարժերը կարելի է կանխարգելել սթրեսորների նկատմամբ հոգեբանական մոբիլիզացիայի վերոնշյալ բաղադրիչների գործարկմամբ՝ հաշվառելով տևական սթրեսորների ծավալները, հաղթահարող վարքի անհատական ու խմբային եղանակները: Իսկ մեր կողմից մշակված հոգեճանաչողական և հոգեվերականգնողական հնարքների համալիրն օժտված է արտակարգ, ճգնաժամային, լարված կենսակերպի պայմաններում սթրես-կայունության անհրաժշտ մակարդակը արդյունավետ կերպով ապահովելու հատկություններով:

Այսպիսով, հետազոտության շնորհիվ առանձնացված են սահմանամերձ գոտու կենսագործունեության անբարենպաստ պայմանների հոգեբանական բնութագրերը և անձի ֆիզիկական ու հոգեկան ոլորտների վրա թողած դրանց ազդեցությունը: Ըստ հոգեբանական ազդակների (ստահոտ լուրեր, կրակոցներ, ականապատ տարածքներ, հավանական պատերազմների ու համաճարակների սպառնալիքներ և այլն), բացահայտված են սահմանամերձ գոտուն բնորոշ յուրահատուկ հոգեվիճակների կոնկրետ դրսևորումներ: Յուրաքանչյուր համակազմի

[3] ***Малкина-Пых И.Г.*** Экстремальные ситуации. М.: Эксмо, 2006.- 960 с.

համար առանձնացված են բնորոշ սթրեսորների խմբեր և համապատասխանաբար դրանց հետևանքով առաջացած հոգեվիճակներ: [4]

Աշխատանքում, փորձարարական հետազոտությունների հիման վրա, հաստատված է անձի հոգեֆիզիոլոգիական հարմարման և վերականգնման գործընթացում ինքնակարգավորման հոգեբանական մեթոդների դերն ու նշանակությունը: Ինքնակարգավորման հնարքների յուրացումը և հոգեվերականգնման գործընթացը տեղի է ունենում փուլ առ փուլ, հնարքների յուրացումը կրում է անհատական բնույթ, նրանց տևական, հետևողական կիրառումը ապահովում է աշխատունակության բարձր մակարդակ:

Հոգեվերականգնման վերբալ հնարքների, համալիրի օգտագործումը հնարավորություն է տալիս նպատակաուղղված կերպով ազդել խմբերում ընդգրկված անձանց հոգեկան գործառույթների, ֆիզիոլոգիական հնարավորությունների կատարելագործման վրա:

Դրանց զուգահեռաբար օգտագործումը օժանդակում է անձնային որակների զարգացմանը, սթրես-կայունության մակարդակի բարձրացմանը, օրգանիզմի ընդհանուր աշխատունակության, օրգանիզմի գործառութային հնարավորություն-ների ինքնուրույն մոբիլիզացմանը, միջավայրի անբարենպաստ պայմաններում հոգեբանական հարմարմանը, հոգեկան վիճակների կարգավորմանը և այլն: Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս մասնագետներին տարբեր իրավիճակներում և տարբեր փուլերում վերահսկել մարդկանց օրգանիզմի վերականգնողական գործընթացների փոփոխությունների ընթացքը: Իսկ կատարված չափումները ցույց են տալիս, որ փորձարկվող խմբերում դրական բոլոր ցուցանիշները հավաստի աճել են: Այս փաստը իրավամբ, աշխատանքի ձեռքբերումներից մեկն է, որը առանց վարանելու կարելի է վերագրել հոգեվերականգնողական աշխատանքներում կիրառվող հոգեբանական և ֆիզիկական վարժությունների համալիրի ճիշտ կազմակերպման գործընթացին: Շնորհիվ մշակված համակարգի և նրա կիրառման տեխնիկայի, կարելի է բարելավել ուշադրության կենտրոնացման և տեղափոխման, հիշողության գործընթացները, վեստիբուլյար ապարատի աշխատանքը, մկանային հատուկ զգայությունների գործունեությունը, որոնք կարևոր դեր են խաղում երիտասարդների օրգանիզմի պաշտպանվածության, նորմալ կենսագործունեության ապահովման գործում:[5]

Այս ամենը մեզ հիմք է տալիս ներկայացնելու մի շարք հանձնարարականներ, որոնց հաշվառումը արտակարգ պայմաններում հոգեվերականգնման աշխատանքների իրականացման ժամանակ կբարձրացնի այդ գործընթացի արդյունավետություն:

Մինչև հիմնական աշխատանքներին ձեռնամուխ լինելը անհրաժեշտ է մի քանի պարապմունք անցկացնել արտակարգ պայմաններում հոգեբանական խնդիրների էության, նշանակության մասին: Ծանոթացնել օրգանիզմի տարբեր համակարգերի գործառության, նրանց անհրաժեշտ համագործակցության հիմնական բացատրություններին: Հիմնական նպատակը պետք է լինի ինքնակար-

[4] ***Апчел В.Я., Цыган В.Н***., Стресс и стрессоустойчивость человека.- СПб.: ВМА, 1999. -86 с.

[5] ***Ромек в.Г., Контрович В.А.,Крукович Е.Ч***. Психологическая помощь в кризисных ситуациях. СПб.: Речь 2004.-361 с.

գավորման հնարքների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը և գործնականում կիրառելը: Մասնակիցների գիտակցությանը պետք է հասցնել այն միտքը, որ մարմնականը և հոգեկանը իրար հետ սերտ կապի մեջ գտնվող համակարգեր են: Կոփելով մեկը՝ կոփվում է և մյուսը: Այն, որ հոգեկանով կարող են պայմանավորված լինել օրգանիզմի տարբեր համակարգերի միջև գոյություն ունեցող հավասարակշռությունը և համագործակցությունը: Նախնական պարապմունքներում մասնակիցներին տալ հանրամատչելի գիտելիքների պաշար՝ հոգեկանի, օրգանիզմ-միջավայր միասնության, երևույթների փոխկապվածության, օրգանիզմում պատճառահետևանքային կապերի, հարմարողական, վերականգնողական հնարավորությունների, օրգանիզմի տարբեր համակարգերի, ամենօրյա խնամքի մասին: Սրանց շնորհիվ մասնակիցները գաղափար կունենան իրենց ինքնուրույն կարգավորման գործընթացները կազմակերպելու և վերահսկելու վերաբերյալ:

Այս և նման թեմաների ուսուցումը կարող է նպաստել բացասական ազդակների նկատմամբ անձի կողմից պայքարի ինքնուրույնությանը, օրգանիզմի և հոգեկանի կենսագործունեության համար հոգեբանական պատրաստվածությանը: Կապահովվի անհրաժեշտ տեսական հիմքը՝ անբարենպաստ պայմաններում գործունեության արդյունավետության պահպանման և տարբեր համակարգերի աշխատանքային ռիթմերի ներդաշնակության հաստատման ուղղությամբ:

Կազմակերպել անհատական և խմբային պարապմունքներ, որոնց ընթացքում յուրաքանչյուր մասնակից կսովորի խոսել իր անցյալի ապրումների մասին: Թույլ տալ, որ յուրաքանչյուրը հնարավորություն ունենա պարպել այն ներքին բացասական լիցքավորումը, անբավարարվածությունը, որը կապված է, կիսատ-պռատ, մինչև վերջ չապրած սգի, կորստի, վախի, ատելության, մեղքի զգացման, վրեժխնդրության, լքվածության, խաբվածության ապրումների հետ: Հոգեբանը զգույշ, կարեկցող, բայց ոչ խղճահարության զգացումով պետք է վստահություն ներշնչի մասնակցին: Հնարավորություն ընձեռել ինքնուրույն վերլուծելու, պարզաբանելու իր բացասական ապրումների պատճառները, նրանց բնույթը, սեանսներին իր մասնակցության կարևորությունը: Անհրաժեշտության դեպքում պետք է այցելուին հնարավորություն տրվի, որ նա իր անձին բնորոշ ձևերով արտահայտվի: [6] Պատճառների, ընթացքի, ապրումների բնույթի պարզաբանումից, այցելուի լիարժեք պարպվելուց հետո, մեկ երկու օր հանգիստ է տրվում, այնուհետև նրբորեն նորից են շոշափվում այս հարցերը: Հոգեբանը աննկատ հուշում, կողմնորոշում է այցելուին, ոգևորում, քաջալերում է, օժանդակում է անհրաժեշտ նոր հայացքների, վերաբերմունքի, դիրքորոշման ձևավորմանը: Յուրաքանչյուր դրական տեղաշարժ, հոգեբանը այցելուի համար դարձնում է կարևորագույն հանգամանք և ամենափոքր հաջողությունների դեպքում դրանց վրա հիմնվելով՝ կառուցում է հետագա վերականգնողական աշխատանքները: Այստեղ ինքնուրույնությունը տրվում է այցելուին՝ կողմնորոշվելու իր հետագա օրագրերում, անելիքներում, սակայն անհրաժեշտության դեպքում այն աննկատ վերահսկվում և շտկվում է հոգեբանի կողմից:

---

[6] ***Тарас А. Е., Сельченок К.В.,*** Психология экстремальных ситуаций. Хрестоматия Харвест,Минск, 1999.-476 с.

Անհրաժեշտ է մասնակիցների գիտակցությանը հասցնել այն փաստը, որ հոգեկան ոլորտի ինքնակառավարումը հնարավորություն է տալիս կարգավորելու օրգանիզմի էներգետիկ ծախսերի, աշխատունակության, սթրես գործոնների նկատմամբ արգելքադիմացկունության, կայուն աշխատանքային ռիթմերի ձևավորման, տարբեր ռեժիմների վերահսկման (աշխատանքային, հանգստի, սննդի, քնի և այլն) գործընթացները:

Սկզբնական պարապմունքները պետք է ուղղված լինեն խմբում ծանոթություններ, ջերմ կապեր ստեղծելու, միմյանց հետ շփվելու, տեղեկությունների փոխանակման և վերականգնողական միջոցների արդյունավետ ազդեցության վերաբերյալ դրական դիրքորոշում ստեղծելու ուղղությամբ և այլն: Դրա համար ցանկալի է, որ պարապմունքները կրեն խաղային բնույթ օգտագործելով որոշ մրցակցական տարրեր: Յուրաքանչյուր պարապմունքից հետո պետք է հնարավորություն տալ մասնակիցներին խոսել իրենց զգացմունքների, տպավորությունների, վարժությունների, հնարքների ազդեցության հետևանքների մասին: Սա կնպաստի, մի կողմից, այցելուների և հոգեբանի միջև ջերմ, ընկերական կապերի ստեղծմանը, մյուս կողմից՝ կապահովի միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապի ստեղծումը:

Ինքնակարգավորման հնարքների ուսուցումից առաջ անհրաժետ է օգտագործել օժանդակ հնարքներ՝ մասնակիցներին վստահություն և հավատ ներշնչելով բառային ձևակերպումների, խոսքի զորեղ, կարգավորող ազդեցության նկատմամբ: Պարզաբանել խոսքի, բառային ազդակների հոգեբանական ազդեցությունը, նրա կարևորությունը ընդհանրապես վարքի կառավարման, որոշումների ընդունման, հաղորդակցության, միջավայրի հետ կապի մեջ մտնելու և այլ կարևորագույն հոգեկան գործընթացների համար:

Ինքնակարգավորման և ինքնակառավարաման պարապմունքներով մասնակիցների կողմից ձեռք է բերվում իրենց գիտելիքները կարևորելու, ճիշտ կիրառելու համոզմունք: Դա արթնացնում է խմբի մյուս անդամներին ճանաչելու և համեմատվելու շահագրգռվածություն: Նրանք մտքեր են փոխանակում, վիճում, չկասկածելով, որ դրանով իսկ նրանց մեջ տեղի է ունենում հոգեբանական շտկում և վերականգնում: Ամրապնդվում է հավատը սեփական ուժերի նկատմամբ: [7]

Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր մասնակից ունենա անձնական օրագիր, որտեղ կգրառվեն ամբողջ օրվա ընթացքում նրա օրգանիզմի, հոգեկան տեղաշարժերը: Այնտեղ պետք է գրանցվեն առանձնապես դժվարություն չհանդիսացող այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են քնի, ախորժակի, ինքնազգացողության, ակտիվության, սրտի զարկերի հաճախության, առանձին ապրումների, երազների բովանդակության, շփվողականության, պարապմունքներով ձեռք բերված ունակությունների, հմտությունների, տրամադրության և այլ փոփոխությունների մասին ակնարկներ: Այսպիսի հետևողական գրառումները հնարավորություն կտան առաջին օրվանից մինչև սեանսների ավարտը, ունենալ մասնակիցների վերաբերյալ անհրաժեշտ և մանրամասն տեղեկություններ:

Հմտությունների ձևավորման գործընթացի արդյունավետությունը կարող է գնահատվել 5 բալանոց համակարգով, որտեղ 1 միավորը կնշանակի նախա-

[7] ***Щербатых Ю.В***. Психология стресса и методы коррекции. Питер, М.-Апб 2008.- 256 с.

տեսված վիճակների ու որակների անփոփոխություն, 2-ը՝ չնչին տեղաշարժ, 3-ը՝ ակնհայտ տեղաշարժ (միջին չափ), 4-ը՝ լավ, զգալի փոփոխություն, 5-ը՝ գերազանց դրսևորվածություն: Ամենօրյա այսպիսի վերահսկողությունը հոգեբանին հնարավորություն կտա բացի օբյեկտիվ տվյալներից, ունենալ նաև այդ արդյունքներին համապատասխան սուբյեկտիվ ապրումների մասին գնահատականները: Անձնական յուրահատուկ ապրումները, զգայությունները այն նրբին տեղաշարժերն են, որոնք շատ հաճախ անտեսվում են: Սակայն դրանցով դրական և բացասական տեղաշարժերի սկիզբ է կանխատեսվում: Դրանք կարող են համեմատվել, որի հիման վրա էլ մշակվել անհատական աշխատանքների ծրագրեր: Այսպիսի առաջնային զգացումները շեմային և ենթաշեմային մակարդակի փոփոխությունների մասին են, որոնք կարելի է կարգավորել: [8]

Անկաշկանդ մթնոլորտի ստեղծումից, մտքերի փոխանակումից հետո սահուն անցում է կատարվում հիմնական սեսիային:

1.Հոգեվերականգնման սեանսները պետք է սկսել օրվա երկրորդ կեսին, հաշվի առնելով օրգանիզմի կենսաբանական ռիթմերը, աշխատունակության անկման ցուցանիշները, մարդկանց առօրյա և աշխատանքային զբաղվածությունը: Սեանսները պետք է ավարտվեն մոբիլիզացնող հնարքների, վարժություններ կիրառմամբ, ակտիվացնող շնչառական և օրգանիզմի ակտիվությունը վերականգնող վարժություններով (սեանսներից հետո նկատվում է պասիվություն, վերջույթներում ծանրության զգացում, հորանջ, հնարավոր է թեթև «ջարդվածության» զգացում և այլն):

2.Հոգեվերականգնման հնարքների տիրապետման ընթացքում պետք է տրվեն տնային հանձնարարություններ՝ օրագրերում նշելով նրանց կատարման տեղաշարժերը, արդյունավետությունն ու սուբյեկտիվ զգացումների վերաբերյալ գնահատականները: վերականգնողական տարբեր ուղղվածության հնարքները (հանգստացնող, ակտիվացնող, քնեցնող, թուլացնող և այլն) պետք է կիրառվեն առօրյայում, աշխատանքի վայրում, տրանսպորտում, զբոսնելիս, քնելուց առաջ և այլն:

3.Պարապմունքների ընթացքում ոչինչ չպետք է պարտադրվի, բացառվում են ամեն տեսակ հարկադրական, ստիպողական գործողությունները: Ցանկացած գործընթաց կառուցվում է փոխադարձ համաձայնության սկզբունքի հիման վրա: Սկզբնական փուլերում վարժությունները կազմակերպվում են մասնագետի ուղեկցության հաշվառմամբ, ապա, աստիճանաբար անցում կատարում առանձին՝ ինքնուրույն ընթացակարգերին:

Ահա հանձնարարականների այն շարքը, որը նպատակահարմար է իրականացնել օրգանիզմի և հոգեկան համակարգերի վերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման ընթացքում:

Анна Камалян.-***Психологическая характеристика особенностей стрессоустойчивости молодежи пограничной зоны.*** - До сих пор в Армении по причине нарушения премирия, в пограничных зонах продолжаются стрессогенные состояния, которые негативно воздействуют на стрессоустойчивость молоде-

[8]***Анцупов А.Я., Шиплиов А.И.***, Трудные ситуации в жизнедеятельнсти человека.-В.кн. Психология конфликта. Хрестоматия Сост. Общ. Ред. Н.В. Грищиной.- СПб Питер, 2001.-55с.

жи. *Стрессоустойчивость это* способность человека адекватно реагировать на какую-либо напряженную ситуацию и легко переносить ее, не погружаясь в состояние стресса. Срессоустойчивость предполагает взаимодействие всех компонентов психической деятельности человека, а именно, эмоциональных, волевых, интеллектуальных, мотивационных, которые обеспечивают успешное достижение цели деятельности в сложной обстановке.

Anna Kamalyan.- ***Psychological stress characteristic features of young border zone.***- Until now, in Armenia due to ceasefire violations, stressful state continues in the border areas, which adversely affect the ability to handle stress youth. Stress resistance is the ability of a person to adequately respond to any stressful situation and easy to carry it, without sinking into a state of stress. Stress resistance involves the interaction of all components of human mental activity, namely, emotional, volitional, intellectual, motivational, that ensure the successful achievement of the goal of activities in a difficult environment.

ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻԹ ՖԼՋՅԱՆ

Սույն հոդվածում քննարկվում են երեխաների տեսողական ընկալման զարգացման խնդիրները, դրանց միտված ուսուցման մեթոդները, սովորողների կերպարվեստային գործունեության ընթացքում պատկերագրման մասին պատկերացումների ձևավորման ոլորտի ընդլայնման պայմանները:

Արվեստի ուսուցման մեջ ստեղծագործական մտածողության զարգացումը տեղի է ունենում ինչպես տեսողական ընկալման զարգացման, այնպես էլ զուտ կատարողական խնդիրների լուծման ընթացքում:

Բանալի բառեր. պատկերացումների ձևավորում, ստեղծագործական կարողություններ, տեսողական ընկալում, արտահայտչականություն, կատարողական հնարներ:

Շատ հետազոտողներ երեխաների ընկալման կարողությունների ձևավորմանն ուղղված մանկավարժական աշխատանքը համարում են նպատակադիր, իսկ շրջապատող առարկայական աշխարհի ու երևույթների մասին պատկերացումների ձևավորմանն ու ընդլայնմանն ուղղված մեթոդները՝ առաջնային:

Խոսելով երեխաների տեսողական ընկալման զարգացման մասին՝ հարկ է հիշել, որ վաղ տարիքում խոսքը վերաբերում է ընկալմանն ընդհանրապես, առարկաների ձևերը, գույները տարբերելու ընդունակության աստիճանական զարգացմանը: Այս հիմնախնդիրները հետազոտվել են այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսիք են Լ.Ս.Ներսիսյանը[1] [2] Տ.Ս.Կոմարովան[3], Ն.Պ.Սակուլինան[4]:

Երեխաների տեսողական ընկալման զարգացմանը միտված ուսուցման մեթոդների շարքում հարկ է առանձնացնել հետևյալները. բնության նպատակաուղղված դիտման կազմակերպում տարվա տարբեր եղանակներին, օրվա տարբեր ժամերին՝ վերջինիս տարբեր վիճակներում արշավների կամ տեսանյութերի դիտման ժամանակ, բնօրինակի հետազոտում, նրա հուզական ընկալում՝ հատկանիշների ու որակների, ձևի գեղագիտական ու երկրաչափական հատկանիշների, կառուցվածքի, գույնի, մակատեսքի հետագա հաջորդական մշակմամբ:

Սովորողների կերպարվեստային գործունեության ընթացքում առաջադրանքների և կատարողական միջոցների ու հնարքների բարդացմանը զուգընթաց ի հայտ են գալիս պատկերագրման մասին պատկերացումների ձևավորման ոլորտի ընդլայնման պայմանները: Նման բաժանումն, իհարկե, խիստ պայմանական է, հարաբերական և կիրառվում է այն դեպքում, երբ հարկ է առավել ամբողջականորեն նկարագրել և ուսումնասիրել սովորողների կերպարվեստային ըն-

[1] ***Ներսիսյան Լ. Ս.***, Գեղարվեստական պատկերացումների տեղը ստեղծագործական գործունեության մեջ, «Մանկավարժական միտք», «Զանգակ-97» հր., 2002, 152 էջ:

[2] ***Ներսիսյան Լ. Ս.***, Կրթություն և գեղագիտություն, Երևան, «Զանգակ-97» հր., 2002, 157 էջ:

[3] ***Комарова Т.С.*** Изобразительное творчество дошкольников в детском саду.-М., 1984.- 120с.

[4] ***Сакулина Н. П., Комарова Т. С.*** Рисование в дошкольном возрасте. – М.: Просвещение, 1982. - 208 с.

դունակությունների ձևավորման մեթոդները: Այս ոլորտը գեղարվեստական դաստիարակության տեսության բնագավառում ամենաքիչ ուսումնասիրվածներից է, և հենց այստեղ են ի հայտ գալիս ուսուցման ամենալուրջ դժվարությունները: Երեխայի առջև չի ծառանում «ինչպե՞ս պատկերել» խնդիրը, նրա համար կարևոր է, թե «ի՞նչ» է պատկերում:

Ֆ.Ի.Շմիտը նկատել է, որ նկարչության ուսուցումը հանգեցնում է գլխավորապես «տեսողական երևակայության զարգացմանը. Նկարել «չկարողացող» մարդը ներքուստ կույր է, և չի կարող ոչ տեսնել, ոչ էլ պատկերացնել տեսածը»[5]:

Վաղ տարիքում երեխայի մոտ նախնական պատկերացումը պատկերման մասին պարզապես բացակայում է: Նախադպրոցական տարիքի ավարտին երեխայի մոտ ի հայտ են գալիս նման պատկերացումների փուլային ձևավորման նախադրյալները միայն: Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվում են գեղարվեստական պատկերացումների հիմքերը: Կրտսեր դպրոցականներն արդեն ընդունակ են տիրապետել արտահայտչականության տարբեր միջոցների (ինչպես օրինակ՝ գույնը, գիծը, բիծը, ուրվագիծը, ռիթմը, հակադրությունը, յուրացնել կատարողական տարբեր հնարներ: Տիրապետելով «արվեստի լեզվին»՝ երեխան աստիճանաբար սովորում է կանխատեսել թե ինչպիսին կլինի ավարտուն նկարն այս կամ այն նյութով աշխատելու դեպքում, զարգանում է պատկերին համապատասխան արտահայտչականության կատարողական հնարների ու միջոցների ընտրության ընդունակությունը:

Դեռահասային տարիքում արդեն կարելի է խոսել առարկայական պատկերացումների ձևավորման, նյութական մտածողության, պատկերը կանխատեսելու ոլորտում նշանակալի հնարավորությունների մասին: Այսպես կոչված «դեռահասային ճգնաժամը» հենց նրանում է կայանում, որ մտածողության զարգացման, ընկալունակության խորացման, աշխարհի մասին տպավորությունների պաշարի, պատկերացումների, պատկերների խորացման հետ միասին դեռահասի մոտ ամբողջանում են համոզմունքները որպես ասելիք: Այստեղ արդեն ի հայտ է գալիս արվեստի լեզվի կատարողական միջոցների հիմնախնդիրը, այսինքն՝«ի՞նչ ասել», «ինչպե՞ս ասել», ինչպե՞ս դիտողին հասցնել սեփական մտքերն ու զգացմունքները, որոնք բավական բարդ ու հակասական գործընթացներ են:

Չկարողանալով լուծել խնդիրը, արտահայտել մտահղացումը նյութի միջոցով՝ դեռահասը կորցնում է հետաքրքրությունը կերպարվեստի նկատմամբ: Դեռահասային տարիքի հիմնախնդիրը լուծվում է հենց գեղարվեստական հատուկ մտածողության միջոցով:

Ըստ Վ. Ս. Շչերբակովի՝ «Պատկերման գործընթացում պատկերացումների համակարգ կազմող ոլորտի սահմանափակումը հանդիսանում է խնդիր ստեղծագործական առումով, քանի որ նկարչի մտապատկերում գոյություն ունեցող պատկերացումն առարկայի մասին կարող է բացահայտվել միայն պատկերի մասին պատկերացումների ձևերի մեջ…: Տվյալ բնօրինակի հատուկ մշակման գործընթացում էլ բացահայտվում է հենց այն գաղտնիքը, որը պարփակված է գեղար-

[5] ***Шмит Ф. И.*** Почему и зачем дети рисуют. - М., 1924.-196 с. - С. 113-114.

վեստաստեղծագործական գործընթացում, և ըստ էության չղեկավարվող է, քմահաճ, անհասանելի»[6]:

Բնօրինակի ընկալումն ինքնին նկարչի մոտ միջնորդավորված է կատարողական միջոցներով, պատկերացումներով, թե ինչպես կարող է այն պատկերված լինել: Նման դիրքորոշման պարագայում ակնհայտ են դառնում կերպարվեստի դասավանդման նկատմամբ տարածված սխալ մոտեցումները, որոնք հիմնավորված չեն գեղարվեստական նյութերի յուրացմամբ և դրանց հետ աշխատանքի միջոցներով: Նման դեպքեր հանդիպում են նաև արվեստի դպրոցներում այնպիսի առարկաների դասավանդման գործընթացում, ինչպիսիք են գեղանկարը, գծանկարը, կոմպոզիցիան: Մանկավարժը վերլուծում է դրվածքը, ձևակերպում ուսումնական խնդիրները, իսկ կատարողական հնարքների ցուցադրումն այս դեպքում բացակայում է: Մանկավարժը չի բացատրում, թե ինչպե՞ս կարելի է աշխատել մատիտով, ինչպես նրբագծել, աշխատել ջրաներկով, գտնել անհրաժեշտ գույնը, երանգը և այլն: Հին դպրոցն այս խնդիրը լուծել էր արտանկարման միջոցով:

Սովորողների գեղարվեստապատկերային մտածողության ձևավորման հիմնախնդիրը շատ մոտ է արհեստագործության խնդրին, չնայած նրանք հաճախ հակադրվում են: Պատկերը մանկական նկարչության մեջ, ընդունված է որոշարկել պատկերվածի նկատմամբ հեղինակի վերաբերմունքով՝ որպես նրա դիտման, տեսանկյան, դիրքորոշման արդյունք, իսկ կատարողական կողմը մնում է նման որոշարկման շրջանակներից դուրս: Այստեղ հարկ է հիշել Կ. Կ. Պլատոնովի «Կարողությունների հիմնախնդիր» աշխատությունը, որում նկարը հստակորեն սահմանելով կատարողական և գեղարվեստական առումներով՝ նա ընդգծում է, որ պատկերը նկարի անկապտելի հատկանիշն է[7]:

Վ. Ս. Շչերբակովը բավական հստակ է որոշարկել գեղարվեստական պատկերը. «Պատկերը ընկալումն է, բայց հաղորդվում է նյութի միջոցով: Պատկերը և՛ գույնն է, և՛ գիծը, և՛ մակատեսքը, և՛ գունային շերտի կառուցվածքը՝ գեղանկարչական կատարողական տարրերի ողջ համակարգը: Փորձն այս ոլորտում հարստացնում է նկարչի ընկալումը»[8]:

Արվեստի ուսուցման մեջ պատկերի նման հասկացության պարագայում գեղարվեստական մտածողության զարգացումը տեղի է ունենում ինչպես ստեղծագործական, այնպես էլ զուտ կատարողական խնդիրների լուծման ընթացքում: Յուրաքանչյուր վարժություն երևակայության զարգացման խթան է հանդիսանում: Տարբեր նյութերով աշխատելու փորձը, արտահայտման բոլոր հնարավոր միջոցների տիրապետումը ներազդում են շրջապատող իրականության ընկալման վրա: Ինչքան հարուստ է նման փորձը, այնքան հստակ է ընկալվելիքը կապակցվում պատկերման որոշակի միջոցների հետ:

Սովորողի մոտ պատկերվող կերպարի մասին պատկերացում ձևավորել նշանակում է օգնել նրան ընկալման արդյունքները վերարտադրել գեղարվես-

---

[6] ***Щербаков А. В***. Искусство и художественное творчество детей: Книга для учителя. -М.: НИИ ХВ АПН СССР, 1991.- 139 с. - С. 38-39.

[7] ***Платонов К. К***. Проблемы способностей. - М.: Наука, 1972. – 312с. - С. 4.

[8] ***Щербаков А. В***. Искусство и художественное творчество детей: Книга для учителя. -М.: НИИ ХВ АПН СССР, 1991.- 139 с.- С. 39.

տական կատարողական միջոցների հստակ լեզվով: Հոգեբանությունից հայտնի է, որ նպատակն արդյունքի մասին մտավոր պատկերացումն է, և որքան հստակ ու լիարժեք է այդ պատկերացումը երեխայի մոտ, այնքան գիտակցված ու կազմակերպված կընթանա նկարչության գործընթացը: Պատկերի մասին պատկերացումների ձևավորմանը նպաստող մեթոդների ու հնարների շարքում կարելի է առանձնացնել հետևյալները՝ կատարողական հնարների, պատկերի ստեղծման միջոցների ամբողջական կամ մասնակի ցուցադրում, վարպետ նկարիչների աշխատանքներում կիրառված առանձին հնարների, պատկերման միջոցների ուսումնասիրում, որոշակի հնարի կատարելագործմանը միտված վարժությունների կատարում: Աշխատանքի կատարողական հմտությունների անմիջական ցուցադրում, ուղղումներ, լրացումներ, պատկերի ստեղծման հաջորդականությունը կամ որոշակի նյութով աշխատելու միջոցները բացահայտող իրազննական պիտույքների, ուսումնամեթոդական աղյուսակների կիրառում, այսպես կոչված «ապլիկացիայի տեխնիկա»՝ թղթի կամ մագնիսային գրատախտակի կիրառում շարժվող բաղադրատարրերով հորինվածքի օրենքների ու հնարքների ցուցադրման համար (ռիթմ, հավասարակշռություն, կայուն վիճակ, շարժուն վիճակ և այլն¤, սովորողների հաջողված և չհաջողված նկարների քննարկում, դրանց համեմատական վերլուծություն:

Նոր առաջադրանքի մատուցման մեթոդներում պետք է ներառել ուսումնական խնդիրները բացահայտող հրահանգավորում-նախապատրաստում, նկարի վրա աշխատանքի հաջորդականություն և նրա որակի պահանջներ, փոխակերպումներ, համեմատություններ, բանաստեղծություններ, որոնք նպաստում են առավել վառ պատկերացնելու աշխատանքի պատկերային-հուզական կողմը, հուզական տրամադրություն ստեղծող երաժշտության կիրառում, որը խթանում է երևակայության կենսունակ աշխատանքը: Հարկ է հիշել, որ կերպարվեստային գործունեության յուրահատկությունն այնպիսին է, որ ապագա աշխատանքի մասին տեղեկությունը սովորողների համար պետք է հուզականորեն երանգավորված լինի, այն չի կարող հաղորդվել որպես նկարի հատկանիշների ու որակների, պահանջների թվարկում: Ակնհայտ է, որ նման մոտեցումը ոչ միայն չի խթանի ստեղծագործական գործունեությունը, այլև կհակասի գեղարվեստական գործունեության բնույթին:

«Երեխաների հուզական վերաբերմունքը պատկերվելիք երևույթի, բովանդակության կամ առարկայի նկատմամբ, բարձրացնում է իրականություն, տեսողական պատկեր և կերպարվեստային միջոցներ կապերը բնորոշող զուգորդումների առաջացման եռանդը»,- գրել է Ա. Ե.Ռոժկովը[9]:

Արվեստի ուսուցման ոլորտում նշանակալի ձեռքբերումների մասին խոսել կարող ենք միայն այն դեպքում, երբ սովորողները տիրապետում են գործողությունների՝ ինչպես արտաքին՝ կերպարվեստային գործունեության հիմքը կազմող (մատիտով, վրձնով, ներկերով և այլնով աշխատանքի հնարքներ ու միջոցներ, այնպես էլ ներքին (ընկալում, տեսողական մտածողություն, երևակայություն, տեսողական տպավորությունների վերածում որոշակի գեղարվեստական պատ-

[9] ***Рожков А. Е***. Изобразительное искусство в школе: Из опыта работы. - М.: Просвещение, 1979. - 119 с.- С.23.

կերի ընդհանրացված միջոցներին: Յուրացնելով նման ընդհանրական պատկերացումները՝ սովորողներն արդեն կարող են աշխատել ինքնուրույն՝ լուծելով գեղարվեստաստեղծագործական բարդ խնդիրներ:

Лилит Флджян - Развитие зрительного восприятия на занятиях по изобразительному искусству. - В статье рассматриваются задачи и методы направленные на развитие зрительного восприятия и художественно-творческих умений детей, а так-же о условиях развития способов воспроизведения в процессе занятий.

Развитие творческого мышления и воображение осуществляется как в процессе развития зрительного восприятия, так и при условий решений художественно-исполнительных задач.

Lilit Fljyan - Development of visual perception on employment of the fine arts. - The article discusses the problem and methods to develop visual perception of artistic and creative abilities of children. Also about the conditions of the development of ways to play in the course of employment.

Development of creative thinking and imagination is carried out as in the development of visual perception, and in terms of artistic and executive tasks solutions.

ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բոլոնիայի գործընթացին անդամակցելուց հետո Հայաստանի Հանրապետությունում ակտիվորեն մեկնարկեց բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումների գործընթացը, որին անմասն չմնաց նաև երրորդ մակարդակի կրթությունը՝ ասպիրանտուրան: Ներկայումս հետբուհական կրթությունը շարունակում է ՀՀ-ում զարգանալ և ընդլայնվել, սակայն այդ գործընթացը կարիք ունի արդեն հաշվի առնելու բարձրագույն կրթական եվրոպական տարածքում գործող չափանիշները և զալցբուրգյան սկզբունքները: Այս առումով, հիմնախնդիր է հանդիսանում կրթական ծառայությունների մատուցման ռազմավարության բարելավումը ասպիրանտուրայում:

Բանալի բառեր. ասպիրանտուրա, դոկտորանտուրա, ակադեմիական կրեդիտներ, որակի ապահովում, ճանապարհային քարտեզ, ռազմավարական կառավարում

ՀՀ բուհերում գործող երրորդ մակարդակի կրթությունը, որն ի դեպ որակավորումների ազգային շրջանակով ներկայացվում է որպես 8-րդ մակարդակ, ներկայումս գտնվում է անցումային փուլում: Լայն իմաստով, ենթադրվում է անցում՝ ավանդական ասպիրանտուրայից դոկտորանտուրա, իսկ գործուն իմաստով, ենթադրվում է զալցբուրգյան հիմնարար սկզբունքների կիրառում դոկտորանտուրայում: Եթե, որոշ առումներով, զալցբուրգյան սկզբունքները արդեն իսկ կիրառվում են ՀՀ համալսարաններում գործող հետբուհական կրթությունում, ապա այդ սկզբունքների նշանակալի մասը դեռևս իրենց գործնական կիրառումը չեն գտել, պայմանավորված մի շարք ակադեմիական, ֆինանսական, կազմակերպչական և տեղեկատվական գործոններով, որոնք խոչընդոտում են կրթական բարեփոխումների հաջող ընթացքին:[10]

Չնայած, ՀՀ համալսարաններում ավանդաբար գործում են հետբուհական կրթական կառույցներ, սակայն նրանցում դեռևս իներցիոն ուժով կիրառվում են Խորհրդային ասպիրանտուրայի ավանդույթները: Այսպես, դեռևս մասնագիտական կրթական երրորդ մակարդակում գերիշխում է գիտահետազոտական բլոկը, իսկ ուսումնառության բլոկը գտնվում է ձևավորման փուլում: Նախկինում ասպիրանտները կարիք չունեին վաստակելու ակադեմիական կրեդիտներ, և հիմնականում ծանրաբեռնված էին գիտական հետազոտությամբ: Սակայն, ներկայումս ասպիրանտուրայի ուսանողը պարտավոր է հավաքել ակադեմիական կրեդիտներ ոչ միայն գիտահետազոտական՝ այլև կրթական ոլորտից, կանոնավոր հաճախելով դասերի:[11]

Սակայն դրան զուգահեռ, ասպիրանտուրայում կուտակված ակադեմիական կրեդիտները չեն փոխանցվում, որը խոչընդոտում է հետազոտողների ներհանրապետական և միջազգային համալսարանական շարժունությանը: Ստեղծված իրավիճակում ՀՀ-ում դեռևս չեն ձևավորվում միասնական դոկտորանտու-

[10] ***Երիցյան Մ., Ճուղուրյան Ա.***, Մասնագիտական կրթության մարտահրավերները, "Էդիթ Պրինտ", Եր., 2012 թ., էջ 112

[11] ՀՀ ԿԳ նախարարի 2010 թ. հուլիսի 21-ի Ф1167-Ն հրաման

րայի ծրագրեր, բացակայում է կրթական ծառայությունների մատուցման բազմազանության շրջանակը, որը Զալսբուրգյան կարևորագույն սկզբունքներից մեկն է:[12]

Ավանդույթի ուժով, ասպիրանտուրան սերտ փոխհամագործակցության մեջ չէ աշխատաշուկայի և տնտեսության ճյուղերի հետ: Մասնագիտական կրթության երրորդ մակարդակում գտնվող ուսանողները հիմնականում արտադրությունից կտրված են կատարում գիտահետազոտական աշխատանք, և արդյունքում բուհերում գրեթե բացակայում է արտադրությունից և տնտեսության ծառայությունների ոլորտից եկող գիտահետազոտական բնույթի պատվերները: ՀՀ բուհերում ներկայիս գործող ասպիրանտական ծրագրերը, որոնք սերտ փոխառնչություն չունեն կիրառական տնտեսության հետ, զրկված են գործատուների պատվերներից և մասնավոր ֆինանսական ներհոսքերից: Եվ ստացվում է այնպես, որ ասպիրանտուրան ՀՀ-ում հիմնականում ֆինանսավորվում է կրթավճարների հաշվին, ինչը որ բավարար չէ կայուն ֆինանսավորման համար և պահանջում է հետազոտական աշխատանքների ռազմավարական ֆինանսավորման մոտեցում:

ՀՀ բուհերում գործող ասպիրանտուրայում բացակայում է նաև որակի ապահովման ռազմավարությունը: Դեռևս մշակված չեն մասնագիտական կրթական չափորոշիչներ, որակի ներքին ապահովման համակարգը հիմնականում գործում է բակալավրիատում և մագիստրատուրայում՝ շրջանցելով դոկտորանտուրան: Իսկ որակի արտքաին ապահովումը դեռևս իրականացվում է միայն հետազոտական թեզի պաշտպանության գծով, ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից, որի գործառույթները կարծես պետք է իրականացվեր ՈԱԱԿ-ի կողմից: Ստացվում է այնպես, որ ԲՈՀ-ը և ՈԱԱԿ-ն կրկնում են մեկը մյուսին, հստակություն չմտցնելով որակի արտաքին ապահովման մենեջմենթում:

Ասպիրանտուրայում դեռևս կաշկանդված են ակադեմիական ազատությունները, որը հատկապես ընդգծվում է ատենախոսության թեզի պատրաստման և պաշտպանության գործընթացում: Թեմաների հաստատման հարցում ամբիոնները չունեն լիարժեք ակադեմիական ազատություն, քանի որ ի վերջո թեմաների վերնագրերը հաստատվում են համալսարանների գիտական խորհուրդներում: Եվ այս պարագայում, ասպիրանտը պարզապես ուսանող է դիտարկվում, և ոչ թե գիտական հետազոտող, որը նույնպես հակասում է զալցբուրգյան սկզբունքներին:[13]

Բացի այդ, չափազանց ուռճացված է թեզի պաշտպանական գործընթացի վարչարարությունը, որը ընթանում է վարչարարական բազում բարդույթներով: Ասպիրանտը, նախ իր թեզը պաշտպանում է համալսարանի ամբիոնում, հետո առաջատար կազմակերպությունում, և ի վերջո՝ մասնագիտական խոհրդում, ի դեպ, որում ոչ բոլոր պրոֆեսորներն են առնչվում պաշտպանվող թեզի նեղ մասնագիտությանը: Այս եռափուլ պաշտպանական գործընթացով անցնելուց հետո,

[12] BOLOGNA SEMINAR DOCTORAL PROGRAMMES FOR THE EUROPEAN KNOWLEDGE SOCIETY, Salzburg, 3-5 February 2005, pp.3-5

[13] Եվրոպական համալսարանների ասոցիացիայի պաշտոնական կայք, http://www.eua.be/eua-work-and-policy-area/building-the-european-higher-education-area/trends-in-european-higher-education/trends-vi.aspx

ատենախոսը կարող է ձախողվել հենց ՀՀ ԲՈՀ-ում, որը ընդամենը մեկ փորձագետի կարծիքով կարող է «ջուրը գցել» հաջողված պաշտպանության արդյունքը և նշանակել կրկնական պաշտպանություն:

Այս առումով, անհրաժեշտ ենք համարում կազմելու ասպիրանտական կրթության բարեփոխումների ճանապարհային քարտեզը, որը ռազմավարական կառավարման գործիք է և կիրառվում է գործող սուբյեկտի որդեգրած տեսլականի և առաքելության իրացման գործընթացում: Ցանկացած ճանապարհային քարտեզ, վերաբերի այն գործարարության թե կրթության ոլորտին, ցույց է տալիս այն հնարավոր ուղին, որը պետք է հաջողությամբ հասցնի նախանշված արդյունքների: Իհարկե, այդ ճանապրհին անցնելիս բազում խոչընդոտների կարելի հանդիպել, որը պետք է հաշվի առնվի և այլընտրանքային ուղիներ որոնել՝ վերջնարդյունքին հասնելու համար: Բացի այդ, մեկնարկից մինչև վերջնակետ ճանապարհին պետք է ծախսվեն ռեսուրսներ, տրամաբանական հերթականությամբ հիմնվեն հենակետեր և միջանկյալ արդյունքներ, որով երաշխիքներ կստեղծվեն որդեգրած տեսլականի և առաքելության լիարժեք իրացման համար:

Այսպիսով, ճանապարհային քարտեզը, դոկտորանտուրայի կրթության ոլորտում կարող է ժամանակային կտրվածքով համախմբել առկա ռեսուրսների, կրթական արդյունավետ գործընթացի գործիքակազմի շղթայական ձևավորումը, ակնկալվող արդյունքները, որոնք ի վերջո թիրախավորված են զալցբուրգյան սկզբունքներին համահունչ հետբուհական կրթություն ունենալուն: Ճանապարհային քարտեզը հնարավոր է ներկայացնել ինչպես գործողությունների հերթականության շարադրանքով, այնպես էլ գրաֆիկական տեսքով:[14] Երկու դեպքում էլ պարզորոշ պետք է երևա, թե ի՛նչ հետագիծ ենք թողնում ընտրված ռազմավարական երթուղու յուրաքանչյուր հատվածում, և ինչպիսի՛ն է տրամաբանական փոխկապվածությունը կրթական գործընթացի արդյունքների ձևավորման շխթայում:

Нонна Хачатрян - ***Стратегия образовательных услуг в аспирантуре.*** - После вступления в Болонский процесс, Армения активно начала реформы в системе третьего уровня профессионального образования. Послевузовское образование продолжает развиваться и расширяться, но этот процесс должен учитывать уже существующие стандарты и зальцбургские принципы европейского пространства высшего образования. В этой связи, становится важным решение проблемы совершенствования стратегии образовательных услуг в аспирантуре.

Nonna Khachatryan -***Educational services providing strategy in PhD.***-After joining the Bologna Process in Armenia is actively started reforms the higher education system, which was also regarded to the third-level professional education. At the postgraduate education continues to develop and expand, but the process needs to take account of already existing standards and Salzburg principles of the European Higher Education Area. In this sense, is becoming argent the problem of improvement postgraduate educational services providing strategy.

[14] ***Hills, J.M., Robertson, G., Walker, R., Adey, M.A., Nixon, I.***, (2013), Bridging the gap between degree programme curricula and employability through implementation of work-related learning, *Teaching in Higher Education,* 8(2): 211-231.

ՈՒՍՈՒՑՉԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները կարևոր տեղ են գրավում ուսուցչի ստեղծագործական գործունեության մեջ, որի հիմքերը դրվում են բարձրագույն դպրոցում և շարունակվում են նրա հետագա գործունեության ընթացքում:

Բանալի բառեր. Ուսուցչի ստեղծագործական աշխատանք, մանկավարժական վարպետություն, ուսուցչի տաղանդ:

Համաշխարհային գլոբալիզացման արդի փուլում նոր մարտահրավերներին դիմակայելու համար ուսուցիչը կանգնում է բազմաթիվ խնդիրների և դժվարությունների առջև: Դրանք լուծելու համար նա օգտվում է իր հարուստ «զինանոցից»՝ համադրելով ավանդական և ինտերակտիվ մեթոդներ, հենվելով համագործակցության մանկավարժության վրա՝ իրականացնում է սովորողի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը:

Ուսուցիչը համագործակցային ուսուցման շնորհիվ կրթում է իր սաների միտքը, հոգին, մարմինը, զինում նոր գիտական գիտելիքներով, կարողություններով, հմտություններով:

Անուրանալի է նաև ուսուցչի դերը հանրակրթական դպրոցում, հատկապես կրթության բովանդակության և մեթոդների կատարելագործման, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման, մակավարժական գործընթացին ստեղծագործական ուղղվածություն տալու գործում; Բայց, դեռևս այս գործընթացում, ինչպես նկատել է անվանի մանկավարժ Վ. Մ. Սուխոմլինսկին, ուսուցչի ստեղծագործության հիմնահարցը մանկավարժության «խոպան» բնագավառներից մեկն է:

Լիովին համամիտ լինելով այս մտքի հետ, նշենք, որ այն նաև մանկավարժության ամենաբարդ խնդիրներից մեկն է: Ուսուցչի ստեղծագործական գործունեությունը մինչ այժմ խորը չի ուսումնասիրվել մեզանում այս հիմնահարցը կարիք ունի համակողմանի հետազոտության:

Սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործընթացում կարևորվում է նաև ուսուցչի հետազոտական գործունեությունը, որի կարևոր բաղադրիչը նրա ստեղծագործական ռոմնումների ակտիվացման խնդիրն է; Այն այսօր շատ արդիական հնչեղություն ունի հանրակրթական դպրոցի համար;

Ուսումնական ծրագրերը, դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և ուղեցույցները օգնում են ուսուցչին լուծելու մի շարք հարցեր. «ի՞նչ սովորեցնել», «ո՞ւմ սովորեցնել» և «ինչպե՞ս սովորեցնել»:

Դպրոցի և մանկավարժական մտքի պատմությունը, ինչպես նաև առաջավոր ուսուցիչների փորձը, օգնում են, ելնելով պետության սոցիալական պատվե-

րից, հաջողությամբ լուծել ուսուցման և դաստիարակության խնդիրները՝ օգտագործելով նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ, ձևեր և միջոցներ:

Հնարավոր չէ բառացիորեն վերարտադրել ուրիշների առաջավոր փորձը և ոչ էլ կրկնել սեփական փորձը: Ոչ մի ուսուցչի որևէ դաս չպետք է նման լինի մյուսին, (անհնարին է այդ անել), բացի այդ էլ՝ ուսուցչի ամեն մի դասը պետք է լինի մի ստեղծագործություն, եթե այդպես նա չաշխատի, նրա մանկավարժական արվեստը կվերածվի արհեստի;

Մեր կարծիքով, չափազանց կարևոր է, որ յուրաքանչյուր ուսուցիչ խոր զբաղվի ինքնակրթությամբ, ինքնազարգացմամբ, որոնք նրա վարպետության կատարելագործման լավագույն ուղիներն են: Նա, ուսումնասիրելով իր մասնագիտության վերաբերյալ լույս տեսած գիտական գրականությունը, հոդվածները, նորությունները, բարձրացնում է պրոֆեսիոնալ և մասնագիտական մակարդակը, ուսումնասիրում է նաև նորարար ուսուցիչների առաջավոր փորձը և վերցնելով այն անհրաժեշտը և կարևորը, որը նրան հարկավոր է իր հետագա աշխատանքում օգտագործելու համար: Ինչպես նկատում են մեծ մանկավարժները՝ ոչ մի առաջավոր փորձ չի կարելի ամբողջությամբ վերցնել և ներդնել:

Իրավացի է Պ.Պ. Բրոնսկին, երբ գրում է, որ նոր դպրոցը հենց ուսուցչի համար կյանքի և ստեղծագործական դպրոց է, իսկ ուսուցիչը « արվեստագետ», որին թույլ է տրվում ազատ ստեղծագործել, արարել և, բացի այդ, ըստ նրա, մարդիկ կյանքում մեկ անգամ են ստեղծագործող դառնում:

Մենք գտնում ենք, որ ուսուցչի աշխատանքը շատ բազմաբնույթ, բազմակողմանի ու բարդ, մեծ ջանքեր ու սեր պահանջող, սեր՝ մասնագիտության և աշակերտների նկատմամբ միասին վերցրած, մեկի բացակայությունը կարող է հանգեցնել լուրջ դժվարությունների:

Ըստ մեզ՝ ուսուցչի ստեղծագործական գործունեության նախնական հիմքերը դրվում են բարձրագույն դպրոցում, երբ նա ընտրում է ուսուցչի մասնագիտությունը, ստանում է տեսական խոր և կայուն գիտելիքներ, մանկավարժական պրակտիկայի ընթացքում ձեռք է բերում գործնական կարողություններ և հմտություններ, այստեղ էլ ձևավորվում են նրա մանկավարժական վարպետության նախադրյալները, իսկ հետագա մանկավարժական աշխատանքի ընթացքում, ինչպես նաև ինքնակրթության, ինքնազարգացման և ինքնակատարելագործման ճանապարհով նա հասնում է վարպետության բարձունքներին:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունը նրանում է, որ նա կարողանում է հենց դասի ժամանակ բոլոր աշակերտներին սովորեցնել, զարգացնել՝ միտքը, հղկել նրանց ունեցած բարոյական և գեղագիտական որակները, բացել նրանց համար ուղիղ ճանապարհ դեպի գիտելիքների «աշխարհ»: Մեր կարծիքով ուսուցչի մանկավարժական տաղանդը նրա օժտվածության, իր առարկայի խոր իմացության և բարձր աշխատասիրության միասնության մեջ է: Դիպուկ է նկատել Յ.Ս. Ստանիսլավսկին. «Տաղանդը հուր է, որը չի կարելի հանգցնել... տաղանդը մարդու սիրտն է, նրա էությունը, նրա ապրելու ուժը» (5,73):

Տաղանդների նկատմամբ պետք է շատ ուշադիր և հոգատար լինել: Հարկ ենք համարում հիշել Վ, Վախտերովի խոսքերը. «Եթե ուսուցումն արվեստ է, ապա այն բարձր է բոլոր արվեստներից, որովհետև գործ ունի ոչ թե մարմնի, կտավի, ձայների, այլ՝ կենդանի մարդկանց հետ»: (4,3) Անշուշտ, ուսումնական գոր-

ծընթացը կրթական խնդիրներն ավելի հեշտ են լուծվում, քան՝ զարգացման և դաստիարակության խնդիրները:

Ուստի, պետությունը վստահելով ուսուցչին մեր ապագա սերնդի կրթության և դաստիարակության հայրենանվեր գործը, համոզված է, որ նա պատվով իր ուսերին կտանի այդ ծանր լուծը և կպատրաստի հայրենիքի համար արժանի մարդ, քաղաքացի: Ուսուցչի տաղանդը հենց այստեղ պետք է փայլի, երևա նրա ստեղծագործական աշխատանքը, հոգևոր հասունությունը, սոցիալական ակտիվությունը:

Ամեն մի ուսուցիչ չէ, որ կարողանում է հասնել այդպիսի մեծ հաջողությունների: Նա նախ պետք է ունենա մասնագիտական խոր գիտելիքներ, կատարելագործման ձգտում և ցանկություն, լինի նորարար:

Այդպիսի նորարար ուսուցիչներ են եղել Ս.Տ. Շացկին, Ա.Ս. Մակարենկոն, Վ.Ա. Սուխոմլինսկին, Շ.Ա. Ամոնաշվիլին, Մ.Պ. Շչետինինը, Վ.Ֆ. Շատալովը, Ս.Ն. Լիսենկովան, Հայաստանում՝ Հ.Գրիգորյան, Ի.Աթայանը (Արցախ) և այլոք: Ն-րանց բերած մանկավարժական որոնումների նորույթը դրսևորվում է իրենց մանկավարժական նոր համակարգերում, որտեղ կան նորագույն գաղափարներ, մտքեր, մեթոդներ ու ձևեր:

Իրավացի է հայտնի մանկավարժ Ե.Բ. Ազարովը, երբ գրում է, որ մանկավարժական վարպետություն զարգանում է ստեղծագործության օրենքներով, ո-րոնց մեջ մեծ տեղ են գրավում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ ներզգացողությունը, ներշնչումը, տաղանդը, ոգևորությունը, ձգտումը, հետաքրքրությունը:

«Մանկավարժական խնդիրների լուծումը՝ վարպետության բարձր մակարդակով, իրենից ներկայացնում է ստեղծագործական գործընթաց» (1,380): Մանկավարժական ստեղծագործությունը ներառում է և՛ ուսուցչի, և՛ աշակերտների համատեղ ստեղծագործական գործունեությունը, որը փոխկապակցված գործընթաց է: Այն ենթադրում է և՛ փոխկապակցված գործունեության գործընթաց, և՛ արդյունք:

Այսօր ուսուցչի ստեղծագործական աճի հիմնահարցը ձեռք է բերում հատուկ կարևորություն: Մանկավարժի պրոֆեսիոնալ վարպետության կատարելագործումը գլխավոր պայման է ուսումնադաստիարակչական աշխատանքների ո-րակի հետագա բարձրացման համար և հասցնում է նրան համապատասխան կյանքի պահանջներին (6,4):

Լիովին համաձայն լինելով Ռ.Խ. Շակուրովի այս մտքի հետ, նշենք նաև, որ այստեղ շատ կարևոր է ուսուցչի սեփական փորձը: Այդ հարցը լիովին լուծված է եղել Արցախի Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի դպրոցում, որտեղ դպրոցի երկարամյա ուսուցիչ և տնօրեն Իվան Աթայանն իր անձնական փորձով սատար է կանգնել երիտասարդ ուսուցիչներին, որոնք նոր են ոտք դրել դպրոցի շեմքից ներս, և հետագայում դարձել են այդ կոլեկտիվի լիիրավ անդամը: (3,74)

Ուսուցչի մասնագիտությունն ամենասիրված և ամենապատվավոր մասնագիտությունն է, որն իրականացնում է ժամանակների սերունդների կապը, և դրանով էլ նրա աշխատանքը դառնում է հրապուրիչ, ստեղծագործական: Այժմ ևս պահանջվում են այնպիսի ուսուցիչներ, որ կարողանան ստեղծագործաբար լուծել իրենց առջև դրված մանկավարժական բարդ խնդիրները, որոնց հիմքում ընկած են ստեղծագործական հոգեբանության դրույթները:

Ստեղծագործական հոգեբանությունն ընդհանուր հոգեբանության ամենաերիտասարդ ճյուղերից մեկն է, որով զբաղվել են Ս.Մ. Բերնշտեյնը, Յ.Ա. Պոնամարևը, Պ.Մ. Յակոբսոնը, և ուրիշներ: Այստեղ կարևորվում են ուսուցիչների ստեղծագործական մտածողությունը, նաև՝ ստեղծագործող անհատի դերը, նրա ընդունակությունները:

Մանկավարժական ստեղծագործական գործունեության ուսումնասիրությանն առաջին անգամ անդրադարձել է Պ.Կ. էնգելմայերը. «Լավ դաստիարակը հենց նրանով է տարբերվում արհեստագործից, որ եթե վերջինս առաջնորդվում է վարժեցված հնարքներով, ապա առաջինը թափանցում է սանի անհատական առանձնահատկությունների էության մեջ և նրա նկատմամբ կիրառում է բարի մարդու իր իդեալը: Ի՞նչ է նշանակում դա: Դա նշանակում է, որ դաստիարակի մոտ ամենից առաջ կա իդեալ (I ակտ), այնուհետև նա այդ իդեալը կիրառում է տվյալ պայմաններին համապատասխան (II ակտ) և, վերջապես, կատարման ընթացքում օգտվում է ձեռք բերած մանկավարժական հմտություններից (III ակտ): (7,73)

Համակարծիք լինելով էնգելմայերի հետ՝ նշենք, որ եթե բոլոր ուսուցիչներն առաջնորդվեն այդ բանաձևով, ապա նրանց աշխատանքը կլինի ստեղծագործական, իսկ արդյունքը՝ ստեղծագործություն:

Ուսուցչի տաղանդը դրսևորվում է ոչ միայն իր օժտվածության հոգեկան հարստության, ինքնանվիրվածության, գիտակության էրուդիցիայի մեջ, այլև՝ իր սաների մեջ նրանց տաղանդների բացահայտմամբ, որին պետք է ձգտեն բոլոր ուսուցիչները: Դպրոցում այդ տաղանդավոր ուսուցիչը կամ տնօրենը պետք է միայնակ չգործի, այլև՝ բացահայտի այլ տաղանդներ՝ օրինակ ծառայելով նրանց համար:

Ուսուցչի մանկավարժական տաղանդը, մանկավարժական մտածողությունն արտահայտվում են նրանում, որ նա կարողանում է ճիշտ նախագծել և իրականացնել ուսումնական գործընթացն ուսուցման նպատակի, սկզբունքների, մեթոդների հաշվառմամբ, ներմուծելով նաև իր առաջավոր գաղափարները, հատուկ միջոցները նշված խնդիրների լուծման համար:

Ուշագրավ է նաև հայ անվանի գրող Հրաչյա Քոչարի գնահատականն ուսուցչի տաղանդի մասին: Ըստ նրա՝ ուսուցչությունը պահանջում է սեր, ոգևորություն, ներշնչում, այն բոլոր հոգեկան և մտավոր առանձնահատկությունները, որոնց ամբողջ գումարը միասին կարճ բառով կոչվում է տաղանդ: Առանց տաղանդի չկա ստեղծագործություն, իսկ ուսուցչությունը ստեղծագործություն է, այն էլ ստեղծագործություններից ամենաբարդը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ուսուցչի ստեղծագործական գործունեությունն ունի սկիզբ, սակայն չունի վախճան, ավարտ, քանի որ ուսուցչի գործունեությունը շարունակվում է իր սաների մեջ, իր սաների միջոցով և իր սաների համար:

Օգտագործված գրականության ցանկ

1.Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Ե., 1989, էջ 380:

2.Էլոյան Տ.Ս., Ուսուցիչը և նրա ստեղծագործունեության հոգեբանական հիմնական ուսումնասիրությունները, Ե., 1980:

3.Հարությունյան Թ.U., Ժողովրդական ուսուցիչը, Ե., 2001, էջ 74:
4.Вахтеров В., Свобода учительского труда, М., 1914, с.3.
5.Станиславский К.С., Беседы в студии большого театра, 1918-22гг., М., 1952, с.73.
6.Шакуров Р.Х., Творческий рост педагога, М., 1985, с.4.
7.Энгельмейер П.К., Эврология или всеобщая теория творчества, т.6, вып.1, 1914, с.73.

Тамара Арутюнян - ***Особенности творческой деятельности учителя.*** - В учебно-воспитательном процессе общеоброзовательной школы сегодня очень важное место занимает творческой деятельность учителя, основы которого ставится в высших учебных заведениях и продолжается в нее дальнейшей деятельности.

Tamara Harutyunyan - ***Features of the teacher's creative activity.*** - The creative work of the teacher plays an important role in the educational process of today's schools. She bases of which are still in high school and continuous during his subsequent activities.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՌՈՒԶԱՆ ՄԻՐՋՈՅԱՆ

Հոդվածը թարգմանության երկու հիմնական տեսակների՝ գրավոր և բանավոր թարգմանությունների բնութագրական առանձնահատկությունների մասին է: Ներկայացված են գրավոր թարգմանության տեսակները՝ գրական-գեղարվեստական, տեխնիկական և բնական գիտություններ, փիլիսոփայական տեքստեր: Նշել ենք գրավոր բազմաոլորտ թարգմանության դասակարգման սկզբունքները, առանձնահատկությունները, թարգմանության մեթոդաբանությունը, ինչպես նաև բանավոր թարգմանության տեսակները՝ համաժամանակյա-շշուկով, հաջորդական: Ընդգծվել են նշված տեսակի թարգմանությունների դժվարությունները, դրանք կատարելու համար անհրաժեշտ կարողությունները, որոնց առկայության դեպքում միայն թարգմանիչն ի զորու է կատարել այդ բարդ աշխատանքը:

Բանալի բառեր. գրավոր, բանավոր, համաժամանակյա, հաջորդական, մասնագիտական տեքստերի թարգմանություն, եզրույթ:

Թարգմանվող տեքստերն ըստ լեզուների, բովանդակության, ժանրային պատկանելության շատ բազմազան են: Կատարվում են գրավոր կամ բանավոր թարգմանություններ և թարգմանության ճշգրտության, ամբողջականության և այլ առումներով թարգմանիչների առջև ոչ միանման պահանջներ են դրվում: Թարգմանության որոշակի տեսակներ թարգմանչից պահանջում են առանձնահատուկ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Ինչպիսին էլ լինեն թարգմանվող տեքստերը՝ թարգմանական գործընթացի էությունը չի փոխվում: Չնայած թարգմանության գործընթացին բնորոշ ընդհանուր գծերին, թարգմանության որոշակի տեսակներ կարող են ունենալ առանձնահատկություններ. համարժեքության հասնելու համար մեծ կարևորություն հաղորդել գործընթացին, թույլ տալ շեղումներ տեքստի ընդհանուր բացառակ իմաստային աստիճանից, ներմուծել վերակոդավորման որոշ տարրեր և այլն:

Թարգմանության տեսակները դասակարգվում են ըստ՝

- թարգմանվող տեքստերի,
- թարգմանչի խոսքային գործունեության բնույթի:

Առաջին բնութագրումը կապված է բնագրի ժանրային-ոճական առանձնահատկությունների հետ, երկրորդը՝ խոսքային գործունեության (գրավոր կամ բանավոր) լեզվահոգեբանական առանձնահատկությունների հետ:

Թարգմանությունը Ժանրային-ոճականի դասակարգելը պայմանավորված է բնագրի Ժանրային-ոճական առանձնահատկությամբ, որը ներկայանում է գրավոր թարգմանության երկու գործաբանական տեսակներով՝ գեղարվեստական գրականության թարգմանություն և մասնագիտական տեքստերի թարգմանություն:

Գեղարվեստական գրականության թարգմանություն

Գեղարվեստական գրականության թարգմանությունը կոչվում է գեղարվեստական թարգմանություն: Գրական ստեղծագործության թարգմանությունը

տարբերվում է մյուս տեսակի թարգմանություններից նրանով, որ այլ հաղորդակցական գործառույթներից բացի իրականացնում է նաև գեղարվեստական-էսթետիկական կամ բանաստեղծական գործառույթ, որի հիմնական նպատակը էսթետիկական ազդեցության հասնելն է, գեղարվեստական կերպար ստեղծելը: Բնականաբար, նման ուղղվածության շնորհիվ, գեղարվեստական ստեղծագործության թարգմանությունը տարբերվում է մյուս խոսքային հաղորդակցություններից, որոնց հիմնական նպատակը տեղեկատվությունն է:

Գեղարվեստական թարգմանությունն իր հերթին ունի տարատեսակներ ինչպիսիք են բանաստեղծության, պիեսի, հումորային ստեղծագործությունների, երգերի և այլ թարգմանությունները: Գեղարվեստական արձակի և բանաստեղծության թարգմանությունն իսկական արվեստ է: Ստացվում է այնպես, որ թարգմանիչը նորից է գրում ստեղծագործությունը ընթերցողի համար և առանց որոշակի հմտությունների և կարողությունների հնարավոր չէ կատարել հաջողված թարգմանություն: Գեղարվեստական թարգմանությունը պետք է այնպես կատարվի, որ պահպանվի ստեղծագործության մթնոլորտը և գրողի ոճը: Որպեսզի թարգմանված գեղարվեստական տեքստը լինի հետաքրքիր, ընթեռնելի, պահպանված լինեն հեղինակի մտքերը, գաղափարները, ոճական առանձնահատկություններն ու նպատակները: Գեղարվեստական գրականության թարգմանիչը իրականում պետք է մի քիչ գրող լինի, մի քիչ երևակայող կամ պարզապես՝ ստեղծագործող: Զարմանալի չէ, որ գեղարվեստական գականության թարգմանությունն ունի իր առանձնահատկությունները՝

- բառացի թարգմանության անընդունելիություն,
- աֆորիզմների, իդիոմների, իրակությունների և այլ արտահայտությունների թարգմանություն, որն այնքան էլ դժվար չէ, որքան թվում է առաջին հայացքից: Այն պահանջում է լայն բառահումքի իմացություն և մասնագիտական բառարանների առկայություն: Հիշենք ֆրանսիական ասածվածքը Muet comme une carpe, որը հայերեն թարգմանվում է Համր ինչպես ձուկը: Դժվար է ասել, թե ինչու է ֆրասիացու համար լռելը համեմատվում ձկան ծածան տեսակի հետ, իսկ հայ իրականության մեջ՝ ձկան: Բնականաբար ճիշտ թարգմանության համար թարգմանիչը պետք է ոչ միայն հարուստ բառահումք ունենա, այլ նաև ճանաչի աղբյուր լեզվի մշակույթը, ավանդույթները, սովորությունները խուսափելու համար անճշտություններից,
- բառախաղը, հումորը, որը գեղարվեստական թարգմանության ամենահետաքրքիր և դժվար իրականացվող հատվածներից է, քանի որ բառախաղերի հարցում լեզվական համընկնումները հազվադեպ են,
- ոճի, մշակույթի, ժամանակշրջանի պահպանում և ճիշտ փոխանցում: Դա անելու համար թարգմանիչը պետք է նաև հետազոտող լինի:

Մասնագիտական տեքստերի թարգմանություն

Այսպես է կոչվում այն թարգմանությունը, որի գործառույթի նպատակը ոչ թե գեղարվեստական-էսթետիկական ազդեցությունն է ընթերցողի վրա, այլ որևէ տեղեկատվության, նորության հաղորդումը, մասնագիտության բովանդակության և կոնկրետ մասնագիտական ոլորտին վերաբերող նյութի փոխանցումը թիրախ լեզու: Դրանք գիտական, հասարակական-քաղաքական, կենցաղային և այլ բովանդակության տեքստերի թարգմանություններն են: Այս խմբին կարելի է դա-

սել նաև արկածային ժանրի, ճամփորդությունների նկարագրությունների, ակնարկների թարգմանությունները, որտեղ գերիշխում է տեղեկատվական, ճանաչողական նյութը: Թարգմանությունը գեղարվեստականի և տեղեկատվականի բաժանելը կատարվում է ըստ բնագրի հիմնական գործառույթի, որը պետք է արտացոլվի թարգմանության մեջ: Գեղարվեստական թարգմանություն պահանջող բնագրում կարող են բացառապես տեղեկատվական գործառույթ իրականացնող հատվածներ լինել և հակառակը տեղեկատվական տեքստում կարող են լինել գեղարվեստական թարգմանություն պահանջող հատվածներ: Մասնագիտական տեքստերը կարող են լինել տարբեր ուղղվածության՝ գիտատեխնիկական, պաշտոնական, քաղաքական, հրապարակախոսական, լրատվական և այլն: Ընդունված է մասնագիտական տեքստերի հետևյալ դասակարգումը՝

• տեխնիկական և բնական գիտությունների տեքստեր, որոնց համար բնութագրական է այն փաստը, որ առարկայի, գիտության իմացությունն ավելի կարևոր է, քան՝ լեզվի, քանի որ թարգմանության համար կարևորվում է մասնագիտական եզրույթների իմացությունը,

• փիլիսոփայական տեքստեր, որոնց թարգմանության ժամանակ բացի մասնագիտական եզրույթների իմացությունից, թարգմանչից պահանջվում է նաև հեղինակի մտքին ճշգրտորեն հետևելու կարողություն:

Թարգմանություն իրականացնելիս անհրաժեշտ է ըստ պատշաճի լուծել մեթոդական խնդիրները: Անհնար է նույն կերպ թարգմանել մաթեմատիկական տեքստը, քաղաքական ճառը կամ գեղարվեստական որևէ երկ: Կարևոր է թարգմանվող նյութի բնույթի ճիշտ ընկալումն ու թարգմանությունը:

Մասնագիտական տեքստերը հանապատասխանաբար լինում են՝

• տեղեկատվական, գիտական և փաստագրական (առևտրային և գործնական բնույթի),

• հասարակական-քաղաքական, ինչպես նաև հոդվածներ, ճառեր:

Թարգնական տեքստերի հետաքրքիր դասակարգում է կատարել ֆրանսիացի լեզվաբան Ժորժ Մունենը: Նա դրանք բաժանել է հետևյալ խմբերի՝

• կրոնական տեքստերի թարգմանություն (կարևորվում է բովանդակությունը),

• գեղարվեստական երկերի թարգմանություն (կարևորվում է լեզուն),

• բանաստեղծությունների թարգմանություն (կարևորվում է ձևը),

• մանկական գրականության թարգմանություն (կարևորվում է հասցեատերը)

• բեմական երկերի թարգմանություն (կարևորվում է տեքստի օգտագործման սկզբունքը),

• ֆիլմերի թարգմանություն (կարևորվում են առանձնահատուկ տեխնիկական պայմանները),

• տեխնիկական տեքստերի թարգմանություն (կարևորվում է բովանդակությունը):

Մասնագիտական տեքստերի թարգմանության ժամանակ կարևոր է տվյալ ոլորտի մասնագիտական բառապաշարը, որն անհրաժեշտ է այդ բնագավառի մասնագետների փոխըննկալման, շփման համար: Մասնագիտական տեքստերի թարգմանության ժամանակ բացառիկ կարևորություն է ստանում եզրույթների

(terme, լատ.) ճիշտ կիրառությունը: Եզրույթը կամ տերմինը գիտական լեզվի տարր է, որը զուրկ է ազգային պատկանելությունից կամ պատմական երանգավորումից: Մասնագիտական տեքստերի թարգմանության ժամանակ եզրութի թարգմանությունը եզրույթով կարևոր սկզբունք է:

Եզրույթ են կոչվում այն բառերը և բառակապակցությունները, որոնք կոնկրետ բառերի կամ բառակապակցությունների իմաստ են արտահայտում՝ կիրառվելով տվյալ ոլորտի մասնագետների կողմից: Եզրույթները պետք է ունենան իրենց հստակ կիրառությունն անկախ տեքստի բովանդակությունից: Դրանք պետք է կիրառվեն հաստակ, որպեսզի այն հասկանալի լինի և գործածողին և հասցեատիրոջը: Կարևոր է գրական-գրքային եզրույթը զանազանել մասնագիտական եզրույթներից: Առաջինը գիտելիքի մաս է կազմում, լայն գործածություն է ստանում և ընկալելի է լայն զանգվածներին, իսկ երկրորդը նեղ մասնագիտական է և ընկալելի է այդ ոլորտի մասնագետներին:

Օրինակ՝ le commerce de gros-մեծածախ առևտուր,

le commerce de détail-մանրածախ առևտուր,

le libre échange-ազատ առևտուր:

Եզրույթների իմացությունը և դրանց ճիշտ թարգմանությունն անչափ կարևոր է մասնագիտական տեքստերի թարգմանության ժամանակ:

Թարգմանական գործունեությունը ներառում է երկու հատված՝ գրավոր և բանավոր թարգմանությունը:

Գրավոր է կոչվում այն թարգմանությունը, երբ ստեղծագործություններում, բնագրում և թարգմանվող լեզվում արտահայտված խոսքային դրսևորումները կատարվում են գրավոր: Դա թարգմանչին հնարավորություն է տալիս բազմիցս անդրադառնալ տեքստերին, դրանք նորից ու նորից համեմատել, փոփոխություններ կատարել թարգմանության մեջ մինչ այն հասցեատիրոջը հանձնելը:

Բանավոր թարգմանությունը թարգմանության այն տեսակն է, որը կատարվում է բանավոր, ենթադրում է բնագրի մեկ անգամ բանավոր արտասանված հատվածի ընկալում թարգմանչի կողմից և փոխանցում թիրախ լեզու, որը չունի ուղղելու, փոփոխության ենթարկելու հնարավորություն: Բանավոր թարգմանության ժամանակ թարգմանությունն իրականացվում է բնագրին զուգահեռ կամ բնագրով արտասանված հատվածից հետո: Այսպիսով, ըստ բանավոր թարգմանության ձևի, գոյություն ունի համաժամանակյա և հաջորդական թարգմանություն:

Համաժամանակյա թարգմանությունը բանավոր թարգմանության տեսակ է, որի ընթացքում թարգմանիչը լսելով հռետորի խոսքն այն գործնականում թարգմանում է միաժամանակ, նրանից ետ մնալով 2-3 վայրկյան: Համաժամանակյա թարգմանությունը հիմնականում կատարվում է տեխնիկական միջոցների առկայությամբ, բանավոր թարգմանության համար նախատեսված հատուկ խցերում, որտեղ հռետորի խոսքը թարգմանչին է փոխանցվում ականջակալների միջոցով, իսկ թարգմանիչն իր թարգմանած տեքստը հաղորդում է բարձրախոսի միջոցով, որով էլ արդեն թարգմանված տեքստը հասնում է ունկնդիրներին: Այդ սարքավորման շնորհիվ թարգմանիչը լսում է միայն հռետորի ձայնը: Համաժամանակյա թարգմանության տեսակ է շշուկով կատարված բանավոր թարգմանությունը, որի դեպքում թարգմանիչը գտնվում է ոչ թե իր համար նախատեսված

խցում այլ՝ ունկնդրի կողքին, թարգմանությունը կատարելով միայն նրա համար ցածրաձայն, տեքստը լսելով ականջակալներով, բարձրախոսով կամ առանց դրանց: Համաժամանակյա թարգմանությունը բանավոր թարգմանության դժվար տեսակ է, որը թարգմանչից պահանջում է միաժամանակ կատարել բազմաբնույթ խոսքային գործառույթներ՝ մի լեզվով լսած տեքստը միաժամանակ թարգմանել և արտաբերել մեկ ուրիշ լեզվով՝ ետ չընկնելով հռետորի խոսքից: Համաժամանակյա թարգմանության ընթացքում կատարվող այս երեք գործողությունները թարգմանչից պահանջում են հիշողության, կենտրոնացման, հաջորդ հատվածի կանխատեսման, ինչպես նաև արագ որոշումներ կայացնելու մեծ հմտություններ ու կարողություններ:

Հաջորդական թարգմանությունը բանավոր թարգմանության տեսակ է, որը կատարվում է հռետորի խոսքի ավարտից կամ մեկ հատվածից հետո տրված դադարից հետո: Թարգմանվող հատվածի չափը կարող է տարբեր լինել՝ առանձին նախադասություններից մինչև բավական մեծ ծավալի տեքստ՝ արտասանված 20-30 րոպեի ընթացքում: Այսպիսի թարգմանությունը թարգմանչից պահանջում է հիշել խոսքային բավականին մեծ հատված մինչ թարգմանության իրականացումը: Նման դեպքերում թարգմանիչը նշումներ է կատարում, որոնք օգնում են հիշողության մեջ վերականգնել բնագրում արտահայտված մտքերը:

Գրականություն

1.Ն. Վարդանյան «Թարգմանչական արվեստ. Տեսական և գործնական ուսումնասիրություններ», Երևան, 2011թ.:

2.Ա. Հակոբյան «Թարգմանության տեսության հիմունքներ», Երևան, 2003թ.:

3. Б.И. Герасимов, Н. Ю. Бородулина, И.А. Волостных, Е.А. Гуляева, Le français des affaires, Москва, 2009.

4. В.Г. Гак, Б.Б. Григорьев, Теория и практика перевода, Москва, 2000.

5. M. Guidère, Introduction à la traductologie, Paris, 2008.

6. G. Mounin, Les Problèmes théoriques de la traduction, Gallimard, 1963, 1976.

Рузан Мирзоян - *Основные виды перевода.* - Данная статья посвящается характерным особенностям двух основных видов перевода-устного и письменного.

В ней представлены виды письменного перевода на основе литературно-художественных, научно-технических и филосовских текстов.

Нами отмечены методология, принципы и особенности классификации письменного разносферного перевода, виды устного последовательного и синхронного перевода шепотом, а также сложности этих видов и необходимые навыки и умения при наличии которых переводчик будет в состоянии выполнить данный перевод.

Ruzan Mirzoyan - *Basic Types of Translation.* - The present article investigates the descriptive peculiarities of the two basic types of translation: written and oral. It touches upon the types of written translation: translation of fiction, technical, natural

science-related and philosophical texts. The classification principles of multi-sphere written translation, translation methodologies as well as the types of oral translation: simultaneous-whisper, consecutive, have been dwelled upon revealing the difficulties relating to those translation types, necessary abilities in case of existence whereof only, the translator will be capable of performing that complicated task.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ДЕЯТЕЛЬНОСТИ ОСНОВАТЕЛЕЙ ДЕТСКИХ САДОВ В АРМЕНИИ И РОССИИ В 19-ОМ ВЕКЕ

ТИГРАНУИ АКОПЯН

Проведенный нами сравнительный анализ деятельности основателей детских садов в Армении и России привел нас к выводу, что их взгляды и деятельность имели скорее общие черты, чем отличительные особенности, что было обусловлено общим влиянием педагогической системы Фридриха Фребеля на развитие дошкольной педагогики как в Армении и России, так и во всем мире. Сравнительно-исторический анализ позволил также выявить ряд преимуществ и недостатков в деле развития дошкольной педагогики в Армении и России в 19-ом веке.

Ключевые слова: дошкольная педагогика, детский сад, деятели дошкольного воспитания и образования, общественное воспитание, фребелевские курсы.

Развитие капиталистических отношений в 19-ом веке привело к социально-экономическому росту как в Армении, так и в России, что в свою очередь привело к расцвету культуры и просвещения. Во второй половине 19-го века и в Армении, и в России началось педагогическое движение, которое привело к большим изменениям в области образования. Для формирования дошкольной педагогики имело большое значение развитие женского образования.

Во многих городах Армении и Закавказья основывались женские школы и училища: Рипсимян, Гаянян, Айканушян, Сандхтян и др[1]. В России же, если к 1845 году было 36 закрытых женских институтов и училищ сословного характера, то К концу 19 века имелись уже 142 женские гимназии Министерствава народного просвещения[2]. Развитие женского образования в обоих странах дало возможность получения женщинами высшего педагогического образования за рубежом.

Женщины из Армении и из России получали высшее образование из одних и тех же источников: Германии и Швейцарии. Мы знаем, что провозвестники дошкольной педагогики в Армении Софья Бабаян и Гаянэ Ованесян получили образование соответственно в Германии и Швейцарии, а Софья Аргутян в России и Германии. Первыми же организаторами детских садов в России были немки (Люгебиль, Симонович, Шлегель) или женщины, учившиеся также заграницей: А. Симонович в Швейцарии, Е. Водовозова в Германии.

Пройдя Фребелевские курсы заграницей, эти женщины возвращались на родину и основывали первые детские сады. Фридрих Фребель, основоположник детского сада, предложил формы и методы организации дошкольного учреждения, предложил его содержание (образовательные занятия, игры, песни, движения под такт, сказки и беседы, прогулки и работа в саду и т.д.), показал

[1] ***Арутюнян Г.А.***, Школа и педагогическая мысль в Восточной Армении во второй половине 19-го века, автореферат дис. д-ра. пед. наук, Ер., 1975, с. 11.

[2]http://dic.academic.ru/dic.nsf/sie/6150/Женское образование в России/ Сов. историческая энциклопедия.

важность детской игры и движений[3]. И естественно, что отучившись на фребелевских курсах, они привносили много немецкого в свои сады. Конечно, это влияние сильнее сказалось на России. Первые детские сады в России механически перенимали все: песни, сказки, игры, отринув все народное и национальное. Поэтому детские сады были восприняты многими русскими педагогами в штыки.

Что касается взглядов армянских и русских деятелей дошкольного воспитания и образования, то они, в основном, были сходными, ибо все они учились у одних и тех же источников. Они все пропагандировали общественное дошкольное воспитание, отмечали значение детских садов, писали биографию Ф. Фребеля и объясняли его учение, отмечали необходимость различных игр и игрушек, указывали на обязательность живой связи с природой, говорили о национальном фундаменте (народная речь, народные песни, загадки, пословицы, сказки, игры) и т. д.

Сходства во взглядах армянских и русских деятелей дошкольной педагогики, отраженные в их трудах, представлены в таблице N1.

Таблица N1

Сходства во взглядах армянских и русских деятелей дошкольной педагогики, отраженные в их трудах

Армянские педагоги	Русские педагоги
С. Бабаян: «Значение детских садов», «Училище по Фребелю», «Академия для матерей и учительниц», «Биография Фребеля», «Разные мнения об играх и игрушках до Фребеля», «Игрушка и общие занятия» и т. д.	**А. Симонович**: «О детских садах», «Внутренняя организация детского сада», «Связь детского сада со школою», «Кто может быть воспитателем», «Нужны ли детские игры или нет» и т. д.
С. Аргутян: «Детский сад» - первый капитальный труд по дошкольной педагогике. Пособие содержит статьи «Краткая биография Фребеля», «Критическая оценка системы Фребеля», «Что такое детский сад?», «Роль матери или воспитательницы в детском саду», «Как дети проводят время в детском саду?», обучающие материалы по разделам: «Игры», «Работа с глиной», «Строение», «Рисование», «Работа с бусами», «Родиноведение», «Рассказы на занятиях по родной речи» и др. Пособие имеет отдельное приложение «Песни с подвижными играми», где представлены 80 нотных записей.	**Е. Водовозова**: «Умственное и нравственное развитие детей от первого проявления сознания до школьного возраста» - первый капитальный труд по дошкольной педагогике. Пособие освещает принципиальные вопросы нравственного и умственного воспитания (1 - 4 гл.), раскрывает значение системы Фребеля, его игр и занятий (гл. 5), раскрывает содержание и методику воспитания детей по отдельным возрастам, дает обзор “наиболее развивающих детских игрушек” и содержит приложение с таблицами ручных занятий и 35 народных песен с нотами.
Г. Ованесян вела, в основном, практическую деятельность.	**С.Люгебиль** вела практическую деятельность.

[3] См.книгу: ***Фребель Ф.***, Педагогические сочинения, т.2, Детский сад, Москва, Книгоизд-во Тихомирова, 1913 https://yadi.sk/i/L6za_CPqeC8K8

Для более четкого представления деятельности организаторов первых детских садов в Армении и России представляем следующую таблицу.

Таблица N2

Сравнительный анализ деятельности основателей детских садов в Армении и России в 19-ом веке

<table>
<tr><td colspan="2">Армянские деятели дошкольной педагогики</td><td>Русские деятели дошкольной педагогики</td></tr>
<tr><td colspan="3">Обучение на фребелевских курсах</td></tr>
<tr><td>С. Бабаян
Г. Ованесян
С. Аргутян</td><td>Германия
Швейцария
Россия и приобретение опыта в странах Западной Европы</td><td>Е. Водовозова
А. Симонович
С. Люгебиль</td></tr>
<tr><td colspan="3">Сходства в практической деятельности:
основание, организация, руководство детским садом (кроме Е. Водовозовой).</td></tr>
<tr><td colspan="3">Сходства в теоретической деятельности:
статьи и выступления, труды и пособия по дошкольной педагогике, определение содержания и методики работы в детсаду.</td></tr>
<tr><td colspan="3">Первые платные, частные фребелевские сады</td></tr>
<tr><td colspan="2">В Закавказье (Тифлис) – 1868 г.</td><td>В России (С.-Петербург) – 1863 г.</td></tr>
<tr><td colspan="3">Первые семейные фребелеввские сады</td></tr>
<tr><td colspan="2">Тифлис – 1880 г.</td><td>С.-Петербург – 1866 г.</td></tr>
<tr><td colspan="3">Первые народные детские сады</td></tr>
<tr><td colspan="2">Тифлис – 1882 г.</td><td>С.-Петербург – 1866 г.</td></tr>
<tr><td colspan="3">Общества, содействующие дошкольному воспитанию и образованию</td></tr>
<tr><td colspan="2">Армянское «Фребелевское общество», Женские благотворительные общества Восточной и Западной Армении и др.</td><td>С.-Петербургское «Фребелевское об-во», С.-Петербургское общество содействия дошкольному воспитанию и др.</td></tr>
</table>

Таким образом, проведенный нами сравнительный анализ взглядов и деятельности армянских и русских педагогов в области дошкольного воспитания и образования 19-ого века привел нас к выводу, что их взгляды и деятельность имели скорее общие черты, чем отличительные особенности, что было обусловлено общим влиянием педагогической системы Фридриха Фребеля на развитие дошкольной педагогики как в Армении, России, так и во всем мире. Детские сады, появившиеся в Пруссии и Швейцарии еще при жизни Ф. Фребеля, положили начало целому движению сторонников общественного дошкольного воспитания во всей Западной Европе и США. Первые детские сады в Англии были открыты в 1851 году в Блумсбери, а во Франции в 1881 – 1882 гг. детские сады уже были объявлены государственными и бесплатными. В США первый детский сад был открыт в 1855 г. Маргарет Шурц, эмигрировавшей из Германии. Первый

детский сад в Японии был создан в 1876 г. немецким педагогом Кларой Цидерман и т. д.[4].

После рассмотрения и изучения ситуации по дошкольной педагогике в Армении и России в 19-ом веке, а также после проведения их сравнительного анализа мы также выявили ряд преимуществ и недостатков, имевших место в процессе развития дошкольной педагогики в этих странах.

К преимуществам в развитии дошкольной педагогики в Армении относятся:

- положительное восприятие всех представителей общества идеи детского сада: писателей, общественных деятелей, врачей, педагогов и т. д.;
- всемерная помощь и поддержка классиков армянской педагогики в деле распространения и популяризации детских садов: статьи, пособия и труды по дошкольной педагогике;
- практическое участие мужчин-педагогов в работе детских садов;
- армянские деятели дошкольной педагогики в процессе работы больше использовали народное, национальное.

Недостатками в деле развития дошкольной педагогики в Армении явились:

- отсутствие финансовых и материальных средств у частных лиц и организаций, занимающихся дошкольным делом;
- отсутствие специального печатного органа по дошкольной педагогике;
- отсутствие медико-педагогического направления в дошкольной педагогике.

В России к преимуществам в деле развития дошкольной педагогики относятся:

- наличие высших учебных заведений в стране;
- наличие специального печатного органа по дошкольной педагогике;
- наличие медико-педагогического направления в развитии дошкольной педагогики.

К недостаткам в процессе развития дошкольной педагогики в России относятся:

- резкое неприятие идеи детского сада некоторыми классиками русской педагогики;
- сильная подверженность влиянию немецкой педагогики на начальном этапе развития дошкольного дела.

В итоге, мы пришли к выводу, что имелись как общие явления, так и отличительные особенности, а также определенные преимущества и недостатки в деле развития дошкольной педагогики в Армении и России в 19-ом веке.

Литература

1.Арутюнян Г.А., Школа и педагогическая мысль в Восточной Армении во второй половине 19-го века, автореф. дис. д-ра. пед. наук, Ер., 1975, 84 с.

[4] ***Егоров С. Ф., Лыков С. В., Волобуева Л. М.***, Введение в историю дошкольной педагогики, М.: Изд. центр «Академия», 2001, стр. 194-195.

2.Егоров С. Ф., Лыков С. В., Волобуева Л. М., Введение в историю дошкольной педагогики, М.: Изд. центр «Академия», 2001, 320 с.

3.Фребель Ф., Педагогические сочинения, т.2, Детский сад, М.: Книгоизд-во К. И. Тихомирова, 1913, 593с. /Электронная версия - скан/ https://yadi.sk/i/L6za_CPqeC8K8

4. http://dic.academic.ru/dic.nsf/sie/6150/Женское образование в России/ Сов. историческая энциклопедия

Տիգրանուհի Հակոբյան - *19-րդ դարում Հայաստանում և Ռուսաստանում մանկապարտեզների հիմնադիրների գործունեության համեմատական վերլուծություն.* - Կատարելով Հայաստանում և Ռուսաստանում մանկապարտեզների հիմնադիրների գործունեության համեմատական վերլուծություն՝ մենք եկանք այն եզրահանգման, որ նրանց հայացքներին ու գործունեությանը բնորոշ են եղել ավելի շատ ընդհանուր, քան տարբերակիչ հատկանիշներ, ինչը պայմանավորված էր 19-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանում և Ռուսաստանում նախադպրոցական մանկավարժության զարգացման վրա ունեցած Ֆրիդրիխ Ֆրեբելի մանկավարժական համակարգի ընդհանուր ազդեցությամբ: Պատմահամեմատական վերլուծությունը թույլ տվեց վեր հանել նաև 19-րդ դարում Հայաստանում և Ռուսաստանում նախադպրոցական մանկավարժության զարգացման գործում առկա մի շարք առավելություններ և թերություններ:

